ՀՈՒՇԵՐ

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Միքայել Տեր-Մարտիրոսյան
(1869–1931)

ՀՏԴ
947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՁԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
228

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
228

ԵՐԵՎԱՆ – 2022

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Տ 463

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆեսոր *Լաուրա Մուրադյան*

Տեր-Մարտիրոսյան Միքայել

Տ 463 Հուշեր / Մ. Տեր-Մարտիրոսյան; Հրատարակության նախապատրաստել են՝ Ռուբեն Գասպարյանը և Ռուբեն Մահակյանը.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022.- 398 էջ + ներդիր:

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Միքայել Տեր-Մարտիրոսյանի (1869-1931) հուշերը: Ծնվել է Նոր Բայազետում, հիմնական կրթությունը ստացել է Երևանի թեմական դպրոցում, որպես ուսուցիչ աշխատել է Ախալցխայում և Գանձակում: 1891 կամ 1892 թթ. աղամազրվել է ՀՅ Դաշնակցությանը, կատարել է մի շարք կուսակցական հանձնարարություններ, մասնակցել է Բանկ Օտոմանի գործողությանը (1896): Հայտնի է եղել Մար Շիմուն կամ Մար Ծածկանուններով: Մասնակցել է Կիլիկիա գենք և գինամթերք փոխադրելու կազմակերպչական աշխատանքներին: Ազատագրական պայքարի կենտրոն համարել է Կիլիկիան, հատկապես Զեյթունը: 1898 թ. բոլղարահպատակի անվան տակ անցել է Հալեպ, սակայն դավաճանության հետևանքով ձերբակալվել և դատապարտվել է, 5 տարվա բանտարկության, որն ավարտվելուց հետո իշխանությունները Մ. Տեր-Մարտիրոսյանին Հալեպից ուղարկել են Կ. Պոլիս, սակայն նրան հաջողվում է, ճանապարհին փախչել և ապաստան գտնել յուրայինների մոտ: Եղել է, Կ. Պոլսի Սև-մորժյան ճեմարանի տնօրեն (1912): Խորհրդային տարիներին զբաղվել է, մանկավարժական գործունեությամբ: Հիվանդության պատճառով հուշերը մնացել են անավարտ:

Մ. Տեր-Մարտիրոսյանի հուշերը նախատեսված են պատմաբանների, արևելագետների, ազգագրագետների և ընթերցող հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
ISBN 978-9939-892-19-1
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022
© Կազմողներ, 2022

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՅ Դաշնակցության գործունեության առաջին երեսնամյակին վերաբերող հիշողությունները աղբյուրագիտական կարևոր արժեք ունեցող վավերագրեր են: Դրանք լրացնում են կուսակցության պատմության վաղ շրջանի մասին սահմանափակ թվով փաստաթղթերում առկա տեղեկությունները, բացահայտում են ժամանակի ոգին ու ներկայացնում հայ ազգային-ազատագրական շարժման առավել ուշագրավ դրվագները: Հայտնի է, որ ՀՅԴ հիմնադիրներից ու նրանց զինակիցներից մնացել են շուրջ երկու տասնյակ ոչ մեծ ծավալի հիշողություններ կուսակցության ստեղծման և վաղ շրջանի գործունեության վերաբերյալ, որոնց մեծամասնությունը վաղուց արդեն հրապարակվել է դաշնակցական մամուլի օրգաններում և առանձին ժողովածուներում ու դրվել գիտական շրջանառության մեջ[1]: Սակայն ժամանակին Օսմանյան կայսրությունում, իսկ հետագայում ԽՍՀՄ-ում կուսակցության գործունեության վրա դրված արգելքների պատճառով առանձին անհատների, հիմնականում դաշնակցական գործիչների հարազատների ու ազգականների մոտ մինչ օրս պահպանվում են ՀՅԴ գործունեության տարբեր շրջանները լուսաբանող հիշողություններ և փաստաթղթեր: Տասնամյակներ շարունակ խնամքով թաքցված նման նշխարներից մեկը ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչ Միքայել Տեր-Մարտիրոսյանի (1869–1931 թթ.) անտիպ հիշողություններն են, որոնք նա շարադրել է 1926–1928 թթ. Ստեփանավանում և ապա՝ Ծաղկաձորում: Ցավոք, ծանր հիվանդությունը, որը Մ. Տեր-Մարտիրոսյան ձեռք էր բերել օսմանյան բանտում, իր բացասական հետքն էր թո-

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Խուդինյան Գևորգ.** *ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը).* Եր., 2006, էջ 25–26:

ղել նրա առողջության վրա, ինչն էլ թերևս հնարավորություն չի տվել ավարտելու հուշագրությունը:

Մ. Տեր-Մարտիրոսյանը 1890-ական թվականների և 20-րդ դարասկզբի ՀՅԴ ակտիվ գործիչներից մեկն էր, ով հայտնի էր «**Մար Շիմոն**» կամ «**Մար**» կուսակցական ծածկանուններով: Մարի նամակները ժամանակին տպագրվել են Սիմոն Վրացյանի խմբագրությամբ լույս տեսած «Դիվան ՀՅ Դաշնակցութեան» երկհատորյակում, սակայն հասկանալի պատճառներով արտասահմանում գտնվող նրա կուսակցական ընկերները տեղյակ չեն եղել Մարի հիշողությունների գոյության մասին:

Մ. Տեր-Մարտիրոսյանը ՀՅԴ Երևանի (Մրգաստանի) կենտրոնական կոմիտեության առանցքային դեմքերից մեկի՝ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (**Ա-Դո**)[1] եղբայրն էր: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ նրա հուշերը մեր կողմից ձեռք են բերվել Հայաստանի պետական պատկերասրահի արխիվում պահվող Ա-Դո-ի անտիպ աշխատությունները փնտրելու ընթացքում: Սկզբում, մեզանից անկախ պատճառներով, չհաջողվեց հայտնաբերել և հրատարակության պատրաստել այդ արժեքավոր հետազոտությունները, սակայն քիչ անց մեզ օգնեց դիպվածը: Հայաստանի բազմավաստակ գիտնականներից մեկը՝ Գրիգոր Կարախանյանը, մեզ ծանոթացրեց Ա-Դո-ի դստեր՝ **տիկին Ադոյայի** հետ, որը տրամադրեց հոր աշխատությունների պատճենները: Նա մեզ տեղեկացրեց նաև, որ իր հորեղբոր՝ Մ. Տեր-Մարտիրոսյանի թոռնուհու՝ **Գայանե Շահոյանի** մոտ պահպանվում են պապի անտիպ հուշերը: Այդ կերպ մենք կարողացանք ծանոթանալ Մ. Տեր-Մարտիրոսյանի թոռնուհու՝ **տիկին**

[1] **Տեր-Մարտիրոսյան Հովհաննես** (Ա-Դո, 1867–1957), հասարակական, բարեգործական գործիչ, պատմաբան, վիճակագիր: Հեղինակել է մի շարք ուսումնասիրություններ:

Գայանե Շահոյանի հետ, որը սիրով մեզ տրամադրեց իր պապի հուշերը:

Միքայել Տեր-Մարտիրոսյանը ծնվել է 1869 թ. Նոր Բայազետում (այժմ՝ ք. Գավառ, Գեղարքունիքի մարզ): Նրա ազգանվան «**Տեր**» մասնիկը հուշում է, որ նախնիները եղել են հոգևորականներ: Հայրը՝ Գրիգորը, զբաղվել է առևտրով ու անասնապահությամբ, բայց հիվանդությունը հնարավորություն չի տվել ապահովելու բազմանդամ ընտանիքի (հինգ տղա և երեք աղջիկ) նվազագույն կարիքները: Սակայն հայրը կարողանում է ավագ որդուն՝ Սիրականին, ուղարկել Երևան, որտեղ նա ուսանում է թեմական դպրոցում: Ս. Տեր-Մարտիրոսյանը[1] որոշ ժամանակ անց դառնում է «Մշակ» թերթի երևանյան թղթակիցը: Նրան այդ պաշտոնում հետագայում փոխարինում է կրտսեր եղբայրը՝ Ա-Դոն:

Մ. Տեր-Մարտիրոսյանի վաղ շրջանի գործունեության վերաբերյալ տեղեկությունները սակավ են: Հավանաբար նա նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա ուսանել է Երևանի թեմական դպրոցում, որն ավարտել է 1889 թ: Նույն թվականի սեպտեմբերից մինչև 1890 թ. որպես ուսուցիչ դասավանդել է Ախալցխայի հայկական դպրոցներից մեկում, որտեղ դպրոցական տեսուչն էր Ստեփան Մալխասյանցը[2]: Իսկ 1890–1895 թթ. Միքայելը դասավանդել է Գանձակի հայկական երկդասյա դպրոցում: Մ. Տեր-Մարտիրոսյանի խոստովանությամբ, հենց այդ տարիներին է ձևավորվել իր աշխարհայացքը, և նա որոշել է իրեն անմնացորդ նվիրել Արևմտյան Հայաստանի ազատագրության գործին:

1878 թ. Բեռլինի վեհաժողովը և Հայկական հարցի միջազգայնացումը հզոր ազդակ հանդիսացան, որպեսզի Հայաստանի տար-

---

[1] **Տեր-Մարտիրոսյան Սիրական** (1863–1933), հասարակական, բաղաքական գործիչ, լրագրող, ՀԺԿ անդամ, ՀՀ խորհրդարանի պատգամավոր (1918):

[2] **Մալխասյանց Ստեփան** (1857–1947), հայագետ, բանասեր և բառարանագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍԽՀ ԳԱ ակադեմիկոս:

բեր հատվածներում կազմավորվեն գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ, որոնց հենքի վրա քիչ անց ձևավորվեցին ազգային կուսակցությունները: Ախալցխայում ևս տեղի ուսուցիչներից տարերայնորեն կազմակերպվում են համախոհների խմբակներ, որտեղ քննարկվում են Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձությունները և արևմտահայության ազատագրության հետ կապված խնդիրները: Նրանք տարբեր ուղիներով, գաղտնի ձեռք են բերում «Արմենիա» և «Հնչակ» թերթերը, ընթերցում ու քննարկում հոդվածները: Խմբակի մասնակիցները մոտ քսան հոգի էին, որոնց թվում էին նաև օրիորդներ **Սաթենիկ Մատինյանը** և **Մարիամ Զավարյանը**: Չնայած բոլորը տոգորված էին արևմտահայության ազատագրության գաղափարով, սակայն գոյություն չուներ գործողությունների միասնական ծրագիր: Քննարկումները հիմնականում ընթանում էին Րաֆֆու ստեղծագործությունների շուրջը: 1891 թ. Գանձակում գտնվելու ժամանակ Մ. Տեր-Մարտիրոսյանը և նրա գործընկերները տեղեկանում են, որ Թիֆլիսում կազմավորվել է Հայ Յեղափոխականների Դաշնակցություն կուսակցությունը, որն իր առջև նպատակ է դրել հասնել արևմտահայության ազատագրությանը: Ստացվող լուրերում ամենից հաճախ հիշատակվում էր **Սիմոն Զավարյանի** անունը:

Մ. Տեր-Մարտիրոսյանի գործունեության սկիզբը համընկնում է ՀՅԴ ձևավորման հետ: Որոշ ժամանակ անց Գանձակում ևս ստեղծվում է կուսակցության մասնաճյուղը: Կարելի է ենթադրել, որ Մ. Տեր-Մարտիրոսյանը ՀՅԴ շարքերն է ընդունվել 1891 կամ 1892 թ.: Այդ ժամանակ արդեն նա հանդիսանում էր Գանձակի հայ հասարակության աչքի ընկնող դեմքերից մեկը: Մ. Տեր-Մարտիրոսյանը միաժամանակ թղթակցել է «Աղբյուր» մանկական ամսագրի հավելված «Տարազին», որտեղ տպագրվել են նրա բանաստեղծությունները:

1891 թ. դեկտեմբերի 31-ին Թիֆլիսում տեղի է ունենում Մ. Տեր-Մարտիրոսյանի առաջին հանդիպումը Ս. Զավարյանի հետ: Այն անջնջելի տպավորություն է թողնում նրա վրա: Ուստի իր հուշերում ժամանակ առ ժամանակ անդրադառնալով ՀՅ Դաշնակցության այս կամ այն գործչի բնավորության գծերին՝ Մարն առավել հարգանքով և պատկառանքով է խոսում Ս. Զավարյանի մասին:

1892 թ. Գանձակ են գալիս **Պետոն** (Ալեքսանդր Պետրոսյան), **Աբրոն** (Մկրտիչ Սահակյան) և **Վարդանը** (Սարգիս Մեհրաբյան): Նրանք հանդիպում են իրենց կուսակցական ընկերներին և տեղեկացնում Արևմտյան Հայաստանում կազմակերպվող հեղափոխական ձեռնարկների մասին: Նույն թվականին Մ. Տեր-Մարտիրոսյանն արդեն հանդես էր գալիս **Մար Շիմոն**, իսկ ավելի կարճ՝ **Մար** ծածկանունով, որով նրան ճանաչում էին կուսակցական ընկերները և մտերիմները: 1892 թ. աշնանից սկսած՝ Մ. Տեր-Մարտիրոսյանը՝ որպես ՀՅԴ Գանձակի կազմակերպության ներկայացուցիչ, արդեն կանոնավոր կերպով կապ էր պահպանում ՀՅԴ Բյուրոյի հետ:

1894 թ. հայության համար ծանր տարի էր: Աբդուլ Համիդ II-ը նախաձեռնել էր Սասունի հայ բնակչության կոտորածը: Արևելահայոց կյանքը փոթորկվում էր, ցանկանում էին ամեն գնով օգնել իրենց հայրենակիցներին, սակայն ցարական կառավարությունը կտրականապես դեմ էր սասունցիներին որևէ աջակցություն, առավել ևս՝ զինված օժանդակություն ցուցաբերելուն: Այնուամենայնիվ, հայությունը որոշում է դիմել Ամենայն Հայոց կաթողիկոս **Մկրտիչ Խրիմյանին**, որպեսզի վերջինս խնդրի ցար Նիկոլայ II-ին՝ միջամտել և ազդել սուլթանական կառավարության վրա: Այդ առաջադրանքն իրականացնելու նպատակով ընտրվում են երեք պատգամավորներ, որոնց թվում էր Մ. Տեր-Մարտիրոսյանը: Կաթողիկոսը, չնայած ցարական իշխանությունների հարուցած խոչընդոտներին ու արգելքներին, փորձում է քայլեր ձեռնարկել, սակայն ապար-

դյուն: Այդ ժամանակ ռուսական դիվանագիտությունը բացասաբար էր տրամադրված դեպի Հայկական հարցը, ուստի ցարը խուսափում էր որևէ գործուն քայլ կատարելուց:

1895 թ. հունիսին Մ. Տեր-Մարտիրոսյանը Ս. Զավարյանից հանձնարարություն է ստանում Գետաբեկի պղնձահանքերից հայթայթել ուժանակ (դինամիտ): Նա կարողանում է որոշ քանակությամբ ուժանակ ձեռք բերել ու տեղափոխել Թիֆլիս: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ուժանակը պահեստավորվում էր Կ. Պոլսում նախատեսվող ցուցական գործունեության համար: Այդ ընթացքում ՀՅԴ անդամների կողմից Թիֆլիսի Բուսաբանական այգում կատարվում էին զինավարժություններ, որոնք ղեկավարում էին Վարդանը և **Նիկոլ Դումանը** (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան):

1896 թ. մարտին Մարը մեկնում է Ժնև, իսկ այնտեղից Կիպրոս՝ Լառնակա քաղաքը, որտեղ արդեն գտնվում էր **Արմեն Գարոն** (Գարեգին Փաստրմաճյան): Նրանց միացած **Վահագն Տաթևյանը**, **Մխո Շահենը** (Մխիթար Սեֆերյան) և ուրիշներ աշխատանքներ էին տանում Կիլիկիա զենք և զինամթերք տեղափոխելու համար: Սակայն բրիտանական իշխանությունները հայտնաբերում են բեռը և բռնագրավում այն: Մ. Տեր-Մարտիրոսյանը այցելում է Նիկոսիայի մոտ գտնվող Սբ. Մակարի նշանավոր վանքը և այն հարմար է գտնում ՀՅԴ խմբեր տեղակայելու, զենք ու զինամթերք պահեստավորելու համար: Նա կարևոր էր համարում նաև հնչակյանների հետ համատեղ գործելը, ինչը, սակայն, իրականություն չի դառնում:

1896 թ. հունիսին Մ. Տեր-Մարտիրոսյանը Կիպրոսից ուղևորվում է Կ. Պոլիս, ուր հասնում է հունիսի 10-ին և անմիջապես կապ է հաստատում ՀՅԴ գործիչների հետ, որոնց թվում էին **Վռամյանը** (Օննիկ Դերձակյան) և **Բաբկեն Սյունին** (Պետրոս Փարյան): Նախապատրաստվում էր Բանկ Օտոմանի գործողությունը:

1890-ական թթ. առաջին կեսին հայ ազգային-ազատագրական պայքարի արձանագրած անհաջողությունները և սուլթանական կառավարության հրահրած արևմտահայության կոտորածները պատճառ դարձան, որպեսզի հայ ազգային կուսակցությունները վերանայեն իրենց գործունեության մարտավարական առաջնահերթությունները:

Մասնավորապես՝ ՀՅ Դաշնակցությունը նպատակաուղղվեց Արևմտյան Հայաստանում և միաժամանակ Կ. Պոլսում ու ծովափնյա այլ քաղաքներում[1] «զուգակցված հարվածների» մարտավարության միջոցով գործելուն: Այս նոր գործելակերպի մի մասն էր կազմում Կ. Պոլսի Օսմանյան դրամատան (Բանկ Օտտոմանի) գրավումը, որն իրականություն դարձնելու և արևմտյան տերությունների շահերը վտանգելու միջոցով կուսակցությունը նպատակ ուներ ներկայացնելու որոշակի քաղաքական պահանջներ՝ դադարեցնել կոտորածներն Արևմտյան Հայաստանում և իրագործել խոստացված բարենորոգումները՝ հակառակ դեպքում սպառնալով պայթեցնել բանկը: Բանկի գրավումն ուղեկցվելու էր Կ. Պոլսի այլ վայրերում նախատեսվող ակտիվ ցուցական գործողություններով: Միաժամանակ որոշվել էր, որ գործողությունն իրականացվելու է միայն օսմանահպատակ դաշնակցականների ձեռքով, որպեսզի Կովկասից ժամանած որևէ գործչի ներբակալվելու կամ բացահայտվելու դեպքում հակառակորդին առիթ չտան արևելահայերին մեղադրելու իրենց արևմտահայ եղբայրներին անխոհեմ քայլերի դրդելու մեջ: Բնականաբար, Մ. Տեր-Մարտիրոսյանը նույնպես անմիջականորեն չէր մասնակցելու Բանկ Օտտոմանի գործողությանը, որը որոշվել էր իրականացնել 1896 թ. օգոստոսի 14-ին, ժամը 12-ին:

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Հայոց պատմություն, հտ. 3, գիրք I, էջ 534: Տե՛ս նաև՝ **Գրիգորյան Հ.Բ.**, *Արշակ Չոպանյանի նամակները Արմիայր Արմիրոսյանին: Օսմանյան դրամատան գրավման և դրա հետևանքների մասին*, «Վէմ», 2015, N 3, հուլիս-սեպտեմբեր, էջ 235–242:

Իր հուշերում Մ. Տեր-Մարտիրոսյանն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է ոչ միայն բանկի գրավման նախապատրաստությունները, այլև իր տեսած կռիվները, որոնք նախորդել են գործողությանը: Նա հաղորդում է բավականին հետաքրքիր մանրամասներ. այսպես՝ նույն թվականի օգոստոսի 19-ին բուլղարացի հեղափոխականները երկու ռումբ են նետում սուլթան Աբդուլ Համիդ II-ի տարեդարձը նշող ամբոխի վրա, որը սարսափելի խառնաշփոթ է առաջացնում Կ. Պոլսում: Ռումբերը բուլղարացիներին տվել էին հայերը:

1890-ական թթ. արևմտահայության կոտորածները ցույց տվեցին, որ հայդուկային մարտավարությունն այլևս արդյունավետ միջոց չէ օսմանյան բռնապետության դեմ պայքարելու համար: Անհրաժեշտ էր նախապատրաստվել ընդհանուր ապստամբությանը: Նրա կենտրոնները կարող էին լինել Տարոնն ու Վասպուրականը: Սակայն կուսակցության անդամների թվում կային այնպիսիները, ինչպես օրինակ՝ Մ. Տեր-Մարտիրոսյանը, որոնք գտնում էին, որ ընդհանուր ապստամբության համար առավել նպաստավոր վայրը Կիլիկիան է (Լեռնավայրը): Նման տեսակետի կողմնակիցները նշում էին Կիլիկիայի հարմար աշխարհագրական դիրքը և կիլիկիահայության, հատկապես զեյթունցիների փառահեղ անցյալը: Ուստի 1898 թ. հունվարին կայացած ՀՅԴ Երկրորդ Ընդհանուր ժողովը որոշում է Մ. Տեր-Մարտիրոսյանին հանձնարարել հետախուզական առաքելությամբ լինել Կիպրոսում, ապա Կիլիկիայում ու պարզել այդ վայրերի հնարավորությունները: Որոշվում է նաև տրամադրել համապատասխան ֆինանսներ, ապա Հրաչի (Հրայր Թիրաքյան), Մ. Տեր-Մարտիրոսյանի և Արբակի (Հովսեփ Միրզայան) անդամությամբ կազմել Կիլիկիո Պատասխանատու մարմին:

Ինչպես գրել է Մ. Վարանդյանը. Երկրորդ Ընդհանուր ժողովը Լեռնավայրն ընտրեց՝ հիմք ունենալով նրա անառիկ դիրքը, ժո-

ղովրդի հեղափոխական ուժը և առկա հարմարությունները: Ավելին՝ որոշվում է Կիլիկիան ընդունել որպես Սասունին համարժեք կենտրոնացման վայր[1]: Կուսակցական-կազմակերպական առումով Լեռնավայրն ընդգրկում էր ոչ միայն բուն Կիլիկիան, այլև Անտիոքը, Ուրֆան, Մալաթիան, Խարբերդը, Սեբաստիան, Կեսարիան, Հյուսիսային Սիրիան, Լիբանանի լեռնային շրջանները[2]:

1898 թ. գարնանը Մ. Տեր-Մարտիրոսյանը որոշում է գործողության մեջ դնել իր ծրագիրը՝ մեկնել Կիլիկիա, տեղում ուսումնասիրել իրադրությունը և նոր ուղիներ փնտրել՝ Լեռնավայր զենք ու զինամթերք տեղափոխելու համար: 1897 թ. Կիլիկիայում գործում էր ՀՅԴ անդամ Հատիկը կամ՝ Պոնտացին (Մկրտիչ Հատիկյան), ով որպես ռուսահպատակ Արտեմ Խադիկով, «զբաղված» էր Կովկասից բերած ապրանքների վաճառքով: Մ. Տեր-Մարտիրոսյանը Կ. Պոլսի բուլղարական դիվանագիտական ներկայացուցչությունից ստանում է անձնագիր Դիմիտրի Մարինով-Պոպով ազգանվամբ: Բուլղարիայի իշխանությունները, որոնց հայրենիքը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում բաժանվել էր մի քանի մասի, աջակցում էին հայ ազատագրական պայքարի գործիչներին՝ նրանց տրամադրելով անձնագրեր, հնարավորություններ ստեղծելով ազատ երթևեկելու Բուլղարիայում: Բուլղարական անձնագիրը Մարին անհրաժեշտ էր, որպեսզի օսմանյան իշխանությունների կողմից բացահայտվելու դեպքում ներկայանար որպես բուլղարահպատակ, այլ ոչ թե ռուսահպատակ և առիթ չտար հայերի նոր կոտորածների համար կամ էլ չբացահայտեր ՀՅԴ ծրագրերը Կիլիկիայում:

1898 թ. օգոստոսի վերջին Մ. Տեր-Մարտիրոսյանը Կ. Պոլսից մեկնում է Ալեքսանդրիա՝ այնտեղից Կիլիկիա անցնելու համար:

---

[1] **Գասպարյան Ռուբեն**, *Հոդվածների և հրապարակումների ժողովածու*, Եր., 2015, էջ 241:

[2] Նույն տեղում, էջ 205:

Սակայն Լեռնավայր մտնելու և գործելու համար անհրաժեշտ էր համապատասխան լեգենդ, որը կասկած չէր հարուցի օսմանյան իշխանությունների մոտ: Ուստի նա Նիկողայոս Մատինյանի հետ 17 անգլիական ոսկով գնում է ֆոնոգրաֆ[1] կամ ձայնագիր, որը կարող էր ոչ միայն ձայնագրել, այլև վերարտադրել երաժշտությունը: Դրանով Մարն ապահովում է իր գործունեության քողարկումը օսմանյան իշխանությունների ուշադրությունից[2]:

1898 թ. սեպտեմբերի 10-ին Մ. Տեր-Մարտիրոսյանը Կահիրեից նավով մեկնում է Պորտ Սաիդ, ապա Ալեքսանդրետի վրայով սեպտեմբերի վերջին հասնում է Լաթաքիա: Դեռևս Ալեքսանդրետում նա սկսում է հանդես գալ որպես «ֆոնոգրաֆչի», ինչը հնարավորություն էր տալիս լինելու տարբեր վայրերում և հանդիպել անհրաժեշտ մարդկանց հետ՝ կասկած չառաջացնելով օսմանյան ոստիկանության մոտ: Այստեղ մի քանի օր մնալուց հետո Մ. Տեր-Մարտիրոսյանը ճանապարհվում է Հալեպ, որտեղ Բաբ էլ Ֆարաջ թաղամասում վարձում է մի փոքրիկ տարածք՝ ֆոնոգրաֆի երաժշտությունը ներկայացնելու համար:

Իր հուշերում Մարը հպարտությամբ փաստում է, որ ֆոնոգրաֆի միջոցով ինքն այնքան գումար էր վաստակում, որ ֆինանսապես անկախ էր և ոչ մեկից էլ դրամ չէր խնդրում իր գոյությունը պահպանելու ու գործունեությունը շարունակելու հա մար: Դրանով նա մեծ վստահություն է ձեռք բերում նաև տեղացիների շրջանում: Հալեպում Մարը կապ է հաստատում տեղի ՀՅԴ մարմնի անդամների և Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարողների հետ, որոնց հանձնում է գործելու համապատասխան հրահանգներ: Վերջիններիս թվում էին Օնիկ Մազլումյանը և բժիշկ

[1] Հայտնագործել է Թոմաս Էդիսոնը 1877 թ.:

[2] Տե՛ս **Հատիկյան Հ.Հ.,** *Արևմտահայության Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության պրպտում 1878- 1923 թթ.*, Եր., 2015, էջ 9:

Ասատուր Ալթունյանը, որին մեծարում էին «Հալեպի բժիշկների հայր» պատվանունով:

Մ. Տեր-Մարտիրոսյանն իր գաղտնի գործունեությունն է սկսում Հալեպում, որտեղ դաշնակցական գործիչը նախապատրաստվում էր իր երազանքի իրականացմանը՝ Կիլիկիա մուտք գործելուն: Մարի համար կարևոր էր այն հանգամանքը, որ գործածելով «ֆոնոգրաֆ» կոչվող երաժշտական գործիք-մեքենան, հնարավորություն ուներ լինելու ցանկացած վայրում, հանդիպելու ցանկացած անձնավորության հետ՝ չառաջացնելով ոստիկանության կասկածները: Մարն իր հուշերում շեշտում է այն հանգամանքը, որ Հալեպում և մյուս վայրերում որպես կուսակցական գործիչ հեղինակություն ձեռք բերելու գրավականներից մեկն այն էր, որ ինքը ֆինանսապես անկախ էր: Նա երբեք տեղական կոմիտեներից գումար չխնդրեց, որով ամրապնդեց իր դիրքերը և վստահություն ձեռք բերեց նրանց մոտ:

Մարը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ՀՅ Դաշնակցության գործունեությունը Հալեպում 19-րդ դարի վերջերին: Հնչակյանները խորը ճգնաժամի մեջ էին, և ժամանակին այդ կուսակցությանը հարած գործունյա տարրերը նոր ուղիներ էին փնտրում՝ ցանկություն հայտնելով համագործակցել ՀՅ Դաշնակցության հետ:

Ֆոնոգրաֆի միջոցով փող աշխատելու պատրվակը հնարավորություն է տալիս Մարին տարբեր ծանոթություններ հաստատելու ոչ միայն օսմանյան պաշտոնյաների, այլև օտարերկրացիների հետ: Սակայն Հալեպը դաշնակցական գործչին այդքան էլ չէր գրավում, քանի որ նրա նպատակը Զեյթունն էր և ողջ Կիլիկիան: Բայց Մարը չէր կարող ուղղակիորեն գնալ Զեյթուն, ինչը կարող էր բացահայտել նրա իրական նպատակները, ուստի ստիպված էր կանգ

առնել ճանապարհին գտնվող քաղաքներում՝ դրանով ցույց տալով, որ իր համար գլխավորը գումար վաստակելն է:

Թվում էր, թե ամեն ինչ ընթանում է իր հունով. ՀՅ Դաշնակցությունն ամրացնում էր իր կառույցները և հետևողականորեն տարածում սեփական ազդեցությունը: Սակայն տեղի է ունենում անդառնալի մի ողբերգություն: Նախկին հնչակյան Տիգրան Տոնապետյանը, որին ՀՅԴ մեկ այլ անդամ՝ Մկրտիչ Հատիկյանը, սկզբում անզգուշաբար հայտնել էր Մարի առաքելության նպատակը, պահանջում է, որ ՀՅ Դաշնակցությունը դադարեցնի իր գործունեությունը Կիլիկիայում:

Հնչակյանները Կիլիկիան համարում էին բացառապես իրենց կուսակցության գործունեության վայր և կտրականապես դեմ էին, որ ՀՅ Դաշնակցությունն իր կառույցները հիմներ այնտեղ: Մարը անուշադրության է մատնում Տ. Տոնապետյանի սպառնալիքները և շարունակում իր գործունեությունը: 1899 թ. մայիսի 5-ին նա Հալեպից ուղղվում է Քիլիս, որտեղ մնում է 15 օր: Այստեղ Մարը տեղեկանում է իր հնարավոր ձերբակալության մասին, սակայն հրաժարվում է լքել երկիրը: Նա համոզված էր, որ նույնիսկ կալանավորվելու դեպքում իր բուլղարահպատակ լինելը թույլ կտա ազատվել, որովհետև Օսմանյան կայսրությունն իրավունք չուներ քրեական պատասխանատվության ենթարկելու եվրոպացուն, այլ պարտավոր էր հանձնել կամ տվյալ երկրի, կամ էլ այլ եվրոպական տերության դիվանագիտական ներկայացուցչին: Մարը հաշվի չէր առել այն հանգամանքը, որ այդ ժամանակ Բուլղարիան դեռևս վասալական կախման մեջ էր գտնվում Օսմանյան կայսրությունից:

1899 թ. մայիսի 21-ին Մարը Քիլիսից հասնում է Այնթապ, որտեղ մնում է մեկ ամիս: Տեղի ՀՅԴ կոմիտեի անդամներից Գրիգոր Թավուգյանը կապ է հաստատում նրա հետ և ներկայացնում կատարված աշխատանքները: Այնթապի հայությունն աչքի էր ընկնում

իր կրթական բարձր մակարդակով, որով դյուրին էր դարձնում ՀՅԴ գործունեությունը: Մարը գտնում էր, որ որոշ աշխատանք տանելու դեպքում Այնթապը կարող է կարևոր դեր խաղալ Կիլիկիայում ազատագրական շարժման ծավալման գործում:

1899 թ. հունիսի 20-ին Այնթապում օսմանյան ոստիկանությունը ձերբակալում է Մարին: Հետագայում պարզվում են նրա ձերբակալության պատճառները: Արդեն վերը հիշատակված Տ. Տոնապետյանը դիմել էր Հնչակյան կենտրոնին՝ տեղեկացնելով դաշնակցականների Կիլիկիա մտնելու մասին: Իր հերթին՝ Կենտրոնի ուղարկած նամակներն ընկել էին օսմանյան իշխանությունների ձեռքը և պատճառ էին դարձել ոչ միայն Մարի, այլև այլ անձանց ձերբակալությունների համար: Կրկնվում էր հայ ազատամարտի տարբեր հանգրվաններում բազմիցս դրսևորված նույն օրինաչափությունը՝ ձախողված և ՀՅԴ-ի հանդեպ նախանձով լցված հնչակյանների պատճառով հերթական դաշնակցական գործչի ձերբակալությունը: Սակայն նախաքննության ընթացքում ոստիկանությունը, չնայած կասկածներին, չի կարողանում ապացուցել Մարի հայ և ռուսահպատակ լինելը: Ի վերջո, նրան Այնթապից ուղարկում են Մարաշ, որտեղ պետք է կատարվեր հետագա քննությունը: Մարաշում ևս չի հաջողվում հաստատել Մարին ներկայացված մեղադրանքները: Մարը պահանջում է, որ հրավիրեն Մարաշի ֆրանսիական հյուպատոսին, սակայն նրա պահանջը մերժվում է: Ինքնին հասկանալի է, որ օսմանյան իշխանությունները չէին ցանկանում, որ իրենց ձեռքն ընկած հայ հեղափոխականն ազատվի:

Մարաշում կայացած հետաքննության ընթացքում Մ. Տեր-Մարտիրոսյանը, հիմնվելով իր ունեցած բուլղարական կեղծ անձնագրի վրա, համառորեն շարունակում էր պնդել, որ ինքը ֆոնոգրաֆ գործիքով փող աշխատելու համար Օսմանյան կայսրություն մուտք գործած բուլղարացի Դիմիտրի Մարինով-Պոպովն է: Բայց

մինչ այդ ձերբակալված Վերակազմյալ Հնչակյան կուսակցության անդամ Տ. Տոնապետյանի նախաքննական ցուցմունքը ճակատագրական դեր ունեցավ նրա կյանքում:

Հետաքննության ընթացքում պարզվեց հետևյալը. Տ. Տոնապետյանը դաշնակցական գործիչներ Մկրտիչ Հատիկյանին ու Միքայել Տեր-Մարտիրոսյանին շանտաժի ենթարկելու և նրանց ծրագրերն իմանալու անհաջող փորձերից հետո զեկուցագիր էր ուղարկել Լոնդոն՝ Վերակազմյալ Հնչակյանների Կենտրոնին՝ չափազանցված տեղեկություններ հայտնելով Կիլիկիայում գործելու համար ժամանած դաշնակցական գործիչների մասին: Կիլիկիան իր մենաշնորհային տարածքը համարող Վերակազմյալների Կենտրոնն իր հերթին պաշտոնական նամակ էր գրել Զեյթունի 1895 թ. ապստամբության իրական ղեկավար Նազարեթ Չավուշին՝ հայտնելով, թե իբր 5–6 դաշնակցականներ են մուտք գործել Կիլիկիա և «Եթե նրանք հայտնվեն ձեր քաղաքում, նրանց ոչ մի ընդունելություն ցույց չտաք, աշխատեցեք համոզել, որ հեռանան ձեր շրջանակներից, իսկ եթե համառեն մնալ ու շարունակեն իրենց գործունեությունը, հանձնեցեք կառավարության»:

Զեյթունի Կարապետ եպիսկոպոսին ուղղված նույն բովանդակությամբ մի նամակ էլ Վերակազմյալ Հնչակյանների՝ Եգիպտոսի մասնաճյուղը խաբեությամբ կորզել էր այնտեղ գտնվող զեյթունցի Բարդուղիմեոս վարդապետից: Ու քանի որ Նազարեթ Չավուշն ու Կարապետ եպիսկոպոսը միմյանց չէին վստահում ու փոխադարձաբար մատնում են մեկը մյուսին, Տ. Տոնապետյանի միջոցով Զեյթուն ուղարկված այդ նամակները հայտնվում են թուրքական ոստիկանության ձեռքում: Թուրքական իշխանությունները, որոնք հիշում էին 1895 թ. զեյթունցիների մղած հերոսական կռիվները, սկզբում խուճապի են մատնվում և անգամ զորքեր են կենտրոնացնում հայկական արծվաբույնի դեմ: Սակայն շուտով նամակաբերնե-

րի հաջորդական ձերբակալությունների արդյունքում, դուրս են գալիս Տ. Տոնապետյանի վրա, որն էլ իր հերթին ամբողջովին բացվում է ու դիմում հայ հեղափոխականին անհարիր՝ ստոր մատնության և անգամ զրպարտության: Մատնելով բուլղարացի Դիմիտրի Մարինով-Պոպովի անվան տակ ժամանած Մարին՝ նա անգամ բողոքում է, թե իբր արևելահայերը ձերբակալվելուց հետո հայտնում են իրենց ռուսահպատակ լինելը, ազատվում են, ու նրանց փոխարեն իրենք են պատժվում:

Դա էր պատճառը, որ թուրքական իշխանությունները հետաքննության և ապա դատավարության ընթացքում պնդում էին, որ Դիմիտրի Մարինով-Պոպով անուն-ազգանվան տակ թաքնվող անձը Ռուսաստանից ժամանած հայ հեղափոխական է, ծնունդով երևանցի՝ Մարտիրոս Սարգսյան անուն ազգանունով: Դա մատնիչ Տ. Տոնապետյանի հիշողության մեջ աղճատված՝ Մարի «Տեր-Մարտիրոսյան» ազգանվան և Թուրքիայում հայերին հաճախ վերագրվող՝ «Սարգիս» հավաքական անվան շրջված տարբերակն էր:

Նման պայմաններում դաշնակցական գործիչը, զգալով, որ իրենից է կախված ոչ միայն հետաքննության ընթացքը, այլև նոր բռնությունների ու հալածանքների թիրախ դարձած կիլիկիահայության անվտանգությունը, որոշում է ինչ գնով էլ լինի համառել ու պնդել իր՝ բուլղարացի լինելու վարկածը: Որովհետև որպես ռուսահպատակ ձերբակալվելու պարագայում, հիմնվելով կապիտուլյացիաների ռեժիմի վրա, նա արագորեն ազատ էր արձակվելու, բայց տուժելու էին իր հայրենակիցները: Իսկ ահա բուլղարացի ներկայանալը Մարին չէր ազատելու բանտից ու դատավարությունից, քանի որ Բուլղարիան դեռևս վասալական կախման մեջ էր Օսմանյան կայսրությունից: Այսպիսով, դաշնակցական գործիչը գիտակցաբար ընտրում է բանտն ու հալածանքը, և հետաքննությանն

այդպես էլ չի հաջողվում հաստատել Մարին ներկայացրած մեղադրանքը:

1899 թ. սեպտեմբերի 1-ին սկսված դատավարության ժամանակ, որում Մարից զատ ներգրավված էին նույն Տ. Տոնապետյանն ու ևս յոթ անձինք, ամոթալի վիճակում հայտնված վերակազմյալ հնչակյանը հրաժարվում է նախաքննության ժամանակ իր տված ցուցմունքներից: Բայց դա այլևս չի փրկում ո՛չ Տ. Տոնապետյանին և ո՛չ էլ Մարին: Դատավորը ընթերցում է Տ. Տոնապետյանի նախնական ցուցմունքները, դրանք հիմք է ընդունում և դրանցով առաջնորդվում երեք օր տևած դատավարության ընթացքում: Օսմանյան դատարանը Դիմիտրի Մարինով-Պոպով ներկայացող Մարին դատապարտում է 5, իսկ ահա իր նախնական ցուցմունքից հրաժարվող Տ. Տոնապետյանին՝ 101 տարվա բանտարկության:

Մարը Մարաշի բանտում մնում է մինչեւ 1904 թ. հուլիսը: Բանտում անցկացրած ժամանակը չի կոտրում ազատագրական գործչի ոգին: Անգամ այն բանից հետո, երբ կուսակցական ընկերները նամակով առաջարկում են արդեն դատապարտված Մարին Հալեպի ռուսական հյուպատոսին ուղարկել նրա ռուսական անձնագիրը, որը հնարավորություն կտար ազատվելու բանտից, վերջինս կտրականապես մերժում է նման տարբերակը: Մարը նախընտրում է ամբողջությամբ կրել սահմանված պատիժը, սակայն չբացահայտել կուսակցության ծրագրերը, ինչով կվտանգեր նաև Կիլիկիայի հայությանը:

Իր հուշերում Մարն ամենայն մանրամասնությամբ նկարագրել է օսմանյան բանտի առօրյան, կանգ է առել դատապարտվածների վարքագծի, կատարած հանցագործությունների վրա: Մարաշի բանտի բանտախցերի թիվն ութն էր, որտեղ գտնվում էր մոտ 200 հոգի: Բացակայում էին հիգիենիկ պայմանները: Իշխանություննե-

րի կողմից տրվում էր օրական մեկ կիլոգրամ հաց, մնացածը պետք է հոգային կալանավորները:

Մարը մանրամասն կերպով ներկայացնում է նաև դատապարտյալների ազգային ու սոցիալական կազմը: Կալանավորների մեծ մասը թուրքեր էին, որոնք դատապարտվել էին հիմնականում քրեական հանցագործությունների համար: Կային նաև քուրդ ցեղապետեր, որոնց տեղական իշխանությունները դիտավորյալ ձերբակալել էին, որպեսզի դրամ շորթեն: Հայերը, որոնք թվով մոտ 40-ն էին, հիմնականում բանտարկվել էին որպես քաղաքական հանցագործներ: Մարը հիշատակում է գրեթե բոլորին՝ նշելով, թե ով ինչի համար էր դատապարտվել: Հայերի թվում կային նաև մանր գողությունների համար բանտարկվածներ:

Հայերն աշխատում էին չխառնվել բանտում ժամանակ առ ժամանակ բռնկվող ծեծկռտուքներին, և նրանցից յուրաքանչյուրը որոշակի զբաղմունք ուներ: Իրենց համար մի անկյուն քաշված՝ նրանք ինչ-որ իրեր էին պատրաստում կամ գործում, որոնք բանտապահների միջոցով վաճառում էին Մարաշի շուկայում: Բանտում գտնվողներից ամենածանրը հայերի դրությունն էր, քանի որ թուրքերը պահը չէին կորցնում նրանց ծաղրուծանակի կամ ծեծի ենթարկելու: Իր հուշերում Մարը զարմանքով փաստում է, որ նման դեպքերում հայերին պաշտպանում էին մարդասպանության համար դատապարտված մի քանի մահմեդականներ, որոնք միջամտում և թույլ չէին տալիս հայերին վիրավորել կամ ծեծել: Նրանցից առանձնացնում է Ջէրիդլի Ալիին, Բիրտիսլի Ահմեդին, Ֆենքլի Ահմեդին, Ավշար Ալիին և Չերքեզ Նուրիին: Փաստորեն՝ մարդասպաններն ավելի խղճով էին, քան մյուս թուրք և մահմեդական բանտարկյալները, որոնք դատապարտվել էին բռնաբարության, գողության և այլ հանցանքների համար: Մարը դա բացատրում է

նրանով, որ հայերին պաշտպանողները մարդ էին սպանել «պատվի համար»:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ իրեն համառորեն բուլղարացի Դիմիտրի Մարինով-Պոպով ներկայացնող անձի ինքնությունը շարունակում էր կասկածներ հարուցել, բանտարկության ավարտից հետո Մարաշի թուրքական իշխանությունները նրան ուղարկում են Կ. Պոլիս: Մարաշից մինչև Ալեքսանդրետ Մարին ուղեկցում էին մի խումբ թուրք ոստիկաններ: Այստեղ պետք է վերջնականապես ճշտվեր նրա ինքնությունը: Ուստի Մարի մեջ կասկածներ էին առաջացել, որ նախքան Կ. Պոլիս հասցնելը թուրքական իշխանությունները ցանկանում են անաղմուկ հաշվեհարդար տեսնել իր հետ, որպեսզի խուսափեն դիվանագիտական սկանդալից՝ օտարահպատակին 5 տարի բանտում պահելու կապակցությամբ: Այս ենթադրությունը հաստատվում է Ալեքսանդրետում մի բանտարկյալի կողմից պատահաբար ձեռք բերված տեղեկատվությամբ, համաձայն որի՝ դիվանագիտական բարդություններից խուսափելու համար նախատեսվում էր կասկածելի բանտարկյալին նստեցնել որևէ թուրքական նավ ու ճանապարհին նետել ծովը:

Սակայն Ալեքսանդրետի ֆրանսիական հյուպատոսի միջամտությունը հնարավորություն չի տալիս թուրքական իշխանություններին իրականացնելու դարձնել այդ նենգ մտադրությունը: Հետագայում Մարը պարզում է, որ հյուպատոսի նման քայլը պայմանավորված էր իր կուսակցական ընկերների քողարկված միջամտությամբ: Ֆրանսիական հյուպատոսի պահանջով բանտարկյալին նստեցնում են նավահանգստում կայանած ավստրիական "Euterpe" առևտրաուղևորական շոգենավ: Այստեղ, չնայած ոստիկանների արգելքին, Մարին հաջողվում է տեսակցել ավստրիացի կոմանդանի հետ, որն արգելում է սահմանափակել նրա տեղաշարժը՝ հիմնվելով կապիտուլյացիաների ռեժիմի վրա:

Մարին մեծ օգնություն է ցույց տալիս "Euterpe" նավի նավապետը՝ ազգությամբ սլովեն Գրեգորիո Բրազանովիչը (Gregorio Brazzanovich): Նավարկության 25 օրերի ընթացքում Գ. Բրազանովիչը տարբեր ուղիներ էր փնտրում իրեն բուլղարացի ներկայացնող «սլավոն եղբորը» այլ շոգենավով Եվրոպա ուղարկելու համար: Փորձում է նրան ուղարկել Վառնա մեկնող նավով, սակայն շոգենավային ընկերությունների գործակալները հրաժարվում են տոմս վաճառել, քանի որ իշխանությունները հեռագրով զգուշացրել էին այդ մասին:

1904 թ. սեպտեմբերին ավստրիական նավը կայանում է Կ. Պոլսի նավահանգստում. այստեղ պետք է վճռվեր հայ հեղափոխականի ճակատագիրը: Կրկին օգնության է հասնում Գ. Բրազանովիչը: Վերջինիս խորհրդով Մարը վերջին պահին հրաժարվում է իջնել նավից: Նրա ինքնութունը պարզելու խնդրով հարկադրված է լինում զբաղվել Կ. Պոլսի ավստրոհունգարական դեսպանատունը: Մարն այդ ընթացքում եզրակացնում է, որ իր հայ լինելը թաքցնելու միակ տարբերակը հնարավորության դեպքում նավի վրա մնալով՝ Եգիպտոս վերադառնալն է: Պատճառն այն էր, որ նրա բուլղարական անձնագիրը կեղծ էր. Կ. Պոլսում կամ Բուլղարիայում կարճ ժամանակում բացահայտվելու էր Մարի հայ լինելը:

Ավստրո-հունգարական բարձրաստիճան դիվանագետները նույնպես որոշում են "Euterpe" նավով նրան ուղարկել հետ ու հասցնել մինչև Եգիպտոս՝ Ալեքսանդրիա: Մարը հավաստում է, որ այդ որոշումը մեծ ուրախությամբ ընդունվեց շոգենավի անձնակազմի կողմից, որի նավաստիները սլովեններ կամ սլավոնական այլ ժողովուրդների ներկայացուցիչներ էին:

Կ. Պոլսից Կիլիկիայի ափերով նորից Եգիպտոս վերադարձած ավստրիական շոգենավը 1904 թ. հոկտեմբերի 14-ին կայանում է ազատ քաղաք Պորտ Սաիդում: Մարն այստեղ կարողանում է իր

վերջին խնայողություններով մակույկ վարձել և ափ իջնել: Քաղաքի ոստիկանատանը նա ձեռք է բերում նոր անցագիր, որը հնարավորություն կտար առանց որևէ արգելքի մտնել Ալեքսանդրիա: Ալեքսանդրիայում Մարը ջերմությամբ հրաժեշտ է տալիս նավապետ Գ. Բրազանովիչին և նավի անձնակազմին: Այստեղ նա հանդիպում է Հալեպի բանտից իրեն ծանոթ հնչակյան Հարություն Կոշկակարյանին և նրան հայտնում իր հայ ու ՀՅԴ անդամ լինելը: Հ. Կոշկակարյանը Մարին տանում է Ալեքսանդրիայում ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչ բժիշկ Մելիք-Փաշայանի տուն:

Բժշկից Մարը տեղեկանում է, որ Ս. Զավարյանը գտնվում է Բեյրութում, իսկ Վարդանը՝ Ադանայում: Այս հանգամանքն ուրախացնում է նրան, քանի որ իր տառապանքներն իզուր չէին անցել. օսմանյան իշխանությունները տեղյակ չէին ՀՅԴ ծրագրերի մասին, և այդ հանգամանքը հնարավորություն էր տվել իր ընկերներին սկսելու աշխատանքները Կիլիկիայում և հարակից շրջաններում:

Բանտային տարիները հյուծել էին Մարի առողջությունը: Նա ձեռք էր բերել ծանր հիվանդություններ, իսկ բժիշկների խորհուրդներն ու դեղերը որևէ թեթևություն չէին բերում: Կուսակցությունը որոշում է Մարին ուղարկել Կահիրեից 50 կմ հեռավորության վրա գտնվող Հելվան կոչվող առողջարանը: Այստեղ նա 1905 թ. մարտին տեղեկանում է Ք. Միքայելյանի և Վ. Քենդիրյանի ողբերգական մահվան մասին: Մարը ցավով էր հիշում այդ լուրը, քանի որ այդպես էլ հնարավորություն չէր ունեցավ տեսնելու իր կուսակցության առաջնորդին:

Սակայն շուտով Հելվանում գտնվող Մարին է այցելում Սիմոն Զավարյանը: Ընկերները միմյանց չէին տեսել ութ տարի: Տասնամյակներ անց Մարը ջերմությամբ էր հիշում իր բոլոր հանդիպումները Ս. Զավարյանի հետ: Մարը նկատում է, որ իր բացակայության տարիներին ՀՅ Դաշնակցությունը զգալիորեն ամրապնդել էր իր

դիրքերը հայության շրջանում: Կուսակցության տրամադրության տակ հայտնվել էին մեծ դրամական միջոցներ, որոնք նրա կարծիքով, հաճախ անտեղի շռայլվում էին: Համանման կարծիք է հայտնում նաև Ս. Զավարյանը: Մարի շարադրանքի այս հատվածն ավարտվում է խորհրդային տարիներին գրված հուշագրությունն իր ընկերոջ ու անձնվեր բարեկամի՝ Սիմոն Զավարյանի հիշատակին նվիրվող գրությամբ:

Իր հուշերի նախորդ մասում ներկայացնելով թուրքական գերությունից ազատվելու համար Ալեքսանդրետից Կ. Պոլիս, իսկ այնտեղից Ալեքսանդրիա նավարկելու իր արկածալից պատմությունը՝ Մ. Տեր-Մարտիրոսյանը խախտել էր ժամանակագրական հաջորդականությունը ու վերհիշելով Սիմոն Զավարյանի հետ ունեցած իր անմոռանալի զրույցները՝ «սույն հիշատակարանի» շարադրանքը նվիրել էր նրա հիշատակին, իսկ վերջում էլ ստորագրել՝ **Մար**:

Սակայն քիչ անց Ղարաքիլիսայում (Վանաձոր) և ապա Ծաղկաձորում թերևս փոքր-ինչ կազդուրվելուց հետո նա կրկին գրիչ է վերցրել և 1928 թ. օգոստոսի 1-ից որոշ հավելումներ է կատարել, որոնք իբրև վերջաբան ներկայացնում ենք ընթերցողի դատին: Մարի այս անավարտ գրառումները ներկայացնում են նրա բանտային կյանքին հաջորդած իրադարձությունները, որոնք անմիջականորեն կապված էին հայության համար ճակատագրական դարձած պատմաքաղաքական հեղաբեկումների հետ: Դրանցից նա առանձնացրել է Ռուսական առաջին հեղափոխությունը, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և Ադանայի 1909 թ. կոտորածը: Այս իրադարձություններից յուրաքանչյուրը բարդ մարտահրավեր էր դարձել նաև ՀՅ Դաշնակցության համար:

Տարիներ շարունակ կուսակցական կյանքից կտրված Մարը քննախույզ հայացքով նկատել ու արձանագրել է իր բացակայության տարիներին ՀՅԴ ներսում արձանագրված լուրջ փոփոխութ-

յունները՝ կուսակցության հեղինակության բարձրացումը, դրամական միջոցների ավելացումը, գործունեության շրջագծի նկատելի ընդլայնումը: Այս երևույթներին զուգահեռ՝ նրա ուշադիր հայացքից չէին վրիպել նաև ՀՅԴ հիմնադիրներին փոխարինած գործիչների թերություններն ու վրիպումները, որոնց վերաբերյալ Մարի դիտարկումները հիմնականում համապատասխանում են այդ օրերին դեռևս քաղաքական ասպարեզում գտնվող Ս. Զավարյանի ու Ռոստոմի նամակներում ու գրառումներում պահպանված գնահատականներին ու արժևորումներին: ՀՅԴ-ին բաժին ընկած «աճի հիվանդությունն» իր ազդեցությունն էր գործել նաև նրա քաղաքական նախաձեռնությունների հետևողականության վրա, որոնցում Ռուսական առաջին հեղափոխության տարիներին սկսել էին արձանագրվել լուրջ հակասություններ:

Դատելով հուշերից՝ կարելի է եզրակացնել, որ Մարի նման փորձառու գործիչը վերապահությամբ է ընդունել 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը: Սակայն նա արձանագրել է, թե Օսմանյան կայսրության ժողովուրդներն ինչպիսի խանդավառությամբ դիմավորեցին սահմանադրության վերականգնումը. ամենուրեք տեղի էին ունենում համերաշխության ցույցեր: Կային նաև հոռետեսներ, որոնք կասկածանքով էին վերաբերվում հռչակված ազատություններին: Եվ, իսկապես, կարճ ժամանակ անց՝ 1909 թ. ապրիլին, տեղի ունեցավ Կիլիկիայի հայության կոտորածը:

Այդ տարիներին Մարը դեռևս ժնևում էր՝ «Դրոշակի» խմբագրատանը, որը դարձել էր հայ և օտարազգի հեղափոխական գործիչների հանդիպումների վայրը: Նրա հիշողության մեջ են մնացել մասնավորապես Գ. Պլեխանովի, Վ. Լունկևիչի, Բ. Սարաֆովի և ուրիշների այցելությունները: Իսկ ժնևում սովորող հայ ուսանողների համար «Դրոշակի» խմբագրատունն այն հարազատ օջախն

էր, որտեղ նրանք հավաքվում և բանավիճում էին տարբեր հարցերի շուրջ:

«Դրոշակի» խմբագրատունը յուրօրինակ հայկական ներկայացուցչություն էր և միևնույն ժամանակ՝ շփման վայր հայ և օտարազգի գործիչների համար: Մարը ներկայացնում է օտարների հետ հարաբերման աշխատանքների ղեկավար դարձած Խաչատուր Մալումյանի հրապարակային գործունեության տարբեր կողմերը, դրանցում տեղ գտած թերությունները, որոնց վրա ժամանակին ուշադրություն են դարձրել նաև դաշնակցական հուշագիրներն ու նամակագիրները: Մասնավորապես նա հիշատակում է «Դրոշակ»-ի խմբագրատանը և Ժնևի տարբեր ռեստորաններում հաճախակի տրվող շքեղ ճաշկերույթները, որոնց միջոցով պատվում էին եվրոպացի այս կամ այն հայամետ գործչին:

Մարը գովեստով է խոսում Եվրոպայում գործող «Հայ ուսանողական միության» մասին: Միության անդամները հրատարակում էին գրքեր, կապեր հաստատում եվրոպական տարբեր գործիչների հետ, հետաքրքրվում Հայկական հարցով և այլն: «Հայ ուսանողական միության» հետ չէին համագործակցում միայն այն հայ ուսանողները, որոնք հարում էին սոցիալ-դեմոկրատական, հիմնականում՝ բոլշևիկյան հոսանքին:

1912 թ. բռնկված Բալկանյան առաջին պատերազմը որոշակի հույսեր արթնացրեց Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների շրջանում. թվում էր, թե թուրքական բռնակալությունը վերջնականապես կործանվելու է, սակայն ինչպես 1877–1878 թթ. ընթացքում, վերջին պահին կրկին վրա հասավ Մեծ Բրիտանիան և հակաթուրքական խմբավորման զորքերը կանգ առան Կ. Պոլսի մատույցներում: Իհարկե, այդ խնդրում իրենց դերը խաղացին նաև

դաշնակիցների միջև ծագած լուրջ տարաձայնությունները, սակայն հիմնականը Մեծ Բրիտանիայի միջամտությունն էր:

Բալկանյան առաջին պատերազմի նկարագրությամբ ընդհատվում են Մարի՝ դրամատիկ իրադարձություններով հագեցած և խիստ հետաքրքրական հուշերը:

Մարի հուշերն առաջին անգամ տպագրվել են «Վէմ» համահայկական ամսագրում[1]: Ներկա հրատարակությունում ավելացվել են ծանոթագրությունները:

Մարի հուշերի ինքնագիրը բաղկացած է 310 էջից, պահպանվել է բարվոք վիճակում: Այն տպագրվում է ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով ու ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները կատարվել են ուղղանիգ փակագծերով: Շեղատառ ծանոթագրությունները Մ. Տեր-Մարտիրոսյանինն են: Վերջում խորին շնորհակալություն ենք հայտնում Մ. Տեր-Մարտիրոսյանի թոռնուհուն՝ **տիկին Գայանե Շահոյանին** բազում տարիներ ընտանեկան գզրոցներում սրբությամբ պահված այս արժեքավոր հուշերը մեզ տրամադրելու համար:

Պատրաստեցին՝ պ.գ.թ. ***Ռուբեն Հ. Գասպարյանը***
և պ.գ.դ. ***Ռուբեն Օ. Սահակյանը***

[1] Տե՛ս «**Վէմ**», 2015. N 3. 4. 2016. N 1. 2. 3. 4:

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Սիմոն Զավարյանի հիշատակին
Սյունիքի Ստեփանավան-Ծաղկաձոր 1926–1927–1928 թ. օգոստոսի 1

Անցել է տասնմեկ տարի, ինչ արևմտահայությունը ենթարկվեց պատմության մեջ չտեսնված աղետի. իր բնակավայրից նա հիմնովին տարագրվեց և բնաջինջ եղավ: Մնացորդներն ու թափթփուկները միայն այս ու այն երկրում այսօր քաշ են տալիս իրենց թշվառ գոյությունը, որպես տխուր վկաներ ահավոր սարսափների և որպես անջինջ հուշեր հետնորդ սերունդների համար, թե որքան վտանգավոր է տեղական պայմանները ոտնակոխ անել և այս ու այն զորեղ պետության սին խոստումներով տարված՝ իր ապագա բախտը տնօրինել ուզել: Այդ բոլորի հետևանքը զարհուրելի կերպով ցցված է կենդանի մնացածների հանդեպ: Ապաշավումները[1] շատ քիչ են ամոքելու համար այն վիշտը, որ ծանրացած է մնացած հայության վրա: Թերթում եմ հայ պարբերական մամուլի որևէ օրգան, լինի կովկասյան, թե արտասահմանյան, ամենուրեք հանդիպում եմ հայտարարությունների, որոնցով այսօր այրը որդուն է փնտրում, հայրը՝ աղջկան, քույրը՝ եղբորը, ազգականը՝ ազգականին. թվում է, թե բոլորը փնտրում են բոլորին, այնքան ահավոր է եղած աղետը, այնքան ծանր՝ հարվածը: Մոտավոր հաշվով հայության կեսը կորսված է համարվում, եթե արևմտահայության կորուստներին ավելացնենք նաև արևելահայ հատվածի կորուստները, իսկ մյուսը, զրկված ապրուստի ամենաչնչին միջոցներից, են-

[1] Զղջումներ:

թակա սովի ու հիվանդությունների, գաղթի ու այլասերումի արհավիրքներին, նոր միայն սթափվում է կոշմարային[1] անցյալի թմրից, նոր միայն ինքզինքն է գտնում, հաշիվ տալիս իրեն, իր կորուստները հաշվում, իր կորուստները որոնում: Տասնմեկ ահավոր տարիներից հետո նոր է մայրը հիշում իր որդուն և փնտրտուքի դուրս գալիս: Ի՜նչ հրեշային շփոթ, ի՜նչ դիվային մոռացում: Այս հանգամանքն ինքնին հայկական տրագեդիայի[2] ահավորությունն է ապացուցում: Եվ միայն այդ մեկ երևույթը բավական է, որպեսզի ապագա պատմագրի հանդեպ ծառանա հայության կրած տառապանքի վիթխարի խոշորությունը: Բայց ինչու՞ այդպես եղավ, ինչու՞ մի ամբողջ ժողովուրդ մոխրի վրա շպրտվեց: Միթե՞ ազատագրվելու ձգտումը, տենչը, այդչափ ահավոր հետևանք կունենա: Դարերով ստրուկ ապրած՝ բնականորեն հայը պիտի ուզենար նմանել ազատագրված ժողովուրդներին. ի՞նչ, մի՞թե հանցանք գործեց նա, որ այդպես չարաչար կերպով պատժվեց: Եվ մի՞թե մի ամբողջ ժողովուրդ կարող էր սխալ ճանապարհ ընդունել իր գոյությունը հարատևելու համար: Հնարավո՞ր է արդյոք, որ մի ժողովուրդ սխալ բնազդով առաջնորդվի: Ժողովուրդների մասսայական բնազդը միշտ առողջ է լինում, և ենթադրել թե հայի բնազդը եղել է հիվանդագին, կլիներ մեծ սխալ: Ենթադրել, որ հայ ժողովուրդը չէ եղել կողմնակից ազատագրական շարժման, նույնպես սխալ կլիներ, որովհետև ամենուրեք նա ընդառաջ է գնացել նրան, քաջալերել է գործիչներին, պատսպարել է, ոգևորել ու ոգևորվել: Մի ժողովուրդ ինքնապաշտպանության[3] չի կարող դիմել: Ժողովուրդները կարող են դադարել գոյություն ունենալուց, դա կլինի բնական մահ, բայց ո՛չ ինքնապաշտպանություն[4]: Հայ ժողովուրդը կենսունակ է, ստեղ-

[1] Մղձավանջ:
[2] Ողբերգության:
[3] Թերևս ինքնասպանության:
[4] Թերևս ինքնասպանության:

ծագործ, աշխատող, ուրեմն և գոյության կռվի բոլոր միջոցներով զինված. նա բնականից աճելու, բարգավաճելու, առաջարկելու ընդունակ մի ժողովուրդ է: Բայց նա զարնվեց շատ վտանգավոր կերպով, թեև ոչ մահացու: Այժմ ոտքի է կանգնում, իր մեջքն է ուղղում: Իր սայթաքումի պատճառներն է որոնում, որպեսզի կարողանա ապագայում նման սայթաքումներից զերծ լինել: Դեպքերն ու դեմքերն է վերջնահատում: Իսկ դա անհրաժեշտ է. նրանց գնահատումով պիտի պայմանավորվեն ապագայի դեպքերն ու դեմքերը:

Ահա այս գիտակցությամբ ես գրի եմ առնում իմ հիշողությունները, որոնք շատ հին են: Իբրև մեկը, շատ համեստ կերպով մասնակցել եմ մեր հասարակական կյանքի ելևէջներին, նրա ուրախություններին՝ հրճվանք և ցավերին վիշտ եմ ունեցել: Անխառն հավատով ու սիրով իմ ժողովրդի բարօրությանն եմ ձգտել և դրա համար շատ զրկանքներ եմ կրել, առանց մի րոպե իսկ զգալու նրանց ծանրությունը: Այդ բոլորի փոխարեն ես մխիթարվել եմ այն հեռանկարով, որպիսին իմ երևակայությունը պատկերացրել է հայ ժողովրդի ապագայի համար: Իմ հիշողությունների համար ես ոչ մի գրավոր տվյալ չունեմ: Հատ ու կտոր թղթերս կորել են անդարձ ասպատական կյանք վարելուս պատճառով: Գրում եմ՝ միմիայն իմ հիշողություններիս վրա հիմնված: Շատ եմ մտածել անցյալում գրել, ինձ չի հաջողվել: Այժմ, երբ ես 58 տարեկան եմ, արդեն տարիքով բավական առաջացած, չեմ ուզում այլևս հետաձգել և գրում եմ ամառվա արձակուրդին՝ 1926 թվին, Ստեփանավանում: Թերևս այս հիշողությունները մի ապագա պատմագրի մոտ կկարողանան որոշ չափով պարզել մեր 35 տարվա դեպքերից ու դեմքերից մի քանիսը:

Իմ պատանեկությունը պատկանում է հայկական կյանքի այն շրջանին, երբ ազգային-գաղափարական հոսանքը ծավալվում, հա-

մայնական էր դառնում: Տաճկահայության[1] ազատագրությունը օրվա նշանաբանն էր. մթնոլորտը թանձրացած էր այդ նշանաբանով: Գամառ-Քաթիպա[2], Րաֆֆի[3], Արծրունի[4] – ահա հայ գաղափարախոսության իդեոլոգները[5], և նրանք կարդացվում էին հափշտակությամբ: Տաճկահայության ցավերի մասին խոսվում էին ամենուրեք: Դրա հետ միասին բոլորն էլ ներշնչված էին այն վախով, թե ռուս կառավարությունը հակառակ է այս գաղափարին. ուրեմն մտքերի փոխանակությունը կատարվում էր գաղտնի, փսփսուքներով: Սակայն այդ վախը չէր արգելում, որ նոր սերնդի ներկայացուցիչները հավաքվեին, խորհրդածեին և խմբավորումներ կատարեին: Մութ կերպով լուրեր էին տարածվում, որ զուլումը Տաճկաստանում օրեցօր ծանրանում է հայության գլխին, որ քրդերը անզուսպ կերպով թալանում են, սպանում, աղջիկները փախցնում, և այդ բոլորը մնում է անպատիժ: Միաժամանակ տարածվում էր ինչ-որ պատրաստությունների մասին, ինչ-որ հերոսների երևալու մասին: Ձենքեր գնելու, դրամ հավաքելու շուրջ շշուկով պատմություններ էին անում:

Րաֆֆիի Կարոներն ու Ասլանները մարմին հագած քաղաքից քաղաք, գյուղից գյուղ էին շրջում և անտարբեր ոգիները հրահրում, գործի կանչում: Լուրերի համաձայն Զեյթուն, Սասուն, Կարին ապստամբած են և իրենց ռուսահայ եղբայրներից օգնություն են սպասում: Գաղտնի գրություններ, թռուցիկներ ձեռքից ձեռք էին անցնում: Առասպելներ էին հերյուրվում դրանց գրողների և տարածողների շուրջը: Լավ հիշում եմ, 1887–88 թվերին «Մունետիկ» վեր-

---

[1] Արևմտահայության:

[2] **Պատկանյան Ռափայել** (Գամառ Քաթիպա, 1832–1892), հայ գրող:

[3] **Մելիք-Հակոբյան Հակոբ** (Րաֆֆի, 1835–1888), գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ:

[4] **Արծրունի Գրիգոր** (1845–1892), հրապարակախոս, հասարակագետ, գրող, բնևաղատ, գրական-հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր:

[5] Գաղափարախոսները:

նագրով մի խմորատիպ թերթիկ ընկավ ձեռքներս. ի՞նչ հափշտակությամբ կարդում էինք և խորհրդավոր կերպով իրար փոխանցում: Հավանորեն հենց Երևանումն էր կազմված, բայց խոսվում էր, որ Երկրից է ստացված: Բովանդակությունը նույնն էր, ինչի մասին ամեն օր խոսվում էր՝ տաճկահայ հարստահարություններ, ապստամբության կոչ և ռուսահայերի շտապ օգնություն: Տպավորությունը խոշոր էր, ոգևորությունն անսահման:

Հոգեկան տրամադրությունների այս պայմաններում ես ավարտեցի Երևանի թեմական դպրոցը 1889 թվին և նույն թվին՝ սեպտեմբերին, ուսուցիչ հրավիրվեցի Ախալցխայի հայոց դպրոցների համար: Տեսուչն էր Ստ. Մալխասյանցը: Ուսուցչական խումբը ամենամեծն էր մեր հայ ծխական դպրոցների խմբերից՝ բաղկացած 24 հոգուց: Ամենից շատ տարվածը տաճկահայ հարցով Յակովբ (Գևորգ) Մուրադյան անունով մի անձնավորություն էր: Սիրում էր խոսել ու տպավորություն էր թողնում: Մենք մոտեցանք իրար: Նա տարիքով էր ինձանից և արդեն 4 տարի ուսուցչություն արած: Ոգևորված խոսում էր տաճկահայերի ազատագրական գործի շուրջ: Նա գտնում էր, որ Տաճկաստանում գործելու համար իրենք՝ տաճկահայերը պիտի մեկնեն այնտեղ, նա նրանց ճանաչում էր, նախորդ մեկ-երկու տարին ուսուցչություն էր արել Սուխումի շրջանի Մծարա գյուղում: Շատ հավանում էր նրանց՝ որպես գործունյա, աշխատասեր տարրի: Նրա ասելով՝ չարժե այսպիսի մի քաղաքում ուսուցչություն անել, ուր կտրված ես ժողովրդից, մինչդեռ գյուղում դու ժողովրդի մարդն ես, ամենքը քեզ են դիմում, խորհուրդներ հարցնում: Դու նրանց առաջնորդն ես, ինչպես ուզես, այնպես էլ կուղղես նրանց հոգեկան պահանջների ընթացքը:

Այդ միջոցներին հատ-հատ մեր ձեռքն էին ընկնում «Արմենիա»[1] և «Հնչակ»[2] թերթերը, որոնք հափշտակությամբ կարդացվում էին: Շուտով մի խումբ կազմվեց, ուր Մուրադյանն ու ես զրույցներ էինք կազմակերպում. զրույցների նյութը միայն ու միայն տաճկահայ ազատագրությունն էր: Նման խմբեր գոյություն ունեին կովկասյան բոլոր քաղաքներում. նպատակը նույնն էր, բայց իրար հետ շատ քիչ կապ ունեին, եղած կապն էլ պատահական բնույթ էր կրում: Կազմակերպություն լայն իմաստով գոյություն չուներ: Ամեն մեկն անկախ ժողովվում էր, խոսում, մտքերի փոխանակություն ունենում, անդամավճար հավաքում: Գործունեության ծրագիր կատարելապես բացակայում էր: Հրահանգ տվող իսկ չկար: Եղածն ավելի շուտ Րաֆֆիի գրական ստեղծագործությունների վերլուծումն էր, նրա իդեալների իրականացումը:

Ախալցխայի մեր խումբը ուռճացավ, երկուսի բաժանվեց: Մեկն ես էի վարում, մյուսը՝ Մուրադյանը: Ձմեռն էր, երբ լուր բերին, թե մի գործիչ է եկել և փնտրում է տեղական մարմնին. իմաց տվինք, որ գա ժողովի: Բոլորս անհամբերությամբ սպասում ենք ժողովատեղում: Բավական ուշ ներկայացավ արտաքինով շատ հրապուրիչ մի երիտասարդ՝ Սանդրո անունով: Բարձրահասակ, կապուտաչյա, գեղեցիկ դեմքով, Լազիստանի[3] հագուստով, գլխին ապարոշ (բաշլիկ), ծածկված յափնջով: Ներս մտնելուն պես յափնջին մի կողմ դրեց.

---

[1] **«Արմենիա»**. հասարակական-քաղաքական, գրական շաբաթաթերթ: Հրատարակվել է 1885–1923 թվականներին Մարսելում (Ֆրանսիա): Խմբագիրներ՝ Մկրտիչ Փորթուգալյան, Եղիշե Թորոսյան:

[2] **«Հնչակ»**, հասարակական-քաղաքական ամսաթերթ, կիսամսյա, տասնօրյա թերթ. Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան: Լույս է տեսել Ժնևում (1887–92), Աթենքում (1892–94), Լոնդոնում (1894–1904), Փարիզում (1904–15), Փրովիդենսում (ԱՄՆ, 1935–40): Խմբագիրներ՝ Ա. Նազարբեկյան (Նազարբեկ), Ռ. Իսահակյան, Գ. Կաֆյան, Ս. Սապահ-Գյուլյան և ուրիշներ:

[3] Լազիստան (Լազիկա), տարածք Արևելա-Պոնտական լեռների հյուսիսային լանջերին:

դաշույնն ու ատրճանակը լրացնում էին պատկերը: Տպավորությունը մեծ էր:

Նա հայտարարեց, որ մի խումբ է կազմակերպել, որ գարունը բացվելուն պես սահմանը պիտի անցնի. գնացողների տրամադրությունը շատ բարձր է, ամեն ինչ պատրաստ, մնում է զենքը՝ հրացանը: Պարզ էր, թե ինչ պիտի անել՝ անդամավճարների գործադրության իսկական տեղն էր: Նրան տրվեց ամբողջ գումարը, ինչ որ հավաքել էինք 4 ամսվա ընթացքում՝ 40 ռուբլի: Անդամավճարը 50 կոպեկ էր, անդամների թիվը՝ 20: Շատ ուշ միայն պարզվեց, որ Սանդրոն մի խաբեբա է եղել, որ ճարպկորեն կարողացել է շահագործել ժողովրդի րոպեի տրամադրությունը և բազմաթիվ քաղաքներում նույնպիսի դիմումներով դրամներ կորզել:

Այն ժամանակների համար խիստ բնորոշ է այն հանգամանքը, որ մի անծանոթ մարդու տալիս էին եղած հասարակական գումարը, այնքան տարված էին թրքահայ ազատագրության գաղափարով և այնքան պատրաստ զոհողությունների, որ մտքներով անգամ չէր անցնում, թե այդ գաղափարը շահագործող մարդ կճարվի աշխարհում: Սակայն այդ հանգամանքը չէր կարող խախտել մարդկանց հավատը դեպի գործը: Խմբերը գնալով ամենուրեք շատանում էին:

Այստեղ ավելորդ չի լինի տալ մի երկու դեպք, որոնք բնորոշում են այս ժամանակների հայի, հատկապես Ախալցխայի ժողովրդի կրոնական-պահպանողական ոգին կրթական գործում: Եկեղեցին և դպրոցը նրա համար իրար պակաս լրացնող հիմնարկներ են, ուսուցիչը պիտի լինի ոչ միայն ուսուցանող, այլև իր եկեղեցասիրական ընթացքով օրինակ ծառայի աշակերտներին:

Այդ տարվա ուսուցչական խմբից առաջ Ախալցխայում եղել է բոլորովին ուրիշ խումբ՝ Աբիսողոմ Հովհաննիսյանի տեսչությամբ: Տարվա ընթացքում մանկավարժական, դաստիարակչական տարաձայնությունների պատճառով խլրտումը լուրջ կերպարանք է ընդու-

նում, և ուսուցիչներից երկուսը՝ Երվանդ Թաղիանոսյան[1] և Նիկողայոս Մատինյան[2], ծեծում են տեսչին: Այս դեպքը այնպես է ցնցում ժողովրդի կարգապահական զգացումը, որ նա տեսչի դիրքը փրկելու համար միջամտում է և ըմբոստ ուսուցիչներին իր ձեռքով պատժել փորձում: Այդպիսի ուսուցիչներից երեխաները միայն անկարգություն և ըմբոստություն կսովորեն, ասում է ժողովուրդը: Աղմուկը այնպիսի չափերի է հասնում, որ ժողովրդի տրտունջները լռեցնելու համար դպրոցները տարվա կեսում փակվում են, և բոլոր ուսուցիչները արձակվում: Մեր ուսուցչական խումբը պիտի լիներ շատ օրինակելի, որպեսզի ժողովուրդը տրտնջալու առիթ չունենար: Տեսուչը իրենց քաղաքացի էր, անուն ունեցող մարդ: Մի անգամ, գարնան անուշ օրերին՝ մի կիրակի օր բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներով միասին դուրս եկանք դաշտ զբոսանքի: Այդ միջոցին դիմացից մի քանի էշեր էին գալիս: Մեր տրամադրությունը շատ բարձր էր, ուրախ էինք: Մալխասյանն առաջարկեց, թե ո՞վ կհամաձայնի էշի վրա նստել: Երկուսը վազեցին և նստեցին ու գալիս են դեպի խումբը: Ծիծաղ, հռհռոց բռնել է բոլորին: Մի երկուսն էլ իրենց վերարկուն հանեցին և փռեցին էշերի ոտքերի դեմ: «Օվսաննա՛», գոռացին մի քանիսը: Այս բոլորը կատարվեց շատ պատահական կերպով, առանց որևէ հետին մտքերի: Երկու օր անց արդեն քաղաքում լուր տարածվեց, որ ուսուցչական խումբը նախօրոք կազմակերպվել է և տեսչի գլխավորությամբ քաղաքից դուրս կատարել է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, ծաղրի ենթարկելով այդ կրոնական տոնի իմաստը:

---

[1] **Թաղիանոսյան Երվանդ** (1864–1948), հասարակական–քաղաքական գործիչ, թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Մոսկվայի համալսարանում: Խմբագրել է «Наше время» (Բաքու, 1919–1920) օրաթերթը, եղել է Ադրբեջանի խորհրդարանի անդամ;

[2] **Մատինյան Նիկողայոս (Նիկոլ)**. ՀՅԴ գործունեության առաջին տարիների ակտիվ դեմքերից մեկը:

Շատ չանցած՝ Զատկի մոտերքը, տեղական հաջորդը[1], որքան հիշում եմ, Աղափերյան եպիսկոպոսը, մի զառամած կրոնավոր, լուր էր ուղարկել դպրոց՝ ուսուցիչներին, թե՝ եթե պիտի գան Զատկի առթիվ ձեռքս թոթվելու և ոչ համբուրելու, լավ կանեն՝ չգան: Սովորություն էր, որ ուսուցիչները Զատկի և Ծննդի տոների առթիվ պիտի ներկայանային հաջորդին, ձեռքն համբուրեին, տոնը շնորհավորեին: Գիտենալով, որ ուսուցիչները ձեռքը չպիտի համբուրեն, այդպիսի լուր էր ուղարկել: Լսելուն պես ուսուցիչներից ոմանք հայտնեցին, որ իրենք չեն գնալու հաջորդի տոնը շնորհավորելու: Այդպէս էլ եղավ, դրանց թվումն էին Մուրադյանը և ես:

Մուրադյանը հաջորդ տարին գնաց Սուխում, այնտեղ, ինչպես որ տարվա ընթացքում խոսում էր, աշխատելու, ժողովրդի ոգին բարձրացնելու, հենց նրանցից տաճկահայ միջավայրում գործիչներ պատրաստելու: Մի քանի տարի անց՝ 1894 թվին, Թիֆլիսում պատահեցի Մուրադյանին, հետաքրքրվեցի իր ծրագրով: Նա բոլորովին հիասթափված էր խոսում: Իրենց ծխախոտի գործով այնպես են տարվել, որ Հայաստանը մոռացել են: Աշխատում են հարստանալու համար, ուրիշ մտահոգություն չունեն: Այս եղավ մոտավորապես նրա եզրակացման խոսքը: Հետո պատահեցի Սուխումի շրջանից եկողների և հետաքրքրվեցի Մուրադյանի գործունեությամբ: Զարմացած լսեցի ոչ դրական կարծիք նրա մասին: Նրան մեղադրում էին, որ վաշխառությամբ է զբաղվել, դրամ է տվել մեծ տոկոսներով, տուն է շինել իր համար և այլն:

Պետք է ասած, որ այս դեպքը ինձ խորապես ցավ ազդեց. առաջին մարդը, որի հետ աշխատել էի, որով երբեմն ոգևորվել էի, իր ուղին կորցրեց: Ճիշտ է, անհայտ մարդիկ են մեր հասարակական կյանքում մի Մուրադյան, մի Սանդրո, բայց դե ո՞ր հասարակական գործունեությունը կազմակերպվում է անհայտ, տեղական

[1] Այդպես է փաստաթղթում:

չափով միայն հայտնի մարդկանցով, և այդպիսիների գործունեությունները շաղկապող մեծ դեմքերը գործի գլուխ են անցնում:

Հաջորդ տարին՝ 1890-ին, ես ուսուցչական պաշտոնով փոխադրվեցի Գանձակ: Այդ տեղի երկդասյան դպրոցները նույնպես տարվա կեսից փակված են եղել. ուսուցիչները մեղադրվել են որպես անաստվածություն քարոզողներ. դպրոցների տեսուչը՝ Ներսես Դավթյանը, բնագիտության դասին մորթած կատու է բերել դասարան և կենդանու կազմը բացատրել: Այս դեպքը խոշոր զրույցների առիթ է դառել: Ժողովուրդը բամբասանքներ է հերյուրել, թշնամական դիրք բռնել դեպի ուսուցիչները և պահանջ դրել դպրոցները փակել, ուր իրենց երեխաները միայն անաստվածություն կարող են սովորել: Եվ դպրոցները փակվում են:

Պարզ է, որ մեր խումբը պետք է գործն այնպես տաներ, որ ժողովրդի վերաբերմունքը դպրոցների նկատմամբ լավանար:

Ես պաշտոնավարեցի Գանձակում ուսուցչի պաշտոնով անընդհատ 5 տարի՝ 1890–1895 թիվը: Այդ 5 տարիների ընթացքում ես կազմակերպվեցի թե՛ իբրև ուսուցիչ և թե՛ իբրև հեղափոխական գործիչ: Գանձակում գոյություն ունեին երկու խոշոր թայֆա[1]. դժվար է դրանց կուսակցություն անունը տալ: Ճիշտ է, մեկը հայտնի էր «Մշակական», իսկ մյուսը՝ «Նոր Դարական» անունով, բայց այդտեղ գործողը ոչ այնքան համոզմունքների տարբերությունն էր, որքան թայֆայական՝ տեղական հաշիվներ ու կապեր:

Մենք նկատեցինք, որ յուրաքանչյուր մեկ թայֆա աշխատում է դէպի իրեն քաշել ուսուցիչներին և դրանով ուժեղացած՝ հակառակորդին նսեմացնել: Անցյալում այդպես էլ եղել է: Ուսուցչական խումբը «Մշակականների» կողմն է հայտնված եղել, «Նոր-դարականները» այդ բանը չեն մարսել, և լինելով ավելի ուժեղ, քանի որ

[1] Խմբավորում:

հոգևորականությունը իրենց հետ է, բամբասանքներով էջմիածին են դիմել ու դպրոցը փակել տվել:

Այդ բոլորը նկատի առնելով՝ մեր խումբն իրեն բարձր պահեց երկու թայֆայից էլ: Երկու կողմից եղած փորձերը՝ ուսուցիչներին իրենց կողմը քաշելու, ապարդյուն անցան: Ուսուցչությունը զբաղված էր կրթական գործով, ժողովուրդը աստիճանաբար մոռացավ թայֆայական տրամադրությունը, և 5 տարուց հետո նման ուժեղ խմբակցություններ գոյություն չունեին: Մնացել էին միայն պարագլուխները՝ զինաթափ եղած և անկարող որևէ կարևոր փոփոխություն մտցնելու կյանքի ընթացքի մեջ: Այս երևույթի պատճառը, ինչ պես տեսանք, ուսուցչության բռնած խելացի դիրքն էր: Բայց դրանում խոշոր դեր խաղաց մի ավելի կարևոր ֆակտոր[1]. դա հեղափոխական գործունեության օրեցօր զարգացումն էր և ժողովրդական լճացած տրամադրության մեջ այդ առթիվ առաջ եկած բեկումը: Մինչև հիմա ժողովուրդը հետաքրքրվում էր կրոնական-բարոյական հարցերով. նրա աչքում դպրոցն էլ այդ կատեգորիայի մեջն էր մտնում. այժմ թրքահայ ժողովրդի ազատագրության հարցն է ծառացած աչքի առաջ: Այս հարցը «Մշակական», «Նոր-դարական» կուսակցությունների հարց չէ, այդ հարցը կրոնի հետ կապ չունի. դա ամբողջ ազգի հարցն է: Ով հասարակական ջիղ ունի, անխտիր դեպի գործ է վազում: Ով զգայուն է դեպի արյունակցի դժբախտությունը, ցնցվում է, շարժվում է: Գործը դառնում է զգացմունքի գործ: Իհարկե, այս տրամադրությունն ավելի ուժեղ է հասարակ դասի մեջ: Ինտելիգենտ շրջանում «Մշակական» տեսակետ ունեցողները դրական գործիչ են դառնում, ազգային ազատագրության պրոպագանդի առաջապահները լինում, մինչդեռ «Նոր-դարական» տեսակետ ունեցողները այդ շարժումից հեռու էին մնում: Այդտեղ էլ նրանց պահողը ոչ թե գիտակ ցությունն է, այլ այն ընդհանրացած

[1] Գործոն:

սխալ հաշիվը, թե այս ամբողջ շարժումը Գրիգոր Արծրունու և նրա հետևորդների արհեստական գործն է: Իսկ ինչ բխում է այդ հոսանքից, իրենց համար ընդունելի չէ: Իհարկե, գործի սկզբումն էր միայն այդպես, երբ գործն ընդարձակվում է, երբ շարժումը համաժողովրդական բնույթ է ստանում, վերին խավերի այդ համառությունը տեղի է տալիս, և նրանցից շատ շատերը նետվում են գործի մեջ:

Ուսուցչական խումբը բավական մեծ էր, ընդհանրապես համերաշխ գործունեություն էր տանում՝ չենթարկվելով այս կամ այն ազդեցության: Բայց եղան անձնավորություններ, որոնք ջանացին այդ համերաշխությունը խախտել. մեկը բնիկ գանձակցի Հովհաննես Խաչումյան՝ ճեմարանական, թունդ պահպանողական-կրոնական անձնավորություն, որի հետ հույս էր կապել «Նոր-Դարական» կուսակցությունը: Նա հակառակ էր ամեն տեսակ առաջադիմական շարժումների, նրա առաջարկով տղայոց դպրոցում մտցվեց առավոտյան խմբական աղոթք, որ մյուս ուսուցիչների կամքի հակառակ անցավ հոգաբարձուների ճնշման տակ: Բայց շուտով նա հեռացավ Գանձակից՝ ինչ-որ բարերարի հաշվով Գերմանիա մեկնելու հետևանքով, ուր ուսանում էր աստվածաբանություն: Նա Գերմանիայում էլ մեռավ, որով և մեռան նրա անձնավորության հետ կապված շատ սին հույսեր: Նման մի դեմք դուրս եկավ, թեև ոչ այնքան ուժեղ, Սարգիս Քամալյան անունով մի ուսուցիչ, որ շատ մոտեցավ պահպանողական հոսանքին, աշխատեց ջլատում առաջ բերել ուսուցչական խմբի մեջ, բայց խումբը, շատ զգաստ գտնվելով, ուզեց ընդմիշտ ազատվել այդ անձնավորությունից: Նա պահանջ դրեց թեմական տեսուչ Գեղամյան քահանային՝ հեռացնել Քամալյանին, սպառնալով խմբովին հեռանալ, եթե այդ դիմումը չհարգվի: Գեղամյանը, հակառակ իր անձնական հակումներին, չկարողացավ պաշտպանել Քամալյանին և տեսնելով խմբի համառ դիմադրությունը՝ ստիպված եղավ տարվա կեսին հեռացնել Քամալյանին և

նրա տեղ, խմբի առաջարկով, հրավիրել Գարեգին Խաժակնին[1] (1892–93 ուս. տարի): Այս դեպքերը արձանագրվում են ցույց տալու համար, թե ինչպես 3–4 տարում մթնոլորտը փոխվում է, և ինչպես հասարակության տրամադրությունները փոխվում են ամենակարճ միջոցում:

Պահպանողական Գանձակը չմտածեց անգամ ձայն հանել, երբ նրա կողմնակից միակ ուսուցչին հեռացնում էին, մինչդեռ նրա պահանջով 1888–89 ուսումն. տարվա կեսում հեռացվեց ամբողջ խումբը, որ իր կողմնակից չէր համարվում:

Հակառակ այս խմբին՝ Գանձակի միդասյան ծխական դպրոցի ուսուցչությունը պահպանողական հոսանքին էր պատկանում: Տեսուչն էր Արշակ Մինասյանը: Թե՛ նա, և թե՛ իր կինը թունդ «Նորդարական» էին, այնպես որ շուտով Մինասյանը քահանա է դառնում: Վերջը, տարիներ հետո, երբ կնոջ եղբայրը՝ Համո Օհանջանյանը[2], դառնում է Դաշնակցության առաջադեմ գործիչներից մեկը, թե՛ իր քույրը և թե՛ տերտեր փեսան դառնում են թունդ դաշնակցականներ: Սա էլ ցայտուն կերպով բնորոշում է, թե մեզանում հասարակական ինտրիգներն[3] ինչպես աղավաղվում են անձնական և բարեկամական կապերի շնորհիվ:

Գանձակ փոխադրվելուն պես ես աշխատեցի մոտենալ արհեստավորների և ժողովրդի խոնարհ խավերին, կարճ միջոցում գտա հասարակական հարցերով հետաքրքրվող երիտասարդների, նրանց համախմբեցի և սկսեցի հետները պարապել: Մեր պարապմունքներն ընթանում էին նույն ուղղությամբ, ինչ ուղղություն ունեին

---

[1] Այսպես է բնագրում: Խոսքն, անշուշտ, Գարեգին Խաժակի մասին է.: **Գարեգին Խաժակ** (Զազալյան, 1867–1915), ՀՅԴ գործիչ և տեսաբան: Մեծ եղեռնի զոհերից:

[2] **Օհանջանյան Համազասպ** (Համո, Միհրյան, 1873–1947), ՀՅԴ գործիչ: 1920 թ. մայիս-նոյեմբերին Բյուրո-կառավարության վարչապետ և արտաքին գործերի նախարար:

[3] Խարդավանքները:

Ախալցխայում: Պարապմունքի տեղը հյուսնի մի մեծ արհեստանոց էր, ներկա էին լինում մինչև 20 հոգի: Հարցասեր երիտասարդներ էին՝ ոգևորված տաճկահայ ժողովրդի ապագա բախտով: Մտքերի փոխանակությունը շատ հետաքրքիր զրույցների էր վերածվում: Ձմեռվա երկար գիշերներ էին, հավաքվում էինք ժամը ութին և մինչև 12-ը [և ժամանակն] աննկատելի [էր] անցնում: Շատերի կողմից էին դիմումներ լինում՝ ընդունվելու համար, ես չէի ճանաչում, թողնում էի իրենց՝ որոշելու ում ընդունել և ում մերժել: Մեր ժողովներն արդեն հայտնի էին բոլոր նրանց, որոնք հետաքրքրվում էին հասարակական հոսանքներով:

Մինչ այդ Թիֆլիսում արդեն բոլոր հեղափոխական տրամադրությունների համախմբում էր տեղի ունենում, և այս բոլոր ցրված, անկապ, կցկտուր մարմինների միացումից ծնունդ էր առնում Հ[այ] Հեղափոխականների «Դաշնակցությունը»: Արդեն 1891 թվականն էր: Լուրեր հասան, որ մի ընկերություն է կազմվել, հատկապես տաճկահայ ազատագրական գործը վարելու համար: Անուններ էին տրվում: Լսվում էր գլխավորապես Զավարյանի անունը:

Արդեն հրահանգներ էին ստացված գավառներում ճյուղեր կազմակերպել: Քաղաքային դպրոցի ուսուցիչ Սիմոն Շխյանը[1] եղել էր Թիֆլիսում տոների առթիվ և ծանոթացել էր նորակազմ մարմնի վարիչների հետ: Նա գիտեր, որ ես արհեստավորների խումբ ունեմ: Նրա պատվերով կազմվեց տեղական մարմին քաղաքի առաջադեմ անձնավորություններից: Այդ մարմնի ժողովներին մասնակցում էի նաև ես: Այդ մարմինը մի առանձին գործ չէր կատարում, գլխավորապես դրամական-նյութական հարցերով էր զբաղված: Ամսական վճարներ էին տալիս և ամեն մեկն էլ իր կող-

[1] **Շխյան Սիմոն** (1867–?), ՀՅԴ հիմնադիր սերնդի ակտիվ դեմքերից, սերտորեն գործակցել է Ռոստոմի հետ՝ Ժնևում ուսանելու տարիներին:

մից իր շրջանում ամսավճարներ էր հավաքում: Ես էլ իմ խմբի ամսավճարներն էի մուծում:

Կամաց-կամաց Գանձակը դառնում էր Դաշնակցության օժանդակ մի կարևոր կետը: Հավաքված դրամը Շխյանը անձամբ տանում էր Թիֆլիս և նոր-նոր լուրեր բերում: Գործունեության վայր էր ընդունված Պարսկաստանի Սալմաստ և Խոյ գավառները: Գործիչներ էին ճանապարհվում այնտեղ: Մեր խմբում գտնվող օր. Սաթենիկ Մատինյանը[1] պատրաստվում էր հաջորդ ուսումնական տարվանից փոխադրվել այնտեղ: Նա ինձ համոզում էր այն կողմ[2] մեկնել՝ ես դժվարանում էի ընդունել: Ես 1889-ի զորակոչի միջոցին վիճակահանությամբ զինվոր էի համարվում, բայց որովհետև ուսուցիչ էի, ըստ օրենքի կարող էի զինվորական իսկական ծառայությունից ազատվել, եթե վեց տարի շարունակ ուսուցիչ լինեի և ամեն տարի զինվորական վարչությանը ներկայացնեի ուսուցչական պաշտոնավարության վկայական: Այս հանգամանքը խանգարում էր ինձ անմիջապես հեղափոխական ասպարեզ նետվել, և շարունակում էի մնալ ուսուցիչ Գանձակում: Սաթենիկ Մատինյանը առաջին կին հեղափոխականն էր, որին ես հանդիպում էի Գանձակի ուսուցչությանս առաջին տարում: Նրա եղբոր՝ Նիկոլայի մասին էր խոսվում որպես հեղափոխականի, որ եղած է, ասում էին Զվիցերիայում և հեղափոխությանն նվիրված անձնավորություն է: Մենք արդեն լսել էինք նրա մասին որպես Ախալցխայում տեսչին ծեծողի:

Նույն ուս. տարվա վերջերքում Գանձակ եկավ մի գեղեցիկ օրիորդ՝ Մարիամ Զավարյանը՝ Սիմոնի քույրը, որ նույնպես հեղափոխականի անուն էր վայելում: Սրանց միջոցով Թիֆլիսի դաշնակ-

---

[1] **Մատինյան Սաթենիկ** (Օրիորդ Ծաղիկ, 1874–1930), ՀՅԴ առաջին կին գործիչը Պարսկաստանում: Հետագայում ամուսնացել է Հովսեփ Արղությանի (Խանասորի Իշխանի) հետ:

[2] Այսինքն՝ Պարսկաստանի հայաշատ վայրերը:

ցական գործիչներն արդեն իմ մասին գաղափար ունեին՝ առանց ինձ տեսնելու:

Հաջորդ ուսումնական տարում (1890–91) Սաթենիկ Մատինյանը մեկնեց Պարսկաստան, այնտեղ էին գտնվում Արղության Հովսեփ (Իշխան)[1], Պետո[2], Աբրո[3] և այլ գործիչներ:

1891-ի վերջերքում՝ Նոր տարու արձակուրդներին Սիմոն Շխյանի հետ մեկնեցի Թիֆլիս: Դեկտեմբերի 31-ն էր, հենց նույն գիշեր Սիմոն Զավարյանը եկավ մեր հյուրանոցը: Առաջին անգամ էի տեսնում նրան, որի մասին շատ էի լսել: Հասարակ վերաբերմունքը, պարզ խոսակցությունը, որ նա վարում էր բազմաթիվ հարցերի շուրջը, համարյա թե շատախոսության հասցնելով, ընկերականությունը մեզ շատ մոտեցրին իրար: Առաջին տպավորությունս այն էր, որ շիտակ խոսող և նվիրված անձնավորություն է, որ գործով տարված է: Այնուհետև շատ շատերին եմ հանդիպել, բայց քչերն են ինձ այդ ներշնչել, շատերը գործում էին իբրև պաշտոնյաներ, գնում են, գալիս, խոսում, բայց սովորական մարդիկ են, իրենց առօրյա կյանքը, իրենց անձնականը աչքի առաջն է: Բայց Սիմոնը տարբեր մարդ է, միշտ պատրաստ տվյալ հարցով հետաքրքրվելու, ծրագրելու և հրահանգի ձևով առաջադրելու: Նա մի գրավիչ ընկեր է, զրույց անող: Իր ամեն ինչը ընկերինն է, համայնական մարդ է կյանքի մեջ, իր տունը բոլորինն է: Բոլոր ընկերներին քնելու տեղ

---

[1] **Արղության Հովսեփ** (Խանասորի Իշխան, 1863–1925), դաշնակցական գործիչ, հայդուկ, Հայկական VII կամավորական խմբի հրա մա նատար Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում, հետագայում ՀՀ դեսպանը Իրանում:

[2] **Պետո** (Պետրոսյան Այեքսանդր, ?–1896), ՀՅԴ հիմնադիր սերնդի ակտիվ գործիչներից մեկը: Վան-Վասպուրականի դաշնակցական կազմակերպության հիմնադիրը: Նահատակվել է 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունից հետո՝ Կարահիսար լեռան լանջին:

[3] **Աբրո** (Սահակյան Մկրտիչ, 1861–1896), ՀՅԴ առաջին գործիչներից մեկն Արևմտյան Հայաստանում: Զոհվել է Սասունում ձնահյուսքի տակ ընկնելով:

կգտնի իր սենյակում, սեղանը բոլորի համար է, բաց է, ինչպես և իր սիրտը:

Հաջորդ օրը՝ 1892 թվի դեկտեմբերի 1-ին[1], առավոտյան փողոցումն ենք, ծանոթացել ենք մի խումբ գործիչների հետ, բռնվել խոսակցությամբ, հանկարծ բոլորը միասին դարձան դեպի տրամվայը, որ անցնում էր, և նրա հետևից մեկը կաղն ի կաղ վազում է՝ հասնելու համար. «Քրիստափորը, Քրիստափորը, ասում են նրանք, անպատճառ ուզում է հասնի իր կաղ ոտով»: Եվ իսկապես հասավ, նստեց: Քրիստափորին առաջին անգամ այդ պատկերի մեջ եմ տեսել, շարժուն վիճակում, աշխատելիս, վազելիս: Այնուհետև երբ էլ պատահել եմ՝ դուրսը, իր տանը, աշխատանքի տեղում, նա միշտ շտապելիս, վազելիս, աշխատելիս է եղել: Հաճախ է պատահել, որ նա ժողովի չի եկել, որովհետև այդ օրը նա որոշ աշխատանք պիտի կատարի: Հաճախ էլ ժողովն իր տանն է նշանակել տվել, որ պեսզի թե ժողովին մասնակցի և թե իր աշխատանքը կատարի: Նա ռուսական մի լրագրի՝ «Նովոյե Օբոզրենիեի»[2] սրբագրիչն էր, պիտի որոշ ժամին սրբագրած լիներ: Նա լավ կազմակերպիչ էր, տակտ ուներ և հաշվի մարդ էր: Համոզիչ լեզուն խոշոր դեր էր կատարում նրա գործունեության մեջ, համառ էր իր համոզմունքների մեջ և դիմացինին ենթարկել կարող էր իրեն, երբ ուզենար. մի դյութող ժպիտ ուներ, որ համոզիչ լեզվից ավելի ուժեղ էր: Նրա տանը ինչ-որ ճնշվածություն կար, ժողովում շատերն ազատ չէին զգում, բարձր խոսել, շարժվել, երգել, ինչպես այդ լինում էր Սիմոնի մոտ: Կինը ռուս էր, մի ռուս հեղափոխականի կին, որից բաժանվելով[3], միացել էր Քրիստափորին, երեխա ուներ, ինքը պիտի հանգստանար, վերջապես մտերմական միջավայր չէր

---

[1] Հունվարի 1-ին:

[2] «Новое обозрение» (1884–1906), բաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, հրատարակվել է Թիֆլիսում:

[3] Անհանգստ ծվելով:

ստեղծվում: Կինը հայասեր չէր, և առհասարակ նրա սրտով չէր, որ իրենց տանն են հավաքվում, այդ իսկ պատճառով էլ Քրիստափորի մոտ երբեք կարևոր, մեծ ժողովներ չէին լինում, այլ միայն նեղ շրջանակի, երեք-չորս հոգու խորհրդածություն, այն էլ եթե ինքը՝ Քրիստափորը, շատ զբաղված լինելու պատճառով չէր կարող ժողովի գալ, պիտի տանն աշխատեր, մինչդեռ նրա ներկայությունն անհրաժեշտ էր: Նման դեպքերում ինքն էր ասում. «Դե, ի՛նչ արած, եկեք ինձ մոտ»:

Գանձակում 5 տարի ուսուցչություն անելու միջոցին ես հաճախ Թիֆլիս էի գալիս: Միշտ էլ ժողովներ էինք ունենում: Այդ ժողովները տեղի էին ունենում բացի Սիմոնի տանից, նաև Մատինյան Նիկոլայի, Արշակ Թադևոսյանի տանը, շատ սակավ դեպքում Հովսեփ Տեր-Դավթյանի[1] տանը: Բայց ընդհանուր ժողովները սովորաբար լինում էին հյուրանոցներում: Հաճախ Թիֆլիսում էր ապրում Բարսեղ (Տեր) Գրիգորյանը (Կարա Մելիք): Նա ուներ մշտական տեղ մի ծանոթ հյուրանոցում, որի տիրոջ հետ մոտ կապեր ուներ: Տերը գիտեր ամեն ինչ: Այնտեղ էլ լինում էին ժողովները: Մինչև 20–25 հոգի էին հավաքվում և օրերով ժողովը ձգձգվում էր, լրտեսներն ու ոստիկանները փողոցում, հյուրանոցի դռների առաջ վխտում էին, իսկ մենք ժողով էինք անում, գործունեության նախագիծ կազմում, գումարները բաշխում, գործիչներ նշանակում: Ռուս ոստիկանությունը շատ թույլ էր, և առհասարակ մենք շատ ազատ էինք զգում մեզ:

Մինչև [18]93 թվականը Ռոստոմը չկար Կովկասում, նա Ժնև էր[2]: Նրան պատահեցի առաջին անգամ Գանձակում, կարծեմ [18]94-ի գարնանը: Ինձ մոտ էր ապրում: Միակ անձնավորությունը

---

[1] **Տեր-Դավթյան Հովսեփ** (1870–1946), ազատագրական շարժման գործիչ, ակնաբույժ, ՀՅԴ անդամ:

[2] Այստեղ հեղինակը տարիների հեռավորության պատճառով ակնհայտորեն շփոթել է փաստերը: Ընդհակառակը՝ Ռոստոմ Ժնև է մեկնել հենց այդ թվականին:

վարիչների մեջ, որ պաշտոն չուներ, սեփական աշխատանք չուներ, այլ ապրում էր հասարակական փողերով ու ամբողջապես տրված գործին, դա Ռոստոմն էր: Նրան մեր մեջ Քոթոթ անունն էինք տալիս: Չմոռանամ հիշել, որ Սիմոնի կեղծ անունն էր Անտոն, իսկ Քրիստափորինը՝ Էլեն:

Ռոստոմը (Ստեփան Զորյան) տպավորություն թողող դեմք չէր: Նա նշանավոր էր իր տոկունությամբ և գործին նվիրվածությամբ: Նա շարժուն վիճակումն էր, ամեն տեղ լինում էր, ուրեմն և ամենուրեք կապեր ուներ և ամենքին կարող էր հրահանգներ տալ: Ճիշտ է, Դաշնակցությունը ապակենտրոնական կազմակերպություն էր, բայց տեղերը միշտ սպասում էին հայտնի անհատներից հրահանգների, կամ ավելի շուտ անհատները, Սիմոնը, Քրիստափորը և վերջերքում, երբ նրանք չկային, Ռոստոմը Ընդհանուր ժողովների որոշումներից զատ ուներին գործի վրա ահագին ազդեցություն: Եվ ահա գործն ընթանում է այնպես, ինչպես որ հրահանգում են այդ անձնավորությունները: Եվ պիտի խոստովանեմ, որ Ռոստոմն իր ուժերից վեր գործի տակ էր մտած, նա, իմ կարծիքով, չուներ քաղաքական գործիչից պահանջվող լայն շրջահայացությունը, որը նման դեպքերում անհրաժեշտ է: Նա շատ լավ գործիչ կլիներ ավելի նեղ սահմաններում, բայց այն լայն սահմանը, որ նրա գործունեության ասպարեզ դարձան, նրա ուժերի համար չափազանց մեծ էր: Նա շատ լավ դավադրական գործիչ էր նեղ իմաստով՝ տեռոր[1] կազմակերպել, շենք պայթեցնել, բայց լայն քաղաքական գործունեություն վարել՝ Պարսկաստանից սկսած մինչև Կովկաս, Տաճկաստան, մինչև Ժնև, դա շատ մեծ ուժ ու դիվանագիտական ըմբռնում է պահանջում, որ պակասում էր Ռոստոմի մոտ:

Գանձակից Թիֆլիս գալիս, ես միշտ բերում էի այնտեղ հավաքված գումարը: Գանձապահն էր օրիորդ Դարիա Գոլոշյանը

[1] Ահաբեկչություն:

(Վարդան Գոլոշյանի[1] քույրը, որ վերջը ամուսնացավ Արշակ Թադևոսյանի հետ): Ամեն անգամ, երբ տալիս էի 500–600 ռուբլի (իսկ այդ ժամանակ 500 ռուբլին մեծ փող էր) նա բացականչում էր. «Այ՛ գավառն այսպես է, տեսեք, մեր Թիֆլիսում այսքան չենք կարողանում ժողովել»:

1892 թվականի աշնանից սկսած ես էի պահպանում կապը Թիֆլիսի հետ: Սիմոն Շխյանը չկար: Նա մեկնել էր Շվեյցարիա իր ուսումը կատարելագործելու: Նրան իր հաշվով ուղարկեց գանձակեցի կալվածատեր Հովսեփ Մելիք-Բեգլարյանը, մի հասարակական գործիչ, որ մասնակցություն ուներ բոլոր աչքի ընկնող հասարակական գործերում: Գանձակի բարձր շրջաններում Դաշնակցության համար դրամ-անդամավճար հավաքողը նա էր: Նույն անձնավորությունը իր հաշվով Շվեյցարիա ուղարկեց Գարեգին Խաժակին[2]: Նույն Մելիք-Բեգլարյանի հաշվով է[3] սովորել Շվեյցարիայում նաև Սիմոն Հակոբյանը[4]: Նա (վերջը) [18]95 թվին ուզեց ինձ էլ ուղարկել արտասահման՝ ուսումս շարունակելու, բայց ես հրաժարվեցի, որովհետև որոշեցի [18]95-ը վերջանալուն պես պաշտոնս (ուսուցչությունը) թողնել ու հեղափոխական ասպարեզ մտնել: [18]95 թվի վերջը լրանում էր ուսուցչության 6 տարին:

Սիմոն Շխյանը լավ անուն էր թողել Գանձակում: Ժնևում նա մոտենում է «Դրոշակի» խմբագրության և իբրև ուսանող օգնում է ինչքան և ինչով կարող է: Նրա մասին պատմում են, որ [18]95-ի

---

[1] **Գոլոշյան Վարդան,** (1867–1889), Արևմտյան Հայաստան անցած և 1889-ին Վանից ոչ հեռու՝ Չուխ Կետուկ վայրում զոհված հայ ազատագրական շարժման առաջին նահատակը:

[2] **Գարեգին Խաժակ** (Զազայան, 1867–1915), ՀՅԴ գործիչ և տեսաբան: Մեծ եղեռնի զոհերից:

[3] Այսինքն՝ նրա տրամադրած դրամական միջոցներով:

[4] **Հակոբյան Սիմոն** (1880–1942), գրականագետ, պրոֆեսոր, ՀՅԴ գործիչ, հետազայում անցել է կոմկուսի շարքերը: Վիեննայում և Բեռլինում նրա խմբագրությամբ հրատարակվել է «Արեգ» գիտա-գրական հանդեսը: Դասավանդել է Երևանի պետական համալսարանում, բռնադատվել և գնդակահարվել:

ջարդերին[1] այնպես էր ազդվել, որ օրերով լաց էր լինում և հայկական դատի նկատմամբ իր հույսերը կորցրել էր: Այս կետը բնորոշ է, որովհետև վերջերս, երբ Հայաստանում դաշնակցական կառավարության[2] օրոք Ս. Արարատյանը[3] ֆինանսների մինիստրն էր, և որը խիստ կերպով մեղադրվում էր խոշոր զեղծումների գործում, նույն Շխյանը, նրա քենակալը, որպես պատմում են, այդ զեղծումների գործում բավական դեր է խաղացել: Սա իմ կարծիքը չէ, ինքս չգիտեմ, բայց շատ տեղերից լսած լինելով՝ պարտք եմ համարում արձանագրել: Գիտեմ, որ Ս. Շխյանը այն ժամանակ ապրում էր Երևանում, բայց հենց որ դաշնակցական կառավարությունը վերացավ, նա կրկին փոխադրվեց Թիֆլիս, որտեղից եկել էր:

Գանձակում եղածս ժամանակ առիթ եմ ունեցել տեսնվելու այն ժամանակվա հայդուկային գործիչների հետ: Մի սովորություն կար. երբ մի գործիչ Թիֆլիս էր հասնում, իր միսիան[4] կատարելուց հետո, Թիֆլիսի հրահանգի համաձայն պիտի շրջեր ճանապարհի վրա ընկնող բոլոր կարևոր վայրերը: Այդ կատարվում էր կապերն ամրացնելու և տեղական մարմինների տրամադրությունը բարձրացնելու համար: 1892 թվականին եկան Պետոն և Աբրոն: Այս վերջինը երկար չապրեց, ուստի նրա մասին շատ քչերը գիտեն: Նա Սասուն գնալիս ձյան հյուսերի տակ թաղվեց, մի բավականին խոստումնալից, նվիրված և գիտակից անձնավորություն:

Պետոն հայտնի էր Սարուխանյան կեղծ անունով և պիտի ասած, որ սկզբնական շրջանում Դաշնակցության գործունեության մեջ կարևոր դեր է խաղացել թե՛ Պարսկաստանում և թե՛ Վանում: Սա մի վառվռուն, դեպի գործը մեծ հավատ ունեցող երիտասարդ

---

[1] Նկատի ունի 1890-ական թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից իրականացված հայերի կոտորածը:

[2] Նկատի ունի Հայաստանի Հանրապետությունը (1918–1920):

[3] **Արարատյան Սարգիս** (1866–1943), հասարակական, պետական գործիչ, ՀՀ ֆինանսների նախարար (1919–1920), ՀՅԴ անդամ:

[4] Առաքելություններ:

էր: Նա զարմանում էր, որ այդպիսի ժամանակ մարդիկ կարող են իրենց տեղերում նստել և որևէ մասնագիտությամբ պարապել, այնինչ գործը հսկայական է, և գործիչները՝ թվով շատ քիչ: Երբ նրանք մեկնեցին, շատ չանցած թե՛ Պետոյից և թե՛ Սաթենիկ Մատինյանից (Խոյի շրջան) նամակներ ստացա, որով թախանձագին պնդում էին, որ անմիջապես ուսուցչությունը թողնեմ ու մեկնեմ Պարսկաստան: Ես, ինչպես վերը բացատրել եմ, նամակով պատասխանեցի, որ պայմանները (զինվորական) թույլ չեն տալիս և միայն 1895 թվականի վերջը կարող եմ ազատվել զինվորական պարտականությունից, որով և կարող կլինեմ մեկնել Կովկասից, ուր որ ուզեմ:

Քիչ անց եկավ և Վարդանը[1], որ դեռ նոր մարդ էր, եղած Պարսկաստանում: Նա կռվող տղաք էր հավաքում: Իմ խմբից նրան միացան երկու հոգի, որոնցից մեկն էր Լևոն Արամյանը, որ այնքան անուն հանեց իբրև հայդուկ և ճարպիկ տեռորիստ[2]:

Գանձակ եկավ կարծեմ [18]94 թվին[3] նաև Ռոստոմը: Նա եկել էր Ժնևից և ծանոթանում էր տեղական գործերի հետ: Նա գլխավորապես հետաքրքրվում էր հայդուկների խնդրով: Այդ ժամանակ մեր գործունեության կենտրոնը Սալմաստ-Վան գիծն էր: Զենքեր էին գնվում այնտեղ ուղարկելու համար և մարդիկ էին գրավվում այդ զենքերը գործածելու համար:

Վերջին շրջանում հաճախ գալիս էր Սիմոն Զավարյանը: Նա իջևանելու տեղ ուներ Մելիք-Բեգլարյանի տանը: Թիֆլիսում նա բարեկամացել էր օրիորդ Մաշուկ Ամբրոյանի հետ. սա Մելիք-Բեգլարյանի քենին էր: Եվ արդեն խոսվում էր, որ հավանորեն ամուս-

---

[1] **Մեհրաբյան Սարգիս** (Վարդան, Խանասորի Վարդան 1867–1943), ազատագրական շարժման գործիչ,, Խանասորի արշավանքի հրամանատար, ՀՅԴ անդամ: 1914–1916 թթ. Հայկական V կամավորական խմբի հրամանատար:

[2] Ահաբեկիչ:

[3] Այստեղ նույնպես շփոթմունք կա: Պետք է կարդալ 1895 թվին:

նանա, բայց այդ տեղի չունեցավ: Սիմոնը զգացմունքի մարդ էր և գերազանցորեն ազնիվ, իսկ օրիորդը մի շատ սովորական և խիստ քմահաճ, կամակոր, երես տված անձնավորություն: Նրանք իրար ընկեր չէին կարող լինել, բայց ժողովուրդն ասում է. «Սերն աթարին է կպչում»: Այս խոսքը շատ էր սիրում ինքը՝ Սիմոնը, և նման դեպքում գործածում: Ու այդ խոշոր մարդը մի ժամանակ նրանով տարվեց, թեև իսկական գործը մի րոպե չմոռացավ: Բայց կարելի է երևակայել, թե նրան ինչպիսի հարված եղավ, երբ այդ օրիորդը հետո գրավվեց Արմեն Խոսրովով՝ նրա հետ ամուսնացավ: Նրա արտաքինը վեր դասվեց Սիմոնի մաքուր հոգուց: Գարոն[1] էլ գրավվեց օրիորդի հարստությամբ: Հաճախ եմ լսել Սիմոնից Գարոյի մասին. «Նա հաշվի մարդ է, շատ գործնական է»:

Ամուսնությունների մասին բավական ծաղրական ակնարկներ էին լինում ընկերական շրջանում: Լավ հիշում եմ, [18]95 թվի սկզբներին Թիֆլիսում մի մեծ ժողով կար, դեռ մեծ ջարդեր չկային[2], հեռանկարները շատ փայլուն, երիտասարդներ էինք և տրամադրություններս լավ: Արդեն Նիկոլայ Մատինյանը ամուսնացել էր Մարիամ Զավարյանի հետ, Արշակ Թադևոսյանը՝ Դարիա Գոլոշյանի հետ, Հովսեփ Արղությանը շատ մոտ էր Սաթենիկ Մատինյանի հետ, Սիմոնը Ամբրոյանի հետ կապված լոկ պլատոնական կապով: Ժողովին մասնակցում էր նաև Հակոբ Վարդ Պատրիկյանը, նախկին հնչակյան, արդեն որոշ անցյալով հեղափոխական, այս կապակցությունների առթիվ հենց ժողովում ծաղրաբար արտասանեց. «Մոցիքուլը[3] Հայաստան» և ընդհանուր քրքիջ առաջ բերեց:

---

[1] **Փաստրմաճյան Գարեգին** (Արմևն Գարո, 1873–1923), ՀՅԴ ակտիվ գործիչ: 1896 թ. մասնակցել է Բանկ Օտտոմանի գործողությանը: Օսմանյան խորհրդարանի անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է հայ կամավորական շարժմանը: Հետագայում ԱՄՆ-ում ՀՀ դեսպանը:

[2] Արևմտահայության ջարդերը մեծ ծավալների հասան 1895 թ. աշնանը:

[3] Կամավոր:

Դաշնակցությունն այդ միջոցին արդեն բավական ազդեցություն էր ձեռք բերել: Նրա գործունեությունը օրեցօր ծավալվում էր բոլոր հայկական շրջաններում, մյուս կողմից նա աշխատում էր և պետությունների վրա կողմնակի ճանապարհներով ազդել, որ պեսզի նրանք հայկական դատը պաշտպանեին: 1894-ի աշնանը Սասունի շրջանում թեթև կերպով ջարդ ու ավերմունք եղավ[1]: Այդ ժամանակ հայ ժողովուրդը դեռ ջարդերի մասին գաղափար չուներ, որևէ սպանություն, մի թալան, մի բռնություն ահագին աղմուկի պատճառ էր դառնում: Ազգային ժողովում[2] հարց էր բարձրանում, պատրիարքարանը պաշտոնական դիմում էր կատարում, քննություն էր նշանակվում, և հաճախ հանցավորը պատժվում էր, և հայ վրդովված միտքը բավարարություն էր ստանում: Սասունի առաջին այս դեպքը մեծ իրարանցում բարձրացրեց կովկասյան հայության մեջ: Մամուլի մեջ աղմուկ, ամեն տեղ ազգային ցասում ու խորհրդածություններ: Ամենքը հույս ունեին, թե այս անգամ միջամտություն կլինի ոչ միայն եվրոպական մեծ պետությունների, այլ նաև ռուս ցարիզմի կողմից: Սակայն միջամտությունը ուշանում էր, և այդ ժամանակ դաշնակցական ինիցիատիվայով[3] կաթողիկոսի[4] մոտ զանազան քաղաքներից պատվիրակներ ուղարկելու պատրաստություններ տեսնվեցավ: Պատվիրակությունը պիտի համոզեր Խրիմյանին, որ անձամբ Պետերբուրգ գնա, ներկայանա կայսրին[5]

---

[1] Նկատի ունի Սասունի հայության 1894 թ. ինքնապաշտպանությանը հետևած կոտորածները: Թուրքական զորքը և քրդական ջոկատներն ավերեցին շուրջ 40 հայկական գյուղ և սպանեցին 10 հազարից ավելի մարդ:

[2] Ստեղծվել է 1844 թ. Կ. Պոլսում: Հետագայում գործում էր Արևմտահայերի Ազգային սահմանադրության հիման վրա:

[3] Նախաձեռնությամբ:

[4] Նկատի ունի **Մկրտիչ Խրիմյանին** (1820–1907), ով Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվել 1892 թվականին:

[5] Խոսքը Ռուսաստանի վերջին կայսր (1894–1917) **Նիկոլայ II Ռոմանովի** (1868–1918) մասին է:

և իր միջնորդությունը հայցի հայ ժողովրդի դատի պաշտպանության համար: Ջարդը լավ առիթ էր այդպիսի դիմումի համար:

Գանձակում երկար տատանվեցին պատվիրակ ընտրելու գործում: Գործը պատասխանատու էր. դիրքով մարդիկ հանձն չէին առնում: Կանգ առան ինձ վրա: Ես ընդունեցի: Բազմաթիվ ստորագրություններով համախոսական վերցրի հետս, որով Գանձակի հայ հասարակությունը խնդրում էր ու թախանձում կաթողիկոսին անմիջապես ցարի մոտ երթալ: Նշանակվեց օրը, ճանապարհվեցի դեպի Աղստաֆա, ուր պիտի հանդիպեի Թիֆլիսի ու Բաթումի պատվիրակներին: Աղստաֆայում հանդիպեցի 3 հոգու՝ Համբարձում Առաքելյանն[1] ու Ավետիք Արասխանյանը[2] Թիֆլիսից, իսկ Հակոբ Մեղավորյանը[3] Բաթումից: 4 հոգով ճանապարհվեցինք դեպի Երևան: Ձմեռվա ամենացուրտ օրերն էին: Էջմիածնում կաթողիկոսին գտանք հուսահատության մեջ: «Ոտքերս շղթայած են, տեղես չեմ կրնա շարժի: Բյուրական երթալու համար անգամ պրոկուրորից[4] հրաման պիտի առնեմ: Ինչպե՞ս մինչև Պետերբուրգ գնամ»:

Շատ դժվարություններով կարողացանք խոստում առնել, որ մեր վերադառնալուց մի շաբաթ հետո պիտի ճանապարհվի Թիֆլիս, հայոց եկեղեցիները այցելելու և ապա դիմում պիտի կատարի ցարին՝ Պետերբուրգի եկեղեցին[5] այցելելու համար թույլտվություն ստանալու համար: Մենք ժողովրդի անունով ճնշում գործ դրեցինք, և պետք է ասած, որ Խրիմյանը, համոզված լինելով, որ դրանից

---

[1] **Առաքելյան Համբարձում** (1855–1918), հասարակական-քաղաքական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր: Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից:

[2] **Արասխանյան Ավետիք** (1857–1912), տնտեսագետ, հրապարակախոս, գրականագետ, հասարակական գործիչ: Հրատարակել և խմբագրել է «Մուրճ» ամսագիրը (1889–1900):

[3] **Մեղավորյան Հակոբ** (1856–1930), հայ ազատագրական շարժման գործիչ, իրավաբան, հնչակյան: Հետագայում հեռացել է կուսակցությունից:

[4] Նկատի ունի Սինոդի դատախազին:

[5] Այդ ժամանակ Ս. Պետերբուրգում գործում էին երկու հայկական եկեղեցիներ՝ Ս. Կատարինեն և Ս. Հարությունը:

ոչինչ չպիտի դուրս գա, ստիպված եղավ ժողովրդի կամքը կատարելու: Նա լաց լինելով ցույց տվեց արտասահմանյան հայությունից ստացված հեռագրեր, նույն իմաստով իրեն ուղղված, և ավելացրեց. «Ամենքը կը կարծեն, թե կաթողիկոսը բան մը կներկայացնե իրենից, չգիտեն որ նա անզոր մի վանահայր է: Ես Վարագա վանքին մեջ շատ ավելի ուժեղ կզգայի ինձ, քան թե այստեղ՝ Հայաստանի Մայր Աթոռի գահի վրա: Բայց թող օրհնյալ լինի ժողովրդի կամքը, կկատարեմ այդ կամքը, ցույց տալու համար, թե ինչքան անզոր է հայոց կաթողիկոսը՝ Վասպուրականի Արծիվը»: Մեղավորյանին ճանաչեց. «Դու՛ Հակոբ, կհիշե՞ս, եկար Երուսաղեմ, կուզեիր Հայրիկը փախցնել[1] իր աքսորավայրեն: Ես մերժեցի, որովհետև դիմողները քանի մը տղաքներ էին. հիմա դիմողը ժողովուրդն է»:

Վերադարձանք: Կաթողիկոսն իր խոսքը կատարեց: Մեկնեց Թիֆլիս, ապա Նոր Նախիջևան, բայց այնտեղ, կարծեմ, 6 ամիս պահեցին և թույլ չտվեցին ավելի հեռուն երթալ: Վերջը, ճիշտ է, թույլ տվին, և նա հասավ Պետերբուրգ, ներկայացավ Նիկոլա ցարին, սակայն ոչ մի հետևանք [չունեցավ] այդ դիմումը, ընդհակառակը՝ միտրոպոլիտի միջոցով ցարը հասկացրեց, որ հայ ժողովրդին պաշտպանելու համար առիթ կներկայանար իրեն, եթե հայը հունադավանություն ընդուներ: Այս առաջարկին Խրիմյանը իր սրախոս պատասխանն էր տվել, թե ծաղկեփունջն այնքան շատ գեղեցիկ է, որքան տեսակ-տեսակ վարդերից ու ծաղիկներից է նա կազմված: Եվ Խրիմյանը սրտաբեկ վերադարձավ, իսկ հայ ժողովուրդն այնուհետև վկա եղավ, թե ինչպես հաջորդ ամառը, նույն ռուս ցարի բարեհաճ հավանությամբ տաճկահայությունը ենթարկվեց [18]95 թվի սոսկալի ջարդերին:

---

[1] Երուսաղեմում Մ. Խրիմյանի գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս **Էմմա Կոստանդյան,** Մկրտիչ Խրիմյանն ու հայկական Երուսաղեմը. «Հայագիտական ուսումնասիրություններ». Եր., 2013, էջ 318–329:

Մեր գործունեությունը ընդարձակելով՝ մենք չէինք բավականանում անդամավճարներով, առիթ էինք փախցնում, որից որևէ կերպ շահ ստանալու հօգուտ հեղափոխության. երեկույթներ էինք կազմակերպում, ներկայացումներ տալիս, տաճկահայ տարազով խմբերգեր գումարում: Ոգևորությունն ահագին էր. ժողովուրդը սրտով մասնակցում էր մեր բոլոր ձեռնարկումներին: Իհարկե, պաշտոնական դիմումի մեջ մենք ոստիկանությանը ցույց էինք տալիս, որ տրվում է ի նպաստ դպրոցի գրադարանին և այլ լեգալ[1] հիմնարկի: Իսկ իրապես եկամուտի մեծ մասը մտնում էր հեղափոխական գանձարանը: Կառավարությունը և ոստիկանությունը շատ էին անտարբեր կամ շատ միամիտ:

Մի անգամ, երևի 1893 թվին, պատրաստվել էինք խաղալու «Պեպո»: Այդ միջոցին Գանձակ եկավ Սարդարյան ազգանունով դերասանի անուն հանած մի անձն: Նա խնդրեց մասնակցել ներկայացման և պայման առաջարկեց, որ հասույթի կեսն իրեն տրվի: Մենք մերժեցինք: Ներկայացման օրը նա գաղտնի դիմել էր ոստիկանության և հայտնել, որ այդ ներկայացման հասույթը հատկացված է տաճկահայ դատին: Երեկոյան դեմ կառավարության կողմից գրություն ստացվեց, որ ներկայացման հասույթի կեսը պիտի հատկացվի ինվալիդներին[2], հակառակ դեպքում ներկայացումն արգելվում է: Այդ միջամտությունը վրդովեցրեց բոլոր սիրողներին[3]: Առաջարկ եղավ ներկայացում չտալ: Բայց մեծամասնությունը պնդեց, որ այդ սխալ կլինի՝ կտանք և ինվալիդներին մի քանի ռուբլի մի այն կհատկացնենք: Այդպես էլ եղավ՝ զուտ հասույթ մնաց մոտավորապես 230 ռուբլի, հաշվի մեջ դուրս բերվեց, որ հասույթը միայն 18 ռուբլի է եղել: 9 ռուբլի ուղարկեցինք ինվալիդների կասսան[4]: Կա-

[1] Օրինական:
[2] Հաշմանդամներին:
[3] Նկատի ունի սիրող դերասաններին:
[4] Դրամարկղ:

ռավարությունից սիրողները շնորհակալության թուղթ ստացան այդ նվերի համար:

Բայց դրա դեմ Սարդարյանը տուժեց չարաչար. նախ արգելեցինք, որ նա Գանձակում որևէ ներկայացում հաջողեցնի, իսկ հաջորդ ամառը, երբ ես ըստ իմ սովորության գտնվում էի իմ ծննդավայր Նոր Բայազետում, նույն այդ Սարդարյանը եկավ այնտեղ ներկայացում կազմակերպելու: Իմանալով այդ՝ ամբողջ երիտասարդության հասկացրի, թե ինչ տխուր մարդ է այդ Սարդարյան կոչվածը: Ներկայացման օրը ոչ մի տոմսակ չծախվեց, և Սարդարյանը ձեռնունայն վերադարձավ: Նույնպիսի եռանդով խմբեր կազմակերպվում էին Նոր Բայազետում, թե՛ ներկայացումներ տալու և թե՛ տաճկահայ ժողովրդական տարազով խմբերգեր կազմակերպելու համար:

1892 թվի ամառը խոլերայի ժամանակ, բոլոր երիտասարդներս, թվով մի 15 հոգի՝ ուսուցիչ և ուսանող, հավաքվեցինք և բաժանվելով կազմակերպեցինք թռուցիկ սանիտարական խմբեր՝ օգնության հասնելու հ[ա]մ[ա]ր հիվանդներին: Մենք սովորեցինք գավառական բժշկից հիվանդներին խնամելու անհրաժեշտ միջոցները և շրջեցինք թե՛ ամբողջ քաղաքը (Նոր Բայազետ) և թե՛ շրջակա գյուղերը: Մտնում էինք հիվանդի մոտ, դեղ էինք տալիս, փորին տաքացնող փաթեթներ էինք կապում և պատվերներ տալով տնեցիներին՝ հեռանում էինք: Բացի այդ մաքրել տվինք քաղաքի ամբողջ անմաքրությունը. փողոցներն ու բակերը ավլել էինք տալիս: Այդպիսով մենք առանք հիվանդության մեծ տարածումը, այնպես որ ամբողջ քաղաքում մահացողների թիվը 80-ից չէր անցնում: Երիտասարդ տարրի այդ վարմունքը ցնցեց քաղաքի եսամոլ բնակիչներին, տեսան, որ կարելի է հարևանին օգնություն կազմակերպել որոշ զրկանքների գնով: Երբ գյուղերից վերադառնում էինք, շատերը մեզ չէին մոտենում՝ վախենալով վարակվելուց: Եվ գտնում

էին, որ մեր արածը շատ լավ բան է: Այս և նման երևույթները ամենքը ընդունում էին հեղափոխական տրամադրությունների անմիջական հետևանք, և այդ իսկ պատճառով հանուն հեղափոխության ձեռնարկված բոլոր ներկայացումները, երեկույթները կատարյալ հաջողությամբ էին վերջանում նյութական տեսակետով: Այսպես էր ամեն տեղ, բոլոր քաղաքներում և ավաններում:

Հեղափոխականը որոշ դիրք էր ձեռք բերում, և ժողովուրդը նրա առաջնորդությունը ընդունում էր: Այդ հանգամանքը որոշ ուժ էր տալիս հեղափոխական գործին: Նույն [18]92 թվի խոլերայի ժամանակ կարգադրված էր Նոր Բայազետում, որ դրսից եկողներին ենթարկեին դիզինֆեկցիայի[1]:

Մի անգամ երկու ոստիկան (հայ) տանում էին փողոցով երկու քրդի, որոնք քաղաք էին մտել, տանում էին և ուզածին պես կնուտով[2] ծեծում: Հայը քուրդ է ձեռք ձգել, հակառակ այդ հանգամանքին, որ ինքը կարգապահության հսկող է, ինքն է նրան խփում, չնայելով, որ քուրդը առանց ձայն հանելու գնում է ուր որ տանում են: Ես այդ տեսա և չհամբերեցի՝ ձայն տվի, թե ինչի են ծեծում, մինչ քրդերը գնում են: Ոստիկաններից մեկը կոպիտ պատասխան տվեց ինձ և ավելի պինդ խփեց քրդին, ես բարձրացրի գավազանս և ոստիկանին խփելով՝ պաշտպանեցի քրդին: Ոստիկանը ձեռքը վեր բարձրացրեց ինձ վրա, բայց ամբոխը ոստիկանին բռնեց: Այս դեպքը պրիստավը[3] նյութ շինեց՝ ինձ գավառապետին ներկայացնելով որպես խռովարար, որ արգելում է ոստիկանին իր պարտականությունները կատարելու: Գավառապետն ինձ կանչեց և հայտնեց, որ ես բանտարկության եմ ենթարկված մեկ շաբաթով՝ ոստիկանին իր պարտականությունները կատարելիս դիմադրելուս հա-

[1] Ախտահանման:
[2] Մտրակ:
[3] Ցարական Ռուսաստանում ոչ մեծ վարչական շրջանի ոստիկանապետ:

մար: Երբ ես հասկացրի գավառապետին, որ ես եմ պետական շահերը պաշտպանել, մինչ պետական ներկայացուցիչը հենց այդ շահերն էր ոտնակոխ անում ծեծելով և բացատրեցի, թե ինչպես մի քրդի թշնամացնելով, նույն այդ քուրդը վաղը սարում պատահած հային կսպանի, և դրանով անտագոնիզմ[1] կստեղծվի երկու ազգությունների միջև: Գավառապետը հասկացավ և քաղաքավարությամբ ասաց. «Այդ դեպքում Ձեր բանտարկությունը զանց եմ անում, բայց խիստ հանդիմանություն եմ անում նրա համար, որ պաշտոնը կատարելիս ոստիկանին խփել եք: Եթե նման բան նկատեք, փոխանակ Ձեր ձեռքով պատժելու՝ դիմեցեք ինձ և ես հանցավորին կպատժեմ»:

Ես չեմ կարող այստեղ չհիշատակել այն ուժեղ շարժումը, որ հենց այդ ժամանակներից տեղի ուներ. Դաշնակցության բոլոր գործիչները հատուկ հրահանգ ունեին Տաճկաստանում բարեկամություն պահպանել քրդական ցեղերի[2] հետ, նրանց համակրությունը վաստակել, որպեսզի կարելի լինի ընդհանուր ուժերով թրքական ռեժիմի դեմ ճակատ ստեղծել: Նույնն է եղել և ասորիների ու

---

[1] Թշնամանք:

[2] Բժշկապետ Բագրատ Նավասարդյանը (1852–1934) հատուկ առաքելությամբ լինում է Օսմանյան կայսրությունում, որպեսզի կապ հաստատի հակաստամբական տրամադրություններ ունեցող քուրդ ցեղապետերի հետ: Մասնավոր զրույցի ժամանակ նա Ստ. Մալխասյանցին տեղեկացրել է, որ ինքը հանդիպել է քուրդ «ազդեցիկ բեկերից՝ Սմկոյի (1887–1930) հետ, որ մի անգամ չէ, որ Թուրքիայից փախել է Ռուսաստան, որ Սմկոն խոստացել է ուրքի հանել քրդերին հայերի հետ համատեղ պայքարում ընդդեմ սուլթանական կառավարության... և որ այդ նպատակով էր բժիշկը նախաձեռնել իր ճանապարհորդությունը Թուրքիա». տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 967, թ. 4: Իրականում Սմկոն ոչ մի ցանկություն չուներ աջակցելու հայ ազատագրական շարժմանը: Նրա իրական էությունը երևաց 1914–1918 թթ., երբ համագործակցեց օսմանյան իշխանությունների հետ և ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողությունների ժամանակ մի քանի անգամ դավաճանեց ռուսներին, դավադրաբար սպանեց ասորական եկեղեցու պատրիարք-կաթողիկոս Մար Շիմոն Բենիամինին և նրա ուղեկիցներին, հարձակվեց 1918 թ. մարտին Վանից Պարսկաստան նահանջող հայերի վրա: Ի վերջո սպանվեց իրանական զորքերի հետ ընդհարման ժամանակ, տե՛ս **Սահակյան Ռ.**, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, N 1–2, էջ 336–362:

եզդիների նկատմամբ: Հատուկ պատվիրակություններ էին կազմվում թե՛ քրդական աշիրապետներին և թե՛ ասորիների քահանայապետ Մար Շիմունին[1] այցելելու, նրանց հետ համաձայնության գալու: Մի քանի անգամ տեսակցություն ունեցան, բայց այդ բանակցությունները անհաջող էին վերջանում, որով հետև նրանցից ոչ մեկը թրքական ռեժիմի[2] դեմ դուրս գալու համաձայնություն չէր տալիս: Շատ-շատ խոստանում էին մեզ չխանգարել, այդ էլ արևելցուն հատուկ հաճոյակատարություն էր լինում, քան մի դրական խոստում: Մենք գիտենք, թե քրդերը ինչ վերաբերմունք ցույց տվին մեր ժողովրդին նրա նեղ օրերին: Միակ միջոցը, որ մնում էր գործիչներին, անհատ քրդերի նկատմամբ եղբայրական վերաբերմունք էին ցույց տալիս և այնքան սիրալիր, որ նրանք սիրով համաձայնում էին եղբայրանալ հայերին և հետները միացած զենք վերցնել ու հայդուկներին առաջնորդել դեպի անծանոթ վայրեր: Քանի՛-քանի՛ այդպիսի հայացած քրդեր են ընկել ֆիդայիների կողքին մարտի տաք ընդհարումների մեջ:

Նոր Բայազետի ոստիկանի պատմությունը հիշեցնում է ինձ նման մի ուրիշ դեպք Գանձակից: 1893 թիվն էր, նոր է դպրոցը բացվել, զինվորական վիճակահանության շրջանն է: Մի կիրակի դպրոցի բակն եմ մտնում, ուր աշակերտներից ոմանք խաղում են: Հանկարծ տեսնեմ դպրոցի շենքից աշակերտները խմբերով դուրս են փախչում, իսկ նրանց հետևից էլ փողոցային հայհոյանք. հայհոյում է մի ոստիկան՝ եսաուլ[3], միաչքանի բարձրահասակ մարդ, երկար չուխայով, ուսերին կարմիր էպոլետներ[4], խանչալը առաջը կախած, գլխին գանձակեցու փափախ:

---

[1] **Մար Շիմուն XIX** Բենիամին (1887–1918), Արևելքի ասորական եկեղեցու կաթողիկոս-պատրիարք:

[2] Վարչակարգի:

[3] Սպայական կոչում, որը հավասարազոր է ներկայիս կապիտանի կոչման:

[4] Ուսադիր:

«Դուրս կորե՛ք, ես ձեր...»[1] գոռալով գալիս է: Մոտենում եմ. «Ինչ՞ ես ուզում, այ մարդ, մեր դպրոցում: Դու ինչու՞ ես կարգադրություն անում»,– հարցնում եմ: «Ես դպրոց-մպրոց չգիտեմ, ինձ այդպես է կարգադրված, մարդ չպիտի մտնի, զինվորական ցուցակագրություն է կատարվում»: «Դու՛րս դպրոցից»,– գոռացի վրան: «Ես իմ մեծի կարգադրությունն եմ կատարում: Դու ո՞վ ես, որ ինձ դուրս անես»,– գոռաց նա: Ես չհամբերեցի և մի ուժեղ ապտակ հասցրի, փափախը թռավ, մարդը գլուխը կորցրեց, ձեռքը տարավ խանչալը: Եկեղեցու առաջ կանգնած էր ահագին բազմություն, որը ականատես եղավ այս միջադեպին: Նրա միջից մի քանի դիրքով մարդիկ մոտեցան ու բռնեցին նրան:

Հետո ես իմացա, որ դա հայտնի Քոռ Ալեքն է, մարդասպան, Սիբիր աքսորված ու վերադարձած և այժմ ոստիկանի պաշտոն ստանձնած:

Նրան էլ հայտնել էին, որ ես հեղափոխական գործիչ եմ: Հաջորդ օրը եկավ մոտս, ձեռքս համբուրեց, որ ես չէի սպասում. ձեռք տվի, և նա տարավ դեպի վեր ու ներողություն խնդրեց, հայտնելով, որ ինքը չի իմացել, թե ես ով եմ: Նա կարող էր դիմել կառավարության և ինձ պատասխանատվության կանչել, բայց չարավ, որովհետև հասկացրել էին, թե հեղափոխականի դեմ կառավարության դիմել չի կարելի: Չպիտի մոռանալ, որ այդ շրջանը տարբեր է, քան այն, երբ Դաշնակցությունը ռազմական տեռորիստական կազմակերպություն էր դառել, երբ մարդիկ ակնածում էին, վախենում էին նրա ուժից, նրա վրեժից: Այդ ժամանակ, 1893-ին, Դաշնակցությունը դեռ չէր ճանաչված, իբրև ֆիզիկական ուժ նա հայտնի չէր, բայց կար հայ հեղափոխականի անունը, որ հարգանք էր ներշնչում ամեն մեկին: Այդ ժամանակ նա միայն բարոյական ուժ էր:

[1] Կախման կետերը փաստաթղթինն են:

1895 ուս. տարին վերջանալու վրա էր: Ես որոշեցի ուսուցչությունը թողնել ու մտնել զուտ հեղափոխական ասպարեզը: Ես արդեն ունեի կուսակցական անուն, որով ինձ ճանաչում էին՝ Մար Շիմոն էր դա: Հետո կյանքի մեջ գործածվելով՝ աստիճանաբար փոփոխության ենթարկվեց և մնաց միայն Մար անունը: Այդպես էին ինձ ճանաչում ոչ միայն հեղափոխական շրջանները, այդպես էի ստորագրում նաև իմ թղթակցությունները, որ ես ուղղում էի «Մշակին»: Ես ունեցել եմ Մար Շիմոն կեղծանունով ոտանավորներ «Աղբյուր-Տարազի»[1] մեջ: Դեռ Գանձակում էր, որ իմ խումբն ինձ հարգած լինելու համար իրեն սկսել էր անվանել «Մար Շիմոն»-ի խումբ: Վերջը, ինձանից հետո, երբ այդ խումբը մեծանալով բաժանվում է մի քանի խմբի, յուրաքանչյուր մեկը պահանջում է, որ ինքն է կոչվելու «Մար Շիմոն», և որպեսզի մի կերպ համաձայնության գան, որոշում են այդ անունը պահպանել բոլոր խմբերի համար և իրարից տարբերելու նպատակով համարներ են ավելացնում: Այնտեղ երկար ժամանակ գոյություն են ունեցել «Մար Շիմոն Ա» խումբ, «Մար Շիմոն Բ» խումբ և այլն: Եվ երբ թերթելու լինեք «Դրոշակի» [18]90-ականի վերջերի և 1900-ի սկզբնական տարիների համարները, նվիրատվությունների բաժնում կկարդաք այդ անունով բազմաթիվ խմբերից ստացվող գումարների հաշիվները:

Հենց ես պատրաստվում էի Գանձակից հեռանալ, Սիմոնից մի նամակ ստացա, որով ինձ շատ կոնսպիրատիվ[2] կերպով գրում էր, որ կազմակերպության աշխատանքների համար անհրաժեշտ է դատված[3] ձեռք բերել պայթուցիկ նյութեր: Նա իր նամակում մատնանշում էր, որ Գետաբեկի պղնձահանքերում գործ են դնում դինա-

[1] Աղբյուր, պատկերազարդ մանկական ամսագիր (Թիֆլիս, 1883–1918), խմբագիր և հրատարակիչ՝ Տիգրան Նազարյան: Ունեցել է հավելված՝ «Տարազ» (Թիֆլիս, 1890–1919), որը եղել է առանձին պարբերական:

[2] Գաղտնի:

[3] Աշխատել:

միտ, որպես հանքը պայթեցնող միջոց և առաջարկում էր ինձ՝ այդ բանով հետաքրքրվել և, եթե հնարավոր է, մի քիչ բերել Թիֆլիս փորձելու համար: 1895-ի հունիսն էր, իսկույն ճանապարհվեցի Գետաբեկ, այցելեցի պղնձահանքերը, որպես թե ուսումնասիրելու համար աշխատանքները, ծանոթացա վարպետների և բանվորների հետ և նրանց միջոցով ձեռք բերի մի քանի ֆունտ[1] դինամիտ: Բացի այդ, դինամիտ ձեռք բերելու համար խոսեցի խանութպան Մանասյանի հետ, որպեսզի նա աստիճանաբար հավաքեր ու պահեր, և երբ Թիֆլիսից պահանջեինք, մարդու ձեռքով մեզ հասցներ: Այդ գործը շատ կանոնավոր տարվեց և, շատ չանցած, Թիֆլիսում մենք առանձին պահեստ ունեինք հատկապես դինամիտի համար: Այդ դինամիտն էր, որ հետզհետե ծովային ճանապարհով, գլխավորապես Օդեսայի գծով Բուլղարիա էինք հասցնում, այնտեղից էլ Պոլիս փոխադրում: Նույն այդ դինամիտներով պատրաստված ռումբերով գրավվեց Պոլսի Օտտոման բանկը[2], որի մասին կխոսեմ տեղում:

Գետաբեկում ստացածս դինամիտն առած իջա Գանձակ, խոստում առնելով Մանասյանից, որ նա մի շաբաթվա ընթացքում ինձ հասցնի 20 ֆունտ ևս, որպեսզի ես ան ձամբ Թիֆլիս հասցնեմ: Ժամանակին Մանասյանը[3] մարդու միջոցով ինձ հասցրեց, և ես այդ բոլորը երկու ձեռքի կողովի մեջ տեղավորելով՝ վրաները կիսով ծածկելով, հասցրի Թիֆլիս:

Բոլորովին անծանոթ լինելով այդ պայթուցիկ նյութի հետ, չգիտեի ինչպես անեմ, որ վտանգ առաջ չգա վագոնի մեջ: Բագաժ[4] տալ չէր կարելի. ստիպված էի կողքիս տանել, միշտ հսկել, որ պա-

---

[1] 1 ֆունտը հավասար է 409,5 գրամի:

[2] Կայսերական օտտոմանյան բանկը հիմնվել է 1863 թ.: Հանդիսացել է Օսմանյան կայսրության կենտրոնական բանկը: 1932 թ.-ին գործառույթները հանձնվել են Թուրքիայի կենտրոնական բանկին:

[3] *Սա Սարգիս Մանասյանի հորեղբայրը պիտի լինի: Այդ միջոցին Սարգիսը սովորում էր Գանձակի բարեպաշտական [բարեպաշտիկ] դպրոցում և ավարտելու վրա էր:*

[4] Բեռնախցիկ:

տահաբար մեկը ձեռք չտա, վառված լուցկի չընկնի վրան և այլն: Վերջապես ապահով հասա Թիֆլիս: Երկու կողովներն իմ ձեռքերին, իսկ իրերս բեռնակրի, անցնում եմ Թիֆլիսի կայարանի ընդարձակ դահլիճով, հանկարծ կողովներից մեկի ունկը կտրվում է, կողովը վայր է ընկնում, շուռ գալիս, կեռասը թափվում և տակից դինամիտի փաթեթները բացվում: Առանց ինձ կորցնելու (մինչ այդ կարծում էի, թե ուժեղ ցնցումից կարող է պայթել) շտապ կողովը շտկեցի, թափված կեռասը ձեռքով մեջը լցրեցի և հավաքված բազմության ծիծաղի տակ կողովները առած դուրս շտապեցի՝ կառք վերցնելու: Բազմության մեջ պատահաբար գտնվում էր Ղազարոս Աղայանը[1]: Նա ինձ չէր ճանաչում: Երկու օր հետո, երբ Վարդ-Պատրիկյանի հետ նրան այցելեցինք, նայեց ինձ, իսկույն ճանաչեց: «Կեռասդ լավ հավաքեցի՞ր, մեր տղա, հետո ո՞նց կերար»,– հարցրեց նա: «Ուտելու համար չէր»,– վրա բերեց Վարդ-Պատրիկյանը և խորհրդավոր ծիծաղեց: Աղայանը հասկացավ և իր բարձր ձայնով խրախուսանքի խոսքեր ասաց:

Թիֆլիսում մենք երկար ժամանակ զբաղված էինք դինամիտը փորձերի ենթարկելով: Թիթեղյա տուփեր էինք վերցնում, լցնում դինամիտով և տանում մոտակա Բոտանիկական[2] այգու հետևի ձորը, ուր բոլորվին ամայի էր լինում: Առանձին սրվակով ծծմբաթթվուտ էինք տեղավորում տուփի մեջ և կապկպած ժայռից ձորն էինք շպրտում: Պայթյունը խլացուցիչ էր լինում, վազում էինք ցած և տուփի կտորներից չէինք գտնում, այնքան ուժով այս ու այն կողմ էին շպրտված լինում: Այդ միևնույն տեղում մենք կատարում էինք նաև ատրճանակների և հրացանների փորձեր: Հատկապես հրացանի վարժություններ էին կատարում նրանք, որոնք պատրաստվում էին Երկիր գնալ: Այս փորձերի ժամանակ Սիմոնը միշտ ներկա էր լի-

[1] **Աղայան Ղազարոս** (1840–1911), գրող, մանկավարժ և հրապարակախոս:
[2] Բուսաբանական:

նում: Քրիստափորը եկավ, երբ դինամիտն էինք փորձում: Երբ փորձը հաջող անցավ, նա մեծ ուրախություն արտահայտեց, ճիշտ երեխայի նման ցատկում էր մի ոտքի վրա և վազում դեպի պայթյունի վայրը:

Հրացանաձգության մարզանքը վարում էին Վարդանը և Դումանը[1]: Թիֆլիսում գտնվող բոլոր գործիչները պիտի մասնակցեին այդ մարզանքներին և բոլորն էլ սովորեին ատրճանակ ու հրացան գործածել: Այդ մարզանքները մեզանից օրեր էին խլում: Զենքերը ձոր տանելու ու հետ բերելու բավական ժամանակ էր պահանջում և կապված էր մեծ դժվարությունների հետ: Այդ միջոցով զենքերի ընտրություն էր կատարվում: Անպետք զենքերն առանձին էին ուղարկվում, որպեսզի վերանորոգվեին: Այդպիսով Թիֆլիսից անցնող բոլոր զենքերը պիտի փորձարկվեին, իսկ դա ինքնին դժվար գործ էր: Երբեմն ամբողջ օրով ձորում պայթյուն էր լսվում և աննկատելի անցնում քաղաքի համար:

Շուտով պարզվեց, որ զինվորական ծառայությունից ազատվելու համար պետք է ես ուսուցչություն անեի մինչև 1896 թվի սկիզբը: Գանձակից հրաժարվել էի: Լոռիի շրջանում գործիչի կարիք կար: Այդ կողմերում պրոպագանդա դեռ չէր մղված. Սիմոնն առաջարկեց գնալ Ջալալօղլի[2] ուսուցչական պաշտոնով, միևնույն ժամանակ շրջանում կազմակերպչական գործը տանել: Իմացանք, որ Ջալալօղլիում ուսուցչի կարիք կա: Անմիջապես կարգադրվեց, և ես մեկնեցի Թիֆլիս-Ջալալօղլի գծով, որ անցնում էր Վորոնցովկա[3] գյուղով: Այն ժամանակ Թիֆլիս-Երևան երկաթուղագիծ չկար[4], կարծեմ նախապատրաստական աշխատանքներ էին կատարվում:

---

[1] **Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս** (Նիկոլ Դուման, 1867–1914), հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ:

[2] Այժմ Ստեփանավան:

[3] Այժմ Տաշիր:

[4] Սկզբում կառուցվել են Թիֆլիս-Ալեքսանդրապոլ (1899), ապա Ալեքսանդրապոլ-Մասիս և Մասիս-Երևան երկաթգծի ուղեմասերը (1902):

Ջալալօղլի մնացի մինչև հունվարի 1-ը: Այնտեղի իմ գործունեությունը շատ աշխույժ անցավ: Բացի տեղում կատարած աշխատանքից, ես հանձն առա և շրջակա գյուղերի պրոպագանդի գործը: Ես եղա Ագարակ, Գերգեր, Վարդաբլուր, Կուրտան, Ուզունլար[1], Դսեղ և այլ գյուղեր, որոնք մոռացված են: Դպրոցական գործը դրանով ոչ մի կերպ չտուժեց: Դասավանդումը վերջացնելուց և ճաշելուց հետո ճանապարհվում էի որևէ գյուղ: Աշնան օրեր էին, մութն ընկնում էր 5-ին, հազիվ էի լուսով հասնում: Հասնելուն պես ժողովրդին միատեղ հավաքելու միջոց էր եկեղեցու զանգերը տալ, և, իրավ, գյուղացիները լսելուն պես ամեն ինչ թողած եկեղեցին էին վազում: Գիշերվա զանգահարությունն ինչ-որ խորհրդավորություն էր տալիս գործին: Հավաքվում էին մարդ, կին, պատանի: [18]95-ի մեծ ջարդերը ցնցել էին ամբողջ կովկասահայությունը, ամենուրեք կոչեր [էին] կատարվում եղբայրական օգնություն հասցնել: Այդ ձայնը դեռ չէր հասել հեռավոր գյուղերը: Հայ գեղջուկը մեծ հետաքրքրությամբ էր լսում իմ զրույցը: Ես նկարագրում էի տաճկահայ ժողովրդի վատթար կացությունը, նրա քաղաքական ձգտումները, ազատագրական շարժումները և այդ բոլորի դեմ ծառացած համիդյան ռեժիմը: Իմ պատմությունը հուզում էր ամենքին, շատերի աչքերն արտասվակալած էին լինում և եկեղեցու խորքերից լսվում էին հեկեկանքի, խուլ հառաչանքի արձագանքներ: Մթնոլորտը էլեկտրականացված էր լինում: Վերջանալուց հետո առաջավորները, հասակավորները դիմում էին ինձ, թե ինչո՞վ կարող են օգնել: «Ով ինչով կարող է»,– ասում էի ես, հարուստն իր ունեցածն է տալիս, աղքատն ինչ ունի, որ ինչ տա: Բայց անձամբ օգնության հասնելը ամենքի պարտականությունն է, ով քաջ է, ուզում է իր եղբորը թև ու թիկունք դառնա, իր անձն է տրամադրում: Եթե ինքը միջոց չունի՝

[1] Այժմ Օձուն:

նրան կտրվի զենք և ապրուստ: Հիմա այս րոպեին ամեն մեկը թող գրվի, թե ինչ կարող է տալ:

Դրամ չկա գյուղում՝ կա ցորեն, գարի, կարտոֆիլ: Ունևորներն ամենքը գրվում էին: Հատուկ մարմին էր ընտրվում հենց եկեղեցում, որ անմիջապես ցուցակագրում էր նվիրատուներին: Շատ կանայք իրենց մատանին կամ ճակատի ոսկին էին խոստանում: Երբ առաջարկ էր լինում անմիջապես ստանալ, ես հայտնում էի, որ ինքս միայն խոսելու[1] համար եմ եկած և կազմակերպելու, առաջարկում էի մի շաբաթվա ընթացքում հավաքել, փողի վերածել ու հասցնել Ջալալօղլի՝ տեղական մարմին:

Այս միևնույնը կատարվում էր բոլոր գյուղերում: Հեռավոր գյուղերը գնում էի շաբաթ օրերը, դասերից հետո, որպեսզի հաջորդ օրը՝ կիրակի, կարողանայի վերադառնալ և դաս բաց չթողնել: Շուտով գյուղերից սկսեցին գալ և բերել նվիրատվությունները:

Այն ժամանակվա տրամադրությունը բոլորովին այլ էր: Ժողովրդի հավատը դեպի գործը և դեպի գործիչները շատ մեծ էր: Ոմանց թվում է, թե Դաշնակցությունը բռնի էր ստանում միջոցներ, բայց դա սխալ է: Բռնի պահանջները սկսեցին տեղի ունենալ շատ ուշ: Իսկ մինչ այդ Դաշնակցության ամբողջ նյութական միջոցը գանձվում էր կամավոր ամսավճարներով և նվերներով:

Հայդուկային կռիվներին մասնակցելու ցանկություն ունեցողների թիվն օրեցօր շատանում էր, մի տեսակ ինքնասիրության, ասպետական հպարտության խնդիր էր դարձել: Վանի շարժումները, Պետոյի և իր հարյուրավոր ընկերների հերոսական կռիվները և նրանց կսկծալի կորուստը[2] ինքնին լուռ կոչի բնույթ էին ստանում,

---

[1] Քարոզելու:

[2] Ավելի մանրամասն տե՛ս Հայոց պատմություն /Խմբ. խորհուրդ՝ **Վ. Բարխուդարյան** և ուրիշ.: Հ. 3: Գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ): Խմբագրապետ՝ **Ա. Մելքոնյան** և ուրիշ., Ե., 2010, էջ 557–562 (այսուհետև՝ Հայոց պատմություն: Հ. 3: Գիրք I):

ամեն կողմից նրանց տեղերը գրավելու ցանկություններ և առաջարկություններ էին լինում: Երբեմն այնքան շատ, որ ստիպված էին ընտրության միջոցով նրանց ընդունել: Շատերն իրենց զենքն ու ձին էին առաջարկում, շատերը պատրաստի պաշար էին հասցնում գնացողների համար: Սրանք երևույթներ են, որոնք քիչ անգամ են հայտնվում մի ժողովրդի կյանքում: Սրանք ոգևորության, բարոյական թռիչքի, ազնիվ խոյանքների արտահայտություններ են, որոնց գործածելու ձևն ու տակտը, նրանց ցանկալի հունի մեջ դնելու վարպետությունը մնում է գործի ղեկավարներին:

Մարդիկ մոռացել էին իրենց անձնականը, ամեն ինչ հասարակության համար էր: Այժմ արդեն խաչագողեր[1] երևան չէին գալիս, ինչպես այդ տեղի ուներ շարժման սկզբներում [18]89–91 թվերին: Այժմ ամեն մեկը պարտք էր համարում լավ ճանաչել դիմացինին: Եկողը վստահելի աղբյուրից վավերագիր պիտի ներկայացներ: Շանտաժով պարապողը ենթարկվում էր չարաչար պատժի, ժողովուրդն ինքն էր նրա պատիժը տնօրինում: Ժողովուրդը որքան պատրաստվում էր զոհաբերության, այնքան նա խստապահանջ էր դեպի գործը: Գործը դառնում էր ժողովրդի սեփականություն:

Նոյեմբերի մռայլ օրերից մեկն էր: Սիմոնից հեռագիր ստացա, որ նա Թիֆլիսից մեկնում է Ալեքսանդրապոլ և գիշերն անցնելու է Ղարաքիլիսայով[2] առաջարկում էր գիշերը Ղարաքիլիսայում հանդիպել իրեն մի քահանայի տանը (հասցեն տվել էր): Այդ ժամանակ Թիֆլիսից Ալեքսանդրապոլ գնում էին Աղստաֆայի վրայով: Ցերեկը ժամը 3-ին առավոտյան ստացա հեռագիրը և անմիջապես մի ձի ճարեցի և ուղղությունը հարցնելով՝ ճանապարհ ընկա:

---

[1] Այսինքն՝ ճարպիկ խաբեբա:

[2] Մինչև 1935 թ. կոչվել է: Մեծ Ղարաքիլիսա, Ղարաքիլիսա, 1935–1993 թ.՝ Կիրովական, այժմ Վանաձոր:

Ճանապարհին անծանոթ էր: Երկու ժամ չանցած մութը կոխեց: Առաջին ձյունն էր գալիս, սար ու ձոր ծածկվեց, արահետները կորան ձյան տակ: Ձին կորցրեց ճանապարհը: Մթի մեջ մի կրակ նկատեցի, անտառի մեջ էի, դիմեցի դեպի այդ կրակը, փայտահատներ էին: Ճանապարհը բացատրեցին՝ ձեռքի ուղղությամբ դեպի սարի կատարը: Դվալը[1] պիտի շուռ գայի մյուս կողմը: Սարի գլխին ճանապարհը գտա և մութի մեջ ձին թողեցի իր կամքին: Երկու տեղ ձին գլորվեց, ինձ տակովն արեց: Առողջ և ուժեղ երիտասարդ էի, ոչ մի վնաս չկրեցի և չհուսահատվեցի: Նորից ձի նստեցի ու շարունակեցի: Արդեն սարի մյուս երեսն եմ, լսում եմ գետի խշշոցի ձայն, բայց ոչինչ չեմ տեսնում: Գիշեր է և ձյունը խիտ կերպով տեղում է: Վերջապես ձորի ներքևում, գետակի ափին մի խանութ եմ գտնում, ուր մի քիչ տաքանում եմ և ճանապարհս շարունակում: Ժամը 12 ½-ին հասնում եմ գյուղ ու սրա նրա դուռը թակելով՝ գտնում եմ տերտերի տունը: Նա է տեղական գործերի վարիչը (մոռացել եմ տերտերի անունը): Անմիջապես բոլորը քնից վեր են կենում, սամովար[2] պատրաստում: ½ ժամ անց Սիմոնն է հասնում փոստային կառքով: Ամբողջ գիշերը, մինչև ժամը 4-ը միասին ենք, բացատրում է ժողովրդական այդ բուռն ոգևորության արժեքը մեր ապագայի նկատմամբ: Խոսում է հայդուկային խմբերի կազմակերպության և նրանց խիստ ընտրության մասին: Մեզանից է կախված, թե դեպի ուր կհասցնենք ժողովրդի լավ տրամադրությունը, ասում է նա: Խոսում է այն մասին, որ տեղական գործիչների նկատմամբ պիտի լինենք խստապահանջ և դրամական խնդիրներում լինել անխնա, մեկ-երկու անհաջող ընտրություն, գործիչների խմորում, և ժողովուրդը կարող է սառչել:

---

[1] Դվալ՝ լեռնագագաթ Բագրա մի լեռնաշղթայում:

[2] Ինքնաեռ:

Նա հատկապես գնում է Ալեքսանդրապոլ՝ նոր կազմվող հայդուկային խմբին ծանոթանալու և այնտեղ այդ առթիվ ծագած մի թյուրիմացություն պարզելու համար: Այդ է պատմում, ինձ ցույց տալու համար այն դժվարությունները, որոնք կարող են ծագել, եթե գնացող երիտասարդների թվում լինեն անհամապատասխան ուժեր:

Ժամը 4-ին նա մեկնեց: Նույն վայրկյանին ես մեկնեցի: Այժմ ճանապարհը դժվար չէր, նախ հետզհետե լուսանում էր, և ապա ձյունը դադարել էր: 30 վերստ[1] տեղն անցա 4 ժամում և տեղ հասա ժամը ութին: Դասս չմնաց պարապ: Ես ինձ հոգնած չէի զգում, թեև ամբողջ գիշերը չէի քնել և 60 վերստ տեղ էի կտրել:

Մոտենում էին հունվարի արձակուրդները: Ես արդեն ներկայացրել էի զինվորական վարչության իմ ուսուցչության այդ տարվա վկայական և ստացել էի պահեստում հաշվելու առթիվ պաշտոնական գրություն. կարող էի թողնել ուսուցչությունը: Թիֆլիսում այդ տոների առթիվ նշանակված էր լայնացրած ժողով. ամեն կողմերից պատվիրակներ էին եկել: Ժողովի գլխավոր հարցն էր՝ հեղափոխական գործունեության տակտիկան վերաքննության ենթարկել: Հայաստանում տեղի ունեցած հսկայական ջարդերը (1895 թվի ամառը) գործիչներից շատերի աչքերը միանգամից բաց արին: Հայդուկային գործունեությունը այն ձևով, ինչպես տարված է եղել մինչև այժմ, քննադատության չի դիմանում: Շատերն առաջարկում են իսպառ վերացնել այդ գործելակերպը: Նրանք առարկում են, որ մի տաս հոգի զինված Երկիր են մտնում, ինչքան էլ զգույշ անցնելու լինեն, մինչև հայաբնակ վայրեր հասնելը նկատվում են հակառակորդի կողմից, առաջ է գալիս ընդհարում, երկուստեք մարդիկ են ընկնում: Հայդուկների մի մասը ճիշտ է՝ ազատվում է որևէ հայ միջավայրում, բայց նրան հետապնդում են, նա հսկողության տակ է և բեռ է դառնում տեղական ազգաբնակության, թիկունք չկա, օգ-

[1] 1 վերստը հավասար է 1066, 8 մետրի:

նության հասնել անմիջապես չի կարելի, որովհետև թշնամին բոլոր ճանապարհները փակել է: Ազատված մի քանի հոգին ձգված են իրենց ճակատագրին: Փոխանակ տեղացուն օգտակար լինելու, նրանց ներկայությունը վտանգավոր է դառնում շրջանի հայության համար: Ոչ միայն կառավարությունն է հետապնդում նրանց, այլև թուրք ազգաբնակչությունը[1]: Լարված դրությունը գնալով սաստկանում է, և թշնամությունը, որ մինչ այդ քողարկված էր, բացարձակ բնույթ է ստանում, ու մեկ-երկու սպանված ոստիկան-զապթիեյի արյան վրեժը ծանրանում է ամբողջ շրջանի վրա: Թաքնված հայդուկները, ճիշտ է, հարձակման դեպքում պաշտպանում են գյուղը կամ շատ-շատ երկու, երեք գյուղ: Թշնամին հենց տեսնում է, թե այսինչ գյուղից կրակ է տեղում, կարիք չի գտնում այդ գյուղի վրա գնալ. թալան է պետք, կոտորել է պետք: Միևնույնն է՝ այս գյուղը չի կոտորի, մյուսում կկոտորի, բոլորն էլ գյավուր[2] են, բոլորն էլ՝ թշնամի: Եվ ահա կոտորած է լինում: Ի՞նչ կարող են անել մի քանի զինված մարդիկ՝ ոչինչ: Այսպես պնդողներն առաջարկում են հեղափոխական բոլոր միջոցները կենտրոնացնել կենտրոնական վայրերի վրա և գավառները հանգիստ թողնել: Ցուցական տակտիքն[3] են պաշտպանում: Ցույց կատարելով Պոլսում, Զմյուռնիայում՝ մենք մեր բողոքը լսելի էինք դարձնում եվրոպացիներին, մյուս կողմից՝ ցույցին վնասվելու էին եվրոպացիք, նրանց ձեռնարկներն են վնասվում՝ ուզեն-չուզեն պիտի միջոցներ ձեռք առնեն, եթե ոչ բավարարելու համար հեղափոխականներիս մաքսիմում պահանջներ[ը], գեթ մեր ժողովրդի համար տանելի պայմաններ ստեղծել կտան, որպեսզի նա հուսահատությունից ծայրահեղությունների չդիմի: Այս

[1] Հայդուկների դեմ պայքարում օսմանյան իշխանությունները հիմնականում օգտագործում էին քրդական համիդիեական ստորաբաժանումները:

[2] Անհավատ, ոչ մահմեդական, նսեմատական անուն, որով կոչում են մահմեդականները այլակրոններին:

[3] Մարտավարություն:

տակտիկով մենք գավառի հայությունը կփրկենք ջարդերի մղձավանջից, նրան հնարավորություն կտանք բարելավելու իր տնտեսությունը, գաղթի առաջն առած կլինենք և այսպիսով նրան ուժեղացնելով՝ ապագա յին, երբ անհրաժեշտ լինի, նա ինքնաբերաբար ոտքի կկանգնի իր ազատությունը բռնավորից խլելու համար:

Մյուս հոսանքն այլ կերպ էր ընդունում: Նա դեմ չէր ցուցական տակտիկային, բայց ամբողջ մեր նյութական ու բարոյական ուժերն այդ կողմին հատկացնելը համարում էր ոչ խելացի: Մեր ժողովուրդը ստրկացած վիճակում է, նրան պիտի սթափեցնել, նրան պիտի ազատ ապրելու տենչը, ցանկությունը ներարկել, իսկ դա կլինի կռվի ու պայքարի ճա նա պարհով: Եթե ցույցերի շնորհիվ նույնիսկ եվրոպացիք միջամտեցին և հային տվեցին ինքնավարություն, նա ինչո՞վ պիտի կարողանա այդ ինքնավար երկիրը պաշտպանել, քանի որ չի սովորել ազգային սեփականությունը պաշտպանել թշնամու ախորժակի դեմ: Նա պիտի սովորի զենք գործ դնել, նրա արժեքը գնահատել, որ իր ապագան ապահով համարվի, թե չէ ամեն մի տեղից վեր կացող զինված բազմություն նրա ազատությունը ձեռքից կխլի: Մեր հայդուկային կռիվները, ճիշտ է, իրենց վնասակար կողմն ունեն, բայց ունեն և այն առավելությունը, որ հային վարժեցնում են վառոդի ծխին, նրան վարժեցնում են բաց աչքով դիտել մահը և նրանից չսարսռել: Այդ վիճակում միայն ժողովուրդները կարող են իրենց կյանքը տնօրինել իրենց ուզած ձևով:

Այս տեսակետը պաշտպանողները համաձայնվում էին այն առարկության, որ փոքրիկ խմբերը վտանգվելու դեպքում օգտակար չեն կարող լինել, այդ իսկ պատճառով էլ առաջարկում էին խմբերը բազմամարդ դարձնել և ավելի լավ սպառազինել: Վանի շրջանից, Սալմաստից եկողները պնդում էին այս տակտիկի վրա և խնդրում էին միջոցներ տալ, որպեսզի հնարավոր լինի հարյուրավոր մարդկանցով արշավել դեպի Երկիր:

Կար նաև մի փոքրիկ հոսանք, որ հակառակ էր Հայաստանում որևէ հեղափոխական շարժման՝ կանգնած լինելով այն տեսակետի վրա, ինչ որ ունեին ցույցի պաշտպանները, բայց այդ հոսանքը բավական չէր [չէր բավարարվում] միայն ցույցերով, նա գտնում էր որ հեղափոխական շարժումը պիտի ծավալել միայն Կիլիկիայում: Նրա կարծիքով բուն Հայաստանում ոչինչ չպետք է անել, պիտի այն տեղ մտքերը հանգստացնել:

Կիլիկիան մի երկիր է, ուր ըմբոստական ոգին ավելի է զարգացած, ուր մի քանի անգամ ապստամբություն է եղել (այդ միջոցին Զեյթունը և իր շրջանը ապստամբական վիճակի մեջ էին[1]), և որին թուրք կառավարությունը հաշվի էր առնում և որոշ քաղաքական զիջումներ է կատարում: Մյուս կողմից շեշտվում էր այն հանգամանքը, որ այդ երկիրը, գտնվելով Միջերկրական ծովի ափին, շատ ավելի նպաստավոր պայմանների մեջ է թե՛ զինական մթերավորման տեսակետից և թե՛ եվրոպացիների կողմից աջակցություն գտնելու կողմից: Վերջապես այդ երկրում ջարդեր կազմակերպելու համար կառավարությունը հաշվի պիտի առնի այնտեղ գտնվող եվրոպացիների ներկայությունը և առհասարակ դրսի աշխարհը իր ծովափնյա դիրքով մոտ լինելու հանգամանքը: Դրան պիտի ավելացնել և այդ երկրի աշխարհագրական դիրքը, որով նա ավելի, քան որևէ հայկական բնաշխարհ, դժվարամատչելի է արտաքին հարձակումների դեմ, այն է՝ հարավից պաշտպանված է ծովով, իսկ հյուսիսից և արևելքից՝ Տավրոս լեռան և իր ճյուղավորությունների շղթաներով:

Մեծամասնություն[ը], սակայն, կողմնակից էր, որ բուն Հայաստանում շարժումը շարունակվի: Ուստի և ժողովը[2] հնարավոր

---

[1] Նկատի ունի Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, 1895–1896 թթ. հերոսամարտը:

[2] Խոսքը թերևս 1896 թ. հունվարին տեղի ունեցած ՀՅԴ Տարեկան «Ընդհանուր ժողովի» մասին է, որպիսիք գումարվել են մի քանի անգամ 1895-ից մինչև Եր-

գտավ այդ, բայց նկատի առնելով և Կիլիկիայի հիշյալ առավելությունները, որոշեց այնտեղ ուժեր ուղարկել և նախնական պատրաստություններ տեսնել այնտեղ ընդհանուր ժողովրդական ապստամբություն բարձրացնելու համար: Այդ նույն ժողովում որոշվեց նաև ցույցեր կազմակերպել Պոլսում և Զմյուռնիայում: Այսպիսով 1896 թվականի սկզբին Դաշնակցությունն իրեն այնքան զորեղ էր զգում, որ երեք ուղղությամբ աշխատանք էր ձեռնարկում:

Տրամադրելի ուժերը բաշխվում էին ըստ այն տեսակետի, որի կողմնակից էին նրանք: Ես կողմնակից էի և՛ ցույցերին, և՛ Կիլիկիայի գործունեության, այդ պատճառով էլ հարմար գտան ինձ այդ ուղղությամբ աշխատելու համար:

Արդեն որոշված էր, ես պիտի մեկնեի: Հարկավոր դատեցի վերադառնալ Ջալալօղլի և հրաժարվել պաշտոնից, և մինչ հոգաբարձության հետ համաձայնության էինք գալիս իմ դասերի մասին, որ ես ազատվեի, հանկարծ կարգադրություն եղավ ռուս կառավարության կողմից փակել հայոց ծխական դպրոցները:

Դպրոցները փակվեցին[1]: Հայ ժողովրդի վիշտը կրկնապատվեց: Այնտեղ՝ Թուրքիայում, կոտորում էին հային ֆիզիկապես, այստեղ՝ Ռուսաստանում՝ բարոյապես, տասնյակ հազար մանուկներ փողոց էին շպրտվում: Երկսայրի կացություն էր ստեղծվում Կովկասի հայության համար: Արդյոք իր ուժերը ջլատել և մի մասը հատկացնել ռուս պետության դեմ պայքարելու համար, բայց այդ ձևով երկու կողմից էլ պարտվելու ահավոր վտանգն էր ցցված մեր առջև, մյուս կողմից ռուս կառավարության դեմ դուրս գալը կարող էր նրան ավելի կատաղի հակառակորդ դարձնել թրքահայ դատի հաջող լուծման: Թրքահայ խնդիրը օրհասական էր. հայությունն այն-

---

կրոդդ Ընդհանուր Ժողովն (1898) ընկած ժամանակամիջոցում: ՀՅԴ մասնիւնների մի մասի կողմից չճանաչվելով որպես Ընդհանուր Ժողովներ, դրանք հետագայում ստացան «Ռայոնական» անվանումը:

[1] Ավելի մանրամասն տե՛ս Հայոց պատմություն: Հ. 3: Գիրք I, էջ 597–599:

տեղ արնաքամ էր լինում, նրան ապրելու հնարավորություն ստեղծելն անմիջական գործ էր, ավելի կենսական ամբողջ հայության համար: Ուստի և դպրոցների փակման գործը և նրանով զբաղվելու հոգսը ձգվում է ավելի պատեհ առիթի: Երբ թրքահայ դատը կարգադրվի դրական իմաստով, ռուս կառավարությունն ավելի փափկանկատ կլինի դեպի մեր կուլտուրական հիմնախնդիրը: Այդ պես էր մտածվում այն ժամանակ, երբ հայկական դատի լուծումը համարվում էր մոտալուտ:

Դպրոցները փակվելուն պես ես վերադարձա Թիֆլիս՝ անհրաժեշտ պատրաստությունները տեսնելու և ճանապարհվելու համար:

Վեց տարվա ուսուցչական անցյալ ունեի, դրա հետ միասին վեց տարի շարունակ զբաղված եմ եղել հեղափոխական գործին օժանդակելով:

Ոչ միայն ես, այլև բոլոր գործիչները այդ ժամանակներում նյութական ոչ մի վարձատրություն չունեին, մտածել անգամ չէին կարող, թե իրենց նեղությունները պետք է որևէ կերպ փոխարինվի: Ոչ միայն այդ, այլև նրանց արած ծախսերը փոխադրությունների, նամակագրության համար կատարվում էին իրենց անձնական միջոցներից:

Այս մասին խոսք լինել չէր կարող: Երբ գործիչները քաղաքից քաղաք էին փոխադրվում, իջնում էին իր մոտ, որով և ծախսի կարիք չէր լինում, ապրում էին ընկերոջ մոտ մինչև գործերի կարգադրությունը: Թիֆլիս եկած ընկերները քնում էին տեղական ընկերների մոտ, այնտեղ էլ կերակրվում էին: Նրանք էին միայն իջևաններում ու հյուրանոցներում իջնում, որոնք սեփական միջոցների տեր էին:

Ես անձնապես Թիֆլիսում միշտ ապրել եմ Սիմոնի մոտ: Ճիշտ է, ես Թիֆլիսում շատ չեմ մնացել, ամեն անգամ 4–5 օր, բայց երբ էլ լիներ, ես նրա սենյակում էի քնում ու նրա մոտ սնվում: Հաճախ նրա մոտ 3–4 հոգով էինք մնում: Այնքան գնացել եկել էի, որ մայրը,

քույրերն ինձ իրենց որդու ու եղբոր տեղ էին ընդունում: Այսպես էր այն ժամանակվա հեղափոխական ընտանիքը: Նույնը տեղի ուներ և մյուս ընկերների մոտ: Գանձակ եկողները մեծ մասամբ ինձ մոտ էին լինում, դա սովորական կարգ էր հեղափոխական ասպարեզում:

Իմ խնդիրը որոշ էր. ես պետք է մեկնեի դեպի արևմուտք՝ ուժ տալու նախագծի իրագործմանը, ինչ որոշված էր 1896-ի հունվարի Ընդհանուր ժողովում ցուցական գործողությունների և Կիլիկիայի ապստամբական պատրաստությունների նկատմամբ: Սրանք շատ կարևոր ձեռնարկություններ էին, որոնց մասին թեև ժամանակին գրված էր Ժնև՝ «Դրոշակի» խմբագրության, բայց այնտեղից դեռևս պատասխան չէր ստացված, թե այնտեղ այդ ուղղությամբ մինչև այժմ ինչ է արված: Փետրվար ամիսը վերջանալու էր, և դեռ պատասխան չկար: Պետք է նկատել, որ [18]95-ի մեծ ջարդերից և ապա դպրոցները փակելուց հետո ռուս կառավարությունն ավելի քան հակառակ դիրք էր բռնել հայկական շարժման վերաբերմամբ և հսկողությունը խիստ ուժեղացրել այդ առթիվ: Նամակագրությունն արտասահմանի հետ խիստ դժվարությամբ էր կատարվում, փոստում բոլոր նամակները բացվում էին և անհարմար դատվածները գրավվում: «Դրոշակի» ստացումն իսկ վտանգված էր: Այս բոլորն ի նկատի ունենալով՝ Սիմոնն ու Ռոստոմը ինձ առաջարկեցին մեկնել Ժնև, անձամբ բացատրելու ժողովի որոշումների էությունը և վերականգնելու խզված կապը: Հարկավոր էր գործունեության ընդհանուր մի ձև մշակել, որ պեսզի Ժնևի կարգադրությունները չհակասեին կովկասյան տրամադրություններին: Այնտեղ պիտի որոշվեր նաև, թե ես անմիջապես որ կողմը պիտի ճանապարհվեի՝ դեպի Կիլիկիա, թե՞ դեպի Պոլիս:

Մարտի սկզբի օրերին ես ճանապարհվեցի Ժնև: Խմբագրական գործերի վարողն էր Հունան Դավթյանը[1], բայց ուսանողներից Գ. Խաժակն, Սարգիս Մինասյան[2], Միքայել Հովհաննիսյանը (Վարանդյան)[3] օգնում էին խմբագրական աշխատանքներին: Խմբագրություն կոչվածն էլ մի հասարակ սենյակ էր Rue de Carouge-ի մոտերքում, ուր մի կողմում տառերն էին դրված, մյուս կողմում հոդվածներ ու նամակներ էին թափթփված: Այդ սենյակում քնում էր ուսանողներից մեկը, ուրեմն և ծառայում էր նրա համար իբրև ննջարան և սեղանատուն: Հաճախ այնտեղ էին հավաքվում և այլ ուսանող հայեր ու զրուցելով, Կովկասից ստացված լուրերն իրար հաղորդելով՝ ժամանակ էին անց[կաց]նում: Այդտեղ մի ընկերական նեղ շրջանակ էր ստեղծվում: Մի բարոյական ուժեղ կապ բոլորին իրար էր զոդել. դա ապագա «Ուսանողական միությունն» էր, որ կազմակերպվում էր դաշնակցական գործիչների նախաձեռնությամբ: Այնտեղ կային նաև ուսանողներ, թեև թվով չնչին, որոնք իրենց հեռու էին պահում այդ խմբից: Սկզբունքային հողի վրա ունեցած տարաձայնությունը գնալով արդեն անձնական բնույթ էր ստացել, և պետք է ասած, բավական անախորժ հարաբերություն էր ստեղծվել մի քանիսի միջև: Ես ընդամենը 15 օր մնացի Ժնևում և ներկա եղա մի խառը ժողովի, որ տեղի ուներ մի սրճարանում, ուր ուսանող Երվանդ Պալյանը մի զեկուցում էր կարդում ինչ-որ հարցի շուրջ: Ժողովում ներկա էին մոտավորապես 35 հոգի, որոնցից 10-ը՝ օրիորդներ: Զեկուցումը վերջանալուց հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որ գնալով սուր արտահայտությունների հասավ

---

[1] **Դավթյան Հունան** (Հոնան, 1865–1918), ՀՅԴ ճանաչված գործիչ ու տեւաբան: Հետագայում խմբագրել է «Յառաջ» թերթը (1905–1906):

[2] **Մինասյան Սարգիս** (Արամ Աշոտ, 1873–1915), լրագրող, գրող, մանկավարժ, «Հայրենիք» (ԱՄՆ) թերթի գլխավոր խմբագիր:

[3] **Վարանդյան Միքայել** (Հովհաննիսյան Միքայել, 1870–1943), հայ ազգայինազատագրական շարժման գործիչ, հրապարակախոս, փիլիսոփա, պատմաբան, ՀՅԴ անդամ:

Պալյանի և Խաժակի միջև: Ես նոր էի Կովկասից դուրս եկել, նոր էի շփվում ուսանողական շրջանի հետ, ինձ համար այն ժամանակ շատ ծանր էր տեսնել, թե ինչպես հայ ուսանողները կարող են իրար հայհոյել և իրար վրա բռունցք բարձրացնել: Ավելին, այդ շփոթի և աղմուկի մեջ օրիորդներից մեկը՝ օրիորդ Աթաբեկյանը, անպտակեց Պալյանին, որովհետև անձնապես լավ չի եղել: Այս միջադեպը խորապես ինձ ցնցեց, և ես պիտի խոստովանեմ, շատ ցավում էի, որ ներկա եմ եղել նման գռեհիկ պատկերի: Այս առթիվ ես մի խիստ հոդված ունեմ «Մշակի» մեջ՝ գրված Ժնևից:

Ինչ որ պետք էր, խոսվեց այնտեղ մեր հեղափոխական գործունեության, ժողովի որոշումների մասին: Հայտնի դարձավ, որ Նանսիից 3 ուսանողներ երկու ամսից ի վեր մեկնել են գործի տեղ, որոնցից մեկը, որի անունը չեմ հիշում, գործն անհետաքրքիր գտնելով, վերադարձել է իր ուսումը շարունակելու, իսկ մյուսները գործի վրա էին, մեկը նրանցից Հայկ Թիրաքյանը (Հրաչյա) Պոլսումն է աշխատում, երկրորդը՝ Գարեգին Փաստրմաճյան (Արմեն Գարո)՝ Կիպրոսում:

Կիպրոսից բավական ծանր լուրեր էին ստացվել: Այնտեղ հավաքված են եղել տասը երիտասարդ Գարոյի գլխավորությամբ Կիլիկիա անցնելու համար, բայց դեռ գործի չձեռնարկած՝ տարաձայնություն է ընկել մեջները և այնքան լուրջ կերպարանք ընդունել, որ երիտասարդներից մեկը ատրճանակ է քաշել Գարոյի վրա, մյուսները միջամտել են, մտքերը հանգստացրել մի կերպ, սակայն նամակները վատ գույներով են ներկայացնում միջադեպը և երկյուղ հայտնում, որ նա կարող է վտանգավոր վերջավորություն ունենա, եթե անմիջապես մի փորձված գործիչ չհասնի՝ վերջ տալու համար այդ միջադեպին:

Հունանը գտավ, որ իմ հասնելը Ժնև շատ հարմար ժամանակին է եղել, որ ինքը պիտի մեկներ Կիպրոս, բայց խմբագրատունը

թողնել չէր կարողանում, ուստի ինձ առաջարկեց անմիջապես մեկնել Կիպրոս և ծագած թյուրիմացությունը քննելով, իմ հայեցողությամբ լիկվիդացիայի ենթարկել [վեճը] ու այդ մասին տեղեկագրել Ժնև: Այնուհետև ինձ էր թողնում Կիպրոսի մեր գործունեությունը որոշել, արդյո՞ք մնալ այնտեղ ու շարունակել մեր սկսված գործը, եթե այդպիսին գոյություն ունի Կիլիկիայի նկատմամբ, թե Պոլսո հետ հարաբերության մեջ մտնել ու նրանց համաձայնությունը առնելով՝ մեկնել Պոլիս, ցուցական գործին լծվելու համար: Բացի այդ ինձ հանձնարարվեց Մարսելում «Դրոշակի» կապոցները Թյուրքիա և Ռուսաստան ուղարկելու խնդիրը կարգադրել: Մարսելում առաջուց եղել էր մեկը, որ ճամբորդների հետ միշտ կապոցներ էր ուղարկել: Այդ ձևը վստահելի հետևանքների չէր հասցնում. շատերը կորչում էին: Հարմար դատվեց գտնել նավերի վրա ծառայող մարդկանց:

Թե՛ «Միսաժըրի Մարիտիմ» և թե՛ «Պակե» նավային ընկերությունների նավերի վրա հատուկ մի պաշտոնյա կա, որ թարգմանի դեր է կատարում արևելքի ջրերում և սուրճ է ծախում տախտակամածի վրա՝ նավի կաֆեջին[1] է դա: Դրանք մեծ մասամբ հայեր են լինում: Նրանք գիտեին, բացի հայերենից, ֆրանսերեն, թուրքերեն, հունարեն, արաբերեն և իտալերեն: Ահա այդ կաֆեջիները որոշ վճարով համաձայնության եկան հանձնված կապոց ները Զմյուռնիա, Պոլիս, Տրապիզոն, Բաթում հասցնել տրված հասցեներին և ստացական բերել: Հարաբերություն պահելու ամենալավ ձևն այդ էր, որ առաջուց էլ էր գործածվել «Արմենիա» թերթն ուղարկելու համար:

Ժնևում Հունանը ապրում էր մի մանսարդային[2] սենյակում՝ վեցերորդ հարկում: Վարում էր ուսանողական կյանք, շատ պարզ, կե-

[1] Սուրճ պատրաստող:
[2] Ձեղնահարկ:

րակուրն ինքն էր պատրաստում: Նա նոր էր նշանված իր ապագա ամուսին[1] Հորթանսի հետ: Հաճախ Հորթանսն էր գալիս և կերակուր պատրաստում, միասին երեքով ճաշում էինք: Մի քանի ամսվա մեջ նա այնքան հայերեն էր սովորել, որ կարողանում էր, թեև դժվարությամբ, հասկացնել: Մի վերին աստիճանի համակրելի ու շնորհալի աղջիկ էր նա: Այնքան լավ տպավորություն էր թողել վրաս, որ այստեղ հարկ համարեցի հիշատակել նրա մասին:

Կիպրոսի խնդիրը պարզելու համար ես շտապով նավ նստեցի և հասա Եգիպտոս: Այնտեղ դաշնակցական տեղական մարմնի գործունեությանը ծանոթանալուց հետո ճանապարհվեցի Կիպրոս: Նավը Սիրիայի ափերով է գնում: Կանգ է առնում Պորտ Սաիդում, Յաֆֆայում, Հայֆայում, Բեյրութում, Տրիպոլիում և ապա ուղղվում է Կիպրոսի Լառնակա նավահանգիստը: Մեր տղաներն այնտեղ են: Ես այնտեղ նավից իջնում եմ:

Պետք է նկատել, որ մի խումբ տղաների Կիպրոս հավաքվելը տեղի է ունեցել միայն այն նպատակով, որ զինական օգնություն հասցնեն 1895-ի ուշ աշնանը Զեյթունում բռնկած ապստամբության: Ինչպես հայտնի է, այդ ապստամբության գլուխն են անցած եղել Հնչակյան գործիչները՝ Աղասին[2], Հրաչյան[3] (հնչակյան), Մլեհը[4] և Ապահը[5]: [18]96-ի սկզբներում այդ ապստամբությունը վերջանում է եվրոպական ներկայացուցիչների միջամտությամբ և թուրք պետության կողմից արված ինչ-ինչ առանձնաշնորհումներով: Պարագլուխները եվրոպացիների հսկողությամբ դուրս էին

---

[1] Կնոջ:

[2] **Թուրսարգսյան Կարապետ** (Աղասի,1871–1937), ազատագրական շարժման գործիչ, ՍԴՀԿ անդամ: 1895–1896 թթ. Զեյթունի հերոսամարտի կազմակերպիչներից և ղեկավարներից:

[3] **Դարիքյան Գրիգոր** (Հրաչյա-Մարալ, ?–?), ազատագրական շարժման գործիչ, ՍԴՀԿ անդամ: Մասնակցել է 1895–1896 թթ. Զեյթունի հերոսամարտին:

[4] **Տամդաճյան Ասատուր** (Մլեհ, ?–?), ազատագրական շարժման գործիչ, ՍԴՀԿ անդամ: Մասնակցել է 1895–1896 թթ. Զեյթունի հերոսամարտին:

[5] **Գըմգըմյան Պետրոս** (Ապահ, ?–?):

եկել Զեյթունից հենց այդ օրերում: Պարզ է, որ անմիջապես Կիլիկիա մտնելն անիմաստ էր դառնում: Հավաքված տղաները բողոքում են Գարոյին, որ իրենք եկած են Կիլիկիա մտնելու, մինչ իրենց ստիպում են սպասել: Անգործությունը մարդկանց մղում է անկարգության:

Ես (Կիպրոսում) Լառնակայում գտա միայն Գարոյին և մի երիտասարդի, որին նա պահել էր իր մոտ: Մյուս բոլոր երիտասարդները, ձանձրացած անգործությունից, մի քանի օր առաջ վարձվել են իտալացիների կողմից որպես հսկիչներ նավով փոխադրվող ջորիների, որոնք [իտալացիների կողմից] Աբիսինիայի[1] դեմ մղվող պատերազմի համար գնվել են Կիպրոսում և տարվել Ջիբութի:

Տարաձայնության պատճառներից մեկն էլ լինում է այն, որ յուրաքանչյուր մեկը պահանջելիս է եղել այսքան գումար վերադառնալու համար այնտեղ, որտեղից եկել է: Գարոյի մոտ դրամ չի եղել. եղածը ծախսված է եղել սննդի համար: Գարոն էլ դժվարացել է դրամ ուզել մյուս մարմիններից, իրեն շատ անհարմար զգալով, որ հեղափոխության համար դեռ մի քայլ չարած՝ ստացած դրամը ծախսել է: Մյուս կողմից շվարած մնացել է իր ապագա անելիքը որոշելու համար, երբ այդքան բերան իրեն է նայում և սննդի պահանջ հայտնում: Իտալացիների կողմից ջորիներ գնելն ու տղաներին վարձելը Գարոյի համար փրկություն է դառնում: Այդ լքված միջոցին ես Կիպրոս եմ հասնում: Խնդիրն այդ կերպարանքն ստանալուց հետո իմ գալն ավելորդ է դառնում: Մենք որոշում ենք անմիջապես մնացած երիտասարդին ուղարկել իր մեկնած տեղը, որպեսզի իմ մոտ եղած դրամով կարողանայինք ապրել, մինչև որ հնարավոր լինի ապագա գործունեության համար հարկ եղած հետազոտությունները կատարել, զենքեր պահելու և Կիլիկիա փոխադրե լու համար: Մեր ծրագիրը պարզ է՝ Կիպրոսը դառնալու է

[1] Եթովպիա:

փոխադրության կայան: Այստեղ պիտի մթերվեն զենքեր, և երբ Երկրում[1] կազմակերպություններ լինեն, զենքերը գաղտնի պիտի փոխադրվեն և դրվեն նրանց տրամադրության տակ, որպեսզի հարմար րոպեին բաժանվեն մարտիկներին ընդհանուր ապստամբություն բարձրացնելու համար:

Ինձ մոտ եղած դրամը շատ քիչ էր, մոտավորապես 100 ֆր[անկ]՝ մեր դրամով մի 37 ռուբլի: Օրական երկուսիս ծախս էինք հաշվվում 40 կոպեկ: Երկու ամիսը մեզ բավականացնում էր այդ՝ հետազոտություն կատարելու և միևնույն ժամանակ Ժնևից ու Պոլսից մեր նամակներին պատասխան ստանալու և ըստ այնմ մեր ապագա անելիքը որոշելու համար: Մնացած դրամը մեզ բավական կլիներ փոխադրական ծախսերի համար մինչև Պոլիս:

Այստեղ ստիպված եմ հիշատակել, որ այն ժամանակ դեռ Դաշնակցությունը նյութական սուղ պայմանների մեջ էր. գործիչները պետք է ապրեին շատ նեղ և ապրուստի վրա պիտի ծախսեին շատ չնչին գումար: Ճանապարհորդություն կատարում էին ամենաէժան գներով: Երկաթուղու Գ. կլասը[2] և նավերի տախտակամածն էր բոլորի բաժինը: Շուտով մենք Պոլսից նամակ ստացանք, որով հաղորդում էին, թե այնտեղ մարդու կարիք կա, և ինձ խորհուրդ էին տալիս անմիջապես մեկնել Պոլիս: Գարոն մի անգամ եղել էր Նիկոսիա կենտրոնական քաղաք և այցելել է նաև Ս. Մակարի վանքը[3], որ գործում է Կիպրոսի հյուսիսային ափերի մոտ մի լեռնային վայրում: Ես մեկնեցի Նիկոսիա, վանքի դիրքը տեսնելու համար: Այստեղ ես մի պատմություն պիտի անեմ, որից երևում է,

---

[1] Տվյալ պարագայում խոսքը Կիլիկիայի մասին է:

[2] Կարգի:

[3] Հիմնադրվել է դպտիների կողմից 11–րդ դարում և հիշատակ 4-րդ դարում Եգիպտոսում բնակված Ս. Մակար Ալեքսանդրացուն: 1425 թ. վանքը դարձել է Հայ առաքելական եկեղեցու սեփականությունը և վերածվել է ուխտատեղի:

թե ինչպիսի անտագոնիզմ[1] կար երկու կուսակցությունների՝ Հնչակչակյան և Դաշնակցության միջև: Այդ ժամանակ դեռ Դաշնակցությունը երկրորդական կուսակցություն էր՝ համեմատելով Հնչակյան կուսակցության հետ, և դա՝ մանավանդ Կովկասից դուրս, ուր Հնչակյան կուսակցությունը և՛ հռչակ ուներ, և՛ ամենուրեք կազմակերպություն: Նա իր հետևում ուներ Բաբը Ալիի[2], Գում Գափուի[3] ցույցերը, Փոքր Հայաստանի և Կիլիկիայի կազմակերպությունները և հիմա էլ՝ Զեյթունի ապստամբությունը: Նա շատ բարձրից էր նայում նորելուկ Դաշնակցության վրա, որ նոր-նոր երևան էր գալիս այդպիսի մի հեռավոր տեղում, ինչպիսին Կիպրոսն է: Հնչակյան տեղական մարմինները գիտեն, որ մենք ինչ-որ ծրագիր ունենք, բայց թե ինչ, այդ արդեն նրանց անհայտ է:

Մեկնելիս Գարոն ինձ հայտնեց, որ պետք է շատ զգույշ լինել վանքը գնալու համար: Նրանք[4] շատ դժգոհ են, որ մենք այնտեղ ենք այցելում: Ես, իհարկե, նշանակություն չտվի: Նիկոսիայում կա մոտ 40 հայ ընտանիք, հայ եկեղեցի, դպրոց: Նրանց մայրենի լեզուն թուրքերենն է[5]: Դպրոցում մանուկները հայերեն են սովորում: Այնտեղ կա և դաշնակցական մի տեղացի՝ Մելքոն Շահինյան անունով: Ես նրա մոտ եմ իջել, խոսում եմ Ս. Մակարի վանք գնալու մասին: Նա դեմ չէ և հայտնում է, որ հաջորդ օրը վանքի ծառան երկու ձիով կգա, փայտ կբերի, կարող եմ մեկը նստել, գնալ:

Առավոտյան, երբ պատրաստվում եմ ճանապարհվելու, Շահինյանի քույրը՝ Էլպիս, մի առույգ ու գեղեցիկ 12 տարեկան աղջիկ,

---

[1] Հակասություն:

[2] Կազմակերպել են հնչակյանները 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսում սուլթանի նստավայր Բաբը Ալիի մոտ:

[3] Հնչակյանները 1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում-Գափու թաղամասում կազմակերպել էին ցույց՝ պահանջելով կառավարությունից իրականացնել Բեռլինի դաշնագրով որոշված բարենորոգումները:

[4] Նկատի ունի հնչակյաններին:

[5] Նկատի ունի առավել հաճախ գործածվող լեզուն:

հայտնում է, որ Հուլիանե վարժուհու աղջիկն իրեն ասաց, թե «Լավ է, դուք Դաշնակցական մը կղրկեք վանք, մենք ալ երկու Հնչակյան անոր ետքեն կղրկենք՝ անիկա մեռցնելու համար»:

Մելքոնը հետաքրքրվեց և իմացավ, որ իրավ, երեկոյան Հուլիանեի տանը ժողով է եղել, ուր հնչակյանները որոշել են մարդիկ ուղարկել իմ հետևից: Նա ինձ խորհուրդ տվեց չգնալ. «Անպիտան մարդիկ են, կարող են Ձեզ վնասել»: Ես չեմ հավատում այդ բոլորին: Մի օտարական հայ եմ այդ վայրերում, թեկուզ ոչ իրենց կուսակցությունից, ինչքան կույր պիտի լինեն մարդիկ, որ իրենց կուսակցությանը չպատկանելու համար ինձ վնասեն: Եվ նստում եմ բեռնակիր ձին ու ճանապարհ ընկնում, վանքի ծառան էլ մյուս ձին է նստած:

Քաղաքից նոր դուրս ելած տեսնեմ երկու ձիավոր են գալիս: Մեկին ճանաչում էի՝ Տիրան անունով հնչակյան է Լառնակայում, մյուսին առաջին անգամ եմ տեսնում: Տիրանը թրքախոս և արաբախոս է, հայերեն մի քանի բառ գիտի, Դևեճյանը գիտի նաև հայերեն: Միացան մեզ: Սկսեցին արաբերեն խոսել, ես մի բառ չեմ հասկանում: Իմացան ինձանից, որ ես կովկասահայ եմ, որ գնում եմ վանքը տեսնելու որպես ուխտատեղի, որ գիշերը պիտի մնամ, քանի որ հազիվ մթին հասնենք: Վերջապես հասանք՝ հայկական մի վանք, բավական լավ մնացած: Այդ ծառայից զատ ուրիշ ոչ ոք չկա: Շրջապատը ծածկված է խիտ անտառով, որի մեջ վայրի նարնջենին կարմրին է տալիս առատ ու խոշոր նարինջներով: Փորձում եմ համը տեսնել, դառն է, լեղիի պես: Այս ամբողջը՝ անտառը [ձգվում է] մինչև ծովափ, որ 3 վերստի վրա է, պատկանում է վանքին: Դրա հասույթով Նիկոսիայի դպրոցն է պահվում: Մի հրաշալի վայր է, վանքից լավ դիտողը տեսնում է Կիլիկիայի ափերը՝ 60 վերստ հեռավորության վրա: Մութն է, պիտի գիշերենք: Ծառան մի նավթի լամպ է տվել մեզ: Սենյակը մի հատ է՝ հատուկ հյուրերի հա-

մար: Երկուսը խոսում են շարունակ, մեկը մյուսին բաներ է թելադրում, նա էլ ինձ է հարցնում, ես պատասխանում եմ այդ հարցերին շատ պարզ կերպով: Վերջապես պառկելու ժամն է: Մեկը հանում է ատրճանակն այնպես, որ տեսնեմ, դնում է բարձի տակ, մյուսն էլ է հանում: Ես տեսնում եմ, որ նրանք ինձ են փորձում, թե արդյո՞ք պիտի վախենամ և թե ես էլ արդյո՞ք ատրճանակ ունեմ: Եթե ատրճանակ չտեսնեն, կկարծեն, թե չունեմ, այդ դեպքում փոքրոգի մարդիկ հավանորեն քաջություն կստանան վրաս հարձակվելու, մտածում եմ ես: Կամաց-կամաց հավատս խախտվում է դեպի այդ միամիտ ու խաբված մարդիկ: Տեսնում են, որ բանի տեղ չեմ դնում, ինձ հարցնում են, թե ես ատրճանակ չունե՞մ:

– Ունեմ, բայց այսպիսի տեղի համար չէ. նա թշնամու համար է,– ասում եմ ու պառկում:

Գիշերն անցավ առանց որևէ միջադեպի. կողք կողքի քնեցինք: Առավոտ վաղ վեր կացանք: Ես խնդրեցի ծառային ձիեր տրամադրել՝ մեկն ինձ, մյուսն իրեն: Պտտեցինք ամբողջ կալվածքը, գնացինք ծովափ, բարձրացանք լեռան լանջերը: Ամենուրեք հասած նարնջի ծառերը ճղակտոր են լինում, ոտքի տակ թափված են, բայց որ ուտելու բան չեն: Երկու հնչակյանները քայլ առ քայլ հետևում են ինձ՝ ինչի [վրա] եմ նայում, ինչ բանի եմ ուշ դարձնում, բոլորը դիտում են և ինձ հարցեր տալիս, թե ինչ գործ ունեմ այս ամայի վայրում, ուր բնակության հետք անգամ չկա:

Այնպիսի տեղ է, ուր հազարավոր մարդիկ կարող են պահվել և անհամար զենքեր: Այս է ընդհանուր տպավորությունը: Բացի անտառը, տեղ-տեղ հսկա քարաժայռեր և քարանձավներ կան: Մեր փնտրածն էլ հենց այսպիսի տեղ է: Վերադառնում եմ: Նիկոսիայում բոլորը հավատացած են, որ ես այլևս վերադարձողը չեմ, որ ինձ սպանել են, և շատ ուրախացան, երբ ինձ կենդանի տեսան: Այդ երկյուղն ինձ հասկանալի դառավ, երբ ինձ պատմեցին, թե մի տա-

րի առաջ մի դաշնակցական է եկել Կիպրոս ու աշխատել է կազմակերպություն առաջ բերել: Շատ չանցած այդ դաշնակցականն անհայտանում է: Այդ դաշնակցականի անունն էր Շմավոնյան: Եվ իսկապես, նա այնուհետև լույս աշխարհ չերևաց այլևս: Այս անգամ պայմանները տարբեր էին. ես մենակ չեմ, կա վանքի ծառան, կան նաև իմ հետևում մարդիկ, որոնք կփնտրեն ինձ, կա նաև հանգամանք, որ ես առույգ, առողջ ու սառն[1] եմ՝ ինձ չմոտեցան:

Լառնակայում իմացանք, որ տեղական Հնչակյան մարմինը շարունակ մեզ հետևելիս է եղել և հիմա իմ Նիկոսիա մեկնելուս պես Տիրանին, որ կիսանորմալ մի անձնավորություն էր, ուղարկում է իմ հետևից: Կիլիկիայի գործունեությունը նրանք մոնոպոլ[2] էին դարձրել և չէին հանդուրժում, երբ ոչ հնչակյան հեղափոխականը ոտք է դնում Կիպրոս, իսկ Կիլիկիայի մասին խոսք լինել չի կարող: Այդ հանգամանքը մեծամեծ խոչընդոտներ պիտի հարուցաներ մեր ամեն մի քայլում: Որևէ նախանձախնդիր մի պետություն այնպիսի եռանդով չի պաշտպանում իր սահմանները թշնամուց, ինչպես Հնչակյաններն իրենցը համարած Կիլիկիան: Այս առթիվ ես դեռ ասելիք կունենամ, երբ Կիլիկիա մտնեմ: Միևնույն ժողովրդի երկու հատված ների միջև գոյություն ունեցող այդ ուժեղ խտրականությունը իմ հոգուն ըմբռնելի չէր: Երկուսի ծրագիրը նույնն էր՝ հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը. ինչու՞ պիտի անջատ աշխատեն ու նույնիսկ իրար խանգարեն: Ես հավատացած եմ, որ եթե այդ երկու ուժերը միացած լինեին և միանգամից հարվածեին, թերևս մեր ժողովրդի բախտը այլ կերպ կարգադրվեր: Վասպուրականի գծով սպառվող զինական և անձնական ուժերը եթե լինեին Զեյթունում, հավանորեն այդ շրջանը կատարյալ անկախություն

[1] Այսինքն՝ սառնասիրտ:
[2] Մենաշնորհային:

ձեռք բերեր և ոչ թե գոհանար թրքական դատարկահնչյուն խոստումներով և զենքերը վար դնելով:

Այս մտքերն ինձ մղում էին մոտենալ հնչակյաններին հենց Կիպրոսում և մի տեսակ համերաշխության կամուրջ ձգել երկու կուսակցությունների միջև: Այդ ժամանակներից սկսած՝ հնչակյաններն արդեն պառակտման սաղմերն էին ապրում. «հերոսների» առաջ գալը խախտում էր հնչակյան կենտրոնի՝ Ավոյի[1] և Մարոյի[2] դիրքերը: Նոր-նոր ուժեր էին հրապարակ գալիս, նոր կուռքեր բարձրացնում կեդրոնի բարձունքի վրա: Այդ հանգամանքը շատ դյուրացնում էր հնչակյաններին համաձայնության հող գտնել մեզ հետ: Նրանց առաջնորդներն արդեն հարգանք չէին ներշնչում իրենց ստորադրյալներին: Ֆանատիկները[3], ինչպես Տիրանն է կամ Դևեճյանը, համոզմունքի մարդիկ չէին, եթե իմանային, որ մենք գալիս ենք իրենց գործունեությունն օժանդակելու, կամաչեին իրենց քայլերից, ինչպես և հայտնի դարձավ, երբ մոտեցանք: Գարոն նոր մարդ էր, նա, ինչպես և Հրաչը, համալսարանը թողել էին ու մտել հեղափոխական ասպարեզ ոչ թե այս կամ այն կուսակցության ծառայելու, այլ հայ ժողովրդի համար: Այնպես որ մենք համամիտ էինք գործում: Մենք նույնիսկ զիջումների էինք պատրաստ, միայն թե միություն կայանա բոլոր հայ հեղափոխականների միջև: Ես անձնապես թե՛ այն ժամանակ և թե՛ հետո չեմ եղել նեղ կուսակցական: Այդ գիծը իմ մեջ խոսել է շատ ուժեղ կերպով, և պիտի խոստովանեմ, հենց դրա համար էլ հաճախ իմ կարծիքների մեջ մնացել եմ մենակ: Ես ու Գարոն մինչև իսկ այդ մասին գրեցինք Ժնև և ջանացինք ավելի

---

[1] **Նազարբեկյան Ավետիս** (Ավո, 1866–1939), հայ ազատագրական շարժման գործիչ, հրապարակախոս, գրող: Հնչակյան կուսակցության հիմնադիրներից:

[2] **Նազարբեկյան Մարո** (1864–1941), հայ ազատագրական շարժման գործիչ: Հնչակյան կուսակցության հիմնադիրներից:

[3] Մոլեռանդները:

լայն մասշտաբով խնդիրն արծարծել: Այդ միջոցներին Սվազլին[1] պատահաբար անցնում էր Կիպրոսով դեպի Եվրոպա: Նա հնչակյան նոր պարագլուխներից էր: Գնացինք մոտը և այդ ուղղությամբ հետը խոսեցինք: Կիլիկյան ապստամբությունը բավական ամբարտավան էր դարձրել առհասարակ բոլոր հնչակյան պարագլուխներին: Նա հայտնեց, որ ինքը Լոնդոնում կխոսի իր ընկերների հետ այդ առթիվ, բայց հույս չունի, թե մի բան դուրս կգա, եթե դաշնակցականները հրաժարվեն Հնչակյան ծրագիրն ընդունելուց:

Շատ չանցած մենք նամակ ստացանք Ժնևից, ուր Հունանը մեր քայլերը համերաշխության խնդրում գտնում էր անթույլատրելի: Նա ասում էր, որ դա հիմնական խնդիր է, առանց Ընդհանուր ժողովի որոշման ոչ ոք բանակցելու իրավունք չունի մեր կազմակերպության կողմից համերաշխության կամ միության մասին: Մենք նկատեցինք, որ վերին խավերն են այդպես տրամադրված: Երկու կուսակցություններում էլ բարձրացումն է եղել անհամերաշխ տրամադրության և այդ գիծը վերևից ներշնչվում է վարերը[2]. թե չէ մի Տիրան, մի սիրիացի հայ, թեկուզ կիսախելագար, ինչո՞ւ պիտի մինչև այնտեղ իջնի, որ գա իմ ճանապարհի վրա կանգնի, առանց ինձ հաշիվ տալու, թե այդ ուղին, որով ես գնում եմ, ոչ իրեն անձնապես և ոչ իր կուսակցությանը վնասել չի կարող:

Այդ միջոցին նյութապես շատ վատ դրության մեջ էինք: Կիպրոսում մնալ այլևս միտք չուներ: Պոլսից ինձ կանչում էին: Գարոյի համար գրում էին, որ պիտի մնա, մինչև ինձ կարողանան ներս ընդունել: Դրամ ոչ մի տեղից խնդրել չէինք ուզում, նախ համերաշխության խնդրում Ժնևի բռնած դիրքից վշտացած էինք, ապա, մի գործ չկատարած, դժվար էր դրամ ուզել: Ճամբի համար որոշ գու-

[1] **Սվազլի Միհրան** (1860–1933), ազատագրական շարժման գործիչ, հնչակյան, ապա Ռամկավար-ազատական կուսակցության անդամ

[2] Նկատի ունի կուսակցությունների տեղական կազմակերպությունները:

մար պահել էինք. ես Պոլիս կմտնեի, Գարոյի ապրուստի խնդիրն էր մեզ զբաղեցնում, մինչև որ Պոլսից իրեն գրեինք գար: Այդ միջոցին մի հույն տղա, սպարմազիտից շինած բադն իր ձագերով դրած ջրով լի ափսեի մեջ, ման էր ածում ու ծախում: Գարոն առաջարկեց դրա շինելը սովորել, այստեղից հե ռանալ մի ուրիշ վայր, օրինակ՝ Հունաստան, այնտեղ այդ բադիկները ծախելով ապրել, մինչև ես Պոլիս հասնեի: Այդպես էլ արինք. մի բադ իր ձագերով գնեցինք և նրանց չափով սկսեցինք կաղապար շինել տեղական փափուկ քարից: Երկուսով աշխատում էինք՝ քարը փչացնում, նորը վերցնում, մինչև որ կարողացանք մի մեծ ու մի փոքր կաղապար շինել: Սպարմազիտը հալեցինք, ձուլեցինք, և դուրս եկավ նույնը. պակասում էին գույները կտուցի, աչքերի, այդ էլ գտանք: Ամեն ինչ պատրաստ էր: Այնտեղ ոչ մի հատ չծախեցինք: Անհարմար էր: Նախ կուսակցական պրեստիժը[1], ապա մեզ շատերը, նույնիսկ տեղական հույները լավ ճանաչում էին որպես ոչ այդ պարապմունքի տեր մարդիկ:

Պոլսի հետ նամակագրում էինք ռուսական փոստ՝ Մարգար Մարգարովի հասցեով, իսկ այդ հասցեի տերը փոստի պաշտոնյա էր: Դա Վռամյանն[2] էր, որը ծառայում էր ռուսական փոստում, իբրև ռուսերեն գիտցող մարդ: Նա խոշոր գործ էր կատարում իր այդ պաշտոնով, ոչ միայն ամեն կողմից եկած նամակներն էր ստանում, այլև նավերից մարդիկ էր հանում քաղաք, երբ փոստային մակույկով գնում էր նավ փոստը ստանալու: Հարկավոր էր, որ միայն ես ճանապարհվեի ռուսական նավով և հեռագրով հաղորդեի մեկնելուս մասին: Ես ու Գարոն նստեցինք ռուսական մի նավ, ես՝ Պոլսո

---

[1] Հեղինակությունը:

[2] **Դերձակյան Օնիկ** (Վռամյան Արշակ, 1871–1915), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է Բանկ Օտտոմանի գրավման աշխատանքներին: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո ընտրվել է օսմանյան խորհրդարանի անդամ: 1915 թ. դավադրաբար սպանվել է:

համար, իսկ Գարոն տոմսակ վերցրեց Պիրեյի համար՝ Զմյուռնիայում նավից նավ փոխադրվելով Հունաստան երթալու համար: Նա այնտեղ իր գլուխը պիտի պահեր շինծու թռչուններ ծախելով, մինչև ես նրան փող հասցնեի:

Զմյուռնիայում Գարոն մի նավակ վարձեց, որ իրեն փոխադրի դեպի Հունաստան գնացող նավը, մակույկավարը համաձայնեց, Գարոն մնաս բարև ասաց ինձ ու մեկնեց: Հանկարծ նկատեցի, որ մակույկը, փոխանակ դեպի մատնանշված նավը գնալու, ուղղվեց դեպի քաղաք: Ես իսկույն գլխի ընկա, որ նրան կառավարության ներկայացուցչի մոտ են տանում, կարող են ձերբակալել: Ես նկատեցի, որ Գարոն տեղից վեր կացավ, մակույկավարի վրա գնաց, ինչպես երևում է, մակույկը դարձնելու համար, բայց մակույկի մեջ մեկը կա, որ չի թողնում: Հետո իրենից իմացա, որ լրտես է եղել: Գարոն ֆրանսերեն լավ գիտեր, հասկացնում է, որ ինքը ֆրանսիացի է և ուզում է գնալ Պիրեյ, ու ձեռքը տանում է դեպի իր ատրճանակը: Լրտեսը համոզվելով, որ նա իրավ ֆրանսիացի է, ճանապարհը փոխել է տալիս ու հասնում մոտակա նավը: Ես հանգիստ շունչ եմ առնում: Գարոն ավելի եվրոպացու է նման, քան հայի:

Հունիսի 10-ին մեր նավը հասնում է Պոլիս: Բոսֆորի մեջ նավը կանգնած է. շուրջս եմ նայում՝ ապշեցուցիչ տեսարան ամեն ուղղությամբ: Գեղեցիկ է Պոլիսն իր մարմարյա պալատներով, վերսլաց մզկիթներով ու մինարեթ ներով, բայց բնությունը գերազանցում է ամեն ինչ: Ճամբորդներն անմիջապես թողնում են նավը: Ես սպասում եմ, որ շուտով կգան և ինձ կտանեն: Տրված նշանը վրաս (կարմիր փողկապ), անհամբեր եմ, թե երբ պիտի գան: Կիպրոսից գրել եմ, թե առաջիկա ռուսական նավով մեկնելու եմ: Օրը կես դառավ, դարձյալ մարդ չկա: Ռուսական դրոշակով մակույկ եկավ, գնաց, բայց ինձ ոչ ոք չի մոտենում:

Ամառվա կիզիչ արևի տակ, տախտակամածի վրա մտամոլոր շրջում եմ: Քարածուխ են բեռնում նավի մեջ, նրա փոշին և արևը ինձ սևացնում են: Բայց այդ ոչինչ, հոգեպես եմ տանջվում, եթե նամակս հասած չլինի՝ ես կորած եմ: Նավը ուղղակի գնալու է Օդեսա, իսկ ես ունեի պարսկական պասպորտ[1] Մինասով ազգանունով: Ինձ նավից դուրս կանեն, և կընկնեմ թուրք ոստիկանության ձեռքը: Հետս կա իմ անկողինը և մի ճամպրուկ, որի մեջ են երկու ատրճանակ: Սրանք ինչ պիտի անեմ: Մտածում եմ այս բոլորի մասին: Շտապ նամակ եմ գրում Մարգարովի հասցեով, գցում եմ նավի [փոստ]արկղը: Թերևս ստանա և գեթ վաղը գա ինձ հանելու: Քիչ վերջն իմանում եմ, որ նավը նույն օրն իսկ, երեկոյան, մեկնելու է: Ճամբորդ համարյա թե չկա: Նավը պատրաստվում է մեկնել: Ես ուզեմ, չուզեմ պիտի մնամ նավի վրա, բայց պարսկական անձնագրի վրա վիզա չի դրված, ուրեմն, երբ անձնագիր հարցնեն, չեմ կարող ցույց տալ, դրանով պաշտոնյաներն իրավունք չունեն ինձ ռուսական նավահանգիստ հասցնել: Մի քանի ճամբորդներ եկան: Նավն առաջին նշանը տվեց՝ պաշտոնյան ճամբորդներից անձնագիր է պահանջում, շուտով ինձ է դիմելու: Ես րոպեապես որոշում եմ ու կատարում. պարսկական պասպորտս պատռում եմ և հայտնում եմ իմ իսկական ով լինելս և ավելացնում եմ, որ ռուսական անձնագիրս կորցրել եմ:

– «Այնուհետև մենք Ձեզ չենք կարող տանել Օդեսա: Ձեզ կթողնենք Պոլիս»,– ասում է պաշտոնյան ու հեռանում:

Շուտով մի նավաստի կանգնում է ինձ մոտ, որպես հսկիչ, որպեսզի ես չպահվեմ նավի մի անկյունում և այդպիսով երևամ ռուսական նավահանգստում: Ես հսկողության տակ եմ, ռուսական կառավարությունն իմ դեմ ոչինչ չունի:

---

[1] Անձնագիր:

Ենթադրում եմ, որ ինձ կիջեցնեն և հսկողության տակ ռուսական հյուպատոսին կհասցնեն մինչև ինքնությունս հաստատվելը և ապա կուղարկեն իմ հայրենիքը՝ Կովկաս: Բայց այդպես չեղավ: Ժամանակին նավը շարժվեց, և ես մնացի նավի վրա: Հասանք Բոսֆորի վերին մասերը. Բեյուք Դերեյի[1] դիմաց նավը կանգնեց: Նավի մեջ էր նաև նավային ընկերության ագենտը[2]՝ մի հույն, որը ռուսերեն գիտեր: Նրա նավից իջավ մի մակույկ, ինձ էլ իմ իրերով միասին իջեցրին նույն մակույկի մեջ: Նավը առաջ շարժվեց: Հույն գործակալը մակույկի մեջ ինձնից իմացավ, որ ես իբր թե կորցրել եմ ռուսական պասպորտս, ասաց, որ ոչինչ չկա, այստեղ ծովափ դուրս կգանք, կնստենք ներքին նավերից մեկնումեկը, որ ամենի մի 1 ½ ժամ գնում է դեպի Պոլսո կամուրջը, այնտեղ կիջնենք, որևէ հյուրանոցում կգիշերենք, առավոտյան կներկայանանք ռուսական հյուպատոսարան ու կհայտնեք Ձեր պասպորտի կորստի մասին:

Դուրս եկանք ծովափ: Գործակալն իմ իրերը հանձնեց մի բեռնակրի, հետո եկավ մինչև Բեյուք-Դերեյի նավահանգիստը, այնտեղ մի տոմսակ գնեց, ինձ տվեց, իրերս էլ հանձնեց, որ նավի մեջ դնեն ու ինքը հեռացավ:

Գործի այս ընթացքն ինձ համար բոլորովին անսպասելի էր. ես հիմա Պոլսում եմ և ազատ մարդ եմ, և ոչ ոք չգիտի իմ մասին: Բայց մի հանգամանք մտատանջում է ինձ, որ տեղական թուրքերեն չգիտեմ, մեր թուրքերենով[3] էլ ես ինձ կարող եմ մատնել: Որոշեցի թուրքերեն երբեք չխոսել: Նստեցի նավ, հասանք Պոլսո կամուրջը: Իրերս ինքնս վերցրի և դուրս եկա կամուրջի վրա ու կանգնեցի: Մի թուրք մոտեցավ, իրերս վերցրեց, ես ձևանում եմ, որ նորեկ չեմ, որպեսզի կասկած չհրավիրեմ իմ վրա: Ինձ հարկավոր է

---

[1] Կ. Պոլսի գլխավոր փողոցներից մեկը:

[2] Գործակալ, աշխատակից:

[3] Նկատի ունի իր իմացած կովկասյան թաթարերենը:

այս գիշեր մի կերպ անցկացնել, առավոտյան ամեն ինչ կկարգադրվի: Ձեռքով հրեցի թուրքին և առաջն ընկա դեպի Ստամբուլի կողմը, մտա առաջին փողոցը, խանութների շարքը, տեսա մի հայ խանութպան, մոտեցա և խնդրեցի հայերեն լեզվով, որ մի պանդոկ ցույց տա: Նա բեռնակրին մատնացույց արեց մոտակա «Բրուսա» հոթելը և ինձ հայտնեց, որ այնտեղ բոլորը հայեր են և հոթելի տերն էլ մի լավ թուրք է: Բեռնակրին էլ ասաց, որ այնտեղ այնպիսի մի սենյակ դնեն ինձ, ուր հայ է ապրում:

Հոթելի տերը շատ քաղաքավարությամբ ընդունեց ինձ և ուղարկեց ամենավերի հարկը, մի սենյակ, ուր նստած էր մի ծերունի բուրսացի հայ: Առհասարակ արևելքում ընդունված է միևնույն սենյակում երկու, երեք, չորս մահճակալ պահել և ամեն մինը մի հաճախորդի հատկացնել՝ ով կուզե լինի: Այդ բանը նկատել էի և Եգիպտոսում: Իմ չար բախտից դուրս եկավ, որ այդ ծերունին հայերեն բոլորովին չի իմանում: Հասկացավ մի կերպ, որ ես պարսկաստանցի խալիչայի[1] վաճառական եմ, ապրում եմ Բեյուք-Դերեյում և հիմա եկել եմ Պոլիս: Շատ պարզ ամենքի համար: Պառկեցի քնելու, բայց չեմ կարողանում, օրվա տպավորությունները, այդ անհաջող սկիզբը, անսպասելի կերպով քաղաք մտնելը, առավոտյան իմ անելիքը մեր ընկերներին գտնելու համար: Այս բոլորը խիստ հուզումով լցրել էին իմ հոգիս, և ես ծանր թմբիրի մեջ անհամբեր սպասում էի առավոտյան բացվելուն:

Հանկարծ ինչ-որ աղմուկի ձայն է հասնում ականջիս: Փողոցներով մարդիկ են վազում, մեծ մասամբ բոբիկ: Նայում եմ լուսամուտից, ներքևում, շատ ցածում, փողոցում խռնված մարդիկ էին երևում, լույս չկա, որ մի բան հասկանամ, ծերունին խռմփացնում է, քաշվում եմ, որ զարթնեցնեմ և բան իմանամ: Թանձր խավարի մեջ հազիվ շարժվող ամբոխն է երևում, ոմանց ուսին ինչ-որ բան դրած:

[1] Գորգի:

Աղմուկը քանի գնում, ուժեղանում է: Լսվում է մի ուժեղ և ծիգ ձայն, որ հայտարարության է նման: Ոչինչ չեմ հասկանում: Սիրտս ճմլվում է: Անծանոթ միջավայր եմ ընկել, ոնց որ երկնքից իջած, հազար ու մի ենթադրություն եմ անում: Մտքերիս առաջ ծառանում են հայկական ջարդերը: Չլինի թե քաղաքում ջարդ է քրիստոնյաների, և այդ բարձր ձայնը ֆանատիկ կրոնականի կոչ է բոլոր հավատացյալներին՝ անխնա լինել դեպի բոլոր գյավուրները: Մի կես ժամ անց աղմուկը խաղաղվում է, բայց դա երկար չի տևում: Նոր մի աղմուկ, նույնպիսի կանչ է լսվում այս անգամ մի ուրիշ կողմից: Նորից մարդկանց բազմություն, ոտաբոբիկ, շատերը կիսամերկ վազում են՝ ինչ-որ բան դրած ուսերին: Մի զարհուրելի գիշեր անց[կաց]րի, մի աներևակայելի գիշեր, այնպիսին, որ մարդու մտքով չի կարող անցնել, և եղավ րոպե, որ ես ենթադրում եմ, թե այդ բոլորը երազումս եմ տեսնում:

Վերջապես լուսացավ, աղմուկները խաղաղել են, քունս իսպառ փախել է, և ես անհամբեր եմ, թե երբ ծերունին կզարթնի, որ ինձ ասի այդ առթիվ: Բայց ինչպես հարցնեմ, մտածում եմ, թերևս այնքան տարրական և սովորական բան է կատարվածը, որ իմ հարցմունքը նրան տարօրինակ պիտի թվա, թե ինչպես Բեյուք-Դերեյում ապրող վաճառականն այդքանը չգիտե և հանկարծ կասկածի, թե ես այն չեմ, ինչ ասել եմ:

Վերջապես ծերունին զարթնեց և հարցրեց, թե ես լա՞վ եմ քնել: Ես պատասխանում եմ և հարցուփորձ անում գիշերվա անցքերի մասին: Երկար բացատրություններից հետո նա կարողանում է կռահել եղելությունը և «Թուլումբաջի, յանգըն» բառերն է արտասանում: Մի կերպ հասկանում եմ, որ հրդեհ է եղած: Հետո ապրելով Պոլսում, տեսա որ դա շատ սովորական երևույթ է ամենքի համար: «Թուլումբաջի» ասում են հրդեհաշեջներին: Սա պետական մի կազմակերպություն չէ, այլ ինքնաբերաբար կազմված մի միություն,

որ հրդեհի ժամանակ հրապարակ է նետվում իր փոքրիկ, ուսերի վրա տարվող ջրցան մեքենայով: Խառնիճաղանճ անգործների մի բազմություն է, որ զիլ կանչի հրավերով վայրկենապես խռնվում են որոշ տեղերում և շտապում հրդեհի վայրը: Ամեն մի թաղ ունի իր նման խումբը: Կանչողը գիշերապահն է, որ հայտարարում է հրդեհի վայրը, և ահա բոլոր թաղերի թուլումբաջիները դեպի միևնույն տեղն են վազում: Պարզ է, որ երբ հրդեհը կա Պոլսի որևէ թաղում, բոլոր թաղերի մեջ էլ նույն իրարանցումն է և վազվռտուքը, իսկ հրդեհը Պոլսում ամենօրյա երևույթ է, հաճախ՝ օրական մի քանի կետերում: Լինում են հրդեհներ, որին ճարակ են դառնում ամբողջական թաղեր հազարավոր տներով: Տներն ընդհանրապես տախտակից են շինվում: Թուլումբաջիներն ապրում են հրդեհի հասույթով, եթե հրդեհը հանգցվում է, տերը նրանց նվեր է տալիս, բայց տասնյակ խմբերի բավարարել մի մարդ չի կարող: Ավելի շատ նրանք ոգևորվում են հրդեհից հափշտակած իրերով. հրդեհի շրջանի տներն են մտնում ու իրերը դուրս թափում, որպեսզի թե ազատելու համար հրդեհից, որ, նրանց ասելով, մոտալուտ է: Տերը հակառակվում է, ասելով, որ հրդեհը իր տանը չի հասնի, բայց նրանք որոշել և ի կատար են ածում, մինչ դեռ հակառակ կողմում հրդեհն իր ավերմունքն է գործում: Թուլումբաջիները մոտենալ այդ կողմին իսկ չեն համարձակվում. ոտաբոբիկ, գլխաբաց, կիսամերկ՝ որքան կարող են մոտենալ, որ մի օգնության հասնեն: Ջրցան մեքենայի ջուրը մի րոպեում վերջանում է, ամբոխն այդ մեքենան շալակած նորից աղմուկով վազում է այս ու այն կողմ՝ ջուր վերցնելու ու նորից հարայհրոցով դառնում է հրդեհի վայրը:

Ահա այս իրարանցումն է, որ ամբողջ գիշեր ինձ հազար ու մի ենթադրություններ անել տվեց:

Ես պետք է գտնեմ ռուսական փոստատունը: Ծերունուն հարցրի, նա հասկացրեց, որ Գալաթայում է, կամրջից այն կողմ: Նա

հագնվեց, առաջարկեց միասին գնալ կամուրջ, ցույց տվեց ինձ կամրջի սկզբին կանգնած սպիտակ զգեստով մարդկանց և ասաց, որ մի մետալիկ (թրքական դրամ երկու կոպեկ արժողությամբ) կտանք նրանց ու կանցնենք կամուրջը, ապա կհարցնեք «Ռուս փոստահանեսի նեյերդե դըր»[1] Ձեզ ցույց կտան: Մետալիկի մասին ես գաղափար չունեի, ձեռքումս եղած չնչին դրամն էլ Կիպրոսի դրամ էր: «Մետալիկ չունեմ, խնդրեմ ինձ մի մետալիկ տուր»,– ասացի: Նա ինձ տվեց և ես հանձնելով [դրամը] կամրջի հսկիչին՝ անցա: Հարցնելով գտա ռուսական փոստը կամրջից շատ մոտ տեղում: Մոտեցա, տեսնեմ ռուսական դեմքեր: Հիմա չգիտեմ, թե ինչպես հարցնեմ Մարգարովի մասին: Նա այդ ազգանունը գործ է դնում նամակների համար, անշուշտ, ունի իր անունը, որ ես չգիտեմ: Ստիպված եղա պատահած ռուս պաշտոնյային ռուսերեն հարցնել, թե այդ տեղ պաշտոնավարող հային կարո՞ղ եմ տեսնել, ենթադրեցի, որ մեկից ավելի հայ չի լինի:

«Հա՛, Դուք երևի Դերձակյանին եք ուզում»,– ասաց նա և կանչեց: Դեմս դուրս եկավ մի բավականին ցած հասակով, թափանցող աչքերով 26–27 տարեկան երիտասարդ: Շտապ-շտապ ինձ հարցրեց, թե ինչ եմ ուզում: Հարցին պատասխանելու փոխարեն հարցրի.

«Այստեղ միայն Դու՞ք եք պաշտոնյա, թե՞ ուրիշ հայ էլ կա»:

«Մենակ ես եմ, բայց ինչ եք ուզում»,– հարցնում է նա:

«Մարգարով ազգանունով նամակները փոստից ո՞վ է ստանում»,– հարցրի ես: Այդպիսի հարցն անսպասելի էր նրա համար, աչքերը հառեց վրաս:

«Բայց Դուք ո՞վ եք»,– հարցրեց նա:

«Երեկ Դուք պիտի ռուսական նավից Մարին հանեիք, ինչպես եղավ, որ մոռացաք»:

---

[1] «Ռուսական փոստատուն որտե՞ղ է»:

«Անկե այս րոպեին նամակ ստացա և քիչ վերջը պիտի գնամ նավ»: «Բայց նավը երեկոյան մեկնեց Օդեսա»,– ասի ես:

– «Փոխանակ Դուք նրան գտնելու, նա է Ձեզ գտնում»:

«Ուրեմն Դուք Մա՞րն եք, բայց ինչպե՞ս դուրս եկաք»:

«Այդ մասին հետո»,– ասի ես:

Պարզվեց, որ Կիպրոսից գրված նամակում առաջիկա նավ կարդալով՝ հասկացել է հաջորդ նավ, ուրեմն և ինձ սպասելիս է եղել հաջորդ շաբաթ, իսկ իր ստացածը իմ նավից նախորդ օրը գրած նամակն է եղել: Թյուրիմացությունը պարզվեց:

«Դե շուտ մարդ գտիր, իրերս հոթելից բերենք: Մեջը երկու ատրճանակ կա իրենց փամփուշտներով»,– ասացի ես:

Նա ինձ առաջնորդեց մի խանութ, որ պատկանում էր մի ռուսահայի, և առաջարկեց ինձ այնտեղ սպասել մինչև ինքը կարգադրի: Այս խանութում գործակատարի պաշտոնում տեսա մի երիտասարդի, որ նախորդ օրը նավից ապրանք [էր] ստանում և ապրանքն էր հանձնում: Նա ինձ շատ էր նայում, այնպես որ ինձ թվաց, որ թրքական գաղտնի ագենտ կարող է լինել: Պարզվեց, որ դա տեղական մեր աշխատակիցներից մեկն է՝ Մկրտիչ Հատիկյան[1] անունով, տրապիզոնցի, որի մասին ես խոսելիք կունենամ, երբ Կիլիկիա մտնեմ: Վռամյանը իմաց էր տվել Բաբկեն Սյունիին (Պետրոս Փարյան)[2], որ ժպտալով մտավ խանութ, բարևեց և հարցրեց, թե որ տեղ եմ գիշերել: Երբ տեղն իմացավ, խորհուրդ տվեց ատրճանակներն առանձին մարդու ձեռքով բերել տալ, որպեսզի իրերը կամրջից անցնելիս խուզարկության ժամանակ չբռնվեն: Դուրս է գալիս, որ իրեր փոխադրելու ժամանակ կամրջի վրա կասկածի

---

[1] **Հատիկյան Մկրտիչ** (Պոնտացի, ?–?), ՀՅԴ առաջին գործիչն է, ով գործել է Կիլիկիայում:

[2] **Փարյան Պետրոս** (Բաբկեն Սյունի, 1873–1896), հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

դեպքում խուզարկության են ենթարկում: Նա միևնույն ժամանակ առաջարկեց ինձ այլևս չգնալ հոթել. կամրջից անցնել-դառնալը որոշ կասկած է առաջ բերում ոստիկանական լրտեսների մեջ, և պատահմամբ կարող են ինձ բռնել, իսկ ես ոչ մի դոկումենտ[1] չունեմ: Որոշեց 3 հոգի ուղարկել հոթել, որոնցից մեկը կվերցնի ճամպրուկի միջի ատրճանակներն ու փամփուշտները ու մենակ կանցնի կամուրջը, մյուս երկուսը հետո կվճարեն հոթելի մի գիշերվա վարձը և իրերը վերցնելով՝ կամուրջը կանցկացնեն: Այդպես էլ եղավ, ես ոչ հոթել գնացի, ոչ էլ ծերունի բրուսացուն տեսա, որ փոխ առած մի մետալիկը վերադարձնեի: Դիտելի մի բան է, որ այդչափ խստությունների մեջ այդ ժամանակ Պոլսի հյուրանոցներում գիշերողի անունն իսկ չէին նշանակում և ոչ իսկ հետաքրքրվում, [թե] եկողն ինչ մարդ է: Ամեն ինչ շատ նահապետական ձևով էր կատարվում:

Ինձ տեղավորեցին մի սենյակում, որ գտնվում էր Պըտի շան (Փոքր դաշտ) կոչված զբոսավայրի դիմաց, մի նեղ փողոցում: Այդ զբոսավայրում ամեն երեկո իտալական մի խումբ օպերետներ էր տալիս. մինչև ժամը 1-ը գիշերվա մյուզիկի ու երգի ձայնը չէր դադարում այդտեղ: Բերայի կյանքն է դա, որ եվրոպական ձևով շարունակվում է ողջ գիշեր: Մինչ այդ, միևնույն միջոցին Պոլսո մյուս թաղերի ազգաբնակչությունը երեկոյան ժամը 9–10-ից քնում է:

Ես այդ միջոցին միակ ռուսահայն էի իբրև դաշնակցական գործիչ, ապրում էի Միխայիլ Միխայլովիչ անունով, իբրև ռուս: Իմ սենյակը սակավ էին ընկերներ գալիս: Ես էի գնում նրանց մոտ, երբ այդ պետք էր:

Ինձանից առաջ իբրև ռուսահայ այնտեղ գործել է Հովհաննես Յուսուֆյան[2] (Մելիք կեղծանունով), որ պիտի ասած, շատ խոշոր

---

[1] Փաստաթուղթ:

[2] **Յուսուֆյան Հովհաննես** (Վահանյան, Մելիք) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

աշխատանք է թափել այնտեղ կազմակերպություն առաջ բերելու համար և ինչ որ կար այդ միջոցին, համարյա նրա աշխատության հետևանքն է եղել:

Սկզբի օրերում ես աշխատում էի ուսումնասիրել, թե ինչ ուժեր կան պատրաստի, լինի անձնական, թե զինական: Անձնականի նկատմամբ ես այն եզրակացության եկա, որ ինտելիգենտ գործիչներ բավական թվով կան, բոլորն էլ ոգևորված ու անձնվիրության պատրաստ երիտասարդներ, ուսուցիչներ, նորավարտներ, բայց ժողովրդական խոնարհ խավերում աշխատանք չի կատարվել: Տաճկական հասարակ էսնաֆ[1] ու բանվոր տարրը շատ ավելի զգայուն է հեղափոխական շարժման գործում, քան մեզ մոտ Կովկասում. խոսքս այն ժամանակվանն է վերաբերում: Գալով զինականին, կար ձուլված 250-ի չափ ռումբ, կար նաև բավականաչափ դինամիտ, որ ստացվել էր Կովկասից և շարունակվում էր ստացվել: Ռումբերը շարունակ շինվում էին. դրա վարպետն էր մի պարզ երկաթագործ, որ փոքրիկ խանութ ուներ Սկյութարում և խանութի հետևը՝ գետնի տակ թաքստոց պատրաստված դատարկ ռումբերը պահելու համար: Դինամիտը առանձին տեղ էր պահվում պետք եղած ժամանակ ռումբերի մեջ լցնելու համար: Կային նաև ատրճանակներ: Ատրճանակ Պոլսում ամենուրեք կարելի էր գնել. խանութներում ծախվում էին:

Ռումբերը գնդաձև էին, զանազան մեծության, կային նուռից սկսած մինչև ամենամեծ ձմերուկի մեծության ռումբեր: Ամենամեծերը երկու հատ էին, որոնց վրա ռեզինից խոշոր տառերով ձուլված էին՝ Հ. Յ. Դաշնակցություն և այդ տառերը ոսկեզօծված: Խիստ տպավորիչ էին, բայց այդ երկուսն ավելի ցույցի համար էին, քան գործադրության, որովհետև նրանց փոխադրել կամ ցույցի ժամանակ շպրտել անկարելի էր: Մի բան, որ դեռ ոչ ոքի համար պարզ

[1] Արհեստավոր:

չէր, այդ ցույցի ձևն էր. այդ թողնված էր տեղական մարմնին: Նա պիտի որոշեր: Պոլսում առաջ էլ եղել էին ցույցեր – Հնչակյանների կողմից, այժմ պայմանները տարբեր էին: Նրանք տեղի էին ունեցել այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը դեռ ջարդերի չէր ենթարկվում, ինչպես այդ տեղի ունեցավ 1895-ի ամառը: Այժմ ուրիշ լեզվով պիտի խոսել թյուրք կառավարության հետ: Դիմումը, բողոքը թեկուզ հազարավոր բազմության բերանից անարժեք է: Արյունի ու զենքի պատասխանը պիտի լինի նույն ձևի: Այս ուղղությամբ մտքերի փոխանակություններ էինք անում և ռումբերի պատրաստությունը շտապեցնում:

Մի 15 օր հետո Պոլիս մտավ Վարդ-Պատրիկյանը, մի այդքան էլ հետո՝ Բորիսը[1]: Այսպիսով դառնում էինք 3 ռուսահայ: Այդ ժամանակ ռուսահայը տաճկահայի աչքին ուրիշ մարդ էր. նա ազատ է ապրում Ռուսաստանում, նրա դեմ հատուկ հալածանք չկա, հետևաբար նա լավ գիտե ազատ ապրելու ճանապարհները, ուրեմն ավելի լավ հեղափոխական է: Բացի այդ նա զինվոր է գնում ռուսական բանակի մեջ, նա զենք գործածել գիտե, արյուն թափել գիտե, իսկ դա ինքնին մի առավելություն է, որից զուրկ է տաճկահայությունը: Սրանց եթե միացնենք մինչև այդ ռուսական սահմանից դեպի Վասպուրական անցնող խմբերի անձնուրացությունը, որ հպարտության զգացմունքով էր լցնում տաճկահայ հայրենասերին, պարզ կլիներ, թե ինչու ռուսահայերը հեղափոխական գործում դիրք ունեին: Երկու խմբագրությունների վարիչները՝ «Հնչակ», «Դրոշակ», ռուսահայեր են եղել և այլն: Ահա այս բոլորն իրենց կշիռն ունեին տաճկահայի հոգեբանության վրա: Սա ժամանակի մի պսիխոզ[2] է, որ հաղթահարել է, տիրել է թրքահայի միտքը:

---

[1] **Խաչատրյան Սմբատ**. ՀՀ խորհրդարանի պատգամավոր (1919):

[2] Որևէ տևական կամ ճապաղային իրադարձության ներկայացնող վիճակ, տագնապից՝ հոգու մնայից բաղաքական-հասարակական վիճակ:

Ժողովներ ենք ունենում հաճախ: Բոլորը ներկա էին, բացի Վռամյանից: Նա հեռու է պահում իրեն և շատ խելացի է վարվում: Շատերը նրան չեն ճանաչում և պետք էլ չէ: Նա այնպիսի պաշտոն ունի, որ կոնսպիրատիվ[1] գործ կատարելու համար միակն է: Դրսի աշխարհի հետ նա է կապ պահպանում, դրսից եկողներին առանց դոկումենտի նա է ընդունում իր մակույկով, ինչպես ընդունեց Վարդ-Պատրիկյանին և Բորիսին: Ժամանակ գա, նա շատերին կփախցնի դեպի նավերը: Պետք է նա մնա կասկածից դուրս, բայց դրանով նա գործից կտրված չէ, նա ընդհակառակը գործի կենտրոնումն է: Նա հաճախ տեսնվում է մեր երեքիս հետ, բայց ամենից շատ կապ է պահպանում Բաբկենի հետ: Սա Կեդրոնական վարժարանն ավարտած մի 20 տարեկան երիտասարդ է, շատ ընդունակ որպես կոնսպիրատիվ գործիչ, սառն ու ձևացող: Նրան տեսնողը կկարծի թե կառավարական լրտես է, բայց ոչ հայ հեղափոխական: Շրջում է փողոցում անհոգ, աչքի տակով է նայում անցորդին, գլխին ունի մի լայն ֆես, որ մինչև ականջներն է իջնում: Ճիշտ թյուրք խաֆիեյի (լրտեսի) արտաքին: Եվ Վռամյանը նրա միջոցով անց է կացնում իր տեսակետը ժողովներում:

Ամեն օր լուր են բերում, թե դրսի դաշնակցականներն անհամբեր են, ուզում են, որ ցույցը շուտ լինի: Արդեն լսել են, որ Ռուսաստանից շատ հեղափոխականներ են եկել: Լուրն օրեցօր ընդարձակվում է դեպի հասարակության լայն շրջանակները, վաղը, մյուս օրը լուրը թուրք լրտեսների ականջը կընկնի, ու խստություններ, ձերբակալություններ կսկսվեն, գուցե և մեր պահեստները բռնվեն: Այս լուրերը էլեկտրականացնում են մթնոլորտը: Մենք, որքան կարելի է, աշխատում ենք համոզել, որ հերքեն այդ լուրերը, որ չի կարելի անպատրաստից գործը գլորել, ինչ ուզում է լինի: Պետք է լավ մշակել խնդիրը, որ հարվածը շեշտակի լինի, որ հետևանք ունենա:

[1] Գաղտնի, ոչ բացահայտ:

Հիմնական սկզբունք է անցնում, որ ցույցը տեղի պիտի ունենա անպայման եվրոպացիների բնակության սահմաններում և որ գլխավորն է՝ ցույցին պիտի տալ այնպիսի բնույթ, որից վնասվողները լինեն ավելի եվրոպացիք: Կարգադրված է Բերայի մեծ փողոցի երկու կողմերում սենյակներ վարձել և նրանցում տեղավորել մի-մի վստահելի ու հանդուգն տղա: Արդեն դրամ է փոխադրված Գարոյին, որ շուտով ճանապարհվի դեպի Պոլիս. ըստ համաձայնության Վռամյանը նրան կհանի նավից:

Ռումբերի թիվն օրեցօր շատանում է: 1895 թվի[1] վրեժը ցասումի պես ծանրացել է բոլորի հոգուն. ամենքը մտածում են այնպիսի մի հարված տալ թյուրքական ռեժիմին, որ նա սասանվի: Ժողովներում ամեն մեկն իր առաջարկն է անում. հարձակում զորանոցների վրա, հարձակում բոլոր ոստիկանական տների[2] վրա, սարսափի մեջ պահել ամբողջ Բերան՝ տների վերի հարկերից ռումբեր շպրտելով. թող կյանքը մեռնի, առևտուրը դադարի, անցուդարձը կտրվի: Այս ուղղությամբ շատ առաջարկներ են լինում: Ցույցի հետ միասին Հայ Յեղափոխական Դաշնակցության պահանջներն, այդ առթիվ տպագրված, հատուկ մարդու ձեռքով պիտի բաժանվեն եվրոպական պետությունների ներկայացուցիչներին: Թուրք կառավարությանը չպիտի դիմել, նա խաղալիք է եվրոպացիների ձեռքին, եթե եվրոպացիք չուզենան, նա կամովին իսկ չպիտի կարողանա բավարարել մեր պահանջները: Փորձերն այդ են ցույց տվել: Պիտի այնպես տանել գործը, որ եվրոպացիք շահագրգռվեն Հայկական հարցի լուծումով:

Խոսվում էր նաև զանազան հիմնարկությունների մասին, որ կարելի է գրավել, այնտեղ ամրանալ և պահանջներ դնել: Հիմնարկությունները թվելիս խոսք եղավ և Օսմանյան բանկի մասին: Երբ

[1] Նկատի ունի համիդյան կոտորածները:
[2] Ոստիկանական տեղամասերի:

պարզվեց, որ դա միջազգային մի բանկ է, որի մեջ բաժինք ունեն եվրոպական բոլոր խոշոր պետությունները, ամենքը գտան, որ դրանից ավելի հարմարը չը պիտի կարողանանք գտնել:

Օգոստոսի 4-ի կիրակի երեկոյան ժողովումն էր, որ Բանկը գրավելու որոշում տրվեց: Ժողովը տեղի ուներ Հուստուկ անունով, մի արդեն հասակն առած կիսանդամալույծ օրիորդի սեփական տան մեջ, որ գտնվում է Բերայի փողոցի վրա բարձրանալիս ձախից իջնող ուղղահայաց փողոցներից մեկում: Այդ տանն էին մթերվում դինամիտն ու պայթուցիկ սպիտակ փոշին: Տունը եռահարկ էր, ճակատի լայնքը միայն մի սենյակի չափ (Պոլսում տներն այդ ձևի էին լինում): Բոլոր հարկերն էլ բռնված հեղափոխականների կողմից, իբրև վարձողներ: Այդ տունն են փոխադրված նաև Սկյութարում շինվող ռումբերի մեծամասնությունը: Ռումբերը փոխադրում էին տնային իրերի, կահկարասիքի մեջ տեղավորած: Հարևանները ոչ մի կասկած չեն տանում՝ կահկարասիք փոխադրելը շատ սովորական է, իսկ ոստիկանությունը Թուրքիայում առհասարակ շատ խղճուկ դրության մեջ է:

Թե՛ պայթուցիկ նյութերը և թե՛ ռումբերը տեղավորված էին տան ներքին հարկում գտնվող մի խոր հորում, ուր գործիչները հերթով, երկու-երկու իջնում էին և ռումբերը լցնում պայթուցիկ նյութով: Կապսուլները[1] դեռ չէին դրվում զգուշության համար: Ռումբերը շրջանակի ամեն ուղղությամբ ունեին ասեղի լայնությամբ անցքեր, որ վերջանում էին պիստոնի հրացանի ծիծիկներով[2] գործադրությունից քիչ առաջ միայն կապսուլները պիտի տեղավորվեն: Հորի մեջ երկար աշխատել չի լինում, որով հետև դինամիտից և սպիտակ փոշուց առաջացած գազը գլխացավ է պատճառում և սրտա-

[1] Հրապատիճները:

[2] Գործածության մեջ էին թղթե փամփուշտներ, որոնք ունեին հրապատիճներ և կրակում էին զարկանի միջոցով:

խառնուք: Բոլոր ընկերներն այդ աշխատանքը կատարում են, եթե այլ գործով չեն զբաղված այդ րոպեին: Բոլոր ընկերներ ասելով՝ պիտի հասկանալ նրանք, որոնք մասնակցում են ժողովներին: Նրանցից դուրս ոչ ոք չգիտի, և առհասարակ ցույցի մասին ոչ ոք տեղեկություն չունի: Օգոստոսի 4-ի ժողովին մասնակցում էին 13 հոգի.

Սուրեն,
Գնունի,
Բաբկեն Սյունի,
Հրաչյա Վահագն,
Սև Աշոտը[1],
Ժակ Լևոն,
Հուստուկ,
և Իսկուհի և Զաբել Բոյաճյաններ (քույրեր),
Վարդ-Պատրիկյան,
Տողերիս գրողը:

Դրսում միայն Վռամյանը գիտե, իսկ Գարոն դեռ չի հասել: Նրա թեկնածությունը ես եմ դրել որպես մասնակցող բանկի վրա կատարվելիք հարձակմանը: Նրան ճանաչում է նաև Հրաչյան (Հայկ Թիրաքյան), որ միասին է ուսանած Նանսիում և միասին ճանապարհված՝ նվիրվելու հեղափոխական գործին:

Այնուհետև ունենում ենք երկու ժողով ևս նույն շենքում: Ռումբերը բոլորը լցված են: Կամաց-կամաց փոխադրվում են դեպի այն սենյակները, որոնք վարձված են և տրամադրված են դրսի ընկերներին: Այդ ընկերներին վերջին օրը պիտի հայտնվի, թե ինչ են անելու:

[1] **Աշոտ Բագրատունի**:

Ռումբերը փոխադրողները հիշյալ երկու օրիորդներն են, որոնք փոքրիկ ճամպրուկները ձեռքներին գնում են, տեղավորում են, գալիս, նորից տանում:

Այդ ժողովներում որոշվում է, որ Բանկի վրա հարձակվողները թվով 50-ից պակաս չպիտի լինի: Ամեն մեկն ունենալու է ձեռքին 2 ռումբ, մի ատրճանակ: Նրանց առաջնորդները լինելու էին 4 հոգի, որոնք և պիտի ստորագրեն պահանջների տակ: Դրանք են՝ Բաբկեն, Հրաչ, Գարո և Սև Աշոտ:

Գարոն Պոլիս մտավ օգոստոսի 7-ին: Գործի հաջողության համար, որպեսզի բանկն անպայման ձեռք անցնի, որոշվում է ամենամոտ ոստիկանական (վոյեվոդա[1]) տան վրա հարձակում գործել, ոստիկանությանը և այնտեղ սպասող[2] զորամասին զբաղեցնել, որպեսզի նրանք չկարողանան բանկի պահակներին օգնության հասնել: Այս գործը կազմակերպել հանձն է առնում Սև Աշոտը: Մյուս կողմից, որպեսզի Ստամբուլի զորամասերը շուտով օգնության չհասնեն բանկին, որոշվում է Սամաթիայի հայոց դպրոցում և շրջակայքում ցույց կազմակերպել, այդ կողմի զորքը դեպի իրենց գրավել: Այնտեղ ուղարկվում է նույնպես մեծ քանակությամբ ռումբեր: Սամաթիայի գործի ղեկավարներն են Գնունին և Սուրենը, որոնց այնտեղ միանում է Միսաքյան ընտանիքը:

Բերայի, Շիշլիի, Ելդըզի կողմից եկող զորքը պիտի անցնի Բերայի գլխավոր փողոցով, ուր բազմաթիվ տեղերում ռումբեր կան և, որոնցով նրանց կարելի է գեթ մի ժամ պահել և ուշացնել: Պահանջները եվրոպական ներկայացուցիչներին բաժանելու է ժաք Լևոնը, որ գիտե լավ ֆրանսերեն և արտաքինով բոլորովին հյուսիսային տիպ է: Բանկի գրավման գործի ղեկավարներից երկուսը գիտեն ֆրանսերեն. Գարոն և Հրաչը: Գարոն սկզբնական վտանգից

[1] Ոստիկանական պաշտոնյա:

[2] Տեղակայված կամ ծառայություն կատարող:

զերծ է: Նա մտնելու է մի 10 րոպե առաջ Բանկը և այնտեղ որպես եվրոպացի փողի կուրսով է զբաղվելու: Երբ Բանկը գրավվի, նա պիտի հայտարարի պաշտոնյաներին, որ վախենալու բան չկա, սա հեղափոխական հայերի գործն է՝ ճնշում գործ դնելով Եվրոպայի վրա, մեզ խոստացված բարենորոգումների գործադրությունը հաջողեցնելու համար: Այսպիսով հնարավոր կլինի այնտեղ գտնվող հարյուրավոր պաշտոնյաներին հանգստացնել ու պատվիրել հանգիստ նստել և առանց հեղափոխականների համաձայնության տեղից տեղ չփոխադրվել, այդպիսով նրանց կյանքին վտանգ չկա:

Որոշվում է նաև, որ ռուսահայերից ոչ մեկը չմասնակցի անմիջապես Բանկի գրավման գործին, որ չլինի թե ընդհարման միջոցին մեկնումեկը մեռնելով՝ կառավարությանը առիթ տա ասել, թե ինչպես սովորաբար լինում է, թրքահայերը չեն բողոքողները, այլ ամեն ինչ կատարվում է ռուսահայերի սադրանքով: Որոշվում է Բանկը գրավել չորեքշաբթի, օգոստոսի 14-ին (բոլոր ամսաթվերը հին տոմարով են), ցերեկվա ճիշտ 12 ժամին:

Վերջին ժողովը լինում է օգոստոսի 13-ի իրիկունը: Եվրոպական ներկայացուցիչներին ներկայացվելիք պահանջագիրը պատրաստ է: Հիմնականը խոստացված բարենորոգումների գործադրումն է: Եթե եվրոպացիք ընդունեն և գրավոր երաշխիք տան, Բանկը 48 ժամ միայն պիտի մնա հեղափոխականների ձեռքին, որից հետո նրանք դուրս են գալիս եվրոպական դեսպանների երաշխավորությամբ: Իսկ եթե մերժում տեղի ունենա, Բանկը օդ է հանելու իր մեջ գտնվող մոտ 250 պաշտոնյաներով, որոնք մեծ մասամբ եվրոպացի էին, և այնտեղ գտնվող բոլոր թղթերը, ակցիաները[1], դոկումենտները[2] ոչնչացվելու են: Այդ սպառնալիքը գործ դնելու համար պատրաստություն տեսնված է, նույն օրը ցերեկով մեծ

[1] Բաժնետոմսերը:
[2] Փաստաթղթերը:

քանակությամբ դինամիտ ու ռումբ փոխադրվեց կառքերով Բանկի դիմաց մի տուպիկի[1] մեջ գտնվող անգլիական դպրոց, ուր պարապրապմունքներ չկային ամառվա արձակուրդի պատճառով, և որի ծառան հայ էր ու դավադրության մասնակից:

50 հոգին ցերեկով պիտի գային դպրոց, զինվեին ու տրված նշանի համաձայն շարժվեին դեպի Բանկը: Եթե եվրոպական ներկայացուցիչները գրավոր երաշխիք իսկ տալու լինեին առաջադրված պահանջներն իրականացնելու համար, հեղափոխականները, ժողովի որոշման համաձայն, պիտի Բանկի տեր համարվեին առնվազն 48 ժամ: Այս կետը հատկապես շեշտված էր թե՛ դեսպաններին եղած պահանջի մեջ և թե՛ հարձակման ղեկավարներին այդ առթիվ ամենակտրուկ ձևով պատվիրած: Օսմանյան բանկը Պոլսի տնտեսական-առևտրական ամենամեծ երակն է: Այդ երակի կանգ առնելը համանիշ է քաղաքի կյանքի կանգնելուն: Բանկային գործերը Պոլսում կանգնելով՝ կանգ են առնում նաև բոլոր եվրոպական մեծ կենտրոնների գործառնությունները Արևելքի հետ: Ամեն մի ժամը խորապես ազդելու է ոչ միայն ֆինանսիստների, այլև դիպլոմատների տրամադրությունների վրա: Պետք է խոսեցնել տալ ամբողջ աշխարհին, բոլոր երկրների մամուլին հայ ժողովրդի և նրա դատի շուրջ: Պիտի ողջ մարդկությունը իմանա, թե ինչպիսի ճնշում ու բռնություն է տիրում այդ ժողովրդի վրա, որ նրա զավակները իրենց ցավն աղաղակելու համար ամենքին, ստիպված են ռումբերի լեզվով խոսել, քանի որ մարդկային լեզվով խոսելով ոչ մեկին խոսք հասկացնել չկարողացան:

Չորս ներկայացուցիչները ստորագրում են պետություններին ներկայացվելիք պահանջագրի տակ: Ամեն կետի մասին խոսված է մանրամասնորեն, ամենքի տեղերը լավ հայտնի է իրեն: Մնում է որոշել, թե Ժակ Լևոնը երբ պահանջագրերը ներկայացնի դես-

[1] Փակուղի:

պաններին: Ժամը 12-ին Բանկը գրավվում է: Մինչև գրավումը ապահովված չլինի, թղթերը դեսպաններին տալը ծիծաղելի կդառնա: Ուստի և որոշվում է, որ Ժակ Լևոնը բանկի դիմաց բարձրության վրա գտնվող մի սրճարանում սպասի նշանի: Բանկի լուսամուտից Հրայչյան թաշկինակ կշարժի, որ նշանակում է, թե Բանկը գրավված է: Անմիջապես Ժակ Լևոնը շատ լավ հագնված կառք է նստելու ու մի առ մի պտտում է բոլոր դեսպանատները ու թղթերը բաժանում: Այնուհետև դրսից ոչ ոք չի հարաբերում դեսպանությունների հետ: Իրենց ասելիքն ու առաջարկները նրանք անելու էին բանկը գրավողների հետ: Այժն է, որ պիտի ստիպի նրանց բանակցությունների մեջ մտնել հեղափոխականների հետ: Իսկ այժը բանկը գրավողների ձեռքումն է, որովհետև նրանք տերն են Բանկի:

Ընկերական սեղանի պատրաստություն էր տեսնված: Վերջին անգամ էինք իրար տեսնում: Մեծամասնությունը վաղվա օրը ամենամեծ վտանգի մեջ է նետվելու. շատերը մեռած կլինեն, շատերը վիրավորված: Այս զգացումը խորապես նստած է ամենքի հոգու մեջ, բայց և այնպես բոլորն ուրախ են: Ոգևորված ճառեր են խոսվում, գործի հաջողության դեպքում փայլուն հեռանկարներ ծրագրում, միմյանց կորով ու հավատ ներշնչում: Ձայն ունեցողները երգում են, երգը փոխվում է խմբականի: Գիշերվա ժամը 12-ին հրաժեշտի ողջույն ենք տալիս, միմյանց պինդ-պինդ համբուրում և ցրիվ գալիս Պոլսո փողոցները գիշերվա լռության մեջ:

Օսմանյան բանկը գրավվեց օգոստոսի 14-ին ցերեկը ժամը 12-ին, ինչ պես որ որոշված էր: Բայց տվյալ պայմաններից մի քանիսը չիրագործվեցին: Մի քանի ձախող հանգամանքներ էլ խանգարեցին, որպեսզի գրավման պատկերը կատարյալ լինի:

Նախ փոխանակ 50 հոգով գրավելու, միայն 27 հոգի կարողացան խմբվել նշանակված վայրը՝ վերը հիշված անգլիական դպրոցը, միասին խուժելու համար Բանկի վրա: Այդ բանի համար հատ-

կապես հանցավոր գտնվեց Սև Աշոտը, որ դպրոցից դուրս է գալիս մի քանի ընկերներով, որպեսզի մի այլ տեղ գտնվող ռումբերը բերի և վոյեվոդա-պահակի վրա հարձակվի: Նա չի վերադառնում, պարզապես դավաճանելով գործին, գործից փախչելով, թեպետ վերջը արդարանալ է ուզում նրանով, որ իբր թե մինչև իր հասնելը արդեն փողոցները փակված են լինում զինվորներով և երթևեկը արգելված: Եվ երբ տեղական մարմինը վերջը որոշում է պատժել նրան, նա թուրք կառավարության է դիմում ու գաղտնի գործակալ նշանակվում: Այս բոլորը պարզվում են բավական ուշ: Տղաներից մի մասն էլ չի կարողանում հասնել Սամաթիայի ցույցը ժամանակից շատ առաջ ակամա կերպով սկսվելու հետևանքով: Սամաթիայի գործիչները առավոտ շատ վաղ, ոմանց ասելով՝ նույն իսկ նախորդ գիշերվանից, սկսում են կռվող ույժեր հավաքել թաղի դպրոցի մեջ, երթևեկը կասկած է առաջ բերում մոտակա ոստիկանական շրջաններում: Ոստիկաններ են գալիս ստուգելու դպրոցում տեղի ունեցող շարժումները, հետաքրքրվում են, հարցուփորձ են անում, պատասխաններից գոհ չեն մնում և առաջարկում են ոմանց պահակ[1] երթալ և այնտեղ բացատրություն տալ:

Հեղափոխական մարդիկ. նույն օրը 12 ժամին քաղաքը տակնուվրա պիտի լինի, իրենք պիտի կռվեն նույն ոստիկանների դեմ: Հիմա ինչպես համակերպվել այդ պահանջներին: Մերժում են, և դրանից առաջ է գալիս ընդհարում. և այն, ինչ որ պիտի սկսվեր ժամը 12-ին, տեղի է ունենում առավոտից: Տղայք կռվում են ամեն կողմից ոստիկաններին օգնության հասնող զորքերի դեմ իրենց ատրճանակներով ու ձեռքի ռումբերով: Պաշարվածները կռվում են այն հույսով, որ կարող լինեն դիմանալ մինչև ժամը 12-ը, երբ Բանկը կգրավվի և Բանկը գրավողները, ինչպես որ պայմանավորված էր, իրենց առաջադրած պայմանների մեջ կհիշատակեն և Սամա-

[1] Ոստիկանատուն:

թիայի կռվողների մասին ու նրանց ևս եվրոպական ներկայացուցիչների միջամտությամբ ու երաշխավորությամբ կազատեն: Բայց Բանկ մտնողներն այդ կետը մոռացության են տալիս և երբ բանակցում են Մաքսիմովի[1] հետ (ռուսական դեսպանի առաջին թարգման), Սամաթիայի մասին ոչինչ չեն հիշատակում: Կռիվը Սամաթիայում շարունակվում է ամբողջ օրը: Կռվողները մեկ-մեկ ընկնում են դրսից զորքի հրացանի զարկերից: Զորքերից շատերը հոշոտվում են ռումբերի կտորներից, մինչև որ աստիճանաբար զորքերը մոտենում են շենքին (դպրոցական) և սկսում կրակել ու դռները կոտրատել: Այդ լինում է արդեն երեկոյան (օգոստոս 14), երբ Բանկը վաղուց գրավված էր: Վերջին կռվողները՝ Միսաքյան եղբայրները՝ Սուրենը, Գուրգենը, տեսնելով, որ փրկության ոչ մի հույս չկա, երբ արդեն բոլոր ռումբերը գործ են դրված և փամփուշտները սպառված, կենդանի թուրքերի ձեռքը չընկնելու համար ինքնասպանությամբ վերջ են տալիս իրենց կյանքին, ոմանք իրենց ատրճանակի վերջին փամփուշտը վառելով իրենց ճակատին, ոմանք էլ նախօրոք պատրաստած թույնն են կուլ տալիս:

Ահա, Սամաթիայի ժամանակից առաջ, շուտ սկսված շարժումը արգելք էր եղել շատերի հասնելուն. կասկածելի մարդկանց փողոցներում սկսում են բռնոտել: Այդ դեպքը, սակայն, այլ կերպ չի ազդում Բերայի վրա: Այստեղ կյանքը բոլորովին նորմալ էր մինչև ժամը 12-ը:

Դպրոցում հավաքվածները տեսնելով, որ ժամը 12-ը խփեց և մասնակցողների մի մասը չի երևում, վտանգավոր են համարում ուշացումը և չեկողների զենքերն ու ռումբերը, ինչպես նաև դինամիտը տոպրակների մեջ տեղավորելով՝ շալակել են տալիս մի քա-

---

[1] **Մաքսիմով Պ.Վ.** (1852–1915), ռուս դիվանագետ, ավարտել է արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը: Կ. Պոլսի ռուսական դեսպանատան 1-ին թարգմանիչ, գաղտնի խորհրդական:

նիսին և դրանց շրջապատած՝ ատրճանակները ձեռքներին, որպես թե Բանկը տարվող ոսկու տոպրակները պաշտպանելու համար, շտապում են դեպի Բանկը: Բանկի դռանը հասնելուն պես, պահակ առնաուտը[1] ուզում է կանգնեցնել այդ բազմությունը. ատրճանակի մի հարվածով նրան գետին են տապալում: Մի քանիսը ներս են խուժում ու ըստ պայմանի «Ազատությո՛ւն» կանչողին ներս ընդունում: Մինչ այդ Բանկի անկյունի պահակատեղից մի զինվոր հրացան է արձակում, որի գնդակը դիպչում է «Ազատությո՛ւն» կանչելով ներս մտնող Բաբկենին, որ և Բանկի մուտքի առաջ վայր է ընկնում, ու գոտկում եղած երկու ռումբերը պայթում են: Բաբկենը պատառ-պատառ է լինում: Դրանից մի երկու հոգի էլ վիրավորվում են: Բայց և այնպես բոլորը ներս են մտնում: Երբ բոլորը ներսն են լինում ու արդեն գործը ապահովված է լինում, Գարոն, ինչպես խոսված է, պաշտոնյաներին հայտարարում է հանգիստ լինել: Այդպես էլ լինում է. միայն Բանկի դիրեկտորը կարողանում է լուսամուտից նետվել և ազատվել:

Դժվարությամբ կարողանում են դուռը փակել, որովհետև Բաբկենի և այլ դիակներ ուղղակի դռների մեջ ընկած են եղել: Մարտիկները բանկի լուսամուտներից ռումբերով պաշտպանել են մուտքը զինվորների խուժումից, մյուս ընկերները կարողացել են դիակները ներս առնել, փշրված ապակիները մաքրել ու դռները փակել: Հրայչան իր թաշկինակի շարժումով նշան է տալիս Ժ. Լևոնին, որ շուտ պահանջագրերը տեղ հասցնի: Ժ. Լևոնը մի թե[2] երկու տեղ հեգնանքի է արժանանում: Երբ թուղթը ձեռքին ներս է մտնում, «Հայերի դեսպանը գալիս է»,– ասում են իրար և ժպտում:

Եվրոպական ներկայացուցիչները իսկույն մարդ են ուղարկում կառավարության մոտ և առաջարկում բռնի միջոցների չդիմել հե-

[1] Ալբանացի:
[2] Այդպես է փաստաթղթում: Հավանաբար՝ մի երկու տեղ:

ղափոխականներին Բանկից դուրս բերելու համար, որովհետև դրանից պիտի տուժեն Բանկում գտնվող եվրոպացիները, և խոստանում են խաղաղ ճանապարհով խնդիրը կարգավորել: Այդպես էլ լինում [է]: Զորքերը ամեն կողմից պաշարում են Բանկը՝ հանգիստ սպասում են, թույլ չտալով ոչ ոքի այդ կողմերից անց ու դարձ անել:

Գործի մեջ է մտնում ռուս դեսպանի Ա[ռաջին] թարգմանը՝ Մաքսիմովը, մի ճարպիկ ու խորամանկ մարդ: Նա կարողանում է համոզել պարագլուխներին, որ խոստում տալ գրավոր կերպով Հայկական դատը պահանջված ձևով լուծելու համար շատ էլ հնարավոր է, բայց չէ որ այդ խոստումը և այդ առթիվ տրված ստորագրությունը կատարվելու է բռնի ճնշման տակ, իսկ օրենքի առաջ ճնշման տակ տրված խոստումը վավերական չէ: Այնպես որ այդպիսի պահանջն անարժեք պիտի մնա, իսկ ինչ վերաբերում է Հայկական դատին, այդ եվրոպացիների կողմից բոլորովին մոռացված չէ, ինչպես կարծում են, և ինքը ազնիվ խոսք է տալիս, իր կառավարության կողմից, իսկ մյուս պետությունների կողմից էլ նրանց բանավոր խոստումներն ունի, որ եթե հայերը կձգեն Բանկը, առանց որևէ վնաս հասցնելու նրա թղթերին և պաշտոն յա ներին, այս անգամ ավելի եռանդուն դիմումներ կանեն Բ. Դռան առաջ՝ հայկական նահանգների համար խոստացված բարենորոգումներն անհապաղ իրագործել տալու համար: Մյուս կողմից, եթե հեղափոխականները համառեն մնալ Բանկում, այդ դեպքում ինչպես իր, նմանապես եվրոպական որևէ պետություն լուռ հանդիսատես պիտի դառնա այն կոտորածին, որ թյուրք խուժանը սկսել է հայերի նկատմամբ, ասում է նա և հավատացնում, որ եթե 48 ժամ տևի այդ ջարդը, Պոլսում և ոչ մի հայ չի մնա, և իրենք մատը մատին չեն խփի հայերի դրությունը մի քիչ տանելի դարձնելու համար:

Պարագլուխները, որոնք միայն երկուսն են մնացել, մոռանում են իրենց տված խոստումը, որ ամեն պարագայում Բանկը 48 ժամ իրենց ձեռքում պիտի պահեն և այն, որ խոստումը չստանալու դեպքում պիտի Բանկը օդը հանեն, այդ բոլորը մոռանալով, խաբվում են Մաքսիմովի դիվանագիտական ճառերից և համաձայնություն տալիս դուրս գալու, պայմանով, որ սկսված ջարդը դադարեցնել տրվի, և Բանկը գրավողներն էլ եվրոպական պահակների հսկողությամբ արտասահման ուղարկվեն:

Նույն օրը երեկոյան ժամը 12-ին դուրս են գալիս և փոխադրվում Բոսֆորում սպասող ֆրանսիական մի նավ, որ նրանց տանում է Մարսեյլ: Ֆրանսիական ներկայացուցչությունը նավի վրա այցելելով պարագլուխներին՝ նրանց անվանում է ավազակներ: Իհարկե, դրան պատասխանում են, որ այդպիսի անուն նրանց Բանկում չէր համարձակվի տալ և զղջում են, որ այդպես թեթև կերպով համոզվել են ու Բանկից դուրս եկել: Բայց արդեն ուշ էր: Նրանց Մարսեյլում բանտումն են պահում, մինչև որ որոշում է տրվում երկու պարագլուխներին՝ Հրաչին ու Գարոյին, իրենց ցանկության համաձայն, Ժնև ուղարկել, իսկ մյուսներին ուղարկում են Հարավային Ամերիկայի Արգենտինա հասարակապետության մայրաքաղաք Բուենոս-Այրես:

Բանկում ընկած դիակները և վիրավորներին Մաքսիմովը իր վրա է վերցնում, դիակները թաղել է տալիս, իսկ վիրավորներին, կարծեմ 4 հոգի, վերցնում է ռուս դեսպանատան հիվանդանոցը, այնտեղ խնամել տալիս և առողջանալուց հետո դեսպանատան միջոցներով, իրենց ցանկության համաձայն, ուղարկում է Եգիպտոս:

Երբ ես առաջին անգամ Պոլիս մտա և ապրում էի որպես ռուս, Վռամյանը հարմար գտավ, որ ես կապ պահեմ բուլղար հեղափո-

խականների հետ. շատ չանցած ինձ ծանոթացրին Լյապով[1] ազգանունով բուլղարացու հետ: Հայդուկային մեր գործունեությունը մենք փոխ ենք առել բուլղարներից, այդ գործում նրանք մեր վարպետներն էին, բայց ցուցական գործում նրանք էին մեզանից սովորում: Նրանք շատ անհամբեր էին, որ մի խառնակություն լինի Թուրքիայում, հայերը ազատագրվեն, Թուրքիան թուլանա, և իրենք գլուխ բարձրացնեն Մակեդոնիայում, ու վասալական կախում ունեցող Բուլղարիան[2] անկախ դառնա[3]: Այդ պատճառով էլ մեզ ամեն կերպ օժանդակում էին. մեզ առաջարկում էին մարտիկներ, որպեսզի որևէ գործողության ժամանակ մեզ հետ միասին աշխատեն: Բայց մենք այդ առաջարկությունները հրաժարվում էինք ընդունել, որովհետև մարդկանց պակասը չէր, որ մեզ մտահոգում էր: Բայց մենք օգտվում էինք նրանց մի լավ ծառայությունից: Երբ հարկավոր էր լինում վտանգված մեկին պահել, նրանց էինք դիմում. նրանք կատարում էին սիրով: Իսկ որ գլխավորն է՝ նրանք էին մեզ մատակարարում անցագրեր, ոչ թե պարսկական անցագրերի պես որևէ մեկի անցագիրը մեզ տալու, այլ բուլղարական գործակալությունից ուզած անունով, դիմանշաններով, ուզած օրվա համար անցագիր էին վերցնում և մեզ տալիս, ստացողը իր ստորագրությունը վրան էր դնում, և ահա հայը դառնում էր բուլղար և ուզած օրը կարող էր Պոլսից մեկնել կամ դրսից Պոլիս մտնել: Սա մեծ դյուրություն էր նրանց համար, որոնք ուզում էին Պոլսից դուրս գալ: Մենք, ռուսահայերս, այժմ այլևս մնալու պետք չունեինք Պոլսում:

Պետք էր դուրս գայինք: Երբ մեր ժողովը գտավ, որ ռուսահայերը ուղղակի չպիտի մասնակցեն Բանկի գրավման գործին, ես աշ-

---

[1] **Լյապով Նիկոլով Դիմիտրի** (Димитър Николов Ляпов. 1870–1941), բուլղարացի հեղափոխական գործիչ:

[2] 1878 թ.Սան Ստեֆանոյի պայմանագրով բուլղարիան անկախություն ստացավ, սակայն պայմանագիրը վերանայվեց Բեռլինի վեհաժողովում, որի հետևանքով Բուլղարիան հայտնվեց Օսմանյան կայսրությունից վասալական կախման մեջ:

[3] 1908 թ. Բուլղարիան հռչակում է իր անկախությունը:

խատեցի նրան հարակից մի գործ վերցնել: Բաբկենի հետ խոսեցի, որ ինձ ցույց տա այն տները, ուր սենյակներ էին վարձված և որոնցից ռումբեր պիտի տեղային Բերայի գլխավոր փողոցով դեպի Բանկը շտապող զորքի վրա: Ես բացատրեցի իմ նպատակը՝ այն է, որ ես մտադիր եմ հետևել ու տեսնել անձամբ, թե իսկապես այդ տներից ռումբեր նետվելու էին և թե արդյոք նրանց ավերմունքն այնքան զգալի է, որպեսզի զորքերը Բանկի գրավման գործին արգելք չլինեն: Բաբկենը մի քիչ մտածելուց հետո հայտնեց, որ դա շատ լավ միտք է, և հետս անցնելով Բերայի մեծ փողոցը՝ մի առ մի ցույց տվեց նշանակված տները: Հատկապես նա մատնանշեց Գալաթա-Սերայ ոստիկանատան դիմաց գտնվող տունը, որտեղից ոչ միայն զորքին պիտի խանգարեին, այլև Գալաթա-Սերայից լուր տանող բերող ձիավոր ոստիկաններին: Այդ դերում ես եթե վնասվեի ռումբերի պայթելուց, քանի որ փողոցում պիտի լինեի, կամ սպանվեի, կհամարվեի պատահական մի անցորդ և ուրիշ ոչինչ, որով և առիթ չէի դառնա թյուրք կառավարության համար ասելու, թե շարժումները թելադրվում են ռուսահայերի կողմից:

Բաբկենը բաժանվելիս ասաց, որ ինքը պիտի մտնի բոլոր սենյակները և ռմբաձիգներին զգուշացնի, որ իրենց հատուկ հետևող պիտի լինի, չլինի թե վախենան և ռումբերն անգործածելի թողնեն:

(Ժամը ճիշտ 12-ին) Ցույցի օրը առավոտից ես փողոցում էի համբերությունս չէր տալիս տանը նստել, դուրս եկա Պըտի Շան պարտեզի առաջ, կլիներ ժամը 10-ը: Տեսնեմ Հրաչյան ճամբորդական պայուսակը ուսին, որի մեջ ռումբերն էին դրված, շտապ իջնում էր դեպի Բանկի կողմը: Նրա հետ էին նաև երկու Բոյաճյան օրիորդները, որոնք ունեին մի-մի պայուսակ՝ դրանց մեջ էլ ռումբեր կային: Ինձ տեսնելով, մի րոպե կանգ առան, մի քանի խոսք փոխանակեցին և շտապեցին հեռանալ: «Առանց օրիորդների չես կարող մնալ, հա՛»,– ասացի ես: Հրաչյան կարմրեց և ժպտաց: Հայտնի

էր, որ նա շատ մտերիմ էր մեծ քրոջ՝ Իսկուհու հետ: Հետո կատակի տվեցի, և նրանք անցան:

Օրիորդները նրան պիտի հասցնեին անգլիական դպրոցն ու վերադառնային: Իսկուհին վերջը ամուսնացավ Հրաչյայի հետ և մինչև վերջինիս եղերական մահը (1915 թ.) դարձավ նրա կյանքի ամենալավ ընկերուհին:

Իմ նրանց հետ գնալը շատ անհարմար էր, ես կարող էի գործը վտանգել իմ անձնավորությամբ: Ես ապրում էի իբրև ռուս, ի՞նչ գործ ունեի հայերի հետ: Նրանց գնալուց հետո շարունակ մտածում էի, թե արդյո՞ք բոլորը հավաքվելու էին անգլիական դպրոց[ում]: Երկար տատանվելուց հետո կամաց-կամաց իջա դեպի Բանկը, մտա այն տուպիկը, ուր գտնվում էր անգլիական դպրոցը: Նախորդ երեկոյան ես օրիորդներից մեկի հետ կառքով այնտեղ երկու չեմոդան[1] ռումբ էինք փոխադրել: Դռան առաջ տեսա Հրաչյային և 3–4 երիտասարդների, որոնց հետ խոսում էր: Ես նրանց չէի տեսել և պետք էլ չէր, որ նրանք ինձ ճանաչեին: Այդ միջոցին մի խումբ տղերք էլ եկան գնացին դպրոց: Այդքանն ինձ բավական էր. հավաքվում են: Գործը կիսով չափ կատարված է, որովհետև սկսվում է: Այլևս կանգնելու ժամանակ չէր. ես պիտի իմ դիրքում լինեի: Շտապեցի դեպի Բերա: Դեռ չհասած Գալաթա-Սերայի ոստիկանատունը, մտա մի սրճարան, սուրճ ուզեցի և սպասում եմ: Ժամը 12-ից 10 րոպե պակաս է: Միտքս այնտեղ է, հուզումից սիրտս խփում է: Լսում եմ զարկերակի հարվածները ականջներիս մեջ: Անցավ ժ[ամը] 12-ը: Ոչինչ չի լսվում. անցավ 10 րոպե, դարձյալ ոչինչ: Աչքս ժամացույցին սպասում եմ: Մի 10 րոպե անց ինչ-որ պայթյունների անորոշ, խուլ ձայներ եմ լսում. ուրիշներն այդ չեն լսում, հետո մի աղմուկ իրարանցում: Ես դուրս ելա և փողոցի մեջ կանգնեցի, դիտում եմ: Փողոցում գտնվող բոլոր մարդիկ ինչ-որ

[1] Ճամպրուկ:

շվարումի մեջ փսփսուքով բաներ են ասում իրար, բայց որոշ բան պարզել չեն կարողանում: Այդ միջոցին մի ձիավոր ոստիկան շատ արագ սլացքով անցավ մեր մոտով: Այդ բազմամարդ փողոցով նման սուրալն ինքնին մարդկանց սարսափն ուժեղացրեց: Հանդիպելով մի խումբ ոստիկանների՝ ձիավորը մի խոսք փոխանակեց ու շարունակեց իր արշավը դեպի վեր: Ես մտածեցի, որ ձիավորը լուր է տանում Յելդըզի պալատը[1]: Այդ միջոցին իմ մոտ գտնվող տնից մի ռումբ ընկավ փողոցի մեջ, հենց ոստիկանների մեջտեղը: Երկուսը գլորվեցին, մեկը փախավ, չորրորդը սուրը քաշեց և ոտի մեջ մի շարժում գործեց ու սկսեց իր շուրջը դիտել: Որին կասկածի. հարյուրավոր մարդիկ փողոցով փախչում են դեպի վեր: Խուճապն ահռելի դարձավ. խանութները, սրճարանները, ճաշարանները մի վայրկյանում հսկայական շռինդով փակվեցին: Մարդիկ գլուխները կորցրել են, չգիտեին ուր փախչեն, ուր թաքնվեն: Ահավոր վտանգի սարսափը պաշարել է բոլորին. երբեմն լսվում է ինչ-որ հառաչանք: Սովորաբար մարդիկ չեն խոսում, իրար ոչինչ չեն ասում: Ամենքն էլ սփրթնած են. կարծես թե վերջին օրն են ապրում:

Բարձրանում եմ դեպի վեր, դեպի Գալաթա-Սերայ: Այնտեղ ոստիկանները մեծ շարժման մեջ են, շտապ հավաքվում են, շարքի էին ուզում կանգնել: Վարանոտ դեմքեր են, երկյուղը պաշարել է բոլորին: Այդ միջոցին դիմացի անկյունի տան վերի հարկից երկու ռումբ միասին վար գլորվեցին: Պայթյունի շառաչը, ոստիկանների վայնասունը իրար խառնվեցան: Ողջ մնացածները ներս փախան. ներսից նրանց պետը հայհոյելով դուրս քշեց: Փողոցում անցուդարձը կանգ առավ, փախչողները շարունակում են գալ Գալաթայի կողմից, լեզուները բռնված են: Հարցերին պատասխանել չեն կա-

[1] **Յըլդըզ պալատ** (թուրք.՝ Yıldız Sarayı – «Աստղային պալատ»), սուլթանական պալատ, որը գտնվում է Կ. Պոլսում: Հանդիսացել է սուլթան Աբդուլ Համիդ II-ի նստավայրը (1876–1909 թթ.):

րողանում: Գլուխները թաքցնելու մի ապահով վայր են փնտրում: Ես դիտում եմ և վեր բաձրանում դեպի Բերայի վերի մասը: Դեռ Թոքաթլյանի սրճարան չհասած՝ տեսնեմ վերից կազմ ու պատրաստ զորք է իջնում շատ արագ: Վեր եմ նայում այն տներին, որտեղից ռումբերը պիտի թափվեն: Ահա մի պայթյուն աջից, մյուսը ձախից. ծուխն ու զինվորները խառնվում են իրար, զորքի շարքերը ցրիվ են գալիս, շատերը տների բակերն ու պասաժներն[1] են լցվում, մինչև ցրվածները կժողովեն, բավական ժամանակ է անցնում: Ոստիկաններ այլևս փողոցներում չեն երևում. նրանք այս ու այն ապահով ծածկի տակ մտած՝ դիտում են շուրջը: Ես վերադառնում եմ նույն փողոցով դեպի Գալաթա-Սերայ, զորքն արագ իջնում է, ետ նայում: Այդ միջոցին երկու ռումբ է գլորվում զորքի մեջ հենց Թոքաթլյանի սրճարանի հանդեպ: Ընկած տեղերում զորքի խիտ շարքի մեջ պարապ տարածություն է երևում: Տասնյակ զինվորներ են գետնին ընկած. զորքի կարգը բոլորովին տակնուվրա է լինում, այնպես որ փախստականները հասնում են Գալաթա-Սերայի առաջ բացվող ուրիշ մի փողոցի, որ տանում է դեպի անգլիական դեսպանատուն: Մի մասը մտնում է այդտեղ գտնվող պասաժների մեջ, մյուս մասը փողոցի մեջ շվարած այս ու այն կողմն է փախչում ազատվելու համար վերից իջնող մահացու կրակից:

Ես այդ պասաժներից մեկի մուտքի առաջ կանգնած եմ: Ահա մի ռումբ գլուխները կորցրած զինվորների մեջ: Մի սպա տեսավ այն լուսամուտը, որտեղից ռումբը նետվեց, զինվորներին համախմբեց, շարքի կանգնեցրեց պասսաժի առջևով ձգվող մայթի վրա և պատվիրեց հրացաններն ուղղել դիմացի լուսամուտները: Այնտեղից ոչ ոք չի համարձակվում գլուխ հանել, ով հանդգնում է, իսկույն համազարկ է տեղի ունենում այն ուղղությամբ: Ռումբն արդեն իր

[1] Երկկողմ խանութներով ծածկված առևտրասրահ (առանձին մուտք ու ելքով):

դերը կատարել է, ռմբաձիգն անմիջապես իջել է բակը և խառնվել փողոցում գտնվող հետաքրքիրներին[1]: Լուսամուտներից նայողները մյուս հարկերում և բնակարաններում ապրողներն են, որոնք չգիտեն, թե նույն տնից է ռումբը շպրտված և հետաքրքրությունից գլուխները հանում են նայելու, թե ինչ է կատարվում փողոցում և այդպիսով համազարկերը իրենց վրա հրավիրում:

Բայց զորքերին մարդորսությամբ զբաղեցնելու համար չեն ուղարկել: Շտապ սպաներ են հասնում և կարգադրում համախմբվել Գալաթա-Սերայի հանդեպ: Մի կերպ շարքի են կանգնում ու ցած շտապում: Նրանց անցած փողոցում մեկ-մեկ լսվում են ռումբի շառաչները: Բայց և այնպես զորքը հասնում է Բանկին ժամը 1-ից ոչ առաջ, երբ Բանկը վաղուց հեղափոխականների ձեռքին է լինում:

Այնուհետև կամաց-կամաց աղմուկը խաղաղեց և քաղաքը թաղվեց մեռելային լռության մեջ: Փողոցներում անցուդարձը համարյա դադարեց, հատ-հատ մարդիկ էին անցնում, որոնց մեծ մասը գաղտնի լրտեսներ էին: Ես անցա Վարդ-Պատրիկյանի սենյակը և պատմեցի, որ ռումբերը իրենց դերը լիովին կատարեցին: Նա շատ ոգևորված էր. ձեռքերն էր շփում ու մեծամեծ հետևանքներ սպասում այդ օրվա ցույցից:

Քիչ հետո գնացի իմ սենյակը: Շրջակա տների լուսամուտներից իրար հետ բարձր խոսում էին ֆրանսերեն և հունարեն: Իրողությունը ոչ ոք դեռ չէր ըմբռնել: Լուր էր տարածվել, որ 40-ի չափ քյուրդեր կամ չերքեզներ Օսմանյան բանկ են մտել ու թալանել: Ասում էին ու ծիծաղում. ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Բանկի վրա հարձակվողները հայեր կլինեն: Այդպիսի հանդգնություն հայերից սպասել անմտություն կլիներ: Գիշերը վրա հասավ. մեռելային լռություն էր ամբողջ Բերայում: Այն ինչ սովորական ժամանակնե-

[1] Հետաքրքրասերներին:

րում Բերան եվրոպական մի անկյուն է, ուժեղ լուսավորություն ամեն կողմ, խիտ բազմություն մինչև գիշերվա ժամը 1-ը, մյուզիկ ու երեկույթներ, թատրոններում, սրճարաններում կենդանի շարժում ու ուրախություն: Այդ գիշեր ոչ մեկը դրանցից. երբեմն լսվում էր գիշերապահի գավազանի թխկոցը կամ փողոցի շան հաչյունը:

Մեր տան բոլոր բնակիչները հավաքվել էին տանտիրուհու դահլիճը օրվա դեպքերի մասին իրենց տպավորությունները փոխանակելու համար: Դուրս գալ չէր կարելի, իսկ ժամանակը մի կերպ պիտի անցկացնել, և իրար գլխի են հավաքվել: Ինձ էլ կանչեցին, ես չմերժեցի, իջա ներքև: Կային և ֆրանսիացիներ, և իտալացիներ, և հույներ, և մի հայ: Վերջինը Եղիա Դեմիրճիպաշյանն[1] էր, հայտնի գրագետ և ֆրանսա-հայ բառարանի հեղինակը: Նա այդ ժամանակ մտածին[2] մեծ խանգարումի մեջ էր. երբեմն նա այնքան էր իրեն կորցնում, որ գլխով մեկ բոռում էր, իր սենյակից դուրս էր գալիս նախասենյակ և երևակայական մարդկանց հայհոյում:

Արդեն լուր էր տարածվել, որ Գալաթայում ու Ստամբուլում շատ հայեր են ջարդել: Այդ լուրի վրա Եղիան դառը լալիս էր ու գանգատվում [հյուրասենյակում] նստող հյուրերին, որ եվրոպական պետությունները բոլորովին լքել են հայերին: Ոչ ոք մխիթարական խոսքեր չէր գտնում սփոփելու այդ տառապած հային: Ես մեջ ընկա և հայտնեցի, որ ռուս պետությունը միայն Արևելքում շահագրգռված է քրիստոնյա ժողովուրդների պաշտպանության խնդրով և վերջը հավանորեն դարձյալ նա միջամտի ի նպաստ հայկական դատի: Ես խոսում էի իբրև ռուս, և կարծես այդ խոսքերը լարեցին Եղիայի ուշադրությունը, և նա կասկածոտ հայացքով սկսեց ինձ դիտել: Արդյոք այդ նույն վայրկյանին Մաքսիմովը Բանկի պատի մոտ լու-

[1] **Տեմիրճիպաշյան Եղիշե** (1851–1908), հայ արձակագիր, բանաստեղծ, փիլիսոփա: Տեմիրճիպաշյան Եղիշե (1851–1908), հայ արձակագիր, բանաստեղծ, փիլիսոփա:

[2] Հոգեկան:

սամուտից իր ճարտար լեզվով չէ՞ր խաբում հեղափոխականներին իր դատարկ խոստումներով և նրանց համոզում՝ դուրս գալ Բանկից: Շատ հավանական է:

Հաջորդ օրը եղա Բորիսի մոտ: Նա շատ ջղային էր դարձել, զգուշությունը մինչև վախկոտության հասցնելով: Նույն տպավորությունն էին ստացել և մյուս գործիչները, որոնք եղել էին նրա մոտ: Նա շատ ավելի համակրելի կողմեր ունի, քան Վարդ Պատրիկյանը: Բայց վերջինս մի առավելություն ունի. դա անվախությունն է, որ հեղափոխականի համար առաջին առաքինությունը պիտի լինի:

Ցնցումը Պոլսում այնքան մեծ էր, որ մի քանի օր շարունակ կյանքն իսպառ մեռած էր այնտեղ: Այդպես տևեց մինչև օգոստոսի 19-ը, երկուշաբթի, որ սուլթան Համիդի տոնն է[1]: Սովորական հրավառություն, երաժշտություն պիտի սարքվի: Կարգադրված է, որ Պըտի շանի օպերետը իր ներկայացումը տա երաժշտությամբ և երգերով, որ Գալաթա-Սերայ ոստիկանատունը զարդարվի սուլթանական թուղրայով[2] ու լուսավորվի:

Երաժշտության ձայնի վրա մարդիկ տներից սկսեցին դուրս գալ, Բերան կենդանացավ: Ժամը 9-ին, երբ բազմությունը գնալով շատանում էր, Պըտի Շանի դեմ գտնվող մի տանից երկու ռումբ նետվեց փողոց: Պայթյունի դղրդոցի հետ կյանքը միանգամից մեռավ քաղքում: Օպերետում գտնվող բազմությունը պարտեզից դուրս փախավ փողոց, փողոցում անցուդարձ անող ները նրանց հետ խառնվելով՝ այնպիսի մի խուճապ ստեղծեցին, որպիսին տեղի ունեցավ Բանկի գրավման օրը: 10 վայրկյանից փողոցները դատարկվեցին: Մյուզիկն արդեն վաղուց էր դադարել, սրճարանները փակվեցին և սուլթանի տոնը բոլորովին խանգարվեց: Այդ տանը

[1] Գահ է բարձրացել 1876 թ. օգոստոսի 19-ին:
[2] Թուղրա՝ սուլթանական զինանշան:

ռումբ գտնվելու մասին ոչ ոք մեզանից չգիտեր. մեզ համար հանելուկ մնաց, թե ով էր այդ անողը: Հետո պարզվեց, որ մեր բարեկամ բուլղարացիներն էին արել: Նրանց խիստ ծանր էր եկել այդ օրվա քաղաքի ուրախ տրամադրությունը. այնտեղ հայերին հարյուրներով ջարդել տալուց հետո, դեռ սուլթանի տոնախմբությունն էլ պիտի կատարեն: Պետք է քանդել այդ ուրախության աղբյուրը, այդ տոնախմբությունը, և այդ երկու ռումբը, որ Լյապոֆը մերոնցից ստանալով՝ պահ էր տվել իր ընկերներին, նրանք այդպես գործածեցին:

Հաջորդ օրը, օգոստոսի 20-ին, երեքշաբթի մենք ռուսահայերս դուրս պիտի գանք Պոլսից իբրև բուլղարներ: Մեզ հետ պիտի լինի նաև Ժաք Լևոնը, որին դեսպանատներում տեսնող շատ է եղել, կարող է մատնվել:

Լյապոֆը մոտիկ կապեր ունի բուլղարական գործակալության հետ և այնտեղ պատրաստել է տվել չորս հատ անձնագիր չորսիս դիմագծերով ու նշաններով: Իմ անունս է Դիմիտրի Մարինով-Պոպով Բալչըկ քաղաքից: Անձնագրերը բերին, ու մենք յուրաքանչյուրս իր անձնագրի տակ ստորագրեց, որով այլևս կեղծիք լինելու ոչ մի կասկած չկա:

Ցերեկը ժամը 12-ին ինձ մոտ եկան մի երիտասարդ և երկու օրիորդ. բոլորն էլ բուլղար և հրավիրեցին կառք նստել: Ժողովեցի իրերս, սեղանի վրա գտա Բաբկենի կողմից մոռացված Խրիմյանի «Սիրակ և Սամվել» գիրքը: Անհարմար էր հետս վերցնել. մաքսատանը թյուրքերին կասկածելի կդարձներ իմ անձնավորությունը, թողնել սենյակում նույնպես անհարմար էր: Թխկացրի Եղիա Դեմիրճիպաշյանի դուռը և գիրքը նրան հանձնելով՝ ասացի. «Ծանոթ մի հայ է մոռացել, եթե գալու լինի և ինձ հարցնի, խնդրեմ իրեն տաք»: Ասի, մնաք բարև արի և իջա փողոց:

Հասանք մաքսատուն, պասպորտս նայեցին, իրերս, ոչ մի կասկածելի բան չունեին, իսկույն բոլոր ձևականությունները կատարվեցին, և մենք բոլորս անցանք նավ, որ Բուլղարիա պիտի մեկներ նույն երեկոյան: Նույն պայմաններում, բուլղար մարդ[1] ու կանանց ուղեկցությամբ առանձին-առանձին նավ բարձրացան և Վարդ-Պատրիկյանը, և Բորիսը, և ժաք Լևոնը: Մեզ հետ Բուլղարիա էր գալիս և Լյապոֆը, որպեսզի բուլղարական նավահանգստում դժվարություն չկրենք:

Լյապովը երբ առաջին անգամ նավում ինձ տեսավ, վազեց, փաթաթվեց ինձ: Նա կարծել է, թե ես սպանված եմ կամ բռնվել եմ: Ցույցի առաջին օրը Գալաթա Սերայի դիմաց մի տան նստած ժամանակ, երբ հանկարծ լսում է ռումբերի պայթյունը հենց իրենց տան տակ, գլուխը հանում է և ինձ է տեսնում իրենց լուսամուտի տակ, կարծում է, թե ես եմ շպրտել ռումբերը և փողոցում կանգնել՝ չիմանալով ուր պահվեմ: Իսկույն ցած է վազում, որ ինձ ներս առնի ու պահի: Մինչև չորրորդ հարկից ցած իջնելը ես հեռացած եմ լինում, և նա ինձ չի գտնում: Հիմա իր ուրախությունն է արտահայտում իր կոտրած ռուսերենով: Նա զարմացավ, երբ բացատրեցի, որ այդ ռումբերը նետվեցին հենց իր գտնված բնակարանի կողքի սենյակից: Նա միայն գիտեր, որ մի բան պատրաստվում է, բայց թե ի՞նչ, ե՞րբ, ի՞նչ չափով, այդ մասին ոչինչ չգիտեր:

Առավոտյան Բուրգաս նավահանգստումն էինք: Դուրս գալու ժամանակ Լյապովն առաջ անցավ և մաքսատան պետի ականջին ինչ որ [բան] փսփսաց: Մեզ ընդունեցին մեծ սիրով, անձնագրերիս չնայեցին իսկ և ներս առան:

Բուրգասում ես դժբախտություն ունեցա ներկա լինել մի վեճի, որ տեղի ունեցավ Վարդ-Պատրիկյանի և Բորիսի միջև, և որի անախորժ տպավորությունը մինչև այսօր իսկ, երեսուն տարի հե-

[1] Տղամարդկանց:

տո, դեռ չեմ մոռացել: Երևակայական իմ ու քո խնդիր էր վեճի նյութը: Բանկի գրավման գաղափարը ո՞վ առաջին անգամ հղացավ: Յուրաքանչյուրը պնդում է, թե իր հղացումն է: Բացի այդ ամեն մեկը գտնում է, որ ինքն է աշխատել գործը գլուխ բերել, ինքն է շաղկապել գործը և որոշ հետևանքի հասցրել և նման դատարկաբանություններ: Այս հողի վրա նրանք այնքան առաջ գնացին, որ սկսեցին իրար վիրավորական խոսքեր ասել: Այս երևույթը ինձ չափազանց վրդովեց: Մյուս օրը ես հայտարարեցի, որ Կովկաս եմ մեկնելու. այն ինչ նրանք երկուսն էլ ուզում են Ժնև գնալ: Երկու օրից հետո ես նրանց թողեցի Բուրգասում և մի կեղծ պարսկական անձնագիր ձեռք բերելով՝ առաջին պատահած նավը նստեցի ու օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին հասա Թիֆլիս:

Հետո ես իմացա, որ նրանք գնում են Ժնև և այնտեղ էլ նույն ձևով շարունակում են իրենց վեճը. վերջն էլ վեճի են բռնվում խմբագրության անդամների՝ Հոնանի և Ռոստոմի հետ: Բավական անախորժ խոսակցություն է տեղի ունենում այնտեղ: Թե՛ Ռոստոմը և թե՛ Հոնանը շատ դժգոհություն էին հայտնում հատկապես Բորիսից, որ շատ բան ուզեցել է ինքնագլուխ կատարել, կարգադրություններ անել անկախ տեղի պատասխանատու ընկերներից ու պրետենզիաներ[1] ունենալ, որպես Բանկի գրավման գործը կազմակերպող, այնպես որ վերջը իրարից բաժանվում են համարյա թե գժտված: Իրավունքների տեր է համարում իրեն և Վարդ-Պատրիկյանը, որ այնուհետև Բուլղարիայում նստած տեղական գործերն է վարում, բայց կամաց-կամաց կամայականություններ է անում, հավաքված դրամները փոխանակ խմբագրատուն ուղարկելու, պահում է և ինքնագլուխ «Շարժում» թերթի[2] վրա ծախսում, որ վերջին

[1] Պահանջ, հավակնություն:

[2] «Շարժում», ազգային, քաղաքական և գրական լրագիր, լույս է տեսել Վառնայում (1898–1907):

տարիները «Դաշնակցության» ղեկավարների դեմ պայքար մղելու գործիք է դարձնում իր ձեռքում: Մի ժամանակ երազում է նույնիսկ առանձին հոսանքի ղեկավար հանդիսանալ, դրամներ հավաքել «Դաշնակցության» անունով ու հաշիվ չտալ: 5000 ֆրանկից ավելի դրամը սեփականում է, ապա տրվում է հարբեցողության ու իրեն խիստ վարկաբեկում: 1906 թվին, տեղական մարմնի կարգադրությամբ, որպես զեղծարար ու դրամաշորթ Ռուշչուկում տեռորի է ենթարկվում: Ես այդ ժամանակ գտնվում էի Ժնևում. այդ պատիժը գտա շատ անարդարար մի մարդու դեմ, որ անցյալ ունի և որին հնարավոր կլիներ հորդորներով ու նրա մոտիկ ընկերների միջոցով իրավախոհության հրավիրել: Այդ մի կետը Դաշնակցության այդ շրջանի գործունեության մեջ արդարացնելու տվյալները պակասավոր են մնացել: Այսպես վերջացավ մի կյանք, որ սիրում էր կատակներ անել ու ընկերների կապը այս կամ այն օրիորդի հետ «Մոցիքուլը Հայաստանով» բացատրել: Բայց ինքն ևս ժամանակին իր տուրքը տվեց «Մոցիքուլը Հայաստան» իր սրախոսության և ամուսնացավ Սամաթիայում Բանկի գրավման օրը քաջությամբ ընկած Սուրենի նշանած օրիորդի հետ: Գալով Բորիսին: Նա միառժամանակ հեռու մնաց անմիջական գործից, բայց խմբագրությունը քննադատելով հանդերձ՝ իրեն շատ կորեկտ պահեց և մինչև վերջ կուսակցության արժանավոր մի անդամը եղավ:

Կովկաս հասնելով միայն հասկացա, թե ինչ մեծ սենսացիա[1] է առաջ բերել Բանկի պատմությունը: Խնդիրը նրանումն էր, որ Պոլսում մենք ամեն ինչ թաքցրինք ամենքից, մեր ծրագրի մասին ոչ մի տեղեկություն չտվինք նույնիսկ «Դրոշակի» խմբագրության, այնպես որ, երբ առաջին անգամ հեռագիրներ են ստացվում այդ մասին, ինչպես արտասահմանում, նմանապես և Անդրկովկասում, չեն կարողանում հասկանալ, թե դա մեր գործն է: Կասկածների ու տա-

[1] Սենսացիա՝ բառն՝ շշմեցնող տպավորություն:

տանումների մեջ են մնում բոլորը: Երբ մենք դուրս ենք գալիս Բուլղարիայից և հեռագրով ու նամակներով հաղորդում ենք այս ու այն կողմ, նոր միայն ընդունում են իրողությունը: Երբ Թիֆլիս մտա, դեռ մեր ընկերները շատ քիչ տեղեկություն ունեին այդ մասին: Ժողովով գումարեցին, ես զեկույց կարդացի մանրամասն, շատերը ոգևորությունից հանգիստ նստել չէին կարողանում: Այդպիսի հաջողություն գործի շահերի համար անսպասելի է եղել: Առավոտյան առաջին անգամ ինձ առաջարկեցին թռուցիկ գրել և տպագրելով տարածել ժողովրդի մեջ: Թռուցիկից ամենքը նոր իմացան, թե դա «Դաշնակցության» գործն է: Այդ օրվանից «Դաշնակցության» հեղինակությունը սկսեց բարձրանալ ամենուրեք: Ես օրվա մարդն էի, կենդանի վկա այն խոշոր ցույցի, որ հայ հեղափոխական տարեգրության մեջ եզակի էր համարվում:

Քիչ անց ինձ առաջարկեցին մի պտույտ կատարել դեպի անդրկովկասյան կենտրոնական քաղաքները, զեկուցումներ տալ, մեր տեղական մարմինների տրամադրությունը բարձրացնելու համար: Ես եղա Գանձակ, Շուշի, Բաքու և Երևան: Ամեն տեղ մեծ ոգևորություն ու հետաքրքրություն էր առաջ բերել Բանկը: Ամեն տեղ ինձ անվերջ խոսեցնում էին, ոգևորվում և ավելացնում. «Այ, հիմա ժողովուրդը իր քսակը լայն բաց կանի «Դաշնակցության» համար»: Եվ իրավ, այդ օրվանից մի խոշոր բեկում կատարվեց հայկական կյանքում: «Դաշնակցությունը» դարձավ ղեկավար մի օրգան, որ տոն էր տալիս ոչ միայն հայ ժողովրդի ազատագրական շարժման, այլև հասարակական բոլոր երևույթների: «Դաշնակցությունը» դառնում էր հայ ժողովրդի և վշտի և ուրախության արտահայտիչը: Յուցական գործունեության տեսակետ պաշտպանողների հաղթանակն էր դա միաժամանակ: Պարզ էր, որ ուղղությունը պետք է

ուժեղանար: Գործիչներից շատերը, որ մինչ այդ սկեպտիկ[1] վերաբերմունք էին ցույց տալիս, այժմ խոստովանում էին, որ իրավ պետք է մեր նյութական և բարոյական ուժի գեթ կեսը ցուցական գործունեության տրամադրել:

Գետաբեկից շարունակվում էր դինամիտի ստացումը. դա պիտի փոխադրվեր ծովով: Օդեսան դառնում էր մեր փոխադրական կարևոր կենտրոններից մեկը: Հարկավոր էր այնտեղ [աշխատանքները] լավ կազմակերպել, որպեսզի որքան կարելի է շատ պայթուցիկ փոխադրվի Բուլղարիա: Այնտեղի մեր բարեկամները ապրանք թաքցնելու համար ամեն դյուրություն տալիս են, պետք է օգտվել առիթից:

[1] Հոռատեսական:

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԼԵՊՈՒՄ, ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ: ՄԱՐԱՇԻ ԲԱՆՏՈՒՄ: ԱՆՍՊԱՍԵԼԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

1896-ի վերջերքին ես մեկնում եմ Օդեսա: Այնտեղ կան աշխատող ընկերներ, որոնց մեջ աչքի է ընկնում Մարտիրոս Մարգարյան (Սաֆո), որը մի վաճառականի մոտ գործավար է: Նա բավական կապեր ունի տեղական թե՛ պաշտոնյաների և [թե՛] վաճառականների շրջանում: Սրանց ներկայացուցիչները հաճախ գնում են Բուլղարիա առևտրական գործով: Գնալիս տանում են հետները դինամիտը. այնտեղ [Բուլղարիայում] հատուկ մարդ կա, որ հանում է[1]: Սակայն դա պատահական բնույթ է կրում, պիտի ունենալ հատուկ մարդ, որ դրանով զբաղվի: Ռուսական նավերի վրա մարդիկ են ճարվում, որոնք հանձն են առնում փոխադրել: Դուրս եկող ապրանքը քննության չի ենթարկվում, ուրեմն Ռուսաստանի կողմից դժվարություն չկա: Բուլղարիայում էլ մարդ կա, որ հանգիստ կերպով ստանում է: Իսկ եթե այս ճանապարհն էլ չի օգնում, մեր ընկերներից մեկն ու մեկը մեկնում է Բուլղարիա և հետը տանում պայթուցիկ նյութը: Ծախք պետք է երթևեկելու համար: Այդ էլ հեշտ է ձեռք բերել: Այդ միջոցներին այնտեղ էր գտնվում սամսոնցի, թե կիրասոնցի մի հայ հարուստ վաճառականի որդին, մի պատանի, որին շատ լավ ճանաչում էին Օդեսայում աշխատող երկու երիտասարդ ընկերներ: Իրենք էլ նրա հայրենակիցներն էին, այդ պատանին հաճախ լինում էր այդ երիտասարդների մոտ: Նրա հայրը

[1] Այսինքն՝ կարողանում է նավից դուրս բերել դինամիտը:

հայտնի է լինում որպես խիստ ժլատ մարդ: Այդ առիթով խոսում են Մարտիրոսի հետ և նա հղանում է այդ պատանուն հենց իր կամքով գողանալու միտքը, որով հորը նամակ կգրվի և 2000 ոսկի դրամ կպահանջվի [որպես] որդու կյանքի փրկագին: Կարծեմ դա «Դաշնակցության» պատմության մեջ առաջին դեպքն է լինում: Ես էլ իմ համաձայնությունն եմ տալիս:

Թվում էր, թե շատ հեշտ է դրամ կորզել մի ժլատ մարդուց: Նամակը հիշյալ վաճառականին հասնելուն պես, իմաց է տալիս թյուրք[ական] կառավարության, նա էլ գրում է Օդեսայի թյուրք[ական] հյուպատոսին, որ և իր հերթին Օդեսայի ոստիկանությանն է դիմում: Պատանու ծանոթ մեր ընկերները հրապարակի վրա էին. ամենքը գիտեին, որ պատանին նրանց շրջանումն է լինում: Ոստիկանությունը այդ երկուսին ձերբակալում է: Խնդիրն սկսում է մեծանալ, ծայրը կարող է Մարտիրոսին հասնել, գուցե և ինձ: Ես էլ մի երկու օրով Սևաստոպոլ եմ ուղևորվել՝ այնտեղ ևս ապրանքի տեղափոխության մի կայան հիմնելու համար: Վերադառնում եմ Օդեսա: Դաշնակցական ամբողջ կազմը վտանգի տակ է: Մարտիրոսը գործ է դնում իր ծանոթությունը պաշտոնյաների հետ, և դուրս են բերում, որ հիշյալ պատանին ինքն է սարքել այդ բոլորը, որպեսզի հորից այդ ճանապարհով դրամ ստանա և իր ծանոթ հայրենակիցների հետ քեֆեր անի: Գործին այս բացատրությունը տրվելուց հետո ձերբակալվածներին բաց են թողնում և տղային հանձնում են թյուրք[ական] հյուպատոսին, որ նրան հայրենիք է ուղարկում՝ հոր մոտ: Այս ավանտյուրան[1] վերջացավ բավական անցավ կերպով, և մենք շատ ծիծաղեցինք: Ծիծաղելին այն է, որ Օդեսայից Ժնև նամակ գրվեց, թե շուտով 2000 ոսկի դրամ կստացվի խմբագրատան համար, ինչպես որ սպառնալիք դիմումի մեջ էլ դրամ ուղարկելու համար «Դրոշակի» խմբագրատան հասցեն էր տրված: Մենք շատ

[1] Արկածախնդրությունը:

էինք անփորձ, կարծելով, թե առանց արյունի հնարավոր է դրամ կորզել հայ հարուստից, թեկուզ ամենանվիրական գործի համար: Մի բան լավ էր, որ այդ ձեռնարկությունից ոչ ոք չտուժեց:

1897 թվի հունվարին Թիֆլիսում ժողով էր նշանակված: Այս անգամ ժողովին մասնակցում էին թվով շատ ավելի գործիչներ: Ամեն կողմից մարդիկ էին եկած: Ես Օդեսայից հասա ժողովի կեսերին: Բանկի գրավման ազդեցությունը խոշոր փոփոխություն էր մտցրել մարդկանց տրամադրությունների մեջ: Մի տարի առաջ ցույցերի կողմնակիցները շատ քիչ էին, հիմա արդեն մեծամասնություն էին կազմում: Նույնը նաև Կիլիկիայում ժողովրդական ընդհանուր ապստամբություն բարձրացնելու հարցում: Մեծամասնությունը գտնում է, որ այդ ուղղությամբ պիտի ընթանա մեր գործունեությունը: Վանի ուղղությամբ աշխատանքի պաշտպանների թիվը շատ պակասել է, թեև այդ ուղղությամբ գործունեությունը ևս շարունակվելու է նախկին ձևով: Նոր ուժերը բոլորն էլ արևմտյան ճակատի ուղղությամբ պիտի աշխատեն, Վանի ուղղությամբ մնում են նրանք, որոնք տեղական պայմաններին ծանոթ են:

Ժողովում քննվում է այն ծրագիրը, որ ես ու Գարոն դեռ Կիպրոսում եղած ժամանակ մշակել էինք և ուղարկել թե՛ խմբագրատուն և թե՛ Կովկաս: Կիպրոսը, ըստ այդ ծրագրի, դառնում է կայան Կիլիկիայի գործունեության համար: Այնտեղ հավաքվում են մեր մարտիկները, փորձի համար փոխադրվում է զենք, զինված խումբ է անցնում գաղտնի մակույկով Կիպրոսի հյուսիսային ափից, Ս. Մակարի վանքի կալվածքից, դեպի Կիլիկիայի ափը, որտեղ վալադների[1] առաջնորդությամբ բարձրանում է Տորոս լեռան բարձրունքները: Մի նման խումբ էլ հետագայում անցնում է ծովով դեպի ավելի հեռուն, դեպի Հայոց ծոց, Չոք-Մարզվանի ծովափը դուրս գալու, որտեղից խումբը անցնում է Հայ-լեռ (Գյավուր-Դաղ):

[1] Ուղեկցողներ:

Այդ խմբերը հարաբերության մեջ են մտնում տեղացի հայերի հետ և նոր խորհրդակցությունների միջոցով հիմնական գիծ են մշակում՝ զենք ընդունելու դրսից և տրամադրելու կռվող ուժերին: Նպատակն է՝ լավ զինել մի քանի կարևոր կետեր,– Հաճընն, Զեյթուն, Կապան, Հասան-Բեյլի, Չոք-Մարզվան և Մուսա Դաղ[1]: Կիպրոսը կայան ընդունելը զենքի համար պայմանավորվում է Հնչակյանների հետ համերաշխ գործունեությամբ: Հակառակ դեպքում զենք մթերել Կիպրոսում անհնար է համարվում: Բայց նրանցից գաղտնի փոքր պարտիայով[2] ստանալ ու անմիջապես ճանապարհել կարելի է թվում և սկզբնական շրջանում մեծ քանակով զենք հասցնել Կիպրոս ինքնին խելացի չպիտի լինի, քանի որ Կիպրոսում զենք ունենալ խստիվ արգելվում է անգլիական կառավարության կողմից: Պիտի ուրեմն փորձել: Ցուցական գործունեությունը այսուհետև ավելի պիտի ուժեղացվի, և այդ ոչ միայն Պոլսում, այլև Զմյուռնիայում, Սալոնիկում և այլ հարմար դատված ծովափնյա քաղաքներում: Ժողովից հետո գործիչները ցրվում են դեպի իրենց շրջանները: Ես պիտի մեկնեմ արևմուտք, ինչ-ինչ պատրաստություններ պետք են: Դինամիտ պիտի ստացվի Գետաբեկից, Օդեսա հասցնելու, այնտեղից Թյուրքիա ուղարկելու համար:

Փետրվար ամսի վերջերքումն է: Ես ապրում եմ Սիմոնի մոտ. մի սենյակում ենք քնում ես ու նա: Մի գիշեր, երբ ես արդեն պառկած եմ, իսկ Սիմոնը դեռ զբաղվում է, հանկարծ դուռը թխկացնում են: Սիմոնի հարցին, թե ո՞վ է. «Во имя закона...»[3] լսվում է ժանդարմների սովորական խոսքը: Սիմոնը իր մոտ վտանգավոր թղթեր չի պահում, ամեն իրիկուն թղթերը դուրս է տանում և բակում թաքցնում: Այդ կողմից ապահով է: Դուռն իսկույն բաց արեց:

[1] Մուսա լեռ կամ Մովսեսի լեռ:
[2] Խմբաքանակ:
[3] «Հանուն օրենքի»: Կախման կետերը փաստաթղթինն են:

Ժանդարմները ներս մտան և հայտարարելով, որ պիտի խուզարկեն, սկսեցին գրքերը, թղթերը քրքրել: Ես հանգիստ պառկած եմ: Թղթեր կան մոտս, ատրճանակս էլ գլխիս տակն է: Մտածեցի, որ վերջը պիտի գան նաև իմ անկողինը նայեն, վեր կացա, շապիկով մտա մյուս սենյակը, ուր Սիմոնի Սոնիկ քույրն էր, տվեցի նրան թղթերս ու ատրճանակս, նա դրեց սեղանի արկղը: Ես եկա և տեղումս պառկեցի: Ինձ վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Ոչինչ վտանգավոր չգտան և դուրս գնացին: Մյուս սենյակները չմտան:

Հաջորդ օրը, երբ ես տանը չեմ լինում, արդեն թղթերն ու ատրճանակը մոտս են, նորից գալիս են և այս անգամ ամբողջ տունն են խուզարկում, նույնիսկ պահարանների մեջ են ման գալիս, դարձյալ ոչինչ չեն գտնում, բայց խստիվ հարցուփորձ են անում իմ մասին, թե գիշերը իր [Ս. Զավարյանի] սենյակում քնած մարդն ով էր: Սիմոնը գիտեր, որ ես կասկածելի մարդ չեմ կառավարության համար, և իրավ, մինչ այդ ժամանակ ես Ռուսաստանում ոչինչ չեմ արել: Սիմոնը հայտնում է իմ անունը և ասում, որ ես մեկնել եմ Բագու: Սիմոնին բանտարկում են: Ես լուր չունեմ և Բագու գնալու էլ մտադրություն չունեմ:

Գնացել եմ Բարսեղի (Կարա-Մելիք) մոտ, որ ապրում էր հյուրանոցում և խորհրդածում ենք: Ներս է գալիս Եվգենիա Կոնստանտինովնան (Քրիստափորի կինը) և պատմում եղելությունը և ավելացնում, որ Սիմոնի տան առաջ հատուկ մարդ է կանգնած ինձ ձերբակալելու համար: Այդ գիշեր անցնում եմ Արշալույս Մխիթարյանի մոտ ու մյուս օրը ճանապարհվում եմ Գանձակ: Այնտեղ մի օրում արտասահմանյան անցագիր եմ ստանում ու ճանապարհվում դեպի Օդեսա: Հետս տանում եմ մեծ քանակությամբ դինամիտ:

Օդեսայում ինձ միանում է Նիկոլայ Մատինյանը, միասին ճանապարհվում ենք Բուլղարիա: Հետներս բերած դինամիտը տեղական ընկերները նավից ամենադյուրին կերպով հանում են: Այնտեղ

կան բավական գործիչներ: Երկու օր հետո գալիս է և Հոնանը Ժնևից: Կիլիկիայի խնդիրը զբաղեցնում է բոլորին: Արդեն կարգադրված է Հունաստանում զենք առնել, մի տասը հրացան, տասը ատրճանակ, իրենց փամփուշտներով: Խաժակն այնտեղ է: Ես պիտի շտապեմ: Ամեն գնացող իր հետ վերցնում է երկու մեծ կապոց դինամիտ, Պոլսի համար: Հասնում եմ Պոլիս, քաղաք չեմ իջնում. պիտի անցնեմ[1]: Մակույկավարը տված նշանով մոտենում է ինձ: Ես կապած ունեմ կարմիր փողկապ. դա էլ իմ նշանն է, բայց միևնույն ժամանակ գրված[2] է և իմ դիմագիծը[3], հասակը, որպեսզի ինձ նավի վի վրա շուտ գտնի: Տալիս եմ նրան կապոցները: Տանում է՝ ես նավից հետևում եմ նրան: Նա ուղղակի նավից շպրտում է կապոցները ներքև իր մակույկի մեջ և իջնելով մակույկը, սահում է դեպի մաքսատուն, բայց քիչ գնալուց հետո, ուղղությունն այնպես ճարպիկ կերպով փոխում է, որ տեսնողը կարծում է, թե նա գալիս է քաղաքի որևէ մասից մի ուրիշ մաս երթալու համար: Նա իր տեղը գիտե:

Ճանապարհս շարունակում եմ դեպի Հունաստան: Գտնում եմ Խաժակին Աթենքում: Նա այդ միջոցին տեսնվում էր Տիգրան Երկաթի[4] հետ: Սա Պոլսի արիստոկրատ կիսահայ ընտանիքից մի վառվռուն երիտասարդ է, գրող, Հայ դատի ջերմ պաշտպան, բայց հայերեն լավ չգիտե, խոսում է ֆրանսերեն, անգլիերեն, հունարեն և թյուրքերեն: Որևէ կուսակցության չի պատկանում, Հնչակյանների հետ էլ կապ ունի: Նա գտնում է, որ առանց միության հայ հեղափոխականները ոչ մի հետևանքի չեն հասնի: Բոլորը միևնույն գաղափարին են ձգտում, բայց ցրված ուժերով, իրար հակասում են, ջլատում և հաճախ իրար խանգարում: Շատ ճիշտ դիտողություն: Բայց

---

[1] Այդպես է բնագրում:

[2] Նկարագրված:

[3] Արտաքինը:

[4] **Պիլիգիկճյան Կարապետ** (Տիգրան Երկաթ, 1870–1899), գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ:

ինքը գրչի մարդ է, Անգլիայում կապեր ունի, մեծ հավատ ունի դեպի անգլիական դիպլոմատիան[1]: Թոքախտավոր է: Այնուհետև նա շատ չապրեց:

Չենք գնելու մասին Խաժակն ասաց, որ սպասում են Սարհատին, սա լավ զենք ճանաչող է: Գալուն պես պիտի առնեն ու ճանապարհեն: Հայտնի դարձավ, որ Կիպրոսում է գտնվում Ալեքսանդր Թադևոսյանը՝ Արշակի եղբայրը: Շտապեցի Եգիպտոսի գծով հասնել Կիպրոս, որպեսզի զենքն ընդունելու հարմարություններ ստեղծենք:

Կիպրոսում հավաքվել էին 7 հոգի. դրանց թվում էին Հրաչյան, Վահագնը, որոնց ճանաչում էի Պոլսից. մյուսներին չէի հանդիպել: Շուտով պարզվեց, որ մի մակույկավար են վարձել, որը պիտի ընդունի ստացվող զենքը, պահի իր մոտ, մինչև որ խումբը պատրաստվի, և իր նավակով գաղտնի ճանապարհով հասցնի Կիլիկիո ափը: Դրա համար նրան կանխավճար են տվել արդեն 15 ոսկի: Երբ տեղ հասցնի, այդքան էլ պիտի այնտեղ տրվի:

Հաջորդ օրը փողոցում ինձ ցույց են տալիս մակույկավարին, Յորկի անունով մի կիսասև հույն, որին նախորդ տարվանից շատ լավ ճանաչում եմ որպես խարդախ մի մարդ: Անմիջապես հայտնում եմ այդ մասին մեր ընկերներին, որ մեծ սխալ են արել, այդպիսի մի մարդ ճարելով: «Նա մեր զենքերը եթե հասցնի էլ, մեզ չի տա և ստացած դրամները կսեփականի և դուք ոչ մի միջոց չունեք նրա դեմ կռվելու»,– ասացի ես:

Այդ իմ հայտարարությունը դուր չեկավ Ալեքս[անդր] Թադևոսյանին, այդ համարեց իր հասցեին թշնամանք, և իմ դեմ լարեց տղաներից մեկ-երկուսին: Մյուսներն արդեն ճանաչում էին նրան, որպես ոչ նորմալ անձնավորություն, ինձ խորհուրդ տվին նրա հարձակումներին չպատասխանել, մինչ որ ապրանքը ստացվի, այնու-

[1] Դիվանագիտություն:

հետև հեշտ է նրան այստեղից հեռացնելը որպես անհաշտ մարդու: Այդ միջոցին նամակ ստացվեց, որ զենքերը ճանապարհվել են, բերողն է Նիկոլ Մատինյանը, որ ասորական[1] անցագրով ապրանքը հունական նավի է հանձնել: Նրա հետ լինելու է նաև Սարհատը: Ժամանակ չկար և ոչ հարմարություն, որ գրեին զենքերը չճանապարհել: Մի անգամ նավին հանձնելուց հետո ու՞ր կարելի է հանել ու պահել: Ոչ մի տեղ, միայն իր հասցեին կարող է գալ: Հասարակ ապրանք չէ, որ ուզած տեղդ իջեցնես, որտեղ էլ հանես պիտի բռնեն: Այդ մի քանի օրը բավական անախորժություններ կրեցի ես հիշյալ Թադևոսյանից:

Վերջապես նավը եկավ: Տղաներից երկուսը նավ գնացին հենց Յորկիի մակույկով, որպեսզի նրան ցույց տան ապրանքը: Այդպես արին. նրանք Յորկիին ցույց են տալիս երկու խոշոր արկղները, որոնք դրված են նավի տախտակամածի վրա: Նավապետը գիտեր նրանց ինչ լինելը, կաշառք էր ստացել և թույլ էր տվել դնել նավի վրա և չէր մտցրել իր նավի ապրանքների ցուցակում, և դա այն վստահությամբ, թե ապրանքը մաքսից կփախցնեն և այդպիսով այդ արարքը կմնա ծածկված:

Յորկին ասում է, որ ինքը մի անգամ կվերադառնա նավահանգիստ (նավը Լառնակայում կանգնում է ծովափից մոտ 1 վերստ հեռավորության վրա) և ապա կգնա այդ երկու արկղները բերելու: Մերոնք համաձայնում են և նորեկներին հետներն առնելով՝ նստում են Յորկիի նավակը և դուրս գալիս ափը: Սակայն կասկածն ինձ կրծում է. ես ծովափին կանգնած սպասում եմ, թե ինչով կվերջանա այդ պատմությունը: Ամեն ինչ նավից հանվեց ու փոխադրվեց ափը, իսկ Յորկին կամրջի վրա կանգնած է. ինչ-որ բանի է սպասում: Մին էլ տեսնեմ նա մոտեցավ մաքսատան վարիչին, նրան մի կողմ

[1] Հավանաբար՝ պարսկական անձնագրով, իսկ ազգությամբ ասորի:

տարավ և ինչ-որ երկար ու բարակ խոսում է հետը: Ես կռահեցի, որ նա զենքի պատմությունն է անում, զենքն է մատնում:

Յորկիին լսելուց հետո անմիջապես մաքսատան վարիչը նշան տվեց իր մակույկավարներին ծով իջնել: Մակույկը պատրաստել մի վայրկյանի բան էր: Նա կանչեց Յորկիին իր հետ, ու գնացին նավ: Քառորդ ժամ անց երկու արկղները մակույկի մեջ դրած դուրս եկան կամրջակի վրա: Ես շտապեցի տուն և դեռ երկու նոր եկած ընկերներին չտեսած՝ հայտնեցի զենքի մատնվելու ու բռնվելու դեպքը: Ընկերները իրար գլխով անցան, ոմանք շտապեցին դեպի նավահանգիստ: Բայց ի՞նչ, արդեն ուշ էր: Հիմա ոստիկանությունը փնտրում է բերողին, Նիկոլային: Նրան թաքցրինք տան հետևում: Ոստիկաններն եկան, ինձ կանչեցին, որ այսպիսի մեկը կա այսօր նավից իջած՝ մեզ մոտ պիտի լինի: Ես հայտնեցի մեր ընկերների քանակը և ավելացրի, որ նորեկ մարդ չկա մեզ մոտ: Նպատակներս է, որ Վահանին (Նիկոլին) ուղարկենք մի ուրիշ նավահանգիստ, օրինակ՝ Լիմասոլ, որ այնտեղ նավ նստի ու հեռանա կղզուց: Գիտեինք, որ բավական ծանր պատիժ կտան, եթե ձեռք ընկնի:

Այդ ծրագիրը գլուխ չեկավ: Փոքրիկ երկիր է, արթուն ոստիկանատուն [ոստիկանություն], ամեն տեղ ճանապարհներին հսկիչներ կան: Այս նկատառումներով հարմար գտանք, որ Նիկոլան անձամբ գնա մաքսատուն և հայտարարի, որ զենքն ինքն է բերել, վաճառական մարդ է, ուզեցել է փող աշխատել, հիմա իր ապրանքը ետ պիտի տանի, եթե թույլ չեն տա ծախելու: Այս մասին խորհուրդ արինք և Տիրան անունով մի հայ փաստաբանի. նա էլ գտավ, որ դա ամենից խելացի վարմունքը կլինի, մանավանդ, որ բերողը հայ չէ, այլ ասորի պարսկահպատակ: Այդպես էլ արեց Նիկոլան: Այն միջոցին, երբ բոլոր փողոցներում նրան էին փնտրում, ներկայացավ ոստիկանության և պահանջեց իր ապրանքը: Նրան իսկույն բռնեցին և բանտարկեցին: Բանտարկել էին և նավապետին, որ առանց իր

ցուցակի մեջ արձանագրելու ապրանք է ընդունում Կիպրոսի համար և այն էլ զենք: Վերջը որոշեցին, որ Նիկոլան 40 ոսկի տա իբր երաշխիք, իսկ նավապետը՝ 25 ոսկի, նշանակված օրը դատին ներկա գտնվելու համար:

Մենք դրամ չունեինք: Իմ նախկին կապերի շնորհիվ դիմեցի ժամագործ Հովսեփյանին, որն այնտեղ Հնչակյան մարմնի նախագահն էր և 40 ոսկի փոխարինաբար ստացա: Այդ փողով կարողացանք ազատել Նիկոլային բանտից: Զենքերի մատնությունը սթափության մի սպեղանի եղավ Թադևոսյանի համար, որ եկավ բոլոր ընկերների ներկայությամբ ներողություն խնդրեց ինձանից, և իր հանցանքը խոստովանեց, ասելով, որ իր բանը չէ նման գործերում խառնվելը: Նա երկու օրից հեռացավ և կարծեմ այլևս հեղափոխական գործի մեջ մասնակցություն չունեցավ:

Խումբ կազմելու և Երկիր մտնելու առաջին փորձը այդպես ձախողվեց: Կիպրոսը ամեն կողմերով կայան դառնալու հարմարությունից զուրկ էր դառնում: Որքան և բերողը ասորի է, ըստ երևույթին կառավարությունը լավ գիտե, թե ով է գործի գլուխը: Գործի դատը նշանակվեց ամառվա վերջերքը: Փաստաբան Տիրանը մեզ համոզում է, որ դատին պիտի ներկայանալ, կարելի է դատը շահել, որով թե 40 ոսկին կստանանք ու թերևս զենքերը ետ տան երկրից դուրս բերելու պայմանով:

Նիկոլան մեկնում է Եգիպտոս, այնտեղ տեղական գործերը վարելու համար: Մյուս ընկերները կամաց-կամաց հեռանում են, մնում են Հրաչյան և ես: Դատի ժամանակ Նիկոլան Եգիպտոսից հասնում է: Ամենքս անհամբեր սպասում ենք, որ դատը կշահենք: Բայց ի՜նչ, անգլիացի դատախազը, խառն բազմությունն հույների ու թյուրքերի ներկայության, խոսում է հայ հեղափոխականների գործունեության մասին, որպես մի վտանգավոր ձեռնարկության, որ վրդովում է ամբողջ Արևելքի խաղաղության: Բավական չէ, որ

ամբողջ Թյուրքիան իրենց վնասական շարժումներով, դինամիտով ցնցում են ու պատճառ դառնում այնքան կյանքերի կորստյան, այլև այժմ հանդգնում են և անգլիական հովանիի տակ խաղաղ ապրող ժողովուրդների հանգիստը վրդովել, այստեղ զենք մտցնել ու պատճառ տալ, որ մեր ու թյուրք պետությունների հարաբերությունները թշնամական դառնան: Այս ոգով խիստ հակահայկական ճառ խոսեց և պահանջեց, որ օրենքով սահմանված ամենամեծ պատիժը տրվի հանցավորներին: Դատարանը որոշեց Նիկոլային դատապարտել 9 ամիս բանտարկության կամ 75 ոսկու տուգանքի, իսկ նավապետին միայն 25 ոսկու տուգանքի:

40 ոսկին տվեցինք, դարձյալ 35 ոսկի պիտի ճարեի, որ Նիկոլային բանտից ազատեի: Զենքերը գրավվեցին ու ոչնչացվեցին: 75 ոսկին էլ տուժեցինք, որով մի դառը փորձ ձեռք բերինք, թե որքան դժվար է նման գործի մեջ վստահելի մարդ ճարելը: Ես ու Հրաչյան մնացինք Կիպրոսում: Նիկոլան օձիքն ազատելով անգլիական դատարանից, շունչը Եգիպտոս առավ: Այժմ սպասում ենք, թե ինչ դիրք բռնենք. մնանք, թե ուրիշ ուղղությամբ մեկնենք: Ես անձամբ այն համոզման եղա, որ Կիպրոսից զինված ուժերով Երկիր մտնելը անմտություն է: Այնտեղ աչքերը չռած մեզ են հետևում հնչակյաններըը, որոնք ամեն րոպե պատրաստ են խանգարելու ամեն ինչ, որ Կիլիկիային է վերաբերում: Այնտեղ մեզ լավ ճանաչում է և ոստիկանությունը, որ թեև այժմ մեզ բոլորովին հանգիստ է թողնում, բայց գործողության ամենաչնչին նշույլ նկատելուն պես կառաջարկի մեզ հեռանալ: Ձմեռն անց[կաց]րինք այդ սպասողական վիճակում:

1898 թ. գարնանը ժողով է նշանակված Թիֆլիսում: Նամակ ենք ստանում, որով ինձ ժողովի են կանչում: Հրաչյան խնդրում է՝ իրեն ուղարկել. Կովկասը չի տեսել: Խնդիրը չեմ մերժում: Նա էլ մեկնում է: Մնում եմ մենակ: Այժմ իմ միակ մտադրությունն է մեկնել Կիլիկիա: Ուզում եմ մենակ մտնել, մի քիչ ապրել, պայմաններն

ուսումնասիրել և նոր ծրագրով Կիլիկիայի գործունեության ձեռնարկել: Այս միտքը ինձ չի թողնում: Պոլսից գրում են, որ մեր ընկերներից Մկրտիչ Հատիկյանը, նա, որին առաջին անգամ Պոլսո նավահանգստում ռուսական նավում տեսել էի և որին լրտեսի տեղ էի ընդունել, մտել է Ալեքսանդրետ իբրև վրացի Արտեմ Խադիկով անձնագրով (ռուսական) և այնտեղ կովկասյան ապրանք է ծախում: Նա այնտեղ կապ է հաստատել նախկին մի հնչակյան երիտասարդի հետ, որի անունն է Տիգրան Տոնապետյան՝ Կորյուն[1] կեղծանունով: Դրանց հետ նամակագրություն սկսեցի: Շուտով համոզվեցի, որ Տիգրանը հեղափոխական լինելուց շատ հեռու մի անձնավորություն է: Իր նամակ ներից մեկում խնդրում է իր համար մի ձեռք սև հագուստ գնել և ուղարկել: Այդ առաջարկն ինձ խորապես վշտացրեց: Մի մարդ, որ մտածում է սև հագուստ ունենալու մասին ու դրանով զբաղեցնում է և ուրիշներին, նրանից լավ բան սպասել չի կարելի: Ես այլևս նրան ոչինչ չեմ գրում, թղթակցում եմ Հատիկի հետ, բայց սրան էլ նրա մասին ոչինչ չեմ գրում. անհարմար է այդպիսի չնչին խնդիրներով զբաղվել կամ զբաղեցնել ուրիշին:

Հատիկի այնտեղ լինելը մի հույս է, գոնե ներս մտնելիս մի մարդ կլինի, որի հետ կարելի կլինի խորհրդածել, նրան միջնորդ դարձնել նամակներ առնել տալու համար, երբ դեպի ներս անցնելու լինեմ: Չէ՞ որ Թուրքիայում՝ նավահանգիստներում եվրոպական փոստեր կային, ըստ կապիտուլյացիաների, այնպես որ նավահանգստում ապրող ամեն մարդ ազատ է իր նամակները ուղարկել և ստանալ եվրոպական բոլոր փոստերի միջոցով և թուրք ոստիկանությունն այնտեղից ամենավտանգավոր նամակն իսկ ձեռք ձգել չի կարող:

[1] Տիգրան Տոնապետյանը (Կորյուն) դեռևս Աղասու կողմից նշանակվել էր Կիլիկիո բոլոր մասնաճյուղերի միջև կապի պատասխանատու, ապահովելով նաև կապն արտաքին աշխարհի հետ:

Կիլիկիա մտնելու համար նախ և առաջ հարկավոր է Կիպրոսից հեռանալ, որպեսզի ինձ հետևողների աչքից իսպառ կտրվեմ: Այնուհետև հնարավոր է, որևէ օտար անձնագրով մտնել իբրև ոչ-հայ: Աչքի առաջ ունեմ այն անձնագիրը, որ Պոլսում ստացա բուլղար գործակալությունից, իբրև բուլղար Դիմիտրի Մարինով-Պոպով: Այդ անձնագիրը պահել եմ հենց այդպիսի մի քայլի համար: Ճիշտ է, վտանգի դեպքում բուլղար կառավարությունը ինձ չի կարող պաշտպանել իբրև անկախ պետություն, քանի որ ինքը վասալական կախում [ունի] թյուրք[ական] պետությունից, բայց գլխավորն այն է, որ այդ անձնագիրն ինձ հնարավորություն կտա մտնել Թուրքիա: Մնում է, որ գտնեմ մի զբաղում: Առանց զբաղումի մտնել չի կարելի: Այս մտածությամբ 1898-ի օգոստոսի վերջերքը ճանապարհվեցի Եգիպտոս:

Ստեփանավանում սկսածս հիշողություններն ընդհատվեցին օգոստոսի կեսին՝ հիվանդությանս պատճառով: Այնուհետև դպրոցական գործերով զբաղված լինելուս պատճառով ամբողջ տարվա ընթացքում չկարողացա ոչինչ գրել: Այժմ 1927 թվի արձակուրդներից օգտվելով, Ծաղկաձորում, հուլիսի 12-ին վեր եմ սկսում ընդհատված աշխատանքը[1]**:**

Ալեքսանդրիայում մնացի մի 10 օր, ոչ ավել: Շուտով գտա իմ զբաղումը, որով համարձակ կարող էի մտնել Թյուրքիա, իհարկե, ոչ իբրև հայ: Փողոցով անցնելիս տեսա, թե ինչպես մի հույն ֆոնոգրաֆը սարքել[2] է փողոցում և կաուչուկի բարակ խողովակների միջոցով լսել է տալիս հաճախորդներին նվագ, երգ, զրույց: Դրանով էլ իր գլուխն է պահում: Ահա մի արհեստ, որ ամեն մարդ կարող է գործ դնել. բավական է, որ մի քանի անգամ գործադրի: Այս գործի-

[1] Մաք-ի ձեռագրում ընդգծում բացակայում է:
[2] Տեղադրել:

քը կպարտակի իմ ներքին նպատակը: Իսկույն Մատինյանին հայտնեցի իմ մտադրությունս: Նա անմիջապես համաձայնեց հետս, որ հիանալի միջոց է թե իմ ինքնուրույնությունս[1] թաքցնելու և և թե ապրուստս հոգալու համար: Այս վերջին կետը շատ էր ինձ ոգևորում այն տեսակետով, որ եթե անհաջողության մատնվի գործը, գոնե կազմակերպության վրա տնտեսապես չի ծանրանա:

Ես ուզում էի անձամբ լինել Կիլիկիայում և ուսումնասիրել տեղական պայմանները, ծանոթանալ տեղական կարևոր ույժերի հետ և իմ հասկացողությամբ մի նոր գործի հիմք դնել, չէ՞ որ մեր կազմակերպությունը դեռ այդ երկրում ոչ մի քայլ չէ արել: Ալեքսանդրետում մի երկրորդական ուժ է տեղավորվել, այնտեղից դենը ոչ մի հաղորդակցություն չունի: Հատիկն է դա, որ մեզ պետք է միայն որպես կապ երկրի ներսի և դրսի աշխարհի միջև: Նա գտել է Տիգրան Տոնապետյանին, որի մասին ես անձամբ դրական կարծիք չունեմ: Մտածում եմ այնպես անել, որ իմ մուտքը Երկիր ոչ ոք չիմանա Եգիպտոսի ընկերներից, բացի Մատինյանից ու Հրաչից: Իսկ ներսում միայն Հատիկը պիտի իմանա, որ կարողանամ նրա միջոցով հաղորդակցվել դրսի ընկերների հետ:

Մատինյանի հետ առանք մի ֆոնոգրաֆ, որ արժեր 17 անգլիական ոսկի: Նա ուներ մի մեծ խողովակ, որ փողոցներում գործածելու համար չէր: Սարքել տվինք և ականջներին դնելու կաուչուկի խողովակներ: Մի քանի անգամ գործ դնելուն պես հայտնի դարձավ, որ ես փորձված «ֆոնոգրաֆչի» եմ: Գործիքս հարմար է թե՛ սենյակում բազմության լսեցնելու համար, թե՛ փողոցում մի քանի հոգու, մինչև 8 հոգու բավարարելու համար: Վերջին դեպքում կողմնակի մարդիկ ոչինչ չեն լսում, լսում են նրանք, որոնք խողովակի ծայրերը դրած են ականջներին: Մեքենան ունենալուց հետո պետք է

[1] Անձի ինքնություն:

ծպտվել: Երկրում մարդիկ կան, որոնք ինձ տեսել են Կիպրոսում, Եգիպտոսում և այլն. պետք է այնպես փոխվել, որ ամենամոտ մարդն անգամ ինձ չճանաչի: Հագնվեցի շատ հասարակ ձևով, երկար մազերս կտրել տվի, միրուքս ածիլել տվի և այնպես փոխվեցի, որ իրավ ինձ ճանաչել անկարելի էր: Փորձի համար Մատինյանը կանչեց Հրաչին, ասելով, որ նոր ընկեր է եկել: Հրաչը երկար խոսելուց հետո, Մատինյանի ծիծաղի վրա, միայն հասկացավ, թե բանն ինչումն է: Նրան իրազեկ դարձրինք իմ ձեռնարկելիք գործին: Նա ևս գտավ, որ գործիքը հիանալի միջոց է Թուրքիա մտնելու համար, ուր նման մի գործիք դեռ մտած չէ: Առանց ժամանակ կորցնելու, սեպտեմբերի 10-ին (1898 թ.) Կահիրեից երկաթուղով ճանապարհվեցի Իզմայիլի վրայով Պորտ Սաիդ և այնտեղ նավ նստեցի: Ալեքսանդրետը Թյուրքիո համար վտանգված տեղ է համարվում, այնտեղ հսկողությունը հայ հեղափոխականների նկատմամբ խիստ աչալուրջ է: Այդ իսկ պատճառով որոշեցի դուրս գալ առաջին նl]վl[հան]գ[իստ] ոչ թե Ալեքսանդրետ, այլ Հայկական գծից դուրս՝ մի ուրիշ նավահանգիստ, Լիբանանի Լաթաքիա[1] քաղաքը: Մաքսատանը շատ հետաքրքրվեցին իմ գործիքով, նվագել տվին եվրոպական երգեր, մյուզիկ, պաշտոնյաները հռհռացին, մեջքիս քաջալերական իմաստով ձեռքի հարվածներ հասցրին և թողեցին անցնել: 15 օր մնացի այնտեղ. շրջեցի քաղաքը: Արաբախոս բնակչություն, մարոնիտ[2] և հույն կաթոլիկ: Եղա սրճարաններում, գործիքս հրապարակ հանեցի, ամեն մարդ վազեց տեսնելու և լսելու այդ շեյթանի[3] մեքենան:

---

[1] Լաթաքիան այժմ գտնվում է Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքում:

[2] Արևելյան կաթոլիկ եկեղեցի, որն ունի պատրիարքության կարգավիճակ: Հավատացյալների մեծ մասը գտնվում է Լիբանանում:

[3] Սատանայի:

Մի պակասություն, որ գտան իմ գործիքի մեջ, այդ արաբերեն երգերի պակասն էր: Իսկույն գտա լավ արաբերեն երգիչների և ձայները վերցրի իմ գործիքի գլանների վրա՝ այն ժամանակ ֆոնոգրաֆներն այդ ձևի էին: Երբ իրենց աչքի առաջ իրենց սիրելի երգիչների ձայնը առնվեցավ և ապա նույնությամբ երգվեցավ գործիքով, ամբոխի ոգևորությունը չափը կորցրեց: Ամեն կողմից խնդրում էին, որ իրենց էլ այցելեմ, իրենց էլ ցույց տամ այդ հրաշալիքը: Առատությամբ ինձ վարձատրում էին և որ գլխավորն է՝ պաշտոնյաներ, ոստիկաններ տեսնում էին իմ վարպետ լինելը: Այդ կետը իմ գործի հաջողության մի գրավականն էր:

Տասնհինգ օրից հետո ես պիտի նավ նստեմ և դուրս գամ Ալեքսանդրետ: Հատիկին ոչինչ չեմ գրել իմ գնալու մասին այն մտադրությամբ, որ նախ նամակս որևէ կերպ ոստիկանների ձեռքը չանցնի և ապա, որ գլխավորն է, որ Հատիկը Տիգրանին իմ գալու մասին ոչինչ չասի: Ես նա խապաշարված էի Տիգրանի նկատմամբ. նրա իմանալը գործի անհաջողությունն էի համարում: Մտածում էի՝ կմտնեմ Ալեքսանդրետ, կգտնեմ Հատիկին, անձամբ կխոսեմ և կզգուշացնեմ, որ ոչ ոքի չասի, մինչև որ ես անձամբ չորոշեմ, թե ում [հետ] պետք է տեսնվեմ: Հատիկը, այդպիսով իմ գնալու մասին գաղափար անգամ չուներ: Ճանապարհվեցի, սեպտեմբերի վերջերքն էր: Ալեքսանդրետում մաքսատան պաշտոնեությունը, ոստիկանները որևէ կասկած չտարան[1], միայն զգուշացրին, որ բերածս գործիքը տելեֆոն[2] չլինի: Ինչպես երևում է, այն ժամանակ Թյուրքիայում տելեֆոնը վտանգավոր մի գործիք էր: Որպեսզի ապացուցեմ, որ բերածս տելեֆոնի գործիք չէ, մաքսատան մեջ սարքեցի և մի խողովակով երգել տվի Լաթաքիայում վերցրածս արաբական

[1] Չկասկածեցին, կասկած չունեցան:
[2] Հեռախոս:

երգերը: «Մաշալլա՛. մաշալլա՛[1]»,– բոլորը միաբերան բոռացին: «Անվնաս բան է, թույլ տվեք անցնի»,– ձայնեց մաքսապետը: Բոլորը ծիծաղեցին, սրախոսություններ արին ու ինձ բաց թողին ներս: Եվ ահա, ես, տարիներ երազածս ավետյաց երկրում՝ Կիլիկիայի առաջին նավահանգստում լեգալ[2] անձնավորություն եմ, որոշ զբաղումի տեր, ճանաչված ոստիկանության և ամենքի կողմից որպես բուլղարահպատակ Դիմիտրի Մարինով-Պոպով անունով մի ֆոնոգրաֆչի: Արդեն ամբողջ Թյուրքիան իմ առաջն է, ուր ուզեմ, կարող եմ գնալ: Դրամի կողմից բոլորովին ապահով եմ: Իմ աշխատանքով կարող եմ և՛ ապրել, և՛ աշխատել: Իջա մի հյուրանոցում, որի տերը հայ էր և հյուրանոցի անունն էլ թյուրքերենի կողքին հայերեն գեղեցիկ գրված: Առաջին գործս եղավ հետաքրքրվել, թե այդ քաղաքում ռուսերեն խոսող ո՞վ կա: Գիտեմ, որ Հատիկյանը ապրում է այնտեղ որպես վրացի, ունի պասպորտ ռուսական Хадиков ազգանունով: Նա երկար ապրել է Բաթումում և սովորել է ռուսերեն ու կարողացել է ռուսական անձնագիր ստանալ: Ծախում է վրացական-կովկասյան իրեր՝ յափնջի, բաշլուղ[3] և այլն: Իմ հարցին հյուրանոցում պատասխանեցին, որ այնտեղ կա մի վրացի, որ յամչի[4] է ծախում: Իմ նպատակս էր անմիջապես տեսնել Հատիկին, իսկ այդ «վրացին» հենց նա էր:

Ես լավ թյուրքերեն չգիտեմ, գիտցածս կովկասյան բարբառն է, այդ ինձ ձեռնտու չէ, կասկածի տեղիք կտա: Այդ մի պատրվակ է, որ ես գտնեմ Հատիկին, որպեսզի ինձ թարգմանի դեր կատարի իբր թե: Հյուրանոցի տղան իմ առաջ ընկավ դեպի Հատիկի խանութը: Յափնջիներ են կախված խանութի դռնից՝ կովկասյան մի խանութ: Այդ ձևը մի միջոց է իր ներկայությունը պարտկելու համար,

---

[1] Կեցցե՛ս:
[2] Օրինական, օրենքով ճանաչված:
[3] Գլխաոոց:
[4] Կտորի տեսակ:

մյուս կողմից էլ առևտուր է անում ու դրանով իր գլուխը պահում: Հատիկը խանութում չէ, ասին, որ նա հավանորեն գինետանը լինի: Նա սիրում է մաստիքա (օղի) կոնծել: Գնացինք դեպի գինետուն: Ներս մտանք, տեսնեմ Հատիկը երեք օտարականների հետ նստած լավ տրամադրության մեջ: Իմ առաջնորդն ասաց, որ ես բուլղար եմ, խոսում եմ ռուսերեն, փնտրում եմ ռուսերեն իմացող մեկը: Ես լուռ եմ, ոչինչ չեմ ասում, կասկածելով, թե կարող է մեկն ու մեկը նստողներից ռուսերեն հասկանա: Տեսա, որ Հատիկն ինձ չճանաչեց, ուշադրություն չդարձրեց վրաս և թյուրքերեն մյուսներին ասաց իմ մասին. «Սա բուլղար է, խոսում է բուլղարերեն, մինչ ես (ինքը) խոսում եմ ռուսերեն, իրար չենք հասկանա, ինչիս է պետք [նրա հետ խոսել]»:

Ես խիստ էի փոխված, դեմքով չէր կարող ճանաչել: Ստիպված եղա խոսել, որ ձայնիցս հասկանա: Բացատրեցի, որ ֆոնոգրաֆ գործիք եմ բերել, ուզում եմ տեղում շահավետ կերպով օգտագործել, բայց թյուրքերեն չգիտեմ և խնդրեցի ինձ օգնել՝ իր որոշ դեպքերում ինձ թարգման հանդիսանալով: Քիչ քիչ գլխի ընկավ, որ ես եմ և այդ պատճառով իսկ դժգոհության արտահայտություն ընդունեց ու թյուրքերեն մյուսներին ասաց. «Բան չեմ հասկանում, բուլղարերեն է խոսում», և շարունակեց իր զրույցը: Ես ենթադրեցի, որ զգուշություն է գործ դնում, անհարմար է գտնում որևէ կերպ ինձ հետ զրույցի մտնել, թերևս ինձ կասկածի տակ չդնելու համար. չէ՞ որ ինքն արդեն կասկածված կարող է լինել և հսկողության տակ: Դուրս եկա այն մտքով, որ ինքը կգա մոտս՝ հյուրանոց նույն հենց նոր մեքենան տեսնելու համար: Ամեն մարդ կարող է գալ, լսել, վճարել ու գնալ: Հիմա ես արդեն անհամբեր եմ, որ նրան տեսնեմ ու միայն մի խոսք ասեմ, թե Տիգրանին չասես իմ գալու մասին: Եթե գինետանը մեկնումեկը քիչ-միչ ռուսերեն գիտեր, դրա համար չխոսեց, կգա հյուրանոց ու մի բառ կփոխանակի հետս: Ինձ այդ

շատ բնական է թվում, բայց Հատիկը հուզված է և չի կարողանում որոշել իր անելիքը:

Անցա փողոցով, ենթադրելով, թե կգա, կանցնի մոտովս, մի խոսք կասի, իր բռնած դիրքը կարդարացնի: Երկար գնալուց հետո նույն փողոցով վերադարձա՝ ինձ առաջնորդող հայ տղան հետս է: Տեսա Հատիկը գալիս է իմ կողմը. սպասում եմ, որ ինձ մի բառ կասի: Անցավ առանց ուշադրություն դարձնելու վրաս: Ենթադրեցի, որ իրեն հետևող կա, զգուշացավ: Այդ շատ հասկանալի էր ինձ: Որոշեցի վերադառնալ հյուրանոց և սպասել: Մեքենաս լարեցի, տեղական սովորության համաձայն մեկը մյուսին հաղորդելով տարածեցին, թե այսպիսի մի մեքենա է եկել, հաճախորդներ սկսեցին գալ և մեքենաս լսել: Կես ժամ անց լուսամուտից նայեմ՝ ի՞նչ: Շատ մոտ մի հյուրանոցում, որի ճակատին նույնպես հայերեն ցուցանակ կար, մի սենյակի լուսամուտում կանգնած է Հատիկը, նայում է ինձ և ժպտում: Նրա մոտ է մի կարճահասակ տղա, նույնպես ժպտում է և ինձ նայում:

Ինձ պարզվեց ամեն ինչ: Հատիկը հաղորդել է իմ գալը և իմ գաղտնիքը ու այդ հաջողությամբ տարված՝ ուրախանում են երկուսը միասին: Վրդովմունքիս չափը չեմ կարող նկարագրել. իմ գործ դրած բոլոր միջոցները, որ Տիգրանը իմ գալու մասին ոչինչ չիմանա, բոլորովին զուր անցան: Այդ րոպեից ես նախազգացի, որ գործի այդքան հաջող սկիզբը մի ձախող վերջավորություն պիտի ունենա: Մի կերպ լուսամուտից հասկացրի, որ գա մոտս: Վերջապես եկավ: Զսպված ձայնով, բայց ամենալուրջ հանդիմանություն արի այդ քայլի համար և մեղադրեցի, որ ինքը իրավունք չուներ առանց իմ կարծիքս առնելու որևէ մեկին հայտնել իմ մասին: Շատ այլայլվեց, արդարանալ ուզեց, բայց ի՞նչ օգուտ: Սխալը կատարված էր: Պետք էր այնպես անել, որ հետագայում մի սխալը ուրիշ սխալների պատճառ չդառնար: Իսկ այդ կախված էր միայն Հատիկի տակտից

և հեղափոխական հոտառությունից, թեև այդ մի սխալ քայլով նա ապացուցեց, որ զուրկ է այդ կարևոր հատկություններից: Բայց և այնպես հարկավոր էր լրջորեն խոսել հետը և բացատրել իր բոլոր անելիքները այսուհետև ու հատկապես Տիգրանի նկատմամբ իր վարելիք քաղաքականությունը: Մոտ մի տարի նստած է եղել Ալեքսանդրետում և մինչև այժմ միայն Տիգրանին է գտել, որ նախկին հնչակյան է, և որն իրենից ոչինչ չի ներկայացնում: Քաղաքում կան կարևոր մարդիկ, որոնց պիտի առաջ քաշել: Իմ գործն այդտեղ այդ պիտի լինի. շատ կարճ միջոցում երկու կարևոր անձնավորություններ գտնել, մի փոքրիկ կորիզ ստեղծել և անմիջապես հեռանալ դեպի ներս: Հատիկին ասացի, որ գնա, և ես ինքս կգամ իրեն մոտ, իր սենյակում խոսելու հանգամանորեն:

Հաջորդ օրը դուրս եկա շրջելու ու ման գալով հասա խանութ: Առաջարկեցի անմիջապես տուն գնալ, որ ես իրեն հետևեմ: Հասանք իր սենյակը: Այդտեղ երկարորեն խոսեցի իր անիմաստ վերաբերմունքի մասին, որ առաջին վայրկյանից ցուցահանեց: Բավական է, որ կասկածված չէ, ի՛նչ կա վախենալու, եթե մի ֆոնոգրաֆչու հետ խոսում ես: Շատ էլ բնական է, որ մի օտար տեղում, երկու նույն լեզու խոսող մարդիկ անմիջապես գտնեն իրար ու միասին խոսեն, ծիծաղեն, եթե պետք է նույնիսկ մտնեն գինետուն ու այդպիսով եղած կասկածները փարատեն: Իսկ Տիգրանի միջադեպն այնքան անսպասելի անտակտ[1] մի քայլ էր, որ ինքն էլ խոստովանեց, թե սխալվել է, որ կաշխատի իմ խորհրդով շարժվել բոլոր խնդիրներում: Հատիկը պիտի ստանա նամակներ դրսից և ինձ հասցնի մարդու միջոցով: Նմանապես իմ նամակները պիտի ստանա և փոստ ձգե, նամակները պիտի կարդա և Տիգրանին հաղորդի անկարևոր տեղեկությունները, ջանալով այնպես տանել գործը, որ նա չկասկածի, թե իրենից բաներ են թաքցվում: Նրան իր ձեռքերի

[1] Անվայել, սխալ:

մեջ պիտի պահի, վարվի հետը ընկերավարի և չխրտնեցնե, ապա թե ոչ, ավելացրի ես, նրանից լավ բան չեմ սպասում: Գալով տեղական գործունեության, ասացի. «Այսօր ևեթ կգնաս, կներկայանաս բժիշկ Նիկողոսին, որ ֆրանսիական հյուպատոսի թարգմանն է ու կհայտնես, որ դու հայ ես, եկած ես այսինչ գործով, կավելացնես, որ նոր եկած է մի ընկեր, այսինչ ֆոնոգրաֆչին, որ ուզում է Ձեզ տեսնել անպատճառ: Տեսնվելու պայմաններն ու հարմարությունները թող ինքը որոշի: Կասես նաև, որ այդ ֆոնոգրաֆչին ուզում է տեսնել նաև Քերոբ Քեշիշյան վաճառականին: Ահա այս երկուսը պիտի ճանաչեն քեզ ու քո միջոցով տեղական գործերը վարեն: Նրանք միայն քեզ կճանաչեն. Տիգրանի մասին ոչինչ չպետք է իմանան: Իրենք մարդկանց կդիմեն, մարմին կստեղծեն, այդ իրենց գործն է, ոչ ոքով չես հետաքրքրվի և ոչ ոք չպիտի իմանա քո ինչ լինելու մասին: Այդ երկուսը բավական են այս փոքրիկ քաղաքի գործերը վարելու համար»:

Այդ միջոցին դուռը զարկեցին: Տիգրանն էր: Տիգրանը շատ բան գիտե: Հատիկը նրան ամեն ինչ ասել է իբրև ընկեր: Նա գիտի կուսակցության հեռավոր նպատակները Կիլիկիայի նկատմամբ: Հիմա էլ գիտի իմ գալը և իմ անելիքները դարձյալ Հատիկի շնորհիվ:

– Կանչի ներս,– ասի, թող գա, հետը խոսեմ, գուցե այդպես ավելի լավ լինի: Մտնելուն պես հայտնեց, որ երկար ժամանակ ինձ ու Հատիկին հրապարակի վրա չտեսնելով՝ կասկածի գնաց, թե որևէ դեպք չի պատահել, շտապեց Հատիկի տուն՝ ստուգելու: Մի կարճահասակ, խղճուկ արտաքինով, հիվանդագին դեմքով, 20–22 տարեկան տղամարդ է: Խոսում է մաքուր հայերեն:

Ես նրան հայտնեցի, որ իմ գալը և Թյուրքիայում շրջելը կապված է բազմաթիվ դժվարությունների հետ: Իմ արհեստը, իմ արտաքինը և իմ լեգալ շրջելն ինձ հնարավորություն կտան մոտիկից

տեսնել, դիտել և մեր ժողովրդի պայմանները կշռելուց[1] հետո միայն ձեռնարկել լուրջ գործի: Ոչ ոք չգիտե իմ մասին, բացի ձեր երկուսից, եթե որևէ կերպ կասկած առաջ գա իմ դեմ, այդ կլինի ձեր երկուսի անգաղտնապահ լինելուց: Մի փոքրիկ ակնարկը իմ հասցեին կարող է վտանգել ամբողջ գործը: Մեկը պետք է այստեղ կապ պահպանելու համար: Այդ գործը պիտի կա տարի Հատիկը. ևս մի մարդու ավել գիտնալը ինքնին սխալ մի քայլ է գործի հաջողության տեսակետից: Բայց այդ սխալը եղած է: Դու, Տիգրան, քեզ վրա մեծ պատասխանատվություն է ընկնում՝ մնալ լուռ, և ինչ որ տեսար ու լսեցիր, այս սենյակից դուրս չպիտի գա: Այս խոսքի վրա Տիգրանը բավական վիրավորվեց և աշխատեց ցույց տալ, որ ինքը հեղափոխական անցյալ ունի, շատ լավ գիտե հեղափոխական կոնսպիրացիայի արժեքը:

– Ես այդ չասի ձեզ [քեզ] վիրավորելու համար, այլ պարզապես զգալ տալու հ[ա]մ[ար], որ հեղափոխական գործում, եթե հնար է խնդիրները կարգադրել երկու մարդու միջև, երրորդի մասնակցությունը, ով և լինի նա, ոչ միայն ավելորդ է, այլև հանցավոր:

Երկար խոսելուց հետո հայտնեցի, որ Ալեքսանդրետում ամենից քիչ պիտի մնամ և վերջը Տիգրանին առաջարկեցի, որ գնա և ցտեսություն ասելիս նորից հիշեցրի, որ գաղտնապահության արժեքը չմոռանա և վերջը իրեն չամաչեցնի: Նա գնաց: Հատիկին [հետ] երկար խոսեցի մեր անելիքների մասին ու բանավիճեցինք: Բժիշկ Նիկողոսին նա պիտի անմիջապես տեսներ ու իմ թելադրածի պես հետը խոսեր:

Հաջորդ օրը եկավ ու ոգևորված պատմեց, թե բժիշկը որքան ուրախացավ, որ նման արհեստներով [արհեստով] ենք Երկիր մտել ու լեգալ շրջում ենք, և ապա խնդրեց, որ հենց նույն իրիկուն ֆոնոգ-

[1] Ուսումնասիրելուց հետո:

րաֆս վերցրած մտնեմ իր մոտ, ուր լինելու է նաև Քերովբե Քեշիշյանը:

Նշանակված ժամին ֆոնոգրաֆս ձեռքիս մտա բժշկի մոտ: Այնտեղ էր նաև Քերովբե Քեշիշյանը: Բայց բժիշկը մի հեռատեսություն ևս գործ էր դրել. հարևաններից ու ծանոթներից կանչել էր մի քանի անձնավորություններ, որոնք եկած են պարզապես երեկո անցկացնելու, օղի խմելու և ուրախանալու հ[ամա]ր: Ներս մտնելիս լսեցի բժշկի ձայնը: Նա հարբածի նման բոռում, կանչում էր: Երբ մտա,– ահա ձեզ ֆոնոգրաֆ,– կանչեց նա, ինձ օղի առաջարկեց ու խնդրեց մեքենայիս հունարը ցույց տամ իրենց:

Երկու ժամ նվագել տվին: Բժիշկը բոլոր կտորների հետ հավասարապես երգում էր ու ոգևորվում: Ամենքը գիտեին, որ բժշկի մոտ նոր եկած խոսող ու երգող մեքենա է հրավիրված: Քեֆը տաքացավ, բոլորը լավ կոնծեցին, բացի բժշկից ու Քեշիշյանից: Ուշ էր արդեն, երբ հյուրերը ցրվեցին: Մնացինք ես, բժիշկը և Քեշիշյանը: Նրանք մեծ ուրախություն հայտնեցին, որ այժմ արդեն հեղափոխական գործը լուրջ շրջան է մտնում, որ եկողներն իրենց պահել գիտեն, որոշ զբաղմունք ունեն, որոնց հետ կարելի է ազատորեն խոսել ու քննադատել: Ես բացատրեցի մեր անելիքը ընդհանուր գծերով ու շեշտեցի հատկապես այն կարևոր մոմենտը, որ առանց լրջորեն պատրաստվելու ոչ ոքի ըմբոստանալու կոչ չպիտի արվի: Ես բնորոշեցի իրենց անելիքը. իբրև ազդեցիկ մարդիկ, իրենց քաղաքում բոլոր քիչ թե շատ հեղափոխական տարրերը իրենց շուրջ հավաքեն, հեղափոխական գործը դարձնեն ոչ թե դրսից եկողի գործ, այլ տեղացու գործ, և որևէ շարժում պիտի բղխի տեղական պայմաններից ու քաղաքական այն սիտուացիայից[1], որպիսիք հարհարմար կդատվեն տեղական շահերի համար: Շարժումը պիտի լինի անպայման ընդհանուր Կիլիկիան և ոչ թե մի կետում մի Զեյթու-

[1] Իրավիճակից:

նում, մի Սուետիայում: Դրսից օգնություն կլինի միայն դրամով և զենքով, եթե իրենք կարողանան ներս ընդունելու գործը կազմակերպել: Գործը վարողները պիտի լինեն տեղացիք, որպեսզի գործի ընթացքի պատասխանատուներն իրենք հանդիսանան: Իմ գործն այն կլինի, որ շրջեմ բոլոր կարևոր վայրերում ու զոհողության պատրաստ մարդիկ իրար բերեմ ու տեղական գործը կապել տամ մյուս վայրերի հետ: Այդ երկու-երեք մարդը միայն ինձ պիտի գիտենան և ուրիշ ոչ ոք: Նրանք իրենց ուժերով պիտի առաջ բերեն տեղական կազմակերպություններ:

Երկուսն էլ շատ բարեհաճ վերաբերմունք ցույց տվին կազմակերպչական այս ձևին ու խոստացան ամեն ջանք գործ դնել տեղական գործը լավ հիմքերի վրա դնելու: Դրսի հետ կապը ամբողջովին իրենց վրա էր մնում: Ֆրանսիական պոստն[1] ամենալավ միջոցն էր դրսի հետ հարաբերելու համար: Բժիշկը, իբրև կոնսուլի[2] թարգման, ազատ կերպով կարող էր և՛ նամակներ, և՛ ծրարներ (կապոցներ) ստանար և ուղարկեր Ալեքսանդրիա՝ տրված հասցեին:

Երկար ժամանակ վարած լինելով Կիլիկիայի հետ հաղորդակցություն և լայն շփում ունեցած լինելով տեղական բազմաթիվ գործիչների հետ, ես արդեն նկատի ունեի այն անձնավորությունները, որոնց հետ պիտի տեսնվեի, և որպեսզի հենց առաջին քայլում թյուրիմացությունների տեղիք չտրվի, ես հարկ համարեցի երկուսի կարծիքները լսել ներսի քաղաքներում գտնվող հեղափոխական գործիչների մասին: Դրանով ես ուզում էի որոշել այն անձնավորությունները, որոնց նկատմամբ և՛ ես լավ կարծիք ունենայի, և՛ իրենք:

Նրանք մատնանշեցին, և ես տեսա, որ իմ գիտցած անձնավորությունները համարյա բոլորն էլ իրենց վստահելի մարդիկ են: Եթե մեկ-երկու մարդու մասին նրանք քիչ թերհավատ գտնվեցին,

[1] Փոստը:
[2] Հյուպատոսի:

նրանց իմ ցուցակից դուրս հանեցի: Վերջը, երբ բաժանվելու էի, Քեշիշյանն ինձ խնդրեց, որ ես որևէ կապ չունենամ Տիգրան Տոնապետյանի հետ: Երկուսն էլ հայտնեցին, որ նա իրենց վստահություն չի ներշնչում, որ նա կապված է եղել Հնչակյանների հետ և իրենց քաղաքում լավ անուն չունի: Ես ստիպված էի ծածկել այն հանգամանքը, որ նա արդեն գիտե իմ մասին շնորհիվ Հատիկի անտակտության և հայտնեցի, որ վստահ լինեն, որ Տիգրանի հետ ոչ մի կապ չենք ունենալու: Քեշիշյանն իր հայտարարությունն արեց շատ կտրուկ ձևով, ասելով, որ եթե նա (Տիգրանը) գործի մեջ լինի, ինքն անմիջապես գործից կքաշվի: Այդ հանգամանքն ինքնին ավելի քան ինձ համոզեց, որ Տիգրանը պիտի գործից չեզոքանա, որ այդ երկու կարևոր մարդիկ չպետք է հուսախաբ լինեն գեթ այդ կետում: Նրանք Հատիկի հետ չպիտի տեսնեն Տիգրանին: Ես այդ իմաստով երկար խոսեցի Հատիկին [հետ], որ իր կապը Տիգրանի հետ պիտի մնա բոլորովին ձևական հողի վրա, որ նա Տիգրանը տեղական կազմակերպության մասին ոչինչ չպիտի իմանա, թե չէ մեր գործը հենց առաջին քայլում կվիժի: Ինձ հայտնի էր Հնչակյան Կենտրոնի վերաբերմունքը դեպի Դաշնակցական գործունեությանը հատկապես Կիլիկիայի նկատմամբ: Նրանք եթե իմանան մեր Երկիր մտնելը, ամեն գնով պիտի խանգարեն, իսկ Տիգրանին բացարձակապես չեզոքացնել գործից, մեր մասին Հնչակյան Կենտրոնին իմաց տալ էր նշանակում: Ուստի միակ միջոցն էր, որ Հատիկը կապը չկտրի նրա հետ, նրան իր ձեռքերի մեջ պահի, երբեմն անկարևոր տեղեկություններ հաղորդի, բայց այնպես, որ Տիգրանը համոզված մնա, թե իրեն ամեն բանի [մասին] իրազեկ են պահում: Այս խնդիրը թողնվում էր Հատիկի տակտին և հեռատեսության:

Ալեքսանդրետում գործերն այս վիճակում թողնելով, միայն 4 օր այնտեղ մնալուց հետո, ճանապարհվեցի Հալեպ: Կիլիկիայի

դռնից արդեն ներս եմ մտել և գնում եմ ...[1] Կիլիկիա: Այս անունը իմ պատանեկության հասակից իսկ ոգևորության մեծ աղբյուր է եղել: Ես միշտ երազել եմ, որ հայ ժողովրդի մնայուն հայրենիքը այդ ծովափնյա բարեբեր երկիրն է լինելու: Մեր պատմության ամբողջ տևողությունը բախտ չի բերել հայ ժողովրդին: Ապավինած բարձրադիրք Հայաստանին, նա մի կերպ փրկել է իր գոյությունը, բայց ի՞նչ գնով՝ կուլտուրան[2] բացասելով միայն: Միայն քարերով հարուստ, զուրկ ծովեզրին մոտենալու հնարավորությունից, նա դարձել է արշավող ազգերի ոտքի կոխան և հայ ժողվուրդը կորցրած մարդավայել ապրելու բոլոր միջոցներից, թառել է ժայռերի ծերպերին ու գետնափոր խրճիթներում իր ստրկական կյանքն է քաշ տվել: Ըստ իս, դա կյանք չի եղել, այլ կրկնակի ծանր, քան մահը: Ընդունակ, աշխատասեր, արվեստի ու վաճառականության գործում առաջնակարգ վարպետ, շինարարական գործում ստեղծագործ, նա այդ բոլորի փոխարեն նախընտրել է մի անասնական կյանք և փակվել Հայաստանի լեռներում ու դարձել այս ու այն տիրապետողի գրաստը, նրա հլու աշխատավորը: Հայաստանի լեռներից դուրս, ուր կարողացել է հայը շունչ քաշել և մի փոքրիկ ազատություն վայելել, նա դրսևորել է իր ազգային դեմքը, և՛ արվեստ, և՛ վաճառականություն, և՛ կուլտուրա, և՛ ստեղծագործություն: Սրանք այնպիսի աղաղակող տվյալներ են, որոնց առաջ ես չէի կարող աչք փակել: Հայության անկախ շրջանն անգամ մի ժպիտ չունի:

Բագրատունիք[3] իրենց անկախ ու փոքրիկ հայրենիքով ծիծաղելի էին, որովհետև շարունակ ենթակա էին այս ու այն զորեղի հարձակման ու մշտական սպառնալիքի տակ ու այնքան են ձանձրացած ամենօրյա վախից, որ կամովին քաղաքը՝ Անին, հանձնում

[1] Կախման կետերը փաստաթղթինն են:
[2] Զարգացումը և առաջընթացը:
[3] Նկատի ունի Բագրատունյաց Հայաստանը (885–1045 թթ.):

են հույներին[1]: Այս բոլորը միայն մի բան էր մեզ ասում, որ հայը չունի այն հենարանը, որին կառչելով՝ մի ժողովուրդ կարող է իր կուլտուրական բոլոր կարողություններն ի սպաս բերել իր գոյությունն արդարացնելու համար: Այդ հենարանը լավ հասկացան Բագրատունյաց շրջանի զինվորականները, որոնք չհաշտվեցին շարունակական սպառնալից դրության հետ, ազատ ապրելն ուրիշ կերպ էին հասկանում: Նրանք հատ-հատ, խումբ-խումբ քաշվեցին իրենց անհյուրընկալ ու քարքարոտ հայրենիքից ու կամաց-կամաց ամրացան Տավրոսի, Ամանոսի՝ Սև լեռան ծերպերում, իրենց հենարան ընտրեցին ծովը, որ անդավաճան պաշտ պանն է իրեն վստա հող ժողովրդին: Եվ մենք տեսնում ենք, որ մի բուռ հայություն, հենված ծովին, կարողանում է իր անկախությունը պահել, միևնույն ժամանակ ազատություն տալ իր ազգային բնատուր ձիրքերին՝ արվեստին, վաճառականության, կուլտուրային: Եվ այդ փոքր քանակով հայության ստեղծած անկախությունն ավելի փառավոր է լինում ու բաղդավոր, քան հոծ հայության ծոցում ստեղծված Բագրատունյաց անկախությունը: Իսկ եթե Ռուբինյանները նույն բախտին արժանացան, ինչ Բագրատունիք, այս էլ պիտի վերագրել այն միստիք[2] շրջանին, որպիսին ապրում էր այդ միջոցին ամբողջ քրիստոնյա աշխարհը: Եվ Ռուբինյան այլասերված վերջին իշխանները, տարվելով միջնադարյան կրոնամոլությամբ ու մոռացած դրացիության տարրական պարտականությունները, Եվրոպայի այդ ժամանակվա մութ հասկացության գաղափարախոսների պատմուճանը հագան ու Փրկչի գերեզմանը[3] փրկողներին բացարձակ պաշտպաններ կանգնեցին: Այս պայմաններում բնական է, որ հարևան բոլոր մահ-

[1] Նկատի ունի 1045 թ. բյուզանդացիների կողմից Անիի նվաճումը:
[2] Առեղծված, անբացատրելի բան:
[3] Նկատի ունի Հիսուսի գերեզմանը:

մեդական ցեղերը՝ սելջուկները[1], մամլյուքները[2], ֆելլահները[3], պիտի հարվածեին ու ոտնակոխ անեին Կիլիկիան, ինչպես և եղավ: Իսկ եթե Ռուբինյան իշխանները[4] խելացի լինեին, չտարվեին միջնադարյան ցնորքով, եթե մանավանդ Մեծ Հայաստանի հայ հոծ բազմությունը, ժամանակին հետևելով զինվորականների օրինակին քշվեր [քաշվեր] իր ամայի լեռնաստաններից դեպի կիլիկյան կանաչ հովիտներն ու կապույտ Միջերկրականը, եթե մի րոպե Հայաստանի ժողովուրդը մոռանար իր պապերի գերեզմաններին պահապան դառնալու պարտականությունը, եթե լքեր իր վանքերն ու սրբերը ու չվեր դեպի Կիլիկիա, այնտեղ նոր կյանք, նոր հայրենիք ստեղծելու մտքով, հաս[տա]տուն կամքով, այժմ Կիլիկիան ծաղկած մի դրախտ կլիներ, և հայ ժողովուրդը Միջերկրական ծովին վայել իտալական, հունական ժողովուրդների պես կուլտուրական մի ժողովուրդ կլիներ: Թող Հայաստանին տեր դառնային բոլոր հարձակվողները, թող իրար միս կրծեին, ինչքան ուզեին: Հայը ապավինած Միջերկրական ծովին և Կիլիկիայի բնական պատնեշ Տորոսին ու Սև լեռան, ոչ միայն պիտի բաղդավոր ապրեր մինչև հիմա, այլև իր ապագան ընդմիշտ ապահոված կլիներ: Այդ դեռ անցած բան է: Հայկական հարցը զարթնելու օրից հաճախ այդ մտածմունքն եմ ունեցել, թե արդյոք հնարավոր չէ՞ թյուրք կառավարության հետ համաձայնության գալ և ամբողջ Հայաստանն իրեն թողնելով՝ ամբողջ հայ ժողովրդով տեղափոխվել Կիլիկիա ու այնտեղ ինքնավար մի նոր հայրենիք ստեղծել թյուրք կառավարության հովանու ներքո: Հաճախ այդ մտքով խոսել եմ իմ ընկերների հետ,

---

[1] Սելջուկ-թուրքերը՝ քոչվորները բնակվում էին Չինաստանից հյուսիս ընկած տարածքում, ինչպես նաև Միջին Ասիայում: Այդպես կոչվեցին իրենց առաջնորդ Սելջուկի անունով:

[2] Մամլյուքներ՝ զինվորական դաս, որոնք հավաքագրվում էին ստրուկներից, և որոնց ուսուցանում էին ռազմական գործ:

[3] Ֆելլահներ՝ գյուղացիները:

[4] Նկատի ունի Ռուբինյան իշխանապետությունը:

հաճախ նրանց ժպտացրել եմ իմ «միամիտ» մտքերի վրա: Բայց այդ ինձ թվացել է միակ ելքը չարատանջ հարցի:

Թյուրքը Եվրոպայից կամաց-կամաց քաշվում է դեպի արևելք[1], դեպի Հայաստան, Հայկական հարցը այդպիսով ավելի քան տարալուծելի է դառնում: Մյուս կողմից թյուրքը ձգտում է միանալ կովկասյան թյուրքերին, այդպիսով նրանց կամուրջ դարձնելու թրքական բուն երկրի ժողովուրդների հետ, Տուրկեստանի[2] հետ: Խանգարողը պիտի լինեն հայերը, ասել է թյուրքը պիտի ուրախ լինի, եթե հայերը Հայաստանից քաշվեն: Մյուս կողմից թյուրք պետությունը շատ լավ տեսնում է, թե ինչ պես կամաց-կամաց, Իտալիան մոտենում է իր սահմաններին, ձեռքն արդեն դրել Միջերկրականի տասներկու կղզիների վրա ու աչքերը չռել է Ադալիային ու Կիլիկիային: Նրա [Օսմանյան կայսրության] համար պարզ է, որ մի օր այս երկրները պիտի անցնեն իր ձեռքից և ընկնեն իրենից զորեղ եվրոպական պետությունների ձեռքը, իսկ զորեղ եվրոպացի հարևան ունենալու դառը փորձը վաղուց է ճաշակել նա: Ահա այս բոլորն իրար բարդելով՝ առաջ է գալիս մի կացություն, որ թյուրք պետությունը այդ կոմբինացիայով[3] ոչ միայն Հայկական հարցն է լուծում, այլև հայ ժողովրդին Կիլիկիայում տեղավորելով, այլևս եվրոպական ոտնձգությունների առաջն է առած լինում: Հայը ամփոփվում է Կիլիկայում: Մի կողմը ծովն է, ուրիշ խոսքով՝ Եվրոպայի ճա-

---

[1] Ներկայումս թուրքերն աստիճանաբար ամրապնդվում են եվրոպական երկրներում, այսպիսով իրականացնելով այն ինչ որ չէր կարողացել գլուխ բերել Օսմանյան կայսրությունը:

[2] Տուրկեստան՝ Թուրքեստան 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին ընդգրկում էր Միջին և Կենտրոնական Ասիայի՝ թյուրքական ժողովուրդներով բնակեցված մասը: Արևմտյան կամ Ռուսական Թուրքեստանի մեջ մտնում էին Ռուսաստանի միջինասիական տիրույթները և Ղազախստանի հարավային մասը, Արևելյան կամ Չինական Թուրքեստանի մեջ՝ Սինցզյան չինական նահանգի մի մասը, Աֆղանական Թուրքեստանի մեջ՝ Աֆղանստանի հյուսիսային նահանգները:

[3] Գործարք, հնարքների և խորամանկ գործողությունների վրա հիմնված արարք:

նապարհը, մյուս կողմը՝ թրքական պետությունը, որը ապահով զգալով իրեն հայկական որևէ վտանգից, իր կողմից ոչ մի վտանգ չի ներկայացնում մեր ինքնավար վարչական ձևին: Եվ հայն անձնատուր իր կուլտուրական բնատուր ձիրքերին՝ ստեղծագործում է և կուլտուրապես զարգացնում իր փոքրիկ հայրենիքը: Քաղաքականապես գոհ իր վիճակից, այժմ միայն կրթական-լուսավորչական գործունեության է զարկ տալիս և եվրոպական մի անկյուն դարձնում իր երկիրը: Գաղափարական այս ոգևորությամբ ես մտնում էի Կիլիկիա:

Մեծ Հայաստանում եղած մեր պահանջները պիտի հանդիպեին թրքական կատաղի հակառակության, ինչպես և լինում էր: Մեծ Հայաստանի անջատմամբ թուրք պետության գոյությունը կասկածելի էր դառնում, մինչդեռ Կիլիկիայի անջատմամբ Փոքր Ասիան-Անատոլիան ամբողջությամբ ապահովվում էր թյուրք պետության համար: Հեղափոխական գործունեության մեջ, ինչպես և ամեն մի դժվարին խնդրում, պետք է գնալ դիմադրության համեմատաբար թույլ ուղղությամբ, և ես այդ ուղ ղությամբ էի ընթանում, համոզված, որ այդ ուղղությունը հաղթանակող կլինի: Կիլիկիայում մենք հող չունեինք, մարդ չունեինք, սկիզբը դժվար էր: Այնտեղ մենք հակառակորդներ շատ ունեինք՝ Հնչակյաններն էին դրանք, բայց ես համոզված էի, որ մեր զգույշ մոտեցումով և բացատրելով կարող ենք բոլոր Հնչակյան ուժերը մեր կողմը դարձնել: Առաջին քայլն այդ ապացուցեց. թե՛ բժիշկ Նիկողոսը և թե՛ Քեշիշյանը Հնչակյաններ են եղել, բայց նրանք կապված չեն անվան հետ: Նրանք տեսան, որ Հնչակյանները ժողովրդական շարժումը ղեկավարել չգիտեն: Նրանք տեսան միևնույն ժամանակ, որ Հնչակյան գործիչները այժմ աթոռների կռվի հետևից են ընկած: Պարզ է, որ պիտի լքեն Հնչակյան անունը և նոր ու խոստումնալից անունին-գաղափարին պիտի փարեն: Հետագայում փաստերն եկան ապացուցե-

լու, որ սպասելիքներս արդարացան ոչ մի այն կուսակցական իմաստով, ոչ միայն ամենուրեք Հնչակյան հայտնի և ազնիվ գործիչները մեր շարքերն անցան, այլև որ գլխավորն է՝ Հայկական հարցի կիլիկյան տեսակետն այնքան պարզ և մեկեն[1] դարձավ մեր գործիչների համար, որ նրանցից շատերը թողեցին Մեծ Հայաստանում զինական շարժումները առաջ բերելու միտքը և կիլիկյան գործունեությանը նվիրվեցին: Այդպես էր, որ, ինչպես հետո կտեսնենք, 1903 թվին, երբ ես արդեն վաղուց Մարաշի բանտում էի, Կիլիկիա անցավ Վարդանը՝ Խանասորի և հայդուկային գործունեության մեզ հայտնի դարձած խմբապետը, որպես ասորի, և Սիմոն Զավարյանը 1904 թվին ուղղակի իր անցագրով, Զավարով ազգանունով, որին թուրքերը ռուսի տեղ էին դրել, Բեյրութ էր մտել և ուսանողության մեջ բավական աշխատանք կատարել, և որին շուտով թյուրք[ական] կառավարությունը, ռուսական հյուպատոսին դիմելով, իր սահմաններից հանել տվեց:

Ալեքսանդրետը թողնելով՝ ճանապարհը մեզ կամաց-կամաց հանում է լեռների վրա: Սև լեռան վերջավորություններն են հանգույցներ կազմում դեպի Լիբանան տանող լեռների հետ: Այդ բարձրությունների մեջ է ընկած Բեյլան գավառական քաղաքը, որի բնակչությունը թրքախոս հայերից է կազմված: Այնուհետև դեպի Հալեպ ընկած վայրերը արաբական են, ժողովուրդը խոսում է ու հասկանում արաբերեն: Դա մի ուղիղ գիծ է, որ բաժանում է թյուրք ազդեցությունը արաբականից: Ճանապարհին երկու օր կառքով անցնելուց հետո, Համամ կոչված հանքային տաք ջրի մոտ հանգստանալուց հետո, երբ ես ոտքով հետևում էի կառքին, ուղտի քարավան էր անցնում:

Մի ուղտապան, մեծ փափախով թուրք ինձ տեսնելով մենակ ճամբով գնալիս, գլուխը թափահարեց և սրտի խորքից բարձրա-

[1] Այդպես է փաստաթղթում:

ձայն գոչեց. «Ախ՛, բունըն բալնի բիր քյասասյ տը՛մ»[1]: Այս խոսքերն ասվեցան այնքան ցանկալի, այնքան տենչոտ ավյունով, որ այդ օրից մոռանալ չեմ կարողանում: Ես եվրոպական գլխարկ ունեի՝ մի կեպի: Նա համոզված է, որ ես թուրքերեն չգիտեմ, և պարզորեն իր ներքին աշխարհն է դրսևորում և ես հավատացած եմ, որ նա ինձ տեղնուտեղը կսպաներ, եթե չվախենար իմ գլխարկից: Եվրոպական գլխարկով ճամբորդը Թուրքիայում, մինչև կապիտուլյացիաների վերացումը, տեր ու տիրական է եղել: Նրան մի կոպեկ վնաս տվողը տասնապատիկ տուժելու է: Այդ շատ լավ գիտե երկրի ներսի ամենատգետ բնակիչը: Այդ իսկ պատճառով եվրոպացին ամբողջ Թուրքիան կարող է ոտքի տակ տալ և անվնաս հասնել ուզած տեղը: Ամեն տեղ հյուպատոսներ կան, որոնք անմիջապես թյուրք կառավարությունից հաշիվ են պահանջում ամեն մի եվրոպացու նկատմամբ եղած զրկանքի կամ վիրավորանքի հ[ամա]ր, և թյուրք պետության ներկայացուցիչները լինի վալի, մյութեսարիֆ, կայմակամ, թե մյուդիր, տառացի կերպով կատարում են կոնսուլի պահանջները, հակառակ դեպքում կոնսուլը կդիմի Պոլիս իր դեսպանին և իր կարգադրությունն անսացող պաշտոնյային ուզած պատիժը տալ կտա: Կայմակամ, թե մյուդիր, տառացի կերպով կատարում են կոնսուլի պահանջները, հակառակ դեպքում կոնսուլը կդիմի Պոլիս իր դեսպանին և իր կարգադրությունն անսացող պաշտոնյային ուզած պատիժը տալ կտա:

Այդ բոլորը ես շատ լավ գիտեմ, ուստի և ապահով իմ ճանապարհն եմ կատարում: Թեև ես բուլղար եմ իմ պասպորտի բերումով, իսկ այդ ժամանակ դեռևս Բուլղարիան թրքական մի վասալ էր համարվում, բայց բավական է, որ թրքահպատակ չեմ, ուրեմն իմ ճանապարհը բաց է առաջս, ուր ուզեմ, կգնամ: Այդ բոլորը ես շատ լավ գիտեմ, ուստի և ապահով իմ ճանապարհն եմ կատարում:

[1] «Ախ՛, մի անգամ սրա հախից գայի»:

Հալեպում իջա մի հյուրանոց, որի կառավարիչը հայ է, խոսում է արաբերեն և գիտե թրքերեն: Հյուրանոցի դեմն է գտնվում կենտրոնական ոստիկանատունը: Այդ հանգամանքը ինձ ավելի քան պատշաճ է թվում այն տեսակետով, որ կասկածելի մարդը չի գա ու իր կամքով մտնի ոստիկանության քթի տակ, թեև, պետք է ասած, որ կառապանն այդտեղ էր հարմար դատել ինձ իջեցնել, անկախ իմ կամքից. բավական է, որ ասել էի, թե մի հոթել հասցրու ինձ:

Ես ծպտված էի շատ լավ: Ծանոթ դեմքեր էին պատահում, որոնց հանդիպել էի թե՛ Կիպրոսում և թե՛ Եգիպտոսում, բայց ոչ ոք չէր կարող ինձ ճանաչել: Երկու օր զբաղված էի մեքենայիս շուրջը ռեկլամ[1] կազմակերպելով: Փայտյա արկղ շինեցի, շրջապատեցի կարմիր կտորով, որի վրա գրել տվի խոշոր տառերով թրքերեն՝ «Գրաֆֆոն՝ թրքի վե Լակրտի սոյլար մաքինա», այսինքն՝ գրամաֆոն, երգող և բառեր արտասանող մեքենա: Մի քանի թրքական դրոշակներ շինեցի և արկղի երկու կողմը զարդարեցի: Հոթելի դրսի պատի վրա, որ նայում է հրապարակին, գիշերները արկղի մեջ լամպ է վառվում: Դելլելն[2] էլ գլխավոր կենտրոններում հայտարարում է բարձր ձայնով, թե այսպիսի մի մեքենա կա այսինչ տեղում: Ամբոխը լցվել է հրապարակը: Ամենքը ներս են գալիս և լսում մեքենաս. մի կտորն արժե մի մետալիք ամեն մի մարդու համար: Մետալիքը 10 փարան է, մեր երկու կոպեկը: Մի խումբը դուրս է գալիս, մյուսն է մտնում: Գործիս հաջողությամբ խիստ ոգևորված եմ:

Մի պոլիս[3], կարծեմ ծագումով հայ, ամբողջ մի շաբաթ գալիս է սենյակումս նստում, ինձ հետևում, ինձ է լրտեսում, իմ շահելուն վկա դառնում: Ես շատ լավ հասկանում եմ նրա մտադրությունը. աշխատում եմ ցույց տալ, որ գոհ եմ իմ այստեղ գալով, որ լավ

[1] Գովազդ:
[2] Դալալ կամ դելլել՝ միջնորդ:
[3] Ոստիկան:

դրամ եմ վաստակում: Լեզուս էլ կամաց-կամաց վարժվում է տաճկական թրքերենի հնչյունին, ամբողջ տարիուկես շփում եմ ունեցել տաճկահայերի հետ Կիպրոսում և Եգիպտոսում, որոնք լինելով կիլիկեցի, ընդհանրապես թյուրքերեն են խոսում, և շատ բան յուրացրել եմ և այժմ խոսում եմ թրքերեն ճիշտ այնպես, ինչպես մի եվրոպացի կխոսի թրքերեն:

Պոլիսը վերջ ի վերջո համոզվում է, որ ես միայն շահելու համար եմ եկած Թյուրքիա, ինձ այլևս հանգիստ է ձգել: Հյուրանոցը կտրված է հայկական կյանքից, դա ավելի թրքական միջավայր է, պաշտոնյաների շրջան է: Պետք է հայկական շրջան ընկնել: Պտտեցի քաղաքը, եղա մի երկու ճաշարաններում, ուր հայերն էին հավաքվում: Վերջը մտածեցի թողնել հոտելը և սենյակ վարձել, իսկ մեքենան գործ դնելու համար Բաբ էլ-Ֆարրաջ դարպասի մոտ խանութ վարձեցի: Այդ մտադրությունս անմիջապես գործի դրեցի:

Բաբ էլ-Ֆարրաջ դարպաս[ը] հսկա Հալեպ քաղաքի դռներից մեկն է, որոնցով ժողովուրդը դուրս ու ներս է անում: Դա հին Հալեպի սահմանն է, որտեղից նոր լայն փողոց է գնում դեպի եվրոպական թաղը, ուր շինված են նոր ձևի տներ: Հալեպի փողոցները նեղ են, կառքի ճամբա չկա, տները խճողված իրար վրա:

Խանութում իմ մեքենայի գործը ավելի քան հաջող է ընթանում: Ամեն մարդ ազատ ներս է մտնում: Ո՞վ կարող է կասկածել, թե եկողը մեքենան տեսնելու համար չի եկել: Այդտեղ ինձ գտնում է Գրիգոր Մսրլյան ազգանունով մի լուսանկարիչ, որին Ալեքսանդրետից գրված էր տեսնվել ինձ հետ: Խոսակցության ժամանակ նա ինձ հայտնեց մեր պայմանական խոսքը: Անմիջապես բացվեցի: Արդեն գիտեի նրա մասին: Շատ վստահելի ու հեղափոխական ջիղ ունեցող մի համակրելի մարդ: Սկզբում նա եղավ իմ և տեղում նոր կազմակերպվող հեղափոխական կազմակերպության միջի կապը: Նա միշտ գալիս էր և հրահանգներ խնդրում:

Գործիչների նկատմամբ զգուշավոր ընտրությունը հիմք էր ծառայում ապագա գործի հաջողության: Ամենավստահելի տարրերից արդեն բավական ուժեղ կոմիտե կազմվեց: Այդ կոմիտեի ամեն մի անդամը առանձին խմբի ղեկավար էր հանդիսանում: Կոմիտեի և ոչ մի անդամ, բացի Մսրլյանից, իմ մասին ոչինչ չգիտե: Ես հատկապես իրեն այդ առթիվ զգուշացրել եմ: Բայց նա միշտ ինձ հորդորում է մի անգամ երևալ ընկերներից միայն չորսին, որոնք ամեն զոհողության պատրաստ են և ինձ հետ անձամբ տեսնվելուց հետո շատ ավելի եռանդով կաշխատեն: Ես միշտ ուշացնում[1] եմ այդ խնդիրը՝ միշտ նկատի ունենալով այն հանգամանքը, որ մի մարդու ավելի գիտնալն իմ մասին ինքնին վտանգ է գործի նկատմամբ: Մի անզգույշ ակնարկ մեկն ու մեկի կողմից իմ նկատմամբ կարող է քարուքանդ անել ամբողջ ծրագիրը: Բայց և այնպես գործի հաջողությունը պահանջում է, որ ես բացվեմ ոմանց: Ամենից կարևորը բժիշկ Ալթունյանն[2] է, որ եզակի է Հալեպում իր մասնագիտությամբ և իր դիրքով ու հայրենասիրությամբ հայկական գաղութում: Ես նրան հաճախ էի տեսնում ձիով անցնելիս, երբ նա գնում էր հիվանդներին այցելելու: Նրան միշտ հետևում էր իր ձիապանը:

Ես իմ մեքենան խանութում չէի թողնում, ամեն իրիկուն խանութից վերցնում էի մի ձեռքով մեքենան, իսկ մյուսը արկղով գլանակները և տուն գնում: Նույն կարգով առավոտյան տնից խանութ իջնում: Հաճախ նույն կարգով գնում էի սրա-նրա տունը՝ ընտանիքին ցույց տալու իմ մեքենայի շնորհքը: Մի ժամի համար տուն գնալիս ես ստանում էի երկու մեջիդիյե[3], մեր դրամով՝ 3 ռ[ուբլի] 20 կոպեկ: Ես եղա Հալեպի ամենահայտնի ընտանիքներում, ուր ինձ, իբրև

---

[1] Հետաձգում:

[2] **Ալթունյան Արամ-Աստուր** (1857–1950), բժիշկ, պրոֆեսոր: 1911 թ. հիմնադրել է Ալթունյան հիվանդանոցը (գործել է մինչև 1962 թ.): 1927 թ. բացել է բուժքույրերի դպրոց: Մեծ վաստակ ունի Սիրիայի և հատկապես Հալեպի առողջապահության զարգացման գործում:

[3] Օսմանյան արծաթե դրամ, որը հավասարազոր է 20 դուրուշի:

եվրոպացու, շատ հարգանքով էին վարվում և որ գլխավորն է՝ թյուրք ու արաբ հարեմի բնակիչները խմբով շրջապատում էին, երեսները բաց ու զարմանքով դիտում իմ մեքենան: Այդ միջոցով շատ լավ բարեկամներ գտա բարձր աստիճանի պաշտոնեության մեջ: Ինձ հատկապես բարեկամացավ Հալեպի արիստոկրատ ընտանիքից Զեքի փաշայի որդին՝ Ֆուադ բեյը, որն ինձ հաճախ իրենց տուն էր տանում և մեքենան լսել տալիս ընտանիքին: Նա ինձանից սովորեց ֆոնոգրաֆի գործածությունը և մի հատ բերել տվեց Եգիպտոսից տան համար: Հաճախ ինձ հրավիրում էր հեծելազորի հրամանատար Իզզեթ փաշան, ֆրանսերեն տիրապետող մի կատարյալ եվրոպացի մարդ, որ անգիր գիտեր շատ ռոմանսներ, և երբ մեքենան երգում էր, նա էլ իր զորեղ ձայնով ձայնակցում էր մեքենայիս:

Ես արդեն հրապարակի մարդ էի, ամենքն էին ինձ ճանաչում: Բժիշկ Ալթունյանն էլ ինձ հաճախ տեսել է փողոցով անցնելիս, բեռնավորված իմ մեքենայով: Ես հատկապես մեքենա կրող մարդ չէի վերցնում, ինքս էի այդ փթից[1] ավելի ծանրությունը քարշ տալիս: Նախ որ մեքենաս անզգույշ շարժումից չփչանա, որովհետև այդ մեքենան իմ գործի հաջողության միակ գրավականն է, ապա այն միտքը, թե դրամի երեսից վազող մարդն ինչու պիտի այդպիսի բեռի համար մարդ վարձի, դրամ ծախսի:

Հարկ գտա գնալ ու բացվել բժ. Ալթունյանին: Նա մեր կազմակերպության մեջ չէր, բայց առանց դրան դրսից նա կարող է խոշոր դեր կատարել: Բավական է, որ այս կամ այն մարդուն դրական կարծիք հայտնի մեր ձեռնարկության մասին: Իսկ իմ հայտնվելը որևէ մեկին, տվյալ պայմաններում, իմ մեքենան, նրանով այնպես տարված լինելը, ինչպես երևում էր դրսից, այնպիսի դյութիչ ազդեցություն էին ունենում, որ այդ պայմաններին վստահ՝ հետս չէի

[1] 1 փութը հավասար է 16 կգ:

վերցնում մետաքսի վրա ոսկետառ գրված վկայականս: Իմ պարզ դիմումը ամենամեծ վստահությունն էր ներշնչում այն սակավաթիվ անձնավորություններին: Այնպես որ ոսկետառ մետաքսը ես ավելորդ համարեցի հետս առնել, երբ Հալեպից դուրս եկա դեպի հյուսիս՝ Հայկական շրջաններն անցնելու համար: Այդ վկայականը Եգիպտոսից ուղարկել էին Ալեքսանդրետի միջոցով՝ ինձ հասցնելու համար: Նրան[1] տեսել էր և Տիգրանը: Հատիկն այդ խնդրում էլ չէր կարողացել գաղտնապահ մնալ և նրան ցույց էր տվել, ինչպես կպարզվի վերջը:

Գնացի ուղղակի Ալթունյանի ընդունարանը: Բազմաթիվ այցելուներ էին սպասում նախասրահում հերթի տոմսակները ձեռքներին: Ես էլ տոմսակ վերցրի՝ որպես հիվանդ: Հերթն ինձ հասավ, ներս մտա: Ես առողջ եմ, հիվանդի սկի նման չեմ: Մտնելուն պես հայտնեցի, որ հիվանդ չեմ, այլ եկած եմ խոսելու մեր հեղափոխական գործի մասին: Զարմանքը և հիացքը փայլեցին դեմքին:

– Բայց Դուք ֆոնոգրաֆչի եք, ես Ձեզ հաճախ եմ պատահում փողոցում մեքենան ձեռքներին: – Այո, նա իմ անբաժան ընկերս է, ապա թե ոչ, ես այսպես համարձակ չպիտի կարողանայի Ձեզ մոտ գալ:

Պատմեցի շատ բան: Նա ուշադիր լսեց, ձեռքերը շփեց և իր գոհունակությունը հայտնեց այդ արհեստով Երկիր մտնելու համար ու ամեն տեսակ աջակցություն խոստացավ և խնդրեց, որ մի վստահելի մարդու միջոցով կապ պահեմ իր հետ: Հայտնեցի Գրիգոր Մսրյանի անունը, շատ ուրախացավ և ասաց, որ ինքը հենց նրան պիտի առաջարկեր, և քանի որ ես եմ առաջարկողը, ավելի քան հաջող ընտրություն լինել չէր կարող:

Գտածս մարդկանց վստահությունը դեպի ինձ գնալով մեծանում էր հատկապես այն պատճառով, որ դրամականի մասին և ոչ

[1] Վկայականը:

մի խոսք չէի անում: Ես այնքան էի վաստակում, որ ինձ պես երկու-երեք մարդ կապրեցնեի՝ այդ տեսնում էին ամենքը: Բացի այդ Երկիր մտնելուց առաջ իմ ընկերների հետ պայմանավորվել էի, որ Երկրում ոչ մեկից դրամի պահանջ չպետք է հայտնել, եթե ինձ դրամ պետք լինի, անպայման կուզեմ և որքան պահանջելու լինեմ, պիտի փոխադրեն Հատիկի միջոցով ինձ: Բայց մեքենայիս հաջող աշխատանքն ինձ ազատեց և այդ հոգսից, այնպես որ մինչև վերջն էլ դրսից դրամ չպահանջեցի ոչ միայն երբ ես ազատ շրջում էի, այլև իմ բանտարկության մոտավորապես վեց տարվա ընթացքում ոչ մի կոպեկի պահանջ չհայտնեցի և ապրեցի իմ վաստակած դրամներով:

Ես գիտեի, որ դրամական խնդիրը միշտ կասկածներ ծնեցնող է, ուստի և տեղական մարմնին Մսրյանի միջոցով հաղորդեցի, որ իրենց ամսական մուծումները միայն իրենց ձեռքով պիտի ծախսվեն տեղական գործի վրա: Պետք է ասած, որ Երկրի ներսից դրամական նվիրատվություններ ընդունելու խնդիր սկզբից ևեթ չի եղել մեր կազմակերպության մեջ, և այդ իսկ պատճառով «Դրոշակի» նվիրատվությանց բաժնում Երկրի ներսի վայրերի անուն չի հիշատակվում, և եթե հատ-հատ էլ պատահում են, այդ էլ ինքնաբերաբար այս կամ այնտեղից մարդու ձեռքով դուրս ուղարկված և խմբագրության հասցեին եկած նվերներ են եղած: Խոսքս չի վերաբերում իհարկե Պոլսի (Վիշապ), Զմյուռնիայի ու մի քանի հարուստ նավահանգիստների կողմից ստացված խոշոր նվիրատվություններին: Եթե Երկրի խորքից էլ եղած նվիրաբերության ցուցակներ կան թերթում, դրանք միայն տպագրվում էին մտքերը հանգստացնելու համար, մինչ դրամը մնում էր Երկրում:

Տնտեսապես անկախ լինելս ինձ ուժ ու մեծ կորով էր հանդիսանում, և իմ հրահանգները ընդունվում էին առանց որևէ առարկության: Իմ դիրքս ամուր էր նաև քաղաքականապես: Հալեպ հաս-

նելուն պես ներկայացել էի ռուսական հյուպատոսարան, որ ամենուրեք ներկայանում է որպես [սլավոն] նոր ազատագրված ցեղերի պաշտպան, և որը խոշոր կշիռ ունի տաճկական կառավարության աչքում: Հյուպատոսարանում նշանակեցին իմ պասպորտիս մեջ իմ ներկայանալը և ինձ հայտնեցին, որորև է խնդիր ունենալու դեպքում անմիջապես իրենց իմացնեմ, որպեսզի միջամտեն:

Որպեսզի որևէ կասկածից զերծ լինեմ, ես շատ շփվում էի խանութիս շարքում գտնվող կիսաեվրոպացի հույն, իտալացի, ֆրանսիացի խանութպանների հետ: Դրանց թվում էր Շարտիե Աշիլ անունով մի երիտասարդ, հոր կողմից ֆրանսիացի, մոր կողմից հույն տղա, որ կանանց արդուզարդ իրեր էր վաճառում և շվայտ ու շռայլ կյանք էր վարում: Հաճախ ես նրա հետ զբոսնում էի: Ինձ տանում էր իր ծանոթների շրջանը, քրիստոնեական թաղը, որ պարիսպներով բաժանված և մահմեդական մասից անջատված յուրօրինակ կյանքով ապրող մի շրջան է, այնտեղ է գտնվում և բնիկ հայ գաղութը: Լեզուն անխտիր ամենքի համար արաբերեն է: Կարելի է ասել, որ այդ տեղի կենցաղը դարերով մնացել է անփոփոխ: Այդ թաղամասը կարող է դրսից՝ բուն Հալեպից բոլորովին անկախ կյանք ունենալ: Ունի իր խոշոր դարպասները, որոնք որոշ ժամից հետո փակվում են և այլևս չեն բացվում մինչև առավոտ: Մահմեդականներն այնտեղ համարյա մուտք չունեն:

Շարտիեի հայրը ինժեներ էր: Այդ անունը հատկապես այստեղ հիշեցի, որովհետև նրա մասին խոսք պիտի լինի հետագայում: Բացի այդ, ինձ մոտ հաճախ լինում էր Կոստակի անունով մի կես հույն, կես բուլղար ծերունի, մի բարի և սրտոտ հին մարդ, որ դեռ հիշում էր իր պատանի հասակի կյանքը Բուլղարիայում, քիչ հիշում էր և բուլղարերենը: Ես Բուլղարիայում շատ կարճ ժամանակ անցրած [անցկացրած] լինելով, բավական հասկանում էի շնորհիվ իմ գիտցած ռուսերենի: Բայց բուլղարերեն չիմանալը զարմանալի չպի-

տի լիներ ոչ ոքի համար, քանի որ իմ ծննդավայրը (ըստ պասպորտի) Բալչիկ գավառաքաղաքն էր, որի շրջանի բուլղարները մինչև հիմա էլ թուրքերեն են խոսում և կոչվում են գագաուզներ[1]: Բացի այդ, ես պատանի դեռ չեղած, հազիվ տաս տարեկան, ռուս-թուրքական 1877 թվականի[2] պատերազմի ժամանակ տարագրված եմ եղել Օդեսայի շրջանը՝ Ռուսաստան և այնտեղ անց[կաց]րել եմ իմ պատանեկությունը: Այդ պատճառով էլ ես խոսում եմ ռուսերեն ու ոչ բուլղարերեն: Այս է իմ տված բացատրությունը ամեն մի հետաքրքրվողի, ինչպես և վերջը կառավարության, երբ ձերբակալվեցի: Եվ իմ բացատրությունը ոչ մի կասկածելի բան չէր կրում իր մեջ:

Կոստակին ինձ հետ խոսում էր թուրքերեն, երբ մի գաղտնի բան էր ուզում ասել ուրիշի ներկայության, ասում էր բուլղարերեն՝ ես հասկանում էի նրան: Հայրենիքի կարոտը նրան շարունակ քշում էր ինձ մոտ, հարցնում էր գործիս հաջողության մասին: Նա արհեստով հացթուխ էր, շատ ընտիր ու մանր տեսակի հաց էր թխում: Կառավարության կարգադրությամբ հաց էր բաժանում բոլոր զինվորական պետերին: Առավոտ վաղ նա անցնում էր իմ խանութի առաջ, ինձ հաց էր տալիս ու եթե նորություններ ուներ, հայտնում էր ու անցնում: Երեկոները գալիս էր մոտս, խանութը փակում էինք, մեքենաս առած տուն գնում և այնտեղից անցնում մի ճաշարան, որի տերը հայ էր, ոչ բնիկներից, այլ գավառներից եկած, Օննիկ Մազլումյան[3] անունով: Նրա ճաշարանում հավաքվում էին հայ

---

[1] Գագաուզներ-թյուրքական ժողովուրդ, որը բնակվում է Բեսարաբիայում՝ Մոլդովայի հարավում և Օդեսայի շրջանում, հիմնականում ուղղափառ են: 1990-ական թթ. հռչակել են Գագաուզիայի Հանրապետություն պետությունը:

[2] Նկատի ունի 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

[3] **Մազլումյան Օննիկ** - Հովհաննես Գրիգորի (1871–1934), հասարակական գործիչ: Ծնվել է Արաբկիրի Անջրդի գյուղում: 1885 թ. հաստատվել է Հալեպում: Հիմնել է «Կիլիկիա», ապա «Արարատ» ճաշարանը: 1911 թ. իր կրտսեր եղբոր՝ Արմենի հետ ավարտում են «Օթել Բարոն» հյուրանոցը, որը երկար տարիներ եղել է Հալեպի նշանավոր հյուրանոցներից մեկը, որտեղ նրանց ակցելուներն են եղել

գավառացի երիտասարդներ, որոնք ամենից շատ են զբաղվում քաղաքականությամբ, մանավանդ հայկական հարցով: Հայ հեղափոխական տարրի ժամադրավայրի պես մի տեղ է: Այդ ինձ շատ հարկավոր է: Ես այնտեղ լսում եմ բոլորի հայերեն խոսակցությունը, վեճը, բնորոշում եմ տիպերը: Առանց ծանոթ լինելու արդեն գիտեմ անունները և տրամադրությունները: Այնտեղ է գալիս և հաճախ Գրիգոր Մսրյանը, հետս մի երկու բառ է փոխանակում թրքերեն, որպես ֆոնոգրաֆչի կամաց-կամաց ես դառնում եմ իմ այդ ճաշարանի մնայուն հաճախորդը: Կոստակին իմ անբաժան ընկերն է ճաշարանում: Այդ կետը ինձ պաշտպանում է ճաշարանի հայ մթնոլորտի մեջ կասկածի առարկա դառնալուց: Ոչ ոքի մտքով անգամ չի անցնում, որ ես կարող եմ հայ լինել, կամ թե կարող եմ հայերեն հասկանալ: Հաճախ իմ հասցեին խոսքեր են նետվում, շատ անգամ ինձ համար ոչ հաճելի, բայց այդ հանգամանքը ինձ չի վրդովում, ընդհակառակը, ես սրտապնդվում եմ, որ իմ մեջ ոչինչ կասկածելի չի նկատվում:

Բարիկենդանի շրջանն է: Քրիստոնյաների տներում նեղ շրջանակով փոքրիկ հավաքույթներ են կատարվում: Շատերն ինձ հրավիրում են տուն մեքենաս լսեցնել տալու: Հաճախ լինում եմ և հայերի ընտանիքներում: Մի օր էլ Օննիկ Մազլումյանը խնդրում է մեքենաս տանել իրենց տուն: Վարձով բան է, շրջանն ինձ հետաքրքրում է: Գիտեմ, որ Օննիկը հնչակյան է եղել, այժմ Գրիգոր Մսրյանի պատմելով՝ Դաշնակցական մարմնի եռանդուն անդամն է: Ես ֆոնոգրաֆչի եմ, իսկ հավաքվածները՝ երիտասարդներ, օրիորդներ, կանայք, բոլորը հայերեն են խոսում: Սրախոսություններ են անում, ծիծաղում, պատմում են դեպքեր, որոնց մասին ամենից լավ ես գիտեմ, բայց զգաստությունս չեմ կորցնում, զբաղված եմ իմ

նշանավոր մարդիկ, այդ թվում էր գրող Ազաթա Քրիստին, իսկ «աքսորավայր» մեկնելիս վերջին անգամ հանգրվանում են Գրիգոր Զոհրապը և Վարուժանը:

գործիքով, լարում եմ, նվագում: Նրանք ուրախանում են, բացականչում, օղի խմում, ինձ էլ են առաջարկում, ես հաճախ մերժում եմ, բայց մեկ-մեկ էլ ընդունում եմ կասկածի տեղիք չտալու համար. այդ ո՞ր նվագածուն է, որ մերժում է խմիչքը: Այդ դրությունը իմ հոգին տանջում է, ինքնասիրությունս ինձ կրծում, բայց գործի հաջողությունը և նրա հեռանկարները բալզամի[1] պես հանգստացնում է, և ես անտարբեր բոլոր զրույցներին, իհարկե, ըստ երևույթին, անցնում եմ ժամեր այդ վիճակում:

Սենյակի պատից կախված են եվրոպական գահակալների և նրանց կանանց պատկերները: Կենտրոնական տեղ է բռնում Վիլհելմը[2] իր կնոջ հետ: Մի քանիսն այն միտքը հայտնեցին, որ տղամարդը կնոջ ձախ կողմը պիտի լինի և ոչ աջը: Մի քանիսն էլ պնդում էին, որ նկարի դիրքն է ճիշտ: Վեճը տաքացավ, ոչ մի համաձայնության չեկան: – Ապա, այս եվրոպացուն հարցնենք, նա մեզանից լավ կիմանա,– կանչեց մեկը: – Այդ խմպըլն ի՞նչ գիտե,– վրա բերեց Օննիկը: Բոլորը մեկեն ծիծաղեցին: Խմպըլ կնշանակի տգետ, հիմար, ապուշ: Ես այդ դեղահատը կուլ տվի, բայց իսկույն ևեթ մտածեցի, որ այդ որակումն ինքնին իմ գործիս համար ձեռնտու է: Անցնում է երկու շաբաթ: Գրիգոր Մսրյանը նորակազմ մարմնի գործունեությունից ոգևորված է և հաճախ առաջարկում է մի անգամ ներկայանալ կոմիտեին, որ բացի իրենից կազմված է ընդամենը չորս հոգուց: Դրանց թվում է և Օննիկը: Համաձայնում եմ գնալ: Վերցնում եմ գործիքս ու գնում Մսրյանի տունը: Ներսի մի սենյակում կոմիտեի անդամներն անհամբեր սպասում են Կովկասից եկած հեղափոխականի դեմքը տեսնել: Ոչ ոքի մտքով չի

[1] Բալասան:

[2] **Վիլհելմ II** (1859–1941), Գերմանիայի կայսր (1888–1918): Նրա կինն էր Ավգուստան (1858–1921):

անցնում, թե ամեն երեկո ճաշարանում Կոստակիի հետ ընթրող ֆոնոգրաֆչի Դիմիտրին է այդ անձը:

Ես ներս եմ մտնում Մսրյանի ծիծաղի հետ միասին: Բոլորը ոտքի են կանգնում. զարմանքը բռնել է բոլորին: Օննիկը առաջ է վազում և ձեռքս բռնելով՝ բացականչում է հայերեն. «Ի սեր Աստծո, ինձ ներեցեք մեր տանն եղած միջոցին Ձեր հասցեին անթույլատրելի որակումն անելուս համար»: Խեղճն այնքան ճնշված էր զգում իրեն, որ չգիտեր՝ ինչ ձևով մեղմացնի այն խոսքի խմպըլ բառի տպավորությունը:

– Ես շատ ուրախ եմ, որ իմ արտաքինը այդպիսի կարծիք է ներշնչում մարդկանց: Դա իմ գործի հաջողության գրավականն է,– ասացի ես և հանգստացրի Օննիկին: Նույն մտքով ես արդեն խոսել էի Գրիգոր Մսրյանի [հետ], և նա բացատրեց իմ գոհունակությունը և դրա շարժառիթը:

Այդ երեկո բացատրվեցան բոլոր մութ կետերը, որոնք հետաքրքրում էին կոմիտեի անդամներին: Բոլորին ես ճանաչում էի, բոլորի մասին գիտեր և բժ. Ալթունյանը: Գրիգոր Մսրյանը մեր միջնորդն էր: Անձնավորություններն ընտրված էին իրենց բոլորի համաձայնությամբ, ինչպես նաև իմ և բժ. Ալթունյանի: Բոլորն էլ նվիրված մարդիկ էին:

Այնուհետև կազմակերպչական գործն ավելի քան թափով էր առաջ գնում: Բազմաթիվ խմբեր էին կազմված: Ես իմ գործը Հալեպի պես մի կենտրոնում վերջացրած էի համարում: Կենտրոնում լավ կազմակերպությունը համապատասխան արձագանք կգտնի նաև իրեն ենթակա շրջաններում: Հալեպի վիլայեթի մեջ են մտնում Մարաշ սանջակն իր բազմաթիվ գայմագամլըգներով[1], որոնց թվում է և Զեյթունը. այդ վիլայեթի մեջ են նաև Քիլիսի ու Այնթապի գայմագայությունները, որոնց թվում է և Զեյթունը. այդ վիլայեթի

[1] Քայմաքամ – գավառապետ, քայմաքըմլըք՝ գավառներ:

մեջ են նաև Քիլիսի ու Այնթապի գայմագայությունները: Այդ գծով ես պիտի անցնեմ մինչև Զեյթուն, ապա Ալպիստան, Հաճընն, վերջը Դաշտային Կիլիկիա – Ադանա, Մերսին, դուրս կգամ Երկրից, նորից կվերադառնամ, այս անգամ արդեն ուրիշ ընկերներ կմտնեն դրսից, գործը ավելի լավ հիմքերի վրա դնելու համար:

Շուտով պիտի ճանապարհվեմ Քիլիս, որ բուն Թուրքիայի առաջին քաղաքն է և Կիլիկիայի մի հեռավոր արևելյան անկյունը, և ահա Հատիկից անհանգստացուցիչ նամակ եմ ստանում, թե Տիգրանը դժգոհություններ է հայտնում, որ իրեն մարդու տեղ չի դնում, որ բոլոր ստացված նամակներն իրեն չի տալիս, ծախսելու համար իրեն բավարար դրամ չի տալիս և այլն: Նախատեսությունս իրականություն է դառնում. այն, ինչից այդքան զգուշանում էի, առաջս է կանգնում: Հատիկին մի խիստ նամակ գրեցի՝ մեղադրելով, որ չի կարողանում մի երիտասարդի իր ձեռքերի մեջ պահի այնպես, որ դժգոհության տեղիք չտա: Տեսնում էի, որ Տիգրանը շատ բան կարող է անել: Նրա դժգոհության արձագանքը կընկնի բժ. Նիկողոսի և հատկապես Քեշիշյանի ականջը, պիտի հայտնի դառնա, որ նա գործի մեջ կա, որովհետև[1] այդ երկու կարևոր անձինք գործից կքաշվեն, ինչպես որ Քերովբե Քեշիշյանն ինձ ասել էր մեր տեսակցության միջոցին: Նորից պնդում էի իմ նամակում, որ ընկերական վերաբերմունք ունենա դեպի Տիգրանը, մի քիչ էլ դրամ տա: Զգուշացնում էի, որ չլինի թե լքի նրան, քանի որ նրա հեռացումով նրան կրկին Հնչակյան կուսակցության մեջ հրել կնշանակի. այդ դեպքում մեր բոլոր գաղտնիքները նա կհաղորդի Հնչակյան կենտրոնին: Իսկ այդ հանգամանքը մեր աշխատանքը կխորտակի: Չարյաց փոքրագույնն է Տիգրանին մեր ձեռքում պահել: Հատիկը չի կարողանում իր վերաբերմունքը փոխել դեպի լավը, չի կարողանում ըմբռնել գործի լրջությունը, արհամարհանքով է պատասխա-

[1] Այդ հետևանքով:

նում Տիգրանի բոլոր պահանջներին ու դադարեցնում է հետը խոսել: Տիգրանը ծառս է լինում և սպառնալիք է անում նամակով, որ Հատիկը թողնի իրենց քաղաքը և հեռանա, ապա թե ոչ ինքը ամեն միջոց գործ կդնի նրան հեռացնելու համար Ալեքսանդրետից: Հատիկն ինձ գրում է այս բոլորը և ավելացնում է, որ հավանորեն մատնության դիմի, եթե մենք համառենք մնալ Երկրում:

Ես նորից Հատիկին գրում եմ և ամբողջ հանցանքը իր վրա ձգում, որ խնդիրն այդտեղ հասցրեց: Առաջարկում եմ միջոց գտնել, Տիգրանին խոսք հասկացնել, համաձայնության գալ հետը: Իսկ եթե անհնար է, եթե Տիգրանը այդ չափ վտանգավոր դիրք է ընդունել, եթե այլևս ոչ մի միջոցով առաջն առնել անհնար է, նման դեպքում մնում է մի միջոց, հեղափոխական կտրուկ միջոցն է դա. Տիգրանը պիտի վերանա, թե ինչպես, այդ էլ թողնում եմ Հատիկին, իր պատասխանատվությամբ կատարելու: Վերջը ավելացնում եմ,– ինչպես որ քո անտակտությամբ գործը այդտեղ հասցրիր, դու էլ պիտի մաքրես գործը:

Այդ նամակը նոր էի ուղարկել, ստանում եմ նամակ ուղղակի Տիգրանից: Բովանդակությունը շատ կտրուկ է. – Ձեր, ինչպես և Հատիկի ներկայությունը մեր Երկրի համար վտանգավոր գտնելով, ներկա գրությամբ խնդրում եմ անմիջապես թողնել ձեր գործունեությունը և Երկրից հեռանալ:

Նամակի մեջ մի քանի խոսքով Հատիկին է աշխատում վարկաբեկել: Նամակն ստանալուն պես մեկ մտածեցի անմիջապես ճանապարհվեմ Ալեքսանդրետ ու գործը տեղն ու տեղը հարդարեմ, բայց իմ զբաղմունքը թույլ չի տա այդպիսի քայլ: Ֆոնոգրաֆչին ինչի՞ պիտի գնա 5 օրվա ճամբա ու այդքան էլ վերադառնա իր անձնական գործով: Չէ՞ որ ոստիկանությունը կհետաքրքրվի, և գործը իսկույն կբացվի: Հնարավոր չգտա գնալ և մի խիստ նամակ [գրեցի] Հատիկին, որ գործը մինչև այդտեղ է հասցրել, և վերջը հաս-

տատում եմ իմ նախորդ նամակիս թելադրանքը Տիգրանին մեջտեղից վերացնելու մասին: Միևնույն ժամանակ չեմ ուզում Տիգրանին անպատասխան թողնել: Նրան գրում եմ հետևյալ բովանդակությամբ. «Մենք (ես և Հատիկը) Երկիր ենք մտել ոչ Ձեր հրավերով, ոչ էլ Ձեր խորհրդով: Մեր կուսակցության կամքն է մեզ այստեղ հասցրել և նրա ծրագիրն իրագործելու ճամբի վրա ենք: Եթե Դուք կարող եք մեր այս աշխատանքին նպաստել Ձեր ուժերով, դա կլինի Ձեր քաղաքացիական պարտականությունը և մեր կողմից կընդունվի շնորհակալությամբ, իսկ եթե Դուք կզլանաք Ձեր օժանդակությունը գործին, այդ դեպքում կխնդրեինք մեզ առաջարկներ չանել որևէ իմաստով ու Ձեր արարքներով վնաս չհասցնել ընդհանուր գործին»:

Այս նամակից հետո ես ստիպված եմ լինում սպասել Հալեպում գործի ելքին: Միտքս միշտ այնտեղ է: Հատիկն ինձ գրում է շարունակ, թե Տիգրանը մեզ կարող է մատնել, իսկ թե ինքն ինչ է մտածում այդ արարքի դեմ, ոչինչ չի ասում:

Անցնում է մի առժամանակ, հարցը հնանում է: Ես դժվարանում եմ հավատալ, որ Տիգրանն այդ չափ ստորություն կանի: Ավելի հանգիստ եմ, ինձ թվում է, թե նա կլռի, որովհետև մեր մասին սրան-նրան ասելու դեպքում ինքն իրեն մատնած կլինի. գեթ իր կաշվի համար այդպիսի հիմարություն չպիտի անի: Մի հույսս էլ այն է, որ Հատիկը նրան կվերցնի [կվերացնի] կամ վերցնել կտա մեջտեղից: Այս մտածմունքների մեջ Հալեպում սպասում եմ:

Ցուրտ ձմեռ է, փետրվարն ենք մտել (1899 թ.): Այդ միջոցին մի միջադեպ պատահեց, որ մի երկու օր ինձ զբաղեցրեց: Կոստակին հաճախ ինձ հետ էր լինում: Կիրակի օրերին ինձ տանում էր քրիստոնյաների թաղը ման գալու: Ծեր, կուզիկ, երկայն սպիտակ միրուքով, որին ամենքն են ճանաչում, բարևում, խոսում հետը: Ես՝ առույգ, երիտասարդ, նոր դեմք այդ թաղի համար: Ինձ տարավ իր

տունը: Նեղ ու ծուռ ու մուռ փողոցներով անցանք, որոնք պատած են բարձր տաշված քարե պատերով, և մտանք մի բակ: Ահա իր տունը, մի շքեղ տուն, որ փողոցից չի երևում: Այդպես են բոլոր տները՝ դրսից պարիսպներ են միայն, պիտի մտնես բակը, որ տեսնես փոքրիկ կոկ պարտեզը, մաքուր, սիրուն, ապա տունը, հին, կլասիք ոճով շինած, հաստատուն կառուցվածք: Բակում անպայման ջրհոր, որը ջրի ամբարն է անձրևներից գոյացած: Սենյակները մեծ-մեծ, լուսավոր: Չեմ կարողանում հավատալ, որ այդ տունն իրենն է: Այդպիսի տուն ունեցող մի ծերուկ, մեն-մենակ, ոչ ոք չունեցող, դեռ շարունակում է աշխատել, ո՞ւմ համար: Շվարում ես քեզ ու քեզ: Ում պիտի մնա այս արժեքավոր տունը:

Ներս ենք մտնում: Արժեքավոր կահավորություն, հարուստ փռվածք: Հատակն ամենուրեք քար, մի տեսակ սպիտակ հղկված քար: Պատերին կախված են հախճապակյա մեծ-մեծ ամաններ՝ շատ գեղեցիկ նկարեն[1] զարդերով հարուստ: Երեք սենյակն էլ այդպես, բոլոր պատերը հատակից մինչև առաստաղ ծածկված այդպիսի թանկարժեք ափսեներով: Շատերը հնություն են, շատերը՝ Չինաստանից ու Յապոնիայից[2] բերված:

Մնացել եմ ապշած: Ամեն մի ման հատուկ գործիքով կախված է պատից՝ մեջը քեզ[3] արած: Մի հիանալի թանգարան է ամանեղենի: «Ահա այս բոլորն իմն են, ամբողջ կյանքումս հավաքել եմ և հիմա սրանց պատճառով մնում եմ Հալեպում: Շատ եմ մտածում գնալ, հեռանալ դեպի քրիստոնյա մեր աշխարհը, սրանք ինձ կապել են: Ծախել չեմ կարող, մի քանի հազար ոսկի կանի, փողն ի՞նչ պիտի անեմ: Իմ աշխատանքն, ինձ շատ-շատ է: Ապրում եմ: Սրանցով էլ մխիթարվում եմ, իմ ընտանիքը՝ կին, տղա, աղջիկ սրանք

[1] Նկարներ:
[2] Ճապոնիայից:
[3] Քիլ կամ քեզ:

են, չեմ ուզում աչքերս բաց զրկվեմ սրանցից: Էհ՛, թող մնան: Գեղեցիկ են»,- ասաց, պատմեց շատ բան և աչքերից թափեց առատ արցունք: Ես ինձ զգում էի մի խորանում, ուր քուրմը աղոթում է ու արտասվում: Մարմինս փշաքաղվեց: Խոսք չգտա ասելու: Գեղեցիկի, լավի, բարվո[1] պահապան հրեշտակն էր իմ առաջ արցունքն աչքերին: Ի՞նչպես էր այդ ահագին հարստությունը դիզել, ու՞մ համար, ինչու՞ համար. հարցեր, որոնք անցան իմ մտքով: Եվ ինքը մի հացթուխ, որ ոտքով շրջում է այդ հսկա 1/2 միլիոննոց քաղաքը ու բոլոր պաշտոնյաներին իր ձեռքով հաց բաժանում: Արդյոք մի խորհրդավոր անձնավորություն չէ՞, գուցե ավելի խորհրդավոր, քան ես եմ սույն վայրկենին: Եվ երկուսիս պատահականության խաղը բերել, միացրել է արևելյան հեքիաթների այս ոստանը, ու մենք առանց իրար մեր ներքինը, մեր հոգին դրսևորելու, նույն մարդկային գաղափարներին ենք ծառայում:

1899 թ. փետրվարին[2], մի առավոտ, Հալեպի Բաբլ էլ-Ֆարաջ դարպասի մոտ վարձած խանութումս տարված էի իմ զբաղմունքով, երբ ներս մտավ Կոստակին՝ ծերունի հացագործը:

– Քեզ մի գաղտնիք ունեմ հայտնելու,- դողդողալով դիմեց նա ինձ,- եթե մի օր ուշանա[նք], երկու մարդ կկորցնենք:

Հետաքրքրությունս ու զարմանքս պաշարեցին ինձ, ի՞նչ մարդկանց մասին է խոսքը, ի՞նչ կապ սրա ու կորսվող մարդկանց միջև, մի՞թե հայեր են....[3] Մինչ ես շվարմունքի մեջ հարց եմ ուզում տալ, նա շարունակում է.

– Գիտես, որ ես հաց եմ բաժանում բոլոր պաշտոնյաներին ու սպաներին, որոնք ըստ օրինի [օրենքի], հացը կառավարության

---

[1] Բարու:

[2] Այս միջադեպը գրված է 1905 թվի վերջերում, Ժնևում, ուր նա բանտից ազատվելուց հետո աշխատում էր: Վերնագիրն է՝ «Հեղափոխական ... [մի քանի բառ ընթեռնելի չեն] մի գաղտնի դավ»:

[3] Կախման կետերը փաստաթղթինն են:

հաշվին են ստանում: Երեկ երեկո ինձ մոտ եկավ մի ոստիկան ու պատվիրեց երկու մարդու բաժին հաց ավելի վերցնեմ և տանեմ Կուբե խան[1], ուր դռնապանն ինձ կասի, թե այդ ում համար է: Առավոտ, շատ վաղ, իմ սովորության համաձայն, շրջեցի բոլոր պաշտոնյաների տները և ապա անցա Կուբե խան՝ կառավարության այդ կարգադրությունը կատարելու: Խանի դռնապանը, տեղացի մի արաբ, իմ հարցին, թե ո՞վ կա այստեղ կառավարությունից հաց ստացող, շատ խորհրդավոր կերպով հայտնեց, թե ես չպիտի գնամ նրանց մոտ, այլ հացն իրեն պիտի տամ, ինքը տեղ կհասցնի: Այդ ավելի քան ինձ հետաքրքրեց: Ոչ ոքի մինչև հիմա ինձանից չէին թաքցրել, երևի ժեռն թյուրքեր[2] են, որոնց գաղտնի էին պահում: Ի՞նչ լեզվով են խոսում, հարցրի դռնապանին»:

– Ոչ թյուրքերեն և ոչ արաբերեն, մեր երկրի մարդ չեն: Նասրանի (քրիստոնյա) էին երևում, գլխներին շապկա[3] կա: Դե գնա, շատ մի՛ հարցնիր, արգելված է նրանց մասին խոսել,– ասաց դռնապանը և հացը ձեռքիցս առնելով՝ վեր բարձրացավ պատշգամբ: Ես դիտեցի ու տեսա, թե ո՛ր սենյակը մտավ: Քանի-քանի անգամ նկատել եմ, որ դու հետաքրքրվում ես նման խնդիրներով, միշտ կառավարության ռեժիմի[4] մասին ես խոսում, եվրոպական ազատ երկրներից ես խոսում: Շատ մտածեցի, թե ում դիմեմ, ում հայտնեմ: Վերջին եզրակացությունս քո վրա հանգավ: Դու օտարական ես, գլխիդ եվրոպական գլխարկ կա: Քեզ ոչինչ չեն կարող անել: Բացի այդ, դու այդ մարդկանց լեզուն կհասկանաս: Պիտի գիտենալ, թե դրանք ինչ մարդիկ են և, եթե դավադրության զոհ են, պիտի աշխատել դրանց լույս աշխարհ հանել»:

---

[1] Բառացի՝ ամրոց կամ շինություն:

[2] Ժեռն թուրքեր կամ երիտասարդ թուրքեր – «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների անվանումը: Կուսակցությունը հիմնվել է 1889 թ.

[3] Գլխարկ:

[4] Վարչակարգի:

Վերջացնելով իր հայտնությունը, որն ինձ ավելի քան հետաքրքրեց, Կոստակին խոր կերպով սկսեց դիտել իմ դեմքը և անհամբեր սպասում էր պատասխանի: Խնդիրը հապճեպ դիպվածով չփչացնելու համար ես նրան խորհուրդ տվի երեկոյան գալ «Արարատ» ճաշարանը, ուր սովորաբար մենք երկուսով ընթրում էինք, ամենքն այդ գիտեին, հետևաբար որևէ առնչություն չէին գտնի օտարականների պատմության ու մեր երկուսի տեսակցության միջև:

Ես իմ ծրագիրը պատրաստեցի մինչև երեկո և ծրագրի հաջող ելքին վստահ՝ անհամբեր սպասում էի երեկոյան մուեզզինի[1] ձայնին, որ խանութս փակեմ ու շտապեմ ճաշարան:

Երեկոյան իրար գտանք ճաշարանում: Ես նրան հայտնեցի իմ ուրախությունը, որ այդպիսի մի կարևոր խնդիր ինձ է հայտնել, և որ ես պատրաստ եմ ամեն միջոց գործ դնել այդ մարդկանց ինչ լինելը հասկանալու համար, միայն թե, ավելացրի ես, քանի որ ես չեմ ճանաչում ոչ Կուբե խանը և ոչ այն խորհրդավոր սենյակը, ուր գտնվում են օտարականներ, պետք է ինքը հետս գա ցույց տալու համար: Վախելու բան չկա: Բավական է, որ մի անգամ ներս ընկնենք սենյակը, մեզ այլևս ոչ ոք չի տեսնի, ու մենք այնտեղ գտնվողների հետ կխոսենք ուզածին պես, քաջալերեցի ես: Կոստակին համաձայնեց: Որոշեցինք ուշ գնալ, երբ թե քաղաքի երթևեկը դադրած կլինի, և թե խանի բակում մեզ ոչ ոք չի տեսնի: Մնում է դարպասը բաց անել տալու խնդիրը: Պետք է դուռը զարկել: Կոստակիի տված տեղեկության համաձայն, երեկոյան ուշ պահուն, դուռը բաց է անում դռնապանի մոտ գտնվող մի աղքատ արաբ, որն այն տեղ ձրի ապրում է և ձրի ծառայում, և որ գլխավորն է, ապուշ մի մարդ է: Այդ հանգամանքը ավելի դյուրացրեց մեր գործ:

---

[1] Մահմեդական հոգևորական, որը հավատացյալներին աղոթքի է հրավիրում:

Գիշերվա ժամը տասն էր (Արևելքում այդ ժամին կյանքն ամեն տեղ մեռած է լինում): Մենք անցանք Հալեպի հնադարյան երկայն ու նեղ բազարի միջով. ցուրտն ու խավար մութը մարդկանց վաղուց քշել էր այդ ծածկված փողոցի անվերջ տաղտկումից: Տեղ-տեղ միայն աղոտ լույսեր էին նշմարվում, որոնք բազարի[1] պահապանների ներկայությունն էին հաստատում: Նրանք էլ ցրտից կուչ եկած իրենց փսիաթների[2] մեջ՝ ուշք չէին դարձնում մեզ վրա:

Հասանք Կուբե խան: Դուռը զարկեցինք՝ շուտով բացվեց, ու մենք ներս մտանք: Ոչ ոք չհետաքրքրվեց մեր մուտքով, մարդ չկար, որ հետաքրքրվեր: Դարպասը բաց անողը աչքերը տրորելով մեզ նայեց անիմաստ հայացքով, իր սովորության համաձայն «Ֆատտալ սեիդի» (Համեցեք, տեր) ասաց, մի կուշտ հորանջեց ու սրթսրթալով վազեց դեպի ախոռի դուռը:

Մենք վեր բարձրացանք պատշգամբ և կանգ առանք այն դռան առաջ, ուր մտել էր առավոտյան դռնապանը: Թղթած պատուհանից նկատելի էր մի աղոտ լույս: Դուռը զարկեցինք կամացուկ: Անորոշ մի ձայն, ավելի շուտ մի մռնչյուն հասավ մեզ, որից ոչինչ չէր կարելի հասկանալ, բայց և այնպես դուռը հրեցինք: Տարօրինակ էր մեր տեսածը. ամայի ու ցուրտ սենյակում, որի ամբողջ կահկարասիքը կազմում էր մի խսիր, պառկած էին երկու եվրոպացի զինվորականներ իրենց ամբողջական համազգեստով: Սկզբում իրենց աչքին չհավատացին, որ մտնողները բարեկամ մարդիկ կարող են լինել: Իմ եվրոպական գլխարկը խորին հավատ ներշնչեց նրանց, և երկուսը մեկեն ոտքի թռան ու զինվորական բարևի կանգնեցի:

Ավելի տարօրինակն այն էր, որ հագուստների ձևն ինձ հիշեցրեց սերբիական սպաներին: Ուսերի վրա դեռ մնում էին զինվորա-

[1] Շուկայի:

[2] Հավանաբար՝ փալասների կամ խսիրների վրա:

կան դպրոցի նշանները: Երկու բարձրահասակ, առույգ երիտասարդներ էին նրանք, 20–21 տարեկան: Երկայն կոշիկները մինչև ծնկներն էին հասնում, գլխներին՝ սերբ զինվորական գլխարկ:

Իմ հարցին ռուսերեն լեզվով, թե ի՞նչ մարդիկ են և այստեղ ինչ են շինում[1], մի ուրախության լուսավոր փայլ անցավ երկուսի դեմքով, և մեկը, որն ավելի լավ գիտեր ռուսերեն, և որի ազգանունը, որչափ հիշում եմ, Ստանիսլավիչ էր, բացականչեց. – Գիշերվա այս ուշ ժամին Աստված է Ձեզ ուղարկել մեզ այս դրությունից փրկելու համար: Մենք ամեն հույս կտրած էինք ոչ միայն մեզ համար հասկանալի լեզվով խոսող, այլ թեկուզ այլախոս մի լավ մարդու հանդիպելուց:

Ես նրան սիրտ տվի, որ կասկած չտանեն, վախը մի կողմ դնեն և պատմեն իրենց վիշտը:

Այդ խոսքի վրա հուզվեցին նրանք, աչքերը թաց եղան ուրախության և գոհության արցունքով ու մեզ հրավիրեցին նստել իրենց վերարկուի վրա, որ փռած էին տակները իբրև անկողնակալ: Ես դեռ այժմ էլ լսում եմ սրտի այն տրոփյունը, որ այնքան ուժեղ կերպով զարկվում էր նրանց կրծքում և զգում եմ ձեռքերիս վրա անտանելի ցրտից պաղած նրանց ձեռքերի հպումը, երբ նրանք, ինձ հյուպատոսի թարգմանի տեղ դնելով, խնդրում էին իմանալ, թե արդյոք հյուպատոսն իրենց կազատի այդ դրությունից: Ես հայտնեցի, որ հյուպատոսի թարգման չեմ և ոչ էլ որևէ պաշտոնական անձ, սոսկ մի մարդ, որ պատրաստ է անել ամեն ինչ իրենց համար, միայն թե նախ պիտի գիտենալ, թե ինչ պայմաններում նրանք այստեղ են հասել:

– Մեր պատմությունը երկար չէ, սկսեց Ստանիսլավիչը, բայց խիստ տխուր է: Անտանելի է, մանավանդ այն, որ մեր ծնող-ազգականները մեր մասին ոչ մի լուր չունեն, և հավանորեն այժմ նրանք

[1] Ինչ են անում, կամ ինչպես են հայտնվել:

կարծում են, թե մենք վաղուց ցրտի ու քքի զոհ ենք դարձել: Օ, ինչպե՛ս են նրանք այժմ լաց լինում ու գիշեր-ցերեկ մեզ որոնում լեռների ու ժայռերի ծերպերում: Հիմա գոհ ենք նրանով, որ եթե չազատվենք էլ, գեթ Դուք իմաց կտաք նրանց մեր կառավարության միջոցով, որ մենք կորսված չենք ու գտնվում ենք թուրքերի ձեռքում:

– Մենք երկուսս էլ Սև լեռնեցիներ ենք (Черногория)[1],– քիչ շունչ շունչ առնելով շարունակեց Ստանիսլավիչը,– Սովորում էինք Բելգրադի զինվորական դպրոցում, ապագայում սպաներ դառնալու համար, քանի որ Սև լեռան կառավարությունը չուներ զինվորական դպրոց: Դեկտեմբերի վերջերին մենք նամակ ստացանք, որոնք [ուր] մեզ բացատրում էին, թե Ցետինեում[2] նույն ծրագրով զինվորական դպրոց է բացվում, ուրեմն փոխանակ օտարության մեջ մնալու, կարող էինք գնալ հայրենիք: Երկուսով մեր գրքերը վերցրինք ու ոտքով ճանապարհ ընկանք: Մեզ համար զվարճություն էր ոտքով ճամբորդել, մեր երկրի գեղեցիկ լեռները ճեղքել և մտնել արծիվների բույնը: Մեր որոշումը իմաց տվինք մեր հարազատներին նամակով: Եվ նրանք մինչև հիմա էլ սպասում են մեր գալստյան: Մեր ճամբորդության ընթացքում լեռներում հսկայական ձյուն տեղած լինելով՝ լեռնանցքները խափանված գտանք, անմիջապես չկարողացանք սահմանն անցնել, ստիպված եղանք օրերով այս ու այն կողմ թափառել ճամբա գտնելու մտքով: Վերջապես մի գյուղ նկատեցինք, ուրախացած այն կողմը դիմեցինք: Դեռ գյուղ չհասած՝ մեզ շրջապատեցին թյուրք սահմանապահ զինվորներ, մեզ կապեցին ու գյուղ տարան: Նոր միայն գլխի ընկանք,որ սխալմամբ թրքական սահմանն ենք անցել: Մեզ արգելեցին սերբ գյուղացիների հետ տեսնվել, որով կարող պիտի լինեինք մեզ ձերբակալողնե-

[1] Չեռնոգորիա – թարգմանաբար՝ Սև լեռներ:

[2] 1878 թ. Ցետինեն Չեռնոգորիայի մայրաքաղաքն էր: Ներկայումս համարվում է Չեռնոգորիայի պատմական և մշակութային մայրաքաղաքը:

րին բացատրել մեր սխալը: Մենք թյուրքերեն մի բառ չգիտենք: Մեզ մոտ եղած գիրք, թուղթ, մատիտ, ամեն ինչ վերցրին ու հետևյալ օրը մեզ կայարան հասցնելով՝ երկաթուղի նստեցրին և ուղղակի Կ. Պոլիս հասցնելով՝ բանտ նետեցին: Մի թյուրք զինվոր դրեցին մեր դռան առաջ և արգելեցին մարդու հետ տեսնվել: Եթե թուրքերեն իմանայինք, թերևս հնարավոր լիներ Սև լեռան դեսպանին մի կերպ մեր մասին իմաց տալ: Քառասուն օր միևնույն սենյակում փակված մնացինք: Մեզ ամեն օր քննում էին, հարցուփորձի ենթարկում: Մենք նրանց չէինք հասկանում, նրանք էլ մեզ: Միայն ենթադրում էինք, որ մեզ լրտեսների տեղ են դնում: Թարգման էինք պահանջում: Մեր պահանջն անպատասխան էր մնում: Վերջապես սկսեցին մեզ մի կերպ հասկացնել, թե եթե ուզում ենք մարդու պես ապրել, պիտի թուրք դառնանք: Մեզ համար ֆեսեր բերին, որ գլուխներս դնենք, պատռեցինք այդ կարմիր ընծաները և միշտ գերադասեցինք մեր սովորական հագուստով մնալ, ինչպես մեզ հիմա տեսնում եք, քան թե այլանդակվել: Մեզ սպառնացին սպանել, օրերով անհաց թողին, գիշերներով անհանգիստ արին, որ չքնենք: Վերջը նորից մեղմացան, նորից առաջարկեցին մահմեդականություն ընդունել և թուրք սպաներ դառնալ, խոստանալով մեծ-մեծ ռոճիկներ նշանակել մեզ: Մենք ընդիմացանք ու մերժեցինք բոլոր առաջարկները մինչև վերջ ու պահանջեցինք հայտնել մեր դեսպանին, բայց անօգուտ: Մի գիշեր էլ հանկարծ մեզ բանտից հանեցին ու առանց հայտնելու, թե ուր են տանում, հասցրին նավահանգիստ ու նավ նստեցրին: Թե որ ուղղությամբ էինք գնում մենք, դժվարանում էինք հասկանալ, քանի որ նավում էլ փականքի տակ էինք և անցած տեղերն բոլորովին անծանոթ: Միշտ այն սարսափի գիտակցությունն ունեինք, թե ահա կգան ու մեզ արգելքից [նավասենյակից] հանելով ծովը կշպրտեն: Եթե Պոլսում անկարող եղանք մեր դեսպանին իմաց տալ մեր մասին, մտածում էինք, այլևս

փրկվելու հույսներս կորած են ու բախտի բերմունքին հանձնված, պիտի գնանք, ուր որ մեզ քշեն:

Տասնևմեկ օր ծովի ճամբորդությունից հետո մեզ ծովափ հանեցին մի անծանոթ [վայր], ուր թուրքերեն չեն խոսում, որից մի քանի բառ արդեն սովորել էինք, այլ արաբերեն: Նավահանգստից մեզ միմյանց կապած 7 օրվա տանջալից ու ցեխոտ ճանապարհով մեզ ոտքով քաշ տվին հասցրին այստեղ: Բերողը մի ձիավոր ոստիկան էր և մեզ միշտ մտրակում էր, որ կամաց ենք գնում: Ցերեկը հասանք այստեղ ու ոտերիս ցավից չենք կարողանում շարժվել: Այս սենյակը մտնելու րոպեից մենք պառկած ենք այս խսիրի վրա ու հուսահատ սպասում ենք, թե էսօր-վաղը մեզ անպատճառ պիտի սպանեն:

Այսօր երեկոյան դեմ մեզ բերող ոստիկանը եկավ ու հայտնեց, որ վաղը պիտի ճանապարհվենք: Նա ձեռքով հասկացրեց, թե շատ հեռու ենք գնալու: Եթե մի ժամ ևս ոտքով տանելու լինեն, մենք անկարող կլինենք շարժվելու: Խնդրում ենք Ձեզ, իբրև եվրոպացի, մի կերպ իմաց տաք տեղիս ռուսական հյուպատոսին:

Նրանց ևս հայտնի է, որ նման դեպքերում Բալկանյան նորազատ երկրների բնակիչներին Թուրքիայում պաշտպանում են ռուսական ներկայացուցիչները: Այս մտքով էլ երկու աքսորյալները հուսալից աչքերով ինձ էին դիտում: Ես սրտապնդեցի նրանց, հուսադրելով, որ մինչև առավոտ իմաց կտրվի ոչ միայն ռուսական հյուպատոսին, այլև եթե հարկ դատվի, նաև մյուս բոլոր հյուպատոսներին: Իմ այս խոստումը նրանց կյանք տվեց: Չգիտեին ինչպես արտահայտեն իրենց գոհունակությունը և մանավանդ բախտավորությունը, որ այսպիսի մի հեռավոր տեղում պատահաբար բարեկամ մարդիկ են հայտնվում ու իրենց անչափ մխիթարում:

– Մի գիշեր ևս դիմացեք, և ես մեծ հույս ունեմ, որ դուք վաղն ազատ պիտի լինեք,– ասացի ես ու անմեղ հալածականների ձեռքե-

րը սեղմելով՝ դուրս եկանք: Կոստակին, որ ոչինչ չէր հասկացել մեր խոսակցությունից, երկար ժամանակ ինձ բաց չթողեց, մինչև որ մի առ մի չպատմեցի խեղճերի գլխով անցածը:

– Օ, ես շատ անգամ եմ լսել, որ այդպիսի բարձրահասակ, բարեկազմ ու առողջ երիտասարդներ, որոնք թուրքերեն չեն հասկանում, թուրք կառավարության ձեռքն ընկնելուն պես գաղտնի ճանապարհներով քշվում էին մինչև Մոսուլ, մինչև Բաղդատ և այնտեղ միառժամանակ բանտերում պահվելուց հետո, երբ համաձայնում են մահմեդական դառնալ, ազատ են թողնվում ու լավ-լավ պաշտոններ ձեռք բերում: Նրանց տալիս են գեղեցիկ աղջիկներից կանայք: Շատերն էլ, դրանցով ու ոռճիկով շլացած, թուրք կառավարության համար դառնում են ձեռնտու գործիք ու երբեմն էլ խայտառակ կերպով, քան թուրք պաշտոնյաները, հարստահարում են աղքատ ժողովրդին: Սրանց տանում են, որ իրենց զինվորական դասն ազնվացնեն: Այս րոպեին քանի-քանի եվրոպացիներ կան, որոնք թրքացել են ու մեծ պատիվներ են վայելում թե՛ Յըլդըզում և թե՛ Տաճկաստանի բոլոր հայտնի քաղաքներում,– այսպես վերջացրեց Կոստակին իր երկար բացատրությունը:

Խնդիրը պարզ էր: Այս գիշեր կորցնելու չէինք, եթե ոչ հենց որ կառավարությունը հասկանա, թե այդ երեկո նրանց հետ տեսնվող է եղել, իսկույն հետքները կկորցնեն: Գիշերը գործել պետք էր: Կոստակին հանձն առավ անմիջապես գնալ հյուպատոսարան, ուր նրան շատ լավ ճանաչում են ու վստահում, ու պատմել բոլորը, ինչ որ լսեց: Եթե մինչև առավոտ աքսորյալներին չեն ազատի, նա կգա ինձ մոտ, ու միասին կգնանք ու կաշխատենք: Մենք բաժանվեցինք իրարից այն հավատով, որ առավոտյան՝ երկու տարագիրներն ազատված կլինեն:

Առավոտյան վաղ, դեռ արևը չծագած, մի գեղեցիկ կառք կանգ առավ Կուբե խանի դռան առաջ: Հետաքրքիր անհատները շրջա-

պատեցին կառքը, երբ տեսան նրա մեջ ռուս հյուպատոսարանի թարգմանին և երկու ղավազներին[1] իրենց պաշտոնական հագուստներով: Ղավազներն իսկույն դուրս թռան կառքից ու թարգմանին առաջնորդեցին դեպի խանի մեծ դարպասը: Դուրս կանչվեց իսկույն խանի տերը, պահանջ տրվեց իսկույն բերել երկու օտարականները: Ոստիկանները, լրտեսները այս ու այն կողմ վազ տվին, բայց արդեն ուշ էր: Առանց երկար սպասելու երկու ղավազները, թարգմանի նշանի վրա, ներս վազեցին, մտան սենյակ ու երկու գերիներին դուրս բերին: Ամբոխի մեջ մի իրարանցում ընկավ: Բոլորը տեսան, որ կառավարությունն անզոր է դիմադրել 3 մարդու, որոնք այդ րոպեին այդքան ահարկու էին երևում: Մի րոպե չանցած կառքը հետ դարձավ՝ երկու Սև լեռնեցի երիտասարդներին թռցնելով ուղիղ դեպի ռուսական հյուպատոսարան:

Հյուպատոսարան մտնելուց հետո ոչ ոք կառավարական շրջանակներից չհետաքրքրվեց, թե հնարավոր չէ արդյոք նրանց այնտեղից դուրս բերել: Կապիտուլյացիայի օրենքով եվրոպական ներկայացուցչությունից մարդ հանել անկարելի է, եթե հյուպատոսարանի կամքով չէ այդ:

Հյուպատոսը նրանց պահեց իր մոտ ու հայտնեց, որ նրանք ազատ կարող են շրջել քաղաքում՝ առանց վախենալու, որ իրենք կրկին կարող են վտանգվել, քանի որ կառավարությունը լավ գիտե, որ նրանք հյուպատոսարանի պաշտպանության տակ են, մինչև որ Պոլսի դեսպանի միջոցով կստուգի իրենց պատմության ճշմարտությունը և ապա նրանց կուղարկի իրենց հայրենիք:

Այդպես էլ եղավ: Չանցած մի ամիս՝ նրանք արդեն որդեկորույս ծնողների հարկի տակ էին Ցետինեում: Թյուրք կառավարությունը շատ ընկավ այս ու այն կողմ, շատ աշխատեց գտնել իր դավը խանգարողին: Սակայն գաղտնիքը լավ ձեռքերում էր գտնվում:

[1] Քաֆազ-դևսպանատան կից սուրհանդակ:

Այնուհետև Կոստակին մնաց իմ ամենալավ բարեկամը և ամեն անգամ ինձ պատահելիս, խորհրդավոր կերպով ասում էր. «Իմ կյանքում մարդու վատություն չեմ արել, իսկ լավություն շատ քիչ: Դրանցից ամենալավն այն եղավ, որ քեզ վստահեցի նման մի գաղտնիք, իսկ այս երկրում այդպիսի մի «ոճիր» առանց մեծ պատժի չի անցնում: Իմ ծեր հասակում այդ լավությունը կմնա որպես ամենամեծ մխիթարություն ինձ համար»: Եվ նա մնաց իմ մտերիմ բարեկամը դեռ շատ երկար, երբ ես այդ երկրում կրում էի բանտարկյալի դառն կյանքը, և երբ շատ ծանոթներ իմ գոյությունն իսկ մոռացել էին, նա էլի ինձ հիշում էր և տեղեկություններ հարցնում իմ մասին:

Ու հիմա, երբ ես ազատ եմ, շատ հաճախ եմ հիշում այդ ազնիվ ծերուկին, իր կարմիր առողջ դեմքով, իր ալևոր միրուքով, իր մինչև գետին կռացած մեջքով ու մշտական ծիծաղ նայվածքով:

Հիշում եմ նրան, և այդ հիշողությունը ինձ մեծ հաճույք է պատճառում:

Այս միջադեպից անցան բավական օրեր, Տիգրանի խնդիրը չպարզվեց, ուստի և ես ստիպված էի սպասել Հալեպում: Ես անհամբեր էի դարձել, քանի որ այդ քաղաքում անելիք չունեի: Մի օրվա ժամավաճառությունն իսկ հանցանք էր ընդհանուր գործի հանդեպ: Հալեպի իմ գործունեությունը ընդհանուր աշխատանքիս նախաբանն էր, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ բուն աշխատանքս սկսվելու էր այսուհետև: Մինչև այժմ ես աշխատում էի հայկական շրջանակի սահմաններից դուրս, ուրեմն և իմ անձնավորությունը դեռ այնքան կասկածի առարկա դառնալ չի կարող: Այսուհետև է, որ կասկածները կարող են ավելի լուրջ դառնալ: Բնական է, որ ես ավելի քան զգույշ պիտի լինեմ: Գլխավոր մտահոգությունս այն է, որ ձերբակալվելիս իմ պատճառով որևէ մեկը, որ գործակից է ինձ, չձերբակալվի: Ինձ վրա վստահ եմ այն տեսակետով,

որ մոտս ոչ մի կասկածելի բան չկա, ոչ մի գրություն, ոչ մի անուն, ոչ մի հասցե: Ինչպես վերևն էլ ասացի, մետաքսի վկայականս էլ մոտս չէի պահում, հանձնել էի վստահելի ձեռքերի: Ես պիտի Հալեպից ճանապարհվեի առանց որևէ հանձնարարականի: Մինչև այժմ ումն ուզում էի տեսնվել, ինքս էի դիմում, այսուհետև բուն հայկական վայրերում, ուր ոստիկանական ու լրտեսական պրպտումները կրկնակի ու եռակի էին, տեղական գործիչներն ինձ պիտի գտնեն ու տրված նշանով ներկայանան ինձ: Երբ ես հասնեմ մի քաղաք, օրինակ՝ Այնթապ, Հալեպից կոմիտեն գրում է այնտեղի ամենավստահելի գործչին, որի մասին ես ևս դրական կարծիքի եմ[1]: Նամակը ուղարկվում է հատուկ մարդու ձեռքով ու գրված է ծածկագրով: Ստացողը միայն կարող է բաց անել և կարդալ: Նա է, որ ինձ պիտի ներկայանա առանց իր ընկերներին հայտնելու: Ինձ հետ տեսնվելուց հետո միասին կորոշենք իր ընկերներից էլի որի հետ անհրաժեշտ է տեսնվել: Այս նույն եղանակը գործ պիտի դնենք և հաջորդ քաղաքն անցնելիս, այս նամակ գրողը կլինի նախորդ քաղաքի մարմինը, և այդպես հաջորդաբար:

Այնթապի ճանապարհի վրա է Քիլիս քաղաքը, ուր համեմատաբար քիչ հայություն կա: Լինելով փոքրիկ գավառական կենտրոն, հեղափոխական տեսակետից կարևորություն չի ներ կայացնում, ուստի Հալեպի մարմնի հետ համաձայնության ենք գալիս, որ այնտեղ որևէ մեկին տեսնվելու կարիք չկա, որ ավելի լավ է, Այնթապի մարմինը կազմակերպելուց հետո տեղական մի անդամին ղրկել Քիլիս՝ այնտեղի հետ կապվելու համար: Բայց ես Քիլիս պիտի մտնեմ և մի 10–15 օր պիտի մնամ: Ես ամենքի համար ֆոնոգրաֆչի եմ [և] մի գավառական կենտրոն թողնել, անցնել չեմ կարող: Պետք է այնտեղ էլ դրամ վաստակեմ:

[1] Այսինքն՝ վստահում եմ:

Մինչ այս, մինչ այն ապրիլն էլ անցավ, և Ալեքսանդրետի տարածայնությունը մի վերջնական լուծումի չհանգավ: Հատիկն այլևս Տիգրանի կողմից վտանգի մասին չի խոսում իր նամակներում, դրանով, իհարկե, այն տպավորությունը թողնելով ինձ վրա, որ Տիգրանն այլևս նախկին պահանջները չի դնում, որ նա համակերպվել է կազմակերպությունից դուրս մնալու մտքին: Մյուս կողմից ես էի այն համոզման գալիս, որ Տիգրանն իմ նամակն ստանալով զգաստացած կլինի, և թերևս մենք կարող կլինենք առանց արգելքների մեր սկսած գործը շարժել դեպի հայկական գավառները:

Հանդիպող ծանոթ թուրքերին հայտնում եմ, որ այստեղ այլևս վաստակ չկա, պիտի շարունակեմ ճանապարհս դեպի ներսերը: Ինձ խորհուրդ են տալիս ուղղակի գնալ դեպի Ուրֆա: Դա իմ գործին չի գալիս: Ֆուադ բեյ Մյուդարրիս զադեի հետ եմ խորհրդածում: Նա առաջարկում է անցնել Այնթապ. հարուստ քաղաք է և այդպիսի նորությունների սիրահար: Նա պատմում է, որ բարեկամ է թե՛ Քիլիսի և թե՛ Այնթապի գայմագամներին և ինքը նրանց հանձնարարականներ կտա, որպեսզի որևէ արգելք չհանեն մեքենայիս դեմ և ընդհակառակը՝ աշխատեն ինձ շահեցնել: Ֆուադ բեյն իսկապես տվավ այդ հանձնարարական նամակները, իսկ Թուրքիայում այդպիսի գրությունները խոշոր դեր են կատարում: Նպատակս է Զեյթուն հասնել: Մարաշի համար էլ մի այդպիսի հանձնարարական պետք էր, բայց Ֆուադ բեյը ցավ հայտնեց, որ այնտեղի բարձր պաշտոնյաներից ոչ մեկին չի ճանաչում:

[1899 թ.] մայիսի 5-ին ճանապարհվեցի ֆուրգոնով դեպի Քիլիս: Երկու օրվա ճամբա է: Ֆուրգոնում կային ուրիշ ճամբորդներ: Ես իմ սովորական կեպի գլխարկով եմ: Մի հասակավոր թուրք հետաքրքրվեց ինձանով, երբ իմացավ, որ այդպիսի խոսող մեքենայի տեր եմ, ցավ հայտնեց, որ Թուրքիայում ուզում եմ փող աշխատել, միևնույն ժա[մանա]կ կեպի գլխարկով եմ շրջում: – Այդ արտաքի-

նով մեկի մոտ ոչ ոք չի գնա: – Լավ կանես որդի, շապկատ[1] պահես և մի գեղեցիկ ֆես ծածկես[2]: Թե՛ շնորհքով մարդու կնմանես և թե՛ փող կվաստակես:

– Ճիշտ է ասում էֆենդին, ճիշտ,– վրա բերին այս ու այն կողմից: Հալեպում ես արդեն այդ հոգսը քաշել էի, գիտեի, որ ֆեսով ոչ ոքի ուշադրությունը չեմ հրավիրի իմ վրա, մինչ գլխարկը աչք է ծակում: – Թող էֆենդու ասածը լինի: Այս րոպեյին ֆես կդնեմ,– ասացի ես, սնդուկս բաց արի, ուր մեքենաս էր սարքված[3] և այն տեղից ֆեսը հանելով՝ ծածկեցի: – Օ՛, մաշալլա, մաշալլա, ինչ սազում է»,– աղաղակեցին ամեն կողմից: Այնուհետև նկատեցի, որ ամենքի վերաբերմունքը փոխվեց դեպի լավը, խոսելով, ծիծաղելով հասանք Քիլիս:

Իջա քաղաքի գլխավոր խանը, տեղավորվեցի իմ սենյակում ու առանց մարդու հետ տեսնվելու, սարքեցի մեքենան, ռեկլամի արկղը լուսամուտից կախեցի հրապարակի վրա, երկու կողմը տաճկական դրոշակները կախեցի: Հաճախորդները սկսեցին գալ: Կես ժամ չանցած մի ոստիկան մտավ ներս ու հայտնեց, որ գայմագամ բեյն ինձ կանչում է: Իմ հարցին, թե որտեղ է գայմագամը,– սարայումն է,– ասաց ոստիկանը ու ձեռքով լուսամուտից ցույց տվեց հրապարակի դիմաց մի մեծ շենք: Սենյակս կողպեցի ու ոստիկանի հետ գնացի սարայ (կառավարություն): Ինձ առաջարկեցին թեմետտի՝ տուրքի[4] տեսչի սենյակը: Ինձ տեսնելուն պես տեսուչը բավական տաքացած բացականչեց. – Դու ո՞վ ես, որ ինքնագլուխ օսմանյան դրոշակ ես պարզել: Ի՞նչ մարդ ես, ինչու՞ ես եկել: Իսկույն նկատեցի, որ շապկայիս հետ այդ ձևով [ոչ] մի պաշտոնյա չէր խոսիլ: Բացատրեցի գալուս նպատակը, հայտնեցի, որ կառավարութ-

[1] Գլխարկ
[2] Այսինքն ֆես կրես:
[3] Գտնվում:
[4] Հարկահանության:

յան թույլ տվությունն ունեմ և ավելացրի, որ հատուկ նամակ էլ ունեմ գայմագամ բեյի վրա[1]: Այս որ լսեց, տեսուչը մեղմացավ և ասաց, որ ինձ տանեն գայմագամի մոտ:

Մտա գայմագամի սենյակը, Ֆուադ բեյի նամակը դրի առաջը և ասացի, որ Ֆուադ բեյը սելամ է ուղարկել: «Ալեյկում սելամ[2]»,– ասաց գայմագամը, հրավիրեց ինձ նստել: Նամակը կարդաց և ասաց. – Այդ ին՞չ մեքենա ես բերել: Առաջ կբերեն կառավարությանը ցույց կտան, իրավունք կստանան, նոր կհայտարարեն: Ես բացատրեցի, որ երկրի կարգին անծանոթ լինելուս պատճառով է եղած այդ թյուրիմացությունը: Մի պաշտոնյա միջամտեց. – Մեքենան թող բերի, տեսնենք: – Հա՛, հա՛, լավ կլինի,– ասաց գայմագամը:

Դուրս եկա, երկու ոստիկան հետևեցին ինձ: Մեքենա[ն] տվի նրանց, եկանք գայմագամի մոտ: Արաբական մի երկու եղանակ երգել տվի, մի քանի եվրոպական մարշեր[3] նվագել տվի՝ ներկաների հիացմունքը գագաթնակետին հասավ: – Բու նե գյուզել իշ, մաշալլա՛,[4]– գոռաց գայմագամը: «Է՛յ մյուդիր էֆենդի»[5],– դարձավ տուրքի տեսչին, որ մինչ այդ մտել էր գայմագամի սենյակը, ինչպես և սարայի բոլոր ծառայողները,– ի՞նչ թեմետուն տուրք, ի՞նչ բան, օտար մարդ է, մեր հյուրն է, այսպիսի գեղեցիկ մեքենա է բերել մեր երկիրը և դեռ տուրք էլ՞ պիտի տա: Այդ չեղավ՝ տուրք-մուրք չկա: Գնա որդիս, դարձավ նա ինձ, գնա և ուզածիդ պես փող աշխատիր: Ոչ ոք այդ մարդու քեֆին չդիպչի»: Այս խոսքերի վրա դուրս եկա ու իմ գործը շարունակեցի:

Դեռ թուրքական եղանակներ չունեի: Արաբականը, եվրոպականը [բնակչության] պահանջները չէր բավարարում: Հետաքրքր-

---

[1] Համար. նրան հասցեագրված:
[2] Բարև:
[3] Քայլերգ:
[4] Փառք Աստծո, ինչ լավ աշխատանք է:
[5] Հարկահավաք պաշտոնյա:

վեցի, իմացա, որ Քիլիսում ժողովրդական շատ հայտնի երգիչներ կան: Կանչել տվի, ներկայացան երկու հսկա տղամարդիկ, ժողովրդից սիրված երգիչներ՝ Շիմրինն օղլու և Վեսինն օղլու: Երկուսից էլ նոր երգեր վերցրի շատ հաջող: Քաղաքում տարածվեց, որ մեքենայի մեջ կան իրենց հայտնի երգիչների երգերը: Մի քանի օր այնպիսի բազմություն էր հավաքվում սենյակիս շուրջ, որ անցնելը դժվարանում էր:

Քիլիսում ընդամենը մնացի 15 օր: Այդ միջոցին շատ անսպասելի կերպով պատահեցի բժիշկ Նիկողոսին՝ Ալեքսանդրետի ֆրանսիական հյուպատոսի թարգմանին: Նա պաշտոնական գործով եկել էր Այնթապ ու վերադառնում էր: Նրա կառքը կանգ առավ նույն խանի բակում, ուր ես էի իջևանած: Ձիերը կերն ուտելուն պես պիտի մեկներ: Սենյակիս առջևով անցնելիս տեսավ մեքենաս, ներս մտավ: Դռները փակեցի: – Այս շատ լավ եղավ, որ Ձեզ պատահեցի,– ասաց նա: – Ձեզ շուտով կմատնեն: Հալեպի մեր կազմակերպության ձեռքն է ընկել Տիգրանի մի նամակը՝ գրված իր մի համախոհին, որի մեջ հետևյալ նախադասությունը կա. «Շուտով՝ զինքը կհամբուրեն Հուդայի համբույրով»: Այդ խոսքերը Ձեզ են վերաբերում: Հալեպի ընկերներն այդ նամակը մեզ էին ղրկել ու խնդրել, որ զգուշացնենք, որ հանկարծակիի չգաք: Թե՛ Հալեպի և թե՛ Ալեքսանդրետի մարմինների կողմից խնդրում եմ անմիջապես դուրս գալ երկրից, մի առ ժամանակ անցնել Եգիպտոս, ապա երբ կտեսնենք վտանգը անցած, կրկին կվերադառնաք: Հատկապես անհանգստացել են հալեպցիները:

Մի գուցե քաղաքական հալածանքները գլուխ բարձրացնեն հայերի դեմ: Ես չհամաձայնեցի այդ առաջարկին այն հիմունքներով, որ այսքան դժվարություններից հետո հազիվ մեզ հաջողվել է մտնել Երկիր և որոշ գործ կատարել, այժմ մի մարդու սպառնալիքից վախենալով՝ լքել գործը ու հեռանալ, հեղափոխականին վայել

գործ չէ: Մյուս կողմից ինձ հետ անձնապես ծանոթների մասին Տիգրանը չգիտի, հետևապես մատնելու դեպքում պիտի մատնանշի ինձ ու Հատիկին: Հատիկը ռուսահպատակ է, նրան անմիջապես ռուսների ներկայացուցչությունը[1] կպահանջի, կմնամ ես: Ես էլ կնայեմ հանգամանքներին: Հավանորեն երկար քննությունից հետո ինձ արձակեն, հակառակ դեպքում պատիժս կկրեմ կամ թե, եթե կարիք զգացվի, կհայտնեմ ռուսահպատակ լինելս: Բայց այս քայլը կանեմ միայն այն դեպքում, եթե ռուսահպատակության հայտնելս գործին կամ նույնիսկ մի անհատի ամենաթեթև կերպով չպիտի վնասի: Այդ կողմից ես կանեմ այն բոլորը, ինչ որ թելադրում է հեղափոխականի անշեղ կամքը և բարոյական ըմբռնումները: Գալով Հալեպի ընկերների երկյուղին՝ ես խնդրում եմ, հատուկ նամակ գրել և իմ կողմից վստահեցնել, որ իրենցից ոչ ոք չպիտի տուժի այս խնդրում, ինչ որ կապված է անձնապես ինձ հետ:

Այս բոլորից հետո բժիշկը չկարողացավ պնդել իր առաջարկի վրա ու խոստացավ հալեպցիներին գրել այն բոլորը, ինչ որ խնդրեցի գրել: Վերջը մի երկու խոսքով բացատրեցի, որ հեղափոխական գործը առանց զոհողությունների չի լինի, բայց զոհողությունները պետք է խելացի կերպով արվեն, որ գործի հաջողության համեմատականից դենը չանցնի: Ներկա դեպքում տուժողը ես եմ լինելու: Ես գիտակցում եմ գործի լրջությունը, ուստի և գիտակցորեն մնում եմ վտանգի շրջանում, ցույց տալու համար այն հիմնականը, որ ով զոհողություններ է պահանջում ուրիշներից, նախ ինքը պիտի պատրաստ լինի զոհողություններ անելու: Բժիշկն այս խոսքիս վրա այլայլվեց: – Ես խոսք չեմ գտնում Ձեզ առարկելու: Արեք, ինչպես Դուք եք կամենում:

Այնուհետև ես ասացի, թե ինչ է մնում անելու մեր դրսի ընկերներին, եթե ես ձերբակալվեմ, որ իրենք չպետք է հուսահատվեն:

[1] Նկատի ունի հայ պատուսարանը:

Պետք լինի դրսից, Եվրոպայից տասնյակ ինձանից լավ ուժեր կգան: Հիմնականն այն է, որ Երկրի մեջ հեղափոխական օջախը պիտի վառ պահել: Իսկ դրանք հենց այն անձնավորություններն են, որոնց կարելի է եղել ի մի բերել հանուն գործի: Ես կկրեմ բանտարկյալի կյանք, և դա ծանր չի լինի, եթե սկսված գործը կանգուն մնա ու կշարունակվի նույն թափով:

Բժիշկ Նիկողոսը վստահեցրեց, որ ինքը պատրաստ է անձամբ գործին անձնվիրաբար ծառայել և նույն ոգով խոսել ու գրել մեր նորակազմ մարմիններին: Այնուհետև ես գետին շոշափեցի, թե արդյոք հնարավոր չէ՞ Տիգրանին ոչնչացնել: Ես չուզեցի ասել, որ վաղուց այդ մտքով հրահանգներ եմ տվել Հատիկին: Բժիշկը հնարավոր չգտավ այն պատճառաբանությամբ, որ ներկայումս Հայկական հարցը Կիլիկիո շրջանում համարյա թե հանգած դրության մեջ է. կառավարությունը [իր կողմից Հայկական հարցը] մոռացության տված [է], ու կյանքը մասամբ նորմալ բնույթ է ստացել: Նման մի քայլ նորից կոտորածների տեղիք կտա ու հեղափոխական աշխատանքների աշխուժացումով կբացատրվի: Իսկ այդ հանգամանքը հայերի դեմ տրամադրությունները լարած կպահի: Մեր աշխատանքը թող լռիկ, մնջիկ կատարվի, առանց ցնցումների: Ես չպնդեցի իմ առաջարկի վրա: Մենք բաժանվեցինք: Նա մեկնում էր Ալեքսանդրետ ուղղակի: Խնդրեցի մի վերջին կետ, որ նա ճանապարհը շեղի ու մտնի նախ Հալեպ ու նոր անցնի Ալեքսանդրետ: Ինչ որ պիտի գրեր Ալեքսանդրետից Հալեպ, ներկա դեպքում գրելու կարիք չէր լինի, որ ինքնին միշտ վտանգավոր էր, այլ անձամբ կխոսեր ու կքաջալերեր:

Բժիշկը տաք բնավորության մարդ էր: Գործի էր կպչում ոգևորությամբ և համառությամբ: Վստահ էի, որ նա կարող պիտի լինի հալեպցիների ընկած տրամադրությունը բարձրացնել: Այդ կետը նա կատարեց հաջող:

Ես հիմա շտապում էի: Աշխատում էի շուտ հասնել Զեյթուն: Հեռու չէ, բայց առանց քիչ թե շատ կանգ առնելու ճամփի վրա գտնվող քաղաքները, կասկածի տեղիք կտամ: Պետք է երևա, որ իմ շարժումները կապված են միայն դրամ վաստակելու հետ: Մյուս կողմից գործը պահանջում է, որ ես Այնթապում մի քիչ ավելի զբաղվեմ կազմակերպական գործով:

[1899 թ.] մայիսի 21-ին ես Այնթապում էի: Հասնելուս հաջորդ օրը ներկայացա սարայ[1] գայմագամին: Մի սիրալիր մարդ էր Իսմայիլ բեյ անունով, ծագումով լազ՝ Տրապիզոնի կողմերից: Տվի Ֆուադ բեյի հանձնարարականը: Հետաքրքրվեց իմ զբաղումով, կանչեց թեմետուն տուրքի տեսչին և պատվիրեց առանց արգելքի և առանց տուրք պահանջելու թույլ տալ ինձ դրամ վաստակել: Ապա դառնալով ինձ՝ ֆրանսերեն ասաց.

– Գնացեք Ձեր գործին, եթե որևէ դժվարության հանդիպեք, դիմեցեք ինձ:

Դուրս էի գալիս, պաշտոնյաներից մեկը կամացուկ ասաց.

– Լավ կլինի մեքենադ բերես և գայմագամ բեյին ցուցադրես:

– Անմիջապես,– ասացի ու մի ոստիկան խնդրելով անցա սենյակս, որ գլխավոր փողոցի վրա մի օթելումն էր, մեքենաս տվի ոստիկանին, ես էլ վերցրի գլանները, եկա սերայ: Պաշտոնյաները հավաքվեցին գլխիս: Մի ժամի չափ ցույց տվի բոլոր կտորները: Ամենից շատ հավանեցին Քիլիսում վերցրած թուրքական եղանակները: Բոլորն էլ շատ գոհ մնացին, և ամեն մեկն աշխատում էր ինձ որևէ կերպ ծառայություն ցույց տալ:

Գործս հաջող էր ամեն կերպ: Պետական շրջանակները շատ բարյացակամ վերաբերմունք էին ցույց տալիս, ժողովրդի, այցելուների կողմից որևէ նեղություն չկրեցի, չպատահեց մի դեպք, որ մտնեն, լսեն գործիքս ու չուզենան դրամ տալ: Այնպես որ կարիք չե-

[1] Սարայ – տվյալ դեպքում գավառապետի պաշտոնատեղին:

ղավ գայմագամին անհանգստացնել որևէ բողոքով իմ կողմից: Փողոցում պատահելիս կանգնում էր, հետաքրքրվում իմ դրությամբ, իմ վաստակով և իր գոհունակությունն էր հայտնում, երբ ես որևէ բողոք չէի ունենում:

Ֆուադ բեյը Հալեպի արիստոկրատ ամենաաչքի ընկնող Մյուդարիս ընտանիքից էր, որի հայրը՝ Զեքի փաշան, մեջլիսի[1] անդամ էր և խոշոր ձայն ուներ վիլայեթի բոլոր հասարակական գործերում: Ամեն մի պաշտոնյայի համար իդեալ էր այդ ընտանիքի բարեկամ լինելու: Ֆուադ բեյի որևէ առաջարկ ուրախությամբ էր ընդունվում ու գործադրվում: Ֆուադ բեյն այս դեպքում իմ պաշտպանն էր, ոչ ոք չէր ուզենա ինձ դժգոհ թողնել:

Ես Այնթապում մնացի մի ամիս: Երկար սպասեցի, մինչև որ հանձնարարված անձնավորությունը՝ Գրիգոր Թավուգյանը, ներկայացավ ինձ: Անմիջապես գործերի մասին տեղեկություն տվեց: Պարզվեց, որ համարյա բոլոր աչքի ընկնող գործիչները մեր կազմակերպությանն են հարել: Հարկավոր է միայն, որ դրսից եկող ընկերները լուսաբանեն մեր անելիքները և գործունեության գործնական ուղիներ ցույց տան:

Պետք է ասել, որ Այնթապը Արևելյան Կիլիկիայում իր կրթական մակարդակով շատ բարձր տեղ էր գրավում: Բացի հայկական բավական առաջադեմ դպրոցներից, այդ տեղ վաղուց ի վեր գոյություն ուներ ամերիկյան քոլեջ, ուր դասախոսում էին հայտնի պրոֆեսորներ: Շատերը ավարտելուց հետո գնում էին Ամերիկա և այդտեղ բարձրագույն կրթություն ստանալով, իբրև պատրաստի ուժեր վերադառնում էին Թուրքիա՝ այս ու այն քաղաքում հիմնված ամերիկյան կոլեջներում դասախոսելու համար: Խմորը պատրաստ էր մեծ չափով, պետք էր ներքին աշխատանք, որպեսզի բողոքական պաստորների կրոնական ազդեցությունից զերծ պահեինք նոր

[1] Խորհրդարանի:

սերունդը և նրանց ապազգային պրոպագանդայի դեմ առողջ ազգային դաստիարակություն տայինք: Այդ դեպքում հեղափոխական աշխատանքը կտար իր արժանի պտուղը: Պաստորական կեղծ դաստիարակության դեմ աշխատում էր առաջադեմ ամբողջ երիտասարդությունը: Այդ երիտասարդությունն ամբողջությամբ պետք է դաշնակցական շրջանակի մեջ առնել: Դրանց մեջ փոքրիկ աշխատանք կատարելով՝ կարելի է հեղափոխական նոր սերունդ պատրաստել, որ ապագա շարժումների ղեկավարի դեր պիտի կատարի ոչ միայն Այնթապի, այլև ամբողջ Կիլիկիայի բոլոր կարևոր կետերում: Թավուգյանի հետ այս առթիվ խոսելուց հետո հարկ համարեցի հայտնել, որ լայն շրջանակի մեջ իմ երևալը միանգամայն ընդունելի բան չէ, որ իմ անձնավորությունը պիտի շատ սահմանափակ մարդկանց հետ շփում ունենա, հակառակ դեպքում մի փոքրիկ հայտնություն բավական կլինի հարյուրավոր մարդկանց ձերբակալելու և հալածանքի ենթարկելու համար:

Ես խնդրեցի իմաց տալ Արմենակ Նազարեթյանին և մի անգամ ևս ինձ հետ տեսակցել ավելի բազմակողմանի քննելու այն հարցը, թե երիտասարդներից որո՞նց կարող ենք առաջ քաշել ու շրջանակները ղրկել՝ տեղական մարմիններ կազմակերպելու համար: Այսպիսով իմ աշխատանքը պիտի լիներ ոչ միայն Այնթապի կազմակերպությունը գլուխ բերել, այլև նրա միջոցով գավառական գործիչներ դուրս բերել շրջագայելու համար: Ճիշտ է, այդ ժամանակ հայ մտավորականի համար դժվար էր գավառից գավառ շրջել և կասկած չհրավիրել իր վրա, բայց որևէ արհեստով, որևէ զբաղումով գնալու թույլտվությունն էլ դժվար չէր ձեռք բերել, մանավանդ երբ մի քիչ դրամով հնարավոր էր թյուրք այս կամ այն պաշտոնյային՝ թափը մեղմացնել: Թավուգյանը գնաց՝ խոստանալով երկու օրից գալ և ժամանադրավայրն առաջնորդել ինձ, ուր լինելու էր նաև Նազարեթյանը: Իմ մեքենան խոշոր դյուրություն էր տալիս

ամ[են] մարդու ինձ մոտ մտնելու, որպես թե մեքենան է լսում, կամ թե ես էի մեքենաս վերցնում ու գնում ամենուր, բավական է, որ գիտեին իմ մեքենայի պահանջը այս կամ այն ընտանիքի համար: Բոլոր դռներն իմ առաջ բաց էին և կասկածից դուրս:

Հենց այդ սպասումի միջոցին, [1899 թ.] հունիսի 20-ի երեկոյան, երբ մտածում էի պառկել, դուռս բախեցին: Ինձ թվաց, որ Թավուգյանն է, դուռը բաց արի, տեսնեմ մի ոստիկան, որը հայտնեց, թե գայմագամն այս րոպեին ինձ է պահանջում: Հարցրի, թե մեքենաս էլ վերցնեմ, պատասխանեց՝ ոչ:

Մի փոքր կասկած անցավ մտքովս: Անխոս դուռս փակեցի և դուրս եկա: Տեսնեմ սանդուխների ներքևում կանգնած է մի կոմիսեր: Կասկածն ավելի հաստատուն դարձավ, բայց և այնպես շատ անտարբեր գնացի հետները: Հասանք տուն: Գայմագամն ինձ շատ սառը ընդունեց և պաշտոնական ձևով հարցրեց անուն ազգանունս, որտեղացի լինելս և ապա թե ինչու համար եմ եկել Թուրքիա: Իմ պատասխանը պարզ էր, ամենքը գիտեին այդ: Գլուխը շարժեց, ապա տեղից վեր կացավ, ձեռքը դրեց ուսիս և ավելացրեց. – Ձեզ հանձնում եմ ոստիկանության: Հեռագիր կա Հալեպից Ձեր մասին, որով Ձեզ պահանջում են: Ապա ֆրանսերեն ավելացրեց. – Շատ ցավում եմ, որ հրամանը ավելի բարձր ինստանցիայից[1] է՝ վալիից: Ինձ թվում է, որ սա մի ինտրիգ է հայերի կողմից: Իմ իրավունքիս տակ լիներ, ես Ձեզ անմիջապես նավահանգիստ կուղարկեի և այնտեղից դեպի դուրս: Այժմ ես կատարում եմ իմ մեծիս հրամանը:

Ես ինձ պաշտպանելու իրավունք չունեի: Սեր-կոմիսարն այնտեղ էր, նա էլ միացավ, և ես այդ երեքի հսկողության տակ առաջնորդվեցի դեպի սերայ, ուր գտնվում էր թե՛ բանտը և թե՛ փոլիս

[1] Ատյան:

դայերեսին[1], ուր բերում են նոր ձերբակալվածներին: Ճանապարհն անցնում էր իմ սենյակի առջևով: Խնդրեցի թույլ տալ վերմակս վերցնել հետս: Սեր-կոմիսարը չհամաձայնվեց: – Սենյակը թող այդպես մնա, որ վաղը պաշտոնապես բանանք: Հիմա ուղղակի տարեք սերայ ու հանձնեք ոստիկանական բաժին,– ասաց նա կոմիսերին ու ոստիկանին: Ընդդիմանալու ոչ մի ցանկություն չունեի, որովհետև անօգուտ էր: Անցանք սերայ: Այնտեղ ինձ մտցրին մի սենյակ, ուր թափրթված էին զանազան մարդիկ, որոնք մեծ մասամբ քնած էին անկանոն կերպով՝ մեկի գլուխն էր այս կողմ, մյուսի ոտքերը, հենց էնպես հագուստով, կոշիկով: Սա իմ գիշերելու տեղն էր: Պետք էր համակերպվել: Բոլորովին ապահով եմ: Վրաս ոչինչ չկա: Բայց խիստ զարմացրեց այն, որ ինձ ձերբակալելիս հարկ չհամարեցին վրաս խուզարկել: Վրաս եղած ամեն ինչ կարող էի ոչնչացնել: Մի փոքրիկ տետրակ ունեի, ուր գրել էի՝ որքան է իմ հասույթը՝ բոլորը ռուսերեն: Դա արել էի նրա համար, որ խուզարկության ժամանակ համոզվեն, որ իմ ուշ[քն] ու միտքը տարված է եղել իմ վաստակի խնդրով:

Քունս չտարավ: Ինձ համար արդեն պարզ էր, որ մատնություն է տեղի ունեցել ու մատնողը, կասկածից դուրս, Տիգրանն էր: Ես այնքան չէի մտածում իմ կրելիք նեղությունների մասին, որքան այն մասին, որ սկսած գործը կանգ էր առնում, որ այդքան նեղություններով ձեռք բերված հաջողությունը ընդհատվում էր ու մեր գործ դրած միջոցը, օտար անձնագրով, ու լեգալ ճանապարհով տարվող այդ հարմար միջոցը, մեր կազմակերպության ձեռքերից դուրս էր պրծնում: Համոզված էի, որ թուրք կառավարությունը ոչ մի կերպ չի կարող ապացուցել իմ հայ լինելը, եթե ես այդ չխոստովանեմ: Բայց հայտնությունն այդ մասին թուրք կառավարության աչքերը խոշոր չափով բաց է անելու: Իմ ետևից եկողներ պիտի լինեն, ամենքը

[1] Ոստիկանատուն:

Կինը՝ Սաթենիկ Աթաբեկովա (1876–1973),
դուստրը՝ Մարիետա Տեր-Մարտիրոսյան (1918–2009),
Միքայել Տեր-Մարտիրոսյան (1869–1931)

Տեր-Մարտիրոսյանների տնտանեկան լուսանկար

Միքայել Տեր-Մարտիրոսյանի տարբեր տարիների լուսանկարներ

կասկածի առարկա պիտի դառնան և դեպի երկրի խորքերը չպիտի կարողանան առաջանալ: Մյուս կողմից նոր կազմված մարմինները որպիսի հարված են կրելու բարոյապես: Կասկածն ամենքին պաշարելու է: Խախտվում է հավատը դեպի ընկերը, վստահությունը տեղի է տալիս: Սառնությունը տիրում է շատերին: Տուժողը ընդհանուր գործն է: Եվ այս ծանր ու հոգեմաշ մտածմունքը իմ ուղեղին հանգիստ չի տալիս: Մի մխիթարություն եթե ունեմ՝ այդ ամբողջ մռայլ պատկերացումների մեջ այն է, որ ինձ հետ կապ ունեցողների մասին ոչ ոք չգիտե: Ուրեմն և նրանք կասկածից դուրս են, և նրանցից մեկնումեկը քննության կամ դատի ժամանակ ներկա չի լինելու իբրև գործակից ու գեթ մտքում չի ասելու, թե ես եմ պատճառը (իհարկե, անուղղակի) իր ձերբակալման:

Անուններ ու դեմքեր են անցնում մտքովս և ինչ անձկությամբ եմ պատկերացնում, թե մեկնումեկը կարող է կասկածա[նք]ով ձերբակալվել: Բայց այս միտքը միշտ ետ եմ հրում և ոստիկանության ու քննության հանդեպ ինձ մենակ պատկերացնում: Մտքովս չի անցնում, թե Տիգրանը կարող է գործի մեջ լինել: Մատնել է, ուրեմն և դրանով իրեն ապահով կացություն ստեղծել: Այնուհետև մտածում եմ այն բոլոր պատասխանների մասին, որ տալու եմ առաջադրված հարցերին: Բայց դրանք որոշ են ինձ համար: Դրանք այնքան կրկնված են ու ձևավորված, որ ավելի ճիշտ գիտեմ, քան թե հանկարծ ինձ քննեն ազատ պայմաններում, ու ես ուզենամ հայտնել իմ իսկական անձնավորության մասին, որ այդ միջոցին իմ հոգեկան աշխարհից բոլորովին դուրս է շպրտված այնքան անվիճելի կերպով, որ ինքս իսկ համոզված եմ, որ ես հայ չեմ՝ որոշ անուն-ազգանուն ունեցող, այլ բուլղար Դիմիտրի Մարինով Պոպով ազգանունով, որ եկած եմ Թուրքիա ֆոնոգրաֆ գործիքով իմ օրական պարենս հայթայթելու: Այս գաղափարն ինձ համար դառել է միս ու արյուն, և որպեսզի դրա փոխարեն ուրիշ բան ասեմ, պետք է

հսկայական ճիգ թափեմ նրան իմ միս ու արյունից զատելու, ուրիշ խոսքով՝ ինձ արյունոտելու:

Նույն երևույթը տեղի է ունեցել և լեզվիս նկատմամբ: Հայերենը մոռացության եմ տված, հայերեն չխոսելու համար ամիսներով այնպիսի հոգեկան ճիգ եմ գործադրել, որ ինձ համար դառել է մի խորթ, մի օտար լեզու, եթե պետք է եղել, հազվադեպ դեպքերում բացահայտվել հեղափոխական գործակից հայի հետ, երկար մտածելուց, բառերը հաճախ դասավորելուց հետո միայն ինձ հաջողվում էր մտքերս արտահայտել: Խոսելիս հանկարծ իմ հոգեկան ապրումները, որ ես հայերեն չպիտի խոսեմ, ներս էին խուժում իմ ներքին աշխարհը, և ինձ թվում էր, որ ինձ մատնում եմ այդ լեզվով, բայց շուտով սթափվում էի իլյուզիաներից[1], շարունակում խոսել, որ պեսզի քիչ հետո նույն հոգեմաշ զգացումներն ունենամ:

Այս հոգեկան դրությունը մարդ չի կարող ըմբռնել, մինչև որ նույն պայմաններում եղած չլինի ամիսների ու տարիների ընթացքում: Սա մի զգացում է, որ մարդ չի ուզենա զգալ իր կյանքում, այդ զգացումի շարունակական գոյությունը ամենամեծ զոհողությունն է, որ մարդ կարող է պատկերացնել: Ոչ մի նեղություն, հալածանք, բանտ, աքսոր, եթե դա տեղի ունի սովորական պայմաններում, չեն կարող հավասարվել այդ զոհողության: Եթե մեկը տարել է այդ զոհողությունը, այդ պիտի բացատրել միայն ու միայն գործի գաղափարական հափշտակությամբ, նրա ֆանատիզմով: Այժմ, երբ մոտ երեսուն տարի է անցել այդ օրերի գլխով, ես ֆանատիզմով դեպի գործն ունեցած իմ հափշտակությամբ եմ բացատրում իմ հանգիստ, անվրդով ու անտարբեր վերաբերմունքը, որ ունեցա այդ օրվանից սկսած դեպի իմ բանտային կյանքը, որ տևեց մոտ վեց տարի, և որի ընթացքում ես շարունակեցի ապրել՝ իմ մտքից բոլորովին դուրս շպրտած իմ ծագումը, իմ անցյալ կյանքը, իմ եսը ու դառնալ

[1] Պատրանք:

մի նոր մարդ, և իմ հիշողությունից դուրս քշած իմ մայրենի լեզուն: Բանտի մեջ ես ինձ կաշկանդել էի կրկնակի ու եռակի բանտով, և այդ խոշոր ծառայությունը ես տարա, մանավանդ որ, ինչպես հետո կտեսնենք, հնարավորություն ունեի ազատվել, եթե ուզենայի այդ, կրկնում եմ՝ այդ հսկա ծանրությունը տարա միայն այն գիտակցությամբ, որ տվյալ պայմաններում իմ հեղափոխական պարտականությունն ինձ այդ էր թելադրում:

Առավոտյան շատ վաղ սպասում էի, թե իմ սենյակը կբանան ու իրերը կվերցնեն, խուզարկություն կանեն առանց ինձ: Այդ դեպքում մտահոգությանս առարկան էին երկու փոքրիկ սրվակներ, որոնք դրված էին սեղանիս վրա, մեքենայիս յուղի սրվակի հետ: Դրանք ծածկագիր գրելու ու բաց անելու հեղուկներ էին, միակ ապացույցները իմ գաղտնի գործունեության, եթե միայն կարողանան կռահել այդ: Ես գիտեի, որ այդ հեղուկները անծանոթ էին թյուրք պաշտոնյաներին, որովհետև մինչև այդ դեռ ոչ մի ծածկագիր նամակ չէր կարդացվել նրանց կողմից: Բայց սրվակները տվյալ դեպքում երկար քննության նյութ կդառնային և ժամանակի ընթացքում կարող էին վերլուծման միջոցով բացատրվել: Երեկոյան ես հատկապես խնդրում էի սեր-կոմիսարից թույլ տալ վերմակս վերցնել հենց այն նպատակով, որ սենյակս մտնելուն պես գիշերով հեշտ կլիներ սրվակներն աննկատ վերցնել հետս և ապա ոչնչացնել ճանապարհին կամ ոստիկանատանը: Հիմա սրվակներն ազատելու հույսը կորցրել եմ, և դա ինձ բավական անհանգստացնում է: Բարեբախտաբար այդ խնդիրը կարգադրվեց շատ ավելի դյուրին կերպով, քան ես կարող էի պատկերացնել: Երբ գործառնությունը սկսվեց սերայում, ինձ կանչեցին ու երկու ոստիկանների ընկերակցությամբ ուղարկեցին սենյակս, որ բոլոր իրերս վերցնենք ու գանք: Ճանապարհին ես սրվակները կորցնելու միջոցը ծրագրեցի և սենյակս մտնելուն պես, երբ դեռ ոստիկաններն իմ ետևում էին, շտապ վերց-

րի սրվակները սեղանից ու լուսամուտին մոտենալով՝ շպրտեցի բակում թափթփված քարերի վրա: Սրվակները փշուրփշուր եղան: Ոստիկանները գլխի իսկ չընկան, թե ես ինչ արի, և ոչնչով էլ չհետաքրքրվեցին: Մեքենայիս արկղը մեկը վերցրեց, մյուսը՝ անկողինս, որ մի վերմակից ու մի յափնջուց էր կազմված: Հենց այդ ժամանակ դուռը թխկացրին՝ մտնողը Թավուգյանն էր: Նա ապշեց, չգիտեր, թե ինչ ասեր: Ես փրկեցի նրան. – Եկել եք մեքենաս լսելու, ժամանակ չկա: Կառավարությունը կանչել է: Տեսնում եք իրերս էլ հետս տանում եմ,– ասացի: Նա ամեն ինչ հասկացավ:

Գնացինք սերայ: Բարձրացանք գայմագամի մոտ: Բաց անել տվին արկղը, հանեցին մեքենան, նրա գլանները, գտան արկղումս դրված «Սմիթ Վեսսոնի[1]» փոքր տեսակի գեղեցիկ ատրճանակը, որ հատուկ ֆուտլյարի մեջ էր դրված: Գայմագամը և ապա մյուսները չարչարվեցին, բայց չկարողացան դատարկել փամփուշտները: Այդ ձևի ատրճանակ դեռ տեսած չէին: Ես վերցրի, դատարկեցի ու տվ[եց]ի իրենց: Հանեցին ատրճանակի փամփուշտների տուփը 50 փամփուշտով, ապա մի տոպրակով արծաթ դրամ, որի մեջ գայմագամը շատ պրպտումներ կատարեց, բայց ոչինչ չգտավ: Նա կնիք էր փնտրում: Այդ շրջանում Թուրքիայի այդ ժամանակները դեռ գործ էին ածում արծաթի շատ հին դրամներ, որոնք տարօրինակ ձև ու մեծություն ունեին: Երեք ղուռուշանոց և չորս ու կես ղուռուշանոց մի տեսակ դրամներ, որոնք թասի պես փոս էին, ավելի շուտ կլոր գդալի նման ու որովհետև շատ գեղեցիկ էին, ես դիտմամբ պահել էի և ահագին կապոց շինել:

Խուզարկությունը ոչինչ չտվեց: Ոչ մի գրություն, թուղթ ու ծրար կար, որ քննության առարկա դարձան, բայց գրություն չկար վրան: Գայմագամը նայեց անդամներին, նրանք գլուխները բացասաբար

[1] «Սմիթ և Վեսոն» (անգլ.՝ Smith & Wesson Firearms Co.), ամերիկյան ընկերություն, որն արտադրում է հրազեն: Հիմնվել է 1852 թ.:

շարժեցին: Գայմագամը քարտուղարին թելադրեց մի պաշտոնական գրություն, որով վկայվում էր, որ իմ մոտ «մյուզիր» (վտանգավոր) ոչինչ չի գտնված, ստորագրել տվեց մեջլիսի[1] անդամներին, կնքեց և հանձնեց կոմիսարին, որ պաշտոնական հանձնարարականի հետ ուղարկվի ուր որ հարկն է: Բոլորի դեմքի վրա կարդացվում էր այն միտքը, որ այս մարդուն զուր են կասկածում: Վրաս անգամ չխուզարկեցին: Բոլոր իրերս կրկին դարսել տվին իրենց տեղերում, դրամը նույնությամբ ինձ տվին: Միայն ատրճանակը պահեցին: Ապա գայմագամը պատվիրեց ինձ տանեն բանտի սենյակներից մեկը, այս գիշեր պահեն այնտեղ, առավոտյան ուղարկեն Հալեպ: Ինձ հետ բերին իմ ամբողջ կարողությունը՝ և՛ մեքենաս, և՛ անկողինս: Բանտի սենյակը փոքրիկ էր: Մի 15 մարդ կար: Շատ հետաքրքրվեցին ինձանով: Խնդրեցին, որ իրենց ցույց տամ մեքենաս: Նազ չարեցի: Բաց արի արկղս, որ գնել էի Հալեպում հատկապես մեքենայիս ու մնացյալ պարագաներիս համար: Մեքենաս հանեցի և սկսեցի նվագել: Մյուս սենյակներից, բակից բավականության ձայներ, իմ հասցեին ուղղված գոհունակության կանչեր իրար խառնվեցին: Մեր սենյակում շատերի աչքերին արտասուք նկատեցի: Բանտարկյալների այդ վերաբերմունքը տեսնելով՝ ես մոռացա իմ դրությունը, տեսա, որ բանտումն էլ մի բանի պետք եկա:

Օրն անցավ ինձ համար բավական աջող: Խուզարկությունը ոչինչ չտվեց: Դա ինձ համար ամենակարևորն էր: Գիշերը հանգիստ անց[կաց]րի: Առավոտյան ինձ համար ձի վարձեցին, իհարկե իմ փողով, վրան բեռնեցին իմ իրերը, մի կողմը սնդուկս, մյուսը՝ անկողինս, ու երկու ձիավոր ժանդարմներ դնելով, որպես հսկիչներ, ուղարկեցին դեպի Հալեպ:

[1] Մեջլիս-խորհրդարան, տվյալ դեպքում գավառապետության պաշտոնյաների հավաք:

Հասանք Քիլիս: Ուղղակի առաջնորդեցին ինձ բանտ, որ գտնվում էր Սերայի բակում: Տարօրինակ զուգադիպությամբ այդ օրը Քիլիսի բանտարկյալները հարձակվել էին պահակների վրա, մեծ դուռը բռնի բաց արել և դուրս փախել: Քաղաքը տակնուվրա էր՝ ոստիկան, ժանդարմ փողոցները թափված, դաշտերում սփռված փախստական էին որոնում, և երբեմն մեկ-երկու հոգի բռնած բերում էին: Շատերին ծեծել էին ու շղթայել: Սենյակների դռները փակել էին և մնացյալներին չէին թողնում դուրս գալ բակ զբոսանքի: Մինչև երեկո բավական փախստական բերին, բայց մի քանի կարևոր բանտարկյալներ ձեռք չէին ընկել, և այդ բանը խիստ մտահոգում էր բանտային վարչության: Այդ անսովոր աղմուկի վրա ավելացավ իմ պատմությունը: Տարածվեց, որ ֆոնոգրաֆչի Դիմիտրիին բռնել են: Հազար ու մի բացատրություններ են տալիս այդ բանին դուրսը, և լուրը հասնում է բանտ: Ոմանք իմ ձերբակալությունը բանտի ըմբոստության հետ էին կապում և զանազան առասպելներ պատմում: Ինձ բանտ մտնելուն պես մի բանտապահ շատ հաջող հղացում ունեցավ՝ մեքենաս օգտագործել մտքերը խաղաղացնելու համար: Բակի մեջտեղ մի կարպետ փռել տվեց, իմ իրերը վրան տեղավորեց և խնդրեց բանտարկյալներին զբաղեցնել: Երբ սկսեցի նվագել ու երգել տալ, աղմկած, հուզված բանտում այն պիսի մի լռություն տիրեց, որ մեքենայիս ձայնը բանտի պատերից դեպի Սերայ ու դեպի փողոցը տարածվեց: Բանտարկյալներն օրհնում էին իմ ճանապարհը և խոսք չէին գտնում իրենց գոհունակությունն արտահայտելու այդ ծանր ու տանջալից օրվան վրա հասնող մխիթարության առթիվ: Պատկերը բոլորովին փոխվեց: Մինչև այդ թե՛ հսկիչները և թե՛ բանտարկյալները, զայրույթով լցված, հայհոյում էին իրար, ատամներ կրճտացնում իրար դեմ, բռունցքներ ցույց տալիս, բոլորի աչքերի մեջ վրեժի ու ցասման կրակ ու բոց էր փայլատակում: Բայց հենց որ լսեցին իրենց սիրելի երգիչների ձայնը և

թովիչ ու գրավիչ երգը, մոռացան ամեն ինչ, դեմքերի կնճիռները պարզվեցին, աչքերը մարդկային մտքի ու իմաստի տեսք ընդունեցին:

Պահապանները սենյակների դռները բաց արին, և հարյուրավոր դժբախտ ու կյանքի բարիքներից զրկված մարդիկ վազեցին ու նստոտեցին իմ շուրջ գետնի վրա: Նրանք իրենց կյանքում նման բան չէին տեսած: Երգի ազդեցության տակ եղբայրական մի մթնոլորտ ստեղծվեց այդ սեղմված շրջանում: Ժանդարմներն ու ոստիկանները սկսեցին խոսել բանտարկյալների հետ, սրանք նրանց բաներ փսփսացին ու նրանց միջոցով բարևներ ուղարկեցին իրենց ազգականներին: Այնուհետև սկսեցին խոսել ինձ հետ: Հարցրին, թե ինչու՞ էին ինձ բանտարկել, և երբ իմացան, որ ես ոչ մի հանցանք չունեմ, սկսեցին կառավարությանը մեղադրել,– թե այդ պատճառով է, որ օսմանյան երկիրը չի առաջադիմում, որովհետև ով որ ֆրանկի (եվրոպացու) հունարն է ուզում բերել և մեր աչքերը բանալ, նրան էլ այսպես բռնում են ու դուրս քշում երկրից: Ամենքը կարծում էին, թե ինձ բռնել են, որ հսկողության տակ դուրս քշեն երկրից:

Բանտարկյալները շատ հետաքրքրվում էին ֆրանկների (եվրոպացու) կյանքով, նրանց տնտեսությամբ, երկրի կարգուկանոնով, արդարադատությամբ, պատիժներով, նրանց բանտային կյանքով: Ես պատասխանում էի, ու իմ պատասխանը մի տեսակ պրոպագանդա էր դառնում ի նպաստ եվրոպական կարգի, և ամենքը, կարծես, համաձայն էին ինձ հետ:

Այդ գիշեր անցկացրի բանտում գողերի ու ավազակների հետ միասին: Որևէ տարբերություն չէի գտնում սրանց ու դրսի մարդկանց միջև: Թերևս ընդհանրությունը մի քիչ աղքատ էր դրսի ազատ մարդկանցից, բայց վերաբերմունքը, հասկացողությունը, մտավոր մակարդակը ոչնչով պակաս չէր դրսի սովորականից:

Տգիտությունը անսահման էր ամենուրեք, ինչպես դուրսը, նույնպես և բանտում:

Առավոտյան թվում էր, որ պիտի ինձ տանեն դեպի Հալեպ, բայց եկան հայտնեցին, որ Այնթապից հեռագիր է ստացված՝ ինձ ետ են պահանջում: Ինչ կարող էի ասել: Հիմա ես կամքից[1] զուրկ մարդ եմ: Ուր ուզեն, կուղարկեն ինձ: Նույն կարգով, ինչպես հասել էի Քիլիս, հասա Այնթապ, նորից բանտում, նորից բանտարկյալների մեջ իրարանցում իմ դարձի առթիվ, նորից իմ մեքենայի երգը, շուրջս գոհունակության ու դրսի հուշերի հառաչանքներ, նորից զրույցներ ու ցանկություններ: Խիստ հոգնած էի, ձիու վրա չարչարված՝ հանգիստ քուն մտա:

Առավոտյան հայտնեցին, որ պիտի ճանապարհվեմ Մարաշ: Այնտեղից պահանջված եմ: Նույն կարգով, մի ձի ինձ ու իմ իրերի համար, երկու ձիավոր ժանդարմներ, որպես հսկիչներ: Ճանապարհվեցի դեպի հյուսիս: Ես նկատում էի, որ օրեցօր խստությունն իմ նկատմամբ զորեղանում է: Հիշեցի իմ կեպին, որ սնդուկում էր, երբ ճանապարհին մի տեղ հանգստանում էինք, հանեցի կեպիս, դրի գլուխս, ֆեսը փակեցի սնդուկիս մեջ: Ժանդարմները նայեցին իրար ու քաշվելով հարցրին ինձ, թե միթե՞ էջնեբի եմ (եվրոպացի): Երբ դրական պատասխան ստացան ինձանից, իսկույն հայտնեցին, որ իրենց կառավարությունն իրավունք չունի ինձ բանտարկելու և ավելացրին, որ կոնսուլն իմանալուն պես ինձ կվերցնի և դուրս կուղարկի: – Իհարկե այդպես է, ասացի ես ինձ ի՞նչ կարող են անել: Բայց դժբախտությունը նրա մեջ է, որ մարդ չունեմ իմաց տա կոնսուլին: Այ եթե դուք ուզենաք, կարող եք ինձ մի լավություն անել, և ես ձեր լավությունը չեմ մոռանա: –Ի՞նչ լավություն կարող եք անել,– հարցրին: –Մարաշ մտնելուն պես ինձ կանցկացնեք այն փողոցով, որտեղ ապրում է ֆրանսիական կոնսուլը, մի րոպե կանգ

[1] Իրավազուրկ:

կառնեք նրա դռան առաջ, ներս կմտնեմ, իմ մասին կհայտնեմ ու դուրս կգամ, կներկայանանք կառավարությանը: Այնուհետև կոնսուլը հարկ եղածը կկարգադրի: Իմ այս առաջարկը նրանց խելքին շատ մոտ թվաց: Նրանք սկզբում համաձայնեցին: Իմ նպատակն էր՝ մտնել ֆրանսիական հյուպատոսարան և այնտեղ էլ մնալ: Գիտեի, որ Մարաշում միայն ֆրանսիական կոնսուլ կա, որի պարտականությունների մեջ է մտնում բոլոր պետությունների հպատակների պաշտպանության խնդիրը: Հավանորեն նա ինձ կպահեր ու կհանձներ Հալեպի ռուսական կոնսուլին, որն իր կարգին մեծ պաշտպանություն ցույց կտար դատավարության գործում: Որքան և Բոլգարիան այդ ժամանակ դեռ վասալական կախում ուներ Թուրքիայից, և այդ դեպքում որքան էլ ռուս ներկայացուցչությունն իրավունք չունենար ինձ չհանձնել թուրք կառավարության, բայց մի բան ինձ համար պարզ էր, որ մի անգամ գործի մեջ եվրոպական մի պետություն միջամտած լիներ, ինձ դատարանը չէր կարող դատապարտել, քանի որ իմ հանցանքը փաստող ոչ մի տվյալ չկար դատարանի ձեռքում:

Այս մտորումներով մեր ճանապարհին էի շարունակում ու դիտում, թե ժանդարմները չե՞ն փոխում արդյոք իրենց տրամադրությունը նման մի հանձնառության համար: Պետք է ասած, որ Թուրքիայում, երկրի ներսում, ժանդարմը շատ ինքնագլուխ է և իշխանությունը շատ դեպքերում նա է ներկայացնում: Ժողովուրդը նրան է տեսնում, նա էլ օգտվում է այդ դիրքից ու նման պայմաններում, եթե կալանավոր է տեղափոխում մի քաղաքից մյուսը, հաճախ համաձայնության է գալիս կալանավորների կամ նրա բարեկամների հետ ու չնչին կաշառքով փախցնել տալիս: Այդպիսի դեպքերում ժանդարմը համարյա պատիժ չի կրում: Վերը շատ լավ գիտեն, թե բանն ինչումն է, բայց ինչպես պատժեն ժանդարմին մի երկու մեջիդիե կաշառք ստանալու համար, երբ դատարանի նախագահը,

քննիչը և դատախազը ոսկիների կաշառքով նույն կալանավորին ազատ պիտի արձակեն: Գոնե այդպես է եղել այն ժամանակվա Թուրքիան: Բայց ներկա դեպքում իմ հարցը տարբեր է: Ես չեմ փախչում, իրենք են ինձ տանում որոշ փողոցով, որ մտնեմ, կոնսուլի հետ տեսնվեմ: Այստեղ պատասխանատվության խնդիր կա: Ժանդարմներից մեկը հայտնեց, որ իրենք կդժվարանան գլխավոր և ուղիղ գիծը թողած, ինձ շեղակի ճանապարհով անցկացնել և մանավանդ կոնսուլի դռանը կանգնեցնել: Չէ, եղբայր, այդ մեկը չենք կարող, բայց լավություն կանենք, տեսնում ենք, որ դու օսմանլուի թակարդն ես ընկել: Մի նամակ գրի, այդ նամակը կհասցնենք կոնսուլին:

Թյուրք հասարակ ժողովուրդը «օսմանլու» ասելով հասկանում է կառավարությունը և նրա մասին ունի որոշ կարծիք: Նրա կարծիքով կառավարությունը խարդախ է, նա մարդ՝ «Օսմանլի դավշանի արաբաիլե թութար» – Թյուրք կառավարությունը նապաստակը սայլով է որսում,– այսպես է բնորոշում թուրք ժողովուրդը իր կառավարությանը և նրա մասին խոսելիս միշտ մի հեռավոր, մի խորթ, անհարազատ ապարատ[1] նկատի ունի, որ երբեք ժողովրդի բարիքի մասին չի մտածում, որ ժողովրդի վզին նստած մի ծանրություն է և աշխատում է նրան թշվառության մեջ պահել: Նրա կարծիքով ուրիշ բան է սուլթանը,– իրենց փադիշահը, որ ամեն տեսակ բարիք է ցանկանում ժողովրդին, որովհետև նա փեյխեմբերի[2] փոխանորդն է, չարություն անել չգիտե, բայց կառավարության ներկայացուցիչները նրան միշտ խաբում են և ժողովրդին հարստահարում: Ես նկատեցի, որ ժանդարմները վախեցան իմ առաջարկն ընդունել, ստիպված էի իրենց առաջարկն ընդունել: Մի տեղ՝ դաշտում նստած ժամանակ, հանեցի թուղթ ու մատիտ և ֆրանսերեն լեզվով

[1] Վարչակարգ:
[2] Փեյխամբեր՝ մարգարե:

դիմում գրեցի: Այդ դիմումի մեջ գրում էի, որ ես եկած եմ Թուրքիա օրապահիկս վաստակելու ֆոնոգրաֆ գործիքով, և ահա ինձ բռնել են, չգիտեմ [թե] ինչու: Դիմում եմ իրեն, որովհետև Մարաշում ռուսական կոնսուլ չկա, մինչ բուլղարների իրավունքները պաշտպանում են ռուսական ներկայացուցիչները: Եվ խնդրում էի միջամտել և ինձ ազատել: Նամակը ծրարում փակեցի և դրի գրպանս: Ժանդարմները այդտեղ չընդունեցին, ասացին, երբ հասնենք Մարաշ, կվերցնենք: Այս հույսով շարունակեցի ճանապարհը:

Մենք հասել էինք մի դաշտի, որ կոչվում է «Չուխուր օվա»-Փոս դաշտ: Այդ համարյա թե վերջին ցած վայրն է, որտեղից սկսվում է Տորոս լեռան բարձրունքները: Հեռվից երևում է Մարաշ քաղաքը՝ ձգված Ախր-դաղ (Վերջին սար) լեռան լանջի վրա: Հյուսիսից դեպի Սիրիա իջնողի համար իսկապես վերջին սարն է, այնուհետև այլևս լեռների չեք հանդիպի:

Մարաշը բավական մեծ քաղաք է, համարյա Այնթապի չափ, 60 հազար բնակչով, որի 1/3-ը, այն է՝ 20000-ը հայեր, նույն համեմատությունը, ինչ որ Այնթապում: Վերջապես հասանք Մարաշ: Քաղաքում սենսացիոն լուրեր են տարածվել, որ դրսից մեծ քանակությամբ օտար տարրեր են եկել, հայերին ապստամբեցնելու համար: Կառավարությունն էլ ամբողջությամբ ոտքի վրա է ենթադրվող ապստամբությունը ճնշելու համար: Երկու ժանդարմի ուղեկցությամբ, եվրոպական գլխարկով երևալս փողոցներում մեծ իրարանցում է առաջ բերել: Ամեն կողմից վազում են, իրար վրա խռնվում ինձ տեսնելու համար: Այս իրարանցումը ավելի քան ժանդարմներին վախեցրեց: Երբ մի հարմար ու նեղ փողոցում նամակս վերցնելու մասին խոսեցի, նրանք ասացին, որ ինձ կառավարությանը հանձնելուց հետո նամակս կվերցնեն: Բայց արդեն երևում էր, որ նրանք դժվարանում են նման հանձնառությ[ա]ն:

Բարձրանում ենք դեպի վեր: Արդեն քաղաքը վերջանում է, և մենք գնում ենք: Հասանք մի մեծ դարպասի՝ Սերայի մուտքն է: Հենց մտա բակը, կարծես մի հարվածով բոլոր այնտեղ գտնվողները սկսեցին այս ու այն ուղղությամբ վազել: Մոտիկ մի զափիթե կանչեց -Բարոն գելդի[1]: Սկզբում ինձ պարզ չէր, թե «Բարոն» ասելով ինչ էր հասկանում: Բայց շուտով պարզվեց, որ ամբողջ այդ շրջանում թուրքերը հայ հեղափոխականներին են անվանում: Զեյթունի 1905 թվականի[2] ապստամբության ղեկավարները – Հնչակյան Աղասին, Հրաչյան, Ապահը, տեղացի հայերի կողմից պարոն Աղասի, պարոն Հրաչյա և այլն կոչելով, վերջը պարոն բառը դարձել է հասարակաց և թուրքերի հ[ա]մ[ա]յր, այն տարբերությամբ, որ նրանք հնչում են եվրոպական «Բարոն» բառի պես: Վազողները հիմնարկությունների պաշտոնյաներին իմաց էին տալիս, որ այնքան սպասված անձնավորությունը գտնված է: Սերայի մեծ շենքի լուսամուտներից հետաքրքիրների գլուխներ երևացին՝ հայացքներն ինձ ուղղված:

Ինձ առաջնորդեցին դեպի բին-բաշու[3] կացարանը: Նա դեռ չէր եկած: Թուրքիայում գործառնությունները շատ ուշ են սկսում՝ ժամը 10-ից ոչ առաջ, իսկ մենք հասել էինք վաղ՝ ժամը 7 1/2-ին: Մյուս ժանդարմական պաշտոնյաները՝ յուզբաշին[4] և այլն, իսկույն կարգադրեցին ինձ փակել մի փոքրիկ խուցի մեջ, դուռը փակեցին վրաս կողպեքով և երկու զինվոր սվիններով զինված՝ կանգնեցրին դռանս առաջ: Ինձ բերող ժանդարմները քիչ հեռու կանգնած դիտում էին այս բոլոր խիստ նախազգուշությունները, և երբ դռան

[1] Պարոնը եկավ:

[2] 1895 թ.:

[3] Բառացի հազարապետ, որը համապատասխանում է օսմանյան բանակի մայորի աստիճանին:

[4] Բառացի հարյուրապետ, որը համապատասխանում է օսմանյան բանակի կապիտանի կոչման:

փոքրիկ անցքից նշանով հասկացրի նամակի մասին, նրանք գլխով բացասական նշան արեցին ու հեռացան:

Չէր անցել մի քանի րոպե՝ դռան անցքից նկատեցի, որ ինչ-որ հայտնի պաշտոնյա շտապ բակով անցավ, որին անցնելիս զինվորական պատիվ տվին, ու մտավ Սերայ: Իմ հսկիչներին հարցրի, թե ով էր եկողը, նրանք շատ զգույշ կերպով ինձ հայտնեցին, որ մյութեսերիֆն էր: Ես հետո իմացա, որ սովորաբար մյութեսերիֆը գալիս է կեսօրին, մինչ այդ օրը եկավ ժամը 8-ին: Իմ գործին որքա՛ն կարևորություն էր տրվում, որ գալուս լուրն առնելուն պես մյութեսերիֆը շտապել էր դեպի Սերայ: Քիչ անցած դուռս բաց արին ու հայտնեցին, որ Սերայում ինձ պահանջում են: Հասկացա, որ երկրի պետն էր ուզում ինձ տեսնել: Մի մեծ ու ընդարձակ դահլիճ մտնելով՝ տեսա նույն անձնավորության, որ քիչ առաջ բակով անցավ, և որին զինվորական պատիվ տվին: Դա մյութեսերիֆ Աարիֆ փաշա Կարա-Մուրսալ Զադեն էր, բնիկ Գյավուր դաղից, որ իր հայատյացության համար նշանակված էր Մարաշի կառավարիչ: Ինչպես հայտնի է, 1895 թվի ապստամբության հետևանքով Զեյթունը մի քանի արտոնություններ ձեռք բերեց, որոնց թվում և Զեյթունում քրիստոնյա գայմագամ ունենալու իրավունք: Այդ կետը ի դերև հանելու միակ ճամբան թուրք պետությունը գտել էր Աարիֆ փաշային Մարաշում մյութեսարիֆ նշանակելով, մի փորձված, խորամանկ ու տակտի տեր անձնավորության: Նրա առաջին հարցը եղավ ինձ, թե Այնթապից ո՞ւր պիտի գնայի, ասացի, որ Մարաշ պիտի գնայի:

– Մարաշի՞ց ուր պիտի գնայիր,– հարցրեց բինբաշին, որ ներկա էր: Դեռ ես չէի պատասխանել՝ փաշան կանչեց,– «Բե՛րդ, բե՛րդ»,– հայերեն լեզվով: Այդ միջոցին թե՛ փաշան, թե՛ բինբաշին, թե՛ թահրիրադ մյուդիրը շատ լարված ինձ էին նայում, երևի տեսնելու, թե ինչ տպավորություն է թողնում այդ բառն ինձ վրա: Իմ դեմքի այլայլումից պիտի ենթադրություններ անեին: Բայց ես շատ

անտարբեր կերպով պատասխանեցի, որ կգնայի ամեն ուղղությամբ, ուր դրամ կարող եմ վաստակել, իսկ Զեյթուն չպիտի՞ գնայի, հարցրեց փաշան՝ բերդի խոսքը հենց դրան էր վերաբերում: Հայտնեցի, որ Մարաշում կհետաքրքրվեի և կիմանայի, թե որ քաղաքը գնալով փող կվաստակեմ, այնպես էլ կանեի: Այդտեղ օրինակ բերի Հալեպից մեկնելուս խնդիրը ու պատմեցի, թե ինչպես ես հետաքրքրվում էի որ կողմը գնալով, և Ֆուադ բեյը խորհուրդ տվեց դեպի Այնթապ-Մարաշ գնալ: Նա ճանաչում էր Զեքի փաշային: Այ հենց դրա որդին է Ֆուադ բեյը, հայտնեցի ես: Այդտեղից օգտվեց փաշան ու հարցրեց, թե ես էլ ում եմ ճանաչում: Տվեցի թուրք և արաբ անուններ, որոնց հանդիպել էի Հալեպում, Այնթապում, ինչպես նաև երգիչներ՝ քիլիսցի Վիսինն օղլուն ու Շիմրինն օղլուն: Այստեղ ժպտաց Աարիֆ փաշան. – Հապա ոչ մի հայ չե՞ս ճանաչում, այդքան ման ես եկել: – Ես այս երկրում չեմ կարողանում տարբերել հայն ու թուրքը իրարից: Բոլորը նույն տարազն ունեն և խոսում են նույն լեզվով: Անշուշտ, իմ մեքենաս լսող շատերն են եղել, բայց ես նրանց անունները չեմ հիշում: – Ինչպես՞ է, որ թուրքի, արաբի անունը սովորել ես, հայինը՝ ոչ: – Փող վաստակելու համար հայերից խորհուրդ հարցնել չէի կարող, երկրի տիրող տարրի հետ է իմ գործը: Նրանք ավելի շուտ ինձ օգտակար կլինեն, քան թե հայերը: Դրա համար էլ ես բարեկամություն էի անում թուրքի ու արաբի հետ: Այնուհետև փաշան հետաքրքրվեց իմ ազգությամբ, հարցրեց անունս ու ազգանունս, պահանջեց անձնագիրս և երկար ու բարակ նայեց, տվեց մյուս երկուսին էլ, որ նայեն: Հարցրեց, թե հայերեն չե՞մ հասկանում արդյոք, հետո թե՝ Երևան չե՞մ եղած: Իմ բացասական պատասխանին նա ավելացրեց. – Բայց մենք տեղեկություն ունենք, որ դու հայ ես, երևանցի ես և անունդ է Մարտիրոս Սարգսյան: Այդ բանը մենք քեզ կապացուցենք հետո: Դրա համար ունենք տասնյակներով վկաներ: Լավ կլինի, որ դու ինքդ խոստովանես, և քեզ

կարծակենք ու կգնաս քո հայրենիքը: Մեզ հայտնի է, որ դու էլ օրենքը շատ լավ գիտես մեր, մենք չենք կարող պատժել մեծ պետությունների հպատակներին: Միևնույնն է, քեզ մեզնից պիտի առնեն: Մենք չենք կարող բռնի պահել քեզ: Բայց եթե ճշմարտությունը հայտնես, առանց դրսի միջամտության քեզ մեր երկրից դուրս կհանենք:

Ես բողոքեցի այդ հայտնությունների դեմ և ասացի, որ առաջին անգամ տվածս պատասխանն է, որ կարող եմ կրկնել, իսկ եթե իմ մասին շատ բան են ասել, և իրենք էլ լսել են, այդ էլ պատմողի և լսողի գործն է: Դրանք ինձ չեն վերաբերում: Իմ չոր պատասխանը բավական սառեցրեց փաշային: Մինչև հիմա շատ հանգիստ ժպտալով էր խոսում: Այստեղ նա թթվեց ու ասաց. – Գործը ցույց կտա, թե դրանք ում են վերաբերում: Ապա դառնալով բինբաշուն՝ ասաց. – Սրան տարեք փոլիս-դայիրեն՝ ոստիկանատուն: Ինձ դուրս հանեցին Սերայի շենքից և առաջնորդեցին նույն բակում գտնվող մի պավիլիոնի ձևով շենք, որ բազմանկյունի մի սենյակ էր, ամեն ուղղությամբ մեծ-մեծ լուսամուտներով: Առաջարկեցին ինձ նստել: Տեսա, որ իմ իրերը բոլորն էլ այնտեղ են: Այնտեղ սեր-կոմիսերն էր ու մի փոլիս: Այդ միջոցին իմ էությունը զբաղված էր այն հայտնություններով, ինչ որ արեց փաշան: Մատնությունը բավական գիտակցական ձևով է կատարված: Տիգրանը հայտնել է այն ամենը, ինչ գիտե, ավելացրած դրան և այնպիսի տեղեկություններ, որոնք ոչ միայն նա, այլև Հատիկը չգիտե, ուստի և հերյուրել է: Ինչպես երևում է, Հատիկը նրան ասած կլիներ, որ ես երևանցի եմ, այդ նա գիտեր, բայց իմ իսկական անուն և ազգանունը չգիտեր: Այստեղ արդեն Տիգրանը ենթադրելով, որ իմ «Մար» կեղծանունը Մարտիրոս անվան կրճատումն է, այդ պես էլ հայտնել է, իսկ ազգանունս ուղղակի սարքել է: Տաճկաստանում հայերին թուրքերը Սարգիս են կանչում այնպես, ինչ պես Ռուսաստանում՝ Կարապետ: Եվ ահա ստեղծվել է նաև իմ Սարգսյան ազգանունը: Այդ ամենը

ինձ համար պարզ է: Բայց որ տասնյակներով վկաներ կան իմ մասին, այդ արդեն հանելուկային է: Է՛, սպասենք ու տեսնենք, թե այդ ինչ վկաներ են: Այդ միջոցին սեր-կոմիսերը կարգադրեց, որ փոլիսը դուռը փակի և դռան առաջ մի ոստիկան կանգնեցնի: Այնուհետև սկսեցին խուզարկել իմ իրերը, այս անգամ շատ մանրազնին: Ապա ինձ խուզարկեցին, իմ հագուստների ծալքերը, ներքին շորերը, կեպիս շուռ տվին, կարերը քանդեցին, բայց ինչ կար, որ ինչ գտնեին: Սեր-կոմիսերը հոգնեց պրպտելով, քրտնեց և ապա ասաց. – Գիտեք, ինչ ենք փնտրում: Մեզ հարկավոր է այն մետաքսի կտորը, որի վրա ոսկետառ գրություն կա: Այդ եթե տաք մեզ, դուք այլևս նեղություն չեք քաշելու, ձեզ ուղղակի կարծակեն, կգնաք ձեր գործին: Իրերիս մեջ մի մետաքսյա թաշկինակ ունեի: - Բայց Դուք ո՞րտեղից գիտեք, թե ես մետաքսյա թաշկինակ ունեմ,- միամիտ ձևանալով հարցրի ես:

Այստեղ արդեն սեր-կոմիսերը ուռչելով հայտնեց, որ ինքն ամեն բան գիտե, և զուր չէ, որ ինքը սեր-կոմիսերի պաշտոն է ստացել: Նա գյուտ արածի պես անհամբեր սպասում էր թաշկինակին: Տվի, տնտղեց, շուռ տվեց.– չէ՛, սա չէ: Իմ սպիտակեղենի միջից հանեցին մի դրսի շապիկ, որի թևերն ու փեշերը, ինչպես և կուրծքը կարմիր թելով բանված էր: – Սա՛ է, սա՛,– աղաղակեց փոլիսը: Կոմիսերը վրա պրծավ, ամուր գրկեց [շապիկը] երկու ձեռքով և դուրս գնաց: Հասկացա, որ տարավ փաշային ցույց տալու: Սկսեցի ծիծաղել. փոլիսը ապուշ-ապուշ ինձ էր նայում, թե ինչպես ես ծիծաղում եմ: Քիչ անցած սեր-կոմիսերը եկավ, շապիկը դժգոհ կերպով դեպի ինձ մեկնեց. – Սա չէ: – Հապա Ձեզ գովում էիք, որ ամեն ինչ գիտեք: Դուրս է գալիս, որ ամենատարրական բանը չգիտեք: Դուք դեռ չգիտեք, որ Ռուսաստանում դրսի շապիկները այդպիսի գունավոր բանվածքներ են ունենում, ու փաշային ցույց պիտի տաք, որ նոր իմանաք, թե այդ նախշերը գրություն չեն: Շատ տեղին ծաղրեցի սեր-կոմիսերին, և պետք է ասած, որ իմ այդ խոսքերն ազդե-

ցին նրա վրա, և այնուհետև նա շատ ավելի համեստ էր պահում իրեն: Մեքենաս, իհարկե, նայեցին, բան չհասկացան: Մեջը ցույց չտվի, կարիք չկար: Չկարողացան հասկանալ, որ նրա մեջ բավական պարապ տարածություն կար շատ բաներ պահելու համար: Բայց ինչ կարիք կար ցույց տալու, թեև ոչինչ էլ չունեի այնտեղ: Շորերս հանելիս գոտիս երևաց, ուր պահում էի ստացածս դրամները:

32 տաճկական ոսկի ունեի իմ մեքենայով վաստակած: Այդ ժամանակ Տաճկաստանում թղթադրամ գոյություն չուներ: Ոսկի պահելու սովորական ձևը հատուկ գոտի է, երկու տակ, մեջը անցք, ուր բարակ կլյոնկայից[1] երկայն քսակ կա: Այդ քսակը դուրս է քաշվում և ներս գնում հատուկ թելերով: Ոսկին շարվում է քսակի մեջ ու ներս քաշվում: Այսպիսով ոսկիները շարվում են գոտիի երկայնությամբ ու պատում մեջքը: Դրամներս համրեցին, մեջի քսակը լավ տնտղեցին, նորից դրամները ետ դրին մեջը և գոտին ինձ տվին: Ոտնամաններս հանել տվին, տակն ու մեջը տնտղեցին: Ոչինչ չգտան:

– Տեսնում եք, ես ոչինչ չունեմ, որ կասկածելի լինի: Խնդրեմ, այդպիսի մի արձանագրություն կազմեք, ինչպես արել են Այնթապում,– ասացի ես: – Իհարկե, քանի որ ոչինչ չենք գտնում, այդպես էլ նշանակում ենք[2]: Սակայն Դուք այդ գրությունը տվել եք մեկին: Այդ մեզ պիտի հայտնեք,– պնդեց սեր-կոմիսերը: – Ես ոչինչ չունեմ թաքցնելու Ձեզանից: Խնդրում եմ նշանակեք, որ ոչինչ չեք գտել իմ մոտ: Միևնույն ժամանակ խնդրում եմ Այնթապից բերել տվեք իմ ատրճանակը իր 50 փամփուշտներով՝ ինձ հանձնելու համար: Այդ բոլորը խոստացան, բայց ատրճանակը, ինչպես երևում է, սեփականեց Այնթապի գայմագամը, և դատի ժամանակ, երբ ես նորից պնդեցի այդ մասին, հայտնվեց, որ գործերի մեջ ատրճանակ չկա: Խուզարկության հենց սկզբին, երբ ուզում էին գրպաններս նայել,

[1] Մոմլաթ:
[2] Արձանագրում:

հանեցի ֆրանսիական կոնսուլին գրածս նամակը և մեկնելով սերկոմիսերին՝ հանդիսավոր կերպով ասացի. – Այս նամակը Ձեզ եմ հանձնում, որպեսզի ինքներդ հանձնեք ֆրանսիական կոնսուլին: Դուք գիտեք, որ օտարահպատակները պարտական են իրենց դրությունը հաղորդել իրենց ներկայացուցիչներին, իսկ այստեղ եղած միակ կոնսուլը՝ ֆրանսիականը, փոխարինում է բոլորին: Սրանով ես խնդրում եմ, որ միջամտի և ինձ ազատի այս բոլոր նեղություններից, որին այժմ ենթակա եմ այս երկրում: – Իմ աչքի վրա,– ասաց կոմիսարը,– այդ մեր պարտքն է: Եթե ուրիշ գրություն, ասելիք ունեք, խնդրեմ հայտնեցեք, ես անձամբ իրեն կտեսնեմ: Այսպիսով նամակը անցավ կառավարության ձեռքը, որ գործին կցեին, եթե իրենց ձեռնտու լիներ:

Ամբողջ օրն ինձ պահեցին այնտեղ: Իմ դրամով ինձ հաց ու պանիր բերին, դրանով էլ գոհացա: Երեկոյան դեմ մի պաշտոնյա ներս մտավ, ինձ տեսնելով հարցրեց, թե ով եմ: Հյուր է,– պատասխանեց կոմիսարը,– Ուզում ես հետը խոսիր, մենակությունից ձանձրանում է»: Այդ մարդը նստեց մոտս, հարցրեց որտեղացի լինելս: Իմացավ, որ բուլղար եմ, մի երկու հարց տվեց բուլղարերեն, բայց այնքան պարզ բաներ, որ շատ լավ հասկանում էի և պատասխանեցի ռուսերեն: Տեսա, որ ինքը բուլղարերեն մի քանի բառ գիտե միայն: Եղել է Ֆիլիպեում, լսել է բուլղարերեն խոսելը և մի քանի բառ սովորել: Ես նրան պատմեցի ռուսերեն լեզվով իմ մանկությունը: Տեսա, որ ոչինչ չի հասկանում՝ պատմեցի թուրքերեն, թե ինչ պես 1877 թվի ռուս-թրքական պատերազմի ժամանակ ինձ տարել են Ռուսաստան, և այնտեղ էլ մեծացել եմ: Այնուհետև նա բացվեց ինձ, որպես թե թուրքերը շատ անիրավ կերպով են վարվում քրիստոնյաների հետ, և թե վաղուց չէ, ինչ շատ տեղերում հայերի կոտորեցին: Այդ խոսքի վրա իբր զարմացած հարցրի՝ «Բայց այդ անկարելի է: Միթե՞ այս կողմերում հայեր են կոտորել: Չեմ կարողանում հավատալ»: «Ինչպես չէ,– ասաց նա,– և ինչպիսի վայրենություններ

գործ դրին խեղճ քրիստոնյաների վրա: Մենք էլ՝ առնաուտներս[1], ապրում ենք Մակեդոնիայում քրիստոնյաների հետ խառը, բայց երբեք մեզ թույլ չենք տա այդպիսի վերաբերմունք նրանց նկատմամբ: Հիմա ես չեմ կարողանում ըմբռնել, թե Ձեզ ինչու են բռնել, ինչ են ուզում Ձեզանից: Կասկածում են, թող երկրից դուրս քշեն, էլ ի՞նչ են այսպես չարչարում, քննում, խուզարկում: Շատ խղճում եմ Ձեզ: Եկել եք մի քանի ղուրուշ փող վաստակելու և ահա ընկել եք թուրք կառավարության ձեռքը: Ես ուզում եմ Ձեզ օգնած լինել, հայրենակիցներ ենք: Գուցե դուրսը մարդ ունեք, ուզում եք որևէ բան հաղորդել, վստահեցեք ինձ առանց տատանվելու, գուցե որևէ բանի կարիք ունեք, ինձ ասացեք, ես կգտնեմ ձեր մարդուն ու Ձեր միջնորդը կդառնամ: Ինձ վրա ոչ ոք չի կասկածում: Բոլորովին հավատացեք ինձ»: Շատ կարճ կտրեցի. «Ես մի բարեկամ չունեմ այս երկրում ու ոչ մեկին էլ հաղորդելիք չունեմ: Շնորհակալ եմ Ձեր բարի տրամադրությունների առթիվ»,– ասացի և կանգնեցի: Հոգնել էի ամբողջ օրը այդպիսի ձանձրալի ու միևնույն ժամանակ լարված դրությունից: Նա նկատեց, որ ես անտարբեր եմ դեպի իր առաջարկները, անօգուտ գտավ այլևս շարունակել իր ծառայությունները ինձ առաջարկելով, վեր կացավ:

Սեր-կոմիսերը և փոլիսը դուրս էին գնացել, որ նա կարողանա ինձ հետ թուրքերեն լավ բացատրվել և իրենցից չճնշվի: Այդ էլ պարզ էր ինձ համար: Նրանք ներս մտան, նայեցին այդ պաշտոնյային, սա էլ իր կողմից ասաց. «Դիմիտրի էֆենդին շատ լավ մարդ է երևում: Արժե այդպիսի մարդկանց հետ բարեկամ լինել: Հույս ունեմ, որ շուտով նրա գործը կվերջանա, դուրս կգա քաղաք, իրար հետ լավ ժամանակ կանցկացնենք»: «Իհարկե, իհարկե,– ասաց կոմիսարը,– ես էլ շատ սիրեցի Դիմիտրի էֆենդուն»: Այդ պաշտոնյան գնաց: Օրը մթնում էր: Սեր-կոմիսարը սկսեց գրել իմ պատաս-

[1] Ալբանացի:

խանները: Գալով որ տեղացի լինելուս, նա շատ հարցուփորձ արեց, պնդեց, որ ես երևանցի եմ, որ այդպես են հայտնել իմ մասին, և ավելացրեց. «Գալիս եք մեր երկիրը խառնակում ու երբ կառավարության ձեռքն եք ընկնում, ճիշտ ճամբան գտել եք՝ հայտնում եք, որ ռուսահպատակ եք, ազատվում եք ու գնում, պարծենում: Բազմաթիվ ձերբակալվածներ կան, որոնք միաբերան այդ են վկայում, որ ռուսահայերն են իրենց դրդում մեր կառավարության դեմ դուրս գալ և իրենք ազատվում են բոլոր պատասխանատվություններից, որովհետև ռուսահպատակ են»: Ես բողոքեցի այդ հայտնության դեմ, ասելով, որ չեմ հասկանում, թե ինչ կապ ունեմ ես ռուսահպատակ հայերի հետ և խնդրեցի, որ նա գրի այն, ինչ որ ես եմ ասում: Կոմիսարը վերջացրեց գրությունը, կանչեց բանտապետին և ասաց, որ ինձ բանտ առաջնորդի և առանձին պահի: Իրերս պահեցին հենց այդտեղ՝ փոլիս-դայիրեում, տվեցին միայն վերմակս ու յափնջին, որ գիշերն անցկացնեմ: Ինձ առաջնորդեցին նույն սերայի բակի մեջ գտնվող մեծ ու երկաթե ճաղերով պատած դարպասը:

Դարպասի մեջ գտնվող դռնակից ինձ անցկացրին ներս: Բանտարկյալներն իրենց սենյակներում էին: Բոլորը լուսամուտների վրա ընկան տեսնելու նոր բանտարկյալին: Ամեն կողմից լսվում էին՝ «Բարոն բու դըր» խոսքերը: Ներսում մի քանի ժանդարմներ ու բանտապահի օգնականներ կային: Ըստ սովորության ինձ խուզարկեցին, որպեսզի արգելված իրեր, դանակ շենք ներս չմտցնեմ: Գոտիս քանդեցին ու երբ ուզում էին տեսնեն, թե ինչ կա մեջը, ոսկիները շաղ անցան բակի սալահատակների վրա: Բանտի շրջանակում, այդ աղքատ ու զրկված մարդկանց համար մի ոսկին շատ մեծ բան է: Իմ գոտուց թափվում է մի կույտ ոսկի: Ոսկու զրնգոցը ամենքին ոտքի հանեց: «Բարոն բոյլե ուլուր հա, ասլ բարոն բու իմիշ («Պարոնն այսպես կլինի, իսկական պարոնը սա է»)»,– գոչում էին բանտարկյալները ամեն կողմից: Պաշտոնյաները չռում էին իրենց աչքերն այդ փայլուն մետաղին, որպես գյուտի վրա:

Բանտապետը կարգադրեց հավաքել, տալ իրեն: Համրեց ու հայտնեց, որ 32 հատ է: «Ճիշտ է»,– ասացի: «Թող մնա ինձ մոտ, վաղը մուավինին (դատախազին) հարցնեմ, թե այս դրամն ինչ անենք, ինչպես կարգադրի, ըստ այնմ էլ կվարվենք»,– ասաց ու պահեց: Ես պահանջեցի, որ ինձ ստացական տա, խոստացավ, բայց այդ օրը չտվեց:

Ես կրում էի եվրոպական կեպի, դրանով էլ մտա բանտ: Մի կողմից այդ, մյուս կողմից այդ չափ ոսկու տեր լինելը իմ դիրքը շատ բարձրացրին: Ես սովորական մահկանացու չէի, և ինչպես հետո պիտի տեսնենք, շատ դեպքերում այդ դիրքով ես կարողացել եմ և ուրիշ բանտարկյալների[ն] օգտակար լինել:

Առաջին օրն էր, որ մտնում էի Մարաշի բանտ, և դա տեղի ունեցավ 1899 թվի հունիսի 26-ին, ու երբեք մտքովս չէր անցել, թե ես այդ բանտում պիտի անցնեմ իմ կյանքի ամենալավ, ամենաբեղմնավոր տարիները՝ դատապարտված կատարյալ անգործության: Ինձ դրեցին մի առանձին խցում և դուռը փակեցին վրաս: Ձերբակալվելուց հետո առաջին անգամ մնում էի ինքս իմ խոհերիս հետ: Ամենավրդովիչն ինձ համար կոմիսերի այն հայտնությունն էր, որ մատնողն ասել է ռուսահայերի մասին, թե նրանք խառնակում են երկիրը և իրենք ազատվում՝ օգտվելով կապիտուլյացիայի օրենքներից, իբրև ռուսահպատակներ: Դա մի մեղադրանք էր, որ, ըստ իս, չէր համապատասխանում ճշմարտության, և ես երկար մտածում էի, թե ինչ դիրք բռնեմ, որ այդպես ասողին ապացուցեմ, թե նա չափազանց սխալվում է: Այդ խնդիրը շատ ծանրակշիռ է այն տեսակետից, որ տաճկահայերը կամաց-կամաց այդ համոզման պիտի գան և վերջը հավանորեն իրենց դատի արժեքն իսկ պիտի կորցնեն: Այս ճնշող մտքերի մեջ երկար թափառելուց հետո հոգնած քնեցի:

Առավոտյան զարթնելուս պես նկատեցի, որ բոլոր բանտարկյալները բակում զբոսնում են: Հետո իմացա, որ Մարաշի բանտում առհասարակ ամբողջ ցերեկվա ընթացքում սենյակների դռները բաց են լինում ու բանտարկյալները համարյա առանց մի առանձին հսկողության բակում ու սենյակներում ժամանակն անց են կացնում իրենց ուզածի պես: Նկատեցի, որ խուցի դռան առաջ մի ոստիկան է կանգնած և արգելում է բանտարկյալներին մոտենալ իմ դռանը: Դռան մեջտեղը մի փոքրիկ անցք կա. ես այդ անցքից դիտում եմ բանտարկյալներին ու նրանց մեջ ծանոթ դեմք որոնում: Ծանոթ ոչ մի դեմք. այդ ինձ բավական հանգստացնում է:

Ժամը 10-ի մոտերքը ինձ դուրս հանեցին իմ խուցից ու խիստ հսկողության տակ տարան փոլիս-դայիրե, ուր նախորդ օրը անցկացրի: Քիչ անց եկավ բինբաշին և հարցրեց, թե դրամները ում մոտ մնացին, պատասխանեցի, որ բանտապետի մոտ է:

– Այսօր ևեթ նրանից ստացական կուզես,– ասաց նա,– առանց ստացականի նա ոչ մի կոպեկ իրավունք չունի բանտարկյալից վերցնելու: Միևնույն ժամանակ այդ դրամն անմիջապես պետական գանձարան պիտի մտցնի, որպեսզի հարկ եղած ժամանակ տրվի տիրոջը, հասկացա՞ր,– դարձավ նա յուզբաշուն,– այսօր կասես բանտապետին, որ օրենքի դեմ ինքնագլուխ բաներ չանի:

Յուզբաշին առանց խոսքի, հարգանքի մի նշանով ապահովացրեց բինբաշուն, որ նրա կարգադրությունը կկատարվի:

Ամբողջ օրը ես մնացի փոլիս-դայիրեում: Կեսօրի մոտերքը ներս մտավ մի շատ լավ հագնված պարոն և ինձ տեսնելով՝ հարցրեց սեր-կոմիսարին, թե ով եմ: Նա էլ ճիշտ երեկվա պես պատասխանեց, որ ես մի հյուր եմ ու ավելացրեց, որ ֆրանսերեն գիտեմ. կարող է հետս խոսել:

Երեկվա փորձն ունեի և առհասարակ տաճիկ քննության միջոցների մասին այնքան եմ լսել, որ հիմա շատ միամիտ պիտի լի-

նեի, որ չհասկանայի, թե հետս խոսելն ինչ էր նշանակում, բայց հարկավոր էր միամիտ ձևանալ: Նա մոտեցավ, մի բարի մարդու ժպիտով բարևեց, անունս, արհեստս ու որտեղացի լինելս հարցրեց. պատասխանեցի բոլոր հարցերին: Ապա հարցրեց, թե ինչ գործով եմ եկել ոստիկանատուն: Ես էլ բացատրեցի՝ համառոտակի պատմելով մի շաբաթից վեր կրածս նեղությունները ինչ որ կասկածի հետևանքով: Իմ խոսակիցը շատ զարմացավ, խիստ ցավակցություն հայտնեց ինձ պատահածի առթիվ և ավելացրեց,– Թուրք կառավարության ձեռքն ընկնողը հեշտությամբ չի ազատվի, թեև ինձ թվում է, որ Դուք՝ իբրև օտարահպատակ, պետք է իսկույն դիմեիք ֆրանսիական կոնսուլին. նա պարտական է Ձեր իրավունքները պաշտպանել:

– Այդ ճիշտ է,– ասի,– և երեկ ես այդպես էլ արել եմ, նամակ եմ ուղարկել ֆրանսիական կոնսուլին:

– Ո՛ւմ միջոցով,– զարմացած հարցրեց նա: – Հենց կոմիսերի միջոցով: Այս պատասխանի վրա այնպես անկեղծ ծիծաղեց այդ մարդը, որ ես եթե անփորձ լինեի, պիտի հավատայի, որ իսկապես նա ծիծաղում է իմ միամտության վրա:

– Բայց մի՞թե Դուք կարծել եք, թե կոմիսերը նամակ կհասցնի ֆրանսիական կոնսուլին տվյալ դեպքի առթիվ:

Ես էլ իմ կարգին շատ զարմացա այդ կասկածի առթիվ՝ այդպես պետք էր երևալ, ուրիշ կերպ արդարացում չուներ իմ նամակը հանձնելը կոմիսերին: Ես նամակը գրել էի այն հույսով, ինչպես որ խոստացել էին, զափիթեներին հանձնելու համար: Վերջին րոպեին նրանք հրաժարվեցին նամակն ընդունել: Նամակը մնաց մոտս: Պատռել չէի կարող, կորցնել նույնպես: Մյուս կողմից կոմիսերին հանձնելը մի շատ ձեռնտու բովանդակություն կրող նամակ, ծառայելու էր միայն ինձ ի նպաստ այս քննության ընթացքում: Պարզ է,

որ ես պիտի զարմանայի, թե ինչու կոմիսերը նամակը չպիտի հասցներ:

– Ո՛չ, եղբայր, կոմիսերը այդ նամակը տեղ չի հասցնի: Ես լավ եմ ճանաչում թուրքերին. նրանք չեն ուզի որևէ քրիստոնյայի օգնած լինել: Ընդհակառակը, կվնասեն ինչով կարող են: Ես ինքս քրիստոնյա եմ և մասնագիտությամբ ինժեներ: Չորս տարի չկա, որ Ուրֆայի ջարդերի[1] ժամանակ սպանեցին և իմ հորը չնայելով, որ նա իսկական հայ էլ չէր, այլ հույն կաթոլիկ: Եթե կարողանան, բոլոր հայերին և բոլոր քրիստոնյաներին կկոտորեն:

Այդ պատմությունն ինձ հետաքրքրեց: Ուզեցի իմանալ, թե ինչպես է իր անունը, թերևս լսածս կոտորածների նկարագրության մեջ այդպիսի մի դեպք հիշեմ: – Իմ ազգանունը Շարտյե է,– պատասխանեց: Այդ ազգանունը հիշեցրեց ինձ Հալեպի իմ խանութին կից արդուզարդի վաճառական կես հույն, կես ֆրանսիացի Աշիլ Շարտյեին, որի մասին ես ակնարկել եմ իմ նախորդ էջերում, որի հայրը նույնպես ինժեներ էր Հալեպում: Անունների այս նորությունը, ինչպես և մասնագիտության նույնությունը ավելի քան կասկած զարթեցրին իմ մեջ այդ մարդու մասին: Եթե մի հույն ազգանուն ասեր, գոնե այդ մասին կասկած չէի տանի, թեպետ ով և լիներ նա, ինչ ազգից էլ լիներ, ես նրան վստահություն չունեի: Ես իհարկե ոչինչ չասացի Հալեպի Շարտիեյի մասին, բայց ասացի, որ հավատալս չի գալիս, որ թուրքերը ջարդեր կազմակերպած լինեն քրիստոնյաների դեմ, թե չէ ես ինչ գործ ունեի այս երկրում:

– Ես տեսնում եմ, Դուք միամիտ մարդ եք, դրա համար էլ Ձեր նամակը հանձնել եք թուրք պետության պաշտոնյային, այն էլ սերկոմիսերին, որ իր ձեռքով հասցնի ֆրանսիական կոնսուլին: Ես շատ ատում եմ Թուրքիան այն օրից, երբ իմ անմեղ հորս սպանե-

[1] Հայերի կոտորածը տևողի է ունեցել 1895 թ.:

ցին և հիմա պատրաստ եմ ամեն կերպ վրեժխնդիր լինել, դրա համար էլ ես պատրաստ եմ Ձեզ օգնել ինչով կարող եմ:

– Բայց Դուք ինչո՞վ կարող եք ինձ օգնել: – Այ հենց ֆրանսիական կոնսուլին հաղորդելով. ուզում եք մի նամակ գրեցեք, տվեցեք, ես անձամբ իրեն կհասցնեմ:

– Շատ շնորհակալ եմ Ձեր ծառայության համար,– ասի, բայց ե՛րբ, ինչպե՞ս գրեմ, չէ՞ որ արգելքի տակ եմ:

– Մի՞թե Ձեր սենյակում չեք կարող գրել:

– Կփորձեմ, բայց ինչպե՞ս մատիտ, թուղթ և ծրար առնել տամ. կասկած կհարուցանեմ: – Ես Ձեզ համար կբերեմ, ասաց ու քիչ հետո դուրս գնաց: Կես ժամ անց եկավ նորից ու խոսակցության ընթացքում մյուսների համար աննկատելի ինձ տվեց մատիտ, թուղթ ու ծրար:

– Վաղն այս ժամանակ ես կգամ, կտաք նամակը, ասաց ու ցտեսություն ասելով՝ գնաց:

Ես արդեն գիտեի, որ մինչև քննիչի կողմից քննվելը իմ ցերեկվա օթևանը պիտի լիներ այս սենյակը. այդ ամենավստահելի տեղն է կառավարության համար՝ ոստիկանապետի գրասենյակն է, և իրենից ու մի փոլիսից զատ ուրիշ ոչ ոք չի մտնում այդտեղ: Այդ սենյակում ես կատարելապես կղզիացել եմ դրսի աշխարհի նկատմամբ, գիշերներն էլ նույնպիսի կղզիացումի եմ ենթակա, քանի որ իմ խուցի դռանը հատուկ ոստիկան է կանգնած: Այդ կեղծ մարդու առաջարկն ինձ համար շատ ձեռնտու գտա: Նույն բովանդակությամբ նամակ կգրեմ, ինչ որ մի անգամ գրել եմ ու տվել կոմիսերին, թող կարդան ու տեսնեն, որ նույնն եմ պնդում, իմ անմեղությունն եմ շեշտում և զուր տեղ ձերբակալվելս ու խնդրում եմ միջամտել թուրք կառավարության առաջ: Մյուս կողմից թերևս նրանց հետաքրքրում է իմ գրության ձևը՝ ստորագրելու համար, թե իրավ բուլղարական անձնագրի տակ իմ իսկական ստորագրությունն է.

այդ ևս ի նպաստ ինձ է խոսելու, քանի որ 1896 թվի օգոստոսի 20-ին Պոլսում իմ ձեռքով եմ ստորագրել անձնագրի տակ:

Երեկոյան նախորդ օրվա նման ինձ բերին բանտը այն միջոցին, երբ բանտարկյալներին արդեն փակել էին իրենց սենյակներում: Դրին ինձ նույն խուցը, դուռը կողպեցին ու մի ժանդարմ կանգնեցրին դռան առաջ: Ես առանց ճնշվելու գրեցի նամակս, փակեցի ծրարի մեջ և ապա քնեցի: Առավոտյան նույն ձևով ինձ տարան փոլիս – դայիրեն, ուր մնացի ամբողջ ցերեկը: Կեսօրվա մոտերքը նույն մարդը եկավ՝ նույն բարեհամբույր ժպիտը երեսին, եվրոպական քաղաքավարությամբ բարևեց, նստեց մոտս, խոսեց երկարորեն այստեղից այնտեղից, ապա հարցրեց, թե նամակը պատրա՞ստ է:

– Այո՛,– ասի:

– Դե՛հ, տվեք:

– Բայց ինչպե՞ս տամ, տեսնում են: – Հա, ես դուրս կգամ, Դուք կհետևեք ինձ և դռան մեջ կանգնած կխոսեք, և երբ ես պալտոյիս[1] օձիքը բարձրացնեմ, Դուք կտաք, և ես անմիջապես կանցկացնեմ պալտոյիս ներսի գրպանը: Այնուհետև ապահով եղեք:

Այդպես էլ արինք: Երբ նա կանգնած էր դռան առաջ, և ես՝ դռան շեմքում, նա այն ձևով բարձրացրեց իր պալտոն, որ բակում գտնվող բոլոր մարդիկ էլ աշկարա[2] պիտի հասկանային, որ նա թաքուն ինձանից բան է ստանում: Այդ նույն միջոցին ես նկատեցի դիմացի մեծ շենքի երկրորդ հարկի լուսամուտներում մարդկային գլուխներ, որոնք մեզ էին դիտում: Փաշայի ընդունարանի սենյակներն էին:

Մարդը գնաց. ես նայեցի լուսամուտից, տեսա, որ նա գնաց դեպի սերայի բակի դարպասը և դարպասից դուրս գնաց: Տպավո-

[1] Վերարկու:
[2] Բացահայտ:

րությունն այնպես էր, որ նա նամակս տեղ պիտի հասնի: Բայց քանի որ ստույգ կասկածում էի, ուստի լուսամուտի դիմաց սպասում էի, թե ինչով պիտի վերջանա այս կոմեդիան: Գործ չունեի, ժամանակն առանց այն էլ սահում էր ինձ համար բոլորովին անօգուտ:

Տասը րոպե չանցած տեսնեմ նույն մարդը սերայի դարպասից ներս մտավ և բակով շիտակ անցավ մեծ շենքի գլխավոր մուտքի ուղղությամբ: Ինձ համար պարզ էր, որ այդ նամակն էլ գնաց միանալու առաջին նամակին փաշայի գրասենյակում: Քիչ վերջը ներս մտավ բին-բաշին ու հարցրեց, թե բանտապետն ինձ ստացական տվա՞վ վերցրած ոսկիների դեմ: Ինձանից բացասական պատասխան ստանալուն պես կանչեց յուզբաշուն ու բարկացած ասաց. – Գնա՛ և այն եդէբսըզին (անամոթին) ասա, որ անմիջապես ստացական տա, ապա թե ոչ՝ այսօր ևեթ իրեն վռնդել կտամ իր պաշտոնից: Այդ երեկո, երբ բանտ մտա, բանտապետը, Մուստաֆա էֆենդին, պոլսեցի մի բավական անպիտան տիպ, տվեց ինձ ստացական վերցրած 32 տաճկական ոսկու առթիվ:

Երեկոյան ուշ քունս տարավ: Նամակ տանողի անձնավորությունը աչքիցս չէր հեռանում: Մտածում էի, թե ինչն է ստիպում մարդկանց այդքան ստորանալ, կեղծել: Արտաքինով նա թուրք չէր, շարժուձևն ավելի եվրոպացու էր նման. արդյո՞ք հայ է: Այս միտքը շատ էր ինձ մտատանջում: Խորապես պիտի ցավեի, եթե հայ լիներ: Հնար չունեի ոչ մի կերպ ստուգել: Եվ այդ խնդիրը բավական ինձ զբաղեցրեց: Վերջը իմացա, թե ինչ մարդ է: Անցել էին ամիսներ, ես դատապարտվել էի, դառել էի Մարաշի բանտի սովորական մի դեմք: Ձմռան մոտերքն էր, մի օր մի քանի պաշտոնյաներ ներս մտան բանտ և դիտում էին կտուրները, ինչ որ վերանորոգումներ կատարելու համար: Այդ մարդկանց մեջ տեսա և այդ քաղաքակրթված դեմքը, որ այդ քննության գործում բավական գործուն դեր էր կատարում՝ մատով ցույց էր տալիս այս կտուրը, այն կոտրված

կղմինդրը: Մոտս կանգնած մարաշցի մի բանտարկյալ թուրքի հարցրի, թե ճանաչում է այդ մարդուն:

– Ինչպե՞ս չէ, մեր քաղաքի ճարտարապետն է, պատասխանեց նա:

– Անունն ի՞նչ է

– Ալի:

– Թո՞ւրք է ուրեմն, իսկի թուրքի նման չի:

– Ճիշտ ես ասում, թուրք չի, դարձած[1] հրեա է:

Հանելուկը պարզվեց: Ինչպես երևում է, մի ժամանակ Հալեպում պաշտոնավարել է հենց այն ճարտարապետ Շարտիեյի ձեռքի տակ և այսօր, երբ թուրք կառավարությունն առաջարկել է իր գիտցած ֆրանսերենն օգտագործել ինձնից խոսքեր ու գաղափարներ դուրս կորզելու համար, այդքան քաջություն չի ունեցել այդպիսի կեղտոտ դեր խաղալուց հրաժարվելու և ընդհակառակը՝ իր ծանոթի անունն էլ առել է իր վրա, որպեսզի պատմությունը, որ հերյուրել է, ճշմարտապատում դառնա: Խեղճը չգիտե, որ այդ անունը ինձ շատ լավ հայտնի է: Բանտի բակում, երբ իմացա նրա իսկական անունը, զզվանքս եկավ և եթե այդ չափ չզզվեի, թերևս, մոտենայի և ֆրանսերեն երկու բառով որակեի իր արարմունքը: Աչքերը հանդիպեցին իմինիս հետ, իմ մեջ նա կարդաց այդ զզվանքը, չկարմրեց և ուզեց գալ դեպի իմ կողմը՝ ես շուռ եկա և անցա: Նա զգաց իմ զայրույթի չափը ու կանգնեց: Իմ վրեժը առնված էր նրանից:

Այդ դրությունը շարունակվեց մինչև հուլիսի 3-ը, այսինքն ամբողջ [ամիս] և ես կտրված էի ամեն ինչից: Վերջին օրերը ես նստում էի փոլիս-դայիրեում, և հիմա այլևս ինձ ձանձրացնող չէր լինում: Ընդհանուր լարված գործունեությունը թե՛ ոստիկանության և թե՛ զինվորական առաքումները այս ու այն ուղղությամբ թուլացան: Իմ անձնավորությունն այլևս իր խորհրդավորությունը կորցրել էր:

[1] Կրոնափոխ, որոնց Օսմանյան կայսրությունում անվանում էին դոնմե:

Ինչ էին սպասում և ինչ դուրս եկավ. իսկապես մի ֆոնոգրաֆչի: Դեպի Զեյթուն, Ֆռնուզ, Կապան, Հաճընն տանող ճանապարհները բռնված էին զինվորներով. ինչ որ մոտալուտ շարժումներ էին ենթադրվում: Տիգրանը կարող էր շատ բան չիմանալ, որ հայտներ. երևի ուրիշ մարդիկ էլ կան, որոնք ծպտված այս կամ այն դիմակով երկիր են մտել կամ գուցե գաղտնի էին շրջում: Այս կասկածներով հայկական բոլոր վայրերը հսկողության տակ են առնված, երթևեկը դադրած, կյանքը կանգ առած: Այս բոլորն ինձ հաղորդում են բանտի պաշտոնյաները, երբ հայտնի դարձավ, որ ես կարող եմ զոհ գնացած լինել մի թյուրիմացության կամ Տիգրանի կողմից հերյուրանքի նյութ դարձած, որպեսզի իր կարծիքով շատ բաներ պատմելով գրավե փաշայի համակրությունը և այդ ճանապարհով ազատվի: Վերջին օրերը, երբ փոլիս-դայիրեից ինձ բանտ էին բերում, այլևս պաշտոնյաները չէին փակում իմ խցում, գալիս նստում էին շուրջս ու տնավարի զրուցում իրար հետ, ինձ հետ, պատմում իմ անձի հետ կապված առասպելական դեպքեր և դրանց հաջորդող զինվորական խստություններ հայերի նկատմամբ և հիմա, երբ պարզվում է, թե ինչ պես լեռը մուկ ծնեց, մտքերը խաղաղվում են, ճանապարհների խստությունները վերացվում են ու ձերբակալությունները դադարում:

Այսպիսի զրույցները ինձ պարզում են դրությունը, և ես գտնում եմ, որ իմ բռնած դիրքը՝ որքան կարելի է պնդել ու բողոքել ինձ ձերբակալելու դեմ, որ ես թյուրիմացության զոհ եմ, որ ես հայերի հետ ոչ մի առնչություն չունեմ: Այս գիծը տանելով, ճիշտ է, գուցե ես տուժեմ, բայց մտքերը կխաղաղվեն, երկրում անդորրություն կտիրի, ամեն մի հայ կասկածի առարկա չի դառնա և իմ ներկայությամբ եթե այժմ որևէ կերպ հայ ժողովրդին օգտակար չեմ կարող լինել, գեթ իմ վնասը չհասնի նրան: Սա դառնում է իմ իդեա ֆիքսը: Գիտեմ, որ ռուսահպատակ լինելս հայտնելով հեշտությամբ կազատ-

վեմ, բայց հենց այդ կետը պիտի հաստատի այն բոլորը, ինչ որ թուրք կառավարությանն ասված է: Իմ մասին եղած հայտնությունները հերքվելուն պես, հերքվում են և իմ գալուս հետ կապ ված հեղափոխական ապագա քայլերը:

Խնդրի այդ կերպ դասավորությունը իմ բարոյական ըմբռնումներին գոհացում է տալիս: Ուրիշ ճամբա չկա: Արդեն հասկացել եմ, որ Տիգրանը նույնպես բռնված է: Բանտապետը մի օր, ինձ լավութ-յուն արած լինելու համար, թերևս այն հույսով, որ ես կազատվեմ այդ օրերում և իրեն որևէ նվեր կտամ, հայտնեց, որ ինձ այդ գործի մեջ խառնողը մի կարճահասակ լակոտ է: Իմ հարցին, թե ո՞վ է դա, որտե՞ղ է այժմ, նա պատասխանեց՝ Ալեքսանդրետից է բերված և հիմա քննության տակ է ինչպես և ես, և առանձին է պահվում:

Իմ հետաքրքրությունը բավարարելու համար նա ավելացրեց, որ այդ գործով բռնվածների թիվը ընդամենը 8 հոգի էին: Այս թիվն ինձ բավական մտահոգեց՝ արդյո՞ք Խատիկովն էլ կա: Պարզվեց, որ օտարական միայն ես եմ: Ուրեմն նա չկա: Այդ կետը իմ գործը բավական դյուրացրեց: Նա կարող էր այնպիսի անհաշիվ պատասխաններ տալ, որ իմ տված պատասխաններին հակասեր: Ես տված հարցին պատասխանել եմ շարունակ, որ Խատիկով անունով մարդ չեմ տեսել, դժվար է ասել, թե Խատիկովը ձերբակալված լիներ չէ՞ր ասի, որ ինձ տեսել է: Քննության ընթացքում այսպիսի հակասությունը կարող է շատ կարևոր մի կետ լուսաբանել:

[1899 թ.] Հուլիսի 3-ին ինձ կանչեցին մուստանտիկի (քննիչ) մոտ: Այնտեղ նստած էին ուրիշ երկու մարդիկ: Տրված հարցերին պատասխանեցի նույնությամբ, ինչ որ պատասխանել եմ: Քննիչը գրեց բոլորը և առաջարկեց ինձ ստորագրել: Ես մերժեցի, առարկելով, որ ես թուրքերեն գրել, կարդալ չգիտեմ, չգիտեմ [թե] ինչ է գրված այդ թղթում՝ մինչ իրենք պարտական են հրավիրել կոնսուլին, որ ներկա լինի քննության գործին:

– Մենք կոնսուլ չենք կանչի,– չոր կերպով պատասխանեց քննիչը: – Ես էլ չեմ ստորագրի,– ասացի:

– Մեզ համար միևնույնն է: Այս երեկո երկու մարդ կվկայեն, որ Դուք քննության ժամանակ ասել եք և ես գրել եմ:

– Այդ ձեր գործն է,– ասի:

Ինձ ետ բերին բանտը ու ազատ թողեցին բանտարկյալների մեջ: Թուղթ ստացվեց, որ իմ գործը անցնում է դատարանին: Նույն օրը դրսից ներս բերին նույն գործով մնացյալ բանտարկյալներին: Նստած բանտապետի մոտ նայում եմ ներս մտնողներին: Միայն Տիգրանն է ծանոթ դեմք, մյուսներին կյանքումս տեսած չեմ: Այդ կետը ինձ գերազանցապես հանգստացրեց: Ես մոռացա իմ կրած բոլոր նեղությունները. չկա մեկը, որ գեթ իր սրտում ասի, թե իմ պատճառով, ինձ հետ կապ ունենալով պատժվում է: Այդ գիշեր հանգիստ քնեցի:

Առավոտյան բանտապետն ինձ կանչեց ու ցույց տալով Տիգրանին.

– Այ, քեզ այստեղ հասցնողը սա է,– ասաց:

– Հապա մի գնամ հարցնեմ, թե ինձ ճանաչում է, տեսնեմ ինչ կասի, ասացի բանտապետին ու դիմեցի ուղղակի Տիգրանին:

Մինչև օրս բառացի հիշում եմ այն խոսքերը, որ ասացի նրան.

– Փլավը եփել եք և պիտի բոլորը ուտեք:

– Քավ լիցի, ես Ձեր մասին ոչինչ չեմ խոսել: Կառավարությունն էր ինձ հարցնում Ձեր մասին: Ես ասել եմ, որ այդպիսի մարդ չեմ ճանաչում: Ուրացումը շատ ակնհայտ էր:

– Բայց մի՞թե հեղափոխականը մինչև այդ աստիճան կիջնի, կստորանա:

– Ես կրկնում եմ, որ այս գործում ոչ մի հանցանք չունեմ:

– Միայն Դուք գիտեք ինձ, գիտեք և մեր գործունեության ապագա ծրագիրը: Բանտարկվածների մեջ, բացի ձեզնից, ինձ ոչ

ոք չի ճանաչում: Ո՞վ կարող էր լինել մատնիչը: Ո՞վ կարող էր ասել, որ ես ունեմ մետաքսի կտորի վրա կուսակցական գործիչի վկայական, ո՞վ կասեր, որ ռուսահայերը վտանգի րոպեին հայտնում են իրենց ռուսահպատակ լինելը, ազատվում են և նրանց տեղ մենք ենք պատժվում: Այս բոլորը միայն Դուք կարող էիք ասել և ուրիշ ոչ ոք: Բայց գիտցած եղեք, որ այս բանտում կփտեմ և չեմ ասի, թե ռուսահպատակ եմ, որպեսզի ձեզպեսները իրենց աչքերով տեսնեն, թե ինչպես կարելի է գաղափարի համար տառապել բանտում փտելով: Անշուշտ հիշում եք Ալեքսանդրետում ձեզ ասածս վերջին խոսքը, որ ձեզ չամաչացնեք: Հենց իմ այդ խոսքը բավական էր, որ այս րոպեին ինձանից ամաչելու ձեր զգացողությունն ունենայիք:

Այս խոսքիս վրա Տիգրանը շատ հուզվեց, նորից պնդեց, որ ինքը հանցանք չունի, որ ինքն իմ մասին ոչինչ չի ասել: Բայց ես ընդհատեցի նրա խոսքը, ասելով, որ այժմ կեղծում է և հենց դրա համար էլ բանտում իմ տեսակցությունն իր հետ առաջին և վերջին անգամն է լինելու սա, որ այսուհետև նա մեռած է ինձ համար ու որևէ առթիվ ինձ չդիմե, եթե նույն բանտում տասնյակ տարիներ իսկ կողքկողքի ապրենք: Ասացի և հեռացա, և ճիշտ որ հինգ տարուց ավելի մնացի նույն բանտում և նրա հետ մի բառ չփոխանակեցի այլևս:

Ինձանով միասին ինը մարդ կա[ր] այս գործում: Մինչև դատավարությունը ես արդեն գիտեի ամբողջ պատմությունը: Սա մի տխուր, հայ հեղափոխական գործը արատավորող պատմություն է: Առիթը մի նամակ է, և այդ նամակը Ալեքսանդրետից մինչև Զեյթուն հասնելը անցել է 6 մարդու ձեռքով, այդ վեց մարդն էլ բռնված են: Դրանք շղթայի օղակների պես մեկը մյուսին է հանձնել նամակը, և գործը բացվելուն պես մեկը մյուսին մատնել: Իսկ շղթայի վերջին երկու կարևոր օղակները, որոնք չեն ձերբակալված, հայտնի դեմ-

քեր են, մեկը եկեղեցական բարձր պաշտոնյա, մյուսը Զեյթունի չորս իշխանական ընտանիքներից մեկի Ենի-Դունյան ընտանիքի ներկայացուցիչը՝ Նազարեթ Չավուշը, որ 1895 թվի ապստամբության[1] գործում կարևոր դեր է խաղացել: Այդ երկու անձնավորությունները, եթե մի քիչ խելք ու խիղճ էին ունեցել, այս ամբողջ տխուր պատմությունը տեղի չէր ունենա և թերևս ո՛չ Տիգրանը, և ո՛չ էլ Սարգիս Առաքելյանը մատնիչներ չէին դառնա: Այս երկուսին առանձնացրի, որովհետև նրանք հեղափոխական գործիչներ են եղել և էին Վերակազմյալ Հնչակյան[2] կուսակցության անդամներ:

[1899 թ.] Օգոստոսի 17-ին մեզ թղթեր բերին, որով հաղորդվում էր, որ մեր դատավարությունը սկսվելու է սեպտեմբերի 1-ին: Օգոստոսի 21-ին մեզ կանչեցին և ստուգեցին մեր անձնավորությունները: Դատը տևեց 3 ամբողջ օր՝ սեպտեմբերի 1-ին, 15-ին և 22-ին: Դատավարության հենց առաջին օրը կարդացվեց այն նամակը, որ պատճառ է եղել այս աղմկալից գործի: Այդ նամակը լրացնում է այս տխուր պատմությունը: Մինչև այստեղ մատնիչները անհատներ էին, մինչ այս նամակը թելադրում է Զեյթունցիներին կառավարության հանձնել դաշնակցական գործիչներին: Եվ այդպիսի մի պաշտոնական [գրություն] գրված է Հնչակյան կուսակցության կենտրոնից՝ Լոնդոնից, հնչակյան ձվաձև կարմիր գույնի կնիքով՝ Լևոն Բագրատ ստորագրությամբ: Վերջը երբ, ազատվելուց հետո Եգիպտոսում հանդիպեցի Տամատյանին[3], նա հայտնեց, որ այդ

---

[1] Տեղի է ունեցել 1895 թ. հոկտեմբեր – 1896 թ. հունվարին: Կազմակերպիչները Հնչակյան կուսակցությունն ու նրան հարող մի խումբ տեղացի գործիչներն էին: Ապստամբությունը գլխավորել է Նազարեթ Չավուշը (Նորաշխարհյան):

[2] Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը ստեղծվել է 1896 թ.: 1921 թ. միավորվել է Ռամկավար ազատական կուսակցությանը:

[3] **Միհրան Տամատյան** (1863–1945), հայ հասարակական-քաղաքական գործիչ: Մասնակցել է Սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծմանը: 1920 թ. օգոստոսի 4-ին Աղանայում Ազգային գերագույն խորհուրդը Մ. Տամատյանի նախագահությամբ Կիլիկիան հռչակել է անկախ հանրապետություն, որը չեղարկվել է Ֆրանսիայի կողմից:

ստորագրությունը Հնչակյան կենտրոնի պայմանական ստորագրությունն է եղած այդ շրջանում:

Երբ Տիգրանը համոզվում է, որ ինքը դուրս է ընկած մեր գործունեության շրջանակից և մեզանից որևէ կերպ նյութապես օգտվել չի կարող և երբ տեսնում է, որ իր առաջարկը, Երկրից հեռանալ, մեր կողմից չի ընդունվում, պարտք է համարում զեկուցագիր, ուղարկել Լոնդոն և այնտեղից հրահանգ խնդրում: Լոնդոնի կենտրոնը մի պաշտոնական նամակ է գրում Նազարեթ Չավուշի հասցեին, որի բովանդակությունը մոտավորապես հետևյալն է.

– Մեր ստացած ստույգ տեղեկություններից երևում է, որ 5–6 հոգի դաշնակցական գործիչներ են մտել Կիլիկիա: Եթե նրանք հայտնվեն ձեր քաղաքում, նրանց ոչ մի ընդունելություն ցույց չտաք, աշխատեցեք համոզել, որ հեռանան ձեր շրջանակներից, իսկ եթե համառեն մնալ ու շարունակեն իրենց գործունեությունը, հանձնեցեք կառավարության:

Այս նույն բովանդակությամբ նամակ էլ նույն կազմակերպության Եգիպտոսի ճյուղը խաբեությամբ կարողանում է կորզել զեյթունցի Բարդուղիմեոս վարդապետից, որ այդ միջոցներին Եգիպտոսում էր գտնվում, և որը հայտնի է իր հանդուգն գործերով Զեյթունի 1895 թվականի ապստամբության միջոցին: Այս նամակն էլ ուղղված է եղել Զեյթունի Կարապետ եպիսկոպոսին:

Այս երկու նամակները միասին ծրարված ուղարկվում են Տիգրանին, որ դյուրությամբ կարող է կապ պահել արտասահմանի հետ շնորհիվ նավահանգստում գտնվող եվրոպական այս ու այն պետությունների փոստային հաղորդակցության: Տիգրանը կապեր ունի Մարաշի հետ: Նրա գործակիցն է Առաքելյան Սարգիսը: Տիգրանը նամակը հանձնում է Ալեքսանդրետում մանրավաճառի խանութ ունեցող մարաշցի Ալեքսանյան Նազորին, խնդրելով նամակը հասցնել Մարաշ՝ Առաքելյանին: Նազորը նամակը հանձնում է իր

հորեղբորորդի Ալեքսանյան Մկրտչին, որ ջորապանությամբ է պարապում ու հաճախ գնում Մարաշ ու վերադառնում: Սա առանց իմանալու նամակի բովանդակությունը, իր սովորության համաձայն տանում է ու նամակը հանձնում Սարգսին: Սարգիսն էլ գտնում է իր կողմից ոչխարի հոտերի տեր Կարա-Գյավուրյան Արթինին, որ Զեյթունի շրջանի հետ կապված է առևտրական գործերով (իր հոտերը Զեյթունի արոտներումն են խնամվում) և անձնական բարեկամ է Նազարեթ Չավուշին:

Արթին աղան հանձն է առնում նամակը տեղ հասցնել: Նա գնում է իր ոչխարների մեծ հոտի հետ: Կան մի քանի քուրդ հովիվներ հետը: Ախըր-Դաղը անցնելուց հետո, երբ մոտենում են Ջհան գետին ու պիտի անցնեն Մարհասա կամուրջը, որն այժմ կոչվում է Համիդիե քեոփրուսի[1], ուր միշտ էլ ժանդարմներ են հսկում անցուդարձի վրա և կասկածելի մարդկանց խուզարկում, Արթինը զգուշության համար նամակը հանձնում է իր հովիվներից մեկին՝ քուրդ Օկյաշին, որը բոլորովին կասկածելի մարդ չէ, քանի որ հայ չէ, և նրան պատվիրում է առաջ անցնել և նամակը հասցնել Նազարեթ Չավուշին: Ինքը մի գիշեր մնում է ոչխարների հոտի մոտ և միայն մյուս օրն է մտնում Զեյթուն:

Նազարեթ Չավուշը ստանալով ծրարը, բաց է անում ու մեջը երկու նամակ գտնում, մեկն իր հասցեին, մյուսը Կարապետ եպիսկոպոսի, որն ապրում է Աստվածածին վանքում, քաղաքից դուրս: Երբ բովանդակությանը ծանոթանում է, շտապում է դեպի վանք և անձամբ հանձնում եպիսկոպոսին: Այդ եպիսկոպոսը մի ծերացած, տգետ ու ցնդած վանական էր, որ մեռավ 1904 թվի գարնանը Զեյթունում: Կասկածելով, թե մի գուցե դա որոգայթ է Նազարեթ Չավուշի կողմից իր դեմ, և թերևս նամակն իրեն հանձնելուց հետո կառավարության իմաց տա ու իրեն բռնել տա, առանց երկար ու բա-

[1] Համիդի կամուրջ:

րակ մտածելու շտապում է դեպի զորանոց, որ երկու կիլոմետր հեռու է Զեյթունից, ներկայանում է կոմանդանին ու տալիս նամակը նրան, հայտնելով, որ նամակն իրեն հանձնել է Նազարեթ Չավուշը և թե այդ բովանդակությամբ մի նամակ էլ հենց Չավուշի մոտ է գտնվում: Նազարեթ Չավուշը այդ միջոցին կռված է լինում եպիսկոպոսի հետ ու արդեն հարց է բարձրացրած եղել կաթոլիկություն ընդունելու: Հայ եպիսկոպոսն էլ այդ բանից դրդված, մասամբ էլ վախեցած, որ իրեն կարող է մատնել, շտապում է նախ ինքը մատնել: Իշխան ու եկեղեցական՝ բավական իրար սազում են:

Հենց որ կոմանդանը Նազարեթ Չավուշին կանչում է, սա խորամանկ ու հեռատես մարդ լինելով, նախատեսած է լինում, թե հանկարծ եպիսկոպոսը նամակը չհանձնի կոմանդանին ու իրեն բերան տա, իր ստացածը չի պատռում, գնում է կոմանդանի մոտ ու առանց նրանից պահանջ լինելու, ներկայացնում է նամակը, հայտնելով, որ նման մի նամակ էլ հանձնել է Կարապետ եպիսկոպոսին ու ավելացնելով, որ նամակ բերողը քուրդ Օկյաշն է, Արթին աղայի հովիվը:

Այս տրագի-զավեշտը տեղի է ունենում 1899 թ. մայիսի վերջերքին: Գործի ծայրը քակվում է վերջից: Դժվար չէ մինչև վերջ հասնել: Եթե եպիսկոպոս ու իշխան առանց ճնշումի, ինքնաբերաբար կդիմեն մատնության, ինչու նույնը չեն անի սովորական մահկանացուները՝ թրքական բռնության, ճնշումի տակ կամ ավելի շուտ թուրք ոստիկանապետի քաղաքավարի ու շողշող խոսքերից, թուրք փաշայի կողմից ուղարկված համադամ կերակուրի և նվեր մի քանի մեջիդիեյից քաջալերված:

– Կուզում, օղլում,– այսպես է սկսում քաղցրախոս բինբաշին կամ կոմիսերը, դու երիտասարդ ես, չգիտես օգուտդ, դու անմեղ ես: Քեզ բերել ենք միայն հարցուփորձի համար: Եթե միշտ ասես.

«Չգիտեմ, տեղեկություն չունեմ»՝ դու կդատապարտվես, եթե ուզում ես ազատվել ու տուն երթալ, ասա բոլորը ինչ գիտես:

Եթե դիմացինը տատանվող է, գայթակվող է, պատվիրում են լավ սենյակում պահել քննության օրերում, հյուրասիրել, անկողին տալ և այս ճանապարհով նրա թույլ կողմը բռնել:

Բանտարկյալները ինձ հայտնեցին, որ քննության ամբողջ ընթացքում Տիգրանի համար շարունակ փաշայի տնից փլավ ու տապակած միս էին ուղարկում և հետը շատ քաղաքավարի վարվում:

Քուրդ Օկյաշին ձերբակալում են: Նա հայտնում է, որ նամակը իր աղան Արթինն է իրեն հանձնել: Բռնվում է Արթինը: Նա էլ հայտնում է, թե նամակն իրեն հանձնողը Առաքելյան Սարգիսն է: Սա [էլ] է ձերբակալվում, առանց դժվարության հայտնում է, որ նամակ բերողը ջորեպան Մկրտիչն է, իսկ Ալեքսանդրետից ուղարկողը՝ Տիգրանը: Հեռագրով ձերբակալվում է Մկրտիչը, որն իր ջորիների յետևից հասնելու վրա է Ալեքսանդրետ: Ձերբակալվում է նաև Տիգրանը: Խեղճ Մկրտիչը, որ նամակի բովանդակության մասին գաղափար անգամ չունի, միամտաբար հայտնում է, որ Սարգսին հանձնած նամակը ստացել է Ալեքսանդրետում իր հորեղբորորդի Նազորից: Ձերբակալվում է Նազորը, [որը] մինչև վերջն էլ պնդում է, որ ինքը ոչ Տիգրանից նամակ է ստացել և ոչ էլ հանձնել Մկրտչին: Բայց ինչ օգուտ, երբ երկուստեք նրան են մատնանշում: Վեց հոգուց միայն Նազորն է, որ ուրիշին բերան չի տվել: Այս վեց հոգին ժողովում են Մարաշ, իբրև սանջակի կեդրոնական քաղաք, որի շրջանակի մեջ է ընկնում Զեյթունի գայմագամությունը:

Քննության ընթացքում Սարգիսը, բացի այն որ հայտնել էր, թե ով է նամակն ուղարկողը և ով բերողը, միաժամանակ, երևի կառավարությանը հավատարմություն ցույց տալու համար, հայտնում է այդ գործի հետ առնչություն չունեցող մի դեպք, որպես թե մի տարի առաջ ևս Չոք-Մարզվանից հեղափոխական բովանդակությամբ և

Ղևոնդ ստորագրությամբ մի նամակ է ստացել, որի մեջ իրեն առաջարկվում է կրկին հեղափոխական գործի մեջ մտնել: Նա հայտնում է, որ այդ նամակ բերողը ջորեպան Դավիթն է, իսկ նամակ գրողին անձամբ չի ճանաչում: Կառավարությունը ձերբակալում է Դավթին և հեռագրում Չոք-Մարզվան, թե ով՞ կա այնտեղ կասկածելի մարդ: Այնտեղի կառավարությունն էլ ձերբակալում է Թղլյան Պողոս անուն[ով] մի շիտակ ու ազնիվ երիտասարդի, որ դեռ 10 ամիս առաջ բանտումն է եղել, Ադանայում, այնտեղ 1897 թվից սկսված մի քաղաքական գործի առթիվ, մի գործի, որի համար 28 մարդ էր ձերբակալված, որոնց թվում ավստրիահպատակ ու մի հունահպատակ անձինք՝ ավստրիական «Լլոյդ»[1] շոգենավային ընկերության Մերսինի ճյուղի գործակալներ, որոնք իբրև թե օգնել են հայերին գաղտնի գրություններ ստանալու և ուղարկելու գործում:

Օտարահպատակներին իրենց կառավարությունները թույլ չտվեցին բանտարկել, և երբ թուրք կառավարությունն ուզեց բռնի վերցնել, հարաբերությունը այնքան լարվեց, որ քիչ մնաց ավստրիական ռազմանավերի կողմից Մերսինը ռմբակոծվեր: Իբրև զիջում ավստրիական պետության, դատավարությունը փոխադրվեցավ Ադրիանոպոլիս և թույլ տրվեցավ, որ դատավարությանը ներկա լինեն նաև երկու պետությունների դիպլոմատիական[2] ներկայացուցիչները:

Վերջը, երբ թուրք պետությունը համոզվեց, որ այդ դատավարության մեջ հայտնի պիտի դառնան փաստեր իր իսկ անարդար ու ոչ անաչառ քննությունների արդյունքները, լավ համարեց այդ գոր-

[1] «Լլոյդ» (Lloyd's Register of Shipping) բաժնետիրական ընկերություն (հիմնվել է 1760 թ. և գործում է առ այսօր) խոշորագույն ընկերություն, որը հանդիսանում է նավաշինարարության, նավաշինական մեխանիզմներ արտադրության և ապահովագրական ընկերություն:

[2] Դիվանագիտական:

ծը կարճել և սուլթան Համիդի կողմից ներման իրադե[1] հանվեց ամբողջ գործի համար ու այդպիսով շնորհիվ եվրոպացի երկու մարդկանց մնացյալ 28 բանտարկյալները, որոնց թվում և Պողոս Թղլյանը, ազատվում են:

Պողոսը Չոք Մարզվանում է, իր օջախում նստած, իր նարնջի և լիմոնի գեղեցիկ պարտեզում, Հայոց ծոցի վճիտ ջրերի զովի ու հովի մեջ, անտեղյակ այս ամբողջ անցուդարձին: Կա չկա Պողոսը կլինի այդ նամակ գրողը Սարգսին, թեև նա 10 ամիս է, որ ազատվել է բանտից, մինչ Սարգսի ասելով նամակն ստացել է մի տարի առաջ: Այդպես է մտածում տեղական կառավարությունը և Պողոսին ձերբակալելով ուղարկում Մարաշ:

Դատարանը Թուրքիայում ըստ երևույթին նույնն է ինչ որ մյուս երկրներում, այն բացառությամբ, որ նախագահը կրոնավորի հագուստով է, գլխին մի մեծ սպիտակ չալմա: Ներկա էին ժողովրդի կողմից չորս ներկայացուցիչներ, որոնցից մեկը հայ: Օրենքները վերցրած են ֆրանսիականից, բայց գործադրությունը խիստ կամայականության է ենթակա: Նախագահը ամեն ինչ է: Նա է կտրող, թափողը: Դատի ընթացքում բոլոր մեղադրյալները կրկնում են այն, ինչ ասել են հարցաքննության ընթացքում: Միայն Տիգրանն է, որ հիմնովին փոխում է իր քննության ժամանակ արած հայտնությունները իմ մասին և Խատիկովի մասին: Նա հայտնում է, որ ինքը ոչինչ չգիտե ոչ իմ և ոչ Խատիկովի մասին, որ իրեն քննության ժամանակ համոզում էին այդպես ասել, ինքը հրաժարվել է: Նախագահն առաջարկում է կարդալ Տիգրանի ցուցումները: Կարդացվում են այդ ցուցումները: Դա մի ընդարձակ զեկուցում է, որով պարզվում է, թե նամակներն ում կողմից են գրված, ումն են ուղարկված, ում ձեռքով: Միևնույն ժամանակ նա ոգևորված իր հայտնություններով հարկ է համարում ավելացնել, որ նամակի մեջ ակնարկված

[1] Հրաման:

անձնավորությունները ռուսահայեր են, որոնք եկել են հատկապես ուսումնասիրելու Կիլիկիայի դիրքերը, հայ ժողովրդի ռազմական կարողությունը, որպեսզի տեղեկագիր ներկայացնեն Կովկասում գոյություն ունեցող յեղափոխական մարմնին, որի որոշման համաձայն հարկ եղած զենք, մթերք ու պաշար պիտի մտնի Կիլիկիա՝ հայ ժողովուրդը ապստամբեցնելու համար թուրք կառավարության դեմ: Նա չի մոռանում հայտնել նաև, որ հիշյալ ռուսահայերը ապրում են Թուրքիայում իբրև ոչ հայեր: Եվ որպես ապացույց նա մատնանշում է ինձ, որ շրջում եմ բուլղարական անձնագրով և Արտեմ Խատիկովին, որ իմանալով Տիգրանի ձերբակալումը և Մարաշ տարվելը, անմիջապես նավ է նստում ու հեռանում Թուրքիայի սահմաններից: Նրա խուսափումը ավելի քան խորհրդավորություն է մտցնում գործի մեջ: Ես ձերբակալվում եմ վերջինը և ինձնով ձերբակալության շարքը վերջանում է:

Նախագահը Տիգրանին հարցնում է, թե այս բոլոր դու չես՞ ասել:

– Ո՛չ, պատասխանում է նա:

– Բայց տակը քո ստորագրությունն է, թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն:

– Այդ կեղծ ստորագրություն է: Ես թուրքերեն գրել իսկ չգիտեմ, ասում է Տիգրանը, որ բանտում հաճախ թուրքերի համար նամակներ էր գրում: Բանտարկյալներից մեկը այդ բանը հայտնեց: Իսկույն կարգադրվեց բանտից մի քանի բանտարկյալներ բերեն, որոնք վկայեցին, որ իրենց համար Տիգրանը թուրքերեն նամակներ է գրել: Այս աղաղակող սուտը ծածկեց բոլոր նրա ասածները որպես իրողություն և նախագահը նորից հարցրեց, թե Տիգրանը ընդունում է, որ ինքն է հայտնել այդ բոլորը:

– Ո՛չ, կտրուկ պատասխանեց Տիգրանը: Նախագահը կարգադրեց ինձ դուրս բերել դահլիճից:

– Դու երևի ամաչում կամ վախենում ես Դիմիտրիից,– ասում է նախագահը,– խոստովանիր, որ դու ես ասել այս բոլորը:

– Ո՛չ, կրկնում է Տիգրանը:

Նորից է հարցնում նախագահը.

– Դիմիտրին չկա, նա ներկա չէ, մի վախիր, ասա ինչ գիտես:

– Ես ոչինչ չգիտեմ նրա մասին, պնդում է Տիգրանը:

Ինձ ներս բերին:

– Բայց ես իմ ականջով եմ լսել այս բոլորը, ինչ որ գրված է, որովհետև ներկա եմ եղել հարցաքննության միջոցին, զայրացած ասում է նախագահը:

Տիգրանն ուրացավ և Խատիկովի մասին ասածները և Կիլիկիայում մեր ապագա գործունեության մասին իր ասածները: Վերջին խնդրի մասին հարցնելիս մի անգամ էլ ինձ դուրս բերին դահլիճից: Բայց ոչինչ չօգնեց: Տիգրանը նոր էր գլխի ընկել, որ քանի շատ բան գիտենա մի մարդ հեղափոխականների ու նրանց գործունեության մասին, այնքան ավելի նա կասկածելի է, ուրեմն և հանցավոր:

Խնդիրը եկավ ինձ:

Նախագահը կարդաց. – Դիմիտրի Մարինով-Պոպով՝ բոլգարացի, նամը դիգերի (այլ անունով) Մարտիրոս Սարգսյան, երևանցի: Այս դու՞ ես, հարցրեց ինձ նախագահը:

– Ես Դիմիտրին եմ և ուրիշ անուն չունեմ:

– Մեզ այդպես է հայտնված: Հիմա դու ասա ինչ որ գիտես, ասաց նախագահը:

– Նախ քան որևէ բան ասելը, խնդրեմ կանչել ֆրանսիական կոնսուլին, որպեսզի ներկա լինի այս դատին: – Մենք պարտական

չենք կոնսուլ հրավիրել: Բոլգարիան մեր մի վիլայեթն է և Ֆերդինանդ[1] էֆենդին մեր մի վալին է:

Այս խոսքը ծանր եկավ ինձ ու ես աղաղակեցի.

– Ստաֆուրուլլահ, կաբուլ եթմամ (Մեղա Աստված, չեմ ընդունում): Քսան տարի է [ինչ] իմ հայրենիքն ազատվել է օսմանյան լծից: Այս խոսքերի վրա նախագահը բարկությունից կարմրեց: Ետևումս լսեցի մռլտուք: Ինչպես երևում է դահլիճում բավական հայեր կային, որոնց սրտով գոհունակության մի դող անցավ:

– Բայց և այնպես մենք կոնսուլ չենք կանչելու:

– Դուք ինձ դատում եք իբրև ռուսահայի, ինչու՞ չեք հարգում օրենքը, բացականչեցի ես:

– Եթե դու ռուսահայ ես, խոստովանիր, մենք անմիջապես կոնսուլին իմաց կտանք:

– Ես բոլգար եմ, ինչպես՞ հայտնեմ, թե ռուսահպատակ եմ:

– Ուրեմն այլևս ինչ խնդիր կարող է լինել կոնսուլին իմաց տալու:

– Բայց չէ՞ որ Դուք ինձ դատում եք որպես ռուսահայի:

– Այո, բայց դու բոլգարական անձնագիր ունես:

– Ես բոլգար եմ, անձնագիրս էլ բոլգարական: Ուրիշ ի՞նչ կերպ կարող է լինել:

Այս վեճը շարունակվում է բավական երկար ժամանակ: Վերջը նախագահը հայտնում է, թե այդ հարցը թողնենք և թե ես ինչ ունեմ ինձ պաշտպանելու համար: Ես հայտնում եմ, որ իմ դեմ ոչինչ չի ասված, ինձ ոչ ոք չի մեղադրում, իմ մոտ ոչինչ չի գտնված, ես ի՞նչ ունեմ պաշտպանվելու: Ես ասել եմ ամեն ինչ, ինչ ինձ է վերաբերում: Ավելորդ ոչինչ չունեմ ասելու: Կարդում են իմ ցուցումները: Պետք է ասել, որ ասածներիս վրա ոչինչ չեր ավելացված:

---

[1] **Ֆերդինանդ I** (1861–1948), Բուլղարիայի իշխան (1887–1908), Բուլղարիայի թագավոր (1908–1918):

– Այս՞ է քո ամբողջ ասածը:

– Այ՛ո:

– Ինչու՞ չես ստորագրել:

– Որովհետև չեմ հավատում, թե իմ ասածներից դուրս ավելորդ բաներ էլ չգրեն:

– Հիմա տեսար, որ ոչինչ չեն ավելացրել:

– Բայց Դուք եղեք իմ տեղ, րեյիզ էֆենդի, Ձեզ բռնեն և ասեն, դու այն չես, ինչ որ ես և ամիսներով քաշ տան բանտերում, Դուք կհավատաք Ձեզ նեղություն տվողների գրածին: Այս խոսքի վրա բոլորը ծիծաղեցին:

Տեսնում եք, որ մենք չենք Ձեզ նեղություն տվողը, այլ Ձեր մոտ կանգնողները (ակնարկեց բանտարկյալներին):

– Բայց նրանք իմ մասին ոչինչ չեն ասել:

– Ասել են և հիմա ուրանում են: Այդ միջոցին իմ պաշտպանը, որ կառավարությունից նշանակված մի հայ փաստաբան էր, ուզեց ինձ օգնած լինի, մի խոսք ասաց:

– Մյուքելլէմէյէ կալքշմա[1], խիստ սաստով ընդհատեց նրան րեյիզը: Եվ այդ խեղճ հայ փաստաբանը, որն առաջին անգամ էր բերանը բաց անում ի նպաստ ինձ խոսելու, ընդմիշտ փակեց իր բերանը ամբողջ դատավարության ընթացքում:

Ընդհանուր տրամադրությունն այնպես էր, կառավարությունն այլևս չէր հավատում, որ ես հայ կարող եմ լինել: Այդպես էլ խոսվում էր պետական շրջանակներում և արձագանքը բանտապահների միջոցով ինձ էր հասնում: Ինձ համարում էին ինտրիգայի զոհ, բայց և այնպես ոմանք դեռ կասկածում էին: Այդ պատճառով էլ ձեռքն ընկած մարդկանց բաց թողնել ո՞րքան խելացի բան է: Ինչպես է լինում, որ Տիգրանը գիտե Դիմիտրիի մասին, եթե սա որևէ կապ չի ունեցել հայերի հետ: Մի փոքրիկ կապն արդեն բավական

[1] «Տեղդ նստի՛ր». կամ «Զայնդ կտրի՛ր»:

է, որ նա մեղավոր լինի: Արդեն ամբողջ գործը բացված է մի նամակ փոխադրելու հետևանքով: Եթե մի Մկրտիչ, որն առանց իմանալու նամակ է տանում մի քաղաքից մյուսը իր ջորեպանի հանգամանքով, հանցավոր է ճանաչվում, ինչու մի Դիմիտրի հանցավոր չէ, որ թերևս հայերի համար մի նամակ կամ լուր բերած կարող է լինել:

Դատավարության ընթացքում հայտնի դարձավ, որ Կարա-Գյավուրյան Արթինը 50 ոսկի կաշառք է տվել նախագահին և նա խոստացել է ազատել: Այդպիսի գործում մեկին-մյուսին ազատելը շատ դյուրին է, բավական է, որ ընդունվի, թե նամակը փոխադրված է առանց գիտնալու նրա բովանդակությունը: Թեև Կարա-Գյավուրյանի կողմից նամակը քուրդ Օկյաշին տալը Ջհանի կամուրջն անցնելուց առաջ ու նրան առաջուց ուղարկելը և իրեն կամուրջի մոտերքում մի գիշեր աննպատակ անցկացնելը բավական տվյալներ են հաստատելու, որ Արթին Կարա-Գյավուրյանը շատ լավ գիտեր նամակի հեղափոխական բովանդակությունը:

Այդ միջոցին բանտապահը, որի մոտ էր իմ դրամները, ինձ մի քանի անգամ իբրև բարեկամ խորհուրդ տվեց դրամներից մի 5 հատ իրեն տրամադրեմ, որ տա մուավինին (դատախազին) իբրև կաշառք և ինքը մեծ հույս ունի, որ ինձ կազատեն:

– Սա Թյուրքիա է, ձեր երկրի պես արդարությանը չեն նայում: Կաշառք տվողը կազատվի: Դու անմեղ ես: Բայց վախում եմ, որ քեզանից դրամ չստանալով, քեզ էլ մյուսների շարքում դատապարտեն:

Գուցե ճիշտ էր ասում, բայց ինչպես նման մի քայլ անես: Կառավարությունը ոչինչ չի գտել իմ դեմ, ոչ մի փաստ չկա, արդյոք՞ սա մի թակարդ չէ, որ լարվում է իմ դեմ: Բանտապետը կտանի դրամը, կտա և կասի կաշառք է առաջարկում: Ահա և քեզ համար մի գործ, որով կարող են երեք տարով դատապարտել: Դրա օրի-

նակն ունեյի աչքիս առաջ: Գզիր Հանես Բաղտիկյանին և Մուսխաջյանին բանտ բերին նրա համար, որ նրանք, կարծեմ իրենց որդկերանց Եվրոպա ուղարկելու համար անցագիր էին ուզել կառավարությունից և իբր թե մի-մի մեջիդիե կաշառք էին տվել ոստիկանապետին: Երեք ամիս բանտում տառապելուց հետո մեկը 60 ոսկի տվեց, մյուսը՝ 80 ոսկի որպես կաշառք և երկուսն էլ ազատվեցին: Օրենքն ինձ չի կարողանում մեղադրել. դժվար չէ մի այդպիսի մեղադրանքով պատժել: Մյուս կողմից թերևս բանտապետը այդ 5 ոսկին պահելու է մոտը. եթե ազատվեմ արդեն իրենն է դրամը, եթե դատապարտվեմ՝ կտա ու կասի, որ մուավինը չընդունեց: Իսկ որ կարևորն է, մտածում էի, թե կաշառքը ստանալուն պես, մուավինը պիտի ենթադրի, որ ես անշուշտ հանցավոր եմ, որ կաշառք եմ առաջարկում. չէ՞ որ արդար մարդը կաշառքի միջոցին չի դիմի: Այս մտածություններով ես մերժեցի կատարել բանտապետի առաջարկը, ասելով, որ ես ոչ մի հանցանք չունեմ, ինչից պիտի վախենամ: Ինձ միևնույնն է, չեն կարող դատապարտել: Այդ հարցը այդ ձևով փակվեց:

[1899 թ.] Սեպտեմբերի 22-ին, երրորդ նիստին, դատավարության բաժինը վերջանալուց հետո դատախազը կարդաց իր մեղադրականը և մեղադրեց բոլորին, որ[պես] գիտակցաբար օգնողներ հայ հեղափոխական, և թերևս միայն Կարա-Գյավուրյանն է, որ անգիտակցաբար է տարել նամակը, ինչպես և նրա հովիվ քուրդ Օկյաշը: Գալով Տիգրանին՝ նա գտավ, որ Տիգրանը ամենավտանգավոր անձնավորությունն է, որի գոյությունը միշտ վրդովելու է Թուրքիո խաղաղ կյանքը: Պողոս Թղլյանի նկատմամբ նույնպես պատիժ առաջարկեց, ասելով, որ եթե Սարգսին գրողը նա էլ չէ, բայց քանի որ Չոք-Մարզվանի կառավարությունը նրան է կասկածում, ինչու պիտի մենք նրան կասկածից դուրս համարենք:

Իմ վերաբերյալ դատախազը մեղադրանք գտնել չկարողացավ:

– Մի մարդ, որ 31 տարեկան է, և դեռ ոչ ամուսնացել է, ոչ տուն ու տեղ հաստատել, խոսում է ու գրում թե՛ ռուսերեն և թե՛ ֆրանսերեն, որոնք իսկի էլ պետք չեն մի ֆոնոգրաֆչիի, նա չի կարող կասկածելի չլինել, ուստի և պատժի արժանի է:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 23-ին մեզ տարան դատարանի դահլիճը, որպեսզի հայտնեն վճիռը: Ալեքսանյան Նազորը և Մկրտիչը, Առաքելյան Սարգիսը և ես դատապարտվեցանք 5-ական տարվա բանտարկության: Թղլյան Պողոսը՝ 3 տարվա, Դավիթը՝ 1 տարվա: Տիգրանը, ինչպես և Խատիկովը, ի բացակայության, դատապարտվեցան 101 տարվա բանտարկության: Իսկ Կարա-Գյավուրյան Արթինը և հովիվը քուրդ Օկյաշը՝ անպարտ արձակվեցին:

Դատապարտությունից հետո Սարգիսը հայտնեց մեզ, որ նա էլ 50 ոսկի է կաշառք տվել, թե չէ նրան 15 տարով պիտի դատապարտեին: Իմ պատիժը, ինչպես տեսնվում է, մի նամակ տանողի չափ է: Այդ վկայում է, որ թուրք կառավարությունը ինձ համարյա անմեղ էր գտնում:

Մեր գործերը Պոլիս գնացին: Բավական ժամանակ անց վերադարձան, որով հաստատում էին դատարանի վճիռը, բացառությամբ Պետրոս Թղլյանի 3 տարին: Ինչպես երևում է, Պոլսում գտել են, որ հեղափոխական գործչի համար 3 տարին քիչ է: Նրան դատարան կանչեցին, մի քանի հարցուփորձ արին և 3 տարին դարձրին 5: Խեղճը հույս ուներ՝ գոնե 3 տարուց հետո տուն գնալ, որին իսկապես կարոտել էր, բայց այժմ պիտի մեզ-5 տարվա դատապարտվածներիս հետ սպասի բանտում, միայն նրա համար, որ դրանից առաջ հեղափոխական գործով կասկածվել է ու բանտարկվել:

Դատապարտվելուց հետո ես դարձա Մարաշի բանտի մի անբաժան մասը: Մինչև այժմ ինձ պահում էին մի փոքրիկ խցում, հիմա տեղավորեցին ընդհանուր կացարաններում, ուր ազատ շարժվելու տեղ չկա: Բարեբախտություն է, որ ցերեկները սենյակների դռները բաց են և բանտարկյալները շրջում են բակում: Սա մի քառանկյունի ձև ունի, սալահատակված, մեջտեղը մի առատաբուխ պաղ ու առողջարար աղբյուր: 8 սենյակում տեղավորված են մոտավորապես 200 մարդ: Սենյակների դռները փակվելուն պես մի անտանելի օդ է կանգնում, որ շնչելը դժվարանում է: Նոր բանտարկվածը մի քանի օր չի կարողանում քնել՝ լու, փայտոջիլ, ոջիլ, գարշահոտություն: Եթե դրան ավելացնեք այն, որ բաղնիք տանել գոյություն չունի, պատկերը կլրանա: Ով ուզում է, ցերեկով, երբ դռները բաց են, կարող է աղբյուրի ջուրն ամաններով տանել արտաքնոցի մոտ գտնվող մի նման բաժանմունք և այնտեղ լվացվել ինչպես ուզում է: Ով միջոց ունի կարող է ածուխ, փայտ գնել, տաքացնել ջուրը և այնպես լվացվել: Բայց քանի՞ մարդ կճարվի այդ հոծ բազմության մեջ, որ նման շռայլություն թույլ տա իրան: Սենյակներում կահկարասի գոյություն չունի. հատակին խսիրներ են փռած, նրանց վրա էլ ով ինչ հետը բերել է, այն է ծածկում: Կառավարությունը ամեն մեկին տալիս է մի կիլո հաց և ուրիշ ոչինչ: Ով ունի դրամ կարող է գնել ամեն ինչ, կարող է եփել, թեյ ունենալ, հյուրասիրել՝ իր գործն է:

Բակը, ցերեկով մտնողի համար, ներկայանում է մի տարօրինակ պատկեր, մի խառնիճաղանճ բազմություն, արևելյան բազարի մի անկյուն, մի քարվանսարա, լիքը վատ հագնված, կիսատկլոր մարդկային ամբոխով: Սակայն այդ վիճակը չի ազդում մարդկանց տրամադրության վրա: Մի քանիսը անցուդարձ են անում, մի անկյունում, մեկը գլխին ժողոված մի բազմություն հեքիաթ է պատմում կամ իր գործած «քաջագործության» մի դրվագ, մի այլ տեղ դարդո-

տի մեկը տամբուրան (սազը) կրծքին քաշած նվագում է ու երգում իր կորցրած ազատությունը, բակի մեջտեղում մի խումբ ձեռք-ձեռքի տված հալայ են քաշում (կլոր պար) ու ոտքերը տախտակյա կաբկաբները[1] մի տակտով սալահատակին զարկում: Մի ուրիշ անկյունում սրճեփն է իր սուրճն ու թեյը գովաբանում ու համեմում զանազան սրախոսություններով, մի այլ խումբ ինչ որ խաղով է տարված, շատախոսի մեկն էլ մի քանի մաշված շապիկ ու վարտիք ուսին ձգած «խառաջ», «հա խառաջ» է գոռում, վեր հանելով իր ապրանքի դիմացկունությունը: Նա միջնորդ դելլէլն է, որ խաղերի մեջ տանուլ տվածների հագուստներն է ծախում պարտքը թափելու համար: Մի քանիսը պատի տակ շարված քթիվ[2] են անում: Այս ու այն դռան առաջ մեկը մանգալի[3] վրա դրված կերակուրին է նայում ու հաճախ սրան նրան բոթում, որ չդիպչեն մանգալին ու շուռ տան: Այդ ժխորի մեջ մերթ այս դռանը, մերթ այն՝ մի ծեր, կուզ[իկ], աչքերը ճպռոտ ժանդարմ է երևում, սրան նրան փաղաքշական խոսքեր ասում՝ ծխախոտ կամ մի «ֆինճան»[4] սուրճ ստանալու հույսով:

Այդ ծայրահեղ աղքատ բազմության մեջ երբեմն նկատվում են քիչ [թե] շատ մաքուր հագնված մարդիկ. դրանք այս ու այն քրդական ցեղերի պետերն են, որոնց մի դատարկ խնդրով բանտ են նետել դրամ քաշելու համար, կամ այնպիսիներն են, որոնց հակառակորդներն ավելի կաշառք են տվել և սրանց դատապարտել տվել:

Աղքատները, որոնք ոչինչ չունեն, իրենց հացի կեսը ծախում են (հացը գնում են պաշտոնյաները կամ ժանդարմները) ու ստացած դրամով մածուն, խաղող, պանիր գնում:

Աշխատասերները գործում են գուլպաներ, քսակներ, գլխի արախչիներ, որոնք բավական գեղեցիկ են լինում և իրենց ար-

[1] Կոշիկները:
[2] Քթիվ՝ մարմնի կամ հագուստի վրա միջատներ որոնել:
[3] Կրակարան:
[4] Սուրճի բաժակ:

տադրությունը ժանդարմների միջոցով շուկա ուղարկում ու ծախում: Ամենից լավ զբաղումը սենյակի ծառա դառնալն է: Նրա վարձը ամեն օր մեկի հետ կերակրվելն է, իսկ իր հացը ծախելով դրամ է հավաքում: Յուրաքանչյուր սենյակ ունի իր չավուշը[1], նույնպես բանտարկյալ: Սա սովորաբար բանտի զորբաներից[2] մեկն է լինում, որ սենյակի ծախքերին չի մասնակցում և ընդհանրապես նորեկներից «չավուշլըգ» կոչված տուրքն է առնում, անկողին է տալիս վարձու և երբեմն հարստանում:

Երբեմն բանտ մտնող աղքատ մի մարդ, ճարպիկ լինելով սրան նրան ծառայելով, իր բաժին հացը ծախելով և ապա հավաքած դրամները տոկոսով տալով սրան նրան մի երեք չորս տարուց հետո դրամի տեր է դառնում և դուրս գալով բանտից իր գյուղում հայտնի ունևորների շարքը մտնում: Շատ անգամ դրսից գրավ են բերում սովորաբար թանկարժեք հագուստեղեն և դրամ տանում տոկոսով: Կանացի հագուստները գեղեցիկ տղերաց հագցնում են և սազի ու դափի նվագի տակ պարել տալիս: Այդ սովորաբար այն ժամանակ, երբ եսար (հաշիշ) են ընդունած լինում ու այդ քեֆի մեջ իրենց բանտարկյալի վիճակը մոռացության տալիս: Երևակայական ջեննեթը[3] այդ վայրկյանին հանդես է գալիս և ժամերով զբաղեցնում մեղկ ու բթացած ամբոխին:

Բանտում կռիվն ու ծեծն էլ անպակաս է: Իգիթություն վաստակելու տենչը ոմանց մեջ մեծ տեղ է բռնում: «Իմ երկրացուն հայհոյեցին, իմ սենյակի մարդուն անարգեցին»,– ասում է մեկը և հարձակվում՝ դա արդեն կռվի սկիզբն է:

Կռիվների մեծ մասը ծագում է «տղայի» խնդրից: Բանտում կան 14–16 տարեկան տղաներ: «Խալիլը զբոսնեց նրանց հետ»,–

[1] Բանտապետի սպաց:
[2] Զորավոր, ձեռքին ուժ ունեցող, ուժ գործադրող, բռնավոր:
[3] Դրախտ:

նախանձում է մեկը: Սկսվում է մի կեղտոտ ինտրիգ[1]: Յուրաքանչյուրն իր պաշտպաններն ու բարեկամներն ունի: Եվ ահա զինված ամեն տեսակ իրերով՝ փայտ, դանակ, ամաններ, կաբկաբ՝ մի քանի վիրավոր, գոռում գոչյուն: Վերջապես դրսի միջամտություն՝ զինվոր, ոստիկան, նոր ծեծ, ոտքերին շղթա, առանձնացում:

Հայերը ոչ մի մասնակցություն չունեն այս բոլորի մեջ: Նրանք ընդհանրապես քաղաքական հանցավորներ են, թվով մինչև 40 հոգի: Եթե դրանց մեջ կան ոչ քաղաքական գործով մեղադրվողներ, դրանց թիվն էլ համեմատաբար շատ քիչ է լինում: Հայերը իրենց օրապահիկը հանելու համար աշխատում են, ընդհանրապես գուլպա ու քսակ են գործում և այդպիսով իրենց ժամանակը անց[կաց]նում:

Բանտը պատժի միջոց է հայի համար, իսկ թուրքի համար հաճախ զվարճատեղի է: Դրա համար դուրս եկողը երկար չանցած նորից է գալիս: Հաճախ թուրք գյուղացին բանտում չաղացած է դուրս գնում գյուղ, ուր հաց չունի ուտելու:

Մարաշի բանտի բնակիչները մեծ մասամբ թուրքեր են, մոտավորապես 60%, հետո գալիս են հայերը՝ 18%, քյուրդերը՝ 11%, չերքեզները՝ 3% և արաբները՝ 3%: Այդ ժամանակ թուրքերից քաղաքական հանցավոր չկար: Նրանց գործած հանցանք ները ամեն տեսակի էին. հատկապես բռնաբարություն միայն թյուրքերի մեջ է նկատվում: Հայերը, ինչպես հիշատակվեց, մեղադրվում են քաղաքական հանցանքներով, թեպետ լինում են և փոքրիկ գողեր, վառոդի առևտուր: Քյուրդերը մեղադրվում են աշիրեթական կռիվների և աղջիկ փախցնելու գործում, չերքեզները՝ ավազակության և գողության, արաբները՝ մարդասպանության գործում:

Թյուրքերի տիպը շատ ավելի քիչ է տարբերվում տեղական հայերից, քան անդրկովկասյան թուրքերը Կովկասի հայերից: Մի

[1] Խարդավանք:

բան ինձ խիստ զարմացրեց, որ թրքական լեզուն ամենուրեք շատ ավելի հասկանալի է հենց ամենահեռավոր ասենք Բաքվի թուրքին, մինչ հայկական երկու կից գավառների բարբառները, օրինակ Զանգեզուրի և Նոր Բայազետի՝ դժվարությամբ են իրար հասկանում: Հայկական հեղափոխության սկզբնական շրջանում մեր գործիչներից ոչ ոքի մտքով չէր անցնում, թե մեր Տաճկաստանի դեմ սկսած ակտիվ քայլերը կարող են իրենց հակազդեցությունը ունենալ կովկասյան թուրքերի վրա տեղական հայերի հետ ունեցած դրացիական հարաբերությունների նկատմամբ: Սա նույն ցեղն է, նույն լեզուն, տարբերությունը կրոնի մեջն է, որով տաճկական թուրքը հայի հետ հարաբերելուց, նրա հետ մի ամանում ուտելուց չի խորշում, ինչպես Կովկասի թուրքը[1]: Կիլիկիայի թուրքական տիպը խառնուրդ է ոչ միայն հայի, այլև հույնի և մասամբ արաբի: Բուն թուրք, որ մինչև այժմ էլ կրում է մոնգոլական տիպ, պահվում է լեռների քաշված անկյուններում, ուր մոնգոլների արշավանքի օրերից հատվածական կերպով մնացել է խուլ անկյուններում, առանց խառնվելու ուրիշի հետ: Մարաշից ոչ հեռու, Հայ լեռան խորշերում ապրում է թրքական այդ հին տիպը, որին թուրքերը Սուլի են անվանում, այսինքն՝ գաղտնիքի երկրից: Սրանք փոքր են հասակով, թուխ-դեղնագույն դեմքով, նեղ փոքրիկ աչքերով, դուրս ընկած այտերով և ցանցառ, շատ նոսր միրուքով: Նրանք ապրում են նախնական ձևով և այնքան կուլտուրայից զուրկ, որ տեղական թուրքերը նրանց մասին առասպելներ են պատմում: Լեռան խորշում երկու Սուլի աշխատում են, մեկը ձայն է տալիս.

– Ահմեդ, ո՞ւր ես:

– Այստեղ եմ,– պատասխանում է Ահմեդը:

– Էհե՛յ, լավ չեմ տեսնում քեզ, կոճղի որ՞ կողմումն ես:

– Հենց այդ կոճղն եմ, ասում է Ահմեդը:

---

[1] Նորայրը վկայում է:

Այնտեղ կոճղ չի եղել: Ահմեդն այնքան մարդու նման չէ, որ ընկերը նրան կոճղի տեղ է ընդունել:

Մի ուրիշ առասպել: Դաշտում աշխատելիս, հեռավոր ընկերին կանչում են.

– Մուստաֆա՛, շուտ արի, նստենք հացի, քանի քամին չի բարձրացել:

Ասում են սուլիները հաց թխել չգիտեն: Հացի տեղ գործածում են փոխինձ, որ դաշտում քամու ժամանակ ուտելիս քամուց կքշվի ու բերանները ոչինչ չի ընկնի:

Թյուրքերն ընդհանրապես հայերին չեն սիրում: Սովորական է, երբ մի խեղճ հայ է հանդիպում [կարող են] գլխին խփել, ծաղրել: Եթե նա պատասխանեց, կտեսնես ամեն կողմից թափվեցին, որ ծեծեն: Այդքան բազմության մեջ 5 հոգի եմ դիտած, որոնք պաշտպանում են հային, եթե նա ենթարկվում է անիրավ ծեծի կամ հայհոյանքի: Դրանք են՝ Ջէրիդլի Ալի, Բիրտիսլի Ահմեդ, Ֆենքլի Ահմեդ, Ավշար Ալի և Չերքեզ Նուրի, բոլորն էլ մարդասպաններ պատվի խնդրով[1]:

Հային թուրքերը բնորոշում են այսպես. ֆրենկը (առհասարակ եվրոպացիք) սատանայից ստացել են նրա գլուխը, հայը՝ սատանայի ոտքերը, իսկ թուրքը՝ նրա սեռական անդամները:

Քյուրդերը, որոնք ընդհանրապես Աղջադաղցի[2] էին, շատ ծանրաբարո և լուրջ մարդիկ էին: Անունները թրքականի պես են, բայց կրոնով բոլորովին տարբեր: Ավշարները հայերից դարձված են ոչ շատ հին ժամանակ: Կարապետ Շորվոյանն ինձ ասում էր, որ իր

---

[1] *Ավշարները հայերից դարձված են ոչ շատ հին ժամանակ: Կարապետ Շորվոյանն ինձ ասում էր, որ իր պապը՝ Մուխահ Վանեա Շորվա օղլին իրեն պատմել է, որ 50 տարի առաջ ավշարները Զեյթունի մոտ տեղ խնդրեցին, որ գան և միանան: Տեղ չիմկա պատճառով մնացին մահմեդական:*

[2] Աղջադղաղ, Սուրբ լերինք, լեռնաշղթա և լեռնագագաթ Կիլիկիայում, Սերաստիայից հարավ-արևելք, Դերսիմի Արևմտյան կողմում, Մալաթիայի և Զեյթունի միջև:

պապը՝ Մուխսի Վանես Շորվա օղլին իրեն պատմել է, որ 50 տարի առաջ ավշարները Զեյթունի մոտ տեղ խնդրեցին, որ գան եւ միանան: Տեղ չլինելու պատճառով մնացին մահմեդական:

Թուրքերի մեջ գտնված միջոցին նրանց հետ ծոմ են պահում, բայց իրենք այդ սովորությունը չունեն: Առհասարակ կրոնի կողմից իրենց համարում են հալածված, ուստի իրենց կրոնի մասին շատ քաշվելով են խոսում: Իրենց անվանում են րաֆալի, բեկթաշի, ալավի (Ալիի անունով), թուրքերը նրանց անվանում են ղզլբաշ[1]: Հանդերձյալ կյանքի մասին նրանց կրոնը չի խոսում: Լավ մարդու հոգին նորից աշխարհ է գալիս մի ուրիշ մարդու միջոցով, վատ մարդու հոգին փոխանցվում է տեսակ-տեսակ կենդանիների մեջ, նայելով իր հանցանքներին՝ ջորու, էշի, շան, խոզի և այլն, մինչև որ մեղքերը քակվում են: Իրենց աղոթքը կատարում են տամբուրայի (սազի) նվագով, կրոնապետը (դեդե) երգում է և նվագում, ժողովուրդը հավաքվում է ու լսում: Այդ ժամանակ հարսերն ու կանայք գալիս են, նրա ձեռքը համբուրում, մոտը նստում, խոսում: Աղոթքը կատարելիս հարս ու աղջիկ տղամարդկանց հետ միասին շրջան են կազմում ճրագին [շուրջը] և պտտվում: Այդ միջոցին որոշ տրադիցիայով ճրագը հանգցնում են աքաղաղի թևաթափով, որպեսզի Ալին, որ իրենց կարծիքով Մովսեսից ու Հիսուսից բարձր է և աստվածացած, վառի: Քիչ վերջը վառում են՝ «Ալին եկավ»,– կանչում են ու սկսում երգել հատկապես Ալիի երգը: Այդ միջոցին դեդեն անվերջ ձայնակցում է այս երգին իր սազով: Բազմությունը սկսում է ընկնել էքստազի[2] մեջ և ժամերով կրկնում նույն եղանակը՝ «Իմանըմ Ալի. իմանըմ Ալի»[3]:

---

[1] Բառացի՝ կարմրագլուխ:
[2] Չմայլանք, հափշտակվածություն:
[3] «Իմ սիրելի, իմ հարգելի Ալի»:

Նրանք Մահմեդին [Մուհամմեդ] չեն հարգում, ուստի և թուրքերը նրանց չեն սիրում: Հայերի հետ շատ լավ են: Ընտանեկան սովորություններով նրանց նման, կրկնամուսնություն չունեն, ապահարզան էլ չունեն: Թուրքերի պես աղոթք, լվացում չունեն, միայն թլպատություն ունեն: Օմար, Օսման ու Բեքիր անունները չեն սիրում, որովհետև սրանք են սպանել Հասան[1] և Հուսեյին[2] իմամներին: Այդ երեք անունով եկող հյուր չեն ընդունում իրենց մոտ: «Ցորենը ա՛ռ Օմարից, բեռցուր Օսմանի իշուն և Բեքիրի ջրաղացը տար, ի՞նչ հաց կստանաք»,– սովորական առած է այդ քրդերի հ[ա]մ[ա]ր:

1895-ի հայկական ջարդերի ժամանակ դրանց ցեղապետը՝ Բոզ Աղան մի նոր աղանդ հնարեց, քարոզելով, թե քանի որ հայերին անպատիժ կոտորեցին, ուրեմն աշխարհիս վերջը հասել է, որ թուրքերը իրենց էլ պիտի ջարդեն: Եվ որպեսզի աշխարհը չվերջանա, պետք է թոթափել թուրքի լուծը, որով կարելի կլինի Աստծո գթությունը հայցել: Ուստի աշխարհային բաները ոչինչ են, ինչի է պետք ոսկին, արծաթը: Այս քարոզի ազդեցության տակ կանայք իրենց ճակատի ոսկիները, մատանիները, ամեն ինչ միացրին, համայնացրին, աշխարհը արհամարհեցին և աղոթեցին: Թյուրք պետությունը այդ շարժումը վտանգավոր համարեց, զորք հավաքեց, հարձակվեց Աղջադաղի վրա, ջարդեց Բոզ աղայի 1000-ի չափ կռվողներին ու սպանել տվեց Բոզ Աղային: Այս ամբողջ պատմությունն ինձ ընդարձակորեն, թուրքերից գաղտնի պատմեց Բլո անունով մի խելացի քյուրդ, որ հաճախ սազը կրծքին նվագում էր քրդական տխուր մելոդիաներ ու հետը երգում: Մինչև այժմ էլ այդ երեկոների վերհիշումն իմ մեջ առաջ է բերում մի բուռն ցանկություն նեղ

[1] Մարգարե:
[2] Մարգարե:

օրերին այդպի սի լավ մարդու, սրտանց մարդու հանդիպել ու մի ժամով գեթ մոռանալ տաղտուկ կյանքի մղձավանջը:

Զեյթունի մասին խոսելիս քյուրդերն ասում են հետևյալ առասպելը.

– Ալի զորապետը, երբ ամենը տիրեց հասավ և Զեյթուն, մատով ցույց տալով նրա ժայռերը հարցրեց, թե ո՞վ է ապրում այնտեղ: Պատասխանեցին, թե դա հայի քաղաք է:

– Թող մնան: Ասաց Ալին, և ահա այդ խոսքի վրա Զեյթունը թուրքերը երբեք չեն կարող գրավել:

Զեյթունի մոտ մինչև հիմա էլ մի մեծ քար կա, որ կոչվում է՝ Ալի ղայասի[1]: Թրքական զորքը բոլոր կռիվներում այդ քարից դենը չի անցել, միշտ հաշվի առնելով այդ խոսքը, որպեսզի չջարդվի:

Թուրքերը այդ քրդերի մասին շատ բացասական բաներ են պատմում, օրինակ, որ նրանք աղոթելիս ճրագը հանգցնում են և խառնվում իրար: Բայց դա սուտ է: Ճիշտն այն է, ինչ որ Բլյոն պատմեց:

Այժմ տեսնենք, թե Մարաշի բանտում, իմ ժամանակ ինչ քաղաքական հարցերով, որքան հայեր են եղել և ովքեր են դրանք:

1897 թվից սվիններ ունենալու համար դատապարտվում են 5 տարվա բանտարկության զեյթունցի Մանուկ ու Համբարձում:

Նույն թվին հեղափոխական գործիչների ընդունելու, ճանապարհելու և նամակ փոխադրելու համար բանտարկվում են 28 հոգի, որոնցից 21-ը մի տարի հետո ազատվում են, իսկ 7 հոգի դատապարտվում 5 տարով: Դրանք են՝ ալաբաշցի Գալուստ, իր եղբայրը՝ Պետրոս, մարաշցի կաբակլի Հովհաննես, մալաթիացի Ուռլյան Պապիկ, ալպիստանցի Քեչեջի Միքայել և աշոտցի Գրիգոր:

[1] Ալիի ժայռ:

1899 թվին աջիթիակցի Նազարեթ բանտարկվեց «Անգլիական ոսկին տաճկականից արժեքավոր է»,– ասելու համար: 3 ամիս բանտում մնալուց հետո 3 ոսկի կաշառքով ազատվեց:

1899 թվին Թոփալ Սիմոն, Զեյթունի վանքի ծառան ասել է. «Օսմանցուն վստահել չի կարելի» (Օսմանլի ասելով կառավարությունն է հասկացվում): Դրա համար 9 ամիս բանտում մնաց, 8 ոսկի էլ տուգանք, որի փոխարեն 3 ամիս ևս բանտում պահեցին:

1899 թ. Խաչեր անունով մի մուրացկան Հասան Բեյլիից (Հայ լեռան մեջ) գնում է Աստվածածին վանքը: Ճանապարհին բռնում են ու մեղադրում, որ նա հեղափոխական գործով է եկել: Ասել են տալիս, որ գործի մեջ խառն է հարուստ Կիրակոս աղան, Դիշչեքենյան Կարապետը, Մանուկը, Լոմլոմջին, որոնք չորս ամիս բանտում մնացին: Կիրակոս աղան 40 ոսկի Հալեպ կաշառք ուղարկեց և այնտեղից հատուկ հեռագրով ազատվեց: Այդ գործի մեջ կառավարությունը խառնել էր և մարաշցի շատ հարուստ բիլեզիկցի Հակոբ աղային: Նա բանտ չմտած կաշառքով ազատվել էր:

1899 թվին մեր խումբը, 9 հոգի, որոնցից մեկը քյուրդ և, որին բանտարկյալները ծաղրելով Բարոն Օկյաշ էին կանչում:

1899 թվին ալաբաշցի Մինասն իր 5 ընկերներով, խնամիական խնդիրների պատճառով միմյանց զրպարտում են, որպես թե հեղափոխական մարդկանց ճանապարհ են գցել: Ազատվեցին կաշառքով, որի մի մասը ինձանից խնդրեցին փոխարինաբար:

1899 թ. 11 հոգի ֆռնուզցիներ մեղադրվում են մուհաբեթճիության[1] մեջ ու բանտարկվում: Այդ բառը սիրող է նշանակում: Իննուսունական թվականների սկզբին մարաշցի Տեր-Ղևոնդ[2] քահանան է հիմնադիրը այս միության, որ կրոնական բնույթ է կրում և թվում

[1] Թուրքերեն՝ mehabebetli՝ իրար հետ սիրով, բարեկամ:

[2] Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Մարաշի Տէր Ղևոնդ քահանայի յուշեր: Հուշագրություն: Կազմեց **Վահան Տեր-Ղևոնդյանը**, եր., 2013:

է, թե հիմնվում է բողոքականության տարածման դեմն առնելու համար: Աղոթք են անում, կարդում Ս. Գիրքը և ապա երգում իրենց հորինած թրքերեն հոգևոր երգեր, և տարված ինչ որ էքստազով, սկսում են հեկեկալով լաց լինել: Այս միության անդամները հավաքվում են առանձին, կողմնակի մարդկանց չեն թույլ տալիս [ներկա լինելու]: Թյուրք կառավարությունը կասկածելով բռնում է դրանց: Մի տարի վերջը 8-ին ազատում է, իսկ գլխավորներին, այն է Կարապետ քահանային, նրա երիտասարդ որդուն ու Կարապետ վարժապետին 1901 թվին, երկու տարի պահելուց հետո, աքսորեց Բաղդատ: Այդ մարդիկ ճգնավորական կյանք էին վարում: Մազերը, միրուքը թողած բնական վիճակում, ամփոփված իրենց մեջ, ամբողջ օրերով աղոթում էին և լաց լինում: Եվ ես շատ նմանություն էյի գտնում դրանց և ռաֆազի քրդերի աղոթքի ձևի մեջ: Այդ միությունը մի ժամանակ շատ ճյուղեր ունեցավ Կիլիկիայի այլևայլ մասերում: Թուրք կառավարությունը կռվում էր այդ նորության դեմ և գլխավորներին հալածում:

1899 թ. ֆընտըճակցի Բաղդո, մի աչքը կույր ծերունի, մեղադրելով, որ Բարոն է անցկացրել[1], բանտարկեցին և 4 ամիս հետո 50 ոսկի կաշառք ստանալով ազատեցին:

1900 թ. բանտ բերին զեյթունցի երեք ուսուցիչներ արգելված երգեր երգելու համար («Պստիկ տղա, չեմ օրորի»): Մի քանի ամիս հետո նույն գործով բերին դարձյալ չորս ուսուցիչ և դպրոցի հոգաբարձու Չաքրյանին, որ Զեյթունի չորս իշխաններից մեկն էր: Հետո պահանջեցին, որ Մարաշ գան Զեյթունի մյուս իշխանները՝ Կարապետ աղա Սուրենյանը, Ասատուր աղան, Կարապետ եպիսկոպոսը, Տեր-Կարապետ քահանան (Քյոսե Փափազ): Սրանք քաղաք եկան: Կառավարությունը նրանց հսկողության տակ պահեց բանտից դուրս ու թույլ չտվեց, որ Մարաշում մարդու հետ տեսնվեն: Վերջը

[1] Այսինքն՝ ազատագրական գործիչ:

սրանք 200 ոսկի տվին կաշառք ու ազատվեցին: Իսկ մյուս 8 հոգին, որոնց թվում և Չաքրյանը, ուղարկվեցին Հալեպ: Այնտեղ դատարանում երկու ուսուցիչ՝ Նազարը և ընկերը դատապարտվեցին 5-ական տարով, 6-ը ազատ արձակվեցին:

1902 թ. հաճի դեղեցի (Զեյթունի մոտ) Ջալլադյան Ավետիսը, 80 տարեկան մի ծերունի, նրա որդին և մի ուրիշը բանտարկվեցին վառոդ շինելու մեղադրանքով: Ջալլադյան Ավետիսը դատապարտվեց 5 տարով: Իսկ նույն հանցանքի համար ղարահոյուքցի 13 թուրքեր 15 ոսկի կաշառքով ազատ արձակվեցին:

1902 թ. երզնկացի Ղանթարճյան Սարգիս, որպես հեղափոխական գործիչ, մի տարի վերջը դատապարտեցին 15 տարով: Սա իրեն լավ չէր պահում, ամենքին պատմում էր, թե ինքը ինչեր է արել: Դրա համար էլ թուրքերը միշտ նեղացնում էին ու միշտ բանտում աղմուկ կար նրա շուրջը: Անհամակրելի մի տիպ էր, անխելք և շատախոս: Դատի ժամանակ սուտ վկաներ սարքվեցին հենց բանտում: Պլեզ վարտիվորը[1] վկայեց, որ ինքը տեսել է այդ Սարգսին Նազարեթ Չավուշի մոտ Զեյթունում և տարել է նրան Ալաբաշ, որպես թե Սարգիսն իրեն պատմել է, որ Ֆընտըճագ գյուղում Մինաս Քեհյանին տվել է 100 ոսկի և 40 ատրճանակ: Այդ խոսքերի համար բանտից վկաներ գնացին դատարան երկու Ֆընտըճագցի հայեր, որոնց նպատակն էր Մինաս Քեհյանին բանտարկել տալ թշնամության պատճառով:

1902 թ. պոլսեցի Արշակ սարկավագ Միհրդատյանին են ձերբակալել նրա համար, որ ասել էր, թե տեսել է Ֆընտըճագ գյուղի մոտ սպանված երեք հայերի դիակ: Վկա կանչված գյուղացիները տեսնելով, որ սարկավագն այս խոսքի համար ձերբակալված է, վախեցան ու հայտնեցին, որ իրենք չեն տեսել: Սարկավագին, իբրև սուտ լուր տարածողի դատապարտեցին 1 ½ տարով:

[1] Այդպես է բնագրում:

1903 թ. զեյթունցի Կարապետ Շորվոյանին ձերբակալեցին մոտը գտնված «Ազգասիրաց» և «Եկեղեցասիրաց» ընկերությունների կնիքների համար, որոնք մնացած են եղել իր մոտ «Միացյալ ընկերության» գործունեության շրջանից: Մի տարի տառապեց բանտում և վերջը 6 ոսկի կաշառքով ազատվեց: Այդ գործի պատճառով կառավարությունը պահանջեց, որ Զեյթունի բոլոր իշխանները գան Մարաշ բացատրություններ տալու համար, բայց նրանք մերժեցին գալ, առարկելով, որ երեք տարի առաջ նման գործով մեզ կանչելով հսկողության տակ առան ու 200 ոսկի կաշառքով ազատվեցինք: Հիմա այլևս փորձվելու չենք: Կառավարությունը խելացի համարեց չպնդել իր պահանջի վրա:

1903 թ. Ֆընտըճագի շրջակայքում, այնտեղ ուր նախորդ տարին սպանված էին երեք հայեր, սպանվեցին երկու զինվոր: Այդ առթիվ շրջակա գյուղերից մեծ թվով հայեր ձերբակալեցին ու երկար ժամանակ ոչ մի ապացույց չգտնելով միայն ազատեցին:

1903 թ. ձերբակալեցին Չորպաճյան Ասատուրին և իր հորեղբորորդի Սերոբին այն մեղադրանքով, որ նրանք հեղափոխական բովանդակությամբ թղթեր են ունեցել պահած իրենց կալվածքի մեջ: Այդ կալվածը գտնվում է Յենիջէ-Ղալեյի և Դեոն գելեյի միջև: Մեծ կոտորածների ժամ[անա]կ սնանկացած լինելով չեն կարողանում կալվածքը կառավարել և ահա Ջեբել-ի-Բերեքեթի մյութեսարիֆի մի մոտ մարդ՝ Խոջա էֆենդին գրել է տալիս մի խառընցի վարժապետի՝ Խաչերին վտանգավոր բովանդակությամբ թղթեր և գցել տալիս կալվածքի շենքում: Այնտեղի իշխանության միջոցով խուզարկում են և թղթերը հանում: Մի տարի բանտում տառապելուց հետո, բարեբախտաբար հաստատվեց, որ գրությունն այդ Խաչեր կոչված վարժապետի ձեռքով է կատարված: Մեղադրյալները ազատվեցին, բայց ոչ առանց կաշառքի: Իսկ թղթեր կեղծողը դատապարտվեց 5 տարվա [բանտարկության]: Սակայն նրան թելադ-

րողը՝ Խոջան պատասխանատվության իսկ չկանչվեց: Նա միայն չհասավ իր նպատակին տերերին ձերբակալել տալով՝ տիրել նրանց կալվածքին:

1904 թ. Կոկիսոնի Դաշօլուկ գյուղի ուսուցիչը հաճընցի Հակոբ Չայճյան, նույն գյուղի հարուստը՝ Հակոբ աղա Յաղջյան, նրա փեսան, նույն գյուղից մի այլ երիտասարդ ու մարաշցի Հարությունը, որն այդ գյուղում խանութպան է, ձերբակալվում են այն մեղադրանքով, որ արգելված երգեր են երգում: Երգի տետրակը գայմագամին ներկայացրել է Փոթիշ Կարապետ անունով մի զեյթունցի: Վերջ պարզվում է, որ Փոթիշ Կարապետը վրեժխնդիր լինելու համար Հակոբ աղայից նրա համար, որ նա մերժել է տալ իր աղջիկը սրա տղային (Փոթիշի տղան նրա հովիվն է) գողանում է ուսուցչի սենյակից նրա տետրակը ու ներկայացնելով գայմագամին, սուտ վկայություն է տալիս, թե այդ անձնավորությունները հավաքված միասին երգում էին: Փոթիշ Կարապետը իմ բանտ մտնելու սկզբում Մարաշի բանտումն էր ծիու գողության պատճառով: Ես նրան լավ էի վերաբերվում, որովհետև Զեյթունի ապստամբության ժամանակ նա հայ ապստամբների թնդանոթաձիգն է եղել: Իսկ հիմա այդ ստոր միջոցով իր վրեժն է առնում: Եկավ բանտի դուռը իմիջիայլոց և ինձ կանչեց, իբրև վաղաժամ ծանոթ: Ես մոտեցա դռանը, ասացի, որ ես մատնիչ մարդկանց հետ խոսելու կարիք չունեմ՝ շատ կարմրեց, ուզեց բացատրել, բայց ես թողի ու հեռացա:

Այդքան կարճ միջոցում 16 քաղաքական գործ է բացված Մարաշի ու Զեյթունի շրջանում, ամեն մի դեպք իր հետ բերել է ընդհանուր խուճապ, հալածանք, երթևեկությանց ընդհատում, զինվորական դրություն, խուզարկություններ, սարսափներ ու անվերջ բանտարկություն, դրան հարակից նվերների և կաշառքների առաքում: Կաշառք առնվում էր նաև թուրքերից և մանավանդ քրդերից: Սակայն նրանց տվածն ավելի գաղտնի էր պահվում: Հայերի տվածի

մասին ինձ տեղեկացնում էին իբրև եվրոպացի, որպեսզի դուրս գալուց հրապարակեմ: Ամեն մի բարձր պաշտոնյա ուներ մեկ-երկու վստահելի անձնավորություն, որոնց այս կամ [այն] հիմնարկության մեջ պաշտոնի էին կապած և որոնք միջնորդներ էին մեղադրվողի ու պատասխանատու պաշտոնյայի [միջև]: Բանտի բոլոր պաշտոնյաները այդպիսի միջնորդի դեր էին խաղում և հենց այդ դերի համար էլ նշանակված էին որպես հսկիչներ ու վերակացուներ: Այսպես, դատախազի համար կաշառք էր ստանում քրոջ որդին՝ Էմեր աղան, բանտի գարդիանը[1]: Դատարանի անդամ Մահմեդ բեյի համար՝ Խալիլ էֆենդին, նույնպես գարդիան: Դատարանի նախագահ ադալիացի Քյազմ էֆենդին՝ յուզբաշի Մահմեդ աղայի միջոցով, Դատեր փաշան իր եղբայր Մահմեդ բեյի ձեռքով և այլն, շատերը որոնց բոլորին չեմ կարողացել ստուգել:

Մի գիշեր զինվորներ ու ժանդարմներ մտնում են ամերիկացի միսիոներ մստր [միստեր] Միքալի տունը գիշերով՝ կասսան[2] գողանալու համար: Սակայն պահակներն զարթնում են, երկուստեք հրացանաձգություն է տեղի ունենում և հարձակվողները փախչում են: Կառավարությունը հանցավորներին թողած ձերբակալում է չերքեզ Համիդ Բեյին, կոշկակար Պետրոսին և չարխչի Ասատուրին ու որբանոցի 16 տարեկան տղա Հարությունին: Մստր Միքալը որբանոց է բացել հայերի համար և աղքատ հայերին նպաստ է բաշխում: Որպեսզի նրա ներկայությունից ազատվի, կառավարությունը այս հարձակումը սարքում է, նախ նրան փախցնելու մտքով, որ դադրի հայերին նպաստ տալը և Ամերիկա տեղեկություններ գրելը, և ապա թշնամացնի ֆրանսիական կոնսուլի հետ, որի ղավազ չերքեզին ևս մեղադրեցին այդ հարձակման գործում, իբրև Համիդ բեյի ընկեր:

---

[1] Պահապանը:
[2] Դրամարկղը:

Կոնսուլը իր ղավազին չհանձնեց, բողոքելով այդ արարքի դեմ: Մստր Միքալը նույնպես պնդում էր, որ իր տան վրա հարձակվողները զինվորներ են եղել: Կառավարությունը ուշ չդարձրեց և բանտարկյալներին դատապարտեց 3 ½ տարով: Չերքեզ Համիդ բեյը մուավիին խոստացել էր մի արծաթապատ կոթով ղամզի[1] և մի լավ յափնջի: Յափնջին չէր հավանել և պահանջել էր դրամ ևս: Համիդ բեյը իմ սենյակումն էր ապրում, խնդրեց, որ իմ յափնջին ծախեմ իրեն՝ մուավինին ուղարկելու համար: Չուզեցի մերժել, մանավանդ, որ յափնջին ինձ պետք չէր, տվի 6 մեջիդիեով: Ուղարկեց, ընդունել էր, բայց պնդել էր, որ առանց դրամի չի կարող արդարացնել: Դատը վերջացավ 3 ½ տարով: Մուավինը լուր էր ուղարկել, որ այդ հանցանքը շատ մեծ պատիժ էր պահանջում, ու իր մեղմ մեղադրանքով հաջողեցրեց խնդիրը 3 ½ տարով կապելու:

Այս գործում կառավարությունը գիտակցորեն անմեղներին դատապարտեց, որպեսզի կարողանա պատասխանատվությունից ազատվել: Չինվորներին չէր կարող բանտարկել, դրանով իր սադրանքը հայտնի պիտի դառնար:

Վերն ասացի, որ հայերի մեջ քաղաքական հանցավորներից դուրս քրեական հանցավորներ քիչ կային: Դրանց թվում են՝

1900 թվի աշնանը Կապանի մոտերքում սպանվեցավ մի թուրք կին և նրա ամուսինը վիրավորվեց հայերի ձեռքով: Ոճրագործներն էին Ադանալյան Վարդիվորը՝ զեյթունցի ու կապանցի Արթինը: Ո՛րպիսի ցնցում ու սարսափ այս դեպքի շուրջ: Լուր տարածվեց, որ հայերը նորից ապստամբել են: Ամեն կողմից զորք հասցրին Զեյթունի, Ֆռնուզի, Կապանի շրջակայքը բռնելու համար: Դրանցից մեկը դատապարտվեց մահվան, մյուսը՝ 101 տարվան: Մահվան դատապարտվածները սովորաբար չեն ենթարկվում մահապատժի:

[1] Մտրակ:

Դրա համար հարկավոր է սուլթանի իրադեն, իսկ նա սովորաբար այդ առթիվ իրադե չի հանում:

Թուրքերի գործած սպանություններից միայն մեկն էր մահվան պատժի դատապարտված, այն էլ երեք մարդ սպանած լինելու համար: Ֆէնքլի Ահմեդն էր դա, որ հայերի դեմ եղած որևէ անարդար վարմունքի դեպքում հայերի պաշտպաններից մեկն էր:

Զեյթունի Ս. Սարգիս եկեղեցին կողոպտելու համար դատապարտվեցին 3 ½ տարվա բանտարկության զեյթունցի Խաչեր և Ասատուր և մի թուրք:

Հայերին թուրքերի կողմից հասցրած զրկանքների համար սովորաբար պատիժ չէր տրվում: Եկեղեցին թալանող թուրքը պատժվեց կոնսուլի պնդումով, ինչպես և սարլարցի մոլլա Մուստաֆան, որ բազմաթիվ համագյուղացիների հետ միասին փախցրել էր նույն գյուղացի Հարությունի կնոջն ու բռնաբարել: Բոլորին ազատեցին, միայն մոլլա Մուստաֆային դատապարտեցին 3 տարով: Ծիծաղելի այն է, [որ] հարձակվող այդքան թուրքերի հետ միասին բանտն էին բերել և տուժող կնոջ ամուսնուն՝ Հարությունին, որպես թե թուրքերին դիմադրություն է ցույց տվել:

Հայ ժողովրդի քաղաքական հանցանքները թվելիս մենք տեսանք, որ դրանք մեծ մասամբ իրար նկատմամբ եղած զրպարտություններ են, անհատական հաշիվներ, վրեժխնդրության մի տգեղ ձև:

Այժմ մի քանի տխուր փաստեր ևս հայ անհատների կողմից:

Մարաշցի Թոփալ օղլի Հովհաննեսը բանտարկվեց իր հորը մասին մի կեղծ նամակ գրած լինելու համար, որպեսզի իր հորը բանտարկել տալով, կարողանա նրա կարողությունը խժռել: Կառավարությունը նրան 3 տարով բանտարկեց: Ֆռնուզցի Թոփալյան Կա-

րապետը տեսնում է, որ զեյթունցի Խաչերը[1] առաստաղը ծակում է փախչելու մտքով, իմաց է տալիս պահապանին: Խաչերին գիշերով այնքան են ծեծում, որ առավոտյան մերձիմահ էր, աղիքներից արյուն էր հոսում: Երբ բժիշկը եկավ, ես դիմեցի նրան ու պահանջեցի, որ նա պաշտոնապես կառավարությանը իմաց տա այդ վայրենի արարքի համար: Նա խոստացավ, բայց իհարկե ոչ մի բողոք էլ չհայտնեց: Նույն օրը բանտապետը ինձ կանչեց ու շատ քաղաքավարի ձևով հասկացրեց ինձ, թե՝ դու օտար մի բուլղար մարդ ես, ինչիդ է պետք, թե մի հայի ծեծել են: Քեզ ձեռք տվող չկա, քո պատիվը պահում են, դու էլ էսպես դեպքերում սուս կաց: Ես իհարկե հայտնեցի, որ նման դեպքերում չեմ կարող լռել՝ հայ չլինի, թուրք լինի՝ կբողոքեմ, եթե տեսնեմ անարդարություն է կատարվում բանտում: Պետք է ասած, որ հաճախ իմ ներկայությունը բանտում շատ խստությունների ու աղմուկների առաջն է առել:

Լևոն անունով մի տղա, որ հաճախ բանտ էր մտնում գողության պատճառով, գնում է ֆրանսիական հյուպատոսին խաբում, թե բանտարկյալ հայերը սոված են, 3 մեջիդիե է ստանում այդ նպատակի համար, բայց փախչում է Երուսաղեմ: Ֆընտըճագցի Փանոսը գողացավ զեյթունցի Նազարեթի 5 ոսկին և 16 ղազին[2]: Այդ դրամները գաղելու [գողանալու] համար ստացան արաբ Էմին Չավուշը և Աշչի Ահմեդ (երկուսն էլ բանտարկյալ) և սեփականեցին, իսկ գարդիան Խալիլ էֆենդին որոշ բաժին ստանալով գողոնից, խնդիրը ծածկեց: Փանոսը մի ղրուշ չստացավ:

Արշակ սարկավագ Միհրդատյանը բանտից նամակ է գրում կաթոլիկ գերապայծառին, որ ինքը կաթոլիկություն կընդունի, եթե իրեն ազատեն բանտից:

---

[1] Առաջին անգամ հիշատակվում է Փանոս անունով, որն ուղղված է հուշագրի կողմից: Հաջորդ նախադասությունում հիշատակվում է որպես Խաչեր:

[2] Սագ:

Մեր նոր բանտ մտած ժամանակ բոլոր հայերը խնդրագրեր էին պատրաստել փաշային, որով հայտնում էին, թե կամովին իսլամություն են ընդունում: Այդ տխուր գործի առաջն առանք ես, Թղլյան Պողոսը, ալաբաշցի Գալուստը և իր եղբայր Պետրոսը:

Բանտից դուրս խոսվում էր այդ ուղղությամբ Նազարեթ Չավուշի մասին, որ ապստամբության ժամանակ այնքան քաջություններ է կատարել, բայց լինելով կրքոտ մարդ, անհատական թշնամությամբ հաճախ մատնություններ է արել, ինչպես օրինակ Զեյթունի ուսուցիչների և այլ գործերում: Այս կետը լսածիս համաձայն եմ գրել, ստուգել չեմ կարողացել: Մենք վերը տեսանք նման մի տիպ՝ ապստամբության ժամանակ թնդանոթածիգ է, իսկ հետո մատնիչ: Փոթիշ Կարապետն է դա: Եվ որքան շատ են այդ վատ տիպերը, սակայն երբ կռիվ է, այդ բոլոր թշնամությունները վերանում են և ամենքը մի սիրտ, մի մարմին դառած հարձակվում են:

Չերքեզ Նուրին, որ 1895-ի ապստամբության ժամանակ եղել է թրքական բանակում, բանտում պատմում էր, թե շատ դեպքերում 10 հայի դիմաց 1000-ավոր թուրքեր փախչում էին, այնքան մեծ էր զեյթունցիների սարսափը: Այդ սարսափը ազդում էր մինչև իսկ Մարաշի վրա, որ 40 վերստ[1] հեռու է Զեյթունից: Բայրամի[2] օրերին, Մարաշի Ուլու մզկիթի մինարեթի գլխին հատկապես մի հսկիչ է կանգնում ու շարունակ դիտում Ախր-դաղի վայրէջքը, որ չլինի թե բայրամի կեր ու խումից օգտվելով զեյթունցիք վրա տան հանկարծ և քաղաքին տիրեն: Եթե այս իրականություն էլ չէ, համենայն դեպս զեյթունցիների սարսափը փաստող մի պատմություն է:

Մենք տեսանք, որ հայերի դեմ եղած թուրքական հանցանքներից միայն երկուսը պատժվեցին, այն էլ ֆրանսիական կոնսուլի համառ պնդումների պատճառով: Այժմ տեսնենք մի քանի օրինակ, ուր

[1] 1 վերստը հավասար է 1067 մ:
[2] Պասից հետո:

հանցավոր թուրքերը չպատժվեցին: 1901 թ. աշնանը զինվորները աքսորյալ հայեր են տանում Ադանայից դեպի Խարբերդ: Բազարջիկ օվայում Աղսու գետը անցնելիս զինվորները հրացանի կոթով զարկում են և բոլորին ջուրը թափում, իսկ իրենք մի զենքը ծախում են, ներկայանում կառավարության, գանգատվելով, որ ահա հայ աքսորյալներն իրենց հրացանը առան ու փախան: Այնինչ մի քյուրդ տեսած է լինում և այստեղ այնտեղ տարածում, որ զինվորները սպանեցին: Այդ քյուրդին բանտարկեցին և մինչև որ նա իդարե մեջլիսի[1] ներկայության չհայտնեց, թե ինքը ոչինչ չի տեսել, չարձակեցին:

1902 թվին, մի մանրավաճառ հայ, կաբակլի Հովհաննեսի փեսան սպանվեց: Սպանող երկու թուրքերը բռնվեցին, բայց շուտով ազատ արձակվեցին իբրև անմեղներ:

Նույն թվին Բազարջիկի մոտերքում սպանեցին մի տարիքով հայի, որ մանրավաճառությամբ էր պարապում: Կառավարությունը ձերբակալեց նրա բարեկամ երկու քյուրդի՝ Սալման աղային և նրա եղբորը, որոնց տանը վերջին գիշերը հյուրասիրվել էր սպանվածը: Սպանվածի եղբայրն ասում է, թե դրանք չեն եղբորս սպանողները, բայց կառավարությունը այդ միջոցով աշխատում է հայերի և ղըճլի կոչված քրդերի բարեկամական հարաբերությունը փչացնել:

Նույն թվի դեկտեմբերին, բայրամի առթիվ Մարաշում տոնախմբություն կատարելիս ջիրդի[2] ժամանակ թուրք ամբոխի և զորքի միջև ընդհարում տեղի ունեցավ՝ փախչող փախչողի[3]: Մեջտեղ հայերի խանութները թալանվեցին, շատ հայեր ծեծվեցին: Մեկն էլ խենչալով[4] վիրավորվեց: Երեք թուրք բանտարկեցին միայն

[1] Դեկավարության:
[2] Նշանակում է մատաղի տոն:
[3] Այդպես է բնագրում:
[4] Դաշույն:

մի շաբաթով և այն [էլ] ոչ թե հայերին վնասելու, այլ զինվորներին դիմադրություն ցույց տալու համար:

1903 թ. սեպտեմբերին պահեստի զինվորներ էին ժողովում Մակեդոնիայում ծագած շարժումները[1] ճնշելու համար: Քաղաքում ահագին իրարանցում կար: Կառավարությունից դժգոհ՝ զինվորները իրենց զայրույթը հայերի խանութները թալանելով էին մեղմում: Պիտի գնան Մակեդոնիա քրիստոնյաների դեմ կռվելու: Հենց իրենց քթի տակ քրիստոնյաներ կան, նախ նրանց կվնասեն՝ հետո կգնան հեռուները: Գրգիռը ժողովրդի մեջ շատ մեծ էր, եթե իմանային, որ մեծ ջարդերի ժամանակ կատարած սպանությունները կներվեին՝ մի հատ հայ էլ չէին թողնի, որ հիմա նորից չգնային պատերազմ: Թուրք ամբոխը կարծում է, թե երբ իր պետությունը ընդհարում է ունենում որևէ քրիստոնյա ժողովրդի հետ, դրա հիմնական պատճառը հայերն են: Ուրեմն, եթե հայերը չլինեն, այդ տարաձայնություններն էլ կվերանան և իրենք կազատվեն մշտական պատերազմներ վարելուց:

1902 թ. բանտում տեղի ունեցավ մի մեծ կռիվ: Կռվողները մարդասպաններ էին, որոնք 10–15 տարվա դատապարտվածներ էին: Որպեսզի այդ առթիվ տրվող պատժից հայերը չազատվեն, քանի որ հայերը խառը չէին այդ կռվին, որոշում հանեցին, թե 5 տարուց վեր դատապարտվածները պիտի շղթայակիր լինեն: Եվ իրավ, մի քանի կռվարար թուրքերի հետ բոլոր հայ քաղաքական բանտարկյալներին էլ շղթայեցին: Այդ տևեց 3 ամբողջ ամիս, մինչև

[1] 1903 թ. Մակեդոնիայում բռնկվում է հակաօսմանյան ապստամբություն: Ապստամբները նպատակ ունեին հասնելու ինքնավարության: Ապստամբությունը դաժանաբար ճնշվում է: Թուրքերը ոչնչացնում են 201 գյուղ, սպանվում են 4694 հոգի, իսկ 30 հազարը փախչում է Բուլղարիա:

որ Հայոց պատրիարքի դիմումների վրա Պոլսից կարգադրություն եղավ շղթաները հանել[1]:

Այդ դեպքին ինձ ևս ուզեցին շղթայել: Երկու անգամ տարան ինձ: Բայց վերջը չշղթայեցին: Դուրսը հարցրել էին՝ դատախազը չէր համաձայնել: Կռվի դեպքում, երբ զինվորներ, ժանդարմներ ներս են վազում բանտ կարգը վերականգնելու համար, առաջին հարվածը հայերին են տալիս, որոնք աննկյուններում քաշված կանգնած են լինում:

Թուրքերի վկաներին թույլ են տալիս ոչ միայն դարպասին մոտենալ ու խոսել, այլև անց են կացնում ներս, որ իրար լավ հասկանան, իսկ հայերի վկաներին դարպասին իսկ չեն մոտեցնում:

Թուրք պաշտոնյան ընդհանրապես կաշառակեր լինելով և մանավանդ հային հալածանքի արժանի գտնելով, նա ունի մի առավելություն, որ կազմակերպված ու տրադիցիաների[2] գերի դարձած երկրների պաշտոնյաները չունեն: Այդ թուրք պետական մարդու դեմոկրատ-ժողովրդական վարմունքն է դեպի իր ստորադրյալը, դեպի իր ժողովուրդը: Կատակասեր մարդիկ են, պաշտոնից դուրս հասարակ մարդկանց խառնվել, խոսել, բարեկամություն անել՝ սովորական երևույթ է թուրք պաշտոնյայի համար: Բայրամներին զուռնա են բերում բանտ և ուրախացնում բանտարկյալներին: Բանտի պաշտոնյաները, տնօրենը, դրսի պաշտոնյաներից շատերը, յուզբաշին, նույնիսկ բինբաշին ներս են մտնում, բանտարկյալների հետ սովորական շնորհավորությունները փոխանակում, բատարկյալների եփած թեյն ու սուրճը խմում, նվագել տալիս, բանտարկյալներին առաջարկում կլոր պար բռնել, իրենք խառը բռնում են ու պարում: Հաճախ պատահում է, որ սովորական օրերին մի յուզբա-

[1] *Նույն միջոցին պատրիարքարանի կողմից պահանջված էր քաղաքական հայ հանցավորների ցուցակը: Այդ պահանջի հետ հայերը մեծ հույսեր կապցնին ու անհամբեր սպասում էին, թե կներվեն: Ջուր հույսեր:*

[2] Ավանդությունների:

շի, մի այլ աստիճանավոր ներս է գալիս, նստում բանտարկյալների մեջ, նրանց երգը լսում: Հետո որևէ հեքիաթ է պատմել տալիս, ինքն է պատմում իր գլխով անցածը, առածներ և առակներ պատմում, ծիծաղում, ծիծաղեցնում ու այնպես գնում:

Տոների մասին խոսելուց հետո արժե և հայերի կրոնական օրերի կատարումը հիշատակել: Դրսից հայ եկեղեցու ներկայացուցիչն է գալիս, բերում է եկեղեցում և այլուր բանտարկյալների համար [հանգանակած] դրամ բաժանում: Տոնն է շնորհավորում, պահպանիչ ասում և այնպես գնում: Դրամ բաժանելիս, որպես քրիստոնյա, ինձ էլ էին բաժին հանում՝ ես հրաժարվում էի, առարկելով, որ բավական դրամ ունեմ իմ ծախսերի համար:

Հենց որ դատապարտվեցի, կառավարության կողմից լուր ուղարկվեց, որ իմ դրամները կարող եմ վերցնել և ում ուզում եմ տամ: Ես հարցուփորձ արի, թե արդյոք Մարաշում բուլղար կամ հույն կա՞: Ասացին, որ հույն երկու եղբայրներ կան և շատ վստահելի մարդիկ են: Կուտիլակի ազգանվամբ Յանի ու Վասիլի եղբայրներ, որոնք օղիի գործարան ունեին: Միակ հույները Մարաշում: Կանչեցի բանտի դռանը: Շատ պատվական մարդիկ դուրս եկան: Իմ դրամները վերցրին ու շաբաթը մի անգամ իրենց ծառան ուղարկում էին ու հարցնում՝ ինչ է պետք ինձ և ըստ այնմ ուղարկում էին ամեն ինչ, հետն էլ ուղարկածի հաշիվը: Շաքար, յուղ, բրինձ, թեյ, ամեն ինչ: Այդ մարդկանց հետ կապվելը իմ գործին շատ հարմար եկավ: Նրանց միջոցով ես կարողացա ոչ միայն նամակագրություն պահել Մարաշի ֆրանսիական կոնսուլի, Հալեպի ռուսական կոնսուլի և Պոլսի բուլղարական ներկայացուցչի հետ, այլև, որ կարևորն է, կարողացա կապ պահպանել Եգիպտոսի մեր ընկերների հետ՝ «Alexandrie (Egypte) toite postale № 58, Georges Petkoff» հասցեով: Եթե հայի տված լինեի ոչ ոք այդ հանդգնությունը չէր հանձն առնի: Հույն է, որ լավ գիտե, թե ես ինչի համար եմ դատա-

պարտված, բայց և այնպես նամակներս ստանում է և ուղարկում: Իսկ իմ և այդ հույների միջև կապ պահպանողը գլխավորապես ժանդրամներն էին կամ թե գարդիաներից մեկը: Սովորաբար նամակս տանելու համար տալիս էի մի ղուրուշ (8 կոպեկ), այնտեղ նամակս ստանալիս, բերողին հույները հյուրասիրում էին օղիով: Հյուպատոսներին ես նույնն էի կրկնում, թե ես բոլգար եմ, բայց դատապարտել են որպես ռուսահպատակ հայ ու պահանջում էի, որ միջամտեն: Բուլղարական ներկայացուցչին գրածս դիմումի մեջ հայտ նել էի պասպորտիս համարը և հիշատակել, որ 1896 թվի օգոստոսի 19-ին պասպորտը Պոլսո բուլղարական ներկայացուցչությունից եմ ստացել:

Շատ չանցած ստացա պատասխան, 1900 թվի հունվարի 7-ին ստացա պաշտոնական գրություն և ներկայացուցչի ստորագրությամբ: Այդ նամակը շատ խնամքով պահել եմ և այժմ էլ այս տողերը գրելիս ձեռքիս տակն է: Բլանկի ճակատին տպված է՝ Дипломатическо агентство на Българското Княжество. Цариградъ, 17 Декември, 1899. Տեքստը հետևյալն է. «Պարոն, Ձեր նամակը ժամանակին ստացել եմ: Ինչպես բուլղար ցավում եմ Ձեր վիճակի վրա և ինչպես Բուլղարիայի ներկայացուցիչ իր ժամանակին դիմում եմ արել որքան գործն է պահանջում, աշխատում եմ և թվում է, թե շուտով Դուք կազատվեք: Բայց քանի որ հնարավոր չէ նախատեսել ճշտորեն, թե երբ կվերջանա այդ աշխատանքը, ես Ձեզ խնդրում եմ մի քիչ ժամանակ ևս համբերեք: Ստորագրութ[յունը] տակը՝ «До господина Д. Маринов-Попов, въ затвора въ Марашъ»:

Այս նամակը մեծ հույս էր տալիս, որ շուտով ինձ կազատեն: Մինչև այդ ինձ կառավարական շրջանից մի քանի անգամ լուր հասավ, որ շուտով ինձ կազատեն, որովհետև Պոլսից հարցնում են, թե ի՞նչպես է եղել, որ միևնույն անձը երկու պետության հպատակ է նշանակվում պաշտոնական դատական թղթերում: Այս լուրը տա-

րածված է և բանտում: Ամենքը խոսում են, որ հակառակ դատապարտությանս, եվրոպական պետություններն ինձ չեն թողնի թրքական բանտում: Ես արտոնյալ դիրք ունեմ, հետս շատ քաղաքավարի էին վարվում թե՛ բանտարկյալները, թե՛ պաշտոնյաները: Երկու անգամ առիթ պատահեց ընդհարվելու գարդիաններից մեկի և բանտի գործավարի հետ: Սրանք երկուսն էլ Մարաշի հին ազնվական ընտանիքներից էին, գարդիանը Բայազիտ զադե Մահմեդ բեյն [էր], գործավարը Ջուլ-ղադիր հին սելջուկյան տոհմից, Ալի բեյ:

1900 թ. հունիս 10-ի երեկոյան, երբ դռները փակվում էին, խնդրեցի դուռը բանալ, դժվարացան, վերջը բացին, դուրս եկա: Ալի բեյը, որն այդ ժամին բանտումն էր, շատ չոր կերպով դիմեց ինձ, թե միթե իրենք մեր ծառաներն են, որ դուռը ուզած ժամանակ բանան ու փակեն: Այդ չոր ձևին ես նույն չորությամբ պատասխանեցի.

– Այո, մեր ծառաներն եք:

Նա խոսք չգտավ այդ վիրավորանքին պատասխանելու, ասաց.

– Կերած ...ին նայիր[1]:

– Դու կեր ...ը,– ասի[2]:

Տեղից վեր թռավ, որ ինձ խփի, մինչև ձեռքը բարձրացնելը ես երկուսը իջա նրա գլխին, ուսին: Գարդիանները, ժանդարմները վազեցին, մեր մեջ մտան ու դրանով էլ գործը վերջացավ: Մյուս օրը ես էի գանգատավոր բանտապետին, նրա արարքի համար: Նա ինձ ասաց, թե եթե արած լիներ մի թուրք, ուրիշ կերպ կվարվեյինք, բայց գնա աղոթք արա, որ օտարահպատակ ես և մենք այդ գործը ծածկում ենք, որ դուրսը չլսվի:

[1] Կախման կետերը բնագրինն են:
[2] Կախման կետերը բնագրինն են:

Նման մի դեպք պատահեց 1901 թ. դեկտեմբերի 2-ին Մահմեդ բեյի հետ: Դռները փակվելու ժամանակ, երբ ամենքը ներս էին մտնում, ինձ արգելեց գնալ արտաքնոց: Ես պնդեցի՝ նա հայտարարեց, որ ջղայնացած է, չպետք է պնդել: Ես ասացի, որ ջհաննամում[1] մում[1] կարող է ջղայնանալ: Այդ խոսքի վրա ձեռքը վերցրեց, որպես թե ինձ խփելու համար: Մոտս ջ[ր]լով լի իբրիջ[2] կար դրված, վերցրի ու իջեցրի մեջքին: Չինվորներին կանչեց, որ ինձ դուրս տանեն: Իմ սենյակի մարդիկ, գլխավորապես թուրքեր, դուռը ներսից ամրացրին՝ ջրի կարասը և այլ բաներ դռան ետևը լցրին ու հայտարարեցին, որ գիշերով դուռը չեն թույլ տա բանալ: Այդպես էլ մնաց: Բոլոր լուսամուտներից ուրախության աղաղակներ դուրս թռան բանտարկյալների բերանից ու աղաղակեցին՝ «Դիմիտրի, ալընա սաղլըք (ձեռքիդ առողջություն)»: Այդպիսի մի վարմունք չէր ներվի ոչ թե մի հայի, այլ ամենաազդեցիկ թուրք բանտարկյալի: Թուրքի վրա քրիստոնյան ձեռք բարձրացնի և այն [էլ] բանտում, դա աններելի հանցանք է:

Հաջորդ առավոտյան բանտապետը կանչեց և երբ տեսավ շատ տաքացած խոսում եմ, սպառնալով, որ կոնսուլին իմաց կտամ, խնդրեց հաշտվել Մահմեդ բեյի հետ և խնդիրը փակենք:

– Դու իբրիջով խփում ես օրուջ[3] գիշերը մուսուլմանի, և դու ե՞ս բողոքում, հանդիմանեց հայրաբար ու գործը փակեց:

Երբ բանտարկյալները տեսան, որ ինձ ոչինչ չարին, ավելի քան իմ դիրքը բարձրացավ նրանց աչքում: Արդեն նրանց համար իմ մեքենան մեծ բան էր: Ես մեծ վարպետ էի, այնքան հայտնի, որ Դերսիմի մյութէսէրըֆը այնտեղից իր ֆոնոգրաֆի կարևոր մասը ուղարկել էր Մարաշի մյութէսէրըֆին և խնդրել շինել տալ այն վար-

[1] Դժոխք:
[2] Կճուճ:
[3] Պատի:

պետին, որ Ֆրանգստանից է եկել և այժմ բանտումն է: Ես սարքեցի այդ փչացած մասը, որ ինքնին չնչին բան էր, ինձ 6 մեջիդիյե փող էր ուղարկել իբրև վարձ: Մեքենայիս երգելը նրանք ինչ որ գերբնական բան էին համարում, և նրանց թվում էր, որ իմ ձեռքից ամեն ինչ կգա, հաճախ միամտաբար խնդրում էին մի գործիք հնարել, որով կարելի լինի բանտից անհայտանալ: Եվրոպացիների մասին շատ զարմանալի բաներ են լսել և շատն էլ աչքով տեսել:

Մարաշում 1895-ի աշնանը մեծ կոտորածից հետո մի 20 օր չանցած նորից մի խլրտում է ընկնում, և թուրք ամբոխը հարձակվում է հայերի վրա: Ֆրանսիական կոնսուլը մենակ, ձի է նստում ու շտապում շուկա, ուր զինված թուրքերն են վխտում: Իր մտրակով բոլորին քշում է ու ցրում, ոչ ոք չի համարձակվում որևէ պատասխան տալ, ընդհակառակը՝ հարգանքով ողջունում են ու անցնում: Դրանով սպասվելիք ջարդը տեղի չի ունենում: Այնտեղ ուր զինվորները ամբոխին չեն կարող զսպել, մի եվրոպացին այդ անում է: Ամբոխի համար դա գերբնական մի բան է:

Մարաշցիք չեն կարող մոռանալ 1861 թ. դեպքը, երբ մի անգլիացի վաճառականի իր տան մեջ այրել են: Այդ հանցանքի համար 40 մեծամեծ բեյեր Զուլ Ղադիր սելջուկյան տոհմից աքսորվել են Ֆեզան և այնտեղից ոչ մեկը չի վերադարձել:

Եվրոպացիների հնարագիտությունը ցույց տալու համար պատմում էին բանտում, որ մի 15 տարի առաջ ավազակները թալանում են մի ֆրենկի: Նա էլ առանց դիմադրելու տալիս է ամեն ինչ, բայց այդ միջոցին նրանց նկարում է: Հաջորդ օրը ներկայանում է կառավարությանն և պահանջում ձերբակալել նկարի մարդկանց: Ավազակները փնտրվում են: Ավազակապետը ասում է ընկերներին.

– Չէի ասում, որ սատանայի հետ գործ ունենալու չէ:

Եվրոպացուն սատանա էին ասում՝ չէ՞ որ սատանի գլուխը ֆրենկին բաժին է մնացել: Եվ ավազակապետը ներկայանում է գիշերով Ալեքսանդրետտի ֆրանսիական կոնսուլի տունը, ուր իջևանած է լինում եվրոպացին, վերադարձնում է խլած իրերը և խնդրում է իրեն ներել: Այս դեպքը մեծ իրարարանցում է առաջ բերում թուրք ամբոխի մեջ և համոզում, որ եվրոպացու հետ միայն խնդրելով կարելի է գործ տեսնել: Այս բոլորը թուրք ժողովրդին ներշնչել են մի ներքին մտավախություն, որ վերջիվերջո ֆրենկն իր խելքով պիտի հաղթի օսմանլուին: Նրա[նց] կարծիքով վերջին պատերազմը տեղի պիտի ունենա Ամուկ դաշտում, որ գտնվում է Անտիոքի և Քիլիսի մեջ տեղում: Ֆրենկները պիտի հաղթեն, մահմեդականները կքաշվեն Շամը-Շերիֆ (Դամասկոս) իրենց սրբազան քաղաքը, ուր մեսսիան կրկին անգամ պիտի գա և խաղաղություն վերականգնի աշխարհում: Այս զրույցի ճշմարտության մեջ համոզված են բոլոր թուրքերը և մտերմորեն խոսելիս պատմում են քրիստոնյաներին: Այսպես է գրված իրենց սրբազան գրքում, ասում են թուրքերը: Շատերն ինձ հետ խոսելիս հայտնել են, որ շատ վատ վարվեցին հայերի հետ՝ նրանց կոտորելով, թալանելով, քանի որ Ս. Գիրքն անգամ վկայում է, որ քրիստոնեությունը վերջիվերջո պիտի հաղթի մահմեդականության:

Ամիսներ ամիսների հետևից անցնում են, շարունակ թե՛ դրսից՝ կոնսուլից և թե՛ ներսից՝ կառավարությունից լուր է հասնում ինձ, որ շուտով ինձ կազատեն, բայց իրողությունը մնում է նույնը: Կամաց-կամաց ընտելանում եմ բանտային կյանքին: Հոգեպես հանգիստ եմ, որովհետև իմ բուլղար լինելուն համոզվելու պես, դրսի աիը, թե շուտով ապստամբություն կլինի հայերի կողմից, չքացավ, նորմալ կյանք սկսվեց: Թո՛ղ այդպես լինի, թո՛ղ տեղացի հայերը չվնասվեն, ես էլ 5 տարի կմնամ, արդեն հաշտվում եմ այս գաղափարի հետ: Բայց մի կարոտ կա մարդու հոգում՝ այդ ազատ կյանքն է, ուր ոչ ոք

քեզ չի հետևում: Հեռուն այնքան քաղցր է թվում, այնքան երազական: Բակի հեռավոր մի անկյունից, իմ խուցի վերին փոքրիկ անցքից երևում է Ախր-դաղի վերնաշերտը: Որքան գրավիչ է այդ փոքրիկ պատկերը: Այնտեղ մարդ չկա, այնտեղ կարելի է ազատ շնչել: Մարդկանց ներկայությունը այնպես է ձանձրացրել, որ ամեն ինչ կտամ միայն թե ինձ առանձին մի սենյակ տան: Մարդ ամփոփվի իր մեջ, մի քիչ ապրի ինքն իր[են]ով, վերանա և մոռանա իրականությունը, ուր միայն կեղտ, բռնություն, աղքատություն ու անեծք կա: Արդյո՞ք միայնություն ձգտելու այդ խորը տենչը չէ, որ հետո, երբ ազատ էի, սիրում էի հաճախ զբոսանքի գնալ մեն-մենակ և այժմ էլ առանց ընկերի ես ամբողջ օրը կարող եմ անցկացնել առանց ձանձրանալու: Մի շան հաչոցը բանտի պատերից դուրս, ի՜նչ հիշողություն է արթնացնում մարդու մեջ: Լավ հիշում եմ, մի անգամ, գիշերը, շունը շատ մոտ հաչում էր, Համզան, մի երիտասարդ թուրք, քնի մեջ ձայնեց.

– Ահա՛, ահա՛, հասնում ենք գյուղ:

Մի ուրիշ անգամ զուռնայի ձայն էր գալիս: Երևի հարսանիք էր՝ Դադաղլի Մուստաֆան անկողնից թռավ, նստեց ու դեռ չսթափված.

– Մեր գյուղի եղանակն է,– ասաց ու հոնգուր-հոնգուր լաց եղավ:

Դեռ աչքիս առաջն է Քելեշ անունով մի քուրդ, որ հիանալի տամբուրա էր նվագում ու երգում: Նրա նվագը և երգը մի գեղեցիկ երաժշտություն էր: Այրվում էր նա, տոչորվում էր բանտի չորս պատի մեջ: Սիրահարված է եղել և աղջկա տերը, որպեսզի ազատվի սրանից, զրպարտել է, թե իր եզն է գողացել: Խորապես վիրավորված այդ մեղադրանքի համար և զրկված իր սիրո առարկայից, նա իր հավասարությունը կորցնելու վրա էր: Նա չէր տեսնում ոչ ոքի,

նվագում էր ու երգում ինքն իր մեջ ամփոփված կամ շրջում էր բակի մեջ եղած աղբյուրի շուրջը, առանց մարդու նայելու, մոտենում էր փոքրիկ ուռենուն, որ չգիտես ինչ[պես] պատահմամբ բուսել էր աղբյուրի կողքին և ձեռքով շոյելով նրա նեղ տերևները, նրանից ստացած զովությունը քսում էր շրթունքներին և ինչ որ [բան] մրմնջալով, լուռ արտասվում էր:

1900 թ. սեպտեմբերի 9-ին ֆրանսիական կոնսուլը տոմսակ էր գրել, որով հարցնում էր անցագրիս համարը և հույս հայտնում, որ մի ամսից կպարզվի իմ դրությունը: Բայց անցավ ամբողջ տարի և ոչ մի դրական բան: 1901-ին, հուլիս 14-ին ստացա Եգիպտոսից նամակ, որ երկտող էր, մի գրություն էր ներփակում եղբորիցս՝ Երվանդից: Դրա հետ միասին ստացա ֆրանսերեն և բուլղարերեն ավետարաններ: Ես ոչնչով չէի կարող պարապել. հայերեն կարդալ չէի կարող, որովհետև հայ չէի: Ուզել էի իմ ընկերներից ռուսական գրականություն, նրանք էլ այդ էին ուղարկել: Ավետարան կարդալով ֆրանսերեն էի սովորում: Դա ինձ հետաքրքրում էր: Բայց վերջապես մենակ դրանով չի կարելի օր անց[կաց]նել: Դրսից ստացվում էին թերթեր հայերեն և հայատառ թուրքերեն լրագիր: Այս վերջիններս Պողոսը (Թղլյան), որին ես շատ մտերմացա և վերջն էլ բացվեցի որպես հայ, կարդում էր և ես լսում էի: Կամաց-կամաց ես սովորեցի թուրքերեն կարդալ: Դա էլ մի զբաղմունք էր: Պողոսը շատ լավ թուրքերեն գիտեր, ինձ դաս էր տալիս: Ամբողջ բանտում երկու հոգի գիտեին թուրքերեն գրել. երկուսն էլ հայ, մեկը Պողոսը, մյուսը Տիգրանը: Սրանք խնդիրներ էին գրում բանտարկյալների համար:

Ի դեպ, մենք նոր էինք մտել բանտ՝ 1899 թ. հուլիսի 27-ին բանտում ըմբոստություն տեղի ունեցավ: Ահագին աղմուկով վրա պրծան դարպասին, որ կոտրեն:

Բոլորը միասին գոռացին, կանչելով. – Փաշա՛, բինբաշի՛, որ նրանք գան և իրենց բողոքը լսեն: Զորք բերին, բանտարկյալներին ներս արին, պարագլուխներին շղթայեցին: Շղթայեցին և Պողոսին, որ իմ թելադրությամբ բողոք գրեց բանտարկյալների կողմից: Բողոքը վերաբերում էր հացի վատ հատկությանը: 4 հոգու դատի տվեցին որպես խռովարարներ: Այդ դատը տեղի ունեցավ 1900 թ. նոյեմբերի 21-ին: Խռովարարներն էին Չերքեզ Սուլեյմանը, այթնապցի Սալմանը, Պողոսը և ես: Դատարանում տեսան, որ դարտակ խնդիր է, որ նպատակն է եղել խնդիրը տալ փաշային, քանի որ պաշտոնյաները խնդիրը տանել չեն ուզում, մեզ անպարտ արձակեցին: Բայց օգուտն այն եղավ, որ դատարանը բանտի պաշտոնյաներին պարտադրեց, որ նրանք ամեն բովանդակության խնդիրը պարտական են տեղ հասցնել, միևնույն ժամանակ կարգադրվեց հացը լավացնել:

Այդ միջոցին, Եգիպտոսից Սմբատ Խաչատրյանից նամակ ստացա, որով առաջարկում էր իմ ռուսական պասպորտս, որ թողել էի Եգիպտոսում, ուղարկել Հալեպի կոնսուլին, որով կարող կլինեն ինձ ազատել: Ես իսկույն պատասխանեցի, որ այդպիսի անմտություն չանեն, քանի որ իմ բուլղար լինելով ես կարողացել եմ ծածկել մեր ամբողջ ծրագիրը թուրք կառավարությունից, որով և հնարավորություն եմ տվել նորեկ ընկերներին շարունակել սկսած գործը: Քիչ անց նորից նամակ է գրում և հասցե ուզում՝ ինձ դրամ հասցնելու համար: Ես պատասխանում եմ, որ դրամի կարիք չունեմ, իմ վաստակածը ինձ բավական է 5 տարի ապրելու համար, և թե իրենց դրամը թող ծախսեն գործի վրա: Եվ իսկապես, ես շատ քիչ ծախս ունեի: Միացել էի Պողոսին և միասին պատրաստում էինք և սնվում: Խիստ էժանություն էր: Շաքարի ֆունտը[1] 6 ½ կոպեկ: Խա-

[1] 1 ֆունտ հավասար է 0,40951241 գ:

ղողի ֆունտը ½ կոպեկ և այլն: Այնպես որ ամիսը 2–2 ½ մեջիդիեն ինձ շատ բավական էր:

Պողոսի մասին խոսեցի: Արժե այդպիսի ազնիվ և անկաշառ մարդկանց մասին գրել և նրանց հիշել: Վերին աստճան նվիրված էր գործին: Աստվածային մի զայրույթ ուներ դեպի այն բոլոր թուլամորթները, որոնք գործի մեջ մտնելով, նեղ րոպեին նրան դավաճանում են: Համառ էր իր համոզմունքների մեջ և շատ որոշ[ակի] տեսակետ ուներ: Տատանումը անծանոթ էր նրան, սեթևեթել չգիտեր, անկեղծությունը հասնում էր չորության, կոպտության: Այդ տիպը տաճկահայ գործչի մեջ շատ հազվադեպ է եղել, և դրա համար էլ մեծ նշանակություն էի տալիս նրա կարծիքներին: Նա մնաց մինչև վերջ միակ մարդը, որից ես ոչինչ չթաքցրեցի: Եվ բանտում նա անփոխարինելի էր դրսի հետ կապս պահելու համար: Հաճախ նա էր տալիս իմ նամակը ժանդարմին, որ դուրս տանի: Նա ավելի մի բան էր քան ընկերը: Առանց նրան իմ բանտային կյանքը շատ ծանր կլիներ:

Պարապ ժամերս անցնելու համար ես մի տամբուրա գնեցի 13 ղուրուշով և սկսեցի նվագել սովորել: Դա ինձ բավական զբաղեցրեց: Այդ գործիքը ես պահեցի և հետս բերի և մինչև այժմ էլ մոտս է: Ես նվագում էի տեղական երգեր, բայց երբեմն ուզում էի մեր կովկասյան երգերը լսել, սկսեցի փորձել և որպեսզի ինձ չմատնեմ դիտմամբ մի քիչ աղավաղում էի եղանակները և ոչինչ, ես գոհ էի, որ իմ ծանոթ երգերն էի նվագում և դա ինձ բավական հաճույք էր պատճառում:

Մի անգամ Վասիլին գնաց Հալեպ, նախքան գնալը եկավ մոտս, նամակ տվի ռուս կոնսուլին հանձնելու, որի մեջ պնդել էի, որ քանի որ ինձ դատապարտել են իբրև ռուսահպատակ հայ, ուրեմն և իր պարտականությունն է իմ իրավունքները պաշտպանել, բացի

այն պարտականությունը, որ նա ունի դեպի բուլղարները նման դեպքերում:

Նա ինձ պատասխանեց այսպես, եթե ես ռուսահպատակ եմ, ինչպես որ թուրքն է պնդում, ես պարտական եմ անմիջապես իրեն հաղորդել՝ հայտնել անունս և ազգանունս: Այդ դեպքում ինքը պարտական է անմիջապես դիմումներ կատարել ուր հարկն է ինձ ազատելու համար, այլ կերպ ինքը ոչինչ չի կարող անել: Ավելացրել է, որ իմ նամակն ուղարկել է Պոլիս՝ բուլղարական գործակալության և իր կողմից էլ հորդորել է, որ աշխատեն ինձ ազատել:

Այդ միջնորդություններն իրենց ազդեցությունն էին ունենում Պոլսո թուրք կառավարության վրա և, այնտեղից մի քանի անգամ հարցրին Մարաշ, ստույգ իմանալու համար, թե ես ի՞նչ եմ՝ հա՞յ, թե՞ բուլղար: Մինչև իսկ մի անգամ մյուֆետտիշ[1] էր եկել Մարաշ, դիմեցի գրավոր իրեն, կանչեց և ասաց, որ իմ հարցը ծեծվում է Պոլսում, երևի շուտով մի լուծում կստանա և ես կազատվեմ:

Սակայն այս բոլորը զուր անցան և վերջին երկու, երեք տարին այլևս այդ իմաստով լուրեր չէր հասնում ինձ և այլևս ավելորդ էլ էր հույս դնել դրսի միջնորդության վրա: Բուլղարական գործակալությունը, թվում է թե, արդեն գլխի էր ընկել, որ իմ պասպորտը իրենց տվածն է և այժմ խնդիր հանել, քննություն կատարել իսկի իր գործին չի գա, ուստի և խոհեմություն է համարում լռությամբ անցնել, որ իր կեղծիքը չբացվի:

Այսպես, թե այնպես հինգ տարին լրանում էր: Թրքական տարին 12 լուսնական ամիս է, փոխանակ 365 հաշվելու, 354 օր է: Հուլիսի 3-ից 1899 թ., հաշվելով, մենք ազատվելու էինք 1904 թվի մայիսի 9-ին: Եվ իրավ, մայիսի 9-ին բանտից արձակեցին Թղլյան Պողոսին, Առաքելյան Սարգսին, Ալեքսանյան Նազորին ու Ալեքսանյան Մկրտչին: Երեքը մարաշցի էին, տուն գնացին, իսկ Պողո-

[1] Քննիչ, կամ հսկիչ:

սը չոք մարզվանցի էր, ազատ թողնել վտանգավոր մարդու չի կարելի, ուստի և նրան էտապով[1] ուղարկեցին, որ հանձնվի իր կառավարությանը[2]:

Մեր խմբից մնացինք ես և Տիգրանը: Ինձ չթողեցին, ասելով, թե Պոլսից կարգադրություն չի ստացվել, թե ուր ուղարկենք: Ինձ չէին կարող ազատ բաց թողնել: Պոլսից երկու անգամ հարց տրվեց, թե ես որտեղացի եմ: Մարաշից պատասխանեցին, թե ես այսինչ պարագաներում դատապարտված է [եմ]: Պոլսից որևէ կարգադրություն չեկավ: Եվ ես ավելորդ օրեր ու շաբաթներ սպասում եմ բանտում: Կառավարության արածս դիմումները մնում են առանց պատասխանի: Երբ կարգադրություն լինի Պոլսից, ըստ այնմ էլ կվարվենք, ասում է կառավարությունը ընդհանրապես: Դիմեցի ֆրանսիական կոնսուլին: Նա ուղարկեց իր ղավազին մոտս, թույլ տվեցին, որ դարպասից դուրս գամ ու կողքի սենյակում խոսեմ հետը:

Ղավազը հայտնեց, որ կոնսուլը մի քանի անգամ դիմել է կառավարությանը և հասկացրել, որ եթե ինձ մի բան պատահի բանտում կառավարությունը անձնապես պատասխանատու պիտի բռնվի, քանի որ իմ ժամանակը լրացել է և իրավունք չկա ինձ բանտում պահելու: Ապա հույս տվեց, որ շուտով ինձ արձակել կտա: Մենք երբ խոսակցությունը վերջացրինք և ղավազը կանգնեց, որ գնա, մեզ լսող չավուշը խնդրեց, որ իր դիմումն էլ լսել: Խնդիրը նրանումն է, որ մի քանի ամսից ի վեր ռոճիկները չեն տված, եթե հնար է՝ կոնսուլը միջամտե ու ռոճիկների խնդիրը կարգադրի: Ղավազը խոստացավ այդ էլ հաղորդել կոնսուլին:

---

[1] Պահակախմբով աքսոր կամ այլ բանտ տեղափոխվող բանտարկյալների կամ աքսորականների խումբ:

[2] Այսինքն՝ Չոք Մարզվանի իշխանություններին:

Թուրքիայի օրենքով միայն քաղաքական հանցավորները և բռնաբարություն կատարողներն են լրիվ կրում իրենց պատիժը: Մյուս դատապարտյալները՝ գող, ավազակ, մարդասպան ենթակա են իրենց պատժի 1/3-ի ներման: Այդ ներումները կատարվում են մեվլուտին (մարգարեի ծնունդ), սուլթանի ծննդյան տոնի (շաբան[1] ամսի 16-ին) ու սուլթանի գահակալությանը (օգոստոսի 19-ին): Սրանք անպայման ներման օրեր են: Երբեմն էլ բայրամներին են լինում, որ պայմանական է: 2/3-ը լրացողները սպասում են այդ տոներից առաջինին: Մի օր անցած հեռագիր է ստացվում և բոլորին ազատում են: Սովորաբար մինչև 5 տարվա դատապարտվածները իրենց տեղումն են լրացնում, իսկ ավելի ունեցածները, որոշ կոնտիգենտ հավաքվելուն պես, միասին մի էտապով ուղարկում են բերդերը: Տաճկաստանում աքսորի բերդերն էին՝ Բոդրում, Փայաս, Աքիա, Ռոդոս, Սինոպ, Կարբ-Թարա պուլուս և Ֆեզան: Իմ ժամանակ ոչ մի մարդ չուղարկվեց Ղալա: Ներքին խռովությունների ժամանակ բանտի վարչությունը սպառնում է խռովարարներին աքսորել Ղալա և, այդ սպառնալիքն ունի իր խոշոր ազդեցությունը:

Ես, ուրեմն, բացի այն, որ լրիվ կերպով վերջացրել էի իմ օրերը, հիմա ավելորդ տեղը սպասում եմ: Եվ Պոլսից կարգադրություն չեկավ: Այնտեղ շվարել են, թե ինձ ում հանձնեն, եթե բուլղար կառավարության հանձնեն՝ նա պիտի բողոքի, թե ինչու իր հպատակին այսքան ժամանակ պահել եք որպես ռուսահպատակ հայի ու դրա համար ահագին դրամական կոմպենսացիա[2] պիտի պահանջի: Եթե հանձնեն ռուս կառավարության, նա պիտի բողոքի կապիտուլյացիաները ոտնահարելու առթիվ, որ իր հպատակին դատել են առանց իրեն իմացնելու և ով գիտե, որպիսի՞ պահանջներ հայտնի:

---

[1] Լուսնային օրացույցով՝ օգոստոս ամսին:

[2] Փոխհատուցում:

Եվ այս երկընտրանքի առջև շվարած՝ Պոլիսը քար է կտրել ու Մարաշից իրար վրա տեղացող հեռագիրը թողնում է անպատասխան: Բայց այստեղ էլ կոնսուլն է շարունակ հիշեցնում: Կառավարությունը նեղն է ընկել: Վերջապես որոշում եղավ, որ ինձ էտապով ուղարկեն Հալեպ, իբրև վիլայեթ [կենտրոն], թող վիլայեթը կարգադրի: [1905 թ.] Հուլիսի 4-ն էր այդ: Բանտարկյալներին մնաս բարև ասելիս շատերը, որոնք երկար ժամանակով էին դատապարտված, խնդրում էին ինձ միջնորդել կոնսուլի մոտ, որ նա իրենց ազատի: Միամի՛տ մարդիկ:

Իմ առաջ դեռ մեծ դժվարություններ կային: Այդ պարզ երևում էր: Լավագույն դեպքում մինչև Պոլիս պիտի հասցնեն և ապա հանձնեն բուլղարական ներկայացուցչին կամ ավելի շուտ պիտի հասցնեն բուլղարական սահմանը՝ Ադրիանոպոլսից դենը ու հանձնեն բուլղարական իշխանություններին: Կասկածելի մարդուն իրենց երկրում ազատ չեն արձակի: Բայց որքան ժամանակ կտևի, մինչև այդ բոլորը վերջանա: Մինչ իմ դրամները վերջացել են: Դուրս գալուս օրը Վասիլին եկավ ու հանձնեց երկու ոսկուց մի քիչ ավելի դրամ: Այդքան դրամը ինձ պիտի բավարարի թե՛ ճամբի ծախքի և թե՛ ապրուստի համար: Հնարավո՞ր բան է: Կառավարությունը ինձ պիտի ուղարկի ոտքով, եթե իմ ծախքով ձի չվարձեմ: Ոտքով գնալ անկարող եմ: Տարիների փակված կյանքը, վատ ապրուստը, ստացածս ռևմատիզմային հիվանդությունը քայքայել են ինձ: Բայց և այնպես պիտի ձի վարձել, որոշեցի ես: Որ ճամբով Մարաշ եմ հասել և ինչ պայմաններում 5 տարի առաջ եկել, նույն ճամբով և նույն պայմաններում՝ գնում եմ:

Ձիուս վրա բարձված է իմ արկղը, որի մեջ է իմ մեքենան, իմ տամբուրան, և իմ անկողինը, ես էլ նրանց վրա նստած եմ: Հագուստներս նույնն են, ինչով որ բանտ եմ մտել: Կարելի է պատկե-

րացնել, թե ինչ դրության կլինեն՝ հնության ու կարկատանի մի ցուցահանդես: Ինձ հետևում են երկու ձիավոր ժանդարմներ:

Անցնում ենք Մարաշի միջով: Բանտը մնաց հետևս: Դրսի օդը, փողոցները իրենց սովորական անցուդարձով շատ տարօրինակ են թվում: Չես հավատում աչքերիդ, թե կան մարդիկ աշխարհում, որոնց վրա հսկող չկա: Սակայն սիրտս ուրախ չէ: Ի՞նչ էի երազում Թուրքիա մտնելիս և ինչո՞վ վերջացավ: Գնում եմ հետս տանելով այնքան ցանկություններ, որոնք փակված մնացին հոգուս խորքում: Դա ինձ կրծում է և ես ինքնամոռացության մեջ արդեն քաղաքի եզերքին եմ հասել և ի՞նչ տեսնեմ՝ Ալեքսանյան Նազորը, որ երկու ամիս առաջ բանտից դուրս եկավ, ժպտալով մոտենում է, բարևում և ինձ տալիս երկու ոսկու արծաթ դրամ, ասելով, որ տեղական մարմինն է տալիս ինձ ճամփի համար: Ես ընդունեցի ուրախությամբ: Սա այն Նազորն է, որ շատ լավ հիշում եմ, մեր դատապարտվելու օրը, բանտ մտնելուն պես, սկսեց լաց լինել և, երբ Պողոսը տեղից, թե ամոթ չէ՞ լաց ես լինում: Տես այս օտարականը (ինձ ցույց տալով) առանց հանցանքի դատապարտված է ու այնքան սառնարյուն է իրեն պահում: Այս խոսքին Նազորը վրա բերեց.

– Այդ պզտի՞կ շուն է, դու կկարծես:

Այս ամբողջ խոսակցությունը կատարվեց հայերեն իմ ներկայության և ոչ ոքի մտքով չանցավ, որ հասկանում եմ: Շուն ասելով նա հեղափոխական էր հասկանում և սրտանց էր ասում, որովհետև վշտից կուրացել էր: Հիմա կառավարությունից չի վախում ու եկել է տեղական մարմնից ինձ ճամբու ծախք հասցրել: Նա ինձ հետ խոսում է թուրքերեն: Այդտեղ էլ նա համոզված է, որ ես բուլղար եմ: Նրան ասած չեն լինի իմ ինչ լինելը: Պարզապես ասել են, որ այսքան ժամանակ մեր դատի համար բանտարկվածին, ով և լինի նա, պիտի մի համակրական վերաբերմունք ցույց տալ: Եվ նա շարունակ հետաքրքվել է բանտի պահապանների ու Կուտիլակի եղբայր-

ների միջոցով իմացել իմ մեկնելուս օրը, և ահա այս հանդուգն քայլը հանձն առել: Նա հեղափոխական չէր բանտ մտնելիս, հեղափոխականին շուն անունով էր որակում, այժմ հեղափոխական է դառել: Բանտը հինգ տարվա ընթացքում կոփել է թուլամորթի հոգին ու նրան անվախություն ներշնչել: Ես նրանից բաժանվեցի իբրև բարեկամից:

Ես նրան չմոռացա հետագայում, երբ մի անգամ 1906 թ. Ժընևի խմբագրատանն աշխատում էի, Մարսելից ստացա նրա մի նամակը, որով հայտնում էր, որ Տաճկաստանից մի կերպ ճողոպրելը ու Ամերիկա երթալու մտադրությունը: Պարզվեց ինձ նրա աղքատիկ վիճակը, և ես շտապեցի կազմակերպչական դրամներից նրան փոխադրել հարյուր ֆրանկ: Այդ ժամանակ նա արդեն գիտեր, որ ես հայ եմ: Նրան Եգիպտոսում Պողոսը ասած պիտի լիներ, որ նույնպես Թուրքիայից փախել էր և դրանից առաջ ինձ հաղորդել այդ մասին: Նրա հպարտ դիրքը դատարանում և բանտային երկար կյանքի ընթացքում նրան արժանի էին դարձնում հեղափոխական մի փոքրիկ օժանդակության: Եվ ես նրան փոխադրեցի 200 ֆրանկ[1]: Ես շատ գոհ եմ, որ կարողացա մի փոքրիկ օժանդակություն անել այդ հեղափոխական գործին գիտակցորեն տառապող ազնիվ երիտասարդին:

Ձիու վրա օրորվելով հասա Այնթապ, ուր գիշերեցի բանտում, նույն սենյակում, որտեղ անցրել էի ձերբակալվելուս ժամանակ: Բոլորովին այլ դեմքեր էին այժմ: Հին բանտարկյալներից ոչ ոք չկար: Ես այժմ ֆես էի կրում, դրա համար առանձին ուշադրության առարկա չէի բանտարկյալների համար:

Այդ գիշեր առանձին անձկությամբ հիշեցի ձերբկալվելուս երեկոն և այն սենյակը, որ տեղից ինձ ժանդարմը հրավիրեց գայմագամի մոտ: Բայց ամենից ցայտուն պատկերացավ Գրիգոր Թա-

[1] Հավանաբար նկատի ունի, որ երկրորդ անգամ և ս գումար է ու ղարկել:

վուգյանը, որ մտավ սենյակս իմացնելու, թե Նազարեթյանն ինձ սպասում է և ինձ առաջնորդելու, երբ երկու ոստիկան իմ իրերս հավաքում էին և ինձ առաջնորդում դեպի Սարայ: Ես չեմ մոռանում այդ զարմանքից մեծացած աչքերի արտահայտությունը և ափսոսանքը, որ կարդացի այդ աչքերում: Ի՜նչ հույսերով և հույզերով մտավ նա ներս և ինչպես այդ բոլորը խորտակվեցին մի վայրկյանում:

Հաջորդ օրն ինձ ուղարկեցին Քիլիս: Ձին վարձվեց իմ հաշվով, ժանդարմները փոխվեցին: Մի գիշեր էլ Քիլիսի բանտում մնալուց հետո ինձ ուղարկեցին Հալեպ: Քիլիսում վերհիշեցի բժիշկ Նիկողոսին, որ ինձ խորհուրդ էր տալիս դուրս գալ Թուրքիայից և, երբ այս սպառնալիքը վերջանա, նորից գալ ու գործը շարունակել: Ինքնասիրությունս, թե չի կարելի վախենալ սպառնալիքից, այսպիսի անախորժ անակնկալի հասցրեց ինձ, բայց լավ մտածելով գտնում էի, որ ընդհանուր շահի տեսակետից այս ավելի լավ եղավ: Թուրք կառավարությունը իմ անվտանգ լինելուն համոզվելով՝ գործը մի խումբ մարդկանց բանտարկելով փակեց, և դրանով հայության սկսված հալածանքներն ու բռնությունը վերջ գտան:

[1904 թ.] Հուլիսի 9-ին Հալեպում էի: Ինձ պահեցին ոստիկանատանը երկար, ուր առանձին մի սենյակում էի, սակայն ուր ամեն տեսակի աքսորականներ էին բերում գիշերելու համար, մի քանի օր պահում և ապա ամեն ուղղությամբ ուղարկում: Սկզբում այդ տեղ ապրելը ինձ համար շատ ծանր էր: Բանտը դրա հետ համեմատած ավելի տանելի է: Այնտեղ որոշ մարդկանց հետ ես ապրում, արդեն իրար ճանաչել եք: Ամեն մարդ իր սիրտը բաց է արել, իր կյանքը մեջտեղ բերել, ինչ որ հարազատ միջավայր է ստեղծվել: Այնինչ այստեղ մարդիկ չգիտեն իրենք ինչ են, ո՞ւր են գնալու, ի՞նչ է սպասում իրենց, և դրա համար էլ չեն բացվում իրար: Խոսքի նյութ չունեն, հատուկտոր էլ եթե փոխանակում են իրար հետ, կարծես

ակամայից է, բռնազբոսիկ: Ամեն մեկը մյուսին է կասկածում: Արդյոք ոստիկանության մարդիկ չլինե՞ն: Եվ մթնոլորտը ծանր է, տաղտուկ: Իմ դրությունն անորոշ է, ոչ ոքի չես ճանաչում, որ հարցնես, թե ինչու՞ են պահում քեզ այստեղ:

Անցան օրեր, շաբաթներ և ոչ մի կարգադրություն: Դրամս հատնելու վրա է: Ի՞նչ պիտի անեմ, եթե այսպես ամիսներ ձգձգեն ինձ պահել: Կյանքը տարբեր է՝ բանտում ապրուստը էժան է, հարմարություն ես ստեղծել այնտեղ, իսկ այստեղ ամեն ինչ պիտի պատրաստի ստանաս: Կրկնակի տեսակի ծախք է դուրս գալիս: Դրամ չի դիմանում: Կապ ստեղծել մեր ընկերների հետ շատ վտանգավոր է: Մինչև այժմ բանտային կյանքը տարել եմ, որպեսզի ավելորդ մարդ չվնասվի, հիմա ազատվելու նախօրյակին պիտի դիմանալ բոլոր զրկանքներին և համակերպվել:

Որոշեցի տոմսակ ղրկել Ֆուադ բեյին և խնդրել, որ մի անգամ անցնի մոտս: Եկավ և բավական քաղաքավարի կերպով հետաքրքրվեց իմ կյանքով, ցավ հայտնեց, որ այդպիսի դժբախտություն է պատահել, ապա գնաց սեր-կոմիսերի մոտ իմանալու համար, թե ինչու համար են ինձ պահում այդքան երկար: Նույն պատասխանն էին տվել, թե Պոլսից հարցրել են ինձ ուր ուղարկելու մասին և դեռ հրահանգ չեն ստացել: Հույս ունեն, որ շուտով մի կարգադրություն կլինի: Ֆուադ բեյը հետաքրքրվեց մեքենայովս: Պատմեցի և ավելացրի, որ դրամի կարիք ունեմ, դրա համար էլ մտադիր եմ մեքենայիս դանակը ծախել: Սա այն մասն է, որով հնացած երգերը հանվում են գլանակների վրայից, որով գլանակները դառնում են նոր, ուրեմն և կարելի է նրանց վրա ուզած եղանակները վերցնել: Ֆուադ բեյը հենց այդպիսի մի դանակի պետք ուներ: Հարցրեց, թե ինչ արժի: Ասացի, որ 3 ոսկի է առնված: Անմիջապես 3 ոսկին տվեց և դանակը ստացավ: Սա մի հաջողություն էր դրամական այդպիսի սուղ պայմաններում: Մնում է, որ ինձ որքան կարելի է

շուտ ուղարկեն: Դրա համար ռուսական կոնսուլին պիտի իմացնել, նա գոնե այդ չափը կանի, կառավարությանը կհասկացնի, որ ժամանակը վաղուց լրացած բանտարկյալին արգելքի տակ պահելը պատասխանատու մի վարմունք է:

Այդ միջոցին ձերբակալած բերին և իմ սենյակում տեղավորեցին երեք հայեր: Նրանք Բեյրութից ներս էին մտել և Լիբանանով անցնելիս, թրքական սահմանում բռնել էին և ուղղակի բերել ոստիկանատուն: Մեկը պարսկահպատակ Գրիգոր Սագունի անվան պասպորտով, երկրորդը թրքահպատակ խարբերդցի, անունը Հակոբ, երրորդը՝ ամերիկահպատակ, անունը Կոշկակարյան Հարություն: Սրանք ոչ մի բանով չեն մեղադրվում, բայց բավական է, որ արտասահմանից են գալիս, ուրեմն և կասկածելի էին:

Թուրքերը գիտեն, որ օտարահպատակների հետ կամայականություններ անել չի կարելի: Իմաց տվին և պարսից և ամերիկյան հյուպատոսներին, որոնք սկսեցին շատ եռանդով իրենց հպատակներին պաշտպանել, մանավանդ պարսից հյուպատոսը՝ օր չէր լինում, իր մարդը չուղարկեր և տեղեկություն չհարցներ իր հպատակի մասին: Պարսից կոնսուլի ղավազը ամեն օր գալիս էր և ոստիկանապետին հարցնում, թե երբ պիտի ազատվի Սագունին: Դրանք երեքն էլ թրքահայեր էին, բայց քանի որ օրինավոր անձնագիր ունեն՝ թյուրքն ինչ կարող է անել: Հնչակյան գործիչներ էին: Երբ վերջը ես ազատվեցի և Եգիպտոսում հետաքրքրվում էի հնչակյանների պառակտիչ կռիվներով, ինձ համար պարզվեց, որ իսկական Գր. Սագունին սպանված է ներկուսակցական կռիվներում և անձնագիրն այժմ օգտագործում է մեկ ուրիշը Կիլիկիայում ընդհատված գործունեությունը շարունակելու համար:

Թուրք կառավարությունը տեսնելով, որ այդ երեքին պահելով դժգոհության առիթ է տալիս դիպլոմատիական ներկայացուցիչներին, որոշեց 3-ին էլ իր երկրի սահմաններից դուրս քշել, իհարկե

ոստիկանական հսկողության տակ: Այդպես էլ եղավ: Սակայն ես օգտվեցի պարսից ղավազի հաճախակի ներկայությունից և խնդրեցի, որ ռուսաց կոնսուլին իմաց տա իմ մասին, որպեսզի նա միջամտի՝ ինձ որքան կարելի է շուտ Հալեպից ուղարկեն: Շատ բան չէ խնդրածս, այդքանը գիտեմ, որ կանի:

Այդ միջոցներին իմ սենյակը բերին մի մարդ որպես զենքի կոնտրաբանդիստ[1], անունն էլ Իսմայել աղա: Այս երևույթը ինձ խիստ խիստ հետաքրքրեց: Մի թուրք զենք է մտցնում Թուրքիա, ո՞ւմ դեմ, արդյոք շահագործելո՞ւ մտքով: Միջակ տարիքի մարդ էր, բարձրահասակ, լավ կազմվածքով, առողջ ու գեղեցիկ տղամարդու արտաքինով, երկայն բեղերով, ինչ որ հեքիաթային անձնավորություն: Հետաքրքրվող մարդ էր: Շարունակ խոսում էր, երբ իմացավ, որ ես դատապարտված եմ եղել որպես հայ, այն էլ քաղաքական հանցանքով, կամաց-կամաց բացվեց: Բանից դուրս եկավ, որ հայ է՝ դիարբեքիրցի, անունը Մարտո: Իսլամություն է ընդունել, որպեսզի կարողանա ազատ կերպով շրջագայել և զենք մտցնել ուզած շրջանը:

– Մենք այս երկրում շարունակ սպառնալիքի տակ ենք, ամեն րոպե կարող ենք ջարդերի հանդեպ կանգնել: Եթե զենք չունենանք, մեզ կոչնչացնեն: Որպեսզի ապրենք, պիտի հակառակորդից ավելի լավ զինված լինենք: Իմ իսլամությունը ինձ փրկում է ամեն բանից: Քանի անգամ բռնվել եմ, հարցաքննվել, նորից ազատվել եմ: Հիմա նույնն է կրկնվելու: Պիտի Դիարբեքիրից հարցնեն՝ այնտեղից պատասխանը կլինի շատ դրական: Իսկույն ինձ բաց կթողնեն: Գիտեն, որ թուրքը հային զենք չի ծախելու, ուրեմն զենքը, որ ես ճարում եմ այս ու այն տեղից, թուրքի ձեռքն է անցնելու: Կառավարության ուզածն էլ դա է:

Եվ իրավ, թուրքերի մեջ երկար ժամանակ ապրած լինելով ես արդեն գիտեմ, որ արտաքինի տեր հայը ոչ թե զենքի գործով, այլ

[1] Մաքսանենգ:

ամենահասարակ արհեստի տեր իսկ լինի, թուրքի նախանձը կշարժի:

– Իսկի հայի նման չի, կասեն թուրք է,– այսպես են արտահայտվում նման մարդ տեսնելիս: Հայը չի կարող լավ դեմք ունենալ, լավ հագուստ, լավ ձի, ամեն լավ բան թուրքին պիտի լինի: Եվ Մարտոն շատ լավ ըմբռնել է այդ հոգեբանությունը: Ձևականորեն թուրք է դառել: Լավ հագնվում է, լավ ձի նստում, լավ կյանք վարում և աշխատում, և որ գլխավորն է՝ զինում է անպաշտպան հայերին: Հին դյուցազնական տիպի հայ է Մարտոն, որ միջոցների մեջ խտրություն չի դնում, միայն թե տևական դարձնի իր ժողովրդի գոյությունն այս աշխարհի մեծ պայքարի մեջ: Եվ արձակեցին Իսմայել աղային: Ձին, արաբական նժույգը նստած, բեղերը սրած, երկարավիզ կոշիկները հագին, մեշլահը[1] թիկունքին, ագիլը[2] գլխին, հրացանն ուսին սավառնում է Սիւրիայի, Միջագետքի տափաստանները, Լիբանանի լեռները, տեղացիների հարգանքը վայելում, ամեն կողմից վառոդ, փամփուշտ, հրացան առնում, ջորիները բեռնում և այդ ոսկուց էլ արժեքավոր գանձը զանգակների ղողանջյունների տակ Հայաստանի բնիկներին հասցնում: Սա վեպ է, սա իրականություն չէ: Սակայն թրքական բանտերում որքան այսպիսի իրականություններ են ծածկված հեքիաթական, մշուշային անձնավորությունների հետևում:

Հալեպում չկարողացա տեսնվել Կոստակիի հետ՝ այդ խորհրդավոր ու բարի ծերուկի, արդյո՞ք հիվանդ էր, արդյո՞ք բացակա էր, գրիչս չի դառնում, որ ասեմ ընդմիշտ հեռացած աշխարհից: Նրան չգտան: Եվ այդ ինձ խիստ ցավ պատճառեց:

[1] Թիկնոց:
[2] Գլխարկ:

Ու մի օր, օգոստոսի 18-ին, ասել է 40 օր ոստիկանատանը պահելուց հետո հայտնեցին, որ պիտի գնամ դեպի Ալեքսանդրետ[1]: Անհամբեր սպասում էի այդ բանին: Մարդ չկար մնաս բարով ասելու: Եղածները իմ սրտի մարդիկ չէին: Ձին վարձվեց իմ հաշվով, իհարկե: Հանկարծ տեսնեմ երկու աքսորական էլ բերին միասին տանելու: Մեկին առանձին կապեցին, իսկ մյուսին շղթայեցին ինձ հետ՝ իմ աջ բազուկը և նրա ձախ դաստակը միացրին երկաթե մի շղթայով և ամուր մեխեցին: Սա արդեն նորություն էր ինձ համար: Մինչև այժմ ինձ չեն շղթայել, հիմա, երբ ես վաղուց ազատված պիտի լինեի, շղթայած են փոխադրում դեպի նավահանգիստ: Ինձ հետ կապվածը հայ է, անունը Փանոս, Չոք Մարզվան են ուղարկում: Մյուսը արաբ է: Քաղաքը կտրեցինք ոտքով: Ձիուս վրա իմ սովորական հարստությունն է: Ժանդարմները ձիով են, գնում ենք շտապ, փոշու մեջ կորած: Ամեն կողմից վազում են, որ տեսնեն «հարամիներին»[2]: Արաբները կարծում են, թե մենք ավազակներ ենք:

Քաղաքից դուրս եկանք: Ես հոգնել եմ, ուզում եմ ձի նստել, բայց ինչպես հեծնել: Փանոսը կապած է ինձանից: Ստիպված եմ քայլել: Վերջապես հայտնեցի, որ չեմ շարունակելու, եթե ստիպեն ոտքով գնալ: Ժանդարմները միացան՝ ինձ բարձրացրին մի կերպ, Փանոսն էլ որքան կարող է իր ձախ ձեռքն է բարձրացնում, որ չկախվի ինձանից:

Մի կերպ նստեցի: Գնում ենք: Իմ աջ ձեռքը պիտի շարունակ կախ ձգած պահեմ, Փանոսն էլ ընդհակառակը՝ իր ձախ ձեռքը բարձր բռնած: Մի կերպ գնում ենք: Տեսնեմ դիմացից մի ֆայտոն է գալիս, նայեմ՝ Գրիգոր Մսրյանը: Նա դանդաղեցրեց կառքը: Ես

---

[1] *Կիլոմետրից Պոյիս ուղարկվելու համար:*
[2] Ավազակ:

խոսք բաց արի, որպես անծանոթի, թե տեսեք ինչ պայմաններում են տանում աքսորականներին: Նա ժպտաց և կանչեց.

– Ոչի՛նչ, շուտով ամեն ինչ կանցնի:

Ինձ համար պարզվեց մի բան, որ տեղական մարմինը դրսից կարողացել է հետևել ինձ և հասկացել է մեկնելուս օրը և ահա Մսրյանը հանգիստ չի կարողացել նստել տանը, կառք է վարձել, իբր թե պտույտ պիտի անի և քաղաքից 4–5 վերստ հեռավորության վրա սպասել է իմ անցնելուն, որ ինձ տեսնի: Եվ տեսավ, բայց այդքան չկարողացավ մոտենալ, չկարողացավ մինչև իսկ ցավ հայտնել: Վախում էր: Իրավունք ուներ: Ո՞վ գիտե, ինչպիսի մեղադրանքով պատասխանատվության կկանչեն: Արի ու միջից դուրս արի: Այդ հանդիպումը ինձ մոռացնել տվեց իմ օրվա տառապանքը. գիտես որ, մենակ չես: Մոռացության չես մատնված, նեղությունները կանցնեն, բայց այդ վերաբերմունքը մնայուն է հոգուդ խորքում:

Դժոխային պայմաններում շարունակեցի ճանապարհս, շղթայի օղակը ճնշում է դաստակս: Փանոսը քրտինքի մեջ կորած աշխատում է ձիու կողքից քալել, որ ինձ չծգի և ձիուց վայր ձգի: Նրա այդ ճիգը ինձ հոգեպես տանջում է: Իմ տեղը լիներ մի ոտքով գնացող, նա որքա՜ն հանգիստ կզգար իրեն: Այլևս շարունակել անկարելի դարձավ: Դաստակս ցավում է սաստիկ: Օղակի երկու կողմը ուռուցքներ են գոյացել, կապտել: Մտածում եմ իջնել ձիուց և ոտքով գալ: Այդ եմ հասկացնում չավուշին: Նա տեսնում է, որ ես շատ նեղված եմ, իր չոր ու անտարբեր դիրքը չի խախտում: Ձիս կանգնեցնում եմ, որ իջնեմ: Ձափթիեն անցնում է ձիուս մյուս կողմը որպես, թե ինձ օգնելու: Նա մոտենում է և կամացուկ խոսելով ինձ հասկացնում, որ չավուշին մի նվեր պետք է տալ և նա կարող է երկաթը հանել: Կաշառք է ուզում պարզապես: Մինչև հիմա ես կաշառք չեմ տվել, բայց այդ րոպեին սկզբունքներս այդ մասին տատանվում են: Որոշում եմ տալ, միայն թե դուրս գալ այդ դրությունից: Սակար-

կությունը վերջանում է երկու մեջիդիեով: Դա ինձ համար մեծ փող է, որովհետև առաջս մի մեծ անորոշություն կա: Բայց ո՞վ է մտածում վաղվա մասին: Դեռ մի այսօրը փրկենք, վաղը ձգենք իր բախտին: Դրամը վճարում եմ: Ինձ իջեցնում են ձիուց: Մոտենում ենք մի մեծ քարի, մեր ձեռքերը միացնող օղակը ինչ որ աքցաններում տրորելուց և մեր ձեռքերը կոտրատելուց հետո կարողանում են շղթան հանել: Փանոսը, մի աղքատիկ տղա, գոհունակությամբ լի աչքերով դիտում է իր վիրավոր ձեռքը և առաջ ընկնում: Ես էլ եմ ազատ, բայց ձի նստած: Իմ եռակի բանտերից մեկը քակվեց՝ դա ձեռքիս կապանքն էր, բայց դեռ մնում են երկուսը, երկրորդը իսկական բանտն է, իսկ երրորդը՝ հայերեն չխոսելը: Ինչպես կուզեի այս րոպեին մի սովորական հայ լինեի ինչպես Փանոսը, թեկուզ բանտարկված, բայց հետը հայերեն խոսելով քայլեի: Թվում է, թե այդպես շատ ավելի դյուրին կլիներ աքսորանքը, քան այսպես:

Գիշերը անց ենք կացնում առաջին կայանում, որ կոչվում է Քեֆեր-Ալթուն, մի ախոռանման իջևան, ուր ժանդարմներ են կենում: Առավոտյան մեզ հանձնեցին ուրիշ մի խումբ ժանդարմների: Երբ ձիս նստեցի, տեսա, որ իմ բարձը գողացել էին՝ չավուշն էր սեփականել: Երևի երկու մեջիդիե կաշառքը քիչ էր համարել:

Երկրորդ օրը իջևանեցինք Ինջիրլիկ կայանում: Այդտեղով անց էին կացնում մի հարսանիք: Ջուռնան զիլ կանչում էր և մարդիկ ինչ որ տոնական տրամադրությամբ, որը ձիով, որը ոտով, շտապում էին դեպի մոտակա գյուղը:

Երրորդ օրը հասանք Համամ հանքային ջուրը: Այդտեղից է սկսվում Ամուկ օվան, մի ընդարձակ դաշտ, ուր ըստ թուրք ժողովրդի, պիտի լինի մահմեդականության վերջին կռիվը և ուր նա պիտի խորտակվի: Ես երկար նայում էի այդ ընդարձակ դաշտին, որ վերջանում է Անտիոքի շրջապատող լեռներով և սրտովս մեկ ցանկանում, թե արդյո՞ք կգա այդ օրը, որ սուլթանական բռնությունը խոր-

տակվի և արդյո՞ք Չերքեզ Նուրիի ցանկությունը՝ Մարաշի բանտի տեղը արտ ցանվի, մի օր կիրագործվի: Մարդկությունը ինչպիսի ազատ շունչ պիտի քաշի այդ օրը:

Անցանք Մահմուդ փաշա խան, հետո Կըռըք խան: Դեպի հյուսիս ձգված են Սև լեռան ճյուղավորությունները, որոնց մի խումբը կոչվում է Քյուրդ դաղ: Հինգերորդ օրը, անցնում ենք Բեյլան հայկական ավանը և իջնում դեպի ծով, դեպի Միջերկրական, մարդկության հին կուլտուրայի օրրանը:

Ալեքսանդրետի բանտից իսկույն նամակով իմաց տվի ֆրանսիական կոնսուլին և խնդրեցի աշխատել ինձ եվրոպական նավի միջոցով փոխադրել տալ: Նպատակս այն է, որ եվրոպական նավի միջոցով խույս տամ թրքական հսկողությունից և առանց Պոլիս մտնելու որևէ նավով անցնեմ մի ազատ երկիր: Գիտեմ, որ Պոլսում դեռ թուրք կառավարությունը երկար քննություն պիտի կատարի իմ ով լինելը գտնելու համար և թերևս կարողանա հաստատել, որ ես բուլղար չեմ, ուրեմն հայ եմ: Իմ այսքան տարիների ջանքերը՝ ծածկել իմ հայությունը, որպեսզի մեր ծրագիրը Կիլիկիո նկամամբ չհայտնագործվի, իզուր անցած կլինեն:

Գիտեմ, որ ֆրանսիական կոնսուլն այդ բանը կանի բժիշկ Նիկողոսի միջոցով: Ինձ համար այս կետն է կարևոր: Նա կհետևի ինձ և թույլ չի տա, որ թրքական նավի հանձնեն ինձ: Գործի մեջ մի բարեբախտություն կա, որ թրքական առևտրական նավերը կանոնավոր ռեյսեր[1] չունեն: Նրանց գալը պատահական է և որովհետև հին, փթած նավեր են, ամեն մի նավահանգստում օրերով սպասում են, պակասներն են լրացում, փոթորկի ժամանակ այս ու այն ծոցում պահվում: Այս հանգամանքը շատ օգնեց իմ գործին: Թրքական նավեր չկային:

[1] Չվերթ:

Երբ ֆրանսիական] կոնսուլը միջամտեց, որ իրավունք չունեն ինձ պահելու բանտում, պարզվեց մի բան, որ Հալեպի կառավարությունն ինձ ուղարկել է հատուկ հրահանգով՝ Պոլսո կառավարությանը հասցնելու համար, որովհետև Պոլսից ոչ մի հրահանգ չի ստացվել, թե ինչ պիտի անեն ինձ: Ո՛չ Մարաշի, ո՛չ Հալեպի դիմումներին Պոլսո կառավարությունը ոչ մի պատասխան չի տվել ամիսների ընթացքում: Դրա համար էլ ես բանտից բանտ եմ քաշքշվում:

Ֆր[անսիական] կոնսուլը մի խիստ դիմում կատարեց տեղական գայմագամին, նրան պատասխանատու համարելով անձամբ, եթե ինձ բանտում որևէ դժբախտություն պատահի: Գայմագամը խնդրեց իրեն մի քանի օր ժամանակ տալ, մինչև որ Հալեպից կարգադրություն ստանա եվրոպական նավի հանձնելու համար: Տրված հեռագրերին պատասխան չստացվեց: Սակայն մի օր Ալեքսանդրետի սերայի բակում երևաց Հալեպի կոմիսարը, որին ես ճանաչում էի: Նույն օրը մի թուրք բանտարկյալ Իսկենտեր անունով, որ մարդասպանության մեղադրանքով սպասում էր վճռի, ինձ հայտնեց, որ արտաքնոցում եղած ժամանակ լսել է տեղական կոմիսերի և Հալեպից եկած կոմիսերի խոսակցությունը՝ նավով ուղարկվելիք մեկ ճամփորդի մասին:

– Հալեպից եկածը ասում էր, թե նրան կհանձնեք օսմանյան նավի և ճանապարհին կշպրտեք ծովը՝ դրանով հարցը կփակվի:

Այս խոսքերը շատ լավ լսեցի:

– Այստեղից գնացողը մենակ դու ես, Դիմիտրի: Այս անաստվածները քո գլուխն ուտել են: Տեր ունես, իմացրու, թե չէ կորած ես,– այսպես վերջացրեց իմ բանտակիցը:

Ինձ համար պարզ էր և դա: Հալեպի դիմումներին ևս Պոլսից հարցումներ են արել, թե ի՞նչպես է լինում, որ բուլղարը դատապարտվում է որ պես ռուսահայ և հիմա ո՞ր մեկ կառավարության

պիտի հանձնել, որ բողոքի ու կոմպենսացիայի[1] խնդիր առաջ չգա: Այդ բանի պատասխանատվությունը թողնում է Հալեպի վիլայեթի վրա, որ ասել է, թե վալին ինձ համ[ա]ր պատասխանատու է, որ նման դրություն է ստեղծվել: Վալին էլ այդ բոլորից ազատվելու համար իր կարգադրությունը փոխանակ գրավոր կատարելու, որ դյուրությամբ կարող է կոնսուլի ձեռքն ընկնել կոմիսերի միջոցով ու բանավոր է կատարել տալիս: Դիմիտրին կգնա ծովի տակ ու երբ հարցնող լինի կասեն նրա բանտարկության ժամանակամիջոցը լրացել էր վաղուց, ուստի և Ալեքսանդրետում նստեցրին մի եվրոպական նավ ու այսպիսով թրքական սահմաններից հեռացրին: Եվ հարցն այս ձևով շատ լավ փակվում է: Այժմ վտանգն աչքիս առջև է, և եթե տաճկական նավ գար այդ օր, ես վաղուց ձկների բաժին դարձած կլինեի:

Անմիջապես տոմսակ գրեցի ֆրանսիական կոնսուլին և հասկացրի այդ վտանգը: Հաջորդ օրը բանտի դռանը մոտեցավ ղավազը և հայտնեց, որ անհանգստանալու ոչինչ չկա, որ կոնսուլը նորից է գայմագա[մ]ին տեսել և զգուշացրել և խոսք առել, որ վաղվա եվրոպական նավով պիտի քեզ ուղարկեն Պոլիս: Այս ասելով նա ինձ տվեց մի ֆրանսիական ոսկի դրամ ու հեռացավ:

Հաջոդ օրը տեղական կոմիսերն եկավ և ինձ կանչելով ասաց, որ, եթե տոմսակի դրամ ունեմ, ինձ կուղարկեն հենց նոր եկած ավստրիական նավով, եթե ոչ՝ պիտի սպասեմ մինչև որ թրքական նավ գա: Ֆրանսիական ոսկին պարզեցի իրեն և ասացի, որ տոմսակ վերցնի: Քիչ անց եկան, թե տոմսակը գնված է 3 մեջիդիեյի, ավելորդը ետ տվին ինձ և պատվիրեցին իրերս ժողովել: Կես ժամ անց ես արդեն մակույկի մեջ էի: Ինձ ուղեկցում էին մեկ կոմիսեր, երկու փոլիս և մի ժանդարմ: Մենք լողում ենք դեպի ավստրիական «Լլոյդ» ընկերության նավը, որ նավահանգստից բավական հեռու

[1] Փոխհատուցման:

բաց ծովում կանգնած է: Պարզ կարդում եմ նրա անունը խոշոր ոսկեգույն տառերով՝ "Euterpe", գլխին, բարձր կայմի ծայրին ծածանվում է ավստրիական դրոշակը:

[1904 թ.] Սեպտեմբերի 22-ն է, Ալեքսանդրետում մնացել եմ մի ամբողջ ամիս և այդքան ժամանակամիջոցում մի տաճկական նավ չի շարժվել դեպի Պոլիս: Իսկ եվրոպական նավեր շաբաթը մի քանիսն են անցնում: Գայմագամը ֆրանսի[ական] կոնսուլի սպառնալիքից հոգնած, ինքնագլուխ կարգադրում է, որ ինձ փոխադրեն ավստրիական նավով: Ինձ պատմեցին իրենք՝ ինձ ուղեկցողները, որ կոնսուլը անձամբ եկավ գայմագամի մոտ և այնքան սպասեց, մինչև որ նա կարգադրեց, թե գնացեք և տոմսակ վերցրեք, եթե բանտարկյալը դրամ ունի: Եվ երբ տոմսակն առնվեց ու ինձ հանեցին բանտից, այդ ժամանակ միայն կոնսուլը հեռացել է սերայից:

Երբ ես դուրս եկա Ալեքսադրիա և հայտնեցի, որ կոնսուլն ինձ ուղարկել էր մի ֆրանսիական ոսկի, մեր ներկայացուցիչը դոկտոր Մելիք-Փաշայանը ասաց, որ ինձ համար Ալեքսանդրետի կոնսուլին ուղարկել են 5 ֆր[անկ] ոսկի: Չորս ոսկին այդպես էլ չիմացվեց, թե որի ձեռքով թաղվեց: Արդյո՞ք ղավազի: Այսպես թե այնպես, դոկտոր Նիկողոսը ինձ եվրոպական նավին հանձնելու գործում մեծապես աշխատեց:

Մոտենում ենք նավին: Ստույգ մահից ազատվողը միայն կարող է զգալ այն, ինչ որ ես զգացի, երբ ոտքս դրի նավի երկայն սանդուխքի առաջին աստիճանի վրա:

– Ես փրկված եմ,– ասացի ինքս ինձ հայերեն բառերով, այնչափ կամաց, որ իմ ձայնը հազիվ լսեցի:

Ինչ-որ մի տաք ու լուսավոր հույս ապրելու և նորից գործելու հոսանքի պես անցավ ամբողջ մարմնովս, վայրկենաբար մոռացա իմ տարիների նեղությունները, բանտային իմ ամբողջ կյանքն անուրջային հեռավորության գիրկն ընկավ:

Չորս պաշտոնյա կա իմ շուրջը, թրքական հսկողությունը արգոսյան[1] աչքերով դիտում է իմ ամեն շարժողություն, բայց և այնպես ես ազատ եմ այլևս: Այդպես եմ ես համոզված:

Կեսօր էր արդեն: Նավը լիքը ճամփորդներով, մեծ մասը արաբ և հույն, կան և թուրքեր, բայց թվով քիչ, իսկ հայ՝ 5 հոգի միայն: Դրանք մարաշցի են, թրքախոս են: Բոլոր ճամփորդները տախտակամածի վրա են: Այդ գծի վրա համարյա թե ոչ ոք նավերի I կամ II կլասի[2] տոմսակ չի վերցնում՝ արևելքցին սիրում է բացօդյա ճամ փորդել: Թուրք նավային գործը այնքան վատ է դրված, որ նրանով ոչ ոք չի ճամփորդում: Ամբողջ ծովային երթևեկությունը կատարվում է ֆրանսիական և ավստրիական նավերով:

Օրը տաք է, արևն այրող: Շարունակ ճամփորդներ են գալիս մակույկները լցված: Թուրք ոստիկանությունը հենց նավի կամրջի մոտ հսկում է, որ առանց անցագրի ոչ ոք նավ չմտնի:

Իմ հսկիչները իրենց անկողինները փռեցին տախտակամածի վրա, իմ իրերն էլ դնել տվին հենց այդտեղ և առաջարկեցին նստել իրենց մոտ: Նրանք իրենց կոշիկները հանեցին ու ծալապատիկ նստոտեցին: Ես բոլորովին ցանկություն չունեի նստել, մանավանդ դրանց մոտ: Ուզում էի գոնե այդտեղ ազատ ման գամ: Երբեմն մոտենում էի, խոսում հետները, ուտում, ծխում: Այդ հանգամանքը գրավեց շատերի ուշադրությունը՝ չորս ոստիկանական պաշտոնյաների հետ ի՞նչ ունի այս մարդը, երևի հարցնում էին իրար:

Բանտային երկար կյանքը իր կնիքն էր դրել իմ ամբողջ էության վրա: Գունատ, նիհար, կասկածամիտ: Հագուստներս մաշված, կարկատնած, և այդ տաքին երկար վերարկուն հագիս: Միայն

[1] Արգոս՝ հին հունական առասպելում հարյուրաչքանի հսկա: Երբ Արգոսի հարյուր աչքերի կեսը քնում են, մնացածը շարունակում են արթուն մնալ:

[2] Կարգի:

ֆեսս էր նոր, որ բանտերում գլխաբաց լինելուս պատճառով փակված էր եղել սնդուկումս:

Երբ ես քիչ հեռանում էի, իմ հսկիչներց մեկնումեկը հետևում էր ինձ առանց ինձ զգալ տալու այդ: Այդ րոպեին մի միտք էր միայն ինձ տանջում, թե ինչ միջոցով կկարողանամ նավային ընկերության ներկայացուցչին հասկացնեմ իմ դրությունը, և ինձ մի կերպ ազատվելու հնար ցույց տա: Ներկայացուցիչները կամ գործակալները այդ շրջանում սովորաբար հույներ են լինում: Նրանք, եթե թրքահպատակ չեն, կարող են շատ բան անել: Նավը պիտի մեկնի կեսգիշերին: Դեռ ահագին ժամանակ կա: Եթե նա [գործակալը] ուզենա կարող է խոսել ֆրանսիական կոնսուլի հետ ու նրա միջոցով ազդեցություն գործ դնի նավի կոմանդանի[1] վրա, որ նա ինձ մի կերպ ազատի:

Գործակալը նավի վրա ինչ որ կարգադրություններ էր անում, տոմսակներն էր ստուգում: Ես աշխատում էի նրա հետ տեսնվել, բայց բազմության մեջ նրա հետ խոսել անհնար էր և նրա համար ոչ ցանկալի նման նյութի շուրջ խոսել: Չէ՞ որ ապրում է Թուրքիայում, ինչու՞ կասկածելի դառնալ: Երբ ես այս մտմտուքներով անցուդարձ էի անում, տեսա որ կոմիսերն և փոլիսը խոսում էին և ինձ ակնարկում: Նրանք մոտ կանչեցին մյուս փոլիսին, որին Զեքի էֆենդի էին անվանում և փսփսուքով հայտնեցին, որ ինձ մենակ ժանդարմի հույսով չթողնեն, որ փոլիսներից մեկն էլ շարունակ ինձ հետևի և այնպես անի, որ ես որևէ մարդու հետ չկարողանամ տեսնվել: Ես հասկացա, որ իրենց կամքով չպիտի թույլ տան դրսի մարդու հետ տեսնվել: Որոշեցի նրանց կամքի դեմ անպատճառ գործակալին տեսնվել: Այդ միջոցին գործակալը մոտեցավ իմ հսկիչներին, նրանք ցույց տվին 5 տոմսակ, չորսը իրենց համար,

[1] Բառացի հրամանատար: Հավանաբար ավագ սպա, որին ենթարկվում էր նավապետը:

մեկն էլ այս մարդու՝ ինձ մատնացույց անելով: Հենց որ գործակալը գործը վերջացնելով մտավ նավի գրասենյակը, ես գնացի այն կողմ ու սկսեցի անցուդարձ անել գրասենյակի դռան մոտերքում: Ժանդարմը ինձ հետևում էր և աչքից չէր բաց թողնում: Մոտեցավ և Զեքի էֆենդին՝ նրանք սկսեցին քչփչալ: Նյութն անպատճառ ես էի, բայց անգիտանալ էի ձևանում:

Իմ դիտավորությունը չմատնելու համար իսկույն հեռացա այդտեղից, եկա իմ տեղը, մի քիչ նստեցի: Ոստիկանները բոլորը հավաքվեցին գլխիս և աշխատեցին ինձ զբաղեցնել: Սուրճ եփեցին և ինձ առաջարկեցին, օղի առաջարկեցին, բայց իմ ուշք ու միտքը ուրիշ բանով էր զբաղված: Ես մերժեցի ընդունել:

– Ի՞նչ ես ուզում, կոնյա՞կ, թե՞յ, ասա, մենք ամեն ինչ ունենք: Շատ մի մտածիր, Դիմիտրի, խոսիր, ի՞նչ ես մտախոհ,– հարցրեց կոմիսերը, որին անվանում էին Իզեդ էֆենդի, և բաց անել տալով հացի պաշարը, հանեց օղիի մեծ շիշը, սկսեց կոնծել և իր ընկերակիցներին խմացնել: Կոմիսերի նպատակն էր այդ ձևով իմ ուշադրությունը գրավել կերուխումով, մինչ դեռ իմ մի աչքը շարունակ նավի գրասենյակի դռանն էր: Թուրքերը հասկանում էին ինձ ու ճգնում ժամանակը շահել այնպես, որ գործակալը դուրս գա նավից և ես նրան չկարողանամ տեսնել: Սկսեցին բարձր-բարձր խոսել, ծիծաղել, խմել, երգել: Ես մասնակից չէի այդ անցուդարձին: Համբերությունս հատավ, նորից վեր կացա, մոտեցա գրասենյակի դռանը: Գործակալը դեռ իր հաշիվները չէր վերջացրել: Ես անհամբեր եմ, թե նա երբ դուրս կգա և ես կարող կլինեմ մի երկու խոսք փոխանակել նրա հետ, նախքան ոստիկանները կշրջապատեն ինձ: Չեղավ, գործակալը դուրս չեկավ: Այդ միջոցին ժանդարմը եկավ և ասաց, որ աղաներն ինձ կանչում են: Գնացի: Կոմիսերը շատ քաղաքավարի կերպով դիմեց ինձ.

– Դիմիտրի էֆենդի, կմրսես, ի՞նչ ես ման գալիս, արի նստիր անկողնիդ վրա, քիչ օղի խմիր, տաքացիր, գիշեր է, ցուրտ է: Իսկապես արդեն մութն էր, [նավի] լույսերը վառվել էին: Այլևս չկարողացա համբերել. – Ես քիչ գործ ունեմ, մի մարդու հետ պիտի տեսնվեմ, ինձ մի՛ խանգարեք,– ասացի:

– Ի՞նչ մարդ, ի՞նչ գործ ունես: Եթե որևէ կարիք ունես մեզ ասա, մենք կհոգանք,– ասաց կոմիսերը:

– Ես ագենտին պիտի տեսնեմ, որ ֆրանս[իական] հյուպատոսին հայտնի իմ մեկնելս և դրամ չունենալս: Ես Պոլսում ինչո՞վ պիտի ապրեմ, ոչ ոք ինձ այնտեղ չի ճանաչում, իսկ այստեղ ֆրանս[իական] կոնսուլը գիտի ինձ և ինչպես գիտեք, ինձ մի ոսկի էր ուղարկել: Հիմա եթե գիտենա որ ես դրամ չունեմ, հավանորեն դարձյալ ինձ դրամ կհասցնի: Դեռ նավն ուշանալու է, կարող եմ ագենտի միջոցով հաղորդել նրան: Այս առիթը փախցնելուն պես ես կմնամ առանց դրամի: Ձեր կառավարությունը Պոլսում ինձ ցամաք հաց իսկ չի կարող տալ: Դուք այդ լավ գիտեք,– տաքացած ասի:

Եվ իրավ, բանտարկված ժամանակ ես օրական ստանում էի մի կիլո հաց: Հենց որ բանտարկության օրը լրացավ և ինձ հետ դատապարտվածները Մարաշի բանտից հանեցին, այն է մայիսի 9-ից սկսած այլևս ինձ հացի բաժի չէին տալիս: Օրենքով ես բանտարկյալ չէի այլևս, ուրեմն և հացը ընդհատած էր: Այդ օրվանից սկսած իմ ամբողջ սնունդը իմ հաշվին պիտի կատարվեր:

– Չէ, դու ոչ մի մարդու հետ էլ չպիտի տեսնվիս: Եթե քեզ դրամ է պետք, մենք կտանք: Ինչքա՞ն ես ուզում, 3 ոսկի՞, 5 ոսկի՞: Չեքի էֆենտի՛, տուր Դիմիտրի էֆենտուն որչափ պետք է,– մեծախոսի ձևով ասաց կոմիսերը:

– Ինձ ձեր դրամը պետք չէ: Այսպիսի խոսքեր շատ եմ լսած ձեր պաշտոնյաներից, ձեր փաշաներից, երբ հարկավոր է մեկին խաբել: Դուք եթե լավ մարդիկ էիք, ինձանից տոմսակի դրամ չէիք առ-

նի ու ինձ առանց դրամի թողնի: Հիմա էլ ուզում եք ինձ արգելիլ ուզածս մարդու հետ տեսնվեմ: Բայց բավական է, այլևս ձեր խոսքով չէ, որ պիտի վարվիմ: Ես անպատճառ նավային ընկերության ագենտին պիտի տեսնեմ,– ասացի և կանգնեցի:

Իմ խոսակցության տոնը վիրավորեց կոմիսերին, որ մի քիչ էլ տպքացած էր օղու ազդեցությունից: Նա անմիջապես ոտքի կանգնեց ու հրամայական շեշտով դիմեց ինձ.

Ես քեզ արգելում եմ տեղիցդ շարժել: Դու իրավունք չունես ինձ չհնազանդվել: Ոտքերդ[1] հանիր ու տեղդ հանգիստ նստիր: Այդ խոսքի վրա ես խիստ տաքացա ու գոչեցի.

– Ես քեզ բոլորովին չեմ ճանաչում, դու թուրք, ես բուլղար: Ի՞նչ գործ ունես ինձ հետ:

– Այդպես, հա՛, բայց դու բանտարկյալ ես և այժմ իմ հրամանի տակ: Ահմեդ,– կանչեց նա ժանդարմին,– նստեցուր սրան իր տեղը, և եթե տեղից վեր կենա, իմ ձեռքից չես ազատվի: Ժանդարմը կապիկի պես թեմմենահ[2] արեց կոմիսերին ու մոտեցավ ինձ, որ նստեցնի: Ես ձայնս ավելի բարձացրի.

– Դուք մոռանում եք, որ սա թրքական նավ չէ և ոչ էլ թրքական բանտ: Սա ավստրիական նավ է: Համեցե՛ք, թող մեկը համարձակվի մոտենալ ինձ: Այս ասելով ես շտապեցի դեպի նավ գրասենյակ:

Թրքական չորս հսկիչները իրենց կորցրած, գուլպաներով, իմ ետևից վազեցին: Փախչող որսի հետքից վազող շները միայն կարող են այդչափ արագավազ լինել:

– Թո՛ւթ, թո՛ւթ[3],– ձայնում են իրար: Նրանք կիսահարբած էին, երեսները կարմրած: Նավի ճամփորդները խռնվեցին իմանալու, թե այս ինչ միջադեպ է: Նրանք դժվարանում էին հասկանալ, որով-

[1] Նկատի ունի կոշիկները:
[2] Արևելյան ողջույն:
[3] Ռուսի՛ր:

հետև թուրքերեն չէին իմանում: Թրքախոսներն արդեն գլխի էին ընկել և խիստ հետաքրքրվել: Ես դեռ չէի հասել գրասենյակին, տեսնեմ նավի բժիշկը, իր համազգեստով դուրս եկավ և անցնում էր դեպի բազմությունը: Նավերի վրա նման իրարանցում Լևանտի[1] ջրերում այնքան հաճախադեպ է, որ բժիշկն առանձին ուշ[ադրություն] չդարձրեց, մանավանդ, որ տեղական լեզուներին անծանոթ է: Ես վազեցի նրա դեմ ու կանչեցի.

– Պարոն բժի՛շկ:

Լսելով ֆրանսերեն դիմումս, բժիշկը կանգ առավ: Ոստիկանները շրջապատեցին մեզ, բազմությունն էլ նրանց:

– Ես 5 ½ տարուց ի վեր բանտարկված եմ Թուրքիայում քաղաքական խնդրով: Հիմա ինձ տանում են Պոլիս: Բայց ինձ արգելում են ազատ շրջել ու խոսել: Խնդրում եմ ինձ հնարավորություն տաք Ձեր նավի վրա գեթ ազատ շրջել ու այս մարդկանց բիրտ վերաբերմունքից մի քիչ շունչ առնել,– այս ասելով ես ցույց տվի շրջապատող ոստիկաններին:

Բժիշկը նախ զարմացած այս հայտնության վրա, և ապա խիստ հետաքրքրված, մի քանի վայրկյան դիտում էր ինձ որպես տաճկական բռնության զոհի, ապա նայեց թրքական ոստիկանական պաշտոնյաներին, որոնք ներկա հանգամանքում նույնքան ստորաքարշ կերպով տաճկական բարևի են կանգնած եվրոպական համազգեստի հանդեպ, որքան հպարտ են ու բռնավոր դեպի իրենցից թույլերը, թրքերեն հասկացնել էին ուզում բժշկին, որ ես Թուրքիան խռովողներից եմ, ու բանտարկյալ և այժմ չեմ ցանկանում, ըստ նիզամի[2], իրենց հնազանդվել: Բժիշկն իհարկե նրանց խոսքից ոչինչ չհասկացավ: Ես բացատրեցի նրանց միտքը: Բժիշկը ժպտաց ու ինձ ասաց, որ մի վայրկյան սպասեմ ու ինքը շտապ

[1] Միջերկրական ծովի արևելյան մասի երկրների ընդհանուր անվանումը:
[2] Օրենքի:

մտավ նավի կոմանդանի մոտ: Մի րոպե չանցած կոմանդանը՝ նավի կապիտանը և ընկերության գործակալը միասին դուրս եկան և ինձ կանչեցին իրենց մոտ: Ես մոտեցա և մի քանի խոսքով հասկացրի, թե ես ինչ եմ ու ինչ եմ խնդրում:

– Ո՞վ է Ձեզ տանողը,– հարցրեց կոմանդանը:

– Այ այս չորս հոգին են,– ասի ես, ցույց տալով գուլպայով կանգնած թրքական պաշտոնյաներին:

Մի ծիծաղ անցավ նավի ղեկավարների դեմքով ոստիկանական հսկիչների այս արտաքին տեսքից: Մի քանի խոսք փոխանակեցին իրար հետ գերմաներեն լեզվով և ապա կոմանդանը բարձր ձայնով ասաց թուրքերին.

– Սա ավստրիական հող է: Այստեղ քաղաքական հանցավոր չի կարող լինել: Ես այդպիսի մարդ իմ նավում չեմ ընդունել: Այս մարդը (ինձ մատնանշելով) ազատ է այստեղ, ինչպես բոլոր ճամփորդները: Ոչ մի արգելք չպիտի լինի նրա ազատության դեմ: Երբ կհասնենք Պոլիս, այնուհետև ձեր ու այս մարդու գործն է լինելու պարզել ձեր փոխադարձ հարաբերությունը: Ով իմ կարգադրության դեմ գործի, նրան ծովը շպրտել կտամ,– վերջացրեց կոմանդանը:

Նրա խոսքերը թարգմանեց ագենտը: Վերջին խոսքը, որ չինազանդվողին ծովը թափել կտա, սարսափեցրեց թուրքերին: Նրանք այնպես կծկվեցին, որպես ոզնի: Ոչ մի ձայն չկարողացան հանել, ետ-ետ քաշվեցին, գնացին իրենց տեղը նստեցին ու սկսեցին մտածել, թե ինչպես վարվեն տվյալ դեպքում: Ճամփորդ թուրքերը հավաքվեցին ոստիկանների գլխին և ամեն մեկը մի առաջարկ էր անում: Մեկն ասում էր, թե անմիջապես մեկը պիտի իջնի նավահանգիստ և գայմագամին իմացնի այս միջադեպը. գուցե գայմագամը կարգադրի, որ բանտարկյալին ետ տանեն: Այս խնդիրը բավական զբաղեցրեց նրանց: Կոմիսերն ասում էր թե ուշ է, մինչև քաղաք գնալ-գալը նավը կարող է մեկնել: Վերջը եկան այն

եզրակացության, թե մեկ է, եթե կառավարությունն ուժ ունի բանտարկյալին առնելու, թող Պոլսում առնի: Այստեղ մի գայմագամ է նստած, այնտեղ վեզիրներն ու սադրազամը[1], փադիշահն[2] էլ իր կարգին: Մեկ ուրիշն էլ սիրտ էր տալիս ոստիկաններին, թե ինչ եք վախում, Ստամբուլ հասնելուն պես այդ մարդուն հրելով նավակը կիջեցնենք ու կհասցնենք քաղաք:

Այս խորհրդակցության ընթացքում ես մոտեցա, վերցրի իմ սնդուկը, իմ անկողինը և անցա նավի վերջը, բոլորովին հեռու ոստիկաններից: Նրանք ոչ մի ձայն չհանեցին: Սնդուկս բաց արի, հանեցի եվրոպական գլխարկս, դրի գլուխս, իսկ ֆեսը շպրտեցի սնդուկի մեջ: Երբ թուրքերն ինձ այդ գլխարկով տեսան, այլևս իրենց ձեռքից դուրս պրծած համարեցին: Այժմ նրանք մտածում են իրենց կաշվի մասին: Ի՞նչ պիտի պատասխան տան կառավարության: Գործի մեջ մի բարեբախտություն կար, որ թրքական կառավարությունն ինձ նավ է ուղարկել առանց նավի վարչությանը հայտնելու, որ ես գնում եմ Պոլիս որպես բանտարկյալ: Չորս հսկիչ նշանակելով՝ կարծել է, թե բոլոր ձևականությունները կատարած է եղել: Թուրք կառավարության հոգում դեռ արևելքի տնավարի վարվելակերպը իշխում է, չնայելով [որ] դարերով շփումն ունի եվրոպական պետությունների հետ: Այս րոպեին ես այնքան լավ էի [ինձ] զգում, որ վաղվա մասին այլևս չէի մտածում: Ինձ թվում էր, որ այլևս ազատված եմ: Այդ ոգևորությամբ շրջում էի նավի վրա, խոսում ամենքի հետ, բացառությամբ իմ հսկիչների: Բոլոր ճամփորդները շատ ուրախացել էին ոչ այնքան իմ ազատության, որքան թրքական վարկի անկումի համար: Գուցե միայն զտարյուն թուրքերն էին վշտացած, բայց նավի վրա քանի՞ թուրք կար որ: Մարաշցի հայերն անսահման հրճվանքի մեջ էին: Նրանք շատ են լսել իմ

[1] Մեծ վեզիր:
[2] Սուլթան:

մասին, երբ ես իրենց քաղաքի բանտում եմ եղել. հիմա ինչ զուգադիպությամբ հանդի պում են նույն նա վում: Նրանք իրենց հրճվանքը թաքցնում են թուրքերից, նույնիսկ ցավ են հայտնում թուրքերին, որ այդպես են վարվում եվրոպացիք թուրք պետության նկատմամբ, բայց իրենց մեջ, իրենց գործածական աղճատված հայերենով գտնում են, որ թուրքի հախից միայն եվրոպացիք կարող են գալ:

Մինչ այս մինչ այն, նավային ընկերության ագենտը հեռանում է նավից, որ ասել է թե նավի մեկնելու ժամանակն է: Արդեն կեսգիշերն անցած, ժամը 3-ն էր:

Հենց որ նավը շարժվեց, մի մատրոս[1] մոտեցավ ու հայտնեց, որ կապիտանն[2] ինձ ուզում է իր կաբինետը[3]: Սա մի պատվական մարդ դուրս եկավ, ծագումով սլովակ, Տրիեստից: Նրա կարտ-վիզիտը[4] այս րոպեին էլ առաջս է սեղանի վրա: Այդ թղթի կտորը այժմ, 23 տարի անց, իմ մեջ զարթնեցնում է լուսավոր հիշողություններ այդ անմոռանալի մարդու վերաբերմամբ: Ի՞նչ կլիներ աշխարհը, եթե մարդկության մեջ չլինեին այդպիսի կատարյալ մարդ անհատներ:

Հենց այդտեղ, իր կաբինետում հետս խոսեցած ժամանակ տվեց իր կարտը, խնդրելով, երբ ազատվեմ թրքական հետապնդումներից, այցելեմ իրեն Տրիեստում և ծանոթանամ իր ընտանիքի հետ: Gregorio Brazzanovich, Capitano al Lloyd, Austriaco. Ահա նրա կարտ-վիզիտը. սրանով իհարկե նրան կգտնեի, բայց Տրիեստում ես երազումս իսկ գործ չեմ ունեցել, ինչպես պիտի կարողանայի նրան այցելել և եթե մի օր ընկնեի Տրիեստ, արդյո՞ք պիտի այցելեի: Իհարկե ոչ: Տարիներ հետո, 1912 թվականին, երբ Պոլսո Սկյութար

[1] Նավաստի:
[2] Նավապետը:
[3] Նավախցիկը:
[4] Այցեքարտը:

թաղում Սեմերճյան ճեմարանի[1] տեսուչ էի և հաճախ Բոսֆորով անանցուդարձ էի անում, մի անգամ տեսա "Euterpe" նավը, Բոսֆորի մեջ կանգնած, նույն նավը, որով իբրև բանտարկյալ հասա Պոլիս և ուր կապիտան էր Բրազանովիչը, սիրտս թունդ եղավ, ուզեցի այցելել նավը, գտնել Բրազանովիչին ու իմ լավ իղձերը արտահայտել նրան, բայց քաջություն չունեցա: Ինչպե՞ս ասեմ, որ ես բուլղար չեմ, այլ հայ, չէ՞ որ 25 օր մնացի նույն նավի վրա, ինձ ազատելու համար նա գործադրեց ամեն հնարավոր միջոց, մենք խոսեցինք բազմաթիվ հարցերի մասին, հատկապես թրքական բռնապետության վատ արարքների վերաբերմամբ դեպի իր քրիստոնյա հպատակները, այդ ամբողջ տևողության միջոցին նա համոզված էր, որ ես բուլղար եմ և այդ համոզման մեջ էլ նա մնացել է: Հիմա հանկարծ ներկայանամ որպես հայկական մի կրթական հիմնարկության վարիչ այսինչ այսինչյան և ավելացնեմ, որ 8 տարի առաջ նույն նավում եղած բանտարկյալ Դիմիտրին եմ: Չէ, լավ է չերևալ: Եվ չգնալ: Մի հայի առանձին բավականությամբ կներկայանայի և կասեի ամեն ինչ, բայց օտարը չի հասկանա այդ կեղծիքը, որովհետև հայության կրած տառապանքը, նա ապրած չէ: Եվրոպացին մեր ցավին մոտենում է իր ակնոցով:

Բրազանովիչի մոտ հավաքվեցին երկրորդ կապիտանը, նրա օգնականը, այլև ուրիշ պաշտոնյաներ: Ինձ համար ուտելիք բերել տվին, գինի առաջարկեցին: Տարիներից ի վեր մարդավարի վերաբերմունք չէի տեսել, ամեն ինչից զուրկ էի մնացել, և առաջին անգամ այդ վերաբերմունքը գտնում եմ ավստրիական նավի վրա, ինձ բոլորովին խորթ մի միջավայրում: Այդ անծանոթ միջավայրն այնքան հարազատ դարձավ, որ ես առանձին հաճույքով այդ գիշերը [անցկացրի]:

[1] Սեմերճյան ճեմարանը հիմնվել է 1838 թ. և գործում է առ այսօր:

Բոլորն էլ հետաքրքրվում էին թրքական արդարադատությամբ և բանտային ռեժիմով: Հենց նույն գիշերը Բրազանովիչը հայտնեց, որ ինքը կաշխատի ինձ ազատել: Նրա ասելով բավական է, որ ես մի տոմսակ ունենամ Վառնա գնալու համար: Այդ տոմսակը ձեռքիս, նավի վարչության պարտականությունն է, ինձ նույն ընկերության մի այլ նավ փոխադրել, որին կհանդիպենք Պոլսում, և որը Բուլղարիա է մեկնելու: Եվ թրքական պետությունը ոչ մի առարկություն չի կարող ունենալ, քանի որ ինձ չի հանձնել նավին որպես բանտարկյալ, և ես սովորական ճամփորդ եմ Բուլղարիա գնացող, ինչպես որ մի հայ ճամփորդ կար, որին նավային ընկերությունը իր մակույկով պիտի այս նավից անցկացնի մյուս նավը, առանց թրքական իրավունքի սահմանները մտնելու:

Նկատի առնելով, որ ամեն մի հայ կասկածելի է թուրք պետության համար նավային ընկերությունները հայերին տոմսակ տալիս մի այլ երկրի համար, ուր հասնելու համար թրքական ջրերում փոխադրության կարիք լինի, նավային ընկերությունը իր ճամփորդին, իր մակույկով պիտի փոխադրեր, որ թրքական ոստիկանությունը ծովի վրա նրան չբռներ, չնեղեր, չբանտարկվեր: Այս բոլորը շատ լավ գիտեն եվրոպացիք, և զարմանալի է նրանց համար, որ մի բուլղարի բռնել են տարիներով պահել բանտերում, հիմա էլ քաշ են տալիս դեպի Պոլիս: Ո՞վ գիտե, այնտեղից ազատվելու հնար կա՞. այսպես են մտածում բոլորը:

Տարօրինակ է, որ ավստրիական նավի բոլոր ծառայողները սլավներ էին: Միայն բժիշկն էր իտալացի, և կոմանդանը՝ բուն գերման: Սա միշտ մռայլ, միշտ բարկացած տեսք ուներ: Եվ միայն սա էր, որ ինձանով չհետաքրքրվեց: Մնացածները Տրիեստի ու Դալմացիայի սլավ ցեղերից, խիստ հետաքրքրվում էին իմ պատմությամբ, նույնիսկ հասարակ նավաստիները: Բոլորը մի ձգտում ունեին. ինձ մի կերպ ազատել: Գուցե նրանց մեջ խոսում էր և ցե-

ղակցական ձայնը, չէ՞ որ բուլղարն էլ մասամբ սլավ է: Բրազանովիչը ռուսերեն հասկանում էր, պետք է ասած, որ մնացյալ սլավ պաշտոնյաներն էլ էին հասկանում, և առհասարակ բոլոր սլավ ժողովուրդների փոխադարձ կապը շնորհիվ լեզվական մոտիկության բավական սերտ պահպանվում է:

Բրազանովիչը հույս հայտնեց, որ նավահանգիստներից մեկնումեկում կանգնած ժամանակ գործակալներից մի տոմսակ կվերցնի Վառնա գնալու համար և ինձ կտա: Դա ինքնին մեծ հույս էր ինձ համար: Այս հույսով էլ գիշերը լուսացրի:

Առավոտյան մեր նավը կանգնած էր Հայոց ծոցում, Փայաս նավահանգստում: Նավը բեռնում էր քունջութ ու եգիպտացորեն: Փայասը բերդ է, Ռուբինյան իշխանության ժամանակներից մնացած, և այսօր այդ բերդը ծառայում է թրքական ոճրագործների համար որպես աքսորատեղի: Փայասից վեր ձգվում է Ամանոսի կամ Հայ լեռը, որ թուրքերը դարձրել են Գյավուր-դաղ: Ամբողջ լեռան լանջը ծածկված է լիմոնի ու նարնջի պուրակներով: Դրանց անուշահոտությունը հասնում է մեր նավը: Նույն օրը երեկոյան ժամը 10-ին նավը մեկնեց ու հաջորդ առավոտ՝ սեպտեմբերի 24-ին խարիսխ ձգեց Մերսինի հանդեպ: Այդտեղի գործակալը հույն էր:

Դրա վրա մեծ հույս էր դրել Բրազանովիչը: Երբ նա իմացավ բանն ինչումն է, հրաժարվեց տոմսակ տալ: Թուրքերը զգացել էին, որ այդ ճանապարհով ես կարող եմ տոմսակ ձեռք բերել, ուստի և նավային ընկերության գործակալներին զգուշացրել էին: Եթե ես ունենայի տոմսակ գնելու չափ դրամ, կարելի պիտի լիներ թերևս գնել ուրիշի միջոցով, բայց այդ էլ մեծ դժվարությունների հետ է կապված. տոմսակ մի նավահանգստում տրվում է անցագիր ստացած մարդուն: Ինձ եթե տային, դա պիտի լիներ գործակալի կողմից մի համարձակ քայլ, ենթակա որոշ պատասխանատվության,

թող որ[1] Թուրքիայում այդ գործակալները օրենքի հակառակ շատ նման բաներ են թույլ տալիս: Լավ գիտեն, որ թուրք կառավարությունը հսկելու և պատասխանատվության ենթարկելու ոչ մի հարմարություն չունի: Դրանք օտար հիմնարկություններ են, կապիտուլացիայի ուժով ազատ են որևէ հետապնդումից: Տվյալ դեպքում գործակալը ոչ մի օգուտ չունի. իրեն ինչ, թե մի բուլղար կմնա թրքական բանտում, թե կազատվի: Սակայն ինքը կմնա թուրք կառավարության բարեկամ: Ինչու՞ լավ հարաբերությունը փչացնել. վաղը իրեն մի ձեռնտու գործում այդ լավ հարաբերությունը կարելի է շահագործել: Եվ գործակալը մերժեց տոմսակ տալ: Խեղճ Բրազանովիչը ամբողջ օրը այդ ուղղությամբ աշխատեց, հնար չեղավ: Հուսահատ ձեռքերը թափ տալով եկավ ու ինձ հայտնեց, որ գործակալը վախում է կառավարությունից: Ինձ սիրտ տալու համար խոստացավ մյուս նավահանգստում ձեռք բերել:

Մերսինից մինչև հաջորդ նավահանգիստը հեռու է: Գիշերն ենք ճամփորդում: Այդ սովորական է առևտրական նավերի համար. լույսով ապրանք է տալիս, ապրանք վերցնում, գիշերը, մութով ճանապարհ գնում:

Սեպտեմբերի 25-ի առավոտյան արդեն դուրս ենք գալիս բաց ծովը, Կիպրոսը դեպի ձախ մնում է հետևներս, իսկ աջ կողմը կեսօրին երևում է Անամուռ հրվանդանը, իր հինավուրց բերդով: Այնտեղ երևում է մի գյուղ՝ հեռավոր լեռների ստորոտում, Տորոս լեռան արևմտյան փեշերին: Քիչ հետո ափը անհայտանում է, բայց հեռավոր մշուշում ձյունապատ շղթա է ձգված: Նույն երեկոյան անցնում ենք նորից ափի մոտերքով: Աջ կողմում ծովա փին է Բոդրում Կալան, որ միայն աքսորատեղի է, իսկ ձախ կողմում Ստանկո կղզին է: [Սեպտեմբերի] 26-ի առավոտյան Ռոդոս կղզումն ենք: Այնտեղ կարանտին է նշանակված ինչ որ հիվանդության դեմ: Նավը քիչ պի-

[1] Հակառակ այն հանգամանքի, որ:

տի կանգնի: Բրազանովիչը հույս ուներ այստեղ մի տոմսակ ճարել, դրան էլ կարանտինը խանգարեց:

Կեսգիշերին հասանք Քիոս կղզին: Այնտեղի ագենտը, տեղացի մի սրտոտ հույն, երբ իմացավ իմ պատմությունը, առաջարկեց ինձ միասին դուրս գալ ցամաք, ուր ինձ նույն օրը կդնի մի հունական նավ, որ մեկնելու է ուղղակի Ալեքսանդրիա՝ Եգիպտոս: Սա գեղեցիկ առաջարկ էր, բայց կապված խոշոր վտանգի հետ. հսկիչները հիմա նստած հետևում են իմ բոլոր քայլերին: Նավից իջնելուն պես նրանք ինձ կհետապնդեն ու իրենց հողում ինձ կբռնեն: Ո՞վ է, որ ինձ պիտի պահպանի: Այս անգամ թուրք արդարադատությունը ինձ կմեղադրի որպես փախստական ու նոր պատիժ կսահմանի ինձ համար: Ես հրաժարվեցի այդպիսի մի ձախող քայլից: Բրազանովիչն ինքն էլ գտավ, որ դա խելացի չի լինի ու այս անգամ հույսը դրեց Զմյուռնիայի գործակալի վրա:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան Զմյուռնիայի նավահանգստում էինք: Բրազանովիչի բոլոր ջանքերը ինձ համար մի տոմսակ ձեռք բերելու ի դերև անցան: Այլևս Բրազանովիչը հույսը կտրեց այս միջոցով ինձ ազատելու գործից: Նա ինձ կանչեց իր սենյակը և իր ցավը հայտնեց, որ չկարողացավ որևէ կերպ օգտակար լինել ինձ, բայց վերջը ավելացրեց.–

– Եթե ես լինեի այս նավի կոմանդանը, գիտեի, թե ինչպես պիտի ազատեի Ձեզ: Համենայն դեպս կոմանդանը իրավունք չունի Ձեզ դուրս անել նավից, եթե Դուք կամովին չեք դուրս գալիս: Այս բանը ինձանից լսած մի լինեք, բայց սա օրենք է: Դուք մնացեք նավի վրա և ասացեք, որ չեք ուզում դուրս գալ, տեսնենք ինչով կվերջանա: Թող թուրք կառավարությունը բռնի վերցնի Ձեզ: Կհամարձակվի՞ արդյոք:

Կեսօր էր, որ Զմյուռնիայից դուրս եկանք: Մինչև Պոլիս այլևս նավը կանգնելու կարիք չունի: Իմ բախտն այլևս կախված է պա-

տահականությունից: Մի անգամ Բրազանովիչը կոմանդանին հարցրեց իմ մասին, թե ինչ դիրք կբռնի: Նա պատասխանել է, որ ինքը չի խառնվելու: Ինքն արել է այն ինչ որ հնարավոր էր. արգելել է ինձ իբրև բանտարկյալի վերաբերվել մինչև Պոլիս. տոմսակը Պոլսի համար է, ուրեմն ես պիտի Պոլսում իջնեմ, իսկ թե ինչ պայմաններում՝ արդյո՞ք իբրև բանտարկյալ թուրքերի հսկողության տակ, թե մեն մենակ իբրև սոսկ ճամփորդ, այդ էլ իմ գործն է և թուրքերի: Բավական է, որ ես հեռանամ նավից և (....)[1] որևէ դիտողություն չի արվում դեսպանության կողմից: Հույսերս կամաց-կամաց տեղի էին տալիս: Ես որ բնության սիրահար եմ, ծովն ու նրա անսահմանությունը, ցամաքն ու հեռավոր լեռների ստվերագծերը այլևս ինձ չէին հրապուրում, միտքս քշված է: Նավի վրա րոպեները ծանր են անցնում, որովհետև գիտակցում եմ թուրք կառավարության ձեռքում մնալուս ծանր հետևանքները: Ինքնագլուխ փախչելու ճամփա չկա: Ի՞նչպես նավից դուրս գալ: Մի անգամ աննկատելի նավակ մտնեմ, այնուհետև հեշտ է, Պոլիսը ծանոթ է, մակույկավարին լավ կվարձատրեմ, միայն թե ընկերներիս գտնեմ, բայց դրանք բոլորը պայմաններ են, որոնք ամեն մի քայլում ինձ անստուգության հանդեպ կկանգնեցնեն: Գիշերը այս խոհերով լուսացրի:

Դարդանելն է առաջս. աշխարհի ամենախորհրդավոր ու ճակատագրական տեղը, սակայն ինձ չի գրավում ոչ նրա աշխարհագրական դիրքը, ոչ անառիկ բերդերը: Թուրքինն են այդ բոլորը. բավական է, ինձ ատելի էին: Նայել չեմ կարողանում: Մոտենում ենք Մարմարային: Գեղեցիկ աշնանային օր է, արևը տաքացնում է հաճելի կերպով: Նորից բանտ ընկնել, զրկվել արևի կենսատու լույսից, անկարելի է թվում: Նստել եմ նավի ցռուկի մոտերքում իմ իրերիս մոտ և դառը խոհերի մեջ ընկել:

[1] Մեկ բառ ընթեռնելի չէ:

Մերսինից նավ մտավ Մարաշի դատարանի նախագահը՝ Քյազմ էֆենդին, որ ինձ տեսել էր նավի վրա, իմացել էր, որ տանում են Պոլիս և տեղյակ էր բոլոր անցուդարձին: Մինչև հիմա հետս մոտիկից չէր խոսում, կարծելով, թե ես տոմսակ կճարեմ Վառնայի համար և կանցնեմ կգնամ: Բայց հիմա զգում է, որ այդ չի, և եթե ես համառեմ մնալ նավի մեջ, իր կարծիքով, ավելի վատ կլինի ինձ համար: Նա լավ գիտե, որ իմ սահմանած պատժից 5 ամիս էլ անցել է, հավանորեն սրտանց էլ ցավում է, որ այդպես է եղել: Մոտեցավ և շատ ընկերաբար հետս խոսեց: Չմոռանամ ավելացնել, որ նա էլ է տախտակամածի տոմսակ վերցրել. մի երկրամասի արդարադատության ատյանի նախագահը զլացել է գոնե II կլասի տոմսակ վերցնել: Սպիտակ չալմայով, ֆարաջով[1] ու երկար միրուքով մի մահմեդական կրոնավոր է դա:

– Որդիս,– սկսեց նա,– ուզում ես ազատվել, լավ ցանկություն է, վաղուց՝ 5 ամիս առաջ պիտի ազատված լիներիր, բայց դե օսմանցի չես, որ անմիջապես քեզ քո երկիրն ուղարկել տայինք: Պիտի Պոլիսը կարգադրեր, նա էլ ժամանակին չի արել: Մնում է մի ճամփա՝ ենթարկվել մեր օրենքին, մինչև որ քեզ նրա համաձայն հասցնեն ձեր սահմանը: Մնաց մի քանի օր. Պոլսում քեզ չեն պահի, այնքան միայն որ տեսնեն, թե որ ճամփով ուղարկելն է հարմար: Այդ չնչին նեղության համար դու ծուռ ճամփա ես բռնել: Քեզ բերող պետական հսկիչներին հայտնել ես, որ նրանց չես ճանաչում, նրանց հսկողությունից կամովին դուրս ես եկել ու հետևում ես նավի ծառայողների խորհուրդներին: Ահա հասնում ենք Պոլիս: Նրանք քեզ չեն կարող օգնել: Կառավարությունը քեզ կառնի[2] և այս անգամ քո դեմ, իբրև փախստականի, դատ բաց կանեն: Ո՞վ գիտի ինչով կվերջանա քո գործը: Ես դատավոր եմ: Կարող են քեզ չարաչար պատժել,

[1] Թիկնոց:
[2] Կձերբակալի:

եթե կամովին նավից դուրս չգաս: Իսկ եթե ընդունես մեր օրենքի ույժը, ենթարկվես ոստիկանական հսկիչներին ու դուրս գաս կամովին, իմացած եղիր, որ մի 10–15 օրում քեզ քո հայրենիքը կուղարկեն: Ես խոսում եմ իբրև բարեկամ, եթե իմ այս խորհուրդը լսես, վերջը կտես նես, որ քեզ համար միայն բարիք եմ կամեցել:

Դատարանի րեյիզը[1] այս ուղղությամբ երկար խոսեց: Պետք է խոստովանել, որ իր համոզիչ խոսքերը ու բարեկամական տոնը հոգումս նստեցին, մանավանդ, որ եղած փաստերը բոլորն էլ խոսում էին ի նպաստ այն բանի, որ մնալու դեպքում կոմանդանը ինձ չի պաշտպանելու ոչ մի կերպ: Կամքս տատանվեց: Արդեն Մարմարան կես ենք արել: Հեռվից երևում են Սկյութարի բարձունքները աջ կողմում և եվրոպական ափը ձախում: Մարմարան հայելու պես անշարժ է, փայլուն, հաճելի օր է: Դիմեցի Բրազանովիչին նորից մի անգամ նրա տրամադրությունը շոշափելու: Նա չկարողացավ որևէ դրական պատասխան տալ:

– Ըստ իս քեզ պիտի պաշտպանի կոմանդանը: Ոչ ոք չի կարող նրան բռնադատել, որ նա քեզ հանձնի, բացի մեր դեսպանը, բայց [կոմանդանը] էգոիստ[2] մարդ է, իր կաշվից է վախում, չի ուզում իր դեմ բողոք գնա դեսպանին: Դրա համար էլ լսել անգամ չի ուզում նավում Ձեր մնալու մասին: Այժմ հարցը թողնում եմ Ձեզ որոշելու:

Այս պատասխանն արդեն բոլորովին իմ հույսերը խորտակեց: Ուրեմն նորից հանձնվել թուրքերի՞ն: Նորից քննություն պարզելու իմ անձնավորությունը, ո՛րքան անախորժ ու ծանր վիճակ: Այստեղ Մարաշ չէ: Սա Պոլիս է, շուրջը լիքը բուլղարներ, նույնիսկ Բալչիկ քաղաքից: Շատ դժվար պիտի լինի պնդել իմ բուլղար լինելու վրա, և հավանորեն բացվի իմ հայ լինելը: Եվ այսքան տարիներ տառապեցի, որպեսզի ծածկեմ մեր գործունեության վաղվա ծրագիրը ու

[1] Նախագահ:
[2] Եսասիրաշտ:

վերջում ամեն ինչ հրապարակ գա՞: Սա հնարավոր բա՞ն է: Մյուս կողմից պիտի բաց վի պասպորտիս կեղծիքը, կատարված վասալ մի իշխանության կողմից, որ պաշտոնական թղթերով հայ հեղափոխականներին Պոլսից փախցրել է որպես բուլղար: Այս հայտնությունը ինչպիսի՞ հարաբերություն առաջ կբերի թուրք պետության ու բուլղար իշխանության միջև: Քաղաքական մի բարդ կացություն կստեղծվի, և մեր գործիչների ապագա քայլերը կվտանգվեն:

Այս խորհրդածությունների մեջ չիմացա, ինչպես օրը տարաժամեց, և բավական ուշ, ժամը 10-ի մոտերքը մեր նավը խարիսխ ձգեց Բոսֆորի մեջ: Թրքական ժամը 12-ն անցնելուց հետո (արևամուտ) այլևս նավային գործառնությունները վերջանում են, և ուշ հասնող նավերը սպասում են մինչև առավոտ: Մեր նավն ստիպված էր սպասել: Ճամբորդները պիտի լուսացնեն նավի վրա:

Գեղեցիկ է Պոլիսը, իսկ գիշերը նա հմայիչ [է]: Ջուրն ու ցամաքը այնպես են միացել, այնքան կտրատվել, ետ ու առաջ շարժվել, ձևեր ստացել, որ բնության գրկախառնումի մի ընդարձակ պատկերի են վերածվել: Դիտելու այնքան շատ բան կա, որ երկու աչքը շատ քիչ է: Ամեն կողմ տեսնել միայն երկու աչքով հնարավոր չէ: Պանորաման[1] շատ մեծ է:

[1904 թ.] Սեպտեմբերի 28-ը անցավ որպես տվայտանքի մի օր ինձ համար:

Գիշերը լուսացրի այն մտածումներով վերջապես, որ առավոտյան կպարզվի, թե ինչ պիտի դառնամ: Ավելի լավ է և հանգիստ վտանգի մեջ լինել, քան նրա սպառնալիքի տակ: Ես ինձ բանտում շատ ավելի լավ էի զգում, քան այժմ, որ ազատ եմ, բայց վաղվա գալիքի անորոշությունը կաշկանդել է իմ ամբողջ էությունը:

[1] Համայնապատկեր

Սեպտեմբերի 29-ն է վերջապես: Առավոտ վաղ Պոլիսը կենդանության մեջ է: Բոսֆորը բռնված է բազմաթիվ նավերով, անթիվ մակույկներ շրջապատել են մեր նավը՝ ճամբորդներ ընդունելու համար: Եռուզեռ ծովում, աշխույժ շարժում քարափում և կամրջի վրա: Ճամբորդները շտապ իջնում են նավից: Մակույկավարներն իրար հայհոյում են մեկը մյուսի ճամբան կտրելու, մեկը մյուսից հաճախորդ խլելու համար:

Երկու մակույկի մեջ նստած են ոստիկաններ, որոնք այնքան կարգի վրա հսկելու համար չեն, որքան հայ փախստական որսալու: Ես կոմանդանի աչքին երևացի, որ տեսնեմ, թե ինչ վերաբերմունք ցույց կտա իմ մնալուն: Ինձ տեսնելուն պես նա դժգոհ դեմք ընդունեց ու ձեռքով կամուրջը ցույց տվեց, ուզելով հասկացնել, որ ես էլ պիտի գնամ: Այլևս սպասելն ավելորդ է՝ վճռեցի ես: Ավելի լավ է թուրքի ձեռքով պատժվել, քան այսպիսի չոր մարդուց կյանք մուրալ: Ես դարձա դեպի իմ իրերը, որոնք անտեր մնացել էին նավի վրա:

Չորս հսկիչները, որոնք մինչ այդ ցրված նավի այս ու այն կողմում ինձ էին դիտում, մոտեցան ինձ:

Կոմիսարը հարցրեց.

– Ուզո՞ւմ եք դուրս գալ մեզ հետ Դիմիտրի էֆենդի:

– Գալիս եմ,– ասացի:

Անմիջապես երկուսն իմ իրերը վերցրին, առաջ անցան, ես նրանց հետևից, կոմիսերն ու մի փոլիսը իմ հետևից, անցնում ենք նավի միջի մասով, նեղ կորիդորով[1], որի մի կողմը մեքենան է, մյուս մյուս կողմը պաշտոնյաների ննջարանները: Ես գնում եմ շատ վճռական թափով, առանց շուրջս նայելու: Հանկարծ, կարծեք հատուկ կարգադրությամբ, ննջարանների դռներից մեկը բացվեց, և Բրազանովիչն իմ առաջ դուրս եկավ: Նրա համար բոլորովին անսպասելի էր այդ հանդիպումը: Կարծես մոռացել էր ինձ: Երևում էր,

[1] Միջանցքով:

որ շտապ գործով էր գնում: Ինձ տեսնելուն պես տեղում քարացավ ու զարմացած հարցրեց.

– Ի՞նչ, գնո՞ւմ եք:

– Այո՛:

– Սրանց հե՞տ:

– Այո՛:

– Բայց Դուք կարող եք մնալ:

– Եթե ինձ չեն ասում մնա, ես չեմ կարող ազատություն մուրալ:

– Ճի՛շտն ասեք, Դուք ինքներդ ուզո՞ւմ եք մնալ:

– Դե, իհարկե, ուզում եմ:

Այստեղ Բրազանովիչի աչքերի մեջ մի լուսավոր փայլ անցավ: Նա չկարողացավ թույլ տալ, որ թրքական բանտերի մի զոհ նորից տարվի բանտ: Այս ամբողջ խոսակցության ներկա էին երկու հսկիչները, մինչ առաջին երկուսը իմ իրերը առած սանդուխքից իջեցրել են ու նավակով հեռացել:

– Եթե չեք ուզում գնալ, մի՛ գնաք, մնացեք նավի վրա: Ձեզ ոչ ոք իրավունք չունի բռնի տանել և ոչ էլ նավից վռնդել: Տեսնում եք այն դրոշակը, որ կայմի վրա ծածանվում է: Նա պաշտպանում է ամեն մի մարդու, ով համոզմունքի համար հալածված է:

Այս ասելուց հետո նա ինձ խնդրեց, որ իր խոսքերը թարգմանեմ թուրքերին: Թարգմանեցի: Նրանք ինձ հարցրին, թե ես իմ կամքով չեմ դուրս գալիս:

Ասացի՝ այո՛:

– Եթե չեք գալիս, մենք բռնի չենք կարող Ձեզ տանել: Կգնանք ու կառավարության կհայտնենք:

Բրազանովիչին թարգմանեցի: Նա ասաց.

– Այդպես էլ պետք է: Թող թուրք կառավարությունն էլ դիմի մեր դեսպանին: Դեսպանն էլ ինչպես կարգադրի, այնպես էլ մենք կվարվենք:

Թուրքերը գլխիկոր հեռացան:

– Բայց իմ իրերը,– կանչեցի ես: Նրանք խոստացան ետ բերել:

Սանդուխքի գլխից նայեցի, որ իրերս հասել են մաքսատան քարափը: Մի փոլիսը վար իջավ, մակույկ նստեց և գնաց բերելու:

Բրազանովիչը երբ իմացավ, որ իրերս տարել են, իսկույն եկավ և կոմիսերին ասաց, չիջնել ցած, մինչև իմ իրերը ստանալը: Մի 10 րոպե չանցած իրերս ստացա: Ինչեր ասես չկան իմ արկղում. և՛ իմ ֆոնոգրաֆ մեքենան, և՛ նրա քառասունի չափ գլանակները և՛ բանտում կատարածս ձեռագործ քսակներն ու գոտիները, մի մասը մետաքսով, որոնց վրա գործել Затвара Мараша (Մարաշի բանտ), թվականը, օրը, անունս և ազգանունը: Իրերիս մեջ կան նաև երկու ձեռագործ առյուծներ, մեկը թելից, մյուսը ուլունքից: Բացի այդ, Հալեպ վիլայեթում մինչև այդ ժամանակ գործածվող արծաթյա դրամների ժողովածու, որոնք շատ գեղեցիկ էին ու թասի պես փոս: Իսկ որ ամենակարևորն է, թե՛ դուրսը և թե՛ բանտում գնել էի հին դրամներ ու քարեր հունական ու հայկական նշանագրերով բավական հարուստ հավաքածու: Այդ բոլոր իրերը ես շատ գնահատում էի, թե՛ իբրև բանտի հիշատակ և թե՛ աշխատանքի արտադրություն: Չմոռանամ հիշատակել և տամբուրան, որ նույնպես սնդուկիս մեջն էր: Այդ գործիքը ինձ զբաղեցրել է իմ բանտային շատ ծանր օրերում: Այդ իրերից ֆոնոգրաֆը մնաց Եգիպտոս՝ Ալեքսանդրիայի տեղական մարմնի մոտ: Մնացածները ինձ հետ եղել են ամենուր:

[19]18 թվականին, երբ ես Բաքվի դպրոցում ուսուցիչ էի և ամառը գնացի հանքային ջրեր առողջանալու, դրամների ժողովածուն, ձեռագործները, մի ժամացույց, ծխախոտի արծաթյա տուփը ու այլ թանկարժեք իրեր թողի աներոջս՝ Սեդրակ Աթաբեկյանի երկաթյա կասսայի[1] մեջ: Թրքական արշավանքին, երբ քաղաքը

[1] Երկաթյա պահարան՝ սեյֆ:

գրավվում է[1], Աթաբեկյանի տանն ապրում են թուրք սպաներ, որոնք հարմար են գտնում կոտրել տալ կասսան ու վերցնել իմ պահ տված իրերը, ինչպես և Սեդրակի ընտանիքի ամբողջ արծաթեղեն իրերը և 2000-ի չափ ռուսական դրամը: Ահա այն, ինչ որ ես թրքական բանտերում և աքսորանքի ընթացքում փրկել էի, բոլորը նորից ընկան թուրքերի ձեռքը: Ինձ մնաց միայն տամբուրան, որ հիմա էլ մոտս է: Ձեռագործներիցս միայն ուլունքե առյուծը թողել եմ Ժնևի թանգարանում, որպես բանտի գործ:

Ես հիմա նավի վրա թագավորում եմ. ոչ ոք չկա: Բոլոր ճամբորդները դուրս են եկել: Մնացել է միայն մի փոլիսը՝ Զեքին, այն էլ ոչ պաշտոնական իր զգեստով, այլ սովորական հագուստով: Կապիտուլյացիայի օրենքով ոչ մի ոստիկանական պաշտոնյա իրավունք չունի եվրոպական որևէ նավ մտնել, բացառությամբ երբ ճամբորդում է: Զեքին մնաց, որ տեսնի, թե ես ինչ եմ դառնալու[2]: Շուտով եկավ նավային ընկերության գործակալը, մի սերբ: Հենց որ Բրազանովիչը նրան տեսավ [ասաց].

– Ա՛հ, ինչ լավ հասաք: Այս մարդու համար մի ճար արեք,– աղաղակեց ու ինձ մատնացույց արեց: Մի քանի խոսքով պատմեց իմ մասին: Սերբ գործակալը հետաքրքրվեց ինձանով ու երբ իմացավ, որ ինձ բերողներից մեկն այնտեղ կանգնած է, դարձավ նրան՝ թուրքին, թե նա փոլիս է՞: Երբ դրական պատասխան ստացավ, մի տիրական դիրք ընդունեց ու շատ կոպիտ ձևով գոռաց.

– Մի վայրկյանում իսկ չքվիր այստեղից: Դու գիտես, որ իրավունք չունես օտար նավի վրա բարձրանալ:

Թուրք փոլիսն առանց մի բառ արտասանելու, կորագլուխ այնպես հեռացավ, որ իսկապես չքվեցավ: Այնուհետև գործակալն ինձ առաջարկեց մի նամակ գրել բուլղարական դիվանագիտական

[1] Բաբուն գրավվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին:
[2] Ինչ քայլերի պիտի դիմի:

ներկայացուցչին, որպեսզի ինքը անձամբ տանի տա և վաղն ևեթ պատասխան բերի: Նրա ասելով վաղն ինձ կարող են նավից հանել: Նամակը գրեցի, ուր իմ համառոտ պատմությունը գրելով, խնդրում էի ինձ փոխադրել տալ Բուլղարիա: Երեկոյան դեմ սերբ գործակա՛լը գնաց: Սպասում եմ անհամբեր, որ առավոտյան լավ լուր ստանամ:

Հաջորդ օրը՝ սեպտ[եմբերի] 30-ին նավի վրա գտնվող հային, որ Բուլղարիա պիտի անցներ, նավի մակույկով ու նավաստիների հսկողության տակ անցկացրին մի ուրիշ նավ, որ մեկնելու էր Վառնա: Ինձ չուղարկեցին, ասելով, որ կարգադրություն չեղած իրենք չեն կարող փոխադրել այլուր:

Մեր նավը շրջապատված էր 4 թրքական նավակներով, որոնց մեջ նստած էին մի-մի հոգի ինձ բերող հսկիչները և կողմնակի զափթիեներ: Նրանք հսկում էին, որ նավից դուրս գալուն պես ինձ բռնեն: Նավի պաշտոնեությունն այդ բոլորը տեսնում էր և ինձ տեղից շարժել առայժմ անհնար էր գտնում:

Մի ժամ հետո, երբ կոմանդանը ինձ տեսավ նավի վրա, չարացավ, թե ինչու՞ եմ ես մնացել, մի՞թե նավը օթել է: Եվ ապա բարձրաձայն ասաց, որ այսօր մինչև երեկո նավից դուրս գամ: Ես բացատրեցի, որ ընկերության գործակալը խոստացավ մեր ներկայացուցչին տեսնել ու ինձ նավից հանելու մի հնարք գտնել: – Այդ իմ գործը չէ,– կանչեց նա բարձրից,– ով ուզում է թող քեզ տանի, միայն թե չմնաս նավի վրա:

Ես կյանքումս շատ զրկանքներ եմ կրել, շատերից վատություն տեսել, թուրքի ձեռքով բանտարկվել, բայց պիտի խոստովանեմ, որ բոլորն էլ մոռացել եմ, բոլորի դեմ ոխ չի մնացել իմ սրտում, բայց այդ կոպիտ ավստրիացու վարմունքը որպես մի դառը հիշողություն ամեն անգամ թունդ է հանում իմ հոգին: Ես այդ չեմ կարողանում մոռանալ:

Ես անմիջապես գնացի Բրազանովիչի մոտ և պատմեցի: Նա շատ զայրացավ իր մեջ, բայց ի՞նչ կարող էր անել՝ իր մեծավորն է:

– Եթե մյուս անգամ Ձեզ առաջարկի հեռանալ նավից, Դուք առանց քաշվելու հայտնեցեք, որ պիտի մնաք և նա իրավունք չունի Ձեզ հետ այդպես վարվել:

Հետո Բրազանովիչը գնաց մոտը ու երկար խոսեց, թե ինչ կարիք կա ջղայնանալ.

– Պատասխանատվությունից եք վախում: Հենց այս րոպեին պաշտոնապես դիմեցեք մեր դեսպանին ու բացատրեցեք խնդիրը: Թող դեսպանը որոշի՝ տա՞լ այդ մարդուն թուրքին, թե Բուլղարիա ուղարկել: Այսպիսով Դուք կազատվեք պատասխանատվությունից:

– Շատ լավ ասացիք,– ասել է կոմանդանը, և գրությունը նույն օրն ուղարկեց դեսպանին: Ապա ինձ կանչեց կոմանդանը և հայտնեց, որ իմ մասին հարցում է արել դեսպանին, սպասում է պատասխանին:

– Այնպես որ այսօրվանից դու մեր հովանու տակ ես: Ոչ մի տեղ չպիտի գնաս: Եթե բուլղար ներկայացուցչի կողմից գան՝ դարձյալ չպիտի գնաս:

Իմ ուզածս էլ այդ է: Եվ բուլղար ներկայացուցիչը հիմար է, որ ինձ տեր կանգնի: Նա վաղուց, 5 տարուց ի վեր գիտե բանն ինչումն է, դրա համար էլ դեռ 1899-ի վերջերքում ինձ գրած նամակից հետո այլևս լռեց, վախենալով գործն արծարծելուց, պարզ է, որ երեկվա իմ դիմումը անպատասխան պիտի մնար:

Ես երկու դիմում էլ գրեցի, նրանք էլ մնացին անպատասխան: Վերջը, երբ սերբ գործակալը եկավ և իրեն դիմեցի: Նա ասաց, որ իր հետ խոսել է բուլղարական ներկայացուցչի զինվորական կցորդը և ասել, թե ներկայացուցիչն անձամբ ոչինչ չի կարող անել, թող հույսը նրանցից կտրի: Ապա ավելացրեց, որ ներկայացուցիչը դիմել է ավստրիական դեսպանին ու խնդրել, որ ինձ թուրք կառավարությանը չհանձնեն: Այս մեկը խելքումս նստեց: Բուլղարական ներ-

կայացուցիչը այդպես էլ պիտի աներ, որ ես Պոլսո կառավարության ձեռքը չընկնեմ: Այսպիսով ավստրիական դեսպանությանը 3 կողմից դիմում է կատարվել իմ վերաբերմամբ: Թուրք կառավարությունը նրանից է պահանջում ինձ, ասելով, որ ավստրիական նավում ապաստան եմ գտել, օգտվելով Պոլիս փոխադրվելու առիթից: Կոմանդանը նրան է դիմել, խնդրելով կարգադրություն իմ մասին՝ հանձնել թուրքին, թե՞ Բուլղարիա փոխադրել, իսկ բուլղարական ներկայացուցիչը խնդրում է Բուլղարիա փոխադրել: Այսպես անցնում են օրեր:

Անցավ հոկտեմբերի առաջին օրը, երկրորդը, երրորդը, ոչ մի լուր չկա: Բարեբախտաբար նավը սպասում է, չհասկացա, թե գործ ունի, թե իմ պատճառով է սպասում: [1904 թ.] Սեպտ[եմբերի] 28-ից մինչև հոկտեմբերի 5-ի երեկոյան մեր նավը՝ "Euterpe"-ը գամված մնաց Բոսֆորում: Քիչ կպատահի, որ առևտրական մի նավ այդքան երկար օրեր սպասի, թեկուզ Պոլսում: Ես անհամբեր եմ դարձել, օրեր եմ անցկացնում անստուգության մեջ ու չգիտեմ ինչով է վերջանալու այս պատմությունը:

Նավեր են գալիս, մի օր մնում, մեկնում դեպի իրենց նպատակը: Երկու նավ մեկնեցին Բուլղարիա: Ահա ռուսական "Ново Российск"[1] շատ մոտ կանգնած է: Թող այնտեղ լինեի, տեսեք ինչպես ռուս սպաները ինձ կփախցնեին ուզած տեղը: Չէ՞ որ 1896-ին, հունիսի մեջ նման մի պայմանում ռուսական նավն ինձ դուրս ձգեց, որովհետև անձնագիր չունեի, բայց այնպես որ ես մտա Պոլիս, եղավ այն, ինչի համար եկել էի: Ընկերները չկարողացան հանել, ռուս նավի պաշտոնեությունը հանեց: Հաջող դիպված:

Վերջապես հոկտեմբերի 4-ին նավ բարձրացան 3 շատ կարգին հագնված մարդիկ՝ սև ռեգինգոտ[2], սպիտակ ձեռնոցներ և ցի-

[1] «Новороссийск».
[2] Երկար սերթուկ:

լինդր գլխներին: Ինձ կանչեցին ու խոսեցրին: Ես պատ մե ցի այն բոլորը, ինչ պատմել էի թրքական դատարանում

– Բայց Ձեր մասին ասում են, որ Դուք հայ եք: Թուրք կառավարությունը դրա համար է Ձեզ բանտարկել,– ասաց ավստրիական դեսպանի թարգմանը:

– Եթե ինձ իբրև հայ են բանտարկել, անշուշտ Ձեզ հայտնի պիտի լինի, որ ինձ դատապարտել են որպես ռուսահայի, իսկ այդ դեպքում ի՞նչ եք կարծում, ես չէի՞ հայտնի այդ հանգամանքը, քանի որ կապիտուլյացիայի օրենքով թուրք դատարանը ինձ չէր կարող դատապարտել ու ստիպված էր ռուս կառավարությանը հանձնել,– հարցրի ես:

Այս հարցին իմ խոսակիցները իրար երես նայեցին ու հավանության նշան տվին:

– Բայց ինչու՞ անպատճառ ռուսահայ, ինչու՞ ոչ թրքահայ,– հարցրեց թարգմանը:

– Այդ էլ հարցրեք թուրք կառավարությանը:

– Դեհ, եկեք ճիշտը խոստովանեցեք, մենք թուրք կառավարության կողմից չենք եկած, ավստրիական դեսպանության մարդիկ ենք, մեզանից վնաս չի հասնի Ձեզ: Ասացեք, Դուք ի՞նչ եք՝ բուլղար, թե հայ: Ինչ էլ լինի, միևնույնն է, դրանով դեսպանության որոշումը ոչնչով չի փոխվի:

– Ես կեղծելու կարիք չունեմ: 6 տարի է ես պնդում եմ իմ բուլղար լինելու վրա, հիմա էլ կրկնում եմ նույնը:

Այս խոսքի վրա ծիծաղեցին, ինչ որ [բան միմյանց հետ] քչփչացին և ապա գլխավորը հայտնեց.

– Դուք մեր նավին ապաստանել եք այն հույսով, որ կազատվեք. ձեր հույսերը Ձեզ չեն խաբել: Ավստրիական նավից քաղաքական հանցավոր չի տրվի թուրքերին: Եղեք հայ, բուլղար կամ թուրք՝

դրանով մեր տրադիցիաները[1] չեն փոխվում: Դուք այսօրվանից ազատ եք: Այլևս թուրք պետությունը Ձեզ չի կարող մոտենալ: Վաղն ևեթ Դուք կճանապարհվեք Ձեր հայրենիքը՝ Բուլղարիա: Հիմա գո՞հ եք,– հարցրեց թարգմանը:

– Շնորհակալ եմ,– ասացի ես:

Նրանք կանչեցին կոմանդանին և Բրազանովիչին և ասացին, որ Բոսֆորում կանգնած է «Դալմացիա», նույն ընկերության, նավը: Վաղը դեսպանության կողմից մարդիկ կգան դեսպանության շոգեմակույկով և ապա փախստականին կփոխադրեն մեր մյուս շոգենավը: Այնպես զգուշությամբ կկատարեք այդ փոխադրությունը, որ որևէ թյուրիմացություն չպատահի թուրք պահակների հետ: Ասացին ու գնացին: Բրազանովիչն ինձ թարգմանեց բոլորը: Ես միայն այսօր ազատվեցի: Հիմա այլևս կասկած չկա, որ ես թուրքի երես չեմ տեսնի: Վաղը պիտի ճանապարհվեմ Վառնա, այլևս մնաք բարով բանտ ու աքսոր, մանավանդ մահվան սպառնալիք: Այլևս աշխարհը փոխվեց ինձ համար: Պոլիսն ավելի քան հրապուրիչ դարձավ, ծովը հմայիչ, մարդիկ բարի, չարությունը միանգամից տեղի տվեց աշխարհի երեսից: Արևը ժպտում է, օդը շոյում է հուզումներդ, որ այլևս երեկվանը չեն և ոչ առաջին օրվանը, հուզումներ, որոնք նոր են իմ հոգում, որոնք կյանքը հաճելի են դարձնում: Այդ հուզումները գիշերը փոխվում են անուշ երազների: Տարիներից ի վեր ես այդ կազդուրիչ քուն չէի ունեցել:

Առավոտյան, հոկտեմբերի 5-ին, նավի վրա սկսվեց մի շաբաթից ի վեր ընդհատված եռուզեռը: Այդ օրը նավը պիտի մեկնի նույն գծով, որով եկել է: Նավը բեռնվում է: Ճամբորդները գալիս են ժամը տասին: Ավստրիական դեսպանության շոգեմակույկը մոտեցավ նավին: Նրա վրա ծածանվում է ավստրիական դրոշակը: Շոգեմա-

[1] Բառացի՝ ավանդություն, սակայն այս համատեքստում պետք է հասկանալ ընդունված օրենքի համաձայն:

կույկից դուրս եկան դեսպանության զինվորական կցորդը իր կատարյալ համազգեստով: Նրա հետ են այլ պաշտոնյաներ ու պահակներ: Վեր բարձրացան նավ: Զինվորական կցորդը կանչեց նավի պաշտոնյաներին ու ցույց տվեց մի շարք նավակներ թրքական դրոշակներով, որոնք վխտում էին մեր նավի շուրջը: Նավակների մեջ զափթիեներ ու ասկերներ[1] էին միայն: Քիչ խորհրդածելուց հետո մեր նավի կոմանդանտին վերցնելով շոգեմակույկ նստեցին և արագ անցան «Դալմացիա» շոգենավը, որ մեր նավից ոչ այնքան հեռու խարսխված էր: Այնտեղ տեսնվեցին «Դալմացիայի» կոմանդանի հետ: Ապա բոլորը միասին նորից վերադարձան մեր նավը: Դիտեցին ծովը, աչքով տնտղեցին ինձ շոգեմակույկով մինչև «Դալմացիա» անցակցնելու դժվարությունները ու եկան այն եզրակացության, որ խելացի չպիտի լինի ինձ փոխադրելը: Այդքան զինվորները զուր չեն բերված թուրք ոստիկանության կողմից: Թերևս հիմարություն ունենան փախստականին շոգեմակույկից բռնի վերցնելու փորձ անեն: Ավստրիացիք անշուշտ չեն տալու և հետևանքը կարող է ընդհարում լինել: Ավստրիական դրոշակի պրեստիժի[2] խնդիր առաջ կգա և ահա առանց այն էլ բազմաթիվ դիպլոմատիկական հարցերին մի նոր հարց պիտի ավելանա: Հատկապես իմ փոխադրելուն դեմ խոսեց «Դալմացիայի» կոմանդանը.

Ինչու՞ անպատճառ բանտարկյալն այսօր պիտի ճանապարհվի իր հայրենիքը: Տարիներ նեղություն է կրել, թո՛ղ երկու շաբաթ էլ կրի: Թո՛ղ մնա հենց այս նավի վրա ու նավի հետ գնա այնքան, մինչև որ կհասնի Եգիպտոս: Այնուհետև հայրենիք վերադառնալու մասին էլ թող ինքը մտածի: Մենք նրան ազատ մի երկրում հասցրած կլինենք ու դրանով մեր պարտքը դեպի այդ բանտարկյալը լիովին կատարած կլինենք:

---

[1] Զինվորներ:
[2] Հեղինակության:

Այս բոլորը շատ լավ, բայց բանտարկյալը դրամ չունի այդ ահագին ճանապարհորդությունը մինչև Եգիպտոս կատարելու,– նրան պատասխանեց մեր նավի կոմանդանը: Նա ուզում էր ամեն կերպ ազատված լիներ իմ ներկայությունից: Երևի անհարմար էր գտնում, որ ես իր նավի մեջ պիտի [լինեմ] բոլոր այն նավահանգիստներում, որտեղից անցել եմ, ուրեմն և թրքական զայրույթի առարկա պիտի դառնա ինքը, որ թույլ է տվել իր նավի վրա ամբողջ աշխարհներ ճամբորդել, որպեսզի ինձ ազատած լինի:

Այդ դատարկ բան է: Բանտարկյալից տոմսակ չեք պահանջի, հասկանալի է: Մնում է սնունդը: Այդ էլ նավի ընդհանուր խոհանոցից կտրվի,– հայտնեց զինվորական կցորդը և ուրախացած, որ արդեն այս ձևով դրական լուծում է ստանում, ժպտալով դեպի Բրազանովիչը դարձավ և ավելացրեց.

Այդպես կարծում եմ, որ Ձեր գործը չի դժվարանա, այնպես չէ՞:

– Ոչ, ամենևին,– պատասխանեց Բրազանովիչը,– բանտարկյալին և՛ տեղ կտրվի քնելու և՛ սնունդ կտրվի, անհոգ եղեք:

– Ուրեմն շատ լավ: Բանտարկյալը մնում է «Euterpe» նավի վրա մինչև Ալեքսանդրիա,– լրացրեց զինվորական կցորդը, ապա դառնալով ինձ հարցրեց.

– Իսկ Դուք ինչպե՞ս եք գտնում այդ որոշումը:

– Ինձ համար միևնույն է. բավական է, որ ինձ թուրքին չպիտի հանձնեք,– պատասխանեցի ես:

Այս խոսքով էլ փակվեց իմ հարցը: Դեսպանատան պաշտոնյաները շտապ ցած իջան շոգեմակույկը, նավաստիները կարգով նրանց ընդունեցին և երկու րոպեում անցան մյուս նավերի հետևը:

Գնալով օրվա ընթացքում թրքական շղթան մեր շոգենավի շուրջը ավելի խտանում էր և նեղանում: Մի ժամանակ այնպես եղավ, որ դեպի շոգենավ եկող մակույկները դժվարությամբ էին

անցնում նրա միջով: Թուրքերը նպատակ էին դրել ինձ որսալ ինչ գնով ուզում է լինի: Նրանք համոզված էին, որ այդ օրն ինձ պիտի փոխադրեն կամ մի այլ նավ, որ գնում է Բուլղարիա, կամ բուլղարական գործակալության հանձնելու: Դրա համար էլ ամեն ուղղությամբ հսկիչ նավակներ են ցրված:

Եգիպտոս դուրս գալը շատ ավելի նպատակահարմար էր իմ տեսակետով: Բուլղարիայում անմիջապես մաքսային և ոստիկանական պաշտոնյաները պիտի իմանային, որ ես բանտարկյալ եմ եղել և այժմ տվյալ պայմաններում եմ ազատվում. ես անցագիր չունեի, ու շոգենավը ինձ իբր այդպիսին պիտի հանձներ, որ ընդունեին: Մի երկու օրում պիտի բացվեր, որ ես հայ եմ: Այնտեղ այն քան հայեր կան, բացի այդ մեր կազմակերպության անդամներ կան, որոնք ինձ լավ ճանաչում են: Իսկ թուրքերը վխտում են Բուլղարիայի բոլոր քաղաքներում: Նրանք պիտի իմաց տային Պոլսո կառավարությանը, որ փախած բանտարկյալը հայ է եղել: Ասել է, Բուլղարիա դուրս գալով իմ տարիներով գաղածը[1] պիտի հայտնագործվեր: Եգիպտոսում էլ նույն վտանգը կա, բայց Ալեքսանդրիան մեծ քաղաք է, շատ աչքի կարելի է չընկնել, բացի այդ, այնտեղ թերևս ինձ հաջողվի առանց պասպորտի փախստական կերպով ներս մտնել: Հիմա այդ ուղղությամբ պիտի աշխատեմ: Տեսնենք, կհաջողվի այդ ծրագիրը:

Ինձ թուրքերին չհանձնելու որոշումը հայտնի է բոլոր նավաստիներին: Սլովակներ են, խումբ-խումբ գալիս են և իրենց լեզվով իրենց խնդակցությունը հայտնում ինձ, իրենց բաժին գինին ինձ առաջարկում: Դրանց ջերմ ու սրտանց վերաբերմունքն ինձ հոգեպես պարուրում է: Երբեք չեմ մոռանա սլավ ժողովրդի պարզ զավակների լայնասիրտ այդ վերաբերմունքը:

[1] Թաքցրածը:

Երեկոյան դեմ մեր նավը մեկնելու նշան տվեց: Խարիսխը արագ վեր է բարձրանում: Նավը պտույտ է գործում իր ճամբան բռնելու: Նավաստիների մի մասը զբաղված է անմիջական աշխատանքով: Ես շտապ քայլերով շրջում եմ նավի վրա ու դիտում, թե ինչպես ինձ բերող հսկիչները նավերից տեսնում են իմ մեկնումը և ինչպես նրանք իրենց մոտ նստած զինվորներին մատով հասկացնում են, թե փախստականը ես եմ: Մեկ էլ ինչ տեսնեմ, մեր նավի բոլոր նավաստիները խմբվեցին մեր նավի այն եզերքին, որտեղ երևում էին թուրք ոստիկանները, լրտեսները և հսկիչները, և մի «Ուռա՛» դուրս պրծավ մեր նավի նավաստիների գոս կրծքից, որպես ցույց, որ ինձ փրկելով թուրքերից, տանում են հեռու-հեռու երկիր, այնտեղից ինձ ազատ բաց թողնելու համար: Ապա մեր մատրոսները մատները քթերին դրած ծաղրում էին ու զայրացնում թուրք լրտեսներին: Սրանք էլ սսկված ու սմքած իրենց նավակների տախտակներին, ամաչելուց գլուխները չէին համարձակվում վեր բարձրացնել:

Եվ այսպես, ես մեկնում եմ նույն նավի վրա դեպի ազատ աշխարհներ: Որպիսի՛ հրճվանք իմ հոգում:

[1904 թ.] Սեպտեմբերի[1] 6-ի առավոտյան Դարդանելում էինք, երեկոյան 4 ժամին՝ Զմյուռնիայում: Նավը խարիսխ ձգելուն պես մակույկավարների մի հսկա բազմություն ներխուժեց նավը: Ես իմ տեղում էի նստած, որ մոտ էր մեքենային, որպես քամիներից պաշտպանված մի անկյուն: Բրազանովիչն ինձ այնտեղ էր հատկացրել: Տեսնեմ մի տիպ շտապ ման է գալիս ճամբորդների մեջ ու մարդ է որոնում: Եկավ և կանգնեց իմ հանդեպ. – Մարտիրոս Սարգսյան սեն մը սեն[2],– հարցրեց:

[1] Հոկտեմբերի:
[2] «Մարտիրոս Սարգսյան, դու՞ ես»:

Ես որպես թե ոչինչ չեմ հասկանում, իսկի երեսին էլ չնայեցի: Ինձ դատապարտելիս այդ անունով էին մկրտել: Տեսավ, որ ես ուշ չդարձրի, անցավ, շարունակում է որոնել. նորից կանգնեց առաջս, և համոզված, որ իր որոնած մարդը ես եմ, դարձավ ինձ թուրքերեն լեզվով.

– Ձեր բարեկամներն ու ընկերները քարափի վրա կանգնած ուզում են Ձեզ տեսնել: Եկեք միասին գնանք, հետները խոսեցեք, ետ էլի կվերադարձնեմ նավը:

Ես չհասկանալ ձևացա: Նա կրկնեց իր խոսքերը: Լրտեսի տիպն ինձ շատ լավ ծանոթ է դեռ տարիներ առաջ Պոլսից: Չկարողացա համբերել, տեղիցս վեր թռա ու հարձակվեցի վրան, որ բռնեմ ու մի լավ ծեծեմ, բայց նա հասկանալով իմ մտադրությունը մինչև սանդուխքը մեկ փախավ և այլևս չվերադարձավ: Նրանից հետո մի փոլիս մտավ նավ և իր համազգեստով և իբրև ճամբորդ մնաց նավի վրա: Նա շարունակ հետևում էր ինձ, թե արդյոք ճամբորդներից ում հետ եմ տեսնվում:

Պոլսից հեռագրով կառավարությունը կարգադրություն էր արել, որ մի կերպ ինձ դուրս հանեն ու բռնեն: Իմ նշաններն այնքան լավ էին տրված, որ անմիջապես ինձ գտնում էին: Բոլոր նավահանգիստներում գալիս էին, փնտրում էին, ինձ տեսնում, հետևում, և երբ նավը մեկնելու էր լինում, դուրս էին գալիս: Զմյուռնիա նավ մտնող փոլիսը մինչև Բեյրութ հասավ, և ապա նավից հեռացավ:

[1904 թ.] Հոկտ[եմբերի] 7-ին. կեսօրից հետո, նավը մեկնեց Զմյուռնիայից, 8-ին անցանք Բոդրում ու Ստանկո Բիրգերիի միջով և ժամը 3-ին հասանք Ռոդոս: Ամսի 9-ին երևացին Տորոսի ձյունապատ գագաթները, երեկոյան դեմ անցանք Անամուռ հրվանդանը. աջ կողմում երևում է Կիպրոս կղզին: Ամսի 10-ին Մերսինում ենք:

Մյուֆետտիշը, որ ինձ տեսել էր Մարաշի բանտում, նավ մտավ, ինձ տեսավ, խոսեց ինձ հետևող փոլիսի հետ, բայց ինձ չմոտեցավ: Մերսինից բեռնում են եզ, կով: Այդ կենդանիները գործիքով վեր դեպի նավ բարձրացնելն ու ներքնահարկերն իջեցնելը մի տարօրինակ պատկեր է ներկայացնում: Այդ հսկա կենդանիները մի շարժումով վեր են բարձրանում կախված օդի մեջ, սարսափից դողում, յոթն անգամ կյանք տալիս, մինչև որ իջնում են մի մութ և անծանոթ վայր՝ նավի խորքը:

Հոկտ[եմբերի] 11-ի առավոտյան ժամը 6-ին Ալեքսանդրետում ենք: Հրեն, հա՛, երևում է բանտը, ուր մի ամբողջ ամիս այնքան ծանր ժամեր ապրեցի: Մտածեցի Իսքենդերի մասին, որ իմ դեմ սարքված դավը ինձ հաղորդեց և շնորհիվ նրա կարողացա ֆրանսիական հյուպատոսին իմաց տալ ու ի դերև հանել այդ դավը: Չլիներ Իսքենդերը, գուցե այդ րոպեին ես արդեն ձկներին կեր դարձած լինեի Միջերկրականի դառը աղի ջրերում: Խիստ հետաքրքիր է, թե ինչ դրության մեջ է նրա գործը: Նա մարդասպան էր: Եվ ինչ համեմատություն, այնտեղ և այստեղ. մութ բանտ, շրջապատդ տանջվող զրկվածների բազմություն, որ օրեցօր կորցնում է իր տանջանքի օրերի հաշիվը ու ձուլվում մռայլ և անորոշ ապագայի մեջ, այստեղ կյանքն է դարբնվում, մարդ ապրում է վաղվա հաջողությունով և գալիք առավոտյան արշալույսի հույսերով:

Ահա և Ալեքսանդրետի ծանոթ փոլիսը մտավ նավ, շրջեց, հեռվից տեսավ ինձ և իջնելով մտավ իր նավակն այնտեղ սպասելու, մինչև նավի մեկնումը: Վերջապես մեկնում ենք, հոկտ[եմբերի] 12-ի առավոտյան Բեյրութում ենք: Թրքական տակ[1]: Ամեն կողմ թրքական դրոշակներ, կիսալուսնի և աստղի նշանով: Գիշերը լուսավորված է քաղաքը ու մենք այդ տեսնում ենք հեռվից, բաց ծովից. արդեն ճանապարհին ենք: Ծովափնյա ամբողջ երկայնությամբ Լիբա-

[1] Նկատի ունի, որ դեռևս գտնվում է օսմանյան տարածքում:

նանի լեռներում երևում են ազատ լիբանանցու բազմաթիվ ճրագներ. նրանք մասնակից չէին թրքական տոնին: Իզուր չէ, որ այնքան զոհերով ազատվեցին թրքական լծից:

Անցնում ենք Սիդոն քաղաքը և հոկտ[եմբերի] 13-ի առավոտյան Յաֆֆայում ենք: Երեկոյան ժամը 5-ին հեռանում ենք թրքական վերջին նավահանգստից, որ միևնույն ժ[ա]մ[անա]կ քրիստոնյա աշխարհի հավատացյալների կենտրոն Երուսաղեմի նավահանգիստն է: Վերջին գիշերն է թրքական ջրերում, առավոտյան պիտի լինենք Պորտ Սաիդում: Նավի վրա լրտես չկա: Ճամբորդները բոլորը փոխված են և այնքան սակավ, որ կարելի է ասել որ չկան:

Նստած եմ Բրազանովիչի կաբինետում և մենք խոսում ենք, թե ես ինչ ձևով պիտի ներկայանամ Ալեքսանդրիայի եգիպտական ոստիկանությանը, չէ՞ որ անցագիր չունեմ:

– Ի՞նչ եք հոգ անում,– հարցնում է Բրազանովիչը,– ես կգամ Ձեզ հետ մաքսատուն, կհայտնեմ, որ Դուք բանտարկված եք եղել Թուրքիայում և հիմա ազատված եք, դրա համար էլ անցագիր չունեք:

Բրազանովիչի համար, ինչպես և ամեն մի սովորական մարդու համար այդպես էլ պիտի լինի, բայց ես չեմ ուզում, որ եգիպտական ոստիկանությունն իմանա, որ ես Թուրքիայում այսքան տարի բանտարկված եմ եղել որպես հեղափոխական գործիչ: Ո՞ւմ հայտնի չէ, որ թրքական լրտեսությունը կապ ունի եգիպտական ոստիկանության հետ: Ես հակառակ ոչինչ չասացի Բրազանովիչին, բայց իմ մտքում որոշեցի անպատճառ իջ նել Պորտ Սայիդ և այնտեղ մի ճար մտածել: Գիտեմ, որ Պորտ Սաիդը ազատ քաղաք է և անցագրի նկատմամբ ձևականություններ չկան: Դրամ եթե ունենամ, այնտեղ երկաթուղի կնստեմ և իբրև այնտեղից մեկնող կմտնեմ Կահիրե: Դա կլինի իմ ազատման ամենա լավ վերջավորությունը, որով

իմ հետքը իսպառ կորցրած կլինեմ: Այդ խորհրդածություններով քնեցի:

[1904 թ.] Հոկտ[եմբերի] 14-ին առավոտյան ժամը 5-ին արդեն Պորտ Սաիդում ենք: Քաղաք իջնելու համար դրամ պետք է: Բարեբախտաբար սև օրի համար մի քանի ղուրուշ պահել եմ: Բրազանովիչին ոչինչ չեմ ասում, հարկավոր է մակույկ վարձել: Մի քանի արաբերեն բառեր գիտեմ սովորած դեռ Հալեպում: Մոտիկ մի մակույկավարի հետ սակարկեցի երկու ղուրուշով, որ ինձ իջեցնի ուղղակի դիմացի ափը. չեմ ուզում մաքսատուն իջնել, հետաքրքիր աչքերից խուսափելու համար: Իսկ մակույկավարը օրենքի դեմ է գործում մաքսատնից դուրս որևէ ճամբորդ հանելու համար: Ես մաքսից ոչինչ չունեմ փախցնելու: Դատարկ եմ իջնում, միայն այն նպատակով, թե արդյոք հնարավոր չէ՞ անցագիր ձեռք բերել:

Իջա ափը, մտա քաղաք, անցա լայն փողոցներով: Ծանոթ դեմք եմ որոնում, գուցե մեկը պատահի, հետը խոսեմ անցագրի մասին: Բայց ոչ մի ծանոթ մարդ. պատահական հայի հետ էլ տեսնվել ոչ մի միտք չունի: Որոշեցի գնալ ոստիկանատուն ու հարցնել, թե ուզում եմ գնալ Ալեքսանդրիա առանց անցագրի, թո՞ւյլ կտան: Եվ համարձակ կերպով ներս մտա: Իմ հարցին պատասխանեցին, որ առանց անցագրի Ալեքսանդրիա մտնել չի կարելի:

– Ապա ինչպե՞ս անեմ: Ես անպատճառ այսօրվա նավով ուզում եմ Ալեքսանդրիա գնալ: Անցագիրս ճանապարհին կորցրել եմ,– ասի ես:

– Դու որտեղի՞ց եք գալիս,– հարցրին ինձ:

– Իզմայիլից,– պատասխանեցի հերյուրելով:

– Ձեր անունն ու ազգանունը և որ տեղացի լինելը:

Ասի:

Իսկույն տեղական մի անցագիր գրեցին, որի բլանկը պատրաստ էր՝ Դիմիտրի Մարտինով-Պոպով, Բուլղարիայից: Թվականը

և կնիքը: Պատրաստ է: Դրամ պետք չէ: Վերցրի ու մտա նավ. ուղղակի Բրազանովիչի մոտ: Պասպորտս տեսնելուն պես զարմացած նայում է ինձ: – Է՛յ բարեկամ, Դուք շատ բան գիտեք: Երևի թուրքը զուր չէ բանտ նստեցրել այսքան տարի ու հիմա այսքան դժվարությամբ ձեռքից բաց թողեց,– աղաղակեց նա ուրախ, ժպիտը դեմքին:

– Ես այս միջոցը գտա, որ Ձեզ ազատեմ Ալեքսանդրիայի մաքսատանը ինձ ներկայացնելու նեղությունից,– ասացի ես:

Խեղճը, միամիտ մարդ, հավատաց իմ խոսքին:

Հիմա ավելի քան ազատ եմ զգում ինձ, քանի որ Ալեքսանդրիա պիտի մտնեմ իբրև սովորական ճամբորդ, որ գալիս է Եգիպտոսի մի այլ քաղաքից:

– Երեկոյան մեկնեցինք և հոկտ[եմբերի] 15-ին, առավոտյան, Ալեքսանդրիա հասանք: Ես շնորհակալությունը արեցի նավի բոլոր պաշտոնյաներին և նավաստիներին ու իջա մաքսատուն. սովորական ձևականություններ. տեսան մի աղքատ մարդ. արկղում ֆոնոգրաֆ և սազ, իսկույն բաց թողեցին: Մտա քաղաք, իջևանեցի մաքսատան ամենամոտ մի շատ հասարակ հյուրանոց, իրերս դրի սնդուկումս և դուրս եկա, որ սենյակի վարձը նախօրոք չպահանջեն: Իմ արտաքինն այնպես էր, որ ամեն մի բարեկիրթ քաղաքացի կարող էր ինձ փախստականի, գողի տեղ դնել, բայց ոչ երբեք կարգին մարդու: Քաղաքի կենտրոն մտնել այդ արտաքինով ուղղակի հնար չէ: Այնտեղի շռայլ ու հարուստ հագուստը, արդուզարդը ինձ պես քոսոտի վայել բաներ չկան: Դրա համար էլ մնացի արաբական հետ ընկած մի թաղում, այս ու այն կողմ անցա: Երբ մթնեց, գնացի կենտրոնական մասը, ուր հույս ունեի մեր ընկերներից մեկնումեկին հանդիպել: Գիտեմ, որ երեկոյան քաղաքային պարտեզում կլինեն: Մտադիր եմ գտնել մեկին, դրամ վերցնել, գնամ հյուրանոցից իրերս ազատեմ, շորերս նույն գիշերը փոխեմ, որ առավոտյան հրապարակ գամ: Ես այդ փոփոխությամբ անճանաչելի

կդառնամ նույնիսկ նավի պաշտոնյաներին: Սակայն պարտեզում ոչ մի ծանոթ դեմք: Երկար սպասեցի նստարանի վրա: Անցավ մի ժամ, երկու ժամ, արդեն ժամը 9-ն է: Հուսահատվեցի, ինչպե՞ս առանց դրամի վերադառնամ հյուրանոց: Այդ մտա տանջության մեջ ի՞նչ տեսնեմ. մոտովս անցավ Կոշկակարյան Հարությունը, որը երկու այլ հնչակյանների հետ Հալեպի ոստիկանատուն էր բերված և միասին նույն սենյակում բավական ժամանակ մնացինք, և ապա նրանց Տաճկաստանի սահմաններից դուրս քշեցին:

Ուզեցի ձայն տամ, բայց ինչպե՞ս. չէ՞ որ նա ինձ բուլղար գիտե, ինչ կարիք կա ոչ գաղափարակցի այդ գաղտնիքը բանալ: Այդ մտածմունքով ձայն չտվի: Անցավ դարձյալ մի ժամ և ոչ մի ծանոթ մերոնցից: Տեսնեմ նույն Հարությունը մենակ, դարձյալ անցավ իմ մոտով:

– Արությո՛ւն,– ձայնեցի: Նա նայեց, և լամպի լույսով կարողացավ ինձ ճանաչել:

– Վա՛, Դիմիտրի. սէն մը սէն[1],– հարցրեց:

– Այո՛, ես եմ,– որ չասացի, սա քար կտրած նայում է և իր ականջին չի հավատում:

– Բայց մի՞թե դու հայ ես,– հարցնում է:

– Եվ հեղափոխական,– ավելացնում եմ,– եթե կարելի է, ինձ ցույց տվեք մեր կոմիտեի անդամներից մեկնումեկի տունը: Որի՞ն գիտեք:

– Ճանաչում եմ Մելիք-Փաշայան բժշկի տունը. նա հենց ձեր ներկայացուցիչն է Ալեքսանդրիայում: Ուզում եք, Ձեզ անձամբ տանեմ նրա մոտ:

– Տարե՛ք,– ասի ու միասին մտանք Մելիք-Փաշայանի տուն:

[1] «Դիմիտրի, դու՞ ես»:

Ճանապարհին Հարությունից հեղափոխականի խոսք առա, որ ոչ ոքի չասի, թե ես բանտարկված եմ եղել: Նա խոստացավ ու իր խոստումը կատարեց:

Բժիշկն այնքան ուրախացած չէր, որքան զարմացած իմ հայերեն արտահայտության վրա: Դժվարությամբ եմ հայերեն նախադասություն կազմում, բառերը խույս են տալիս հիշողությունիցս: Տարիների գործ դրած տանջանքը, որ չլինի թե հայերի հետ խոսած ժամանակ մի հայերեն բառ փախցնեմ, այնպես է կաշկանդել հոգիս, որ հիմա հայերեն խոսելիս թվում է, թե հանցանք եմ գործում: Հայերեն նախադասության մեջ ակամա թուրքերեն բառեր եմ գործածում: Հոգեբանական այս այլանդակ վիճակը տևեց մի քանի օր, մինչև որ կամաց-կամաց ինքզինքս գտա, մինչև որ աստիճանաբար հոգուս խորքում համոզվեցի, որ անցյալ վեց տարին եղել է անբնական, արհեստական մի դրություն ինձ համար, որ իսկական և անկեղծ կյանքը նորից նոր հարություն է առնում իմ մեջ:

Մելիք-Փաշայանից իմացա, որ իմ մոտիկ ընկերներից ոչ ոք չկա Եգիպտոսում, ոմանք բանտերում են Թուրքիայում, ոմանք Կովկաս են գնացել, ոմանք էլ գործում են Թուրքիո զանազան շրջաններում: Շատ ցավեցի, երբ իմացա, որ Հրաչյան Զմյուռնիայի բանտումն է, բայց որքան ուրախացա, երբ իմացա, որ Սիմոնը Բեյրութի շրջանում է գտնվում իբրև ռուս, և Վարդանը՝ Ադանայի շրջանում իբրև ասորի: Այդտեղ ես համոզվեցի, թե ես շատ իրավացի եմ եղել իմ հայությունս գաղելով[1], չնայելով այն հանգամանք ին, որ ռուսահպատակությունն ինձ վաղուց փրկած կլիներ բանտի դժոխային կյանքից:

Անսպասելի էր իմ հանկարծուստ[2] հայտնվելը: Շատերը խաչ էին դրել ինձ վրա: Լուր էին ստացել, որ ինձ տարել են Մարաշից,

[1] Թաքցնելով:
[2] Հանկարծակի, անսպասելի:

բայց թե ուր են տարել, վերջնականապես դեռ չէին կարողացել ստուգել: Ամիսներ հետո, երբ Սիմոնը եկավ Եգիպտոս, ինձ պատմեց, որ Բեյրութում մի նամակից իմացվեց, որ ինձ շղթայված Հալեպից տարան դեպի նավահանգիստ: Այդ լուրը երևի Գրիգոր Մարաշլյանից է տարածվել, որ անձամբ տեսավ ինձ Հալեպից դուրս եկած ժամին՝ շղթայված մի աքսորականի հետ միասին:

Անմիջապես բժիշկը մի հեռագիր տվեց Ժնև, հաղորդելով իմ ազատությունը, որին երկու օր հետո պատասխանեցին ողջույնի հեռագրով:

Բժշկից դրամ վերցնելով Հարությունի հետ գնացինք այն օթեը, ուր թողել էի իրերս, մի օրվա վարձը վճարեցինք և նույն գիշերը ևեթ փոխադրվեցի տիկին Սրբուհու մոտ, որ մեր կուսակցության անդամն էր և ազատ սենյակ ուներ:

Առավոտ նոր արթնացած, տեսնեմ տիկին Սրբուհին իմ առաջս դրեց իմ կիթառը, որ դեռ Թուրքիա չգնացած, Կովկասում նվագում էի երբեմն իբրև սիրող, հետս բերել էի Ալեքսանդրիա, և դեպի Թուրքիա մեկնելիս այնտեղ էլ թողել. չգիտեմ որտեղից որտեղ իմ կիթառը հանձնել են տիկնոջ որպես ավանդ: Եվ նա պահել է պատից կախ արած մինչև այսօր:

– Աշըղ[1] Ղարիբի սազը յոթ տարի հետո իր ձեռքը տվին,– ասելով, ինձ տվավ:

Որպիսի հիշողություններ մտքիս այս ու այն խորշերում հարություն առան, վերադարձվեցին՝ այդ պարզ գործիքը տեսնելով: Ամբողջ պատանի կյանքս մեկեն ծառացավ առաջս: Մոռացված դեմքեր ու դեպքեր եկան շարքերով ու աչքիս առաջ պատկերացան: Այդպիսի րոպե ես իմ կյանքում երկրորդ անգամ այլևս չապրեցի մինչև այսօր: Այդ օրվանից սկսած իմ կյանքը մտավ իր սովորական ուղիի մեջ. և՛ ընկերներիս և՛ ազգականներիս նամակներով

[1] Դուսան:

հաղորդեցի իմ ողջ լինելը և բոլորից խնդակցության պատասխան ստացա:

Բանտային տարիների կյանքը խիստ քայքայել էր իմ առողջությունը. նախկին ուրախ, առողջ, աշխույժ տրամադրությունս տեղի էր տվել թախծոտ, հիվանդագին արտահայտության: Ջղային ու ոսկրացավի կրկնակի հիվանդությունները բուն էին դրել իմ մեջ ու ես տառապում էի: Աշնան խոնավությունը Ալեքսանդրիայում թափանցում էր մինչև ոսկորներս: Բժշկի կողմից տրված խորհուրդները և դեղերը ոչ մի օգուտ չունեցան: Երեք ամսի չափ մնալուց հետո բժիշկների խորհրդով մեկնեցի Հելվան, որ Կահիրեից մի 50 կիլոմետր դեպի հարավ ընկած հանքային ջրերով և կլիմայական մի կուրորտ է: Եվրոպայից նրա թախծոտ ձմեռը չտանող փարթամ ապրած լորդեր ու միլիոնատերեր են գալիս այնտեղ՝ հարավի արևը, ավազի տաքությունը և ջրերի վաննաները ընդունելու համար: Հոյակապ տներ ու փառահեղ հյուրանոցներ լիքն են շռայլ կյանքի վարժված հասարակությունով:

1905 թվի փետրվար և մարտ ամիսները այդ շվայտ տեղում անցրի: Բայց այդ փարթամ կյանքն ինձ համար չէր իհարկե, և հեղափոխականին վայել էլ չէ այդ կյանքի մոտով անցնել: Իմ մեջ կղզիացած, ամեն օր նշանակված հանքային ջրի վաննան էի ընդունում, ապա գնում մենակ թափառում գարնան արևից ջերմացած Սահարայի ավազի մեջ: Հեռվից երևում են Նեղոսի պղտոր, բայց կենսատու ջրի հոսանքը և նրա երկու ափերի վրա ցցված անվերջ շարքերով հին-հին պիրամիդաները[1]: Այս երկրի հին տերերը նրանց մեջ են հանգչում, և անապատային լռության մեջ նրանք իրենց հավիտենական քունն են առնում: Փարավոնների դամբարաններ են դրանք:

[1] Բուրգերը:

Այդտեղ, Հելվանի իմ անհոգ կյանքի միջոցին էր, որ եվրոպական հեռագրերը հաղորդեցին Սոֆիայի մոտ Վիտոշ լեռան վրա ռումբի փորձի ժամանակ նրան զոհ գնացած Խրիստաֆորի և Վռամշապուհի[1] մահվան մասին: Մեր մեծ ընկերը հեղափոխականի նի իր դիրքում ընկավ: Եվ ես, որ այնքան մեծ ցանկություն ունեի տարիներով քաշածս կարոտն առնել, անձամբ հետը խոսելով, այլևս զրկված մնացի այդ մխիթարությունից: Հելվանի շքեղ կյանքի մոտ ապրողին երևի վիճակված չպիտի լիներ հեղափոխական կյանքը դարբնող այդ մեծ հեղափոխականի հրաժեշտի ողջույնին:

Հանքային ջրերն ինձ առանձին օգուտ չբերին. իմ ցավերը շարունակվում էին: Այնքան ինձ վատ էի զգում, որ երբ Ժնևի ընկերներս ինձ հրավիրեցին իրենց մոտ, և ես [1905 թ.] մայիսին արդեն այնտեղ էի. Է. Ակնունին[2] ինձ տարավ հայտնի պրոֆեսոր Barr-ի մոտ: Նա երկար քննելուց հետո ինձ համար դեղեր գրեց, խորհուրդներ տվեց, բայց Ակնունիին առանձին ասել էր, որ իմ առողջությունը շատ խախտված է ամեն կողմով, և եթե արտաքինով մի քիչ առույգ եմ երևում, այդ էլ խաբուսիկ երևույթ է՝ ինչպես հին ու խարխուլ մի տուն դրսից ներկված խաբուսիկ է. ուստի, ասել էր պրոֆեսորը, թրքական բանտի այդ զոհին թողեք հանգիստ ապրի, շատ ման գալ լեռնային տեղերում, մի քիչ կյանք վայելի, որովհետև ամենաշատը երկու տարի կարող է ապրել, ոչ ավելի: Հետո, երբ ես սկսեցի քիչ-քիչ կազդուրվել, Ակնունին հաղորդեց պրոֆեսորի խոսքերը: Եվ ինչ՝ ահա անցել է ավելի քան 22 տարի այդ օրից և ես դեռ ապրում եմ ու աշխատում, իսկ պրոֆեսոր Barr-ը 10 տարուց ավելի է ինչ այս աշխարհից ընդմիշտ հեռացել է:

---

[1] 1905 թ. մարտի 5-ին (17-ին) Գրիգոր Միքայելյանը և Վռամշապուհ Գևորգյանը զոհվեցին Սոֆիայի մոտ, Վիտոշ լեռան բարձունքին, ձեռնաոումբերի փորձարկման ժամանակ:

[2] **Խաչատուր Մալումյան** (Է. Ակնունի, 1863–1915), հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

Հելվանում էի, որ կովկասյան թերթերը հաղորդում էին թուրք-հայ[կական] ընդհարումների մասին[1]: Նոր մի դարաշրջան էր սկսվում հայ ժողովրդի համար, մի տխուր, մի ցավագին դարաշրջան: Կողք-կողքի դարերով ապրած երկու ժողովուրդներ հիմա չեն տանում իրար[2]: Այս երևույթը իմ հոգին ցնցեց: Մենք մտածում էինք տաճկահայությունը փրկել իր դժվարին կացությունից, նրա համար հանգիստ ու ապահով մի կյանքի ձև գտնել, հանկարծ կովկասահայության համար դժվարին ու նրա գոյության դեմ սպառնալից մի դրություն է առաջ գալիս: Որքան և այդ երևույթի պատճառների մեջ կովկասյան սատրապների սադրանքը որոնենք ու անգամ գտնենք, արդյոք մի րոպե չենք անդրադառնում այլուր որոնելու այդ պատճառներից ամենաիիմնականը. արդյո՞ք մեր տարիների ջանքը [18]90-ական թվականներից սկսած մինչև 1905-ը հայ ժողովրդին Տաճկաստանում լավագույն կյանք ստեղծելու գործում, ի վնաս տեղական թուրք ազգաբնակչության շահերի չի՞ կատարվել:

Արդյոք մենք կարողացե՞լ ենք մեր ժողովրդական շարժումը Տաճկաստանում առաջնորդել այնպիսի մի հունով, որ զուգադիպեր թուրք և այլ ժողովուրդների ազատագրական շարժման հունին: Այս հարցի հանդեպ մենք մի քիչ պիտի կանգ առնենք ու կտեսնենք, որ մենք ինքնամփոփ գործ ենք կատարել, մեր ժողովրդի կյանքից դուրս, կղզիացած մի միջավայրում ենք պատկերացրել, և այդ իսկ պատճառով էլ մեր կամքից անկախ մեր ժողովրդի ամեն մի շարժում Տաճկաստանում բացասաբար է անդրադարձել իր հարևան մահմեդական ցեղերի վրա:

Բավական է, որ ընդհարումների ժամանակ սպանվել է թուրք զինվոր, թուրք ժանդարմ: Ես չեմ խոսում սպանված ոչ զինվորի, այլ

---

[1] Նկատի ունի 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները:

[2] Ինքնին հասկանալի է, որ Մաւր-ը այլ բան չէր կարող գրել՝ փորձելով բացատրել հայ–թաթարական հակամարտությունը խորհրդային տարիներին:

սովորական բնակչի մասին, որ կամա կամ ակամա դուրս է եկել հայ հեղափոխականի դեմ: Բացի այդ, կռիվների ընթացքում ամբողջ շրջաններ ավերվում են, հողը մնում է անմշակ, տեղահան է լինում և մահմեդականը, ասել է տնտեսապես քայքայվում է և նա: Նրա հոգում ոչ մի բան չի արդարացնում այդ քայքայումը: Նա ոչ մի հեռանկար չունի ապագա լավ կյանքի համար, իսկ ներկան միայն վատ է նրա համար: Պարզ է, որ նա պիտի թշնամանա ոչ միայն այդ շարժումներին, այլև նրանց հեղինակներին, որոնք նրա աչքում բոլոր հայերն են: Եվ այդ թշնամությունը ծավալվում է գավառից գավառ, երկրից երկիր: Կովկասն էլ այդ երկրներից մեկն է, կից տաճկական Բասենին[1], Բայազետին, Էրզրումին: Համակրություններն ու հակակրությունները ազգային իմաստով սահմանները շատ ավելի ազատ են անցնում, քան քաղաքակրթության բարիքները և որովհետև կովկասյան թուրքը նույն թուրքն է ինչ Թուրքիայումն է ապրում, պարզ բան է, որ այնտեղի հակակրությունը դեպի հայը պիտի անդրադառնար և Կովկասի կյանքի վրա:

Ես մի տեղ ասել եմ, որ մարաշցի թուրքը իր լեզվով շատ ավելի հասկանալի է Բաքվի թուրքին, քան օրինակ Զանգեզուրի հայը կամ ղարաբաղցին, Նոր Բայազետի կամ Ալեքսանդրապոլի հային: Եթե Շիրակի հայը կերթա Վանի հայության շահը պաշտպանելու, նույն հոգեբանությամբ Բաքվի թուրքը կամ Նախիջևանի թուրքը կվազի Ալջավազի[2] թուրքին պաշտպանելու: Եվ որովհետև նա՝ Կովկասի թուրքը ավելի անկազմակերպ է, քան հայը, ուստի և փոխանակ զենք առնելու ու Տաճկաստան մտնելու, ինչպես հայն է անում,

[1] 1878 թ. Բեռլինի դաշնագրով Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը վերադարձնում է պատերազմի (1877–1878 թթ. ռուս-թուրքական) ընթացքում գրաված Ալաշկերտի հովիտը, բացի Բասենի 40 գյուղերից: Նրանցից կազմվում է փարչական նոր միավոր՝ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Խորասանի տեղամասը, որը նաև կոչվում է «Ռուսական Բասեն»: Օսմանյան տիրապետության տակ մնում են Բասենի 98 գյուղ, որոնք անվանվում են «Թուրքական կամ Տաճկական Բասեն»:

[2] Արծկե:

նա այդ անում է ավելի կոպիտ կերպով, վերցնում է իր հրացանը ու վազում է իր անմիջական հարևան հայ գյուղի վրա: Չէ՞ որ հենց այդ հայ գյուղից մեկնումեկը այդ միջոցին իր զենքով պաշտպանում է Թուրքիայում մի հայ գյուղի շահ: Արդեն պարզ է, թե ինչպես զարգացավ կովկասյան հայ-թրքական ընդհարման գործը: Բայց սա միայն հիմունքն է, գործի հոգեբանական կողմն է, նյութականը, դրդումը արդեն արտաքին կողմն է: Այդ դժվար է, եթե ներքինը գոյություն ունի և կովկասյան սատրապները շատ դիտել են հիմնականը, հոգեբանականը, հարկավոր է միայն թույլ տալ, աչք խփել: Ես չեմ թաքցնում հիմնական մոտիվներից[1] մի կարևորը. մեր հարուստ դասակարգի ագրեսիվ քայլերը կովկասյան կենտրոններում և հատկապես Բաքվում առևտուրն ու նավթի շահագործումը իր ձեռքը գցելու գործում: Սա կա. բայց դրա կողքին կա և թրքահայ շարժման ամբողջ գործը, որը կամաց-կամաց մի խոր վիհ բաց արեց ընդհանրապես մի կողմից հայության և մյուս կողմից թրքության միջև, լինի դա տաճկական թուրք, թե կովկասյան: Որովհետև այդ երկու թուրքը միևնույնն, թե լեզվով, և թե՛ ինչպես որ հայը մեկ է ուր և լինի նա, Կովկասում, թե Թուրքիայում:

Մեր ժողովրդական շարժման գործում անտես ենք արել այդ կարևոր կետը՝ մեր ժողովրդի շահի կողքին թերագնահատել ենք նրա հարևանի՝ թուրքի շահը և մանավանդ անգիտացել ենք, արհամարհել ենք այդ բարոյական կապը, որ կա օսմանյան և կովկասյան թուրքերի միջև: Սա խոշոր բաց է, որ ունեցավ իր կատաստրոֆիկ[2] ազդեցությունը մեր ժողովրդի կյանքի վրա: Մենք պիտի խոստովանենք այդ: Ինձ պիտի հարցնեն, թե ինչու կովկասյան ընդհարումները տեղի չունեցան [18]90-ական թվականներում, երբ մեր հայդուկային շարժումները, մանավանդ Վանի շրջանում,

[1] Դրդապատճառը:
[2] Աղետալի:

մեծ չափեր էին ստացել: Այդ ճիշտ է: Ես բացատրեմ թուրք ժողովրդի կյանքի մի բնորոշ կողմը և ամեն ինչ պարզ կլինի:

Ինչպես հայտնի է, մի երկրի բանտում համախմբվում է այդ երկրի ամենից փչացած տարրը: Խոսքս չի վերաբերում քաղաքական իանցավորներին: Բանտում շատ ավելի պարզ գույներով է երևում ժողովրդական հոգու այն գիծը, որ նույն երկ րի սովորա կան ժողովրդի մեջ դժվարությամբ կարելի է դիտել: Հինգ ու կես տարի անընդհատ ես ապրել եմ թուրք ոճրագործների, մարդասպանների, գողերի, ավազակների հետ կողք-կողքի: Իմ տարիների դիտողությունը ինձ համոզել է, որ թուրք ժողովուրդը օրենքի, կարգուկանոնի ենթակա, դիսցիպլինի[1] վարժված մի ժողովուրդ է: Նրան հարկավոր է առաջնորդ. այդ առաջնորդի հետևից նա կգնա ամենուր. եթե հրամայված է կոտորել, նա կկոտարի: Նրա ներքինը, հոգեկանը (անհատական իմաստով) շատ նեղ է, աղքատ: Փչացնելը, քանդելը, սպանելը նրա համար խղճի հարց չէ, այլ դժոխքում այրվելիս մի կտոր փայտի, մի կոճղի հավելում պիտի լինի, բայց վերջը, միևնույն է՝ նա իբրև մահմեդական, դրախտ պիտի գնա: Բայց եթե առաջնորդը նրանց տանի դեպի մի շինարարական գործ, դա էլ կկատարի նույն ճշտությամբ: Այդպես է հրամայված, ուրեմն դա լավ բան է, պիտի կատարել:

Թուրք ժողովուրդը դեռ քաղաքակակրթության բարձրունքին չի հասել. եթե հասնի, անպայման նա շատ առաքինություններ ի հայտ կբերի: Լավ սաղմեր կան նրա մեջ, որ չի կարող արտահայտել: Քաղաքակրթությունը նրան շատ կբարձրացնի: Այդ ժողովուրդը դժբախտ է, որովհետև նրա առաջնորդները նրան տանում են դեպի անկումներ: Ավելի շուտ երկրի օրենքները նրան առաքինի ուղիներ չեն ցույց տալիս: Կրոնը և կրոնականները օգտվում են

[1] Կարգապահության:

նրա տգիտությունից և նրան մղում իր հարևանի դեմ: Բայց նույն առաջնորդը, նույն կրոնավորը, եթե կրթված մարդ է, նրա հետևից գնացող ամբոխը շատ համբերատար է: Բանտային կյանքում թուրք ամբոխը հայի վրա հարձակվում էր այն ժամանակ, երբ նրան դրդում էին կամ բանտի պաշտոնյաները կամ զորբա բանտարկյալ, բայց մի մատի շարժում հակառակ իմաստով վերից տրված՝ այդ ամբոխին գառ էր դարձնում, չքմեղանք, ապաշավում, եղբայրությունն իսկույն մեջ էր գալիս: Այդ նույն երևույթը տեղի ունի և դուրսը՝ կյանքի մեջ: Առանց դրսի կարգադրության թուրք ժողովուր դը խաղաղ ապրել է հայ դրացու հետ:

Քանի սուլթանը չէր կարգադրել, որ հայերին կոտորեն, ոչ ոքի մտքով չէր անցնում այդ քայլն անել: Կարգադրություն եղավ, գործը կատարվեց: Նույնը և կովկասյան ընդհարումների մասին: Հոգեբանական կողմը պատրաստ էր, թուրքը տրամադրված էր հայության դեմ. այդ լավ տեսնում են կովկասյան ներկայացուցիչները, սատրապները: Ինչու՞ թուրքերին չշպրտել հայերի վրա: Երկուստեք կկոտորվեն, կտուժեն ու հեղափոխական շարժումը Կովկասում կթուլանա: Մինչև այդ թուրքի մտքով անգամ չէր անցել հավաքաբար հայության դեմ դուրս գալ՝ օրենք կա, զորք կա, կարգ: Ինչպե՞ս կարելի է այդ բոլորի գլխով թռչել: Բայց ահա նրան հասկացնում են, որ օրենքը նրա դեմ չի լինի և ոչ էլ զորքը, եթե նա հարձակվի: Եվ ահա կովկասյան ընդհարումները դառնում են սովորական երևույթներ:

Հեղափոխական գործի ղեկավարները պետք է այնքան հեռատես լինե[ի]ն, որ նման երևույթների հիմունքները նախատեսեին և իրենց գործունեությունը վարեն այնքան զգուշորեն, որ մեկ ժողովրդի շահը պաշտպանելու գործում, մյուս ժողովրդի շահերը չտուժեն, և ընդհակառակը բոլոր հարևան ժողովրդի շահերն այդ գործում զուգադիպեն: Ով այս օրենքը զանց անի, նա ինքը պիտի տուժի:

Մեր ժողովրդական շարժման գործում այս կարևոր հանգամանքը նկատի չառնվեց: Այս պիտի անկեղծորեն շեշտել:

Դեռ Հելվանում էի, մի օր Կահիրեից ընկերները գրեցին, թե այսինչ օրը մի ընկեր պիտի գա Հելվան ինձ մոտ ու ես նրան պիտի հանդիպեմ կայարանում, որովհետև քաղաքին ծանոթ չէ: Նշանակված օրը կայարան գնացի և սպասում եմ: Դժվարանում եմ գուշակել, թե ով պիտի լինի: Գնացքը կանգ է առնում և վագոնից դուրս է ընկնում Սիմոնը ու փաթաթվում ինձ: Այուրպրիզ է սարքել, որ ավելի մեծ հաճույք պատճառի ինձ: Ճիշտ ութ տարի հետո նրան տեսնում եմ: Վերջին անգամ նրա մոտ եմ եղել 1897-ի գարնանը, երբ նրա սենյակում քնած էի՝ ցարական ժանդարմները ներս մտան, խուզարկեցին տունը և ոչինչ չգտնելով գնացին: Հաջորդ օրը, երբ ես տանը չեմ լինում, գալիս են իրեն տանում բանտ: Ինձ փնտրում են, չեն գտնում: Ես էլ անցնում եմ Գանձակ ու արտասահմանյան անցագիր ձեռք բերելով Ռուսաստանից դուրս եմ փախչում: Ինչպե՛ս փոխված է, ինչպե՛ս մաշված է: Նա էլ գտնում է, որ ես անճանաչելի եմ դարձել, այնքան նիհարել ու թարմությունս կորցրել: Գնում ենք սենյակս, խոսում մեր գործերի մասին: Ոգևորված է, խոսում է Բեյրութի երիտասարդության մասին: Այնտեղ շատ գործ կա անելու, բայց մարդ չկա: Իրեն չեն թողել աշխատի, ռուսաց հյուպատոսի միջոցով առաջարկել են երկրից դուրս գալ և, ահա, դուրս է եկել ու պարտքն է համարել գահիվանդ բանտարկյալիս տեսնելու: Որքա՛ն ուրախ է, որ ես կենդանի եմ, եթե ոչ առողջ:

– Ոչի՛նչ, աշխատանքը ամեն ինչ մոռացնել կտա: Բանտը մարդուն հեղափոխական է դարձնում: Առողջացի՛ր, ավելի լավ կտանես գործդ: Այսպես է խոսում ու ինձ սիրտ տա լիս:

Խոսակցությունը վերջացնելուց հետո հետաքրքրվեց իմ ապրուստի հաշիվներով. ես էլ ըստ իմ խնայող բնավորության, ինչպես որ բանտումն էի անում, ծախսերս մեկ-մեկ գրել եմ: Ցույց տվի՝ ամ-

սեկան 90 ֆրանկ էր, չհաշված վաննաների փողը: Եթե սենյակիս վարձը՝ 30 ֆրանկ հանենք, մնում է զուտ սնունդը՝ 60 ֆրանկ, մեր փողով 22 ռուբլուց մի քանի կոպեկ ավելի:

Շատ գոհ մնաց.

– Էլի՛ էն Միքայելն ես. աշխարհը փոխվել է. մեր կազմակերպությունը հարստացել, ուզածի պես ծախսում են:

Եվ նա տառապած պատմեց, որ ահագին դրամներ են ծախսվում ճանապարհորդության, սննդի համար, և շատ դժվար է լինում այդ նոր երևույթի դեմ կռվել:

Հիշեցինք մեր անցյալ գործունեության աղքատ, բայց միշտ զվարթ՝ ճամբի ծախքը ամոթ էր վերցնել: Հյուրանոցում ո՞վ էր իջնում՝ իրար մոտ էինք ապրում: Եվ շատ լավ հիշողություններ [18]90-ական թվերի մեր գործունեությունից: Եվ իսկապես այդ ժամանակ մեր եկամուտները շատ շատացել էին: Բայց դա վատ էր անդրադարձել մեր գործիչներից շատերի ապրուստի վրա: Ես շուտով իմացա, որ մեր Հրաչյան, այդ վառվռուն հեղափոխականը, Զմյուռնիայում և ապա Բոդրում բերդում ահագին դրամներ է ստանալիս եղել և՛ Պոլսից և՛ Կովկասից և՛ Բուլղարիայից, ահագին իմ բանտի ծախսերի համեմատությամբ ու դարձյալ չի կարողացել կարգին կյանք վարել: Ընկերները շարունակ դրամ են պահանջել և նա չի կարողացել բոլորին բավարարել ու դրանից ահագին կռիվներ են առաջացել այն աստիճան, որ քիչ է մնացել Հրաչին սպանեն: Դրամի շատությունը ինչի է հասցնում երբեմն:

Սիմոնը միշտ մարդկանց հաշիվներն էր ստուգում և միշտ մի մտահոգություն ուներ, որ հեղափոխական գործի համար հավաքված դրամը միայն այդ գործի վրա ծախսվեր: Բոլոր կեղծ հեղափոխականներին ատում էր և տանել չէր կարողանում՝ դրա համար շատերից ինքը չէր սիրված, թեև նրա հեղինակության առաջ բերան չէին կարող բանալ: Դեռ աչքիս առաջ է այդ սիրելի դեմքը,

միշտ քննող, միշտ հարցասեր, միշտ իր ժողովրդի ցավերով ապրող այդ մեծ հեղափոխականը, որի նմանը ինձ դեռ չի պատահել: Նրա վեճը, նրա արդար զայրույթը ապիկարների հասցեին դեռ ականջումս են: Մարգարեական իր տրակտատները[1] դեռ կենդանի էին, թեև ինքը վաղուց է, որ չկա այս աշխարհում: Վաղուց է, որ հեռացել է մեզանից մեր ամենասիրելի ընկերը, ազնիվ մարդը և կատարյալ հեղափոխականը: Եվ ես այժմ հիշում եմ նրան ու այդ հիշումը իմ մեջ զարթեցնում են նրա հոգու բարձրությունը և աննկուն սերը դեպի իր ժողովուրդը: Ուստի և իմ այս հիշատակարանը նվիրում եմ այդ մեծ հայի՝ Սիմոնի անմեռ հիշատակին, և դրանով էլ փակում եմ սույն երկար հիշտակարանը:

[1] Երկերը:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՐՎԱԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

1928 թվականի օգոստոսի 1-ից[1]:

Բռնության ճիրաններից այդքան անսպասելի կերպով ազատվելը և այն գիտակցությունը, որ թուրք կառավարությունը չկարողացավ համոզվել, թե ես հայ եմ և հետևաբար դրսի (կովկասյան) հայության կողմից Կիլիկիան ոտքի հանելու փորձեր չեն լինելու, ինձ հոգեպես հանգստացնում էին: Չէ՞ որ Կիլիկիայում գործունեությունը կարելի է շարունակել: Իսկ դա ամենակարևորն էր: Սիմոնն[2] այնտեղից էր գալիս, Վարդանը[3] գնում էր ներս, կապերը շարունակվում էին: Ճիշտ է, նրանք հայեր չէին[4] , բայց իմ հայ լինելը հաստատվելուն պես ամեն մի օտարական այդ շրջանում կասկածի առարկա կդառնար, հետևաբար հայկական շրջաններ անցնել անհնար կլիներ: Ես իմ բանտային կյանքով կարողացել էի գոնե այդ փրկել և գոհ էի: Յոթ տարվա ընթացքում ես կտրված էի դրսի աշխարհից: Ի՞նչ է անցել կուսակցության գլխով. ի՞նչ դրության մեջ է այժմ, ի՞նչ նվաճումներ է արել, ի՞նչ նոր դեմքեր են երևան եկել, ի՞նչ վերաբերմունք կա հասարակության մեջ դեպի մեր գործունեությունը. ահա հարցեր, որոնք ինձ գերազանցորեն հետաքրքրում էին: Ես տկար էի, անձնապես գործի մեջ չէի մտել, զբաղում չունեի: Ազատ ժամանակ ունեի տեսնել ու դիտել կյանքը, զգալ այն խոշոր փոփոխությունը, որ կատարվել է նրանում ընդհանրապես: Տարիներ ես քնի մեջ եմ եղել իմ կամքի հակառակ. կյանքը վազել է առաջ: Շատ բան տարօրինակ է երևում: Բայց ինձ հատկապես հե-

[1] Այս մասից Մար–ը շարունակել է իր հուշերը:

[2] Նկատի ունի Սիմոն Զավարյանին:

[3] Նկատի ունի Սարգիս Մեհրաբյանին՝ Խանասորի Վարդան:

[4] Նկատի ունի այն իրողությունը, որ նրանք Թուրքիայում ներկայանում էին որպես օտարազգիներ:

տաքրքրում է մեր կազմակերպության դրությունը: Նա ուռճացել է, փարթամացել, դիրքեր գրավել: Հնչակյան շարժումը բոլորովին ‘կանգ է առել: Հնչակյան գործիչները հրապարակից քաշված են: Եգիպտոսն, ուր [18]96–[18]97 թվերին Դաշնակցության մասին նորնոր էին լսում, այժմ ամբողջովին Դաշնակցությանն է հարել: Հնչակյան գործիչների հոխորտանքներն այլևս չկան: Նրանք հիմա համեստ են և աստիճանաբար անցնում են մեր կողմը: Մյուս կողմից հասարակության մեջ մեծ համակրանք կա դեպի Դաշնակցությունը:

Կիպրոսից ինձ ծանոթ Ճերմակյան Հարությունը, երբ ինձ պատահեց Ալեքսանդրետում և իմացավ իմ պատմությունը (ես ոչ ոքի չէի հայտնում իմ բանտային կյանքը և դրա հետ կապված իմ ոչ հայ լինելը, որպեսզի թուրք կառավարությունը Կիլիկիայի մեր գործունեությանը ուշադրություն չառնի: Մեր ամենամոտիկ մի քանի ընկերներ միայն գիտեին այդ: Եվ երբ մեր ընկերներից մի քանիսը պնդեցին, որ իմ հիշողությունները գրեմ տպագրության համար, ես մերժեցի՝ նկատի ունենալով, որ այդպիսի մի հրատարակություն թուրքերի աչքերը բաց կանի և Կիլիկիայի մեր գործունեությունը կվտանգի, թեև այդ ժամանակի համար նման մի պատմություն խիստ նպաստավոր կլիներ կուսակցության համար պրոպագանդային տեսակետով, իսկ ինձ համար անձնապես ինքնասիրությունը շոյող մի ռեկլամ[1]: Այդ ժամանակ ես ոչ մի կերպ չէի ուզում ցուցադրել ինձ ու այդ ուղղությամբ չէի էլ մտածում: Ես ունեի ոգևորության համար շատ ավելի մեծ նպատակներ՝ դա մեր ժողովրդի ազատագրության խնդիրն էր և նրան օժանդակող այս ու այն հեղափոխական միջոցները: Անձնական չնչին ինքնասիրություննե-

[1] «Դրօշակի» 1906 թ. № 5–7 համարներում տպագրվել են Մ. Տեր-Մարտիրոսյանի բանտային հուշերը, որոնք որոշ տարբերությամբ կրկնում են սույն հրատարակության մեջ ներկայացված դեպքերն ու փաստերը:

րը մեծ նպատակների մոտ երևան գալու համար ոչնչություն են), զարմացավ և առաջարկեց ինձ տանել ներկայացնել Կահիրեում հայտնի հարուստ կալվածատեր Աղաթոն բեյին ասելով, որ նա խիստ հետաքրքրվում է ինձ նման մարդկանցով, որ ինձ սիրով կընդունի և վերջը, եթե պետք լինի, ինձ մի պաշտոնի կդնի իր կալվածքներում: Ինքը՝ Ճերմակյանը, հենց նրա կալվածքում պաշտոնյա էր: Այդ առաջարկը բավական կոպիտ կերպով մերժեցի և հանդիմանեցի, որ նա այդպիսի կարծիք ունի մեր հեղափոխական գործիչների վրա[1]: Ճերմակյանը գտավ իր առաջարկը շատ տեղին և օրինակ բերեց Հնչակյան գործիչները՝ Տամատյան[2], Ռշտունի[3], որոնք պաշտոնյաներ են հայ հարուստների գործերի վրա: Այդ ճիշտ է, ես այդ գիտեի: Բայց և այնպես ես չեղա և ոչ մի հարուստ հայի մոտ և խնդրեցի Ճերմակյանին, որ ոչ ոքի էլ չպատմի իմ մասին: Նա զարմացել էր իմ բռնած դիրքի վրա դեպի հարուստները:

Ի դեպ. այնպիսի կարծիք կա, որպես թե հայկական շարժումը բուրժուական շարժում է թելադրված հայ հարուստներից, վաճառականներից՝ իբր թե նրանց համար ազատագրված Հայաստանը մի ընդարձակ շուկա պիտի դառնար: Բայց ո՛ւմ հայտնի չէ, որ հայ հարուստների սրտով չէր երբեք հայկական շարժումը: Գործիչներից և ոչ մեկը հարուստ չէր, և երբ սրանք հարուստներին էին դիմում նյութական օժանդակություն ստանալու համար, միշտ մերժվում էին և ծաղրի առարկա դառնում: Այդ բոլորը տեսնելու և ըմբռնելու համար պիտի մի քիչ ետ դառնալ դեպի մեր շարժման սկզբները, դեպի

---

[1] Մասին:

[2] Տամատյան Միհրան (1863–1945), հասարակական, ազատագրական, քաղաքական և պետական գործիչ, Հայ ահմանադրական ռամկավար: 1920 թ. օգոստոսի 4-ին Կիլիկիան հռչակել անկախ հանրապետություն Ֆրանսիայի հովանավորության տակ, սակայն ֆրանսիական իշխանությունները ցրել են հայկական կառավարությունը:

[3] Ռշտունի Անտոն, հնչակյան և ապա՝ վերակազմյալ հնչակյան գործիչ, 1889 թ. Ալեքսանդրիայում հրատարակել է «Նեղոս» շաբաթաթերթը:

[18]80-ական թվերը, թե ինչպես հայ հարուստը թե Կովկասում և թե Թուրքիայում հակառակ էին այդ շարժման: Դրանից հայ բուժուան ոչ մի շահ չուներ: Հայտնի է, որ հայ հարուստի համար շատ ընդարձակ շուկաներ կային ոչ միայն Անդրկովկասում, ոչ միայն Թուրքիայում և թրքահայ գավառներում, այլև ընդարձակ Ռուսաստանում, Եվրոպայում, Եգիպտոսում: Հայ հարուստն ամենուրեք ասպարեզ ուներ հարստանալու և իր ցանցերը տարածելու: Հայկական ազատագրումով շահագրգռված էր հայ աղքատը, հայ երկրագործը, արհեստավորը, որն իր աղքատիկ վիճակը մի քիչ մխիթարական դարձնելու միջոց էր համարում ստրկական դրությունից սոսկ մարդկային ազատ շունչ քաշելու գրավիչ հեռանկարը: Իհարկե, նա, այդ աղքատը, այդ երկրագործը կարող էր իր հաշիվների մեջ սխալվել, կարող էր զգացմունքներով տարվել, բայց այդ հանգամանքը չի փոխում կացությունը: Ուրիշ կերպ ինչով բացատրել այն հանգամանքը, որ հայկական շարժման մեջ զոհաբերություն անողները, իրենց անձը տվողները եղան ընդհանրապես խոնարհ խավի զավակները: Մինչ այդ ժամանակ հայ հարուստը իր փարթամ կյանքն էր վայելում և մատը մատին չէր խփում շարժումը մի քիչ առաջ տանելու համար: Փաստ չէ՞ միթե այն, որ հեղափոխական կազմակերպությունները հարուստներից դրամ էին կորզում սպառնալիքների և երբեմն էլ տեռորների միջոցով: Եվ պակաս փաստ է նաև այն, որ այդ հարուստներն էին վազում կառավարությունների մոտ թե Կովկասում և թե Թուրքիայում ու հեղափոխականներին պետական իշխանության հանձնում:

Հայկական շարժումը պարզապես ազգային-ժողովրդական շարժում էր: Նրա մասնակից էին հայ ժողովրդի բոլոր զանգվածները, բոլոր դասակարգերը՝ և՛ հարուստը և՛ աղքատը և՛ հոգևորականը. չպիտի մոռանալ, որ Րաֆֆիի երևակայական ծրագրերի դեմ

ծառացավ մի տերտերացու, մի երդվյալ հետադեմ մարդ՝ Հայկունի, հետագայում Գեղամյան[1] քահանան: Դրանով խոմ չենք կարող ասել, թե այդ շարժումը հոգևորականներից հալածվել է, ոչ, երբեք: Գեղամյանի դեմ կանգնած են եղել բազմաթիվ հոգևորականներ՝ Թավաքալյանները[2]՝ շարժման կողմը, ինչպես նաև չենք կարող ասել, թե բոլոր լիբերալները, ինտելիգենտները եղել են այդ շարժման կողմը, որովհետև Արծրունին, Րաֆֆին այդ են քարոզել: Պետրոս Սիմոնյանները[3], Սպանդար Սպանդարյանները[4] հակառակն են պնդել: Պարզ չէ՞ միթե, որ այդ շարժման մեջ որոշ դասակարգային գիծ չկա: Եվ եթե մի Աղաթոն բեյը շատ լավ վերաբերմունք ունի դեպի հեղափոխական այս կամ [այն] անձնավորությունը, դա էլ առաջ է գալիս մի քմահաճ ինքնաբավականությունից, որ իր մոտ են գալիս ազգային գործիչները, և բան է, եթե մի օր Հայաստանը ազատագրվի, ինքն էլ իբր նրա մի զավակը իրեն հավասար կզգա մի հույնի, մի իտալացու, որոնք ազատագրված հայրենիքներ ունեն, որոնց հետ միշտ շփման մեջ է և որոնց շրջանում ինքն էլ ազատ հայրենիքով պարծենալու առիթ կունենա, թեպետ և երբեք չի գնա այնտեղ բնակվելու, քանի որ նա իր հարստությունը կապում է օտար երկինքների [երկրների] հետ և օտարների շրջանում նա իրեն զգում է այնպես, ինչպես ձուկը ջրում:

Դաշնակցությունն այդ ժամանակ իր ծաղկման ամենաբարձր կետին էր հասել: Հայ ժողովրդի մեջ նա համապարփակ դիրք էր գրավում: Նա ճյուղեր ուներ ոչ միայն Կովկասի, Տաճկաստանի հա-

---

[1] **Եղիշե ավագ քահանա Գեղամյանց** (Հայկունի, 1840–1920), պատմաբան, հրապարակախոս:

[2] **Բագրատ վարդապետ Թավաքալյան** (Ալեքսանդր Թավաքալյան, Ջաքի, 1850–1902), հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1892–1894 թթ. Ատրպատականի Դերիկի վանքի վանահայր:

[3] **Սիմեոնյան Պետրոս** (1830–1911), «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր:

[4] **Սպանդարյան Սպանդար** (1849–1921), հասարակական գործիչ, հրապարակախոս «Նոր Դար» օրաթերթի խմբագիր:

յաբնակ բոլոր քաղաքներում, այլև գաղութահայ բոլոր երկրներում: Նրա հասույթները հարյուրապատկվել էին, համեմատելով [18]96–97 թվականների հետ: Այդ ամենն ավելի աչքի էր ընկնում Ժնևում, ուր ես եղել էի 1896-ին և այժմ նորից եմ գնում 1905-ին: Ամբողջ ինն տարի է անցել: [18]96-ին խմբագրությունը գրավում էր մի սենյակ Կարուժի Լիրսի մի խուլ փողոցում, այժմ նա գտնվում էր Roseraie-ում և տեղավորված էր ամբողջ մի վիլլայում, իր գեղեցիկ պարտեզով և պարապելու համար հնարավոր մի խաղաղ միջավայրում: Առաջ ոչ ոք ռոճիկ չէր ստանում, բացի գրաշարը, այժմ մի գրաշարի տեղ երկուսն են, իսկ ռոճիկավոր աշխատակիցները 4 հոգի:

Ես չեմ հիշատակում այն անձնավորությունները, որոնք եվրոպական այս կամ այն երկրում պրոպագանդի հ[ա]մ[ա]ր ապրում էին և ստանում ապրուստի միջոցներ: Առաջ խմբագրատուն ոչ ոք չէր մտնում. նա հասարակական մի խոշոր կատեգորիա չէր ներկայացնում: Հարմարություն էլ չկար, որ այնտեղ նույնիսկ հայ ուսանողները հավաքվեին: Մի սենյակ, կեղտոտ, գրաշարի անկողին, թափթփված տառեր, և թերթերի կապոցներ: Այժմ ընդունելության համար դահլիճ կա, զարդարված կահկարասիքով, կա փոքրիկ թանգարան, որ հարուստ է այս ու այն գործիչներից մնացած հիշատակի իրերով, նրանց նկարներով: Կա արխիվ, ուր հազարավոր նամակներ, փաստաթղթեր, զեկուցագրեր, ժողովների արձանագրություններ, հավաքված բոլոր կոմիտեներից, հայկական հարցի շուրջ տեղի ունեցած գրականություն և կենդանի գրագրություն եվրոպայի հայասերների և քաղ[աքական] գործիչների կողմից:

Այդտեղ են հավաքվում Ժնևի ուսանող հայերը, իրենց ժողովները կազմակերպում, երբեմն տեսակցելու համար: Սա մի ժամադրավայր է շատերի համար: Նորեկ հայերը այնտեղ են վազում

իրենց ծանոթներին, բարեկամներին գտնելու, հասցեներ վերցնելու, խորհուրդներ հարցնելու, համալսարան դիմումներ կատարելու: Ոչ միայն հայ ուսանողներ, այլև օտարներ՝ ռուս, հրեա, բուլղար, լեհացի գալիս են, հետաքրքրվում և գտնում, որ և ոչ մի ժողովուրդ այդպիսի հարմարություն չունի իր տարագիր զավակների համար: Դա մի կիսապաշտոնական ներկայացուցչական վայր է միաժամանակ: Ժնևի բնակչությունը նրան է ճանաչում պատասխանատու հայ ուսանողի այս կամ այն արարքի համար: Մեկը տան վարձը չի կարողանում տալ, տանտերը վազում է խմբագրատուն և նրա միջոցով հարցը պարզում: Մեկ ուրիշը տարաձայնություն է ունեցել, նմանապես վազում է խմբագրատուն: Հաճախ ռուս, հրեա ուսանողներ դիմում են խմբագրատուն և խնդրում երաշխավոր լինել իրենց համար, որովհետև տանտերը սենյակ չի տալիս իրենց, չի վստահում: Խմբագրության հավաստիացումը ժնևացու համար ամենամեծ ապահովությունն է:

Քիչ չի պատահել, որ ծայրահեղ դեպքում խմբագրատունը վճարել է ուսանողի պարտքը, մինչև որ նա հայրենիքից դրամ ստանա: Խմբագրություն այցելում են համարյա բոլոր հայերը, որոնք ճամբորդում են Եվրոպայում: Ոչ միայն հայերը, այլև ռուս հեղափոխականներ, ֆրանսիացի, եվրոպացի դիվանագետներ, հայասերներ, բուլղար, մակեդոնացի, լեհացի հեղափոխականներ: Հայ գրողներից՝ Լեո[1], Պոռշյան[2], օտարներից Պլեխանով[3], Սարա-

---

[1] **Բաբախանյան Առաքել** (Լեո, 1860–1932), պատմաբան, գրող և հրապարակախոս:

[2] **Պոռշյան Պերճ** (1837–1907), հայ գրող:

[3] **Պլեխանով Գեորգի** (1856–1918), մարքսիզմի ռուս տեսաբան, ռուսական և միջազգային սոցիալիստական շարժման ակնառավոր գործիչ: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հիմնադիրներից:

ֆով[1], Լունկևիչ[2], Թյուֆեկչիեվ[3] և այլ անձինք: Հատկապես Լեոն՝ ի՛նչ հիացում, ի՛նչ ոգևորություն այնտեղ կատարվող աշխատանքի, երկրում տարվող գործունեության, «Դրոշակի» մեջ լույս տեսնող հոդվածների մասին, ի՛նչ գովասանք, խոսք չէր գտնում արտահայտելու իր հիացքը, երբ խոսում էր մեկնումեկի հետ:

Խմբագրության մեջ նկատվող փոփոխություններից ամենաաչքի ընկնողը նոր մարդիկ են, որոնք գիտեն իրենց դռները լայն բաց անել: Առաջ մի Յոնան Դավթյան կար, հին հեղափոխական, իդեալիստ, բայց հիվանդոտ ու քաշված մարդ: Հիմա գործի գլուխ են Մալումյան-Ակնունի, նախկին մշակական, «Մշակի» լրբերից մեկը, մի աշխույժ, գործունյա, ծախսող, երևացող դեմք, այնտեղ է Միքայել Հովհաննիսյան, Եվրոպայում մեր դատի պաշտպանը, որ հաճախ ժնև է գալիս ու Մալումյանից ոչ պակաս ազդեցիկ խմբագրական և ընթացիկ գործերում. նույնպես ծախսող, շփվող, ճառող, բայց նեղսիրտ, ջղային մի անձնավորություն: Այս երկուսը իրար լրացնում են և մի ամբողջություն են կազմում՝ որոշ գիծ անցկացնելու գործում: Սրանց երրորդ դեմքն է Ահարոնյան Ավետիսը[4], որ թեև այդ միջոցին Կովկասում է գտնվում, բայց մշտական հաղորդակցության մեջ է հիշյալ երկուսի հետ, և երեքը միասին կարողանում են իրենց փոխադարձ համաձայնությամբ գործերը վարել ոչ միայն արտասահմանում, այլև Կովկասում: Այս երեքը Խրիստաֆորի առաջ քաշածներն են և նրա մահվանից հետո փոխարինում են նրան, տանում նրա գիծը՝ պրոպագանդա Եվ-

[1] **Սաբաֆով Բորիս Պետրով** (1872–1907), բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդ: Սերտ կապեր է պահպանել ՀՅԴ դեկավար դեմքերի հետ: Նրա միջնորդությամբ Գ. Նժդեհը ընդունվել է Սոֆիայի ապստական դպրոցը:

[2] **Լունկևիչ Վալերիան** (1866–1941), սոցիալիստ-հեղափոխական:

[3] **Թյուֆեկչիև Նասում** (1864–1916), բուլղարացի հեղափոխական, ահաբեկիչ:

[4] **Ահարոնյան Ավետիս** (1866–1948), հայ հասարակական, բանաբանական, պետական գործիչ, գրող, ՀՅԴ անդամ:

րոպայում և շարունակել ցուցական գործողությունները: Ճիշտ է կուսակցության մեջ կան Ս. Զավարյան, Ռոստոմ, բայց երկուսն էլ իրենց հեղինակությունից օգտվել չգիտեն, տարվում են տեղական գործերով, ուր որ են (Սիմոնը Թյուրքիայի գավառներում, Ռոստոմը Կովկասում), խճողվում են մանր հարցերով, նվիրված են ու կլանված հազար ու մի հողային, դպրոցական խնդիրներով, հաճախ նույնիսկ պայթուցիկների ու նման միջոցների փորձերով ու բնականորեն ընդհանուր գործի վրա իրենց հեղինակավոր խոսքն ասելու և աջակցություն ունենալու շրջանակից դուրս են մնում:

Սիմոնը ամեն խնդրի մասին էլ գրում է իր հաճախակի նամակներում, կրկնում է ու երեքկնում մի անգամ գրածը: Շատ ճիշտ դիտողություններ է անում, կատարված սխալ քայլերը մատնանշում, բայց երբեմն էլ շատ միամիտ ու պարզ կերպով տարրական թելադրանքներ անում: Կարդում են խմբագրատանը և մի կողմ դնում: Իհարկե. հեռու երկրի ձայնը դժվար է հասնում տեղը: Լեռների մեջ կորած Մուշի ձայնը ինչ ազդեցություն կարող է ունենալ, երբ այստեղ եվրոպական հայասերները ամեն առթիվ և խոսում են և գրում են և ամբողջ մարդկությանը կոչ են անում՝ փրկել տանջվող ու չարչարվող հայ-քրիստոնյա ժողվուրդը մահմեդական լծից: Սա է կարևորը:

Եվ գալիս են հաճախ այդ հայասերները, այցելություններ են անում, խոսում, խրախուսում, խոսք տալիս ու գնում: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ հայասեր եվրոպացիները ընդհանրապես նույն վերաբերմունքն ունեն դեպի խմբագրատունը, ինչ վերաբերմունք ունեն եվրոպական պետությունները դեպի Հայկական հարցը: Եվրոպական պետությունները շահագործում են մեր խնդիրը՝ իրենց հաշիվները կարգադրելու համար Թուրքիայի հետ, եվրոպացի հա-

յասերները (կան բացառություններ, ինչպես Լեոպոլդ Ֆավրը[1] և այլն, որոնք միշտ հարգելի կմնան մեզ), շահագործում են մեր խմբագրատունը իրենց գրպանի հաշիվները մաքրելու համար: Ես այդ տպավորությունն եմ ստացել: Նրանք խոսակցության ընթացքում չէին մոռանում ասել, որ հայերը հարուստ են, շատ ոսկի ունեն, ուրեմն և հեշտ է նպատակի հասնել: Նրանց ամեն մի քայլը, ամեն մի հոդվածը պիտի լիուլի վարձատրվի: Նրանք տեսել են մի քանի հայեր, որոնք բոլորն էլ իրապես հարուստ են, և նրանց թվում է, թե ամբողջ հայ ժողովուրդը ոսկու մեջ է լվլվում, ու ինչ են կորցնում իրենք, եթե մի ճառ խոսեն կամ մի գրիչ շարժեն: Ոչ միայն այսօր են վարձատրվում ու փառաբանվում, այլև եթե մի օր հայ ժողովուրդը հրաշքով ազատագրվի, իրենք կհամարվեն հայ ժողովրդի առաջին բարերարները:

Ամեն մի հայասեր Ժնև գալիս անպատճառ բանկետի[2] պիտի արժանանա: Դրա համար հարկավոր է մի հյուրանոցի դահլիճ վարձել. խմբագրատան դահլիճը փոքր է, պիտի հրավիրել և Ժնևի հայասերներին և ահա մի կլորիկ գումարի ծախք: Այսպիսի հյուրասիրությունների վարպետ էր Մալումյանը: Մարդիկ համոզված էին, որ միջոցներից մեկն էլ այդ էր եվրոպացիներին կապելու համար մեր հարցին:

Ֆրանսիայում – Պարիզում[3] պրոպագանդի համար հատուկ թերթ ունեինք – «Պրո Արմենիա»[4], որ խոշոր գումար էր նստում մեզ

---

[1] **Ֆավր Լեոպոլդ** (1846–1922), շվեյցարացի հասարակական գործիչ: 1896 թ. սկսած ակտիվորեն հանդես է եկել Հայկական հարցի հետևողական պաշտպանության համար:

[2] Ճաշկերույթ:

[3] Փարիզ:

[4] «Պրո Արմենիա» ("Pro Armenia"). ֆրանսերեն երկշաբաթաթերթ: Լույս է տեսել Ֆրանսիայում 1900–1914 թթ.: Հրատարակության նախաձեռնողն էր Ջր. Միքայելյանը, գլխավոր խմբագիրը՝ Պիեռ Քիյառը, քարտուղարը՝ Ժան Լոնգվեն, խմբագրական կոմիտեի անդամները՝ Ժորժ Կլեմանսոն, Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորե-

մեզ վրա, բայց ի՛նչ տարածում ուներ: Ձրի էին բաժանում: Փող շատ, ամեն կողմից ստացվում էր և ըստ այնմ էլ ծախսվում:

Այստեղ արժե հիշել մի դեպք: 1905 թվի ամառը Պոլսում տեղի ունեցավ սուլթանի[1] դեմ մահափորձ: Դա մի անհաջող փորձ էր, որ ոչ մի հետևանք չունեցավ, բացի հսկայական ծախքը որ արվեցավ: Սակայն դրա շուրջը տեղի է ունեցել մի մեծ ինտրիգա, որ իր բնույթով բոլորովին նման չէ դաշնակցական նախկին գործունեության և ոչ մի ակտին: Նախ այդ փորձի պատճառով զոհվեցավ մեր Խրիստաֆորը, որի մահվան շուրջը բավական առասպելներ պատմվեցին, մինչև իսկ որ դա սարքովի է եղել ինչ-ինչ չար դիտումներով Վռամի կյանքի դեմ: Բայց ըստ իս գործի մեջ ինտրիգան այնքան ակնհայտնի է եղել, և Խրիստաֆորն այդ բոլորից այնքան ազդված ու ջղայնացած, որ ռումբերը փորձելիս ինքն էլ զոհ գնաց այդ ջղայնության, Վռամն էլ: Այդ ինտրիգի հիմնական դեմքն է Ռուբինան, այժմ Համո Օհանջանյանի կինը, որն այդ ժամանակ Պոլսումն է եղել, շատ մոտ և Քրիստաֆորին և Սաֆոին[2] և գուցե Վռամին, և ահա, ինտրիգի ծայրը սկսվում է: Chershez la femme: Լեռը մուկ ծնավ: Տարիներով պատրաստություն, հսկայական ծախքեր ու վերջը սուլթանին սպանելու տեղ Քրիստափորն ու Վռամն են սպանվում: Բայց այս բոլորը չէ: Պոլսում ձերբակալված է ի թիվս այլոց և մի հոլանդացի – Յորիս ազգանունով, թե անունով մեկը, որ աջակցել է գործին: Նրա կինը M[ada]me Ռիխտերը Ժնև է եկել ինչպիսի պրետենզիաներով[3]: Որոշվեց նրա ապրուստի համար տալ նույնքան, որքան տրվում էր խմբագրության մեն-մի անդամին, այն է՝ 150 ֆրանկ. ռուսական 57 ռուբլու չափ ամսական: 10 օր չանցած ե-

---

սը և ուրիշներ: Նպատակն էր ֆրանսիական և միջազգային հասարակայնության ծանոթացնել Հայկական հարցին, Եվրոպայում ուժեղացնել հայանպաստ շարժումը:

[1] Նկատի ունի Աբդուլ Համիդ II-ին:

[2] Մարգարյան Մկրտիչ:

[3] Պահանջ, հայց:

կավ թե՝ դրամը հատել է: Մենակ մի կին, այդքանը քիչ է Ժնևի պես դեմոկրատ մի քաղաքում: Եվրոպացի է, չի կարելի մերժել, տվեցին, ինչքան ուզում էր. մի 10 օր հետո նորից: Չէ՞ որ հայերը հարուստ են, իսկ սա եվրոպացի կին, հայերի պատճառով զրկվել է ամուսնուց, չտալ չի լինի, պրոպագանդի գործի վրա վատ կանդրադառնա: Եվ տալիս էին: Ես չդիմացա, մի անգամ ուժգին բողոքեցի և իմ դժգոհությունը հայտնեցի, որ մեր դժբախտ ժողովրդի փրկության համար հավաքված դրամը ծախսում են այդպես աննպատակ կերպով: Առաջարկեցի 150 ֆրանկից ավել չտալ: Ինձ պատասխանեցին, որ իրենք չեն կարող մերժել, եթե ուզում եմ՝ ինքս հասկացնեմ:

Հաջորդ անգամ այդ տիկնոջը ես հասկացրի, որ 150 ֆր. մի մարդուն շատ բավական է, որ այլևս որոշված գումարից դուրս իրեն ավելորդ դրամ չի տրվելու: Այդ կինը լաց եղավ ու գնաց. այնուհետև ավելորդ դրամի համար այլևս դիմում չարեց, ստացավ 150 ֆր. և մնաց այնքան ժամանակ, մինչև որ ամուսինն ազատվեց բանտից ու ինքը միանվագ բավական մի գումար ստացավ ու հեռացավ Ժնևից:

Հայտնի է, որ Դաշնակցությանն էր հարած Եվրոպայի հայ ուսանողության գրեթե ամբողջությունը: Այդ միջոցին գոյություն ուներ «Հայ ուսանողական միություն», որ իր վարչությունն ուներ և, որը կապ էր պահում Եվրոպայի բոլոր քաղաքներում գտնվող հայ ուսանողների հետ: Միությունը բավական լուրջ աշխատանք էր տանում, գրքեր հրատարակում, կազմել էր Հայաստանի քարտեզ, իսկ որ գլխավորն է, իր ուժերի չափով պրոպագանդ էր մղում եվրոպական բոլոր երկրներում ի նպաստ հայկական դատի: Այդ շարժման գլխավոր խթանողն էր Մալումյան և, պետք է ասած, նա իր գործը տանում էր բավական աջող:

Ասացի, որ Դաշնակցության հետ էր գրեթե ամբողջ հայ ուսանողությունը. ուրեմն կար մի մասը, որ նրա հետ չէր: Դա Սոցիալ-

դեմոկրատական հոսանքին ենթակա ուսանողությունն էր: Սրանք որոշ համոզման տեր երիտասարդներ էին, որոնք խույս էին տալիս խմբագրությունից, ուսանողական հավաքույթներին գալիս էին, այն դիտում, որ քննադատեն «Միության» գործունեության վարքագիծը, գտնում էին, որ նա, ինչպես դաշնակցական կազմակերպությունը իր ազգայնական գործունեությամբ մթագնում է մասսայի միտքը: Այդ միջոցներին Կովկասում տեղի ունեին թուրք-հայկական ընդհարումներ (1905 թ.): Դրա ամբողջ պատասխանատվությունը նրանք ձգում էին Դաշնակցության վրա: Այդ հողի վրա բանակռիվը բավական սուր բնույթ էր ստանում: Այդ թվականը Ռուսաստանում առաջ եկած և գալիք ընդվզումներով, հունվարի 9-ի դեպքով[1] և հետագայում ամբողջ Ռուսաստանը ցնցող գործադուլներով, որ իրավամբ Ռուսաստանի առաջին հեղափոխությունն է համարվում, խոշոր բեկում առաջ բերեց ինչպես ողջ Ռուսաստանի մտածող շրջաններում, նմանապես և եվրոպական ուսանողական շրջանում:

Մտքերի զարգացումը սոցիալիստական ուղղությամբ օրեցօր նոր թափ էր առնում: Ռուս հեղափախականներից շատերի համար, որոնք հուսալքվել էին, նոր հույսերի դռներ էին բացվում, ազատությունների մոտալուտ լինելու ազդանշաններ էին կարդում ամեն մի զիջումի մեջ, որ գալիս էր ցարական բռնապետության կողմից: Անդրկովկասում ցարական ռեժիմի հիմքերը խարխլված էին գտնում և հայերի տենչը՝ տաճկահայ ժողովրդի ազատության համար, աստիճանաբար տեղի էր տալիս ռուս բռնապետության խորտակման ճանապարհով իրագործելու նոր հույսերի: Եվ ահա դաշնակցական նոր սերունդը՝ խմորված սոցիալիստական պրոպագանդի գաղափարներով: Մինչ այժմ եղած գործունեությունը քննա-

[1] 1905 թ. հունվարի 9-ին ցարական իշխանությունները կրակ բացեցին Ս. Պետերբուրգում կազմակերպված բանվորական խաղաղ ցույցի վրա, որը և առիթ դարձավ սկսելու Ռուսական առաջին հեղափոխության համար:

դատվում է ոչ միայն Ս.-դեմոկրատներից, այլև Դաշնակցության ծոցում առաջ եկած նորահաս սերնդից:

Սոցիալիստական տեսակետը նորանոր գրավումներ է կատարում նաև ոչ բոլորովին երիտասարդ շրջանակները: Արդեն գործի մեջ անուն հանած անհատներ այս ու այն կողմից պնդում են, որ կուսակցության ուղեգիծը պետք է թեքել դեպի նոր հոսանքը: Եվ դաշնակցական հին տրադիցիաները մասամբ սկսում են խախտվել: Հները դուրս են գալիս նորերի դեմ. պառակտման սպառնալիքներ են լսվում: Անջատման դեպքեր են տեղի ունենում: 1905-ը դառնում է Դաշնակցության վերելքի սահմանը: Նրա թափը կանգ է առնում: Նա արդեն զիջման ճանապարհ է որոնում. այդ վարանումների ընթացքում նա տեղի է տալիս նոր հոսանքին և 1907 թ. Վիեննայի Ընդհ[անուր] ժողովում ընդունում է ծրագրի նախագիծը: Սա արդեն ժամանակի տուրքն էր, որ Դաշնակցությունը տալիս է սոցիալիստական մտքի վերելքին: Որքան ներքին տարաձայնություններ. տաճկահայ գործիչները սոցիալիզմի մասին լսել անգամ չէին ուզում: Մեր ժողովրդի դատը բոլոր գաղափարներից բարձր են դասում և ոչ մի զիջումի չեն ուզում գնալ: Սակայն նրանց համոզում են, որ Դաշնակցությունը հայկական դատը նախկին եռանդով առաջ է տանելու, որ այդ դատը ոչնչով չի հակասում սոցիալիստական վարդապետության: Միայն նոր մի գիծ է անցնում նրա գործունեության մեջ. այդ այն է, որ հայերը պիտի գործակցեն թուրքերին ու միացյալ ուժերով պայքար տանեն սուլթանիզմի դեմ: Այս գիծը հավանություն է գտնում ամենի կողմից: Ժեռն թուրքերը իրենց երկիրը կործանումից փրկելու միակ ճանապարհը գտնում են հեղափոխության մեջ, և որովհետև հայերը վաղուց ...[1] աշխատում են այդ ուղղությամբ, բնականորեն նրանք հայ հեղափոխականների փորձառու աջակցությունն են որոնում: Եվ ահա տեսակցություններ

[1] Անընթեռնելի բառ:

երկու ազգի գործիչների միջև: Մինչև այժմ թուրքերի կողմից դաշնակցականներին դիմում էին պրովոկատորներ[1], թուրք կառավարության վարձկաններ, հեղափոխական լոզունգների տակ դաշնակցականների գործունեությունը լրտեսելու, նրանց ճանաչելու և թուրք կառավարության լուրեր հաղորդելու համար. հիմա արդեն ուրիշ է: Թուրք երիտասարդությունը գտնում է, որ հայերն անջատ չպիտի գործեն, որ, իբրև միևնույն հայրենիքի զավակներ, միասին պիտի աշխատեն, երկիրը փրկեն սուլթանական բռնությունից և նոր ստեղծված կարգերում եղբայրաբար ապրեն կողք-կողքի:

Միանգամից դժվար է լինում հավատալ թուրքերին՝ այնքան արյուն կա երկու ժողովուրդների միջև. միտքը դյուրությամբ չի հաշտվում այն գաղափարի հետ, թե թուրքը կարող է հային բարեկամ լինել: Բայց չէ՞ որ թուրքերն ուզում են իրենց երկիրը փրկել, ինչու չենթադրել, որ ընդհանուր բարիքի համար փոքրիկ կոմպրոմիսի[2] գնալու ընդունակ կլինեն: Այս տատանման մեջ Դաշնակցությունն ընդունում է միասին աշխատելու այդ առաջարկը: Գավառներում գաղտնի տեսակցություններ և համերաշխ քայլեր են կատարվում այդ ուղղությամբ: Մենք «հողի եղբայրներ» ենք. հայտարարվում է պրոպագանդի ընթացքում: Մահմեդական ու քրիստոնյա խոսքերի մեջ խտրություն չպիտի դնել: Այս հույսով ջանքեր են թափվում, մինչև որ 1908 թ. ամառը տեղի ունեցավ թուրքական հեղաշրջումը: Աչքալուսանք ամեն կողմից: Թուրք ու հայ իրար ձեռք են սեղմում և ազատությունների սպասում:

Խմբագրության, ինչպես և այս ու այն կոմիտեի աչքի ընկնող անդամները շտապում են Պոլիս: Թուրքերը հայ գործիչներին ընդունում են գրկաբաց: Պոլիս են հասնում և այնպիսի գործիչներ, որոնք իրենց կյանքում Տաճկաստան չեն մտել, բայց շատ խոսել ու

[1] Սադրիչներ:
[2] Փոխհամաձայնության:

գրել են տաճկահայի դատի մասին: Ճառերին վերջ չկա երկուստեք: Կովկասյան նախագիծը մոռացության է մատնված: Այնտեղ Թուրքիայում հայ ժողովուրդն է ազատագրվում: Ինչ ժամանակ է Կովկասով զբաղվելու: Բոլոր ուժերը փոխադրվել են այնտեղ: Հայ գործչի մտածման առարկան եղել է թրքահայը. հիմա նրա բախտն է դարբնվում: Այս մտքով տարված են նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք չէին հավատում ազգային հեղափոխության:

Թրքական գավառներից անվերջ նամակներ են ստացվում, որ երկիրը դրախտի է վերածվել, որ հայերը շատ լավ են զգում իրենց, որ թուրքերը իրենց բոլորովին կարգին են պահում. այլևս ազգայնական թշնամություն չկա և այլն: Մոգական գավազանով աշխարհի կարգերը շուռ են եկել թրքահայության համար, որ դեռ երեկ մի ռայա էր և գյավուր, իսկ այսօր «հողի եղբայր»: Այս բոլորը կա, կա և կասկածը դեպի թուրքերը: Սկեպտիկները[1] գլուխներն օրորում են և երկյուղ մտմտում:

Դաշնակցական գործիչները գավառներում տարված գործի հաջողությամբ ամեն կերպ հավատ են ներշնչում ժողովրդին, որ այլևս ջարդ, կոտորած չի լինելու, որ ապահովությունը վերջնական է: Սակայն թուրքի կրոնական մոլեռանդությունը գաղտնի իր դավերն է լարում ազատության դեմ: Ազատություն ասելով կրոնամոլը հասկանում է մահմեդական կրոնի, հին սովորությունների վերացում, թրքական պետության կործանում և հայերի իշխանություն: Այս հողի վրա խոշոր պրոպագանդա է մղվում ամենուրեք, բայց այնքան զգույշ, որ ոչ միայն հայերը ոչինչ չեն նկատում, այլև թուրք գործիչները, որոնք ստեղծված կացությունից գոհ են: Բայց պետք է ասած, որ թուրք գործիչներից շատերն էլ տեսնելով հայերի ազատ շարժումները, որին երբեք վարժված չէին, իրենց ներսում բավական դժգոհ են մնում. չպետք է ծածկել և այն, որ հայ երիտասարդ-

[1] Հոռետեսները:

ներն էլ ոգևորության մեջ շատ առաջ են գնում և իրենց դիրքով ու չափազանց ուրախ ու անզուսպ վերաբերմունքով շատ ֆանատիկ թուրքերի գրգռում իրենց դեմ:

Նախքան թրքական հեղափոխությունը կազմակերպությունն ունեցավ մի համագումար «Կովկասյան խորհուրդ»[1] անվան տակ: Կարևոր հարցեր կային, որոնք լուծման էին սպասում: Կովկասյան նախագծի իրագործման խնդիրներ և թյուրք հեղափոխականների հետ գործակցելու խնդիրը: Խմբագրության կողմից դիմում եղավ ինձ՝ գնալ Կովկաս ներկայացուցիչ: 1908-ի փետրվարի վերջերն էր: Այդ միջոցին ես գտնվում էի Լոզանում և հետևում համալսարանի գրականության և հասարակագիտության դասախոսություններին, դրա հետ միասին հետևում էի Ecole Normale-ի մանկավարժական գործնական աշխատանքներին: Ս. Զավարյանն էր ինձ նախորդ տարին դրամ հասցրել, մոտիկ ծանոթներից հավաքելով, որպեսզի ես մանկավարժական բարձր կրթություն ստանամ: Խմբագրության առաջարկը չմերժեցի: Պիտի ճանապարհվեի, բայց 1897-ին ես Կովկասից դուրս էի եկած, ճիշտ է լեգալ ճանապարհով, որովհետև իմ իսկական անունով անցագիր էի ստացել Գանձակում այն միջոցին, երբ ինձ Թիֆլիսում ժանդարմերիան փնտրում էր: Այնուհետև քանի քանի անգամ ինձ հարցրել են Երևանում, մեր տանը: Այժմ իմ անունով վերադառանալ, կնշանակի գնալ ընկնել ժանդարմների ձեռքը: Դրա փրկության միջոցը կա: Մեր խմբագրատանը կային բազմաթիվ պարսկական անցագրեր, որոնք ձեռք էին բերվում այս ու այն քաղաքի պարսկական հյուպատոսից: Վերցրի մեկը, որի դիմագծերն ու տարիքը մոտավորապես ինձ հարմարվում էին և ճանապարհվեցի: Սահմանն անցա իբրև պարսկահպատակ հայ և հասա Թիֆլիս: Ճիշտ 11 տարի էր, որ բացակայեցի Կովկասից. շատ ընկերների այդքան ժամանակ չէի տեսել, շատերին նոր էի տես-

[1] Նկատի ունի ՀՅԴ Խորհրդի նիստերը:

նում: Խորհուրդը տևեց 12 օր: Ժողովում էինք մեկ սրա, մեկ նրա տանը: Որոշումները դրական էին և՛ կովկասյան գործունեություն ուժեղացնել տեղական սոցիալիստական կազմակերպություններին աջակցելով և՛ Թյուրքիայում հեղափոխական գործը շարունակել աջակցելով միաժամանակ ժեռն-թուրքերի աշխատանքներին: Այդ ժամանակ ռուս բռնապետությունը որքան և աչալուրջ հետևում էր հեղափոխական աշխատանքներին՝ երևան հանելու համար գործիչներին, վերջիններս շատ ազատ շարժվում էին և ժանդարմերիան անկարող էր որևէ լուրջ վնաս հասցնել աշխատանքներին: Հենց այս օրինակը բավական է ընդունելու համար, թե ինչ անճարակություն կար ժանդարմերիական գործունեության մեջ: Տարիներով ես դուրս եմ եղել, ինձ փնտրել են, չեն գտել և հիմա վերադարձել եմ ուրիշ անունով: Բայց ժողովը վերջանալուց հետո գնացի Երևան, մեր տուն, ապրում եմ մի շաբաթ ու ներկայանում նահանգական վարչություն արտասահմանի անցագիր ստանալու համար: Հարկ եղավ ոստիկանական բաժանմունքից մի թուղթ բերել, որ արգելք չկա: Եվ մի օրում ստացա արտասահմանի անցագիր ու մեկնեցի: Դրանով ես ազատվեցի 11 տարվա անցագրային պարտքերից և որ գլխավորն է, դարձա լեգալ մարդ, երբ ուզեմ կարող եմ իմ իսկական անցագրով կրկին գալ արտասահմանից, ինչպես և եղավ: Այս բոլորը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ցարական ռեժիմի[1] ժամանակ, հակառակ նրա ստեղծած բոլոր խստագույն հալածանքներին, երկրում տիրում էր անկազմակերպ դրություն, համարյա անարխիկ վիճակ, և անլեգալ գործունեություն տանելու հսկայական հարմարություններ կային հեղափոխական գործիչների տրամադրության տակ:

Կովկասում հայ մտավորական շրջաններում շատ սկեպտիկ վերաբերմունք կար դեպի թրքական հեղափոխությունը: Նախ, ոչ

[1] Վարչակարգի:

մի հավատ չէին տածում նրանց հեղափոխական լինելու վերաբերմամբ և.....[1], որ գլխավորն է, նրանց կարծիքով եթե հաջողվի իսկ թյուրք բռնակալությունը տապալել ու նրա տեղ սահմանադրական մի կառավարություն ստեղծել, դրանով իսկ վտանգված կլինի Հայկական հարցը: Չէ՞ որ Հայկական խնդիրը ծագել է Թյուրքիայում բռնապետության երեսից առաջ եկած անարխիկ կացությունից: Կարգ ու կանոն մտնելուն պես Թյուրքիայում Հայկական հարցն ինքն ըստ ինքյան վերանալու է: Այսպես էին տրամաբանում շատերը և այդ իսկ պատճառով նրանք գոհ չէին, որ այնտեղ հեղաշրջում կատարվի, նախքան Հայկական հարցի դրական լուծումը: Այս տեսակետն ունեին ընդհանրապես տաճկահայ գործիչները Եվրոպայում և գաղութներում և դա անդրադառնում էր նույն իսկ Դաշնակցության գործելակերպի վրա: Որոշված էր աջակցել թյուրք հեղափոխականներին, բայց գործնականում սաստիկ տատանում կար, մի հոռետեսություն կար:

Այսպիսի հոգեբանություն կար, երբ հանկարծ անակնկալ տեղի ունեցավ: Եվ որքա՜ն անարյուն կատարվեց թրքական հեղափոխությունը: Ժողովրդական ոչ մի տակնուվրայություն. մոգական գավազանի հարվածով առաջ եկած մի հեղաշրջում էր. ամեն ինչ անցավ յեղ ու մեղրի պես: Հայ ժողովուրդը մի առավոտ իրեն զգաց թոթափված բռնապետության բոլոր ճնշումներից: Մամուլ, խոսք, երթևեկություն, հավաքույթ, ամեն ինչ ազատ: Ճիշտ է, հին գաղափարի տեր մարդիկ մնացին իրենց դիրքերում, կասկածը իրենց սրտում, բայց ամբողջ երիտասարդությունը ոգևորության էքստազի մեջ էր:

Պետք է ասած, որ Դաշնակցությունը խոշոր դեր խաղաց ամեն տեղ, ամեն խուլ անկյուն ամրացնելու, ձեռք բերած նվաճումները ամրացնելու գաղափարը: Այդ ուղղությամբ հսկայական քանակությամբ շրջաբերականներ ու նամակներ ղրկվեցան բոլոր մարմիննե-

[1] Մեկ բառ ընթերնելի չէ:

րին: Բոլոր գավառներից շտապ գործիչներ ու պրոպագանդիստներ էին պահանջվում: Վերն ասվեց, որ դաշնակցական հայտնի գործիչները բոլորն էլ ամեն կողմից թափվեցին Կ. Պոլիս: Արդեն նոր կարգերը հաստատված, Թյուրքիան նոր և լավ օրեր ապրելու հույսով էր տոգորված: Ոգևորությունը հայերի մեջ այն աստիճան էր հասել, որ ինչպես ասված է, թյուրք ժողովրդի մեջ կասկածներ առաջ եկան: Դժվար է գրչով պատմել այդ ոգևորության չափը: Բնորոշելու համար կտամ այդ, որքան կների իմ գրիչը:

Զմյուռնիայից պրոպագանդիստ պահանջեցին: Այնտեղ էր Հ. Գալֆայանը, խմբագրության գործավարը, բայց այդ քիչ էր համարվում: Տեղական կ[ենտրոնական] կոմիտեն հատկապես ինձ էր ուզում: Այդ էլ առաջարկեց ինձ խմբագրատանը մնացած միակ անդամը՝ Հ. Դավթյանը: 1908 թ. դեկտեմբերի վերջերին ճանապարհվեցի:

Կ[ենտրոնական] կոմիտեն գրել էր, որ գնացողները հետները վերցնեն ատրճանակներ, որքան կարելի է շատ: Արդեն երկրում որոշ նշաններ կային, որ թրքական հետադեմ տարրի մեջ դժգոհություն կա, և կարող է մի օր հակահեղափոխական բռնկում տեղի ունենա: Այդ արդեն նշանակում է, որ հայերը կլինեն առաջին զոհը: Կազմակերպությունը Մարսելում ուներ իր պահեստը: Այնտեղից վերցրի մի բավական մեծ չեմոդան[1] լիքը ատրճանակներով և փամփուշտներով: Զմյուռնիայում կոմիտեի անդամները նավ եկան և ազատ ամեն մեկը մեկ-երկու ատրճանակ վերցրին իրենց վրա և այդպես ինձ դուրս հանեցին: Իհարկե, զենքերը կողմնակի մարդկանց ցույց չտվին, ազատ եմ ասում, որովհետև ինձ համար տարօրինակ էր, որ թրքական նավահանգստում հայերը առանց ձևականությունների եկան նավ և դուրս եկան ու ոչ ոք չհարցրեց, թե ո՞ւր գնացին,

[1] Ճամպրուկ:

ինչու՞ գնացին, ինչու՞ եկան, ոչ անցագրի և ոչ բերված իրերի հսկողություն: Մի ազատություն, որ արդեն անարխիա էր: Ժեոն թուրքերին ասել էին, որ մերոնցից է եկողը, և նրանք առանց ձևականությունների թույլ էին տվել:

Մի ամսի չափ մնացի Զմյուռնիայում և տեսա այն խանդավառությունը, որով համակված էր ամբողջ հայ ժողովուրդը: Մի քանի անգամ խոսեցի ընդարձակ դահլիճում հավաքված հոծ բազմության առաջ: Նրանց ցույց տված ընդունելությունը ինձ շատ օտարոտի թվաց: Սակայն, ինչպես երևում է, ազատության շրջան էր ապրում դեռ այդտեղի հայությունը: Համեստ մի գործիչ, որ միշտ ստվերի մեջ է մնացել և գործել, այժմ մեկեն հրապարակի վրա, ինչ որ չի բռնում: Ամենքը քեզ են դիտում, քեզ լսել են ուզում, քեզ մոտենալ և ծանոթանալ են ձգտում: Հրավիրում են այս կողմից, այն կողմից: Չես գնում, վիրավորվում են: Մերժում եմ. կոմիտեի անդամները գտնում են, որ արածս սխալ է: Տեսա, որ այդ կյանքը ինձ համար չէ: Գալֆայանին հայտնեցի, որ չպիտի մնամ այդտեղ: Զարմացավ:

Հեղափոխական մարդու համար մի գայթակղիչ շրջանակ, մի անսովոր ասպարեզ է բացված: Ինձ հետաքրքրեց այն հանգամանքը, թե Պոլսո մեր ընկերները այդ նոր ստեղծված դրությանն ինչպես են վերաբերվում: Այդպիսի տեղում հեշտությամբ կարելի է մարդկանց ճանաչել: Գնացի Պոլիս, մնացի մի տաս օր: Տեսա և զգացի, որ ոմանց համար առաջ քաշվելու, դիրքեր գրավելու շատ լավ պայմաններ են ստեղծվել: Ոմանք, որոնք այդ ձգտումն ունեն, օրվա մարդիկ են: Ամեն տեղ էլ ու մուտք ունեն: Թյուրք հայտնի դեմքերի հետ են տեսնվում, լավ ընդունվում են: Ինքնասիրություն շոյվելու շատ հարմար պայմաններ կան: Այդ մարդիկ, որոնք իրական հեղափոխական ասպարեզ չեն մտել, այլ արիստոկրատ հեղափոխականներ են եղել, ինչպես խմբագրատանը նստել ու նամակ-

ներ գրել, նրանց տարվելը այդ կյանքով հասկանալի է, բայց որ այդ կյանքով կարող են տարվել նաև գավառներում հեղափոխական սև աշխատանք կատարելով կամ թրքական բանտերում տարիներ կյանք մաշելով, այդ չեմ կարող ըմբռնել: Տեսա և զգացի, որ ոմանց համար այդ կյանքը դեպի անկումն է առաջնորդում: Մնում է մարդու հոգեկանին, ներքին աշխարհին, թե որքան կարող է իրեն պահել հեղափոխական բարձրության վրա: Այդ մոլուցքի, արբեցության դիմանալու համար պետք է ունենալ ամուր, հաստատուն կամք: Թե չէ վայն եկել է և տարել թույլին:

Այդ միջոցին Յոնան [Հունան] Դավթյանը շարունակ նամակով հայտնում է իր մենակ մնալը խմբագրատանը, որ գործ չի տարվում և մանավանդ հաշվապահական գործը տակնուվրա է լինում, և պնդում է, որ ընկերներից մեկն ու մեկը շտապի Ժնև: Առաջարկում են՝ ես ուրախությամբ հանձն եմ առնում, որ գոնե այս արբեցումի ժամին հեռու մնամ այդ միջավայրից: Մեկնում եմ Զմյուռնիա և այնտեղից մարտի սկզբներին (1909) հասնում Ժնև:

Նույն մարտի վերջերին տեղի ունեցավ Կիլիկիայի ...[1], որ վերագրվեց հետադեմ շարժման: Թյուրք հեղափոխականների քիթը զարնեց, իսկ հայերը համարյա բնաջնջման ենթարկվեցին: Մեկ երկու վայր միայն ազատվեցին թուրք հորդայի հարձակումից – Սիսն ու Չոք-Մարզվանը, որովհետև հայերը կարողացան պաշտպանվել: Կիլիկյան աղետը պայթեց, որպես մի ուրագան[2]. մարդիկ մնացին շշմած: Ժեռն թուրքերը շատ միջոցներ գործ դրեցին մեղմացնելու այդ կոտորածի տպավորությունը, որպեսզի մյուս վայրերի հայերը հանգստանան և ձեռք բերած ազատությունը չվտանգվի հայկական խնդրի վերազարթումով: Ամեն տեղ խիստ հրահանգներ ուղարկվեցան կառավարության կողմից՝ հայերի նկատմամբ լինել շատ կոր-

[1] Անընթեռնելի է, սակայն խոսքը կիլիկիահայության կոտորածի մասին է:
[2] Փոթորիկ:

րեկտ: Իսկապես, այնուհետև գավառներում հայերի դրությունը շատ լավացավ, տնտեսապես նման չտեսնված վերելք ունեցավ, կրթական գործը ևս մեծ քայլերով առաջադիմեց: Բայց և այնպես իմաստունները անհանգիստ էին և շարունակում էին զգաստ պահել հայ ժողովրդին և չհավատալ թրքական ազատության բարիքներին: Սկեպտիկները[1] իրենց մտահոգությունն էին արտահայտում ամեն կերպ և ինչ որ անվստահություն էր տիրում մթնոլորտում հայերին շնորհված ազատությունների հանդեպ: Թուրք ժողովուրդը չէր ըմբռնում այդ, հայը չէր հավատում դրա անկեղծությանը: Դաշնակցությունը, պետք է ասած, այդ խնդրում աշխատեց շատ լոյալ կերպով: Սիմոնը և նրա հետ բազմաթիվ գործիչներ ցրվեցին գավառները՝ բարձրացնելու հայերի տրամադրությունը գալիք լուսավոր օրերի նկատմամբ: Խլված հողերը վերադարձվեցին, հայ գյուղացին սկսեց ազատ երթևեկել, դպրոցները շատացան, մամուլը բոլորովին անկախ դարձավ: Դաշնակցական մարմինները թե՛ Պոլսում և թե՛ գավառներում ահագին հեղինակություն դարձան. որևէ անարդարություն արձագանք էր գտնում տեղական մեջլիսներում և անմիջապես դարմանվում: Դաշնակցական մարմնի բողոքի վրա գայմագամներ ու մյութեսարիֆներ պաշտոնանկ էին լինում: Բավական է որ նրանց կողմնակալությունը չնչին չափով կասկածի էր ենթարկվում: Կիլիկիո աղետը կամաց-կամաց մոռացության էր տրվում, թյուրիմացության վերագրելու ճիգերի տակ:

Կարևորն այն է, որ երկիրը հարություն էր առնում. այդ խիստ նկատելի էր: Գավառներից նամակներ էին ստացվում, ուր հրճվանքով էին նկարագրում հայ ժողովրդի անդորր աշխատանքի և վերելքի չափը: Ժնևի դերը այլևս նախկինը չէր: Դաշնակցությունն այլևս լեգալ կազմակերպություն էր Թյուրքիայի համար, մինչ Ռու-

[1] Հոռետեսներ:

սաստանի համար նա մնում էր միշտ իլլեգալ[1] և, մանավանդ հիմա, Կովկասում հալածանքի ենթարկվածները ապաստանում են Թյուրքիա իբրև մի ավետյաց երկիր: Պարզ է, որ Ժնևում մի մարդն էլ բավական էր: Ես հրավիրվում եմ Կ. Պոլիս Կ[ենտրոնական] կոմիտեի քարտուղարի պաշտոնով: Ճանապարհվում եմ Մարսելի վրայով 1910 թվի սեպտեմբերին: Պոլիս հասնելուն պես Հ. Գալֆայանը նավ է գալիս ինձ ներս առնելու: Թե որքան կարևորություն ունի «Դաշնակցությունը»[2] թրքական կառավարության համար, այդ երևում է հետևյալ դեպքից: Նավի վրա մինչ իրերը հանձնում ենք բեռնակրի, բուռն բազմության մեջ իմ գրպանից հանում են դրամապանակս, որի մեջ կար 4 ոսկի դրամ: Անմիջապես Գալֆայանը իմաց է տալիս ոստիկանական ներկայացուցչին, որ նավի վրա էր և հայտնում, որ «ես դաշնակցական եմ» և Ժնևից եմ գալիս: Իսկույն ոստիկանը իմաց է տալիս մաքսատան վարչության, որ իր հատուկ լրտեսներն ունի նման դեպքերում գողերին երևան հանելու համար: Մինչև մեր դուրս գալը մի խումբ կասկածելի մարդկանց բռնել էին: Մեզ հրավիրեցին մաքսատուն, ուր արձանագրություն կազմեցին գողացված դրամապանակի և նրա բովանդակության մասին: Ոսկիների հետ կար և մի կնիքի քար գեղեցիկ քանդակով, որ Կիլիկիայի բանտից էի բերել: Այդ միջոցին ներս բերին մի տարիքով՝ համարյա ծերունի մարդ, շատ լավ հագնված: Կոմիսարը մի քանի ապտակ հասցրեց այդ մարդուն և պահանջեց գողացված իրերը դուրս բերել, նա ուրացավ: Նորից միերկու ապտակ: Մարդու արտաքինը խիստ խաբուսիկ էր: Ես միջամտեցի, ասելով, որ այդ մարդը գողի տպավորություն չի թողնում:

– Դուք չեք ճանաչում էֆենդի,– ասաց կոմիսերը,– մեր մարդիկ բոլոր գողերին լավ են ճանաչում:

---

[1] Անլեգալ: Ոչ բացահայտ:

[2] Չակերտները հուշագրինն են:

Երբ մի քանի ապտակ էլ ստացավ, մարդը արտասվելով հայտնեց, որ գողացողը այն երիտասարդն էր, որին քիչ առաջ անմեղ կարծելով բաց են թողել, և իբրև ապացույց ավելացրեց, որ այն տղան պահարանի վերը մի դրամապանակ շպրտեց: Անմիջապես բարձրացան և պահարանի վերից իջեցրին իմ դրամապանակը՝ փականը կոտրված և դատարկ: Կոմիսերը պահանջեց, որի միջի իրերը տա. նա նորից ուրացավ: Հրամայեց խուզարկել. և ի՜նչ. գրպանից դուրս եկավ իմ ոսկիները և կնիքի քարը: Այդ մարդու թղթերը խուզարկվեցին և դուրս եկավ, որ օդեսացի հրեա է, եկած հատկապես Պոլիս, մի խումբ կազմակերպած նման գողություն կատարելու համար:

Կապիտուլյացիայի օրենքով թյուրք պետությունը իրավունք չունի դատել օտարահպատակներին. այդ մարդուն մի օր միայն պահեցին ոստիկանատանը և հաջորդ օրը իմաց տվին Ռուս հյուպատոսությանը, որ և նրան վերցրեց՝ իր օրենքով պատժելու համար: Բավական ժամանակ անց ռուս հյուպատոսն ինձ կանչեց ու հարցրեց, թե ինչ եմ պահանջում այդ մարդուց: Ես հայտնեցի, որ ոչինչ էլ չեմ պահանջում, քանի որ իմ իրերը նույնությամբ ստացել եմ: Դրանով էլ գոհացան հյուպատոսարանում և կարգադրեցին, որ այն հրեան անմիջապես վերադառնա Օդեսա: Այսպես էին վերաբերվում դաշնակցականներին:

Թյուրքերն աշխատում էին ամեն կերպ սիրաշահել հայերին: Պոլսում արդեն դաշնակցական գործիչները մեծ դիրք էին ձեռք բերել: Թրքահպատակները մեծմեծ պաշտոններ էին ձեռք բերել: Մի քանիսը պառլամենտի[1] անդամ էին և ստանում էին ահագին ռոռոճիկ: Գալֆայանը Պոլսո քաղաքապետներից մեկն էր. այնտեղ մի քանի քաղաքապետական մասեր կան: Խոշոր դեմքեր են Շահրիկ-

[1] Խորհրդարանի:

յան[1], Վարդգես[2], Վռամյան, Զարդարյան[3], Գարո, Հրաչ, ռուսահայերից՝ Ակնունի, որ շատ կարևոր դիրք ունի: Խոշոր մրցակցություն կա պառլամենտական աթոռներ գրավելու համար: Ոչկուսակցականներ Զոհրապ[4], Հալաճյան[5], բայց շատ մոտ կազմակերպության. [յան. միշտ խմբագրատանն են, որի վերին հարկը հատուկ է Կ[ենտրոնական] կոմիտեին: Այդտեղ են լինում կուսակցական ժողովները: Պարլամենտի հայ անդամները (մեբուսները) միշտ այդտեղ են հավաքվում, թե ինչ դիրք բռնեն տվյալ հարցում: Այդտեղ են լինում հաճախ և թրքական հեղափոխության շեֆերը, որոնք այժմ պետական հայտնի դեմքեր են՝ Թալեաթ-բեյ[6], Խալիլ-էֆենդի[7] և բանակցություններ են վարում, որպեսզի Դաշնակցությունը գավառներում մտքերը խաղաղեցնելու աշխատի: Նրանք մեծ-մեծ խոստումներ են անում: Հայկական հարցը ներսում լուծելու մեծ հույսեր են տածում:

Կուսակցական օրգանը՝ «Ազատամարտ» ամենատարածված թերթն է: Թուրքական հեղափոխության մոտակա բարիքներն է թվում Թուրքիայի բոլոր ժողովուրդների համար, այլևս ջարդերի ուրվականը մոռացության ու անցյալին է վերագրվում: Ոմանք ուզում են հավատալ քարոզներին, բայց մռայլ անցյալը շատ է աղաղակող, որպեսզի հավատն ամրանա այդ ուղղությամբ: Իսկ Կիլիկիայի աղետի թարմությունը շատ իմաստունների լեզուն բաց է արել:

---

[1] **Շահրիկյան Հարություն** (Ատոմ, Նիտրա, 1860–1915), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, իրավարան, ՀՅԴ անդամ:

[2] **Սերենկյուլյան Վարդգես** (Հովհաննես, Գիսակ 1871–1915), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

[3] **Զարդարյան Ռուբեն** (1874–1915), հասարակական-քաղաքական գործիչ, գրող թարգմանիչ, ՀՅԴ անդամ, «Ազատամարտի» խմբագիր:

[4] **Զոհրապ Գրիգոր** (1861–1915), հայ հասարակական-քաղաքական գործիչ, փաստաբան, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր:

[5] Օսմանյան խորհրդարանի պատգամավոր:

[6] **Թալեաթ** (1874–1921) օսմանյան պետական գործիչ, ՆԳ նախարար: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից: Ռազմական հանցագործ:

[7] **Խալիլ** (Հալիլ, 1882–1957), օսմանյան ռազմական գործիչ:

– Նրանք ամեն տեղ կրկնում են ու աղաղակում, որ թուրքին հավատալ չի կարելի, որ բոլոր խոստումները հայերին քնացնելու միջոց են հայկական դատը ներքին մի քանի ռեֆորմներով խեղդելու, նրան Եվրոպայի դիվանագիտության ձեռքերից խլելու և ժեռն թյուրքերին ենթարկելու համար և ապա հարմար րոպեին ամեն ինչ ժխտելու: Այս մտայնությունը հին է արմատացած ամեն մի հայի հոգում: Ամենքի աչքը դուրսն է, ամենքը ինչ որ հրաշքի էին սպասում: Բավական է թուրքի հարաբերությունը փչանա որևէ քրիստոնյա պետության հետ, անմիջապես բոլորի սիրտը մի տրոփյուն ունի.– ո՛ւր է, թե՝ թշնամին գա ու կործանի Թյուրքիան. այդ ժամանակ միայն կինչի փրկության ժամը: Այս է ամենքի հոգեկան վիճակը: Այլևս թրքական հեղափոխությունը ոչ մի արժեք չունի, նրանից առաջացած սպասելիքները օդն են ցնդում և մնայուն է դառնում դարձյալ հինը, Եվրոպայի միջամտությունը: Ահա տեղի ունի թուրք-իտալական պատերազմը[1]: Նորից հույսերի զարթում: Մարդիկ այլևս չեն տեսնում իրական փոփոխությունը, որ տեղի ունի ամբողջ երկրում: Իրական ազատությունը նրանց աչքում դառնում է ֆիկցիա[2], իսկ իտալական մի հաղթությունը հիմք է ծառայում օդային ամրոցները տեսնելու: Դարավոր փորձերը, որ օտարը՝ եվրոպացին եթե պատերազմում է թուրքի հետ, դա միայն իր շահերը կարգավորելու համար լինելը ոչինչ չեն ասում հայ համառ մտքին: Նա կառչել է այդ սնամեջ գաղափարին և դրանով էլ ապրում է, թեկուզ թշվառության մեջ, բայց այդ իլյուզիայով[3] երջանիկ, իսկ իրական ազատությունը, որ նա վայելեց 1909 թվից մինչև համաշխարհային պատերազմը՝ 5 տարի, երբ նրա կյանքի պայմանները բոլորովին փոխվեցին, նա իրեն զգաց կաշկանդված, որովհետև այդ ազատությու-

[1] Իտալո-թուրքական պատերազմ (1911–1912), հայտնի է նաև «Լիբիական» կամ «Տրիպոլիտանական պատերազմ» անունով:

[2] Չնախանձություն:

[3] Պատրանք:

նը գալիս էր թուրքից: Թուրքից լավ բան սպասել, անկարելի է, այս է հայ մարդու հասկացողությունը. և այս տեսակետը եղավ հայության դժբախտության հիմնական պատճառը: Բալկանյան-թրքական պատերազմը մի անգամ ևս աղաղակող կերպով ապացուցեց, թե ինչ հոգեբանություն էր ապրում թեկուզ Պոլսո հայությունը, նա, որ թրքական ջարդերի ժամանակ ամենանվազ զոհերով է ազատվել:

Շարունակությունը, գրված Ծաղկաձորում 1929 թ. օգոստոսի 1-ին

Բալկանյան պատերազմը[1] թյուրք կառավարության համար մի անախորժ անակնկալ եղավ: Թրքական ազատությունը հակառակ ազդեցությունն է ունեցել թուրք տգետ մտքի վրա: Թուրք զորքը նախկին ռազմունակությունը չի ցուցաբերում: Հավատը, որ այնքան ուժեղ է եղել նրա մեջ իսլամի հաղթանակի վերաբերմամբ, արդեն բավական խախտվել է: Եվ թուրք զորքը դյուրությամբ նահանջում է Բալկանի փոքրիկ ժողովուրդների, թրքական նախկին ստրուկների հաղթական առաջխաղացման առաջ: Ընկնում է Ադրիանոպոլիսը, թրքական այդ վաղեմի փառքը իր պատմական մզկիթներով, բուլղարական մի բուռն զորքի ձեռքը: Ամբողջ Ռումելիի թրքությունը գաղթի ճանապարհն է բռնել դեպի Պոլիս և այնտեղից յետ դեպի արևելք, Բոսֆորն ու Մարմարան է անցնում դեպի Փոքր Ասիա: Դարերով տեղավորված և ամրացած ազգաբնակչությունը այլևս մահիկի աջողությանը վստահություն չունի, գրաված հողերը նախկին տերերին ետ տալու համոզումն է ընդունել և անվերադարձ գաղթում է: Պահպանողական մի ժողովուրդ, որ դարեր առաջ զենքի ուժով ու իր տրադիցիաներով[2], իր ավանդական լայն հագուստներով ու չալմայով եվրոպական հողն է ոտք կոխել, այսօր

[1] Բալկանյան I պատերազմը (1912–1913) մղվել է Բալկանյան երկրների՝ Հունաստան, Սերբիա, Բուլղարիա և Չեռնոգորիա և Օսմանյան կայսրության միջև: Վերջինս պարտություն է կրել:

[2] Ավանդություններով:

գրեթե նույն պայմաններով, նույն հագուստով, բայց հոգեպես այլ վիճակում, որպես հաղթվող ետ է դառնում: Հին խարխլած նավակներ, լիքը կանանցով ու երեխաներով, հին ձևի կոպիտ օրորոցներով, գունավոր սնդուկներ և անկողիններ և որ աչքառուն է, իրենց սովորական, աղվեսին շատ նմանվող, շներ հետները առած, վերադառնում են: Բարոյալքված բազմությունը օրերով գալիս է ու անցնում: Հուսահատությունը կարելի է կարդալ բոլորի աչքերում: Պոլիսը, հույների այդ հռչակավոր Բյուզանդիոնը երևի նույնպիսի պատկերի հանդիսատես է եղել դարեր առաջ, երբ հաղթական օսմանյան զորքը գրավում էր քաղաքը, և տեղի բնիկը, հույնը, հայը, բուլղարը սփրթնած խելակորույս փախչում էին յաթաղանի սարսափից: Դերերն էին փոխված այժմ: Պոլսո բնիկ թուրքը գլուխն է կորցրել: Նա քայլում է կորագլուխ, վախն աչքերի մեջ, մտմտում է քաղաքը թողնելու մասին: Քրիստոնյա ժողովուրդները՝ հույն, հայ, բուլղար, եվրոպացի անսահման հրճվանքի մեջ են: Դարերի երազն է իրական դառնում: Չաթալջան[1] գրավված է և հաղթական զորքերը ժամեժամ սպասվում են քաղաքի մեջ: Թնդանոթի ամեն մի որոտ մի լույս է սփռում քրիստոնյա ժողովուրդների հոգու մեջ և մի սարսափ տարածում թուրքերի հոգում: Հասավ և այն օրը, երբ արդեն հաղթական միացյալ զորքը պիտի մտնի Պոլիս: Քրիստոնյաները դուրս են եկել քաղաքից, ընդառաջ են գնում հաղթողին, թուրքերը փակված են իրենց տներում: Նման մի երևույթ պատմության մեջ այդ սահմաններում թերևս չի կրկնված:

Քաղաքի ազգաբնակչության կեսից ավելին թշնամու գալստյան աչքալուսանքն է տալիս: Եվ այդտեղ կատարվեց մի նոր հրաշք: Հաղթող զորքը կանգ առավ: Մեծ պետությունները, հատ-

[1] 1912 թ. նոյեմբերի 17–19-ին Չաթալջայի մոտ տեղի է ունենում ճակատամարտ օսմանյան և բուլղարական զորքերի միջև, որտեղ բուլղարացիները հաղթանակ են տանում:

կապես Անգլիան, կանգնեցրին նրանց և Պոլիսը մնաց դարձյալ թուրքին: Ոչ միայն այդ, այլև դաշնակիցների մեջ ավարը, գրաված հողերը բաժանելիս գժտություն ընկավ ու իրար միս կրծեցին, որով և Ադրիանոպոլիսը ետ տվին: Սերբ, բուլղար նոր համաձայնությունը քանդվեց և նրանք մնացին նույն թշնամիները ինչ որ առաջ: Ահա թե ինչպես այն ազգերը, որոնք թրքական ազատության շրջանում մեծապես օգտվեցին նյութապես, բարոյապես, չուզեցին վայելել այդ ազատությունը, որովհետև դա գալիս էր թուրք կառավարության կողմից: Այդ ազգերը գերադասում էին եկվորի իշխանությունը, առանց իմանալու, թե այդ իշխանությունը բարիք պիտի բերի, թե չարիք: Նախապաշարումը կույր է լինում, նա թույլ չի տալիս շուրջը տեսնել, նա գոհ է միայն, որ իր ատած թուրքը չքանա[1]:

[1] Այս մասում Մար-ի (Մ. Տեր-Մարտիրոսյան) հուշերի ձեռագիրն ընդհատվում է:

МИКАЕЛ ТЕР-МАРТИРОСЯН

ВОСПОМИНАНИЯ

Следующая крылатая фраза известного русского писателя Михаила Булгакова «Рукописи не горят» полностью может отнесена к воспоминаниям деятеля армянского освободительного движения Микаела Тер-Мартиросяна. Благодаря заботливому отношению его родных, его рукописные воспоминания, написанные между 1926–1928 годами, теперь у нас есть возможность опубликовать. Рукопись нам любезно предоставила внучка М. Тер-Мартиросяна – Гаяне Шахоян, за что выражаем благодарность.

М. Тер-Мартиросян (1869–1931) родился в Восточной Армении (Российская империя), в городе Нор Баязет (сейчас – Республика Армения, г. Гавар, Гехаркуниксий марз). Начальное образование он получил в г. Нор Баязете, затем учился в Ереванской епархиальной школе, которое окончил в 1889 году. С 1890 по 1895 гг. преподавал в армянских школах в Ахалцихе, потом - в Гандзаке. Вероятно, в 1891 или 1892 годах он стал членом партии Дашнакцутюн (Армянская федерация революционеров) и своим партийным товарищам был известен под именем Мар-Шимун или Мар. Мар Шимон XIX Беньямим (1887–1918) был католикосом-патриархом Ассирийской церкви Востока.

М. Тер-Мартиросян выполнял различные партийные задания, например, добывал динамит для покушения против султана Абдул Гамида II.

По заданию партии он отправился на Кипр, чтобы изучить местность и возможность через Средиземное море отправки армянам Киликии оружие и боеприпасы.

М. Тер-Мартиросян, вопреки мнению некоторых своих партийных товарищей, считал, что центром борьбы против османской диктатуры может быть горный район Киликии - Зейтун, армянское на-

селение которого было известно освободительной борьбой против турецких властей, поэтому партия поручила М. Тер-Мартиросяну инкогнито поехать в Киликию и изучить возможности организации освободительной борьбы.

Чтобы скрыть истинную миссию, М. Тер-Мартиросяну выдается болгарский паспорт, и он действует как болгарский подданный. В 1878 г. по решению Берлинского конгресса, Болгария была вассальным королевством, зависимым от Османской империи, и поэтому поддерживала все силы, борющиеся против турецких властей, включая армян.

Необходимо было быть гражданином Болгарии, чтобы в случае раскрытия или обнаружения не подвергать западных армян новым гонениям и убийствам, так как были свежи последние резня армян, которая произошла 1890-х годах, жертвами которых стали около 300.000 западных армян.

Чтобы свободно перемещаться по Османской империи и не быть заподозренным турецкой полицией, необходимо было иметь такую профессию, которая позволяла бы ему безопасно перемещаться из одного населенного пункта в другое. М. Тер-Мартиросян решил использовать для этого устройство под названием фонограф, созданное Т. Эдисоном, которое позволяло ему не только слушать музыку, но и записывать. Профессия странствующего «музыканта», также давала ему возможность зарабатывать деньги и обеспечивать средствами к существованию.

10 сентября 1898 г. М. Тер-Мартиросян начинает свою опасную, но очень важную миссию из Алеппо. Фонограф пользовался большим спросом, большое количество людей начали слушать музыку из необычной машины. Толпа людей без всяких сомнений позволяла безопасно встречаться с партийными товарищами и сочувствующими. В Алеппо пекарю, греку по национальности Костаки и М. Тер-Мартиросяну удалось спасти из плена османских властей двух черногорских курсантов военной академии Белграда.

Главной целью миссии М. Тер-Мартиросяна был Зейтун, все было готово, чтобы отправиться в Зейтун, но из-за предательства намерение не было возможность плотить в жизнь. 20 июня 1899 г. М. Тер-Мартиросян был арестован турецкой полицией.

В ходе расследования судебные власти используют различные уловки, чтобы М. Тер-Мартиросян признался, что является гражданином Российской империи, но тщетно. Согласно закону о капитуляции, османские власти были обязаны выдать европейцев своему государству. Однако, М. Тер-Мартиросян продолжает утверждать, что является гражданином Болгарии, чтобы не раскрыть истинную цель совей миссии и не подвергать армян насилию со стороны властей.

23 сентября 1899 г. прошедший в Алеппо судебный процесс не смог доказать обвинения и приговорил М. Тер-Мартиросяна к 5 годам лишения свободы.

В своих тюремных воспоминаниях М. Тер-Мартиросян предоставляет интересную информацию о различных событиях, происходящих в турецкой тюрьме, о зверствах, о бунтах, о повседневной жизни заключенных, об отношениях разных национальностей: черкесов, курдов, турок и армян. Следует отметить, что некоторые свидетельства носят этнографический характер.

В майе 1904 г. истек срок заключения М. Тер-Мартиросяна, однако власти не освободили заключенного, так как имелись подозрения, что он армянин, и поэтому из Алеппо его отправили в портовый город Александрет, а оттуда - на пароходе в Константинополь. В сопровождении полиции М. Тер-Мартиросян отправился на австрийский пароходе, где ему помог капитан корабля, словак по национальности Грегорио Бразанович. Благодаря своей изобретательности, М. Тер-Мартиросян сумел сойти на берег в Александрии и установить контакты со своими партийными товарищами.

Тюремные годы разрушили здоровье М. Тер-Мартиросяна, и поэтому партия отправила его на лечение в санаторий египетского

города Хелван (Helwan). Вскоре он возобновил свою деятельность. В 1908 г. учился в Лозаннском университете. В 1910 г. был назначен секретарем Центрального комитета Дашнакцутюн в Константинополе. В 1912 г, был инспектором армянской школы имени Семерчяна в Константинополе. В советские годы занимался педагогической деятельности. К сожалению, болезнь не позволила ему завершить свои воспоминания, которые М. Тер-Микаелян завершил Первой балканской войной (1912 г.).

Рубен Гаспарян
Рубен Саакян

MIKAEL TER-MARTIROSYAN

MEMORIES

The next catchphrase of the famous Russian writer Mikhail Bulgakov "Manuscripts do not burn" can be fully attributed to the memoirs of the leader of the Armenian liberation movement Mikael Ter-Martirosyan. Thanks to the caring attitude of his family, we now have the opportunity to publish his handwritten memoirs written between 1926–1928. The manuscript was kindly provided to us by M. Ter-Martirosyan's granddaughter - Gayane Shakhoyan, for which we express our gratitude.

M. Ter-Martirosyan (1869–1931) was born in Eastern Armenia (Russian Empire), in the city of Nor Bayazet (now- the Republic of Armenia, Gavar, the region of Gegharkunik). He received his primary education in Nor Bayazet then studied at the Yerevan Diocesan School which he graduated in 1889. From 1890 to 1895 he taught in Armenian schools, in Akhaltsikhe then - in Gandzak. Probably in 1891 or 1892, he became a member of the Dashnaktsutyun (Armenian Federation of Revolutionaries) party and was known to his party comrades as Mar-Shimun or Mar. Mar Shimon Benyamim (1887–1918) was the Catholicos-Patriarch of the Assyrian Church of the East.

M. Ter-Martirosyan performed various party tasks: for example, he obtained dynamite for an assassination attempt against Sultan Abdul Hamid II.

On the instructions of the party, he went to Cyprus to study the area and the possibility of sending weapons and ammunition to the Armenians of Cilicia through the Mediterranean Sea.

M. Ter-Martirosyan contrary to the opinion of some of his party comrades believed that the center of the struggle against the Ottoman dictatorship could be the mountainous region of Cilicia - Zeytun the Armenian population of which was known for the liberation struggle

against the Turkish authorities. Therefore, the party instructed M. Ter-Martirosyan to come incognito to Cilicia and study the possibilities of organizing the liberation struggle.

To hide his real mission, M. Ter-Martirosyan was given a Bulgarian passport and he acted as a Bulgarian citizen. In 1878, Bulgaria was a vassal kingdom dependent on the Ottoman Empire by the decision of the Berlin Congress and therefore, supported all forces fighting against the Turkish authorities including the Armenians.

It was necessary to be a citizen of Bulgaria so that in case of discovery the Western Armenians would not be subjected to new persecutions and murders because the last massacre of Armenians in the 1890s was fresh in people's memories as a result of which about 300.000 Western Armenians were killed.

In order to move freely in the Ottoman Empire and not be suspected by the Turkish police, it was necessary to have a profession that would allow him to move safely from one settlement to another. M. Ter-Martirosyan decided to use for this a device called a phonograph created by T. Edison which allowed him not only listening to music but also recording. The profession of an itinerant "musician" also gave him the opportunity to earn money and provide a livelihood.

On September 10, 1898, M. Ter-Martirosyan started his dangerous but very important mission from Aleppo. The phonograph was in great demand; a large number of people began to listen to music from an unusual machine. The crowd of people without a doubt made it possible to safely meet with party comrades and sympathizers. In Aleppo, a baker, a Greek by nationality Kostaki and M. Ter-Martirosyan managed to save two Montenegrin cadets of the Belgrade Military Academy from captivity by the Ottoman authorities.

The main goal of M. Ter-Martirosyan's mission was Zeytun; everything was ready to go to Zeytun but because of the betrayal the intention was not possible to fulfill. On June 20, 1899, M. Ter-Martirosyan was arrested by the Turkish police.

During the investigation, the judicial authorities use various tricks to get M. Ter-Martirosyan to admit that he is a citizen of the Russian Empire but their efforts were in vain. According to the capitulation law, the Ottoman authorities were obliged to extradite the Europeans to their state. However, M. Ter-Martirosyan continued to assert that he was a citizen of Bulgaria so as not to reveal the true purpose of his mission and not to subject Armenians to violence from the authorities.

On September 23, 1899, the Aleppo court was unable to prove the charges against M. Ter-Martirosyan and sentenced him to 5 years in prison.

In his prison memoirs, M. Ter-Martirosyan provided interesting information about various events taking place in a Turkish prison, about atrocities, about riots, about the everyday life of prisoners, about the relations of different nationalities: Circassians, Kurds, Turks and Armenians. It should be noted that some of the evidence is ethnographic.

In May 1904, the term of M. Ter-Martirosyan's imprisonment expired but the authorities did not release the prisoner as there were suspicions that he was Armenian and therefore he was sent from Aleppo to the port city of Alexandret then from there - to Constantinople by steamer. Accompanied by the police, M. Ter-Martirosyan set off on an Austrian steamer where he was helped by the ship's captain, a Slovak by nationality Gregorio Brazanovich. Thanks to his ingenuity, M. Ter-Martirosyan managed to go ashore in Alexandria and establish contacts with his party comrades.

The prison years destroyed M. Ter-Martirosyan's health, and therefore the party sent him for treatment to a sanatorium in the Egyptian city of Helwan. He soon resumed his activity. In 1908, he studied at the University of Lausanne. In 1910, he was appointed secretary of the Central Committee of the Dashnaktsutyun in Constantinople. In 1912, he was an inspector of the Armenian school named after Semerchyan in Constantinople. During the Soviet years he

was engaged in teaching activities. Unfortunately, illness did not allow him to complete his memories which M. Ter-Mikaelyan ended with the First Balkan War (1912).

Ruben Gasparyan
Ruben Sahakyan

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աարիֆ փաշա Կարա-Մուրսալ Զադե – 209, 210
Աբրո, տե՛ս Սահակյան Մկրտիչ
Աբդուլ Համիդ II – 9, 12, 120, 352
Ա-Դո, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Ադանալյան Վարդիվոր – 258
Ադոյա, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Ադոյա
Աթաբեկյան, օրիորդ – 77
Աթաբեկյան Սեդրակ – 313, 314
Ալթունյան Ասատուր – 13, 15, 161-163, 169
Ալեքսանյան Մկրտիչ – 231, 233, 242, 275
Ալեքսանյան Նազոր – 230, 233, 242, 275, 279, 280
Ալի մարգարե – 224, 249
Ալի Ավշար – 21, 248
Ալի բեյ Զուլ-Ղադիր, գործավար – 267
Ալի բեյ – 267
Ալի, զորապետ – 251
Ալի Ջերիդլի – 21, 248
Ակունունի, տե՛ս Մալումյան Խաչատուր
Ահարոնյան Ավետիս – 349
Ահմեդ, սուլի – 247, 248
Ահմեդ Աշչի – 248, 260
Ահմեդ Բիրտիսլի – 21, 248
Ահմեդ Ֆենքլի – 21, 248, 259
Աղաթոն բեյ – 344, 346
Աղայան Ղազարոս – 63
Աղասի, տե՛ս Թուրսարգսյան Կարապետ
Աղափերյան, եպիսկոպոս – 37
Ամբրոյան Մաշուկ – 50
Անտոն, տե՛ս Զավարյան Սիմոն
Աշոտցի Գրիգոր – 251
Ապահ, տե՛ս Գըմգըմյան Պետրոս
Աջիթակցի Նազարեթ – 252
Առաքելյան Համբարձում – 53,
Առաքելյան Սարգիս – 229, 230, 231, 233, 241, 242, 275
Ասատուր աղա – 253
Ասատուր, բանտարկյալ – 259
Ասատուր, չարխչի – 257
Ավգուստա – 168
Ավո, տե՛ս Նազարբեկյան Ավետիս
Արամյան Լևոն – 50
Արասխանյան Ավետիք – 53
Արարատյան Ս., տե՛ս Արարատյան Սարգիս
Արարատյան Սարգիս – 49
Արբակ, տե՛ս Միրզայան Հովսեփ
Արթին աղա, տե՛ս Կարա-Գյավուրյան Արթին
Արթին, կապանցի – 258
Արծրունի, տե՛ս Արծրունի Գրիգոր
Արծրունի Գրիգոր – 32, 40, 346
Արղության Հովսեփ – 44, 51

Արմեն Գարո, տե՛ս Փաստրմաճյան Գարեգին
Արություն, տե՛ս Կոշկակարյան Հարություն

Բ

Բաբախանյան Առաքել – 348, 349
Բաբկեն Սյունի, տե՛ս Փարյան Պետրոս
Բագրատ Լևոն – 229
Բագրատունի Աշոտ – 103, 104, 108
Բագրատունիք, տե՛ս Բագրատունիներ
Բագրատունիներ – 153
Բաղտիկյան Հանես, գզիր – 241
Բաղդո, ֆընտըճակցի – 253
Բաստրմաջյան Գարեգին, տե՛ս Փաստրմաճյան Գարեգին
Բարդուղիմեոս, վարդապետ – 15, 230
Բարսեղ, տե՛ս Տեր-Գրիգորյան Բարսեղ
Բեքիր – 250
Բլո – 250
Բոզ աղա – 250
Բոյաճյան Զաբել – 103, 113, 114
Բոյաճյան Իսկուհի – 103, 113–115
Բորիս, տե՛ս Խաչատրյան Սմբատ
Բրազանովիչ Գրեգորիո – 24, 301–307, 309, 311, 313, 314, 316, 319, 321, 323, 326–328

Գ

Գալուստ, ալաբաշցի – 251, 261
Գալֆայան, տե՛ս Գալֆայան Հ.
Գալֆայան Հ. – 361, 362, 365
Գամառ-Քաթիպա, տե՛ս Պատկանյան Ռաֆայել
Գասպարյան Ռուբեն Հենրիկի – 28
Գարեգին, տե՛ս Փաստրմաճյան Գարեգին
Գեղամյան, տե՛ս Գեղամյանց Եղիշե, ավագ քահանա
Գեղամյանց Եղիշե, ավագ քահանա – 40, 346
Գըմգըմյան Պետրոս – 79, 208
Գնունի – 103, 104
Գոլոշյան Դարիա – 47, 51
Գոլոշյան Վարդան – 47

Դ

Դավթյան Հունան – 76–78, 123, 132, 349, 361, 363
Դավթյան Յոնան, տե՛ս Դավթյան Հունան
Դավթյան Ներսես – 38
Դավիթ, ջորեպան – 234, 242
Դերձակյան, պաշտոնյա – 95
Դերձակյան, տե՛ս Դերձակյան Օնիկ
Դերձակյան Օնիկ – 10, 88, 90, 95, 100, 101, 112, 367
Դեմիրճիպաշյան Եղիա, տե՛ս Տեմիրճիպաշյան Եղիշե
Դիմիտրի, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել

Դիմիտրի էֆենդի, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Դիշչեքենյան Կարապետ – 252
Դևեճյան – 83, 86

Ե

Ենի-Դունյան, տե՛ս Ենի Տունյան
Ենի Տունյան – 229
Երվանդ, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Երվանդ
Եվգենիա Կոնստանտինովնա – 131

Զ

Զավարյան Մարիամ – 8, 43, 51
Զավարյան Սիմոն – 8–10, 24–26, 42–45, 47, 50, 51, 61, 67, 68, 74, 75, 130, 131, 330, 331, 339–342, 350, 351, 364
Զավարյան Սոնիկ – 131
Զարդարյան Ռուբեն – 367
Զեքի, ոստիկան – 294–296
Զեքի փաշա – 162, 193, 210
Զոհրապ Գրիգոր – 367
Զորյան Ստեփան – 26, 46, 47, 50, 75, 123, 350
Զուլ - ղադիր – 267

Է

Էդիսոն Թովմաս – 14
Էլեն, տե՛ս Միաքայելյան Քրիստափոր
Էոմեր աղա, բանտապահ – 247

Թ

Թալեաթ բեյ – 367
Թադևոսյան Ալեքսանդր – 133, 134, 136
Թադևոսյան Արշակ – 46, 48, 51
Թաղիանոսյան Երվանդ – 36
Թավաքալյաններ, տե՛ս Թավաքալյան Բագրատ վարդապետ
Թավաքալյան Բագրատ վարդապետ – 346
Թավուգյան Գրիգոր – 16, 193, 194, 195, 280-281
Թիրաքյան Հրաչյա, տե՛ս Թիրաքյան Հայկ
Թիրաքյան Հայկ – 12, 77, 103, 104, 110, 112, 114, 136, 137, 140, 141, 367
Թղլյան Պողոս – 241, 242, 261, 235, 272–275, 280, 330
Թյուֆենկչիև, տե՛ս Թյուֆենկչիև Նաում
Թյուֆենկչիև Նաում – 349
Թորոսյան Եղիշե – 34
Թոփալ Սիմոն – 252
Թոփալյան Կարապետ – 259
Թոքաթլյան – 117
Թուրսարգսյան Կարապետ – 79, 208

Ժ

Ժորես Ժան – 351

Ի

Իզզեթ փաշա – 162
Իզեդ, կոմիսար – 295
Իշխան, տե՛ս Արղության Հովսեփ
Իսմայել աղա, տե՛ս Մարտո, դիարբեքիրցի
Իսմայիլ բեյ – 192
Իսքենդեր, բանտարկյալ – 325

Լ

Լեո, տե՛ս Բաբախանյան Առաքել
Լյապով, տե՛ս Լյապով Նիկոլով Դմիտրի
Լյապով Նիկոլով Դմիտրի – 113, 121, 122
Լոնգե Ժան – 351
Լոմլոմջի – 252
Լունկևիչ Վալերիան – 26, 349
Լևոն, բանտարկյալ – 260
Լևոն Ժակ – 103, 104, 106, 107, 110, 122

Խ

Խադիկով Արտեմ, տե՛ս Հատիկյան Մկրտիչ
Խաժակ, տե՛ս Չագալյան Գարեգին
Խաժակ Գարեգին, տե՛ս Չագալյան Գարեգին
Խալիլ, բանտարկյալ – 245
Խալիլ, օսմանյան ռազմական գործիչ – 367
Խալիլ, պահապան – 257
Խազնազատ Ռուբեն – 34
Խաչատրյան Սմբատ – 99, 100, 120, 119, 122, 123, 124, 273
Խաչեր, զեյթունցի – 259, 260
Խաչեր, մուրացկան – 252
Խաչեր, վարժապետ – 339
Խաչումյան Հովհաննես – 40
Խրիմյան Մկրտիչ – 9, 53, 54, 121
Խոջա էֆենդի – 255, 256
Խոսրով Արմեն – 51
Խրիստաֆոր, տե՛ս Միքայելյան Քրիստափոր

Կ

Կարա-Գյավուրյան Արթին – 231–233, 240–242
Կարա-Մելիք, տե՛ս Տեր-Գրիգորյան Բարսեղ
Կարախանյան Գրիգոր – 6
Կարապետ – 211
Կարապետ, եպիսկոպոս – 18, 230, 231, 232, 253
Կարապետ, վարժապետ – 253
Կարապետ, քահանա – 253
Կարապետ Փոթիշ – 256, 261
Կաֆյան Գաբրիել – 34
Կիրակոս աղա – 252
Կլեմանսո Ժորժ – 351
Կորյուն, տե՛ս Տոնապետյան Տիգրան
Կոշկարյան Հարություն – 24, 283, 329–331
Կոստակի – 169, 172, 174, 176, 182, 184, 285
Կուտիլակի Յանի – 265, 279

Կուտիլակի Վասիլի – 265, 274, 278, 279

Հ

Համիդ, տե՛ս Աբդուլ Համիդ II
Համիդ բեյ, չերքեզ – 257, 258
Հալաճյան – 367
Հակոբ աղա, բիլեզիկցի – 252
Հակոբ, Բիլեզիկցի - 252
Հակոբ, խարբերդցի – 283
Հակոբյան Սիմոն – 48
Համբարձում, զեյթունցի – 251
Համզա, բանտարկյալ – 271
Համիդ բեյ, չերքեզ – 257, 258
Հոնան, տե՛ս Դավթյան Հունան
Հասան իմամ – 250
Հատիկ, տե՛ս Հատիկյան Մկրտիչ
Հատիկյան Մկրտիչ – 13, 18, 96, 138, 140, 142–148, 151, 164, 170–172, 186, 190, 211, 226, 242
Հարություն, տե՛ս Կոշկակարյան Հարություն
Հարություն, մարաշցի – 256
Հարություն, որբ – 257
Հարություն, սարլարցի – 259
Հիսուս, տես Հիսուս Քրիստոս
Հիսուս Քրիստոս – 44, 249
Հովհաննես, մարաշցի – 251, 347
Հովհաննես Թոփալ օղլի – 259
Հովհաննես, կաբակլի – 252
Հովհաննիսյան Աբիսողոմ – 35
Հովհաննիսյան Միքայել – 12, 76, 97
Հովսեփյան, հնչակյան – 136
Հորթանս – 79
Հրաչ, տե՛ս Թիրաքյան Հրայր
Հրաչյա, տե՛ս Ղարիբյան Գրիգոր
Հրաչյա Մարալ, տե՛ս Ղարիբյան Գրիգոր
Հրաչյա Վահագն – 103
Հուդա – 189
Հուլիանե, ուսուցչուհի – 83
Հունան, տե՛ս Դավթյան Հունան
Հուսեյին իմամ – 250
Հուստուկ – 102, 103

Ղ

Ղանթարճյան Սարգիս – 254
Ղարիբյան Գրիգոր – 79, 133, 208
Ջուլ Ղադիր – 269
Ղևոնդ – 234

Ճ

Ճերմակյան Հարություն – 343, 344

Մ

Մազլումյան Օննիկ – 14, 166, 167, 168, 169
Մալխասյանց Ստեփան – 7, 33, 58, 73
Մալումյան Խաչատուր – 27, 333, 334, 349, 367
Մահմեդ, տես Մուհամմեդ
Մահմեդ բեյ Բայազիտ զադե, պահապան – 257, 267, 268
Մահմեդ, յուզբաշի – 352

Մահմեդ բեյ, դատարանի անդամ – 257
Մամիուդ փաշա խան – 289
Մանասյան – 62
Մանասյան Սարգիս - 62
Մանուկ, զեյթունցի – 251, 334
Մատինյան Նիկողայոս –14, 36, 46, 51, 131, 134–137, 140, 141
Մատինյան Սաթենիկ – 8, 43, 44, 50, 51
Մար, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Մար-Շիմոն, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Մար Շիմոն XIX, Արևելքի ասորական եկեղեցու կաթողիկոս-պատրիարք – 59
Մարգարյան Մարտիրոս – 127, 128
Մարինով Պոպով Դիմիտրի, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Մարգարով Մարգար, տե՛ս Դերձակյան Օնիկ
Մարո, տե՛ս Նազարբեկյան Մարո
Մարտիրոս, տե՛ս Մարգարյան Մարտիրոս
Մարտիրոս, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Մարտո, դիարբեքիրցի – 284, 285
Մաքսիմով Պ. Վ. – 109, 111, 112, 119
Մելիք-Բեգլարյան Հովսեփ – 48, 50
Մելիք-Հակոբյան Հակոբ – 8, 32, 34, 345, 346
Մելիք-Փաշայան Նիկողոս – 24, 147, 148, 170, 189, 191, 292, 329, 330
Մեհրաբյան Սարգիս – 10, 24, 50, 64, 330, 342, 453
Մեղավորյան Հակոբ – 53, 54
Միխայլովիչ Միխայիլ, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Միհրդատյան Արշակ – 254, 260
Մկրտիչ, ջորեպան – 233
Մինաս, ալաբաղցի – 252
Մինասյան Արշակ – 41
Մինասյան Սարգիս – 76
Մինասով, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Միսաքյան եղբայրներ, տե՛ս Միսաքյան Գուրգեն, Միսաքյան Սուրեն
Միսաքյան Գուրգեն – 104, 109
Միսաքյան ընտանիք, տե՛ս Միսաքյան եղբայրներ
Միսաքյան Սուրեն – 104, 109
Միրզայան Հովսեփ – 12
Միքալ, միսիոներ – 257, 258
Միքաելյան Քրիստափոր – 24, 45, 46, 47, 64, 131, 333, 349, 352
Մլեհ, տե՛ս Տամղաճյան Ասատուր
Մխիթարյան Արշալույս – 131
Մխո Շահեն, տե՛ս Սեֆերյան Մխիթար
Մկրտիչ, ջորեպան, տե՛ս Ալեքսանյան Մկրտիչ
Մյուդարիս ընտանիք – 193
Մովսես մարգարե – 249

Մուսխաջյան – 241
Մսրյան Գրիգոր – 160, 164, 168, 169, 286
Մուհամմեդ մարգարե – 250
Մուրադյան Գևորգ, տե՛ս Մուրադյան Յակոբ
Մուրադյան Յակովբ – 33, 34, 37
Մուստաֆա, սուլի – 247, 248
Մուստաֆա Դադաղլի – 271
Մուստաֆա, բանտապետ – 223
Մուստաֆա, մոլլա – 259

Յ

Յաղջյան Հակոբ աղա – 256
Յորկի – 133–135
Յորիս – 352
Յուսուֆյան Հովհաննես–Մելիք, տե՛ս Յուսուֆյան Հովհաննես
Յուսուֆյան Հովհաննես – 97

Ն

Նազար, տե՛ս Ալեքսանյան Նազար
Նազար, ուսուցիչ – 254
Նազարբեկ, տե՛ս Նազարբեկյան Ավետիս
Նազարբեկյան Ավետիս – 34, 86
Նազարբեկյան Մարո – 86
Նազարեթ, աշիթակցի – 252
Նազարեթ, զեյթունցի – 260
Նազարեթ Չավուշ, տե՛ս Նորաշխարհյան Նազարեթ
Նազարեթյան Արմենակ – 194, 281
Նազոր, տե՛ս Ալեքսանյան Նազոր
Նավասարդյան Բագրատ – 58
Նիկոլ Դուման, տե՛ս Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս
Նիկոլա ցար, տե՛ս Նիկոլայ II
Նիկոլայ, տե՛ս Մատինյան Նիկողայոս
Նիկոլայ II – 9, 54
Նիկողոս, բժիշկ, տե՛ս Մելիք-Փաշայան Նիկողոս
Նորաշխարհյան Նազարեթ – 18, 229, 230, 232, 254, 261, 331

Շ

Շահրիկյան Հարություն – 366-367
Շահինյան Էլպիս – 82
Շահինյան Մելքոն – 82
Շահոյան Գայանե – 6, 28
Շարտյե, տե՛ս Շարտյե Արշիլ
Շարտյե Արշիլ – 165, 220
Շիմրին օղլի – 189
Շխյան Սիմոն – 42, 43, 48, 49
Շմավոնյան – 85
Շորվա օղլի Վանես Մուխսի – 249
Շորվոյան Կարապետ – 248, 255

Չ

Չագալյան Գարեգին – 40, 48, 77, 133
Չայճյան Հակոբ – 256
Չավուշ Էմին – 260
Չորպաճյան Ասատուր – 255
Չորպաճյան Սերոբ – 255
Չաքրյան, իշխան – 253, 254
Չերքեզ Նուրի – 24, 261, 248

Չերքեզ Սուլեյման – 273

Պ

Պալյան Երվանդ – 76,77
Պատկանյան Ռափայել – 32
Պատրիկյան Հակոբ Վարդ – 51, 63, 99, 103, 118, 120, 122, 123
Պետո, տե՛ս Պետրոսյան Ալեքսանդր
Պետրոս, ալաբաշցի – 251, 261
Պետրոս, կոշկակար – 257
Պետրոսյան Ալեքսանդր – 9, 44, 49, 50
Պիլիզիկճյան Կարապետ – 132
Պլեխանով, տե՛ս Պլեխանով Գեորգի
Պլեխանով Գեորգի – 26, 348
Պողոս, տե՛ս Թղլյան Պողոս
Պռոշյան Պերճ – 348

Ջ

Ջալլադյան Ավետիս – 254

Ռ

Ռիխտեր - 352
Ռոստոմ, տե՛ս Զորյան Ստեփան
Ռշտունի, տե՛ս Ռշտունի Անտոն
Ռշտունի Անտոն – 344
Ռուբինյան իշխանապետություն – 153, 154, 304

Ս

Սագունի Գրիգոր – 283
Սալման, այնթապցի – 273
Սահակյան Մկրտիչ – 9, 44, 49
Սահակյան Ռուբեն Օնիկի – 28
Սանդրո – 34, 37
Սապահ-Գյուլյան Ստեփանոս – 34
Սարաֆով, տե՛ս Սարաֆով Պետրով Բորիս
Սարաֆով Բ., տե՛ս Սարաֆով Պետրով Բորիս
Սարաֆով Պետրով Բորիս – 26, 348-349
Սարգիս – 19, 211
Սարգսյան Մարտիրոս, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել
Սարդարյան – 55, 56
Սարիաթ – 133, 134
Սարուխանյան, տե՛ս Պետրոսյան Ալեքսանդր
Սաֆո, տե՛ս Մարգարյան Մկրտիչ
Սերենկյուլյան Վարդգես – 367
Սեֆերյան Մխիթար – 10
Սիմեոնյան Պետրոս – 346
Սիմեոնյանց Պետրոս, տե՛ս Սիմեոնյան Պետրոս
Սիմոն, տե՛ս Զավարյան Սիմոն
Սիմոնյան Պետրոս, տե՛ս Սիմեոնյան Պետրոս
Սիմոնյաններ, տե՛ս Սիմեոնյան Պետրոս
Սպանդարյաններ, տե՛ս Սպանդարյան Սպանդար
Սպանդարյան Սպանդար – 346
Սվազլի, տե՛ս Սվազլի Միհրան
Սվազլի Միհրան – 87
Ստանիսլավիչ – 177–179
Սրբուհի – 331

Սուրեն – 103, 124
Սուրենյան Կարապետ աղա – 253
Սև Աշոտ, տե՛ս Բագրատունի Աշոտ

Վ

Վահան (Նիկոլ) – 135
Վասիլի, տե՛ս Կուտիլակի Վասիլի
Վարանդյան, տե՛ս Հովհաննիսյան Միքայել
Վարդ Պատրիկ, տե՛ս Պատրիկյան Հակոբ Վարդ
Վարդան, տե՛ս Մեհրաբյան Սարգիս
Վարդգես, տե՛ս Սերենկյուլյան Վարդգես
Վեսին օղլի – 189, 201
Վիլհելմ, տե՛ս Վիլհելմ II
Վիլհելմ II – 168
Վիսին օղլի, տե՛ս Վեսին օղլի
Վռամ, տե՛ս Քենդիրյան Վռամշապուհ
Վռամյան, տե՛ս Դերձակյան Օննիկ

Տ

Տաթևյան Վահագն – 10
Տամատյան, տե՛ս Տամատյան Միհրան
Տամատյան Մ., տե՛ս Տամատյան Միհրան
Տամատյան Միհրան – 229
Տամղաճյան Ասատուր – 79
Տեմիրճիպաշլյան Եղիշե – 119, 121
Տեր-Գրիգորյան Բարսեղ – 131
Տեր-Դավթյան Հովսեփ – 46
Տեր-Կարապետ, քահանա – 253
Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս- 10, 64
Տեր-Ղևոնդ – 252
Տեր-Մարտիրոսյան Ադոլյա – 6
Տեր-Մարտիրոսյան Գրիգոր – 7
Տեր-Մարտիրոսյան Երվանդ – 272
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես – 6, 7
Տեր-Մարտիրոսյան Միքայել – 5–28, 61, 85, 86, 90, 97, 103, 121, 139, 143, 169, 197, 202, 210, 211, 215, 237, 239,266, 268, 292, 295, 296, 302, 311, 329
Տեր-Մարտիրոսյան Սիրական – 7
Տիգրան, տե՛ս Տոնապետյան Տիգրան
Տեր-Գրիգորյան Բարսեղ – 46, 131
Տիգրան Երկաթ, տե՛ս Պիլիզիկճյան Կարապետ
Տիրան, հնչակյան – 83, 85, 86
Տիրան, փաստաբան – 135, 136
Տոնապետյան Տիգրան – 16–20, 138, 140, 142, 144, 145, 146, 147, 148, 151, 170, 171, 172, 184, 186, 189, 196, 197, 211, 225, 226, 228–230, 233, 235–237, 239, 241, 276

Ր

Րաֆֆի, տե՛ս Մելիք-Հակոբյան Հակոբ

Ու

Ուռյան Պապիկ – 251

Փ

Փանոս, տե՛ս Խաչեր, զեյթունցի
Փանոս, չոքմարզվանցի, բանտարկյալ – 286, 287
Փանոս, ֆընտըճագցի – 260
Փաստրմաճյան Գարեգին – 10, 51, 77, 80–82, 86–89, 104, 110, 112, 129, 367
Փարյան Պետրոս – 10, 96, 99, 100, 103, 104, 110, 114, 121
Փորթուգալյան Մկրտիչ – 34

Ք

Քամալյան Սարգիս – 40
Քելեշ, բանտարկյալ – 271
Քեհյան Մինաս – 254
Քենդիրյան Վռամշապուհ – 24, 352
Քեշիշյան Քերոբ, տե՛ս Քեշիշյան Քերովբե
Քեշիշյան Քերովբե – 147, 149, 151, 170
Քեչեջի Միքայել, ալպիստանցի – 333
Քիյառ Պիեռ – 351
Քյազմ էֆենդի, դատավոր – 257
Քյոսե Փափազ, տե՛ս Տեր-Կարապետ, քահանա
Քոթոթ, տե՛ս Զորյան Ստեփան
Քոռ Ալեք – 60
Քրիստափոր, տե՛ս Միքայելյան Քրիստափոր
Քրիստոս, տե՛ս Հիսուս Քրիստոս

Օ

Օկյաշ, հովիվ – 231–233, 240–242, 252
Օհանջանյան Համո, տե՛ս Օհանջանյան Համազասպ
Օհանջանյան Համազասպ – 41, 352
Օհանջանյան Ռուբինա – 352
Օմար – 250
Օսման - 250

Ֆ

Ֆավր Լեոպոլդ – 351
Ֆերդինանդ, տե՛ս Ֆերդինանդ I
Ֆերդինանդ I – 238
Ֆրանս Անատոլ – 251
Ֆուադ բեյ – 162, 186, 188, 192 193, 210, 282

М

Маринов-Попов Д., տե՛ս Տեր-Մարտիրոսյան Միքայել

Х

Хадиков, տե՛ս Հատիկյան Հրաչյա

B

Brazzanovich Gregorio, տե՛ս Բրազանովիչ Գրեգորի

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբիսինիա, տե՛ս Եթովպիա
Ագարակ – 65
Ադալիա – 155
Ադանա – 25, 170, 234, 262
Ադրիանոպոլիս – 234, 278
Աթենք – 132
Ալաբաշ, տե՛ս Արեգին
Ալաշկերտ – 335
Ալեքսանդրապոլ, տե՛ս Գյումրի
Ալեքսանդրիա – 23-25, 139, 150, 292, 306, 313, 322, 327–329, 331, 332
Ալեքսանդրետ – 14, 22, 25, 140, 142, 146, 148, 151, 157, 163, 171, 186, 189, 191, 228, 230, 233, 286, 289, 291, 292, 325, 343
Ալի Ղայասի, տե՛ս Ալիի ժայռ
Ալիի ժայռ – 251
Ալպիստան – 170
Ալջավազ, տե՛ս Արծկե
Ախալցխա – 7, 8, 33–35, 42, 43,
Ախր–դաղ, տե՛ս Վերջին սար
Աղեքսանդրետ, տե՛ս Ալեքսանդրետ
Աղջադաղ – 248, 250
Աղստաֆա – 53, 67
Աղսու, գետ – 262
Ամանոս, տե՛ս Հայ լեռ
Ամերիկա, տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Ամերիկա Հարավային – 112
Ամերիկայի Միացյալ Նահանգներ – 193, 257, 280
Ամուկ դաշտ – 273, 288
Ամուկ օվան, տե՛ս Ամուկ դաշտ
Այնթապ – 16, 17, 169, 170, 185, 192–194, 204, 207, 210, 213
Անատոլիա – 156
Անտիոք – 13, 270, 288
Անամուռ, հրվանդան – 305, 324
Անգլիա – 133, 371
Անդրկովկաս – 124, 345
Անի – 152
Աստվածածին վանք, տե՛ս Սբ. Աստվածածին վանք
Արգենտինա – 112
Արծկե – 335
Արեգին – 254
Արևմտյան Հայաստան – 7–9, 11, 14, 69, 72
Աքիա – 277

Բ

Բաբ էլ Ֆարաջ – 14, 160, 174,
Բաբը Ալի – 82
Բագու, տե՛ս Բաքու
Բազարջիկ օվա – 262
Բազում – 68
Բաթում – 53, 78, 143
Բալչիկ – 166, 309

Բաղդատ – 182, 253
Բասեն – 335
Բաքու – 125, 131, 247, 313, 335, 336
Բելգրադ – 179
Բեյլան – 157, 289
Բեյրութ – 24, 79, 157, 283, 324, 325, 331
Բեյուք Դերե – 91, 92, 93
Բեռլին – 7, 13, 48, 82, 113, 335
Բերա – 97, 101, 102, 104, 115, 117, 118–119
Բերդ, տե՛ս Զեյթուն
Բյուզանդիոն, տե՛ս Կ. Պոլիս
Բյուրական – 53
Բոդրում – 277, 305, 324, 340
Բոդրում Կալա, տե՛ս Բոդրում
Բոսֆոր –89, 91, 112, 310, 317, 319, 369
Բուենոս Այրես – 112
Բուլղարիա – 13, 16, 19, 23, 62, 113, 123, 125–127, 131, 158, 165, 205, 237, 265, 315–317, 319, 322, 327, 340
Բուրգաս – 122, 123

Գ

Գալաթա – 94, 120
Գալաթա-Սերայ, տե՛ս Գալաթա
Գանձակ – 7–9, 38, 40, 41, 43, 46, 48, 50, 53, 56, 59, 61, 64, 75, 125, 131, 339, 358
Գավառ – 7
Գեղարքունիք – 7
Գետաբեկ – 10, 61, 126, 130
Գերգեր – 65
Գերմանիա – 40
Գյավուր դաղ, տե՛ս Հայ լեռ
Գյումրի – 67, 69, 335
Գում Գափու – 82

Դ

Դալմացիա – 303, 319, 320
Դամասկոս – 270
Դաշօլուկ – 256
Դարդանել – 307, 323
Դեոն գելե – 255
Դերսիմ – 268
Դիարբեքիր – 284
Դվալ – 68

Ե

Երկիր, տե՛ս Արևմտյան Հայաստան
Եգիպտոս – 23, 79, 133, 136, 137, 159, 160, 163, 229, 230, 272, 273, 283, 306, 313, 322, 330, 331, 343, 345
Ելդըզ – 104
Եթովպիա – 80
Երկիր, այս դեպքում Կիլիկիա
Եվրոպա – 23, 27, 155, 241, 345, 349, 368
Երուսաղեմ – 54, 260, 326
Երևան – 6, 7, 33, 49, 53, 64, 125, 210, 358, 359

Զ

Զանգեզուր, տե՛ս Սյունիք
Զեյթուն – 15, 18, 72, 79, 80, 85, 149-150, 169, 186, 192, 209, 225, 228, 230-233, 249, 251-256, 258, 259, 261,
Զմյուռնիա – 70, 73, 78, 89, 130, 164, 306, 323, 324, 330, 340, 361–363
Զվիցերիա, տե՛ս Շվեյցարիա

Է

Էջմիածին – 53
Էրզրում, տե՛ս Կարին

Թ

Թբիլիսի – 8–10, 37, 42–44, 47–51, 53, 54, 62–64, 67, 74, 123, 125, 129, 137, 358
Թիֆլիս, տե՛ս Թբիլիսի
Թյուրքիա, տե՛ս Օսմանյան կայսրություն
Թուրքիա, տե՛ս Օսմանյան կայսրություն
Թուրքեստան – 155

Ժ

Ժնև – 10, 26, 27, 46, 48, 50, 75-78, 86, 123, 124, 128, 132, 280, 314, 331, 333, 347, 349, 351-353, 363, 365,

Ի

Իզմայիլ – 141, 327
Ինջիրլիկ – 288
Իտալիա – 155

Լ

Լաթաքիա – 14, 141
Լազիստան – 34
Լառնակա – 10, 80, 83, 85, 134
Լեռնավայր, տե՛ս Կիլիկիա
Լիբանան – 13, 141, 157, 283, 325-326
Լիմասոլ – 135
Լոզան – 358
Լոնդոն – 18, 230
Լոռի – 64
Լևանտ – 298

Խ

Խարբերդ – 13, 262, 283
Խոյ – 43, 50
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն – 5
ԽՍՀՄ, տե՛ս Խորհրդային սոցիալիստական Հանրապետությունների Միություն

Ծ

Ծաղկաձոր – 5, 25, 29, 139, 369

Կ

Կ. Պոլիս – 10–13, 22, 23, 25, 27, 73, 75, 78, 81, 87–94, 97–99, 101, 104, 106, 107, 112, 113, 120, 121, 124, 130, 132, 133,

138, 139, 158, 160, 164, 180, 183, 242, 264-266, 275, 276-278, 282, 289, 292, 296, 298, 300, 301, 303, 306-310, 317, 324, 340, 352, 356
Կահիրե – 14, 24, 141, 326, 332, 339, 361, 362, 364, 365, 366, 369, 370
Կաղզվան – 335
Կապան – 130, 225, 258, 258
Կարբ-Թարա պուլուս – 277
Կարին – 335
Կարս – 335
Կեսարիա – 13
Կրողք խան – 289
Կիլիկիա – 10, 12–18, 20, 23, 72, 73, 78, 82, 129, 132, 137–141, 150–152, 154–157, 164, 170–172, 191, 193, 230, 236, 237, 247, 253, 289, 324, 340, 342–344, 363, 364, 367
Կիլիկիա Արևելյան, տե՛ս Կիլիկիա
Կիլիկիա Դաշտային, տե՛ս Կիլիկիա
Կիպրոս – 10, 12, 13, 24, 75, 77–82, 85–87, 96, 129, 130, 133, 136, 137, 148, 159, 160, 305, 324, 324, 343
Կոկիսոն – 256
Կովկաս – 46, 47, 73, 76, 77, 91, 98, 124, 129, 137, 236, 246, 247, 330, 331, 335, 336, 345, 346, 349, 350, 354, 358, 359
Կուբե խան – 175–177, 182
Կուրթան – 65
Կուրտան, տե՛ս Կուրթան

Հ

Հալեպ – 14–16, 20, 151, 159, 160, 161–162, 165, 172–174, 177, 184, 185, 189–191, 193, 195, 201, 204, 205, 210, 220, 224, 252, 254, 265, 273, 274, 278, 281, 284, 285, 289, 291, 327, 329, 331
Հաճըն – 130, 170, 225
Համամ – 157, 288
Համիդի կամուրջ – 231
Համիդիե քեոփրուսի, տե՛ս Համիդի կամուրջ
Հայ լեռ – 129, 153, 157, 247, 289, 304
Հայաստան – 6, 7, 37, 49, 54, 72, 152, 154, 155, 285, 344, 346, 353
Հայոց ծոց – 129, 235, 304
Հայֆա – 79
Հասան-Բեյլի – 130, 252
Հելվան – 24, 332, 333, 339
Հյուսիսային Սիրիա, տե՛ս Սիրիա
Հունաստան – 88, 89, 132, 369

Ղ

Ղալա – 277
Ղարաքիլիսա, տե՛ս Վանաձոր

Ճ

Ճապոնիա – 173

Մ

Մալաթիա – 13, 248
Մակեդոնիա – 113, 215, 263, 266
Մահմուդ փաշա խան – 289
Մասիս – 64
Մարիասա – 231
Մարաշ – 17, 20–22, 157, 169, 186, 204, 205, 207, 209, 210, 217, 218, 223, 230, 231, 233, 235, 243, 246, 247, 253, 256, 262, 265, 267–269, 275, 276, 278, 279, 289, 296, 308, 309, 313, 325
Մարհասա, կամուրջ – 231
Մարմարա ծով – 307, 309, 369
Մարսել – 78, 112, 280, 361
Մարսեյլ, տե՛ս Մարսել
Մեծ Բրիտանիա – 27, 28
Մեծ Հայաստան, տե՛ս Մեծ Հայք
Մեծ Հայք – 154, 156, 157
Մերսին – 170, 234, 304, 305, 308, 324, 325
Միջագետք – 285
Միջերկրական, տե՛ս Միջերկրական ծով
Միջերկրական ծով – 72, 154, 155, 289, 325
Մծարա – 33
Մոսուլ – 182
Մրգաստան, տե՛ս Երևան
Մուսա Դաղ, տե՛ս Մուսա լեռ
Մուսա լեռ – 130

Յ

Յապոնիա, տե՛ս Ճապոնիա
Յաֆֆա – 79, 326
Յելդեզ, տե՛ս Յըլդըզ
Յենիջէ-Ղալե – 255
Յըլդըզ – 116, 182
Ջհան – 240

Ն

Նախիջևան – 335
Նանսի – 77, 103
Նեղոս – 332, 349
Նիկոսիա – 6, 81, 84, 85
Նոր Բայազետ – 7, 54–57, 59, 247, 335
Նոր Նախիջևան – 54

Շ

Շամը-Շէրիֆ, տե՛ս Դամասկոս
Շիշլի – 104
Շիրակ – 335
Շվեյցարիա – 48
Շուշի – 125

Չ

Չեոք-Մարզվան, տե՛ս Չոք-Մարզվան
Չեռնոգորիա – 179, 183, 369
Չինաստան – 173
Չոք–Մարզվան – 129, 130, 233, 334, 235, 241, 286, 363
Չուխուր օվա, տե՛ս Փոս դաշտ

Պ

Պարիզ, տե՛ս Փարիզ
Պարսկաստան – 43, 44, 47, 49, 50
Պետերբուրգ – 52, 54, 354
Պերա, տե՛ս Բերա
Պըտի շան, տե՛ս Փոքր դաշտ
Պիրեյ – 89
Պոլիս, տե՛ս Կ. Պոլիս
Պորտ Սաիդ – 14, 23, 70, 79, 141, 326, 327

Ջ

Ջալալօղլի, տե՛ս Ստեփանավան
Ջահան – 231, 240
Ջեբել-ի-Բերեքեթ – 255
Ջիբութի – 80
Ջհան, տե՛ս Ջահան

Ռ

Ռոդոս – 277, 305, 324
Ռումելի, տե՛ս Ռումելիա
Ռումելիա – 369
Ռուշչուկ – 124
Ռուսական կայսրություն – 19, 73, 78, 99, 100, 127, 131, 166, 212, 214, 339, 345, 354, 364-365
Ռուսաստան, տե՛ս Ռուսական կայսրություն

Ս

Սալմաստ – 43, 50, 71
Սալոնիկ – 130
Սահարա – 332
Սամաթիա – 104, 108, 109, 124
Սասուն – 9, 13, 32, 49, 52
Սբ. Աստվածածին վանք – 231, 252
Սբ. Մակար – 10, 81, 129
Սեբաստիա – 13, 248
Սեմերճյան ճեմարան – 302
Սիդոն – 326
Սինոպ – 277
Սիս – 363
Սիրիա – 13, 79, 207, 141
Սկյութար – 98, 301, 309
Սյունիք – 82, 247
Սյուրիա, տե՛ս Սիրիա
Սոֆիա – 333
Ստամբուլ, տե՛ս Կ. Պոլիս
Ստանկո Բիրգեր – 324
Ստեփանավան – 29, 31, 64–66, 73, 139
Սուետիա – 150
Սուխումի – 33, 37
Սև լեռ, տե՛ս Չեռնոգորիա
Սև լեռ, տե՛ս Հայ լեռ
Սև լեռ, տե՛ս Չեռնոգորիա
Սևաստոպոլ – 128

Վ

Վան – 49, 50, 66, 71, 129, 153, 154, 335, 336
Վանաձոր – 25, 67
Վառնա – 23, 303, 304, 319
Վասպուրական – 12, 54, 85, 99
Վարագա վանք – 54
Վարդաբլուր – 65

Վերջին սար – 207, 231, 261, 271
Վիեննա – 355
Վիշապ, տե՛ս Կ. Պոլիս
Վիտոշ լեռ - 333

Տ

Տաճկաստան, տե՛ս Օսմանյան կայսրություն
Տավրոս – 72, 153
Տարոն – 12
Տորոս – 129, 207, 305, 324
Տրապիզոն – 78, 192
Տրիեստ – 301, 303
Տրիպոլի – 79
Տուրկեստան, տե՛ս Թուրքեստան

Ց

Ցետինե – 179, 183
Ցարական Ռուսաստան, տե՛ս Ռուսական կայսրություն

Ու

Ուզունլար, տե՛ս Օձուն
Ուրֆա – 13, 186, 220

Փ

Փայաս – 277, 304
Փարիզ – 31, 351
Փոս դաշտ – 114, 120, 207
Փոքր Ասիա – 156, 369
Փոքր դաշտ – 97, 120
Փոքր Հայաստան, տե՛ս Փոքր Հայք
Փոքր Հայք – 82

Ք

Քեֆեր-Ալթուն – 288
Քիլիս – 16, 169, 170, 185–187, 189, 192, 202, 204, 270, 281
Քիոս – 306
Քյուրդ դաղ – 289

Օ

Օդեսա – 62, 90, 96, 126–131, 137, 166, 366,
Օձուն – 65
Օսմանյան կայսրություն – 5, 17, 19, 26, 27, 33, 73, 78, 102, 113, 119, 138, 139, 141–143, 147, 155, 158, 160, 170, 181, 182, 186, 193, 197, 200, 205-208, 213, 220, 222, 235, 236, 241, 277, 279, 280, 281, 284, 294, 305, 326, 329, 330, 331, 334–336, 345, 346, 350, 356, 357, 359, 360, 361, 364, 367

Ֆ

Ֆեզան – 277
Ֆընտըճագ – 254, 255
Ֆիլիպե – 214
Ֆռնուզ – 225, 258
Ֆրանգստան, տե՛ս Ֆրանսիա
Ֆրանսիա – 269, 351

Ч

Черногория, см. Չեռնոգորիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Միքայել Տեր-Մարտիրոսյանի ազատագրական գործունեության սկիզբը 29
Միքայել Տեր-Մարտիրոսյանի գործունեությունը Հալեպում, մատնությունը և ձերբակալումը Մարաշի բանտում: Անսպասելի փրկություն 127
Շարունակությունը՝ գրված Ղարաքիլիսայում և Ծաղկաձորում 342
Резюме 372
Summary 376
Անձնանուններ 380
Տեղանուններ 390

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

МИКАЕЛ ТЕР-МАРТИРОСЯН

ВОСПОМИНАНИЯ

MIKAEL TER-MARTIROSYAN

MEMORIES

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 10.06.2022 թ.
Տպաքանակը՝ 120 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[3000 տ.]

ՀԱՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0677683

A 109061

ISBN 978-5038-892-19-1